Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀՀ ԱՐԽԻՎԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐԵՎԱՆ 2002

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Ն 661

Տպագրվում է ՀՀ
Կառավարության որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Հրանտ Ավետիսյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Վլադիմիր Ղազախեցյան (պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, պատասխանատու խմբագիր), Արամ Սիմոնյան (պատմ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր), Ամատունի Վիրաբյան (պատմ. գիտությունների դոկտոր)

Կազմողներ՝
Արմեն Բաղալյան (պատմ. գիտությունների թեկնածու), Համլետ Գևորգյան (պատմ. գիտությունների թեկնածու), Մուշեղ Լալայան, Ավագ Հարությունյան, Արմենակ Մանուկյան (պատմ. գիտությունների դոկտոր), Սոնյա Միրզոյան (պատմ. գիտությունների թեկնածու)

Նժդեհ Գարեգին
Ն 661 Երկեր: Երկու հատորով.- Հատոր 2 /Խմբ. խորհուրդ՝ Ավետիսյան Հ., Ղազախեցյան Վ., Սիմոնյան Ա., Վիրաբյան Ա. .- Եր.: ՀՀ Արխիվային գործի գործակալություն, 2002, 504 էջ:

Գ.Նժդեհի «Երկեր»-ի երկրորդ հատորում ամփոփված են Լեռնահայաստանի գոյամարտի մասին պատմող նրա հուշերը, հոդվածները, հրամանները, կոչերը, գրությունները, բացատրությունները, ինչպես նաև խորհրդային բանտերում գրած նամակները և ազգային կուսակցական կյանքին առնչվող նյութերը, որոնք ներկայացնում են հայրենիքի ճակատագրով ապրող Նժդեհ հայրենասերին և զորավարին:

Հատորում մեկտեղված երկերն ունեն կարևոր արդիական և դաստիարակչական նշանակություն:

Սույն հրատարակությունը հայ իրականության մեջ Գ.Նժդեհի երկերի մինչ այժմ եղած առավել ամբողջական ժողովածուն է:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-78-12-3

© ՀՀ Արխիվային գործի գործակալություն, 2002

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գարեգին Նժդեհի Երկերի 2-րդ հատորն ընդգրկում է հեղինակի գործնական բնույթի փաստաթղթերն ու նյութերը (1-ին հատորում ներկայացված են տեսական բնույթի աշխատությունները): Դրանք ստորաբաժանված են ըստ իրենց ձևի՝ հուշեր, կոչեր, հրամաններ, նամակներ, խորհրդային բանտում գրված ստեղծագործություններ:

Իրենց բովանդակությամբ փաստաթղթերի ու նյութերի մեծ մասը նվիրված է Զանգեզուրյան հերոսամարտին, որն իրավացիորեն կարելի է համարել Նժդեհի գործունեության թագն ու պսակը: Այդ իրադարձություններին վերաբերում են բազմաթիվ հրամաններ, կոչեր, նամակներ, իսկ հետագայում՝ ծավալուն հուշագրություններ: Այլ վավերագրերում Նժդեհը նույն հարցին անդրադարձել է այլ առումներով՝ մասնավորապես զանգեզուրյան ինքնապաշտպանության բնույթի, արդյունքների և ապստամբների կողմից երկրամասը թողնելու պատճառների կապակցությամբ:

Զանգեզուրի հերոսական պաշտպանությունը, ըստ դրա օբյեկտիվ ընթացքի և դրան համապատասխան գրավոր նյութերի, կարելի է բաժանել երկու փուլերի: Առաջինը Նժդեհի Զանգեզուր մեկնելուց (1919թ. կեսեր) մինչև Հայաստանի խորհրդայնացումն ընկած շրջանն է: Երկրորդը՝ այդ պահից մինչև 1921թ. կեսերը: Սկզբում պայքարն ուղղված էր ադրբեջանական (մուսավաթական և խորհրդային) - թուրքական - բոլշևիկյան (ռուսական) վտանգի դեմ, որը ձգտում էր զավթել նաև Զանգեզուրը, միանալ Թուրքիայի հետ, ճանապարհ բացել համիսլամական դավադիր ծրագրերի կենսագործման համար: Այդ պլանների իրականացումը հղի էր լուրջ հետևանքներով հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագրի համար: Հենց այդ տեսանկյունից պետք է դիտարկել ինչպես Նժդեհի, այնպես էլ նրա նախորդների ղեկավարած Զանգեզուրի հերոսական պաշտպանությունը (1918-1920թթ. համար):

Զանգեզուրի պաշտպանության համար նոր ռազմաքաղաքական իրադրություն է ստեղծվում Խորհրդային Հայաստանի հանդես գալով: Հայաստանի Հանրապետության փոխարեն այժմ երկրամասի պահանջատեր է դառնում Հայաստանի խորհրդային իշխանությունը: Աստիճանաբար այն համոզմունքն է հաստատվում, որ Զանգեզուրը կլինի Հայաստանի կազմում: Սակայն Նժդեհի համար միևնույնը չէր, թե ինչ կարգավիճակում կգտնվեր հայրենի երկիրը: Նրա երազանքը ազատ և անկախ Հայաստանն էր, որի համար նա ընդունեց սպասողական դիրք կամ մարտավարություն: Թե որքանով էին իրական նրա սպասողական հույսերը՝ դա այլ հարց է: Բայց փաստ է, որ նա ձգտում էր օգտվել բոլոր հնարավոր միջոցներից՝ ռազմավարության իրականացման ճանապարհին (փետրվարյան ապստամբություն, Ռուսաստա-

նում և Ադրբեջանում ծագած ապստամբություններ, հնարավոր դաշնակից ուժերի որոնումներ և այլն): Այդ ամբողջ ժամանակամիջոցում Նժդեհը, իհարկե, խույս է տվել Խորհրդային Հայաստանի հետ ընդհարվելուց, խստիվ դեմ լինելով եղբայրասպան, քաղաքացիական պատերազմին, որպիսի վտանգը երբ ստեղծվեց, նա վայր դրեց զենքը և հեռացավ մայր երկրից:

Զանգեզուրի կռիվը ոչ կուսակցական էր, ոչ էլ դասակարգային: Այն ուղղված չէր նաև խորհրդային իրավակարգի դեմ: «Հայկական լեռնաշխարհը,- բացատրել է Նժդեհը,- Ադրբեջանին կցելու տարիներով կրկնվող փորձերը՝ ահա թե ինչն էր մեր բազուկը գինել և մեզ լեռները հանել»: Շարունակելով բացատրությունները, ավելացնում է, թե ոչ Սյունիքում, ոչ Գողթանում, ոչ էլ Ղարաբաղում չեն եղել «զուտ հայ-բոլշևիկյան ճակատներ»: Պայքարն ուղղված է եղել թաթարտաճկական վտանգի դեմ, իսկ խորհրդային զորքերի դեմ՝ այնքանով, որքանով նրանք, ոտք դնելով Ադրբեջան, «ուժեղացրին մեր ակտիվ թշնամիներին»:

«Հայաստանի տարածքը անդամահատելու մահացու վտանգի դեմ ոտքի կանգնեց,- նշել է Նժդեհը, նախ՝ Սյունիքի մի մասը, ապա ամբողջ Լեռնահայաստանը» մինչև այն պահը, երբ Խորհրդային Հայաստանի «խելագար հեղկոմը՝ Կասյանի ղեկավարությամբ փոխարինվեց Մյասնիկյանի կառավարությամբ» և մինչև «կռիվներից խրատված Մոսկվան, վերջապես, բարեհաճեց Սյունիքը կցել Հայաստանին»: Այդ ամենից հետո, եզրափակում է Նժդեհը, «անիմաստ համարելով հետագա պայքարը՝ տեղի պիտի տար, առանց կռվի և՛ ապստամբ ժողովուրդը»:

Նման որոշում ընդունելու հարցի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Նժդեհը ոչ միայն ժխտել է խորհրդային ուժերի գործողությունների դերը, այլև փաստորեն գրեթե լռության է մատնել դրանց գոյության փաստը: Դա երևում է, թեկուզ, այն գրախոսական հոդվածից, որը նա նվիրել է խորհրդային հրամանատար Գ.Օգանեզովի գրքույկին: Իսկ, ընդհանրապես, նա շարժման դժվարությունները կամ անհաջողությունները բազմիցս բացատրել է զուտ, այսպես կոչված, ներքին պատճառներով:

Իրականում 1921թ. հունիսի վերջին և հուլիսի սկզբին, այն բանից հետո, երբ Հայաստանի կառավարությունը, հանձին Ալ.Մյասնիկյանի, հանդես եկավ ևս մեկ հրապարակային հայտարարությամբ, Զանգեզուրում կռիվները դադարեցնելու և երկրամասը խորհրդային հայտարարելու մասին, որպես հանրապետության անբաժանելի մաս, Հայաստանի և Ռուսաստանի կարմիր բանակի զորամասերը երեք ուղղությամբ՝ արևմուտքից, արևելքից և հյուսիսից վճռական հարձակման դիմեցին Լեռնահայաստանի դեմ, գրավեցին Դարաձյազը (այն

երկրորդ անգամ գրավել էին Նժդեհի ուժերը հունիսի 15-17-ին) և մուտք գործեցին բուն Զանգեզուր: Երկրամասի պաշտպանների համար ստեղծված ծանր պահին, հունիսի 26-ին Նժդեհը վերջին անգամ հանդես եկավ զինադադարի և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ, որոշ պայմաններով հանդերձ: Իսկ հուլիսի 1-ին նույնպիսի միջնորդական առաջարկություն ստացվեց Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանից: Առաջարկությունները, սակայն, ամբողջությամբ մատնվեցին խորհրդային իշխանության կողմից, որն արդեն գործի էր դրել հարցի լուծման զինական ուղին:

Այսպիսի պայմաններում էր, որ հուլիսի 1-ին կայացավ Լեռնահայաստանի կառավարության նիստը: Հաշվի առնելով ստեղծված տագնապալի իրավիճակը, երբ «Սիսիանի խորհրդայնացումով կռիվներ վարելու հնարավորությունից պիտի զրկվեին նաև Դարաբասի, Տաթևի և բուն Զանգեզուրի շրջանները», նիստը որոշեց թողնել Գորիսը: Միաժամանակ ռազմական ուժերի հրամանատարին կարգադրվեց դիմադրել միայն այն դեպքում, երբ «կփորձեն Սյունիք մտնել թուրք և թաթար ուժեր, իսկ ռուս և հայ զորամասերի դեմ զենք չբարձրացնել» (Նժդեհ):

Այսպիսին է պատմական իրողությունը: Բոլոր դեպքերում անվիճելի փաստ է այն, որ Զանգեզուրի համար հայ ժողովուրդը պարտական է Գարեգին Նժդեհին, որ զամբյուղի զավակին: Նա մեծ սեր ու հաիգանք էր վայելում իր միջավայրում, նունիսկ երգվում երգերում: Ահա մի քառատող «Ինքնավար Սյունիքի քայլերգից».

Ինքնավար Սյունիքին ցանկանք
Միշտ լինել թշնամու սպառնանք,
Շատ ապրի մեզ համար այսուհետ
Քաջ հերոս Նժդեհ սպարապետ:

Բարձր գնահատելով Լեռնահայաստանի գոյամարտի նշանակությունը, Հայ Հեղափոխական Դաշնակցության 1923թ. Վիեննայի խորհրդաժողովը արձանագրեց. «Զանգեզուրի շարժումները ունեցել են արտակարգ նշանակություն բոլշևիկները զգաստացնելու, նահանջը ապահովելու և Զանգեզուրը Հայաստանին կապված պահելու տեսակետից»: Բերված գնահատականը բնականաբար վերաբերում է նաև Լեռնահայաստանի գոյամարտի առաջնորդին:

Եթե զանգեզուրյան տարիներին Նժդեհի ազգանվեր ու հայրենապաշտ գործունեությունը ընթանում էր զենքով, ապա հետագա տարիներին (1920-1930-ական թվականներ) այն շարունակվում էր գրչով: «Սու՞րը, թե՞ գրիչը, - նշել է նա, - թե՛ մեկը, թե՛ մյուսը - ես սիրեցի ու գործածեցի երկուսն էլ»: Բացի Զանգեզուրին նվիրված հոդվածաշարերից, Նժդեհի գրչի տակ ստեղծվեց հարուստ գրավոր ժառանգու-

թյուն, որին մասամբ անդրադարձ է կատարվել Երկերի 1-ին հատորի առաջաբանում:

Նժդեհի աշխատություններում կարմիր թելի նման անցնում է նրա գաղափարական պայքարը՝ հայ երիտասարդության ու ժողովրդի բարոյական հատկանիշների, մարտիկների բարոյականային կոփվածության, ասել է՝ հայրենասիրության դաստիարակությունը: Դրանք զարգացում ստացան «Ցեղ», «Ցեղակրոն», «Տարոնականություն», «Ազգ» հասկացություններում, որոնք նա բարձրացրեց մինչև ամբողջական տեսության մակարդակի: Տեսության փաստական հիմքում ընկած են հայ ժողովրդի պատմական հերոսամարտերը՝ Ավարայրը Մամիկոնյաններով հանդերձ, Ջիրավը, Վարդանակերտը, Ղարաքիլիսան, Սարդարապատը, իհարկե նաև Սյունիք-Լեռնահայաստանը (ինչպես հելլենական Թերմոպիլը, բուլղարական Շիպկան): «Ցեղը» հաղթանակի խորհրդանիշն է, «ժողովուրդը»՝ պարտության (հաճախ էր բերում Կարսի օրինակը, երբ այն առաց դիմադրության հանձնվեց թուրքերին): «Խաղաղության ժամանակ գուցե և կարելի է ապրել առանց ցեղի, վտանգի ժամանակ՝ երբե՛ք»: «Հանձին մեր Դավիթբեկյան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու հաղթանակեց ցեղակրոնությունը»: «Հետայսու երկու բան պիտի զբաղեցնի հայ միտքը, սիրտը և բազուկը-Հայաստանը և ինքնապաշտպանությունը: Ցեղային այդ դավանանքը անհրաժեշտորեն պարտադրում են մեզ Հայաստանի աշխարհագրական դիրքը, մեր ժողովրդի թվական տկարությունը, մեզ սպառնացող օրվա և վաղվա վտանգները»: «Գիտակցական իմ ամբողջ կյանքում, ինչպես և իմ վարած բոլոր ճակատամարտերում-Բալկաններում, Ղարաքիլիսայում, թե Լեռնահայաստանում - ինձ վարել է այն ոգին, որը անվանում են «Տարոնականություն»:

Բանտային նյութերը, անկախ բովանդակությունից, մեկ խմբում կենտրոնացվել են բնական պատճառներով: Խորհրդային բանտը և պայմանները իրենց կնիքն են դրել, չէին էլ կարող չդնել Նժդեհի մոտեցումների ու հոգեբանության և գրած գործերի բովանդակության վրա: Ինչպես հատորում ներկայացված, այնպես էլ դուրս մնացած գրավոր աշխատանքներում բանտարկյալն անդրադարձել է երկու հիմնական հարցերի՝ վերաբերմունքը Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության և խորհրդային իշխանության նկատմամբ: Այժմ Նժդեհը իր գործակցությունն է առաջարկում խորհրդային իշխանությանը՝ Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմում: Ինչ վերաբերում է Դաշնակցությանը, ապա այժմ նա կուսակցության գործելակերպի ուժեղ մերկացողի դերում է, այն դեպքում, երբ մինչև այդ գովերգել ու փառաբանել են նրան՝ որպես ազգի շահերի պաշտպանի:

Չնայած դրան, Նժդեհը մնում է նույն հայրենասերը՝ պաշտպանը հայ ազգի, Հայաստանի շահերի ու ապահով ապագայի, որի

համար չխնայեց իր կյանքը: Ասես իրեն նկատի ունենալով, խոստովանում է, թե՝ «հերոսական գործերից ոչ նվազ ներշնչող է մահը հերոսական: Ապա, ուրեմն, մեռիր այնպես, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ: Ահա՛ իմ դավանած հայրենասիրությունը»:

Գարեգին Նժդեհի բարձրագույն ցանկություն ազատ և անկախ Հայաստանը այսօր իրականություն է: Հետևաբար Նժդեհը կասեր, թե իզուր չի ապրել ու պայքարել: Նժդեհի ձգտումների մարմնավորումն է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Հայ ժողովրդի պայծառ զավակ Գարեգին Նժդեհի գործն ու անունը ուղեցույց աստղ և ոգեշունչ օրինակ է յուրաքանչյուր հայ մարդու համար, ով ազգի ու պետության շահը վեր է դասում դասակարգային, խմբային, անձնական ու կուսակցական հաշիվներից, ամեն ինչից:

Գարեգին Նժդեհի Երկերի սույն երկհատորյակը լավագույն և արժանվույն նվերն է Մեծ Հայրենասերին, Զորավարին, Մտավորականին, Հայ Մարդուն:

Երկհատորյակը նպատակ ունի, Գարեգին Նժդեհի օրինակով, դաստիարակչական դեր կատարել հայ երիտասարդության, հայ ազգի համար, նպաստել Հայոց անկախ պետության բարօրությանն ու անվտանգությանը:

ՀՈՒՇԵՐ ԵՎ ՀՈԴՎԱԾՆԵՐ

ԻՆՉՈՒ ՊԱՅՔԱՐԵՑ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԸ

I

Լեռնահայաստանի ինքնապաշտպանողական երկարատև ու արյունալի խոյանքը գուցե անիմաստ թվար օտարներին, մասնավորապես բոլշևիկներին, որոնք քաղաքական միամտություն ունեին հավատալու և հավատացնելու, որ ոչ թե միայն իրենց ցնորական վարդապետությունը, այլև հետադիմական համիսլամականությունը՝ հանձին քեմալական ջարդարար հորդաների, կոչված է բարերարելու, փրկելու մարդկությունը: Սակայն հայ ժողովրդի համար, որը անբախտություն է ունեցել մոտիկից ճանաչելու և չափելու՝ մեկից ավելի անգամներ իր գերեզմանափորը հանդիսացած, տարամերժ համիսլամականության արժեքը, մեր գոյամարտը քաղաքականապես ավելի քան իմաստալից էր:

Լեռնահայաստանի հայության և նրա ինքնապաշտպանությունը վարողի համար միևնույնը չէր, թե ո՞ր հանրապետության մասը պիտի կազմեր Սյունիքը՝ Հայաստանի՞, թե՞ Ադրբեջանի:

Սակայն նրա համար գրեթե միևնույն էր, թե՞ քաղաքական ինչպիսի ցուցանակ է կրում Ադրբեջանը - Մուսավաթակա՞ն է, թե՞ խորհրդային:

Մեր կռիվը չէր մղվում այս կամ այն կուսակցության կամ դասակարգի դրոշի տակ: Նա ուղղված չէր խորհրդային իրավակարգին դեմ:

Հայկական լեռնաշխարհը Ադրբեջանին կցելու տարիներով կրկնվող փորձերը - ահա թե ի՞նչն էր մեր բազուկը զինել և մեզ լեռները հանել:

* * *

Աշխարհը գիտե, որ Սյունիքի կռիվների պատմությունը ավելի հին է, քան կարմիրների գոյությունն Անդրկովկասում: Գաղտնիք չէ և՛ այն, որ մենք Սյունիքում, Գողթանում և Ղարաբաղում զուտ հայ բոլշևիկյան ճակատներ չենք ունեցել: Խորհրդային զորքերը՝ ոտք դնելով Ադրբեջան՝ ուժեղացրին մեր ակտիվ թշնամիներին - թաթար և տաճիկ, որոնք անպաշտոն կերպով, բայց փաստորեն վաղուց էին թշնամական գործողություններ սկսել հայ ժողովրդի դեմ:

Նուրի և Խալիլ փաշաները, Էտիֆ և Խալիլ բեյերը, իրենց հենարան ունենալով Ջիբրայիլ-Կարյագինը արևելքում, Օրդուբատ-Նախիջևանը հարավ-արևմուտքում, երկրորդ տարին էր, որ կաշվից

դուրս էին գալիս՝ *Սյունիքի հայության գերեզմանի վրայով կամուրջ ծգելու Ադրբեջանի և Տաճկաստանի միջև:*

Սկսված հարձակումներին ավելի սիստեմատիկ բնույթ և մեծ թափ տվեց 1919 հոկտեմբերի 29-ին Տաճկաստանի և Ադրբեջանի միջև կնքված պաշտպանողական և հարձակողական զինակցությունը: Նպատակը մնում էր նույնը՝ *մեր ժողովրդի մի խոշոր մասի բնաջնջմամբ տեր դառնալ Գողթանի, Սյունիքի բնական ամրություններին, մշտական ահի ու սարսափի տակ պահելու համար մեր մանուկ հանրապետությունը:* Եվ Ադրբեջանի՝ դեպքերը գահավիժող խորհրդայնացումը ոչ այլ ինչ էր, եթե ոչ քաղաքական մի խաղ՝ կատարված օսմանյան փաշաների կողմից՝ հանուն իրենց մերձարևելյան պանիսլամական նպատակների:

Արևելքի առաջին խորհրդային հանրապետության կառավարությունը, հանձին Ն. Նարիմանովի, բոլշևիզմի դիմակի տակ, շարունակեց, ինչպես և սպասվում էր, Մուսավաթի գերազանցորեն ազգային քաղաքականությունը: Բաքվի համիսլամականները իրենց ազգային հարստությունը, տեխնիկական միջոցները՝ զենք, ռազմամթերք, կարմիրներից փրկելու համար, օր առաջ զորացրման ենթարկեցին Մուսավաթական բոլոր զորքերը: Այդ խորամանկ խաղով նրանց հաջողվեց Մոսկվայից կորզել նաև Բաքու ժամանած ռուսական կարմիր զորքերը խորհրդային Ադրբեջանի բանակը հայտարարելու իրավունքը: Այսպիսով, իրեն ենթարկելով ամբողջ XI բանակը, IX բանակի մի խոշոր մասը, պանիսլամականների եռապետությունը հանձին Նարիմանովի, Խալիլ փաշայի և Կարաևի, անցնում է գործի և ամենակարճ ժամանակի ընթացքում իրական ապացույցներ է տալիս, որ ինքը ավելի խելոք է և ոչ պակաս ազգասեր, քան Մուսավաթը:

* * *

Սկսվում է Սյունիքի ողբերգությունը:

Մոտ մի ամբողջ տարի, ռուս, թուրք և թաթար հորդաները, օսմանյան փաշաների և սրանց ձեռքին կույր գործիք դարձած կարմիր հրամանատարական կազմի ղեկավարությամբ, իրենց տրամադրության տակ ծովային, թե ցամաքային հաղորդակցության միջոցներ ունենալով հանդերձ, Տաճկաստան և Հնդկաստան տանող երևակայական ճանապարհները փնտրում են Սյունյաց լեռների վրա:

«Ընկեր մարտիկներ,- գոռում էր այդ օրերին կարմիր բանակի օրգաններից* մեկը, անխնա խփեցեք սպիտակ Նժդեհներին, որոնք

* «Կարմիր Ավանգարդ», թիվ 56, 1920թ. նոյեմբեր (ծանոթ. հեղ.):

հարձակվում են երիտասարդ հանրապետության վրա: Ամրացնե՛նք կարմիր Հոկտեմբերը Արևելքի մեջ»:

Ահա թե ինչ է ասում նաև կոմունիստական կուսակցության Անդրկովկասի ագիտացիոն բաժանմունքի օրգաններից մի ուրիշը.-

«Խորհրդային Ռուսաստանը Լեռնահայաստանի հետ հաշտություն է կնքել: Ռուսաստանի հակահեղափոխության վերջին հենարան Վրանգելը ջախջախված է: Այժմ կոմունիստական հեղափոխության ուշադրությունը ուղղված է դեպի Արևելք, մասնավորապես Տաճկաստան, որտեղ հեղափոխական շարժում է սկսվել քեմալականների ղեկավարությամբ ընդդեմ անգլիական, գերմանական և ֆրանսիական կապիտալիստների: Խորհրդային Ռուսաստանը, որպես պաշտպան կեղեքվող ազգերի, պետք է պաշտպանի և պաշտպանելու է Տաճկաստանի ազատագրական շարժումը: Դրա համար էլ խորհրդային Ռուսաստանը պետք է ունենա մշտական և անմիջական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է»...

Ահա և XI կարմիր բանակի քաղաքական բաժանմունքի կողմից հայ աշխատավորության ուղղված մի թռուցիկ-գրության հետևյալ բնորոշ տողերը.-

«Քեմալը միևնույն ժամանակ աշխատում է իր բանակը միացնել Ռուսաստանի և Ադրբեջանի կարմիր բանակներին, որպեսզի ընդհանուր ուժերով ջախջախենք անգլիական, ֆրանսիական և մյուս՝ արևելքի ժողովուրդներին ճնշող կապիտալիստներին: Ահա սրա համար է, որ բուրժուական կուսակցությունները՝ ՀՀ Դաշնակցությունն ու ուրիշները, այդպես տենդորեն աշխատում են Խորհրդային Ադրբեջանի գավառներում ապստամբություն առաջացնել:* Մեր բանակն ու Քեմալը բոլոր ազգությունների աշխատավորության համար ազատություն են բերում: Վա՛յ նրան, որ զենք կբարձրացնի Խորհրդային Ադրբեջանի դեմ»...

Ինչպես տեսնում եք, կարմիր բանակի բարձր հրամանատարության կողմից, որը ներշնչվում և ուղղվում էր Բաքվի տաճիկ և թաթար պանիսլամականներից, Սյունիքը անվերապահորեն հայտարարված էր «Խորհրդային Ադրբեջանի գավառ» և նրա անբաժան մասը:

Իմ հասցեին ուղղված «խփեցեք» և «Վա՛յ նրան» սպառնալիքները ուղղված էին Սյունյաց ժողովրդի այն մի մասի հասցեին, որը քաջություն էր ունեցել չճանաչելու գույնը փոխած Ադրբեջանի գերիշխանությունը, որը, որպես հակադրություն բոլշևիկների վարած քաղաքականության և Սյունիքի նկատմամբ ունեցած որոշման, կայացրել էր

* «Զանգեզուրի Կոմունիստ», թիվ 2, 20 նոյեմբեր 1920 (ծանոթ. հեղ.):

իր վճիռը՝ թույլ չտալ, ինչ գնով էլ լինի, որ կարմիրները ներխուժեն Ղափան:

Ղափանի ներկայացուցիչները այս որոշումը կայացրին իրենց պատգամավորների զեկուցումը լսելուց հետո: Վերջիններս 1920թ. հուլիսի 11-ին տեսնվել էին խորհրդային ներկայացուցչության հետ և վերջինից լսել հետևյալը. ա) Մենք եկել ենք Զանգեզուրն ու Ղարաբաղը կցելու Խորհրդային Ադրբեջանին. բ) պիտի զինաթափենք ժողովուրդը. գ) զենքները հանձնելու եք մեր կողմնակիցներին»:

Ահա՛ այն ընդվզեցուցիչ ճշմարտությունը, որը բոլշևիկները հնարավոր չէին համարել թաքցնել, իսկամ զանգվածներին իրենցից չսառեցնելու համար:

Այսպես, Հայաստանի տերիտորիան անդամահատության մահացու փորձից ազատելու համար, նախ Սյունիքի մի մասը, ապա ամբողջ Լեռնահայաստանը զենքի դիմեց և պաշտպանվեց, մինչև որ Խորհրդային Հայաստանի խելագար հեղկոմը՝ Կասյանի ղեկավարությամբ փոխարինվեց Մյասնիկյանի կառավարությամբ և մինչև որ երկարատև ու արյունալի կռիվներից խրատված Մոսկվան վերջապես բարեհաճեց Սյունիքը կցել Հայաստանին:

Անշուշտ քաղաքական այդ ակտից հետո, անիմաստ համարելով հետագա պայքարը՝ *տեղի պիտի տար,* առանց կռվի և՛ ապստամբ ժողովուրդը:

II

Արարատյան Հայաստանի առաջին անկման նախօրյակին իմ և կարմիր հրամանատարության միջև տեղի ունեցող բանակցությունները մնացին անհետևանք: Թշնամին, շլացած Երևանի կամովին խորհրդայնացումից, չուզեց կատարել մեր առաջադրած հաշտության նախնական պայմանները և ստիպեց մեզ Սյունիքը հայտարարելու ինքնավար, մինչև որ քաղաքական հնարավորություն կստեղծվեր միանալու մայր երկրին: Սյունիքը չէր կարող տեղի տալ, քանի դեռ տաճկական զորքերը գտնվում էին Ալեքսանդրապոլում, Շարուրում և Նախիջևանում, միշտ պատրաստ՝ ցանկության դեպքում արհամարհելու Երևանի բոլշևիկյան ուժերը և չշարժվելու Սյունիքի դեմ: Չէինք կարող տեղի տալ նաև այն պատճառով, որ ամբողջ հայ մտավորականությունը գտնվում էր բանտերում, կարմիր կացնի սարսափի տակ: Հետագա դեպքերը եկան արդարացնելու Սյունիքին:

Իշխելու խելագարությամբ բռնված հանրածանոթ մի բուռ հայազգի կոմունիստները, հենված կարմիր սվիններին, դժբախտ Հայաստանում խորհրդային ռեժիմի անվան տակ հրապարակ էին հանել տարամերժ աղանդավորություն, բռնամոլություն, քաղաքական շնականություն, կուրություն, խելագարություն, կործանման ծարավ, ահավո-

ռություն և. երկիրը վերածել մի կատարյալ դժոխքի: Մտավորականության մեծագույն մասը հոգևարում էր բանտերում, առատ տուրք բերելով բոլշևիզմի գազանին: Սպայությունը քշված է Ռուսաստանի խորքերը: Գյուղացիությունը տնտեսապես և հասարակականապես քայքայված, մատնված էր անտերության: Արարատյան հայությունը գլխատումից փրկելու համար սկսված բանակցությունները մնացել էին անհետևանք: Պետք էին ավելի իրական միջոցներ: Անհրաժեշտ էր նախ Երևանի համար բանալ մի դուռ դեպի Այունիք: Այդ նպատակով իմ ուժերը վերագրավեցին Արարատյան Հայաստանի գավառներից Վայոց Ձորը և կապվեցին Արարատյան Հայաստանի հետ, ուր գրեթե նույն օրերին* պայթել էր Երևանյան ընդհանուր ապստամբություն: Երևանի ուժերը, 42 օրվա կռիվներից հետո, իրենց հետ և՛ հայ մտավորականությունը, թվով մոտ 12.000 հոգի, տեղի տալով խորհրդային ուժերի առաջ, քաշվեցին Սյունիք:

III

Սյունիքի վրայով հեղեղի պես անցնում էր Արարատյան գաղթականությունը: Տեղական ժողովուրդը հավանական լքումից հեռու պահելու համար՝ պետք էր մի նոր ժեստով գոտեպնդել նրան: Եվ այդ ոչ թե Սյունիքի անկախ գոյությունը երկարելու համար, այլ որպեսզի այդ ապստամբ երկրամասին հնարավորություն տրվեր մի որոշ ժամանակով ևս դիմագրավելու իրեն օղակող թշնամիներին, մինչև որ խորհրդային կացնից մազապուրծ եղած հայ մտավորականությունը, արևմտահայ զորամասերը, սպայության մեծագույն մասը, խմբապետների մի որոշ մասը անցնեին Պարսկաստան:

Երևանի առաջին անկումից հետո դրությունը փրկել էր ինքնավար Սյունիքը, նրա երկրորդ անկումից հետո ստեղծված սպառնական դրությունը պիտի փրկեր և փրկեց ազատ Լեռնահայաստանը:

Լեռնահայաստանի գոյությունը անհրաժեշտ էր նաև մի այլ տեսակետով. պարսից կառավարությունը, որը՝ հարգելով իմ դիմումը՝ թույլատրել էր 500 մտավորականների մուտքը Պարսկաստան, Արաքսի հայկական ափում, Մեղրիի դիմաց կուտակված 7-8000-անոց բազմությունից՝ հանկարծակիի եկած՝ կարգադրեց դադարեցնել գաղթականության անցքը:

Աշխարհից կտրված, զուրկ հաղորդակցության ու փոխադրության ամենատարրական միջոցներից, զուրկ հացից, ռազմամթերքից, տարիների անհավասար կռիվներից տնտեսապես քայքայված ու հոգ-

* Երևանի ապստամբությունը պայթել էր Վայոց Ձորի գրավումից 2 օր հետո:

նած Սյունիքի համար ստեղծվում էր աննախընթացորեն սպառնական մի դրություն: Այդ դրությունից դուրս գալու, ասել է՝ Արարատյան Հայաստանի մտավորականությունը (որը չի ստեղծվում ամիսների և տարիների ընթացքում, որի կորուստը մահացու հարված պիտի հասցներ հայ ժողովրդին) փրկելու համար ստեղծվեց Ազատ Լեռնահայաստանը:

Երկրորդ անգամ ստիպված եղա անձամբ տեսնվելու պարսից իշխանության ներկայացուցիչների և իմ բարեկամ խաների հետ և նրանց հավաստիացնելու, որ Սյունիքը մտադիր չէ տեղի տալու, որ Արարատյան գաղթականությունը փոխադրվում է Պարսկաստան ոչ թե Սյունիքը վտանգված համարելով, այլ որովհետև հաց չկա Սյունիքում, որ ես իմ ուժերի հետ մինչև վերջին փամփուշտը պիտի մնամ Սյունիքում, և այլն:

Պարզվեց որ որոշ մութ ուժեր պարսկական ափում պրովակացիոն լուրեր էին տարածել և՛ իմ Պարսկաստան անցնելու, և՛ իմ տեղի տալու մասին ու առիթ տվել պարսից իշխանության անելու մտավորականության անցը դադարեցնելու դժբախտ կարգադրությունը: Թյուրիմացությունը պարզվեց և վերսկսվեց գաղթականության անցը - նահանջ:*

Անշուշտ մի կամուրջի գոյությունը մեծապես պիտի հեշտացներ ու արագացներ նահանջի գործը, դժբախտաբար Սյունիքը Պարսկաստանին միացնող Արաքսի վրա կամուրջ գոյություն չուներ և չունի:

Իզուր անցան մեր ավելի քան մի ամիս տևող գերմարդկային ճիգերը՝ Արաքսի մեր ափում շինված շարժական կամուրջից օգտվել կարողանալու համար: Մնում էր բավականանալ գոյություն ունեցող ամենանախնական ու անբավարար միջոցներով - պարսկական լաստերով, որոնք մոտ երկու ամիս երթևեկեցին Արաքսի վրա, մինչև որ վերջացավ գաղթականության անցը:

Ահա՛ թե նաև ի՞նչ լուրջ պատճառներով 3-4 ամիս ևս անհրաժեշտ էր դառնում երկարաձգել Ազատ լեռնահայաստանի գոյությունը:

IV

Թշնամին՝ Վրաստանում և Երևանում ունեցած իր նոր հաջողություններից թև ու թափ առած՝ չհապաղեց մի անգամ ևս իր արյունոտ թաթը սպառնալիորեն պարզելու դեպի Արաքսի ափին թափված

* Նահանջ եմ անվանում, որովհետև մտավորականության հետ, երկիրը վտանգված համարելով, Պարսկաստան էին անցնում նաև մեծ քանակությամբ ռազմական ուժեր:

հայ մտավորականությունը: Ասարատյան գաղթականության Մեղրիի և Արաքսի ափին խռնվելու երկրորդ օրը, կարմիր ռուս և թուրք զորքերի հրամանատարությունը Օրդուբատից, թուրք պատգամավորների միջոցով, Գենվազի գետափնյա ազգաբնակչությանն ուղղեց իր «վար դրեք ձեր զենքերը և հանձնվեցեք» վերջնագիրը: Ռուս և թուրք միացյալ զորամասերի հրամանատարությունը, հայ ժողովուրդը գլխատելու խելագարությամբ բռնված, վերջին փորձն էր կատարում Արաքսի ջրերի մեջ խեղդելու, ոչնչացնելու հայ մտավորականությունը, որի համար էլ պահանջում էր տեղի տալ, հրաժարվել մտավորականության պաշտպանությունից:

Վայրկյանի բովանդակ լրջության և պատասխանատվության գիտակցությամբ տոգորված՝ Լեռնահայաստանի սպարապետությունը ժողովրդի անունից կարմիր հրամանատարությանն ուղղեց հետևյալ պատասխանը. «Մենք ունենք կենտրոնական իշխանություն, որին կարող եք դիմել այդ առթիվ»:

Թշնամին՝ այդ ճակատում ունեցած իր անհամար պարտություններից խրատված՝ չփորձեց իր անհաջող զենքին դիմել և բավականացավ միայն մի շարք սպառնական վերջնագրերով և կոչերով: Լեռնահայաստանի ժողովուրդ-բանակը, ուժեղ՝ իր մոտիկ անցյալի մեծ հաղթություններով, շարունակում էր արթուն հսկել իր դիրքերում, հնարավորություն ստեղծելով, որ կարմիր կացնից հալածական հայ մտավորականները, առանց որևէ կատաստրոֆի, անցնեն պարսից հյուրընկալ հողը:

Իմ զինվորը հաղթեց և՛ այս անգամ:

* * *

Այդ պատմական և ծանր օրերին, երբ Արաքսի հայկական ափում լուծվում էր հայ մտավորականության մեծագույն մասի լինել չլինելու հարցը, հայրենի լեռներից հաղթական կրծքերն ու զենքերը դեպի թշնամին դարձրած, մի օր չոր հացով, մյուս օրը արմտիքով ապրող Լեռնահայաստանի վաշտերի ցույց տված հերոսական խոյանքները պիտի մնան գալիք սերունդների համար որպես հայրենասիրության ու անձնվիրության դասական օրինակներ: Հպարտ՝ այդ օրերի պատմական գործերով, անսահման թախիծով և քաղցրությամբ վերոհիշյալ մեր լեռնաշխարհի բարձունքներում ու ձորերում հերոսի մահով ընկած իմ ընկեր զինվորներին, մտքովս ծնրադրում եմ նրանց խնկելի հողաթմբերի առջև և ծաղկեպսակի փոխարեն Սյունիքի բովանդակ փառքը դնում նրանց գերեզմանների վրա:

1923թ. Մարտ

«Հայրենիք» ամսագիր, թիվ 8, հունիս, 1923թ.:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՅԱՄԱՐՏԸ

Թերևս միայն ազգերի ֆիզիկական ինքնապաշտպանության բարդ գործը՝ կռիվն է, որի հետ չի կարելի փորձեր կատարել, առանց փորձանքի ու արնոտ պատժի: Մեր ամեն մի սխալը կռվի դաշտում՝ թշնամին մեր արյունով է սրբագրում: Կռվի՝ մարդկային այդ ամենից պատասխանատու գործողության էությունը, յուրացվում է միայն պատերազմների պատմության և պատմական հուշերի բազմակողմանի ուսումնասիրությամբ: Ահա՛ թե ի՛նչ տեսակետից այս կամ այն ժամանակաշրջանի անցքերի նկարագրությունները իրենց խոշոր արժեքն ունեն եկող սերունդների համար:

Ընդունելով, որ պատերազմը մի մշտական չարիք է, որ եղել է, կա և պիտի մնա, և որ գուցե դարերն ու մարդկային բարոյական մշակույթը կարողանան մեղմացնել նրա բնույթը միայն, փոխել նրա ձևերը, բայց վերացնել՝ երբե՛ք, կուզեի, որ մեր ժողովուրդը ևս, որն արևի տակ իր անկախ անկյունն ունենալու ձգտումն ունի, պարտադրորեն յուրացնի կռվի բարդ արվեստը, որ եղել է և կմնա մանավանդ մեզ նման փոքր ազգերի ինքնապաշտպանության միակ միջոցը:

I

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱԶԴԱԿՆԵՐ

Հաղթանակը տարվում է դեռ կռիվը չսկսված՝
նախ բարոյապե՛ս, նախ հոգիների՛ մեջ:
Կռիվը միջոց է միայն՝ շոշափելի արտահայտություն
տալու մեր ներքին վստահության, մեր ներքին հաղթանակին:

ԱՐԺԵՔԻ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ - Պատերազմող մի ժողովուրդ, ամեն կռվող կողմ կամ բանակ այնքան է համառ ու տոկուն, որքան խոր նա գիտակցում է արժեքն այն դատի, իրավունքի, երկրամասի, հանուն որի մղվում է կռիվը:

Սյունիքը գիտեր արժեքն իր երկրի, որպես ծննդավայրի:

Սյունիքը և՛ ծննդավայր է, և՛ հայրենիք,- ասացին նրան:

Սյունիքը և՛ միջոց է, և՛ նպատակ,- կրկնեցին նրան:

Սյունյաց աշխարհը - դա ամբողջական հայրենիքիդ աշխարհագրական ողնաշարն է, առանց որին Հայաստանը գոյություն ունենալ չէր կարող:

Եվ նա, Սյունիքի հայությունը, խորապես գիտակցած անկշռելի արժեքն իր երկրի՝ իմ ղեկավարությամբ վարեց իր անկախության անհավասար գոյամարտը, պարտադրելով իր թշնամիներին՝ Հայաստանի անբաժան մասը կազմող իր երկաթե կամքը:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԹՆՈԼՈՐՏ -Կռվի նպատակը հաղթությունն է:

Հաղթում է թվապես, զենքերի արդիականությամբ և բարոյապես գերազանցող կողմը:

Առաջին երկու տեսակետներից մեր և թշնամու միջև հավասարակշռություն լինել չէր կարող:

Մնում էր միջոցներից ամենաէականն ու բախտորոշը՝ բարոյական գերադասությունը, որը հրամայորեն պետք էր ստեղծել, որպեսզի Սյունիքը չվերածվեր «Դիակների Կամուրջ»-ի՝ Արևելքի և Արևմուտքի թրքության միջև:

Ծանոթ սյունեցու խորհրդապաշտ հոգուն՝ ես գիտեի, որ ծորերի մեջ, լեռների կատարներին, գրեթե ամեն մի քայլափոխում, վեհորեն ցցված մեր լեռնաշխարհի հնամենի կոթողները՝ վկա մեր ցեղի անցյալ միության, դեռ չեն դադարել մեր ժողովրդի համար նվիրական լինելուց: Գիտեի, որ 18-րդ դարի մեր մեծ մեռելները դեռ շարունակում են ապրել Սյունիքում: Գիտեի և այն, որ կռվում առաջին տեղը բռնում է սիրտը, երկրորդ տեղը՝ ուղեղը, երրորդ տեղը՝ երկաթը, լավ տեխնիկան: Լավագույնը և անհրաժեշտը, սակայն, եղել է և կմնա՛, ամեն կռվի մեջ, անձնական խիզախությունը:

Ահա՛ թե ինչո՛ւ ճիգ ու ջանք չխնայեցի ժողովրդի մեջ զարթնեցնելու և ջերմացնելու խիզախության և հայրենիքի պաշտամունքը:

Եվ ահա՛ թե ինչպե՛ս մեր արյունալի և երկարատև կռիվների ամբողջ ընթացքում մեզ համար բարոյական կորովի անսպառ աղբյուր դարձան և՛ հինավուրց կոթողները, և՛ փառահեղ անցյալը, և՛ մեծ մեռելները:

ՊԱՇՏԱՄՈՒՆՔ - Մեր՝ թշնամու համար անծանոթ, կռվի տարերային ձևերը հնարավորություն էին տալիս հաճախ, գրեթե առանց զոհերի, խորտակելու հակառակորդի կենդանի ուժերը:

Հաղթություններից հետո լեռներից դեպի ծորերն իջնող ժողովրդական վաշտերը իրենց հետ բերում էին, երբեմն, մի հատիկ սպանված զինվորի դիակը, որի վրա Սյունիքն էլ չէր լալիս, որովհետև սկսել էր գիտակցել, որ իր հպարտ որդիները մեռնում են ապրեցնելու և ապրելու համար:

Մահկանացուներից շատ քչերն են հողին հանձնվում սյունեցի զինվորի պես: Լեռների կատարներից դիպվածով գահավիժական անտաշ ժայռը, մեր դաշտերի փարթամ ծաղիկների հետ, գուրգուրանքով ծածկում էր նոր հողաթումբը: Եվ հայրենի երկիրը հաղթական

մահով արժեքավորող նոր զոհը անցնում էր ապրելու Սյունիքի գիտակցության և երգերի մեջ:

Այսպես, և՛ հաղթողը, և՛ հաղթական կռվում ընկած զինվորը, մեկը՝ հերոս, մյուսը՝ նահատակ , դառնում էին ժողովրդի ջերմ պաշտամունքի առարկան, հազարների մեջ վառելով իրենց պես ապրելու և մեռնելու սրբազան նախանձը:

ԲԱՐՈՅԱ-ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ - Իմ զինվորը գիտեր իր երկրի պատմությունը: Նա գիտեր, որ Սյունիքի վրայով քանիցս հեղեղի պես Արևելքի բարբարոս հորդաներ են եկել ու անցել, բայց միշտ էլ հայ ժողովուրդը մնացել է անսասան իր լեռների մեջ և իր լեռների պես:

Նա գիտեր և այն, որ դարերի անվերջ կռիվներով ու զոհերով պահված երկիրը թշնամու պղծանքին հանձնող սերունդը զրկվում է ապրելու իր բարոյական իրավունքից:

Ահա՛ թե ինչո՛ւ նա իր նախնիների պես ջերմաջերմ սիրեց հայրենի հողը, համառեց, հաղթեց և մնաց տերն այն երկրի, որի լեռներին ու իր բազուկին ապավինած՝ դարերով ապրել է մեր ժողովրդի մի խոշոր մասը:

ՀԱՂԹԱԿԱՆ ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ - Հպարտ ու անմատչելի բարձրունքները, որոնց վրա բուն են դրել մեր ազատապաշտ նախնիները, շատ անգամ են փրկել հայ ժողովուրդը Արևելքի մեծ բռնակալներից, որոնց անունը ժամանակին ողջ աշխարհն է թնդացրել:

Այժմ այդ հզոր բարբարոսներից մնացել են մեղկ ու անմարտունակ, իրենց հարստության ու վայելքների համար միայն ապրող խաներն ու բեկերը՝ ողորմելի՛ մնացորդներ: Վերջին տարիների պատմությունը չի՛ արձանագրել, չգիտի՛ մի դեպք, որ կռվի առաջին գծի վրա սպանված լիներ անվանի մի թաթար ղեկավար: Սրանք միշտ էլ «Յա՛ բախտ» առաջ են քշել իրենց ստրուկ գյուղացիությունը և շատ քիչ ցավել կռվում ընկածների համար:

Այդ գիտեր սյունեցին, գիտեր և այն, որ այսպես, այս ձևով - վկա՛ պատերազմների պատմությունը - ո՛չ ոք չի հաղթում:

ՀԱՂԹԱԿԱՆ ԿԱՄՔԸ - Հաղթանակը տարվում է դեռ կռիվը չսկսված՝ նախ բարոյապե՛ս, նախ հոգիների՛ մեջ: Կռիվը միջոց է միայն՝ շոշափելի արտահայտություն տալու մեր ներքին վստահության, մեր ներքին հաղթանակին:

Վճռի՛ր հաղթել. թե ինչպե՞ս՝ թո՛ղ բախտիդ: Բոլոր հաղթողները, զորավար, թե զինվոր, ճակատագրապաշտ են եղել: Հաղթում է կույր, բայց հրաշագործ հավատը: Պիտի հաղթել, պիտի հաղթել գոյության իրավունքը չկորցնելու համար:

Տեղի տալ՝ նշանակում է՝ և՛ բարոյապես ոչնչանալ: Ուրեմն, միշտ առա՛ջ. վախկոտ փոքրոգությունը չի՛ փրկի քեզ: Եվ ո՛չ մի քայլ ետ: Կա՛մ հաղթություն, կա՛մ հաղթական մահ:

ՄԱՀՎԱՆ ԱՆԳԻՏԱՑՈՒՄՆ - Մահ չկա՛: Հաղթելով, նրանք՝ մահն արհամարհող խիզախները, պատերազմների քմահաճ Աստծո ցանկությամբ կա՛մ մնում են կենդանի, կա՛մ ընկնում քաջերի մահով, անմահանում: Մահ չկա՛ Փառքի դաշտում ընկած քաջի համար, որովհետև նրա սխրագործությունների արծագանգը հավերժորեն պիտի ապրի իր ժողովրդի սրտի և երգերի մեջ:

Մահ չկա՛ նրա համար, ով հեգնել գիտի մահը, որովհետև սերունդները հպարտությամբ պիտի վկայեն, թե ո՞վ, ինչպե՞ս խիզախեց ու ընկավ:

Մահ չկա՛. մեռնում է փոքրոգին, վախկոտը. մեռա՛ծն է մեռնում: Մահն անգիտացող խիզախների համար՝ չկա՛ մահ: Քաջերի հաղթությունն է մահը:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ - Ղեկավարները կա՛մ նշանակվում են, կա՛մ հայտարարվում: Մեկը կատարում է այն, ինչ որ հնարավոր է համարում: Մյուսը՝ իրեն հետևող զորքին, թե ժողովրդին ներշնչում է անկարելին կարելի դարձնելու հզոր և հրաշագործ հավատը:

Մեկն իրեն պատասխանատու է համարում միայն ձևական օրենքների և իշխանության առաջ: Մյուսը՝ նա՛և իր խղճի և պատմության առաջ:

Առաջինը կարող է ճարպիկ ռազմավար լինել: Վերջինը՝ նաև մոլեռանդ է, վտանգն անգիտացող, մահն արհամարհող զինվոր, որ գիտի վարակել անձնական օրինակներով և թևավորել հայրենասիրական վսեմ գաղափարներով ու պատկերներով և, հերոսական խոյանքների մղել:

Սեղմ ասած՝ մեկը գործող է, մյուսը՝ ստեղծագործող: Ղեկավարը, դա ինքը զորքն է:

Գրեթե միշտ լավ է, մարտունակ է զորքը, եթե այդպես է նրա ղեկավարը:

Հաղթական չէ՛ այն զորամասը, եթե նրա ղեկավարը պատանու պես ոգևորվել և Բոնապարտի պես ոգևորել չգիտի: Անպե՛տք է այն զորամասը, որի ղեկավարը հրամայել չգիտի: Որքան զգալի է հրամանի մեջ երկաթն ու կրակը՝ այնքան սիրով ու հեշտությամբ է զորքը կատարում տրված հրամանը:

Զորքը - դա ինքը ղեկավարն է:

ԴԱՎԻԹԲԵԿՅԱՆ ԶԻՆՎՈՐԸ - Սյունիքի զինված գյուղացիությունը շատ հեռու էր, արդիական իմաստով, կանոնավոր զորք լինելուց, սակայն գիտակցական կարգապահությունը ավելի քան օրինակելի էր նրա մեջ:

Զորաշարքում, ռազմափորձերի և կռվի ժամանա՛կ միայն նկատելի էր մեկի ղեկավար, մյուսի զինվոր լինելը, երբ մեկը հրամայում էր,

իսկ մյուսը՝ հրամայվում, ենթարկվում: Խաղաղ պայմաններում նրանք՝ զինվորը և ղեկավարը, մնում էին որպես զինակից ընկեր:

Ժողովրդի սերը նրանց բարոյական միակ վարձատրությունն էր:

«Գնում ենք հաղթելու»,- հրաժեշտի ժամին ասում էին Դավիթբեկյանները, և, հացի ու ռազմամթերքի անբավարար պաշարով, շարժվում դեպի թշնամին: Իր հարձակողական խոյանքների ժամանակ՝ ասպետ էր սյունեցին, ինքնապաշտպանության դեպքում՝ անխնա, բայց ո՛չ՝ վայրագ:

Առաջինը՝ հարձակման, վերջինը՝ նահանջի ժամանակ: Միշտ պատրաստ հարձակվելու, հարվածելու, նա մեռնել գիտեր այնպես, որ հայրենի հողը չամաչի իր դիակը գրկելուց: Նրա նշանաբանն էր՝ հանուն հայրենիքի՝ Դավիթբեկաբար:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԱՇՏԱՊԵՏԸ - Ամեն գյուղ Սյունիքում իր վաշտն ուներ, ուրեմն և իր վաշտապետը: Դա մեր գիտցած դասային զինվորականը չէ, գլուխը լի զանազան մեռյալ կանոններով ու տեսություններով: Իր որոշ առաքինություններով՝ ժողովրդի մեջ աչքի ընկած երիտասարդ է նա, կռիվներում անուն հանած արի զինվոր, հայրենի դար ու դաշտերին ծանոթ նախկին որսորդ կամ ժողովրդական սպա, որ, զինվորական անպետք կանոնագրերի փոխարեն, իր կրծքի տակ ազգասիրությամբ և անձնվիրությամբ զեղուն մի տաք, հարուստ, մի խիզախ սիրտ ունի:

Կռվի արվեստը նա յուրացրել է գրքերից դուրս՝ կռվի դաշտերում: Կռիվը նրա համար ո՛չ տամայի խաղ է, ո՛չ էլ թվաբանական խնդիր, այլ՝ բարոյական ուժերի մի կատաղի բախում, մի արնոտ դրամա, որի մեջ առաջին դերերը կատարում են բոցավառ զգացումը և հաղթական մահը: Դրա համար էլ, նա իր զինվորների դաստիարակության գործում զգացումների մշակումը գերադասում է ձեռքերի, ոտքերի, անգամ բանականության մարզանքներից:

Միայն նա՛ իրավունք ունի դեպի վտանգ ու մահ առաջնորդել ուրիշներին. ինքը ևս չի խուսափում մահից: Միայն ղեկավար չէ՛ նա, այլև՝ զինվոր, որին շատ անգամ կարելի է տեսնել կրակի գծից առաջ մի բուռ խիզախների հետ: Իր զինվորին սիրում է իր անձի պես և ոճիր համարում կռվի արվեստը իր ժողովրդի կաշվի վրա սովորելը: Իր երկու զինվորին փրկելու համար՝ նա միշտ էլ պատրաստ է հեգնելու մահը, համոզված, որ իր վիրավորվելու կամ սպանվելու դեպքում՝ երկուսից մեկը կանցնի իր տեղը: Կռիվը՝ հաղթություն, մահը՝ հարություն է նրա համար:

ԶՈՐԱՎՈՐ ԽՈՍՔԸ - Գուցե և միակ տեղն է կռվի դաշտը, ուր ամեն բանից ավելի և ամեն բանից սուր է զգացվում բարոյապես ազդելու՝ մտքերի, սրտերի և կամքերի վրա իշխելու կարիքը:

Կարողանալ բռնակալորեն իշխել հոգիների վրա, ահա՛ ղեկավարի ամենամեծ ու ամենաանհրաժեշտ կարողությունը, առանց որին զորանոցն ու մարզադաշտը զինվորներից հաղթականներ ստեղծելու կարողությունից շատ են հեռու:

Այն, ինչ որ հաճախ դժվարանում է կատարել արդիական հեռաձիգ թնդանոթը, հեշտությամբ կատարում է ղեկավարի զորավոր խոսքը: Խոսքը՝ երբեմն հրամայող ու իշխող, երբեմն՝ կանչող ու մղող, խոսքը՝ միշտ պատկերավոր ու սեղմ, սրտերին՝ կրակ, բազուկներին՝ թափ, կամքերին՝ մղում տվողը խոսքն է, իշխելու և վարելու միակ միջոցը: Եվ որքան զորավոր, այնքան մեծ է նրա հմայքը, այնքան ընդարձակ՝ տիրապետությունը:

Խոսքը - դա ինքը ղեկավարն է:

Հաղթելու համար՝ քիչ է խելքը, տաղանդը. պետք է և՛ զորավոր խոսք:

Առանց զորավոր խոսքի՝ բութ են սրերը, թույլ՝ բազուկները, անվճռական՝ կամքերը: Առանց զորավոր խոսքի՝ չկա իշխանություն հոգիների վրա, իսկ առանց այդ իշխանության՝ չկա հաղթություն:

II

ԻՄ ԳՈՐԾԱԴՐԱԾ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Կարմիր բանակի դիմաց կանգնած և՛ խորամանկ, և՛ համառ թշնամի Նժդեհը, Դրոն և ուրիշ հին գայլեր, որոնք լավ գիտեն զինվորական արվեստը, ուստի և պետք է նրանց հակադրել հաստատուն կամք»:
(Տե՛ս «Կարմիր Ավանգարդ»., թիվ 52, 1920թ., 30 Հոկտեմբեր.)

ԿՌՎԻ ԲԱԽՏԸ - Կռվի բախտը վճռում է թշնամի կողմերից մեկի բարոյական հավասարակշռության խախտումը, որին անմիջապես հետևում է խուճապը, իսկ այդ վերջինին՝ նյութական պարտությունը:

Անհավասար կռիվը չէ, որ կործանում է այս կամ այն բանակը, այլ՝ խուճապը, որին մատնված կողմը առնվազն եռապատկում է իր կորուստը, երբեմն էլ՝ ոչնչանում գլխովին:

Սպանվածների, վիրավորների, գերվածների, ինչպես և պատերազմական ավարի քանակը եղել է և շարունակում է մնալ պարտության երկրորդական ազդակը:

Էականը այն բարոյական ազդեցությունն է, որը ունենում է կռվող կողմերից մեկը մյուսի վրա:

ԳԱՅԼԻ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ* - Հին, քարացած ռազմավարության սկզբունքները անտես առնելու ինձ ստիպում էին իմ ռազմական ուժերի քանակը, իմ տեխնիկական թուլությունը և Սյունիքի տեղագրությունը:

Ես նյութական հնարավորությունը չունեի և պիտի չունենայի հավասար ուժերով դիմադրելու թշնամուս: Վաշտը՝ լավագույն դեպքում մոտ 100 հրացանաձիգ. ահա՛ իմ մարտական ուժերի այն միավորը, որը պիտի ճակատեր թշնամու գումարտակի, գնդի, երբեմն՝ է՛լ ավելի մեծ զորամասի դեմ:

Ավելի մեծ «առատաձեռնություն» ինձ թույլ տալ չէի կարող:

Ահա թե ինչո՛ւ պիտի գործեինք՝ թշնամու որակմամբ՝ որպես «հին գայլ»՝ հրաժարվելով ռազմավարության հին, շաբլոն ու զանգվածային ձևերից:

* * *

Սյունիքի հաջողությունների մեջ խոշոր բաժին ունի իմ մշակած ու գործադրած «գայլի» ռազմավարությունը: Անշուշտ, կռվի ձևերը, ինչպես և ռազմագիտական գերակշռություն ստեղծող բոլոր տարրերը - քանակ, տակտիկական կրթություն, սպառազինություն - անմիջականորեն չեն վճռում կռվի բախտը: Սակայն, նրանք ստեղծում են այն բարոյական գերակշռությունը, որը և պայմանավորում է այս կամ այն կռվող կողմի նյութական հաջողությունը:

Իմ ռազմավարությունը՝ բարոյական գերակշռություն ստեղծել և ապա հարվածել, ինձ հնարավորություն էր տալիս.

Ա. Թշնամուն խուճապի մատնել և ապա ծեծել.

Բ. Թշնամու ուժերը, ամբողջովին կամ մասամբ, առնել տակտիկական աքցանի մեջ և ապա ջարդել.

Գ. Հաճախ նրան շեղել իր գործողության ուղղությունից և օգտվել նրա սխալներից.

Դ. Միշտ էլ հարկավոր կետերի վրա լինել գործուն, աշխույժ.

Ե. Ուժեղ լինել հարկավոր վայրկյանում.

Զ. Գամել թշնամուն իրեն համար տեղագրական անհաջող պայմանների մեջ և պարտադրել կռիվը.

Է. Խուսափել դիրքային ձգձգվող կռիվներից.

Ը. Ամենանվազագույն չափերի հասցնել զոհերի թիվը և ռազմամթերքի ծախսը, և այլն...

* * *

* Բոլշևիկներն այդպես էին անվանում իմ գործադրած ռազմավարությունը:

Մեր ռազմավարական ժեստերին տարերայնություն էին հաղորդում ծանոթ բարոյական ազդակները, ահաբեկիչ բնույթ՝ ուժանակը, որը գործածվում էր հետևյալ ձևերով.

ՊԱՅԹՈՒՑԻԿ ՏԱԿԱՌՆԵՐ - Սյունիքի տեղագրությունը՝ այդ երկրում շարժվողից անվերջ բարձրանալ ու իջնել, իջնել ու բարձրանալ է պահանջում: Եթե թշնամուն չէր հաջողվում թնդանոթային կրակով մաքրել մեր ձեռքին գտնվող բարձրունքները, նա ստիպված հաճախ թափվում էր ձորերը առաջանալու նպատակով: Ահա՝ հենց այդ ժամանակ մեր տակառաձիգների կողմից գործի էին դրվում դինամիտային տակառները Սյունիքի «տանկաներ»-ը:* Վերջինները, հավասարակշռությունը կորցրած ժայռերի պես, լեռների կատարներից գահավիժորեն գլորվում էին դեպի ձորերը, մի ահռելի դղրդյունով պայթում ճանապարհին և քարերի ու երկաթի կտորների մի ամբողջ հեղեղ թափում առաջացող թշնամու գլխին:

Տակառների պայթյուններին հետևում էր մեր վաշտերի «դինամիտային գրոհը»: Հանկարծակիի եկած թշնամին նման դեպքերում ստիպված էր լինում ընտրել երկու միջոցներից մեկը՝ նահանջ մեծ, կորուստով կամ գերություն:

ԳՐՈՀՈՂ ԺԱՅՌԵՐ - Թշնամու գործողության ուղղության վրա, ասել է՝ մեր և թշնամու միջև եղած տարածության վրա գտնվող բարձրունքների կատարներին մի-մի շարք ժայռերի տակ նախօրոք թաղվում էր որոշ քանակությամբ ուժանակ: Թշնամին, մեզ հետ բախման մեջ մտնելու համար, անհրաժեշտորեն պիտի գրավեր «ականված կետերը», որոնք, նայած տեղագրական պայմաններին, լինում էին մեկ, երկու, երեք կամ ավելի: «Ականները» պայթեցվում էին այդ կետերի վրա նշանակված դիտողների կողմից:

Այդ միջոցին դիմում էինք, երբ պետք էր լինում, դեռ կռիվը չսկսված, թշնամու շարքերում խուճապ առաջացնել: Պայթող ժայռերի ստեղծած «քարե կարկուտ»ը փոշու և ծխի ամպերով լցնում էր ձորերը, անդամալուծելով թշնամու ուժերի առաջխաղացումը: Օգտվելով ստեղծված հոգեբանական վիճակից, Սյունիքի վաշտերը վճռում էին կռվի բախտը:

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ՀՐԱԲՈՒԽ - Համոզված, որ թշնամին Լեռնահայաստանի գավառակներից մեկն ու մեկին տեր դառնալու համար նախ պիտի փորձի գրավել Ա կամ Բ բարձունքը՝ իր հետագա առաջխաղացումն ապահովելու համար, նախօրոք, Ա կամ Բ բարձրունքի վրա, որոշ դասավորությամբ ու հեռավորությամբ, ժայռերի տակ, մացառների մեջ թաղում էինք մի քանի, երբեմն մինչև 10 մեծ պայթուցիկ տակառներ: Այս դեպքում պայթյունը, մոտ 600 քայլ հեռավորության վրա մեր դարաններից, առաջ էր բերում ձեռքի թեթև դինամո-մեքենան՝ «ականների» և մեր դարանների միջև ձգվող բիկֆորդյան թելի միջոցով:

Պայթող տակառները թշնամու ուժերի որոշ մասի հետ երկինք էին բարձրացնում քարերի, ջարդված ծառերի ու հողի մի հսկայական քանակություն:

ՄՈՒՐՃ ՈՒ ՈՍՏԱՅՆ - Ռազմական ուժերիս մի չնչին մասը, որպես նուրբ ոստայն, տարածում էի մեր ռազմաճակատի ոչ կարևոր կետերի վրա, իսկ մեծ մասը պահում իմ ղեկավարության տակ՝ վճռական վայրկյանի համար, որպես հարվածող բռունցք, որպես կենդանի մուրճ:

Թշնամին սկսում է իր առաջխաղացումը: Իմ ուժերը շարունակում են որոշ ժամանակ մնալ կրավորական վիճակի մեջ, մինչև որ թշնամին, առաջանալով, կթուլանա իր կարևոր կետերի վրա և հնարավորությունը կտա ինձ՝ թևային կամ թիկնային արագ շարժումով, իմ կենդանի մուրճը իջեցնել թշնամու հենց նույն կարևոր կետերի վրա: Այս ձևով հաճախ հաջողվում էր ինձ, ուր որ և երբ որ պետք էր լինել ուժեղ:

ՈՒԺԱՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ - Իմ ուժերի քանակը, ինչպես և իմ գործողության ուղղությունը չմատնելու համար, վճռական գործողությունների էի անցնում ընդհանրապես գիշերները:

Թշնամու ուշադրությունը մեր դիրքերին բևեռած պահելու նպատակով, մեր ռազմաճակատների զանազան կետերի վրա, խարույկների ձևով վառում էինք, երբեմն, 100-ի չափ դինամիտային մոմեր, և ապա, օգտվելով մթությունից, թեթև զորախմբերով անցնում էինք թշնամու զորաթևերն ու թիկունքը և վտանգում նրա դրությունը:

Այս ռազմադավի դեպքում, ճակատից մեզ սպասող թշնամին, հանկարծակիի եկած, կա՛մ նահանջում էր, կա՛մ կռիվն ընդունում էր իրեն համար շատ ծանր պայմանների մեջ:

ԳԱՅԼԵՐՆ ԱՌԱ՞Ջ - Թշնամուն՝ իր մեծաքանակ թնդանոթներից և գնդացիրներից օգտվելու հնարավորությունից, ասել է՝ մեզ իրական կորուստներ պատճառելու հնարավորությունից զրկելու համար՝ դիմում էինք հետևյալ միջոցին.

Նրա թնդանոթների առաջին բոմբյունին, ինչպես և գնդացիրների «տա՛-տա՛-տա՛»-ին հետևում էր մեր գայլախմբերի պետերի հրամանը՝ «գայլերն առա՞ջ»: Եվ, համարձակ ու վտանգալի գործողությունների մեջ մարզված ու մասնագիտացած մեր գայլ-զինվորները, ծանոթ երկրի տեղագրական ամենանուրբ մանրամասնություններին,

* Պատրաստվում էին երկաթյա թիթեղից: Լիցը՝ պղնձաքար, երկաթի փշրանք և ուժանակ: Ծանրությունը 20-ից մինչև 100 կիլոգրամ: Պայթեցվում էին ձեռքով, ձեռքի դինամոմեքենայով և համազարկային կրակով:

նետվում էին առաջ: Եվ միշտ էլ, երբ մեր «գայլերը» երևում էին հարկավոր կետերի վրա, որտեղից կարելի է վտանգ սպառնալ, հակառակորդը ստիպված կամ լռության էր մատնում իր թնդանոթներն ու գնդացիրները, կամ հետ փախցնում:

Այս ձևով անդամալուծվում էին թշնամու լավագույն զենքերը:

ՈՐՍՈՐԴՆԵՐՆ ԱՌԱՋ - Գործող զորամասերն այնքան են ուժեղ, որքան զգալի է հրամանատարական կազմի ներկայությունը կռվի ժամանակ, ճակատներում:

Հակառակորդիս ուժերի անմիջական ղեկավարությունը թուլացնելու նպատակով, կռիվը բորբոքվելուն պես, մեր անվրեպ խփող որսորդները, որոնց տրվում էր՝ *որսալ միայն ղեկավարներին* խնդիրը, անցնում էին գործի:

«*Զա՛րկ հրամանատարներին և փրկի՛ր զինվորներին*»: Մեր շարքերից լսվող նման բացականչություններն ունենում էին իրենց ազդեցությունը: Ղեկավար տարրի նման ահաբեկումով, հաջողվում էր մեզ թշնամուն որոշ չափով զրկել իր զորամասերի անմիջական ղեկավարությունից, ասել է՝ թուլացնել նրան:

ՓՐԿԱՐԱՐ ԱԿՆԱԽԱԲՈՒԹՅՈՒՆ - Ռազմավարական նման տարերային ու ահաբեկիչ ձևերից սարսափահար թշնամու անվճռականությունը երբեմն դառնում էր զավեշտական:

Նրա սարսափահար երևակայությունը Սյունիքի ամեն մի բարձրունքը դարձրել էր «արհեստական հրաբուխ», ամեն մի ձորը՝ անհատակ պարկ,* ամեն մի քարը՝ «գրոհող ժայռ»:

Մասնավորապես գիշերները, մառախուղի, ձյունի և անձրևների ժամանակ, երբ մեր գայլավաշտերը, ծանոթ երկրի տեղագրական պայմաններին, կրկնապատկում էին իրենց հանդգնությունն ու վճռականությունը, թշնամին դառնում էր կենդանի դիակ՝ ընդունակ միայն ծեծվելու:

Քառասուն օր շարունակ, նա երկու թնդանոթով ու մոտ երկու տասնյակ գնդացիրներով ռմբակոծեց Շիվանի Ձորի մեր դիրքերը, առանց մի քայլ իսկ առաջանալու դեպի ձորը, որի մեջ ընկած է գյուղը:

* * *

Գերի ընկած կարմիր ղեկավարները չէին թաքցնում, որ Լեռնահայաստանի գոյամարտի մասին տարածված կարծիքներից՝ շատ խորհրդային զորամասեր ազդվում էին, բարոյալքվում դեռ ճանապարհին, դեռ կռվի դաշտ չհասած:

---

* Այս անուններով կոչվում էին մեր ռազմադավերն ու խաղերը:

- Դա պատերազմ չէ,- ասում էր մի նախկին ցարական գնդապետ,- այլ *մենք՝ ցերեկը, դուք՝ գիշերը* անունով մի խաղ, որի գաղտնիքը մենք չգիտենք դեռ:

Ի՞նչ կարելի է անել մի երկրում, ուր հակառակորդդ ցերեկն անտեսանելի է, գիշերը՝ անպարտելի. ուր մի քայլ չես կարող առաջանալ՝ առանց սարսափի, թե ահա՛, քթիդ տակ, թե գլխիդ վերև, կպայթի ապստամբների պայթուցիկ տակառը, կամ թե ահա՝ թիկունքիցդ կլսվի ճերմակ գայլավաշտերի գոռոցը՝ հանձնվեցե՛ք, դուք պաշարվա՛ծ եք արդեն:

Այն, ինչ որ մեզ երբեմն մեծ դժվարություններով ու կորուստներով հաջողվում է ձեռք բերել ցերեկը, կորցնում ենք գիշերը:

Իսկապես, ի՞նչ կարելի էր անել մի ժողովրդի հետ, որն ազատ ու անկախ հայրենիք ունենալու անմեռ ու հաղթական ցանկությունն ունի: Եվ մի՞թե ազատ ու անկախ ապրելու այն անդիմադրելի ցանկության ծնունդը չէին ծանոթ հոգեբանական և ռազմավարական ազդակները, որոնք հնարավորություն ընձեռնեցին մեր լեռնաշխարհի հայության՝ աննախընթաց հաջողությամբ ու պատվով վարելու իրեն վիճակված վիթխարի գոյամարտը:

Այս գոյամարտը տվեց պատմական հետևյալ փառավոր փաստերը, որոնք մեր թշնամիների հիացմունքն իսկ կորզեցին.

1. Լեռնահայաստանի երկամյա կռիվների ընթացքում, թշնամուն՝ մուսավաթական Ադրբեջանին, թե Խորհրդային Ռուսաստանին, չհաջողվեց զենքի ուժով տեր դառնալ մեր գյուղերից անգամ մեկին:

2. Թշնամին - թաթար, ռուս և թուրք - թվապես և տեխնիկապես ավելի քան հարյուր անգամ գերազանցելով Սյունիքի ուժերը, տվեց մեզնից ավելի քան հարյուր անգամ զոհեր, մի քանի հազար գերիներ, պատերազմական մեծաքանակ ավար: Մենք ունեցանք սպանված միայն և միմիայն 28 հոգի, և չտվինք ո՛չ մեկ գերի, ո՛չ մեկ ավար:

3. Զուրկ լինելով տեխնիկ միջոցներից, թշնամու դեմ կռվել ենք իրենից խլած ռազմամթերքով ու զենքերով:

4. Իմ ժողովրդական զորամասերը, մասնավորապես գոյամարտի նախաբոլշևիկյան շրջանում, ապրել են թշնամուց ձեռք բերված հացի և այլ կենսամթերքների պաշարով:

5. Շնորհիվ իմ վարած գոյամարտի՝ Սյունիքի հայությունը փրկված է ո՛չ միայն վերահաս համաիսլամական վտանգից, այլև՝ 1920 թվին, սպառնացող սովից:

6. 1920թ. Հուլիսին, Սյունիքում գործող բոլոր հակաբոլշևիկյան կուսակցությունները, Ազգային խորհուրդը, Հայաստանի հանրապետական կառավարության ներկայացուցչությունը և իր կանոնավոր զորամասերը, ինչ-ինչ նկատումներով, դիմադրությունը անհնարին հա-

մարելով, լքեցին այդ երկրամասը և քաշվեցին Արարատյան Հայաստան:

7. Չնայած նրան, որ 1920թ. օգոստոսի 10-ի պայմանագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը Զանգեզուրն անորոշ ժամանակով զիջեց խորհրդային իշխանության, մեծապես վտանգելով իր այդ ապստամբ երկրամասի դրությունը, իմ ուժերը շարունակեցին պայքարը և ստեղծեցին ինքնավար Սյունիքը:

8. Ինքնավար Սյունիքը, քաղաքական որոշ նկատումներով, տեղի չտվեց նաև Արարատյան Հայաստանի առաջին անկումը խորհրդայնացումից հետո:

9. Իր անկախության կռիվը Սյունիքը շարունակեց ամենադժնդակ քաղաքական մենակության մեջ, այն ժամանակ,* երբ համայն Ռուսաստանը և ողջ Կովկասը լուռ կրում էին բոլշևիկյան լուծը:

10. Սյունիքը եղավ նաև հոգեբանական հրահրիչը Երևանի Փետրվարյան պոռթկումի, և, պաշտպան ու փրկության կամուրջ հանդիսանալով, խորհրդային կացնից փրկեց հայ մտավորականությունը, սպայությունը և խմբապետությունը:

11. Կտրված աշխարհից, զուրկ հաղորդակցության ամենատարրական միջոցներից, զուրկ հացից ու ռազմամթերքից, որպես մի բերդային շրջան Սյունիքը կռիվ մղեց շրջագծաձև ռազմաճակատների վրա, առանց թիկունքի և դրսի օգնության հույսերի - այնպիսի դժնդակ վիճակի մեջ, երբ քաշվել էին պատասխանատու կառավարություններն ու կուսակցությունները և մնում էր ու համառում իր լեռներին կառչած ժողովրդի հերոսական ոգին:

12. Սյունիքը իր ցույց տված դիմադրական խոյանքներով ստիպեց անգամ իր թշնամիներին՝ հարգանքով խոսել իր մասին և տեղի տվեց *առանց կռվի*, իր կամքը խորհրդային իշխանության պարտադրելուց, այն է՝ Հայաստանի անբաժան մասը ճանաչվելուց հետո:

Պատմական այս պերճախոս իրողությունները իրավունք են տալիս ինձ՝ առանձին հպարտությամբ ու քաղցրությամբ Լեռնահայաստանն անվանելու «վիրավոր, բայց անպարտելի զինվոր»:

«Հայրենիք» ամսագիր, թիվ 11, սեպտեմբեր1923թ.:

---

* Երբ վերջնական պարտության էին մատնված Կորնիլովի, Յուդենիչի, Դենիկինի, Կոլչակի, Վրանգելի և այլոց սպիտակ բանակները:

ՀԱՅ-ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ

I
ԱՌԱՋԻՆ ԳՆԴԱԿԸ

1920թ. հունիսի 17-ին Ղափանի հանքերում տեղի ունեցած Կապարգողթի[1] հայության ներկայացուցչական ժողովը որոշում է.

Ա) Բոլոր շարժումները, ներքին թե արտաքին, ուղղված Հայաստանի անկախության, և մասնավորապես, Ղարաբաղ-Զանգեզուրի ազատագրական ձգտումների դեմ, համարել հակահեղափոխական և դավաճանական ու ամեն գնով աջակցել կառավարության՝ իրենց սաղմի մեջ խեղդելու երկիրը դեպի կորուստ տանող բոլոր երևույթները:

Բ) Ադրբեջանի խորհրդայնացումը համարել քաղաքական շանտաժ, ստեղծված տաճկա-ադրբեջանյան համիսլամականների և ռազմապաշտների ձեռքով՝ հատկապես Հայաստանի անկախությունը և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը վտանգելու նպատակով:

Գ) Ամեն մի Ղափանցի, 18-60 տարեկան, ինչպես եղել է մինչև օրս, զենքը ձեռքին կռվելու է Ադրբեջանի դեմ մինչև վերջին փամփուշտն ու արյան կաթիլը, քանի նա կշարունակի իր հայակեր քաղաքականությունը:

Դ) Ամուր պահելով կառավարության բարոյական ու ֆիզիկական հմայքը, գիշեր-ցերեկ հսկել դիրքերում և կոչ անել Զանգեզուրի ազգաբնակությանը՝ վարվել նույն ձևով:

Այդ օրերին Ղափան են անցնում տարաբախտ Խորենին ու Շիրինյանը, որոնք նոր էին Գորիս ժամանել ՀՅԴ Զանգեզուրի արտակարգ կոմիտեի կողմից: Վերջինները Կապարգողթի տրամադրություններին ծանոթանալու համար խնդրում եմ ինձ, իրենց հետ միասին, այցելել իմ շրջանի մի քանի գյուղերը:

Հունիսի վերջերին Մեղրիում ստացվում է Դրոյի գրությունը, որով նա տեղեկացնում է, թե բոլշևիկները ուժեր են կենտրոնացրել Զաբուղում և պատրաստվում են անցնել Զանգեզուր: Այդ լուրի վրա մենք անմիջապես վերադառնում ենք Ղափան, որտեղից Շիրինյանն, Խորենին և Աշոտ Մելիք-Մուսյանը ճանապարհվում են դեպի Գորիս:

Հուլիս 5-ի առավոտյան ժամը 10-ի մոտերը մեր երեք տարաբախտ ընկերները հասնում են Քարահունչ և ականատես լինում բոլշևիկյան մի բացօդյա միտինգի: Այդտեղ մերոնց համար պարզվում է, որ Երևանյան ուժերը տեղի են տվել, նահանջելով դեպի Վայոց-Ձոր, և որ Գորիսը անցել է կարմիրների ձեռքը:

Մերոնք, առանց մատնելու իրենց ներկայությունը, հեռանում են Քարահունչից: Շիրինյանը, Խորենու հետ, անցնում է իր հայրենի

գյուղը՝ Շինու Հայր, իսկ Աշոտը, առանց հապաղելու, աճապարում է հասցնելու ինձ Գորիսի անկման լուրը:

Հանկարծակիի եկած, հուլիսի 7-ին, Կապարգողթի ազգաբնակչությանն եմ ուղղում իմ նախազգուշական խոսքը.

«Հայ ժողովուրդ, Կապագողթի և Բաղաբերթի հերոս ժողովուրդ, վտանգը, բոլշևիզմի կեղծ կարմիր փետուրներով զարդարված ադրբեջանական վտանգն է կանգնած դռանդ: Ուրեմն, ինչպես և միշտ, եղիր արթուն, սպառազեն ու միշտ պատրաստ դիրքերում, հանկարծակիի չգալու համար: Աստված և իմ սուրը քեզ հետ»:

* * *

Ղարաբաղը առանց կռվի թշնամուն թողնելը, անշուշտ, պիտի ունենար իր բարոյալքիչ ազդեցությունը Զանգեզուրի վրա: Կամ թշնամին չափազանց ուժեղ է, որ երևանյան զորքերը խուսափել են չափվելու նրա հետ, կամ ինչ-ինչ քաղաքական նկատառումներով, չպետք էր կռվել և չեն կռվել մերոնք:

Այսպես էր մտածել բուն Զանգեզուրը և աղ ու հացով ընդունել թշնամուն:

Այդ բոլորը գաղտնիք չէր և իմ շրջանների հայության համար, որի որոշ տարրերը նույնպես ազդված էին ստեղծված դրությունից:

Հուլիսի 8-ին Շիկահողի ուսուցիչ Բագրատ Հարությունյանին, իմ նախկին կամավորներից, իր ցանկությամբ, ուղարկում եմ Գորիս՝ թշնամու ուժերի և մտադրությունների մասին որոշ տեղեկություններ բերելու համար: Վերջինս հայտնի էր իբրև գաղափարական կոմունիստ: Չուրանալով իր համայնավարական լինելը, նա միշտ էլ առանձին հպարտությամբ էր խոսում իր լավ հայ լինելու մասին և վստահեցնում, որ նա որևէ կապ չունի բոլշևիկների հետ, որ քանի դեռ վերջինները բարեկամ կմնան արևելյան փաշաներին, նա իրականի մեջ կմնա թշնամի բոլշևիկներին: Այդ մարդը, ըստ իր խոստման, Գորիսում պիտի մնար ընդամենը մի օր, և, որոշ տեղեկություններ հավաքելուց հետո, գիշերով պիտի հեռանար քաղաքից:

Հուլիսի 10-ի գիշերը բոլշևիկյան մի հեծյալ գունդ հանկարծակիի է բերում Ղափանի սահմանագլխային գյուղերից Խոտանանը: Լուսաբացին այդ գյուղից հասնում է առաջին սուրհանդակը և գուժում Խոտանանի անկման լուրը:

Նա պահպանում է նաև Բագրատի դավաճանության մասին: «Լավ հայը» թշնամու անելիքների և ուժերի մասին տեղեկություններ բերելու փոխարեն թշնամու բանակն էր առաջնորդել դեպի Ղափան:

Մի քանի թիկնապահներով նետվում եմ Կավարտ՝ տեղական ուժերը ոտքի հանելու: Քիչ անց Զալինգյոլ են հասնում Խլաթազից և Առաջածորից փախած մի քանի գյուղացիներ ու պատմում, որ այդ

գյուղերն էլ աղ ու հացով են ընդունել կարմիրներին և որ թշնամին արդեն շարժվում է դեպի Հանքերը:

Մոտ քառորդ ժամ անց՝ թշնամու հեծելազորքը հայտնվում է Կավարտի և Առաջածորի միջև ընկած ձորում:

Մոտակա գյուղերից ժամանակին հասած իմ վաշտերը, արդեն գրավել են ճանապարհի երկու կողմերի բարձունքները: Կավարտից ճակատ են տեղափոխված բավականին պայթուցիկ տակառներ: Միայն «համոզմունքներով կոմունիստ» հայը մատնում է իր ներկայությունը: Նա՝ ընկած թշնամու զորքերի առաջ, մոտենում է մեր դիրքերին: Հրամայում եմ պայթեցնել տակառներից մեկը: «Առանց մի գնդակ արձակելու Բաքու, Շուշի, Գորիս մտած զորքը» անմիջապես դադարեցնում է իր առաջխաղացումը: Քիչ անց, նրա բանագնացները, ճերմակ դրոշակը պարզած, առաջանում են դեպի մեր դիրքերը:

-Պարո՛ն գնդապետ, - շարունակելով նստած մնալ ձիու վրա,- սկսում է կարմիրների ներկայացուցիչը,- խորհրդային հրամանատարությունը խնդրում է ձեզնից ճանապարհ տալ իր զորքերին՝ անցնելու Ջուլֆա:

-Ջուլֆա անցնելու համար կարմիր հրամանատարությունը իր տրամադրության տակ ունի լավագույն ճանապարհը՝ Սիսիան-Նախիջևան գիծը,- լինում է իմ պատասխանը:

-Այդ ճիշտ է, բայց մեզ պետք է և Ղափան-Մեղրի գիծը, որ, ըստ կարմիր հրամանատարության, մեծապես պիտի հեշտացնի մեր առաջխաղացումը դեպի հեռուները՝ Պարսկաստանի վրայով Հնդկաստան և այլն:

Կարմիրների բանագնացի վերջին խոսքերը ստիպում են ինձ ժպտալ:

-Ի՞նչ, դուք Պարսկաստանը արդեն խորհրդայնացա՞ծ եք համարում:

-Գրեթե այո՛, հաղթական տոնով պատասխանում է կարմիրը:

Այս կարճ փոխասացությունից հետո ինձ մնում էր խորհրդային բանագնացներին զգացնել տալ, որ լավ կլինի, եթե կարմիր զորքը հետ քաշվի Ղափանի սահմաններից և սպասի ժողովրդի վերջին խոսքին, որ քանի դեռ ժողովուրդը չի ասել իր խոսքը, ես տեղի չեմ տա, որ սկսվելիք կռիվների և թափվելիք արյան ամբողջ պատասխանատվությունը ընկնելու է կարմիր հրամանատարության վրա:

Օգտվելով առիթից, չէի կարող Բագրատին չհիշեցնել մեր պատմության տխուր վկայությունը հայ մատնիչների մասին: *«Շապուհի բանակներին կառաջնորդեին Հայաստանի աշխարհագրության ու ամրություններին ծանոթ հայ դավաճանները»:*

Թշնամու բանագնացները վերադառնում են, տանելով իմ պատասխանը:

Մեր դիրքերում թնդում է «Ղափան երկիր ազատ, անկախ» երգը:

Արևելքի ջարդարար փաշաների հետ զինակցած բոլշևիզմի խոփը առաջին անգամ քարին էր առնում:

Ցերեկվա ժամը 4-ի մոտերը թշնամին նահանջում է դեպի Խոտանան և այն տեղից, հենց նույն օրը, ուղղում է ինձ հետևյալ վերջնագիրը. «Գնդապետ Նժդեհին: Արդեն Ղարաբաղ-Զանգեզուր է մտել կարմիր բանակը: Բոլոր տեղերում կազմակերպված են հեղկոմներ: Հրամայում եմ այդ առթիվ հայտարարել ժողովրդին և ճանապարհ տալ Վերին Խոտանանում գտնվող մեր զորամասին անցնելու Մեղրիի վրայով Օրդուբադ-Ջուլֆա:

Զորամասի զինվորական կոմիսար ԻՎԱՆՈՎ: *10 հուլիս, 1920թ., Վ. Խոտանան*»:

* * *

Հանրապետական զորամասերի, ինչպես և բուն Զանգեզուրի, Սիսիանի, Տաթևի և այլ վայրերի ազգաբնակության առանց կռվի տեղի տալը, իմ ժողովրդական վաշտերի հոգնածությունը՝ որպես հետևանք երկարատև կռիվների և ռազմամթերքի պակասը նվազ չափով չէին կորովազրկել և Ղափանը: Տատանում կար, անվճռականություն էր զգացվում և այդ շրջանի հայության մեջ, մի բան, որը սպառնում էր իմ խնամքին հանձնված երկրամասը ևս առանց կռվի հանձնելու թշնամուն:

Գիտակ՝ ստեղծված փափուկ դրության, հուլիսի 12-ին Առաջաձոր գյուղում հրավիրում եմ Ղափանի երկրորդ արտակարգ ներկայացուցչական ժողովը, որին բոլոր գյուղերը մասնակցում են իրենց երկուական ներկայացուցիչներով: Ժողովը քննում է «կարմիր հրամանատարությունից ստացված վերջնագիրը և ընդհանուր հրամանատար Նժդեհին տրվելիք պատասխանը»:

Ժողովին ես դիտմամբ չեմ մասնակցում, որպեսզի ժողովրդի ներկայացուցչությունը չնեղվի բարոյապես և արտահայտվի ազատ: Ժողովը տեղի է ունենում բացօդյա: Ժողովատեղից մի քանի քայլ հեռու համհարգիս հետ նստած սպասում եմ ժողովրդի վերջին խոսքին: Կռվելո՞ւ է Ղափանը, թե ոչ:

Այդ հարցին պիտի պատասխաներ ժողովրդի ներկայացուցչությունը և դժվարանում էր պատասխանել: «Այո»-ի դեպքում նա գործ պիտի ունենար Ռուսիայի և Ադրբեջանի ծով ուժերի հետ, իսկ «ոչ»-ի դեպքում՝ «բարի ճանապարհ» պիտի ասեր ինձ, իր ղեկավարին:

Ծանր էր ժողովի, ասել է՝ ժողովրդի դրությունը: Ողբերգական լինելու աստիճան ծանր էր և իմ դրությունը: Բոլշևիզմի և համիսլամության եղբայրացումից ես լավ բան չէի սպասում հայ ժողովրդի համար: Ահա՝ թե ինչու բարոյապես ազատ չէի զգում ինձ, հանրապետական

զորքերը Զանգեզուրը լքելուց հետո, առանց կռվի Կապարգողթն էլ Խորհրդային Ադրբեջանին հանձնելու:

Ժողովը շատ է երկարում: Գրեթե այլևս խոսողներ չկան: Նախագահը ունելիով մի քանի կցկտուր և անորոշ խոսքեր դուրս քաշում այս կամ այն ներկայացուցչի բերանից: Ոչ ոք չի ուզում պատասխանատվությունը իր վրա վերցնել: Վաշտապետներիցս Գերասիմը[2] տեղեկացնում է՝ ժողովում ստեղծված ծանր մթնոլորտի մասին: Իմ միջամտությունը անհրաժեշտ է դառնում:

Անցնում եմ ժողովատեղին:

-Ղափանցիներ, եկա, ձեր վերջին խոսքը լսելուց առաջ, իմ վերջին խոսքն ասելու ձեզ: Չէ, էլ ոչինչ չունեմ ասելու ձեզ: Միայն մի խնդիր ունեմ, որ չեք կարող չկատարել: Վաղուց է, ինչ կռվում եմ ձեր երկրում ձեզ համար: Որպես բարոյական *վարձատրություն, կուզեի, որ հանեիք իմ աչքերը, կուրացնեիք ինձ, որ անբախտություն չունենայի ձեր գլխին գալիք աղետը տեսնելու:*

Այդ էր իմ վերջին խոսքը, որ ժողովին ասելուց հետո, դառնացած, բայց ոչ ընկճված՝ ընդհանուր լռության մեջ հեռացա ժողովատեղից:

Մոտ կես ժամ անց՝ ինձ ներկայացրին ժողովի արձանագրությունը, որի մի հատվածը բերում եմ ստորև.

«Թույլ չտալ, ինչ գնով էլ ուզում է լինի, կարմիրներին ներխուժելու Ղափան: Ղափանի ներկայացուցիչները այս որոշումը կայացնում են իրենց պատգամավորների զեկուցումը լսելուց հետո, որոնք 1920թ. հուլիսի 11-ին տեսնվել էին խորհրդային ներկայացուցչության հետ և վերջինից լսել հետևյալը՝ *Ա) Մենք եկել ենք Զանգեզուրն ու Ղարաբաղը կցելու Խորհրդային Ադրբեջանին, Բ) Պիտի զինաթափենք ժողովուրդը, Գ) Զենքերը հանձնելու ենք մեր կողմնակիցներին*»:

Անմիջապես վաշտերին հաղորդվում է Ղափանի որոշումը և իմ թշնամուն ուղղած հետևյալ հակավերջնագիրը.

«Խոտանանում գտնվող կարմիրների զորամասի պետին: Կապարգողթի գյուղացիական ներկայացուցչական խորհուրդը, հրամայել է ինձ ուղարկելու ձեզ վերջնագիր՝ վաղը՝ ամսի 13-ին, մինչև ժամը 7-ը թողնել Ղափանի սահմանները, հակառակ դեպքում ստիպված կլինեմ անցնելու հարձակողականի և զենքի ուժով վանելու ձեզ: ՆԺԴԵՀ, 1920թ., 12 հուլիս, Ղափանի Հանքեր»:

Հուլիսի 13-ի առավոտյան, դեռ լույսը չբացված, թշնամին թողնում է Խոտանանը և նահանջում է դեպի Գորիս:

Այսպես է առաջին անգամ փրկվում Կապարգողթը:

II
ԹՇՆԱՄՈՒ ԱՄԵՆԱԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Կարմիրները շատ շուտ զգացնել տվին, որ իրենց ռազմավարության և ռազմական ուժերի դեմ կռվելն ավելի հեշտ է, քան իրենց քարոզության դեմ:

Մինչև օրս էլ խոստովանում եմ, ես առանց գլխապտույտի չեմ կարողանում կարդալ խորհրդային թերթերն ու թռուցիկները: Կարմիրները չեն խոսում, չեն գրում համոզելու, տարհամոզելու, սեղմ ասած՝ հասկացնելու համար: Նրանք աղմկում են, միայն աղաղակում, ճչում, բեմական կեցվածք ընդունում, սպառնալից ժեստեր կատարում, խոստումներ անում՝ միայն և միմիայն շշմեցնելու համար: Թերթելով խորհրդային օրգանները, մարդ ակամայից հիշում է լատինական ասույթը- «Լռե՛ք նրանք աղմկում են»: Այո, աղմկում են և գիտեն աղմկել:

«Ամբոխները ամենից առաջ հույսեր են փնտրում: Զուրկ կարելիության զգացումից և օժտված ծայրահեղ թեթևամտությամբ, նրանք ընդունում են ամենաանհավանական խոստումները»: Ֆրանսիական հռչակավոր հոգեբանի այդ խոսքերից, թվում է, ոչ ոք այնքան մեծ չափով չի օգտվել, որքան կարմիրները: Հազարավոր թերթեր, թռուցիկներ, քարոզիչներ ու գործակալներ, թափված գյուղերը՝ աշխատավոր զանգվածներին ասում էին, խոսում, հավատացնում, թե խորհրդային իշխանությունը սայլերով, ուր երկաթուղի կա՝ վագոններով, ուր ծով՝ նավերով՝ հաց, հանգիստ, ու ազատություն է բերում մարդկության սոված ու տառապած մասի համար:

Խոսքից, ստից, կեղծիքից շատ կար և՛ մի ուրիշ միջոց, գուցե ավելի հրապուրիչ և զորավոր, քան առաջինները: *Դրամն* էր դա:

Պետք է ասել, որ խոստումներ կատարելու աստիճան թշնամին շռայլ և առատաձեռն էր նաև դրամի գործածության մեջ: Նա առաջանում էր դրամի դեզեր ցրելով, կաշառելով ազգաբնակչության բոլոր տեսակի տականքներին: Թույլատրելի էին համարվել բոլոր միջոցները: Չկար ազնիվն ու ստորը, սուրբն ու անսուրբը, մարդկային ու տմարդը: Ինչ որ հնարավոր էր, ուրեմն, ապա և կարելի էր ու թույլատրելի: Բարոյականություն, էթիկա, մարդկայնություն,- այդ բոլորը թքված ու հանձնված էր արխիվ:

Թույլատրելի էր համարվել անգամ դասական բռնապետությունների ու բռնապետների *բաժանիր, որ տիրես* մաքիավելիական բարոյազուրկ միջոցը: Քաղաքական նոր նկատառումներով ոչ թե միայն հայկական Ղարաբաղն էր հայտարարված Խորհրդային Ադրբեջանի անբաժան մասը, այլև Զանգեզուրը:

Դատապարտելի ցեղամիջյան հակամարտությունն էլ օգտագործելի էր համարվել խորհրդային քաղաքականության կողմից: Գանձակում կարմիր հրամանատարությունը հայերի ձեռքով էր սանձահարել մուսաֆաթական մասսաներին, Զանգեզուրում՝ թուրք և տաճիկ ուժերով պաշարել Կապարգողթի հայությունը:

III
ՄԻ ԱՆՀԱՋՈՂ ՓՈՐՁ

Հուլիսի վերջին տեղի է ունենում Երևանյան զորամասի հարձակումը Զանգեզուրի վրա, որը, որոշ սխալների շնորհիվ, վերջանում է անհաջողությամբ: Կռվի երկրորդ օրը հանրապետական զորքը, տեղի տալով թշնամու ուժերի առաջ, վերստին լքում է Գորիսը:

Ղափանից օգնության հասած իմ զորամասին այս անգամ էլ վիճակվում է ապահովել Երևանյան ուժերի նահանջը: Դեպի Դարալագյազ քաշվող ուժերի անկարգ նահանջի շնորհիվ իմ ուժերից մի տասնյակ դժվարանում է ժամանակին դուրս գալ Գորիսի ձորերից և ընկնում է թշնամու կրակի տակ: Զինվորներիս փրկելու փորձի ժամանակ՝ վիրավորված շարժվում եմ դեպի Ուչքափալար, ուր Դրոն առաջարկում է ինձ անցնել Երևան բժշկվելու համար:

Պարզելով Զանգեզուրն անտեր թողնելու անպատեհությունները, բաժանվում եմ նրանից և անցնում Ղափան:

IV
ՍՊԱՌՆԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության Զինվորական Նախարարին: Պատճեն՝ Խորհրդարանին: Երկրորդ անգամն է, ինչ Ղափանը, Գենվազը, Բաղաբերդը և Գողթանը, երևանյան զորամասի ռազմական անմիտ խաղերի շնորհիվ, մնում են մենակ, պաշարված, կտրված աշխարհից: Մեր ժողովուրդը Գորիսի առաջին անկումից հետո անհամբեր սպասում էր և ջերմորեն հավատում, որ իր կառավարությունը այսօրվաղը կհասնի իրեն՝ կվերագրավի Զանգեզուրը:

Սակայն մեր մտքով անգամ չէր անցնում, որ տեղի կունենա մի վտանգավոր խաղ, մի անմիտ հարձակում, որ երևանյան զորամասը կվտանգի մեր դրությունը և երրորդ օրը վերստին կլքի Զանգեզուրը և կքաշվի Դարալագյազ: Այդ անմիտ խաղին մասնակցելու էին կանչված նաև Ղափանի ուժերի մի մասը, որոնք վերադարձել են գազազած: Նրանք սպասելիս են եղել, որ երևանյան զորքը չի կրկնի իր հին սխալը, որ նա կանցնի Ղափան-Գողթան, ավելի ուժեղացնելու այդ շրջանները, բայց, դժբախտաբար, կատաստրոֆիկ սխալը կատարվել է, և Դրոն այսօր Զանգեզուրից դուրս է գտնվում:

Սրանից զատ, Զանգեզուրի նախկին հրամանատարությունը թույլ է տվել մի աղաղակող անարդարություն: Նա իր թնդանոթները Ղափանին տալու փոխարեն, իր հետ Դարալագյազ է տարել Ղափանում եղած երկու թնդանոթները, պատճառաբանելով, որ ոչ մի թնդանոթաձիգ սպա չի համաձայնվում վերադառնալ Ղափան: Ի՞նչ, Դրոն եկել էր զինաթա՞փ անելու մեզ, թուլացնելու: Ի՞նչ է նշանակում սա:

Մենակ մնացած ժողովուրդը հազար ենթադրություններ է անում:

Վերջին անգամ դիմում ենք ձեզ և խնդրում արագացնել զորքերի առաքումը Սիսիան: Մեր հրամանատարը գտնում է, որ կարիք չկա կռվով վերագրավելու Գորիսը և պահելու Զաբուղի ճակատը: Գրավելով Սիսիանը մինչև Տաթև, մենք փաստորեն տեր ենք դառնալու ամբողջ Զանգեզուրին: Ուչթափալար-Տաթև-Ինջաբել գիծը բռնելով, մենք կստիպենք բոլշևիկներին թողնելու Գորիսը: Ղափանի գյուղացիական ներկայացուցչական խորհրդի նախագահություն:

1920թ. 21 օգոստոս, Հանքեր»:

Մեզ վիճակված չէր ստանալ լեռներով երթևեկող սուրհանդակների միջոցով Երևանին հղած այդ գրության պատասխանը:

Ես գիտեի, որ այլևս Երևանը մեզ հետ կապվել չէր կարող Սիսիանի վրայով, բայց չէի սպասում, որ նա երբևիցե կհաշտվի Զանգեզուրից ընդմիշտ ձեռք քաշելու մտքի հետ: Նվազ հույսեր ունեի նաև Շարուր-Նախիջևանի ուղղությամբ սկսված երևանյան զորքերի գործողությունների հաջողության նկատմամբ:

Ես գիտեի Ղափանի թույլ, խոցելի կողմը և անհանգիստ էի: Դրությունը շարունակում էր օրեցոր ավելի և ավելի բարդանալ:

Օգնության փոխարեն օգոստոսի 15-ին ստացվում է հետևյալ գրությունը.

«Ղափանի զորամասի պետ Նժդեհին.

Հաղորդում եմ ձեզ զինվորական նախարարարի հրամանի պատճենը «Զինվորական Նախարարը հրամայում է Ձեզ, կապ պահելով Նժդեհի հետ, տեղեկացնել նրան, որպեսզի նա, համաձայն կնքված զինադադարի.[3] հավաքի իր զորամասերը, նույնպես և բոլոր ցանկացողներին և, նախազգուշական միջոցներ ձեռք առնելով, անցնի մեր տերիտորիան, բերելով իր հետ ամբողջ զենքերը: 10 օգոստոսի 1920թ., Զինվորական նախարարի համհարզ Գյուլազիզյան»:

Խոստովանում եմ, որ կյանքում ինձ ոչինչ այնպես հանկարծակի չի բերել, ինչպես այդ գրությունը: Եթե Հայաստանի զինվորական նախարարությունը ցանկություն ունենար գոնե մի անգամ դիմելու Հայաստանի քարտեզի խորհրդին, անշուշտ պիտի համոզվեր, որ նման վերաբերմունքով ոչ թե միայն Զանգեզուրն էր հանձնում կարմիրներին, այլև Արարատյան Հայաստանը:

Օգոստոսի 18-ին սուրհանդակները Երևան տարան իմ հետևյալ գրությունը՝ «Զինվորական Նախարարին, պատճենը՝ Գեն. Նազարբեկովին: Դրոն զինվորական նախարարի անունից հրամայում է ինձ, համաձայն կնքված զինադադարի, վերցնել իմ զորամասը և անցնել մեր տերիտորիան: Ես չգիտեմ թե՝

1) Ի՞նչ պայմաններով, ո՞ւմ հետ (Ադրբեջանի՞, թե՞ Սովետական Ռուսաստանի) և ո՞րքան ժամանակով է կնքված զինադադարը:

2) Եթե Կապարգողթի իմ ուժերը, համաձայն զինադադարի, պետք է թողնեն իրենց երկիրը և քաշվեն մեր տերիտորիան, ապա բոլշևիկները և ադրբեջանական բանդաները ե՞րբ և ո՞ւր են քաշվելու:

3) Ի՞նչ է լինելու Գողթանի դրությունը, որը վարչական տեսակետով չի մտնում Զանգեզուրի մեջ:

4) Չե՞ք կասկածում, որ թշնամին կարող է դավադրել,- այն է, որ մեր դուրս գալուց հետո, հանկարծակիի բերել անտերացած ազգաբնակությունը և տեր դառնալ Կապարգողթի չորս ապստամբ շրջաններին:[4]

5) Մեր խոր հետախուզությունը պարզել է, որ Այրի-Զարում կուտակված են բավականին մեծ ուժեր:

Չե՞ք ենթադրում, որ եթե ես Զանգեզուրը թողնեմ, այդ ուժերը հեշտությամբ կարող են տեր դառնալ Երևանին:

Սա ի՞նչ զինադադար է, որի ժամանակ բոլշևիկները շարունակում են իրենց շահատակությունները, թալանը և զինաթափությունը Սիսիանում և բուն Զանգեզուրում: ՆԺԴԵՀ, 1920թ. 13 օգոստոսի, Հանքեր»:

V
ՀԵՐՈՍԱԿԱՆ ՁԵՅՎԱՆ

Անկարելի է երևակայել ավելի ծանր և անորոշ դրություն, քան այն, որ ստեղծվեց մեզ համար Գորիսի երկրորդ անկումով: Զոհերի ամբողջ դեզը Զաբուղի ձորում, Խորենու, Շիրինյանի, Մալինցյանի և մի շարք հասարակական գործիչների գլխատումը Գորիսի պատերի տակ, խորհրդային նոր զորքերի ժամանումը Զանգեզուր, սրանց սանձարձակությունները, հարուցած հալածանքը, բռնագրավումները, զինաթափությունը մահվան սպառնալիքի տակ, մեր կռվի համար ամենաանհրաժեշտ միջոցների՝ հացի, ռազմամթերքի, դրամի, կապի, հաղորդակցության բացարձակ բացակայությունը ստեղծել էին մի ծանր, մի խեղդիչ մթնոլորտ Կապարգողթի հայության համար:

Բայց և այնպես պետք էր մնալ, համառել, շարունակել կռիվը, որովհետև այլևս գաղտնիք չէր, որ 11-րդ կարմիր բանակը, հրահանգելով Նարիմանովից և ընկերներից, «խորհրդայնացնելու» փոխարեն

մահ և ավերածություն էր տարածում իր գրաված շրջաններում, ձգտելով հայկական կենդանի սեպի վերացումով իրագործել իր գինակից համիսլամության վաղեմի երազը:

Եվ շարունակվեց կռիվը ամենադժնդակ պայմաններում, մոտ 70 օր, մինչև որ հասան հունձքի օրերը, երբ քաղցած գյուղացիությունը, թողած զենքը, դիմեց մանգաղին, երբ նա կամովին զինաթափությամբ հնարավորություն ընձեռնեց թշնամուն ավելի մեծ վստահությամբ շարժվելու դեպի Ղափան:

Այդ շրջանի 38 գյուղերից կռվին մասնակցեց միայն մեկը՝ Զեյվան և կռվեց արիաբար: Սեպածև թաղված լինելով Բարգուշատի կրծքի մեջ, նա, Ղափանի առաջամարտիկի դերում, ավելի քան երկու ամիս դիմադրեց թշնամու բոլոր հարձակումներին և մարզվեց, թրծվեց կռիվների մեջ: Թշնամու հսկայական ուժերին, նրա «Զինտ» թնդանոթներին, մեծաթիվ գնդացիրներին նա պատասխանեց իր քաջահանդուգն զինվորների դինամիտային գրոհներով:

Սեպտեմբերի 1-ից կռիվներն այդ ճակատում վերսկսվում են ու շարունակվում մեծ չափակետով ու չտեսնված կատաղությամբ: Թշնամու կողմից գրեթե միաժամանակ գործողություններ են սկսվում և Ինջաբելի, և Գեղվածորի, և Գեազբելի կողմից: Կարմիր հրամանատարությունը ոտքի է հանել Բարգուշատի, Խանլղի, Հաքյարուի, Այրիչայի և Գեղվածորի բովանդակ ուժերը: Օգնական ուժեր են հասել և Ջիբրայիլից: Կռվին իր մասնակցությունն է բերել և հայ ժողովրդի տականքը, սրիկաների մի ամբողջ լեգեոն:

Կռվի երրորդ օրն է:

Թշնամին, զգալով իր անճարությունը, պատրաստվում է վերստին հետ քաշվել Գորիս: Մեր հյուսիս-արևելյան երեք գյուղերից մի խումբ անարիներ կապվում են թշնամու հետ և սկսում սև գործը: Թշնամին փոխում է իր մտադրությունը: Այժմ նա գիտի, որ Ղափանի կռվող ուժերի գրեթե ութսուն տոկոսը չի մասնակցում և չի մասնակցելու կռիվներին, որովհետև ժողովուրդը, խոտհարքն ու հունձքը ընկած լինելու պատճառով թողել է զենքը և վերցրել մանգաղը: Թշնամին գիտի և այն, որ ես պետական կանոնավոր զորք չունեմ, որ՝ այդ օրերին, ստանձնելով երկրի ինքնապաշտպանությունը, հնարավորություն տար գյուղացիության ավարտելու իր դաշտային աշխատանքները: Այժմ թշնամին գիտի այդ բոլորը և վճռականորեն շարունակում է կռիվը:

* * *

Օրը տարաժամում է:
Թշնամու թնդանոթները լուռ են:
Լսվում է գնդացիրային «տա՛-տա՛-տա՛ն»:

Մի քանի ձիավորներով շրջում եմ դիրքերը՝ տղաներիս բարոյապես գոտեպնդելու նպատակով: Հանկարծ *«Բերդակ»* կոչված մեր դիրքերից լսվում է ուժեղ գնդացիրային հրացանաձգությունը: Մենք գնդացիր չունենք, ասել է՝ թշնամին է առաջանում այդ ուղղությամբ:

Սրարշավ ձիս դարձնում եմ դեպի այդ կողմը:

-Գալի՛ս ենք, գալի՛ս,- բարձր կանչով առաջանում ենք անտառի միջով:

-Հասի՛ր, պարոն հրամանատար, հասի՛ր,- լսվում է «Բերդակից»:

-Գալի՛ս ենք, հասա՛նք, առա՛ջ,- գոռում են ձիավորներս:

-Այստեղ՝ պարոն հրամանատար, ա՛յս կողմը,- վերստին կանչում են «Բերդակ»-ից:

Ես և հետս եղած երեք ձիավորները նետվում ենք դեպի ձախ:

«Կրա՛կ», լսվում է թշնամու ազդարարը և չգիտեմ, գնդացրային թե հրացանային կրակը, մոտ 30 քայլի վրա, ցրում է ձիուս կուրծքը ու գլորում գետին:

Դավադրությունը կատարյալ էր ու հաջող:

Նման օրհասական և գերագույն վայրկյաններում կռվողը իր շարժումների մեջ լինում է տարրերայնորեն, արագ և վճռական սատանայի չափ:

Չգիտեմ, թե ինչո՞ւ թշնամին չկարողացավ օգտվել իմ նեղ վիճակից, բայց գիտեմ այն, որ իմ և թիկնապահներիս «անբաժան ընկեր» ուժանակային ռումբերը փրկարար գործ տեսան այդ վայրկյանում:

Իմ բացականչությունը՝ «Գենվազգիներ՛, դեպի թշնամու թիկունքը, առա՛ջ», խաբել էր և վայրկենական վարանում պատճառել թշնամուն: Եվ մինչև որ թշնամին հասկացավ իմ ռազմադավը և փարատեց իր շվարումը, ես թիկնապահներիս հետ, երկու մաուզերներ պարպելով, արդեն բավականին հեռացել էի կրակի գծից:

Հավատացած, որ նման դեպքերում ինձ հետ առնվազն 50-100 ձիավորներ կլինեն, կարմիրները քիչ առաջ էին մատնել իրենց ներկայությունը այդ ճակատամասի վրա: Նրանք կատարյալ հնարավորություն ունեին օգտվելու իրենց խորամանկ ռազմադավից, առանց գնդակ արձակելու: Խփելով ձիս, նրանք դիպվածով փրկեցին ինձ:

Ինչ խոսք, որ եթե «կրա՛կ» ազդարարը մի ակնթարթ ուշ լսվեր, ես կուրորեն նետված պիտի լինեի թշնամու շարքերի մեջ:

Հրաշքով փրկված՝ նետվեցի Ղզլտաշ: Պարզվեց, որ Սևաքարի ու Արմենծանիկի կռվող ուժերը մոտ մի ժամ առաջ, ինչ որ մութ անհատների փսփսոցի ազդեցության տակ, լքել են Բերդակը և, այսպիսով, մերկացրել Զեյվայի թիկունքը:

Զեյվայի ուժերին մնում էր տեղի տալ:

Երեկոյան դեմ Հանքերից տեղապահս հեռախոսագրում էր. «Թշնամին մեծ ուժերով Գեղվածորից ու Ինջաբելից անարգել շարժվում է դեպի Հանքերը: Գյուղերը չեն դիմադրում: Ձեր ներկայությունը անհրաժեշտ է»:

Վերադառնում եմ Հանքերը:

Թշնամին մոտ է, մեր շտաբից օդային գծով մոտ երկու վերստի վրա: Մեր կողմից կարմիրներին ցույց տված դիմադրությունը շատ հեռու է այդպիսին լինելուց: Կռիվ չէ, այլ ժամանակ շահելու փորձեր՝ շտաբը, արխիվը և հիվանդներիս տեղափոխելու համար:

Մի քանի ձիավորներով շարժվում եմ դեպի Կավարտ: Ճանապարհին դեպի ճակատ վազող զինվորների փոխարեն հանդիպում եմ դաշտերից վերադարձող հնձավորների միայն: Մի քանի հոգով ամրանում ենք Կավարտի լեռնանցքի վրա: Մի քիչ անց՝ հասնում է և Գերասիմը, մոտ մի տասնյակ տղաներով: Ձալինգյոլ հասած կարմիրների հեծելագունդը՝ մեր դինամիտային ռումբերի պայթյուններից հանկարծակիի եկած՝ ընդունում է կռիվը, իրեն համար շատ ծանր դրության մեջ և, ինչպես ասում են, փետրահան լինում:

Տեղեկացնում են, թե հիվանդների փոխադրությունը վերջացած է: Վերադառնում եմ Հանքերը: վերջին անգամ հեռախոսի մոտ կանչում եմ Շիկահողի և Ուղուրչայի գյուղերի ներկայացուցիչներին, հայտնում հետագա անելիքներիս մասին, հրաժեշտ տալիս և գիշերով հիվանդ Աշոտի և մի քանի սպաների ու վաշտապետների հետ քաշվում եմ Խուստուպի փեշին ընկած Վաչագան գյուղը:

VI
ՄԵՐ ՈՒԽՏԸ

Իմ՝ ժողովուրդի ինքնապաշտպանության ղեկավարի հանգամանքը ինձ մոռացնել չէր տվել իմ հեղափոխական լինելը:

Ղափանի անկումից դեռ շաբաթներ առաջ, երկրի սպառնական դրությունից խթանված, ես մթության մեջ ծնունդ էի տվել մի ստորերկրյա կազմակերպության, որ ծավալվելով և հզորանալով, ժամանակին պիտի ուժասպառեր թուրք և ռուս հորդաներին Գենվազի ճակատներում, պիտի վերագրավեր Ղափանը, Բաղաբերդը, Ձանգեզուրը, Լեռնային Ղարաբաղը, Վայոց-Ձորը, պիտի ստեղծվեր Ինքնավար Սյունիքը, Անկախ Լեռնահայաստանը, և վերջապես, հոգեբանորեն պիտի կազմակերպեր ու հրահրեր երևանյան ապստամբությունը՝ փրկության կամուրջ հանդիսանալով հայ ժողովրդի մտավորական ու մարտական տարրերի համար:

Միայն հեղափոխական խանդավառ ոգով ուժեղ այդ ընկերությունը կոչվում էր *Դավիդբեկյան* կամ *գեղվածորյան:*

Ուխտի մարտական ուժերը բաժանված էին թեթև միավորների, որոնք կոչվում էին *Գայլախմբեր:*

Սրանք ունեին իրենց ահաբեկիչներն ու սուրհանդակները: Նորերն ընդունվում էին միայն հների երաշխավորությամբ:

Ձինվորները իրար հանդիպելիս ասում էին՝

-Հիշի՛ր Գեղվածորը.

-Նաև Դավիդ բեկին,- լինում էր պատասխանը:

-Մեզ համար չկա մահ,- ասում էին բաժանվելիս.

- Մահը՝ մեր թշնամուն,- լինում էր պատասխանը:

Անողոք կերպով հալածվում էին ընկերության կողմից հայազգի դավաճանները և բոլորը, որոնք Ձանգեզուրի ադրբեջանացման տխուր գործում (որն այդ օրերին առաջ էր տարվում խորհրդային կեղծ դիմակի տակ) որևէ ծառայություն էին ցույց տալիս թշնամուն:

Ընկերության նշանաբանն էր՝ *հանուն հայրենիքի Դավիդբեկաբար:*

VII
ԽՈՒՍՏՈՒՊԻ ՎՐԱ

Խուստուպ լե՛ռը:

Այդ հպարտ հսկային էր վիճակված մեր լեռնաշխարհի ազատության ու փառքի խորհրդանշանը լինելու:

Ինձ հետևող մի բուռ ապստամբների հետ ապաստանելով այդ լեռան բարձունքներին, մենք շարունակեցինք թշնամուն զգացնել տալ Դավիդբեկյան ուխտի անպարտելիությունը: Ղափանը թողնելուց ընդամենը երեք օր անց՝ Խուստուպը պատրաստ էր արդեն չափվելու ամենաուժեղ թշնամու հետ: Նրա կատարից մինչև փեշերը, որոշ կետերի վրա, ժայռերի թե մացառների տակ, ըստ կարմիրների, «նստած էին ուխտված Դավիդբեկյանն ու մահաբեր տակառը»:

Նստած՝ թշնամու դեպի Գենվազ տանող ճանապարհի վրա, այդ սրբազան լեռը սարսափի տակ և սանձահարված պահեց սև ու կարմիր զինակցության հորդաներին, հնարավորություն տալով ինձ կազմակերպել և վարել Գենվազի հետագա կռիվները:

* * *

Սեպտեմբերի 5-ին մոտ երեք տասնյակ ապստամբ ղափանցիներին թողնելով Խուստուպի վրա, Աշոտի հետ իջնում ենք դեպի Գենվազ՝ այդ շրջանը ևս կռվի տրամադրելու: Իսկ գիշերագնաց սուրհանդակները Ղափան են տանում իմ հետևյալ կոչը «Ղափանցիներ, ես՝ Դավիդբեկյան ուխտին հավատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրավոր ու ավելի հպարտ, քան էի:

Այժմ ես լիզում եմ քո և թշնամուն ինձ հասցրած վերքերը և սպասում քեզնից խնդրածս վարպետներին, որ գան, շուտ գան, կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Դու արիր այն, ինչ որ ուզում էր թշնամին: Նա գոհ է քեզնից, անչափ գոհ, բայց գիտե՞ս, Ղափան, թե որքա՛ն ուժեղ է նա ատում, արհամարում քեզ:

Դու քո վիրավոր, սրտից զարնված հրամանատարին ես դավաճանել, լքել, մենակ թողել:

Գիտակցո՞ւմ ես, չափում կատարածդ տմարդության ու դավաճանության անչափելի մեծությունը:

Ա՛ռ, հե՛տ առ քո ինձ տված անունը, որով խաբեցիր ինձ, կաշառեցիր ինձ, որ այսօր ինձ մենակ թողնես:

Տմա՛րդ ժողովուրդ, ինչո՞ւ են ուշանում քո դավաճանները, քո լրտեսները, քո ահաբեկիչները: Ադրբեջանը հոգնեց իմ գլխին սպասելուց: Փոքրիկ գումար չէ երեք միլիոնը, ստացի՛ր և գործի անցիր: Նժդեհ, 7 սեպտեմբեր, 1920թ., *Խուստուպյան լեռներ*»:

VIII
ԳԵՆՎԱԶԸ ՄԵՆԱԿ, ԲԱՅՑ ՀԵՐՈՍԱԿԱՆ

Իմ օրագրությունը ասում է. «1920թ. սեպտեմբերի 6-ին Կալեր գյուղում նշանակված ժողովին հրավիրված ու ներկա էին Գենվազի 13 գյուղերի երկուական ներկայացուցիչները: Օրակարգի հարցերն էին՝ ստեղծված քաղաքական դրությունը և Գենվազի բռնելիք դիրքը:

Արտահայտվում էին գրեթե բոլորը: Նախագահում էր ընկեր Աշոտը:

Վերջացնելով ժողովին ուղղածս խոսքը, առաջարկում եմ պատասխանել ինձ՝ Գենվազը դիմադրելո՞ւ է թշնամուն, թե՞ ոչ:

Ներկայացուցիչ Դանիելյանը հայտարարում է, որ Գենվազը վաղուց է կայացրել իր որոշումը, տալով իր խոստումը իր հրամանատարին, որ ինքը որպես մի մարդ կծառանա թշնամու դեմ:

Գենվազի փրկության կոմիտեն հայտարարում է, թե իր շրջանի հայության բռնելիք դիրքը որոշել է այսպես,- Գենվազը իր ուժերը դնում է ռազմական դրության մեջ, բռնում է բոլոր դիրքերը, և սպասում երևանյան զորքերի երևալուն բուն Զանգեզուրում, որ, միացած Ղափանի ուժերին, զարկի թշնամուն թիկունքից»:

Խոսքը, հերոսական ու անվերապահորեն վճռական խոսքը ասված էր արդեն:

Փոքրիկ, բայց մեծ Գենվազը, անգիտանալով իր հողի և ազատության թշնամիների թվական հազարապատիկ մեծությունը, պիտի շարունակեր անհավասար կռիվը: Նրան՝ Գենվազին էր վերապահված

լինելու ազատության Բեթխեհեմը, ուր պիտի ծնվեր ու զարգանար Սյունիքի ազատությունը...

Սեպտեմբերի 6-ին, երեկոյան դեմ, շրջանի ներկայացուցիչները ցրվում են գյուղերը: Սուրհանդակները դեպի Խուստուպ են տանում Գենվազի հերոսական որոշումները, իսկ մենք՝ ես, Աշոտը և Գենվազի հրամանատարը մեկնում ենք Շիվանիծոր:

Գենվազի վճռականությունը հպարտությամբ էր լցրել բոլորիս հոգիները: Աշոտի հոգնաթախիծ դեմքի վրա ժպիտ կար: Ուժասպառ և հիվանդ, նա մասնավորապես այդ օրը, Կալերի ժողովից հետո, իրեն, *«ավելի քան հպարտ էր զգում իր հայ լինելու համար»:*

Ուրախ էր և Արևիքի ազգասեր ու արի հրամանատարը, որի մեջ այդ օրը խոսում էր մեր լեռների պաշտամունքը. նա, իմ ջահել զինակիցը գտնում էր, որ *«չկա ավելի մեծ դժբախտություն, քան հայրենի լեռներից հեռու մեռնելը»:*

Մեզ ուղեկցող զինվորներից մեկի, դարդոտ երգը տխրորեն արձագանքում էր մոտակա ձոր ու ծմակներում:

Ես խորհում էի վաղվա մասին:

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

1919թ. հոկտեմբերի 20-ին Տաճկաստանի և Ադրբեջանի միջև, ներկայացված մի կողմից հանձին օսմանյան ընդհանուր սպայակույտի պետ Զևադ փաշայի, և մյուս կողմից՝ Ադրբեջանի լիազոր Քերիմովի, կնքում է պաշտպանողական և հարձակողական զինակցություն, որ նպատակ ուներ վտանգել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունն ու անկախությունը:

Համիսլամության այդ նոր արտահայտությամբ սպառնական դրության մեջ է դրվում մասնավորապես Գողթանի, Զանգեզուրի և Ղարաբաղի հայությունը: Գրեթե միաժամանակ մեր այդ երեք՝ մայր երկրից կտրված, երկրամասերը ենթարկվում են թշնամու կանոնավոր և անկանոն զորամասերի հարձակումներին:

Էդիֆ և Խալիլ բեյերը, հենակետ ունենալով Նախիջևան-Օրդուբադը, սկսում են իրենց գործողությունները Գողթանի դեմ, Քյազիմ բեյը Բարգյուշատից՝ Ղափանի արևելյան գյուղերի դեմ, իսկ Նուրի և Խալիլ փաշաները Զաբուղից՝ Զանգեզուրի դեմ:

Թշնամին նպատակադրել էր՝ մեր ժողովրդի մի խոշոր մասի դիակի վրայով կամուրջ նետել Տաճկաստանի և Ադրբեջանի միջև, և, տեր դառնալով Սյունյաց աշխարհի ու Գողթանի բնական ամրություններին, մշտական սարսափի տակ պահել մեր մատաղ հանրապետությունը:

Գողթանի դրությունը, որ ավելի ծանր էր իր աշխարհից կտրված լինելու, հացի ու ռազմամթերքի պակասության և այլ պատճառներով, այդ օրերին ստիպում է գավառի կոմիսար Աշոտ Մելիք-Մուսյանին մի սրտառուչ կոչով, հոգևարող Գողթանի դատը հանձնել համայն հայության և անմիջական օգնություն խնդրել: Նույն օրերին Երևան է հասնում մեր այդ վտանգված երկրամասի միլիցիայի պետ Մովսես Գյուլնազարյանը՝ օգնության գործը արագացնելու առաքելությամբ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ զբաղված Վեդիբասարի ու Շարուրի անհաջող կռիվներով, դժվարանում է կանոնավոր զորամասեր ուղարկել Գողթան և այդ շրջանը ուղարկում է ինձ:

* * *

Մեզ հետ, գրեթե միաժամանակ Զանգեզուր է հասնում Գողթանի միլիցիապետը, իրեն հետ բերելով Հայաստանի Հանրապետության Նախարարական Խորհրդի կողմից Գողթանի V համագումարի նախագահության տրված պատասխան-գրությունը, որի մեջ, ի միջի այլոց, ասված է՝ «Հայաստանի կառավարությունը այժմ ձեզ իրական օգնություն հասցնել չի կարող: Գողթանի ժողովուրդը գաղթեցրեք Գենվազի և Ղափանի շրջանները»:

Իմ և Աշոտի կողմից որոշվում է ժողովրդի սեփականությունը չդարձնել այդ գրությունը՝ լքում և խուճապ չառաջացնելու նպատակով: Ամեն գնով մեր ձեռքին պետք էր պահել Գողթանը, եթե չէինք ուզենա ձեռքից տալ նաև Զանգեզուրը: Ով որ ծանոթ է մեր այդ գավառակի բնական ամրությունների ռազմագիտական արժեքին, անվերապահորեն կընդունի, որ թշնամին, տեր դառնալով այդ շրջանի, առանց դժվարությունների պիտի վտանգեր ողջ Զանգեզուրը՝ Հայաստանի ուժեղ ողնաշարը:

Ահա՝ այդ պարզ նկատառումներով ընդունում եմ՝ Ղափանի և Գենվազի ազգային խորհուրդների ցանկությամբ՝ Կապարգողթի* ռազմական ուժերի ընդհանուր հրամանատարությունը և անմիջապես երկու հարյուր ընտիր զանգեզուրցիներով Ղափուջուղի լեռնանցքով իջնում Գողթան:

Մեր այդ շրջանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսները վաղուց էին ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և կառավարվում էին էդիֆ-բեյի կողմից:

Ագուլիսների օրինակին հետևելու պատրաստությունների մեջ էր և Ցղնա գյուղը: Սակայն, սյունեցիների զորամասի ներկայությունը, դրսի աշխարհի հետ ստեղծված կապը և իմ անվերապահ խոստումը՝ ամենակարճ ժամանակամիջոցում բարվոքել Գողթանի ռազմագիտա-

* Ղափան-Գենվազ-Գողթան (ծանոթ. հեղ.):

կան ու տնտեսական դրությունը՝ ունեցան իրենց բարերար ազդեցությունը և Ցղնան, Ռոստոմի ծննդավայրը, հրաժարվեց Ադրբեջանին հպատակություն հայտնելու մտքից: Բարոյապես գոտեպնդելով այդ շրջանի հայությունը, հայ խմբապետներից Ղազարին նշանակեցի տեղի ռազմական ուժերի հրամանատար և վերադարձա Զանգեզուր:

* * *

Ղափանի Հանքերում հաստատելով շտաբս, անցա գործի:

Շրջագայելով գավառակները, տեղն ու տեղը ուսումնասիրեցի երկրի աշխարհագրությունն ու տեղագրությունը: Ծանոթացա շրջանների ռազմագիտական «համառ» և թույլ կետերի հետ: Սահմանագլխային և հասարակականապես թույլ բոլոր գյուղերում կառուցել տվի միջնաբերդեր և այլ ձևի ամրություններ, տալով սրանց կամ այն ազգային հերոսի կամ գործչի անունը՝ Քրիստափորաբերդ, Եփրեմաբերդ, Ռոստոմաբերդ և այլն: Գյուղից գյուղ անցնելով, ուսումնասիրեցի ժողովրդի նիստ ու կացը, սովորությունները, ավանդությունները, հոգեբանությունը: Խոսեցի Սյունիքի անցյալից՝ մեծ մեռելներից ու փառքերից: Աշխատելով մշակել ժողովրդի մարտական առաքինություններն ու սիրտը, նրա մեջ ջանացի վառել իր անպարտելիության հավատը և իրեն մոտիկ ապագայում հաղթանակներ տալու խոստումներ կատարեցի: Ձենք կրելու ընդունակ տարրերից կազմակերպեցի ժողովրդական վաշտեր և, առաջ քաշելով գյուղերի բանիմաց ու արի երիտասարդներին, սկսեցի մարզել և դաստիարակել նրանց, որպես վաշտապետ, դասակապետ, օղակի ավագ, մի խոսքով, որպես ղեկավար:

Վաշտերիս սովորեցրի լեռնային կռվի արվեստը, միշտ էլ բացօթյա, լեռների վրա կամ դաշտերում, գործնական ծանոթություններ տալով ռազմագիտական զանազան հնարագիտությունների, դավերի ու խաղերի մասին: Գյուղերի մեջ դասավանդեցի պատնեշային կռվի ձևերի, անսխալ նշանառության և լեռնային տեղեկագրության առավելություններից օգտվելու մասին: Սովորեցի պայթուցիկ տակառներ պատրաստելու և պայթեցնելու ձևերը: Կազմակերպեցի ռազմափորձեր և փորձնական ահակոչեր, ինչպես և դիտարաններ, դարաններ և լուսախոսություններ:

Համոզված լինելով, որ մեր հանրապետությունը, հակառակ իր ցանկության, չպիտի կարողանա Սյունիք և Ղարաբաղ հասցնել զինվորական ուժը, տեխնիկական միջոցներ և կենսամթերք, ժամանակ չխնայեցի մարտական ուժերի ոգևորության աղբյուրը դարձնել XVIII դարի Դավիթբեկյան շրջանը, և մեր վերջին հեղափոխական հերոսամարտը:

Թշնամուն հոգեբանորեն գերազանցելու համար պետք է երկիրը լցնել մեր պատմական հերոսների և նահատակների ոգի-ստվեր-

ներով, և դա հաջողում է ինձ: Ահա՛ նման, մոտ չորս ամիս տևող կրավորական ինքնապաշտպանության իմ գործունեությունը ստեղծեց ապագա ռազմական ձեռնարկություններիս համար այն բոլոր նախապայմանները՝ ժողովրդական կուռ բանակ, տակտիկական դաստիարակություն, հոգեբանական նպաստավոր մթնոլորտ,- բախտորոշ ազդակներ, որոնք հնարավորություն պիտի ընձեռնեին իմ խնամքին հանձնված երկրամասին վարելու իրեն վիճակված անհավասար գոյամարտը:

ՕԽՉՈՒ ՁՈՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Զանգեզուրի, մասնավորապես, Կապարգողթի համար ճակատագրական նշանակություն էին ստացել Օխչու և Գեղվա թուրքաբնակ ձորերը, որոնք, սերտ կապ ունենալով Ադրբեջանի և Նախիջևանի թրքության հետ, եռուն պատրաստությունների մեջ էին՝ մի հարվածով ոչնչացնելու Գողթանի և Բաղարբերդի հայությունը և ապա, տեր դառնալով այդ շրջանների ռազմագիտական կարևոր կետերին, հարվածելու Զանգեզուրը թիկունքից:

1919թ. նոյեմբերի 1-ին Օրդուբադից Օխչի ձոր են անցնում տաճկական երկու վաշտեր, իրենց զաբիթներով և չավուշներով: Երկու օր անց՝ այդ ձորը հայտարարվում է Ադրբեջանի անբաժան մասը: Քաղաքական այդ խաղից հետո տաճիկ սպաները զորահավաքի են ենթարկում տեղական թուրք ուժերը, կապվում են հռչակավոր Գեղվաձորի հետ և, այսպիսով, փակում են Գողթանը Զանգեզուրին միացնող միակ ճանապարհը: Սովից ու թշնամուց նեղված Գողթանը կտրվում է աշխարհից, պաշարվում, իսկ Բաղաբերդի հայության համար ստեղծվում է ավելի քան սպառնական մի դրություն: Ահա մեր վտանգված այդ երկու շրջանի ազգաբնակությունը նման դրության մեջ թողնել՝ կնշանակի գիտակցորեն նրան թշնամու սրին և հրին մատնել:

Խաղաղ ճանապարհով ինձ չհաջողվեց վերականգնել հաղորդակցությունը Զանգեզուրի վտանգված շրջանների միջև: Տաճկական վաշտերի ներկայությունից երես ու սիրտ առած Օխչու թրքությունը լսել անգամ չցանկացավ ճանապարհը բանալու համար արված իմ առաջարկի մասին: Այլևս ոչ ոք չէր կասկածում, որ այսպիսի հանգամանքներում դանդաղելը և պ. Հասկելի բանակցությունների հետևանքին սպասելը ոչ միայն պիտի հետաձգեր գործը, այլև պիտի վտանգեր Կապարգողթի դրությունը:

Կար և մի ուրիշ ծանրակշիռ պարագա, որը նույնպես հրամայորեն պահանջում էր անցած համարել կրավորական ինքնապաշտպանության շրջանը: Այն, ինչ որ հնարավոր էր այդ օրերին, հետագայում կարող էր անհնարին լինել: Այդ օրերին Գենվազն ի վիճակի էր որոշ

մարտական դեր՝ ստանձնել Գեղվա և Օխչու ձորերի նկատմամբ, սակայն, եթե թշնամին սկսեր իր գործողությունները և զբաղեցներ մեզ միաժամանակ մի քանի ճակատների վրա, Գենվազն այլևս այդ դերը կատարել չէր կարող: Նա, ինչպես և Ղափանը, ստիպված պիտի լիներ ինքնապաշտպանվելու իր սահմանների վրա, բախտի կամքին թողնելով Գողթանի և Բաղաբերդի հայությունը:

Ահա՛ թե ե՞րբ և ինչպե՞ս թշնամին ստիպեց մեզ՝ հնչած համարել գործոն ինքնապաշտպանության ժամը և գործի անցնել:

* * *

Նոյեմբերի 15-ի գիշերը Գենվազի ժողովրդական վաշտերը, դրված մարտագրի համաձայն, հանկարծակիի բերելով Օխչի ձորը, առաջարկեցին թուրք գյուղերին* «զինաթափվել, հանձնել տաճիկ սպաներին և ճանաչել Զանգեզուրի ազգային խորհրդի իշխանությունը»:

Թրքությունը պատասխանեց վճռական մերժումով և թշնամական գործողություններ սկսեց մեր դեմ: Մեր կողմից, առաջին անգամ, գործի դրվեցին պայթուցիկ տակառներ և կռվի հենց առաջին օրը ձորի բոլոր գյուղերը անցան մեր ձեռքը: Տաճկական սպաներից և զինվորներից չազատվեց և՛ ոչ մի հոգի:

Մեր այդ անդրանիկ հաջողության շնորհիվ վերահաստատվեց հաղորդակցությունը Գողթանի, Բաղաբերդի և Զանգեզուրի միջև: Մեր վաշտերը յուրացրին կռվի պատնեշային ձևերը, ինչպես և պայթուցիկ տակառների փրկարար գործակցությունը: Ձեռք բերվեց որոշ քանակությամբ զենք, ռազմամթերք, հացահատիկ և այլ ավար: Մեր գործադրած կռվի ձևերի շնորհիվ ունեցանք մի վիրավոր միայն: Թշնամու կորուստը մեծ էր: Բացի այդ, նա զրկվեց մի կարևոր ռազմագիտական հենակետից, իսկ մենք, փրկելով Բաղաբերդի հայությունը, հնարավորություն ստացանք, կարիքի դեպքում, Գողթանին ցույց տալու մարտական աջակցություն:

ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔ ԳԵՂՎԱՁՈՐԻ ԴԵՄ

Գեղվաձորը պատմական, հին Բաղաց իշխանությունն է, որ՝ սեպաձև թաղված Սյունիքի սրտի մեջ՝ հսկայական մագնիսի պես դեպի իրեն էր քաշում Ադրբեջանի և Նախիջևանի թրքությունը և օրեցօր ավելի նեղը դնում Զանգեզուրի հայության:

Անդրկովկասյան հանրապետությունների գոյության առաջին օրերից իսկ, թրքության այդ ամենաանհաշտ ու հրոսակաբարո հատ-

* Շաբադին, Օխչի, Փիրդովդան, Արալիս և այլն (ծանոթ. հեղ.):

վածը՝ մեջքը տված Նախիջևանին՝ ձգտում էր Ղափան-Գենվազի վրայով միանալ Ադրբեջանին, որից մոտ մի տասնյակ վերստերով է զատված: Բուն դրած հսկա լեռների վրա ու որջացած անդնդախոր ձորերի մեջ՝ այդ հռչակավոր ձորը լայն հնարավորություն ուներ ցանկության դեպքում կտրել, իրարից զատել հայկական շրջանները և մշտական ահի ու սարսափի տակ պահել հայ ազգաբնակությունը: Այդ ձորի չար ու աղետալի հարևանությունից մասնավորապես նեղվում էին Ղափանը, Տաթևը, Դարաբասը և Սիսիանը, որոնք ստիպված էին իրենց կռվող ուժերի մի խոշոր մասը, հանուն իրենց ինքնապաշտպանության, օր ու գիշեր պահել ճակատների վրա, դիրքերում:

Խալիլբեկյան սև ու արնոտ օրերին այդ արյան ու դիակների ձորով անցնող Նախիջևանի և Երնջակի բազմահազար գաղթականության մի մասի արյունով արբեցած այդ հանցավոր ձորը անպատիժ կերպով դեռ շարունակում էր իր ասպատակությունները: Նրա ավազակախմբերը պարբերաբար քշում էին այս կամ այն հայ գյուղի տավարոչխարը, սպանում դաշտերում հանկարծակիի բերած հայ շինականին, փախցնում կանանց, գերի տանում պատահական ճամփորդներին՝ փրկագին ստանալու նպատակով և այլն:

«Ահա թե ինչո՞ւ Զանգեզուրի հայությունը հանուն խաղաղության շարունակ պահանջում էր պատժել Գեղվածորի մարդակերներին և ազատել գերության մեջ գտնվող 40 հայ կանանց և աղջիկներին»:*

Ահա թե ինչու պետք էր կործանել *«Կարթագենը»*, եթե չէինք ուզենա Զանգեզուրի հայության գերեզմանի վրայով միացած տեսնել արևելքի և արևմուտքի թուրք փաշաների արյունոտ ձեռքերը:

ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մոտ մի շաբաթ տևող իմ կատարած հետախուզությունները՝ Գեղվածորի աշխարհագրական դիրքի ու տեղագրական դրության հետ ծանոթանալու նպատակով, պարզում են ինձ, որ Գեղվածորը այն եզակի վայրերից է, ուր կռվի հաջողությունը կարելի է սպասել շատ բաներից, միայն ոչ ռազմավարական սովորական ձևերից:

Հրացանը չէր, որ պիտի մաքրեր այդ հեքիաթական ձորը, ուր ամեն մի բարձունք մի անառիկ բերդ է, ամեն մի ժայռ՝ մի բնական ամրություն, ուր թշնամին հնարավորություն ունի, կռվի շաբլոն ձևերի կիրարկման դեպքում, միշտ էլ ամենաչնչին ուժերով դիմադրելու հարձակվողի տասնապատիկ մեծ մարտական միավորներին. վերջապես, ուր լեռները թողնելուց հետո նա կարող է դիմադրություն ցույց տալ

* «Սյունիք», թիվ 18 (ծանոթ. հեղ.):

նաև անդնդախոր ձորերի մեջ, ուր մտնել, ապավինած միայն հրացանին, կնշանակի գերեզման գտնել:

Ինձ համար գաղտնիք չէր և այն, որ խրամատային ձգձգվող կռիվների դեպքում մեր գործողությունները կարող էին վերջանալ ոչնչով, որովհետև կռվի երկրորդ օրը Ադրբեջանը չպիտի հապաղեր օգնության փութալ Գեղվածորին: Ահա՛ թե ինչու մեր հարվածը պիտի լիներ շեշտակի, ահաբեկիչ և տարերային:

Իմ ժողովրդական վաշտերը հոգեբանորեն պատրաստ էին խաչակիրի բարձր տրամադրությամբ շարժվելու դեպի թշնամին: Ասել է՝ հաջողության բարոյական ազդակը կար: Պակասում էին՝ կռիվներին տարերայնություն հաղորդող 100-ի չափ պայթուցիկ տակառներ, մի հրաշագործ զենք, որի փրկարար գաղափարը հղացել էի թշնամու դիրքերը ուսումնասիրելիս: Մի քանի օրվա ընթացքում մոտ երկու տասնյակ՝ ուժանակի գործածության ծանոթ Ղափանցիներ պատրաստում են հարկավոր քանակությամբ 1, 2, 3, 4, 5 փթանոց տակառներ և մի քանի հարյուր ձեռնառումբ: Վերջին ռազմափորձից հետո, նոյեմբերի 30-ին, վաշտերին ուղարկվում է կռվի ծրագիրը և մարտակոչը:*

Նոյեմբերի 31-ի[5] առավոտյան Ղափանի վաշտերը, կազմ ու պատրաստ, հավաքվում են Հանքերը, Գենվազինը՝ Բաղաբերդ, Տաթև-Դարաբասի ուժերը՝ Մաշդաշ: Նույն օրը զինվորության և ղեկավարներին բացատրում եմ իրենց դրված խնդիրները: Կես գիշերին շեփորը ոտքի է հանում քուն մտած վաշտերը:

-Օ՜ն, առա՜ջ, դեպի Գեղվածոր, դեպի հաղթություն,- տրվում է արշավանքի հրամանը:

-Մեզ հետ Աստված և Դավիթբեկի վրիժակ հոգին,- լսվում է զորաշարքերից:

* «Զինվորնե՛ր, թշնամու ցանկությամբ սկսվում է մեր արշավանքը, մեր խաչակրաց արշավանքը Գեղվածորի դեմ: Վաղը, երբ ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կթողնի իր գյուղերը, ձեզ կողջունեն մեր հինավուրց, այսօր թշնամուց պղծված, բերդերի և վանքերի ավերակները: Վաղը, երբ այդ ձորում կլսվի ոտների ձայնը, ձեր զենքերի շաչյունը, հայ գերիները, Քեյփաշենի բեկերի շնաբարո կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կաղոթեն ձեր զենքի հաջողության համար: Վաղը, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, հիշե՛ք Խալիլբեկյան սև օրերը, երբ այս գյուղի մոտ թշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ տաճկական սրից ճողոպրած հայ կին ու երեխաներ: Ասում են, այժմ այնտեղ մի ամբողջ ձոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր հաճախ հյուր են գալիս Գեղվածորի շներն ու գիշատիչները: Հիշեցե՛ք այդ և եղեք անխնա ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղե՛ք կանանց, ծերերի և երեխաների նկատմամբ: Ուրեմն, առաջ, մեզ հետ Աստված և Դավիթբեկի վրիժակ հոգին»:

Խորհրդավոր լռության մեջ բարձրանում է սյունեցի երգչի հաղթական ձայնը:

Ընդհանուր ոգևորության մեջ ես ինձ ավելի զինվոր եմ զգում, քան ղեկավար: Բաղաց հին իշխանության ավեր ու կիսավեր տաճարների ու բերդերի փլատակներ մագնիսի պես քաշում են, հուզում, թևավորում բոլորիս:

-Շո՛ւտ, վայրկյան առաջ Գեղվա դուռը փակող բերդի վրա մեր դրոշակը տեսնել...

Այդ վեհ և կախարդական պատկերով հրամայված, զինվոր, թե ղեկավար մոտենում ենք Գեղվածորին:

ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Դեռ լույսը չբացված «Կոմբախ» բարձունքից դեպի ձորը, որի մեջ ընկած են թշնամու ամենաուժեղ գյուղերը՝ Շհարջիկն ու Ազաղուն, գլորվում է հինգ փթանոց մի պայթուցիկ տակառ:

Ազդանշանը տրված է: Սկսվում է հարձակումը: Թշնամին իր դիրքերումն է:

Կռիվը բորբոքվում է վայրկենաբար: Թշնամու ուժերը ղեկավարում են Եփրեմի[6] օգնականներից պարսկական կռիվներում աչքի ընկած *Խան Կուլին և հռչակավոր Լայիշ Օղլին:*

Ղափանի վաշտերից մեկին հաջողվում է մի խիզախ թևանցով անսպասելիորեն հայտնվել Շհարջիկի և Ազաղուի թիկունքում, սեպաձև թաղվելով այդ գյուղերի և երկու Գերաթաղերի միջև: Տաթևյան զորամասը, որին դրված էր երկու համանուն գյուղերի՝ Գերաթաղերի գրավման խնդիրը, ժամը 10-ի մոտերը մի թույլ հարձակումից հետո, քաշվում է դեպի Ռաշդաշ, մերկացնելով Գերաթաղերի և Շհարջիկ-Ազաղուի միջև ճակատամուխ եղած Ղափանի թևանցային վաշտի թիկունքը:

Այդ դեպքից օգտվելով, թշնամին հնարավորություն է ստանում անցնելու հակաթևանցի և նեղը դնելու Ղափանի վաշտը, որը, միայն պայթուցիկների առատ գործածության շնորհիվ, կարողանում է դուրս գալ թշնամու ստեղծած օղակից: Տաթևյան զորասյունի քայլը ընդհանուր նահանջ համարելով, Քիրսից հետ են քաշվում և Դարաբասի ուժերը, որից հետո թշնամին համախմբելով իր ուժերը, նետվում է Գենվազի զորամասի վրա: Երեկոյան դեմ ճակատը լքում է և Գենվազի ուժերի մի մասը և քաշվում Լիչք: Մնում է Ղափանի զորամասը և շարունակում կռիվը:

Շնորհիվ ծանոթ պատճառների, մեզ չի հաջողվում, առաջի օրը, որևէ հաջողություն ունենալ:

Ամբողջ գիշերն աշխատում եմ վերականգնել Տաթևի և Բաղաբերդի ճակատները: Կռվի երկրորդ օրը մեզ հաջողվում է մտնել Շհարջիկ և հրդեհել մի քանի շենքեր, սակայն, դարձյալ շնորհիվ Տաթևի ուժերի մի նոր սխալին, ստիպված ենք լինում քաշվելու մեր դիրքերը:

Այդ օրն էլ է անցնում առանց վճռական հարվածների:

Դեկտեմբերի 3-ին Հանքերն է հասնում դեռ նոյեմբերի 24-ին Գորիսից խնդրածս թնդանոթը, որը անպատում դժվարություններով, կազմալուծված վիճակի մեջ, մաս առ մաս, շալակով զինվորներս տեղափոխում են Կոմբախ լեռան վրա:

Երեկոյան դեմ թնդանոթը երկու հրանոթ* արձակելուց հետո դառնում է կողքիս վրա և ջարդում նշանացույցը:

-Թնդանոթն անպետքացած է, էլ չեմ կարող կրակել,- հայտնում է թնդանոթաձիգը:

Օրվա լույսի հետ թուլանում է և կռիվը:

-Պարոն հրամանատար,- հաղորդագրում է մեր տնտեսական մասի կառավարիչը, նկատի ունեցեք, որ պահեստում ընդամենը մի օրվա հաց է մնացել:

Գորիսից պատասխանում են, զեկուցում է համհարզս, որ եռագծանի փամփուշտ ուղարկել չեն կարող, որովհետև իրենց համար էլ քիչ է մնացել:

Պ. հրամանատար,- մոտենալով ինձ, կարեկցաբար ասում է Ղափանի ազգային խորհրդի նախագահը,- փախչել-ազատվելն էլ քաջություն է՝ ասել է Քեորօղլին. ի՞նչ պետք կա. հնարավո՞ր է առանց հացի, ռազմամթերքի և թնդանոթների շարունակել գործողությունները:

Օ՜անը է վիճակս, ողբերգորեն ծանր:

Ստեղծված դրությունից մինչև պարտություն և խայտառակություն մնացել է մի քայլ:

Նահանջ... Միայն այդ դժբախտ գործողության մասին չէի մտածում այդ ժամին:

Ես չէի կարող նահանջել, որովհետև իմ խնամքին հանձնված ժողովրդին շատ էի խոսել աննահանջ կռվի, հաղթական մահի, անկարելին կարելի դարձնելու մասին: Ես բարոյապես ազատ չէի անգամ հետ նայելու, որովհետև ծով հպարտանք ու արհամարհանք էի դրել իմ զինվորների հոգու մեջ, որովհետև եղել էի հպարտ, խոսել բարձր...

-Նահա՞նջ, չէ՛, չէ՛ խաչակիրները կամ հաղթում են կամ մեռնում, բայց ոչ նահանջում:

Ահա՛ այսպես, կռվի երրորդ օրը Գեղվածորի ռազմագործողությունը ինձ համար դառնում է միաժամանակ և բարոյական մի խնդիր: Ես երբեք չպիտի մոռանամ այն վայրկյանը, երբ մեռնելու վճռականու-

* Նկատի ունի կրակոց, արկ (ծանոթ. խմբ.):

թյամբ նստեցի ձիս և շարժվեցի դեպի կրակի գիծը: Արդեն մութն ընկել էր: Մեր և թշնամու դիրքերում, որոշ կետերի վրա, տխուր առկայծում էին խարույկները: Հրացանաձգություն չկար:

Ո՞վ է եկողը,- լսվում է պահակի ձայնը:

Տալիս եմ գիշերվա անունը և իջնում ձիուց:

Խարույկներից մեկի մոտ հավաքվում են ճակատապետները: Երկու խոսքով նրանց պարզում եմ անելիքս:

Տեսնու՞մ եք բերդը, որի փլատակների վրա վառվում են թշնամու կրակները. վաղը լուսաբացին կամ մեր դրոշակը բարձրացրեք նրա վրա կամ դիակս, նրա պատերի տակ: Դե՛, վերադարձեք դիրքերդ և վառ պահեք զինվորների տրամադրությունը լուսաբացի գրոհի համար: Ես պիտի աշխատեմ դեռ գիշերով գրավելու Ղզղալան և զարկելու թշնամուն թիկունքից:

Վաշտապետներս, զայրացած Գորիսի և Տաթևի դեմ, ցրվում են իրենց տեղերը, իսկ ես մի կիսավաշտով շարժվում եմ Խլաթաղ:

* * *

Կես գիշերը մոտ է: Խլաթաղի եկեղեցու զանգը ոտքի է հանում գյուղացիությունը: Վայրկյաններ անց, մի քանի գյուղացիների հետ հայտնվում է գյուղի քահանան:

-Խե՛ր լինի, պարոն, ինչու՞ այդքան ուշ, մրսած կլինեք, հրամեցե՛ք տուն,- ցրտից դողդողալով ասում է քահանան:

-Ցրտի մասին մտածելու ժամանակ չունեմ, տերտե՛ր,- խնդրում եմ անմիջապես ներկայացնել ինձ Ղզղալայի արահետներին ծանոթ 3-4 վալադ, երեք հատ էլ մոտ 50 արշինանոց չվան:

Չվանն ինչների՞դ է պետք, պ. հրամանատար, բեռնե՞ր ունեք,- միջամտում է մի տարեց գյուղացի:

-Ո՛չ,-ծիծաղով պատասխանում եմ,- այդ չվաններով կամ թշնամուն կամ մեզ պիտի կախենք:

Գյուղացիները, կռահելով մեզ համար ստեղծված ծանր դրությունը, մռայլվում են:

Քիչ անց ներկայանում են վալադները: Բերել են և չվանները: Ժամանակը կարճ է, պետք է ածապարել: Լուսաբացին անկարելի պիտի դառնա այդ համարձակ ձեռնարկը, որից կախված է թե՛ կռվի և թե՛ իմ բախտը:

Վաղը կտեսնվենք Դավիթբեկի մեծ բերդում,- համբուրելով զինվորներիցս մեկին և իր հրամանատարին, տալիս եմ շարժվելու հրամանը:

Կիսավաշտը անձայն ու անշշուկ բարձրանում է Չիմանդաղ, իսկ ես, յոթը ձիավորներով, ուղևորվում եմ դեպի Հալիձոր:

Գյուղում դեռ հնչում են եկեղեցու զանգերը: Հայ գյուղն աղոթում է մեր զենքի հաջողության համար: Առաջանում ենք ածապարանոթ: Ամենաուշը ժամը հինգին պիտի լինենք դիրքերում: Նույն ժամին մեր ծանոթ կիսավաշտը, ճանապարհի չգոյության պատճառով, Չիմանդաղից Ղզղալա կոչված բարձունքի վրա չվաններով, մեկիկ-մեկիկ, պիտի իջեցնի քսանի չափ զինվոր և նույնքան էլ պայթուցիկ տակառ, որպեսզի որոշված ժամին սկսենք ընդհանուր գրոհը: Շուտ տեղ հասնելու մտահոգությամբ անցնում ենք վատ, բայց կարճ ճանապարհներով:

Ուղեւիցներս լուռ են և մտածկոտ: Ես չեմ մտածում: *Կամ... կամ:* Այս որոշմանն տերը մտածելու կարիք չի զգա: Էլ չեմ մտածում, բայց նախազգում եմ, որ ինձ պիտի հաջողվի բարոյապես փրկել և՛ ինձ, և՛ մեր զենքի պատիվը: Եվ որքան մոտենում է գրոհի ժամը, այնքան ես ինձ լավ եմ զգում:

Մահն ու մահվան երկյուղը դադարել են գոյություն ունենալուց: Միակ բանը, որ գոյություն ունի, որ իրական է ինձ համար, դա Բաղաց մեծ բերդն է, որը հրեղեն պատկերի պես թաղված է ուղեղիս մեջ, հոգուս մեջ, երևակայությանս մեջ, որն առանց մեր դրոշակի չեմ կարողանում պատկերացնել:

* * *

Որոշված ժամին Ղզղալայից մթության մեջ գծագրվում է պայմանական նշանը - *«ուժանակային խաղը»:* Գրեթե միաժամանակ Հալիձորի և Ղզղալայի դիրքերից հսկայական դղրդյունով ու գոռոցով դեպի ձորերն են գահավիժում տասի չափ պայթուցիկ տակառներ: Տրվում է ընդհանուր գրոհի հրամանը:

Ղափանի վաշտերը դուրս են նետվում դիրքերից և, առանց մի գնդակ արձակելու, հեղեղի պես թափվում ձորերը: Ղզղալայից, թշնամու թիկունքն անցած մեր կիսավաշտի գլորած «դինամիտային հրեշները» պայթում են ուղղակի թշնամու դիրքերի վրա: Տակառների, ռումբերի պայթյուններից և մեր վաշտերի գոռ կեցցեների արձագանքից թնդում են ձորերը: Ղափանի առյուծները մրցում են խիզախության և քաջության մեջ:

Ոչ ոք ուշադրություն չի դարձնում թշնամու կրակին, աշխատելով շուտ և առաջինը մտնել բերդը:

*-Էրմանիլար բեյք սանգյարլարի ալդլար, դաչքն,**- լսվում է թշնամու պահակների ձայնը:

Թշնամին, ծևված ու սարսափահար, լքում է Ազաղու և Շարջիկ գյուղերը՝ Գեղվածորի դուռը:

---

* Հայերը մեր դիրքերը գրավեցին, փախեք (ծանոթ. հեղ.):

Մեր ուժերի մի մասը հետապնդում է նահանջող թշնամուն, իսկ մյուսը՝ թափվում է բերդը:

Գրիչս անզոր է, անկարող նկարագրելու բերդի գրավման առաջին վայրկյանները: Բոլորը խաչակնքում են երեսները, համբուրվում, գրկախառնվում, համբուրում նվիրական փլատակները: Խանդավառությունը, արբեցումը ընդհանուր է:

Լույսը բացվում է մեր հաջողությամբ:

Բաղաց երկրի դուռը փակող հնամենի բերդի կիսավեր պատնեշի վրա վեհորեն ու հպարտ ծածանվում է մեր եռագույն դրոշակը:

Գեղվածորի դարբասները խորտակված են արդեն:

Մեր ձեռքին են թշնամու երեկվա տիրապետող դիրքերը՝ ծորերի ռազմագիտական բանալիները: Մնում է օգտագործել շահած հաջողությունը:

Նույն օրը, երեկոյան դեմ, Գենվազի քաջարի վաշտերը, կապվելով Ղափանի ուժերի հետ, գրավում են ծորերի սիրտը - հռչակավոր հանցավոր Գեղի գյուղը: Հայ քահանան ու հազարավոր գյուղացիներ թափվում են բերդն ու թշնամու կողմից դարերով անարգված, դարմանանոցների և ախոռների վերածված հինավուրց եկեղեցիները: Ջորքը վայրկյանե վայրկյան ընդլայնում է իր գրավման շրջանը:

Կռվի յոթերորդ օրը ընկնում է ծորերի վերջին գյուղը - հայ կին ու երեխաների արյունով հղփացած Աջիբաջը:

Գեղվածորը մերն է:

ՇՈՒՌՆՈՒԽԻ ԿՌԻՎԸ

Որքան որ Գեղվածորերի գրավումը բարձրացրեց Սյունիքի հայ տարրի տրամադրությունը, այնքան էլ ընկճեց թրքության ոգին:

Մեր կռվի ձևերի, ուժանակային գրոհների, մասնավորապես տակառների մասին գրավված ծորերից փախած թրքությունը սարսափելի առասպելներ հյուսեց ու տարածեց: Վախն է տիրում ամբողջ Բարգուշատում: Հանգիստ չէ և Օրդուբադը, որը համոզված լինելով, որ մեր հերթական հարվածը իրեն պիտի տրվի, իր հարստությունները տենդորեն տեղափոխում է պարսկական ափը: Մեր վաշտերը սրտատրոփ սպասում են դեպի Օրդուբադ շարժվելու հրամանին: Մեզ համար ստեղծված նպաստավոր հոգեբանական մթնոլորտից կարելի է և պետք է օգտվել մեծապես:

Դեկտեմբերի 9-ին Զանգեզուրի ընդհանուր հրամանատար զորավար Ղազարովին ուղղում եմ մի գրություն, առաջարկելով և պարզելով հարձակողական իմ ծրագրերը:

Իմ այդ պաշտոնական գրության պատասխանելու փոխարեն Զանգեզուրի հրամանատարությունը ինձ հրավիրում է Գորիս խորհրդակցության:

Պարզվում է, որ Երևանյան զորամասի հրամանատարությունը մտադիր է սկսելու Շուռնուխի գործողությունը: Աննպատակ ու վտանգավոր համարելով այդ գործողությունը, ես մնում եմ նախկին տեսակետի վրա: Այդ օրերին, երբ հայկական Ղարաբաղում ապստամբության պատրաստություններ էին տեսնվում, Շուռնուխի հիմար գործողությունը առիթ պիտի տար Ադրբեջանին նոր ուժեր կենտրոնացնելու Ղարաբաղում և Զանգեզուրի ճակատների վրա: Այդ շրջանում արվելիք մեր ամեն մի քայլը կարող էր գահավիժել դեպքերը Ղարաբաղում, ուր այդ օրերին ոչ կանոնավոր կազմակերպություն կար, ոչ էլ հարկավոր քանակությամբ ռազմամթերք:

Կար վերջապես Գողթանի հարցը, որը ծանոթ պատճառներով չէր կարելի հետաձգել:

-Մեր հերթական գործողությունների առարկան պետք է լինի Օրդուբադը,- պահանջում ենք մենք՝ ես և Աշոտը:

-Շուռնուխի գործողությունը նա՛խ,- համառում է Գորիսը:

Սկսվում են լուրջ տարակարծություններ այդ հարցի շուրջ: Զանգեզուրի հրամանատարությունը, ինչպես և գեներալ-կոմիսարը մնում են անհողդողդ իրենց որոշումների մեջ:

Ինձ մնում է, տեղի տալուց առաջ, Հայաստանի Կառավարության Գորիսի զինվորական և քաղաքացիական ներկայացուցիչներին ուղղել հետևյալը.

«Բարոյական պարտք եմ համարում վերջին անգամ նախազգուշացնելու ձեզ, որ Շուռնուխի գործողությունները շատ ծանր հետևանքներ պիտի ունենան Ղարաբաղի և Գողթանի համար: Ապագա պատասխանատվությունից ինձ և իմ ուժերը ազատ կացուցանելու համար մի անգամ էլ հայտնում եմ ձեզ, որ ես քանիցս ձեզ հայտնած պատճառներով դեմ եմ Շուռնուխի ուղղությամբ սկսվելիք գործողություններին: Իհարկե, այդ այդպես լինելով հանդերձ, իմ տեսակետը տվյալ հարցի մասին ինձ, որպես զինվորականի, իրավունք չի տալիս չկատարելու ինձ տրվելիք հրամանը»:

* * *

Հունվարի 19-ի առավոտյան, դեռ լույսը չբացված, սկսվում է մեր հարձակողականը: Թշնամին, ինչպես ես սպասում էի, մեր կռվի ձևերից խուճապահար, բռնում է փախուստի ճամփան:

Մեր վաշտերը գործում են գրեթե առանց հրացանների: Գործ են տեսնում պայթուցիկ տակառները: Կռիվ չէ, այլ հարսանիք: Գրոհները կատարվում են աննախընթաց տարերայնությամբ: Մեկը մյուսի

հետևից ընկնում են թշնամու ձեռքին գտնվող բարձունքներն ու գյուղերը:

Կռվի երկրորդ օրը թշնամին, օգնական ուժեր ստանալով, ամրանում է անվանի քուրդ Խալաջում, բայց շնորհիվ մերոնց՝ նույն օրը երեկոյան դեմ, կազմակերպված մի խելահեղ խոյանքի, հակառակորդը ծեծվում է և այդ կետի վրա:

Կորցնելով Բարգուշատ գետի աջ ափին ընկած այս կարևոր ամրությունը՝ թշնամու ուժերը բարոյալքվում են ու ցրվում, որից հետո մեր վաշտերը, հաղթականորեն շարժվում են դեպի Որոտանի ափերը:*

* * *

Դժբախտաբար մեր այդ հաջողության հասած ուրախությունը շատ կարճատև եղավ: Ագուլիսի տեղահանությունը, էֆիթ բեյի կողմից, եկավ դառնացնելու մեր սրտերը:

Զանգեզուրի հրամանատարությունը անպատեհություն ունեցավ շատ շուտ զգալու իր աղետալի սխալը, բայց ուշ: Նրան մնում էր ընդունել, որ *ռազմագիտական բոլոր սխալները կռվադաշտում սրբագրվում են սրով և հրով միայն և խորապես ցավել, որ չէր բարեհաճել լսելու նրանց, որոնք իրենից առաջ էին ոտք դրել Զանգեզուր և ավելի մոտիկից էին ծանոթ իրերի դրության:*

(շարունակելի)[7]

«Հայրենիք» ամսագիր, թիվ 12, 1, հոկտեմբեր, նոյեմբեր 1923թ.:

---

* Իմ ուժերը մարտագրով որոշված վեցի փոխարեն գրավում են 33 գյուղ և Այինդաղ, Խանագա, Սեադի, Հեոյեող ու Հարթիղ բարձունքները:

ԷՋԵՐ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՅԱՄԱՐՏԻՑ

ԳՈՂԹԱՆԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ

Վերջին տարիների ընթացքում Մայր Հանրապետությունից կտրված հայկական հատվածների մեջ ամենաողբերգական վիճակ է ունեցել Գողթան գավառը՝ Քրիստափորի, Ռոստոմի և Աշոտ Մելիք Մուսյանի նվիրական ծննդավայրը:

1918-ի հայկական մեծ աղետի օրերին, երբ Նախիջևանի և Երնջակի հա,ղությունը, տեղի տալով տաճկական հորդաների առաջ, Անդրանիկի հետ անցավ Զանգեզուր, Գողթանի մեր մի բուռ ժողովուրդը մնաց կառչած հայրենի հողին:

Ահա՛ հենց այդ օրերից էլ սկսվում է Գողթանի ողբերգությունը:

* * *

Մոտ 12,300 ոտնաչափ բարձրություն ունեցող Ղափուջուղի լեռնանցքով Սյունիքից զատված Գողթանը ձմեռվա ընթացքում մնում է աշխարհից կտրված, լեռնանցքի անանցելիության պատճառով: 1919-ի ձմռանը, դրսի աշխարհից կտրված մեր այդ սովահար փոքրիկ շրջանը ստիպված էր ապաստան ու սնունդ տալ թշնամու կողմից տեղահանված Ազայի, Գեալի Ղազանջու, Շուրութի և Փարադաշտի գաղթականության, ինքը սոված լինելով հանդերձ:

Ահա՛ մի քանի տողեր այդ մասին իմ Զանգեզուրի հրամանատարությանն ուղղած մի գրությունից.

«Մի քանի օր ևս, և Գողթանի տեղ մենք կունենանք մի հսկայական գերեզմանատուն: Հրեշավոր չափերի հասած սովը սկսել է իր ավերածությունները: Օր չի անցնում, որ սովամահության դեպքեր տեղի չունենան, գրեթե բոլոր գյուղերում: Ժողովրդի մի մասը կերակրվում է շների և կատուների մսով, մի բան, որից առաջացած տարափոխիկ հիվանդությունները լրացնում են սովի կատարած հունձը»:

Ահա՛ և Աշոտ Մելիք-Մուսյանի գրությունը, ուղղված ինձ. «Ժողովրդի դրությունը ուղղակի ողբերգական է: Ղափուջուղի երկու երեսների վրա թափթփված կանանց ու ծերերի դիակները պերճախոս ապացույցներ են հաստատելու, որ մարդիկ կամավոր կերպով մահվան են դիմում միայն և միմիայն սովից ազատվելու համար:

«Գողթանին պահողը ներկա մոմենտում միայն Ղափուջուղն է; Այդ հսկան հենց որ մի քիչ հնարավորություն տա անասուններ անցկացնելու, Գողթանում ոչ մի մարդ չի մնա: Մարդիկ պարզ ասում են՝ Գողթանը մեզ պետք չէ, եթե Հայաստանի Հանրապետության համար նա ռազմագիտական-քաղաքական կարևորություն ունի, ապա Գողթանը իր տեղում պահել կարող է հանրապետությունը իր միջոցներով:

«Ժողովուրդը մեռնում է սովից: Նա անընդունակ է դառել և դիմագրավելու թշնամու ամենաթեթև գրոհին»:

Այս դժնդակ պայմանների մեջ Գողթանի ժողովուրդը, ենթակա լինելով թշնամու անվերջ հարձակումներին ու սովի ավերածություններին, իր վեցերորդ համագումարում կայացնում է իր որոշումը՝ «կամ կռիվ կամ գաղթ»:

Հայ ժողովրդի, մասնավորապես մեր լեռնաշխարհի հայության ինքնապաշտպանության գործով զբաղվողների համար պարզ էր, թե ի՞նչ աղետալի դրություն կարող էր ստեղծվել Զանգեզուրի և Ղարաբաղի համար, եթե Գողթանցին՝ հուսահատությունից մղված, իրագործեր իր որոշման երկրորդ մասը:

Շատերի համար Գողթանի նշանակությունը պարզվեց միայն հետագա քաղաքական անցքերի ընթացքում:

Հայաստանի կառավարության վարչապետը, սակայն, դեռ 1919-ին, հրամայել էր՝ «Գողթանի ժողովուրդը գաղթեցնել Ղափան և Գենվազ»:

Գողթանը - դա մեր լեռնաշխարհի ռազմագիտական բանալին է: Զիջել այդ փոքրիկ, բայց իր աշխարհագրական դիրքի և բնական ամրությունների արժեքով մեծ ու կարևոր շրջանը կնշանակի հաշտվել Սյունիքից և Ղարաբաղից ընդմիշտ ձեռք քաշելու մտքի հետ:

Դեռ ավելին՝ *ձեռքից տալ Գողթանը կնշանակի անհնար դարձնելու աստիճան դժվարացնել հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործը՝ մշտական վախի ու ջղայնության մատնելով մեր փոքրիկ հրամանատարությունը:*

Ահա՛ թե ինչու Գողթանի արշավանքը դարձել էր օրվա խնդիր: Գողթանի վերջին համագումարից հետո ստացվում է Աշոտ Մելիք-Մուսյանի հետևյալ գրությունը, որի մեջ ի միջի այլոց նա ասում է.-

«Դու երդվեցիր մեռնել Գողթանում, Գողթանի համար: Դու պատրաստվում էիր Գողթան գալու, ինչպես մեկը հաղորդվում է մեռնելու համար: Զանգեզուրցիք կարող են քեզ դավաճանել: Կարող է պատահել, որ Ղափան ու Գենվազը քեզ զինվորներ չտան: Գուցե դեմ լինեն քո Գողթան գալուն Դրոն, գեներալը, նահանգապետը: Ամեն մի անակնկալի ես հավատում եմ, բայց հաշտվել քո բնավորության անկայունության հետ, ես երբեք չեմ կարող: Դու Գողթանինն ես և պիտի Գողթան գաս, եթե մենակ էլ լինես. այդ դու երդվել ես: Գողթանցին այլևս մխիթարություն չունի:

«Ագուլիսների խայտառակ կորստից և Հայաստանի կառավարության երկու տարվա անտարբեր վերաբերմունքից հետո մենք վճռել ենք մեռնել հայրենի լեռներում: *Մենք մեր ձեռքով կկոտորենք մեր որդիներին, քույրերին, հայրերին ու մայրերին, որպեսզի անտեր շան նման սովից չսատկեն, իսկ տղամարդիկ կկռվեն մինչև վերջին շունչը*»:

«Ասա՛, կանգնա՞ծ ես մեր այս ուխտին, թե՞ ոչ: Պարզ, հասկանալի լեզվով մեզ հետ խոսիր. երկու խոսք - այո՛, կամ ոչ»:*

Ինչպես տեսնում եք, օրը, ժամը, անգամ վայրկյանը ճակատագրական նշանակություն էին ստացել Գողթանի համար: Գողթանցուն իր ծննդավայրում պահելու համար պետք էր փշրել մեր այդ աշխարհից կտրված գավառակի շուրջը թշնամու ստեղծած կենդանի օղակը, պետք էր ժամ առաջ սկսել կռիվը, որը, հակառակ Գորիսի հրամանատարության անտարբերության և մի շարք դժվարությունների, արդեն որոշված էր իմ կողմից:

1920թ. փետրվարի 11-ին լույս է տեսնում իմ մարտագիրը, որի պատմական մասը հետևյալն է.

«Երկրորդ տարին է, ինչ թշնամին անվերջ կրկնում է իր հարձակումները Զանգեզուրի նախադուռը պաշտպանող Գողթանի մի բուռ ժողովրդի վրա՝ այդ շրջանին տեր դառնալ, ու այդպիսով միացնելու երկու մուսուլման երկիրները՝ Ադրբեջանն ու Տաճկաստանը: Տանակերտը տեղահանելուց հետո թշնամին աննախընթաց բարբարոսությամբ, սրի և հրի մատնեց Գողթանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսների ուղղամիտ ազգաբնակչությունը: Գողթանը ցայսօր ամենադժնդակ պայմաններում իր վրա է քաշել, զբաղեցրել Նախիջևանի և Օրդուբադի շրջանների բովանդակ մուսուլման ուժերին և, այսպիսով, ապահովել Զանգեզուրը թիկունքից: Այժմ նա՝ թշնամու համառորեն կրկնվող հարձակումներից տնտեսապես ու հասարակականապես ծայր աստիճան քայքայված՝ իր վերջին համագումարում որոշել է՝ *կամ կռիվ կամ գաղթ:*

«Խորապես գիտակցելով Գողթանի ռազմագիտական խոշոր նշանակությունը, գնահատելով նրա Զանգեզուրի համար կատարած դերը և նկատի առնելով նրա արդի աննախընթաց կրիտիկական դրությունը, *հրամայում եմ Կապարգողթի ռազմական կամավոր ուժերին մի շարք մուսուլման գյուղերի տեղահանությամբ և ավերումով Գողթանի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարավորություն՝ շարունակելու իր գոյությունը հայրենի երկրում*»:*

Ղափանցին գիտեր, որ այդ օրերին, երբ քաղցած գայլն անգամ սարսափով է մոտենում *Ղափուջուղին* Կապարգողթի այդ փոքր Մասիսին, Գողթան անցնելը մի վտանգավոր փորձ է: Բայց, գիտակցելով, որ ոճիր կատարած կլինի, եթե ժամանակին օգնության չփութա իր եղբայրական հատվածին, նա գրեթե կրոնական վեհությամբ ու խանդավառությամբ պատրաստվեց կատարելու իր դժվարին, բայց ազատարար

---

* 1920թ., 16 ապրիլի, Դամիս (ծանոթ. հեղ.):

* 7 մարտի, 1920թ., Ցղնա, Աշոտ, (ծանոթ. հեղ.):

գործը: Մեր ժողովրդական վաշտերը, ըստ սովորության, երգ ու երաժշտությամբ, խաղ ու պարով, թափվում են Ղափանի հանքերը: Ժողովրդի կողմից զորքին տրվում է ճերմակ կտավից պատրաստված մի դրոշակ, այս մակագրությամբ՝ *«Ղափանը Գողթանի համար»*, մի երեսի վրա, *«Պատանակրաց արշավանք»* մյուսի վրա:

Դա սովորական արշավանք չէ, այլ վեհ ու նվիրական ուխտագնացություն, երբ ուխտավոր զինվորը, մոռացած անցնելիք ճանապարհների դժվարությունների և վտանգների մասին, մոռացած հավանական մահը, վառվում է միայն այդ ուխտատեղին շուտ հասնելու մոլեռանդ ցանկությամբ:

Մարտի 8-ին Ղափանի և Գենվազի ուժերի մի մասը համախմբվում է Բաղաբերդ: 9--ին մի քանի օրվա հացի պատրաստություն տեսնում՝ շալակով իր հետ Գողթան տանելու համար:

Նույն օրը երեկոյան դեմ, երբ ամեն ինչ պատրաստ էր և արշավախումբը կատարյալ ռազմական պատրաստության մեջ սպասում էր Ղափուջուղի վերելքն սկսելու հրամանին, հատուկ սուրհանդակի միջոցով ստացվում է զորավար Ղազարովի հրամանագիրը, որ հրամայում է հետաձգել Գողթանի օպերացիան: Մեր հակահետախուզության տված տեղեկություններից երևում է, որ Ջիբրայիլ-Կարեագինի շրջաններում երևացել են Նուրի փաշան և գեներալ Մեխմանդարովը: Ադրբեջանը պատրաստություններ է տեսնում մեծ ուժերով մի քանի կետերից հարձակվելու Զանգեզուրի վրա:

Ի՞նչ խոսք, որ բոլորիս մեջ, ղեկավարի, թե զինվորի, զայրույթի մի ամբողջ փոթորիկ պիտի բարձրանար Գորիսի տատանվող զինվորական իշխանության դեմ:

-Պարոն հրամանատար, զորաշարքից առաջ նետվելով, հարցնում է մի լեզվանի և քաջ զինվոր, ինչ կանեն ձեզ, եթե այդ հրամանը չկատարեք:

-Ուսիցս կպոկեն չունեցածս ուսադիրները:

Ծիծաղում է ամբողջ զինվորությունը և գոռում «Դեպի կռի՛վ, դեպի Գողթան»:

Պարո՛ն, ավելացնում է նույն զինվորը, չէ՞ որ հաճախ ասում եք՝ *քաջերը չեն կատարում նահանջի հրամանը:* Ի՞նչ, մենք էլ ա՛յն Ղափանցիները չե՞նք, փոխվեցի՞նք: Աստված է վկա, որ մեզնից ոչ ոք հետ չի դառնա: Չի՞ ուզի Գորիսը, է՛հ, թող փամփուշտ չհասցնի մեզ, *Աստված մեր տակառները պահի:*

Զինվորի վերջին խոսքերը խեղդվում են զորաշարքերից բարձրացող գոռ ուռռաների մեջ:

-Վաղը կլինենք Գողթանում,-լինում է իմ վերջին խոսքը:

Զորքը ուրախ ու բարձր տրամադրությամբ ցրվում է իր տեղերը՝ սպասելով ազդանշանին, իսկ ես նստում եմ Գորիսի հրամանատարության գրելու հետևյալը.

«Ձեր տված տեղեկություններից հետո Գողթանի արշավանքը ինձ համար դառնում է ավելի իմաստալից ու անհետաձգելի: Հենց այս գիշեր Քաջարանում հավաքված զորքը, իմ ղեկավարությամբ, շարժվելու է առաջ»:

* * *

Շատ քիչ գիշերներ կարող են տալ այդ լեռնանցքի նկարագրությունը: Մեզ վիճակված էր երևակայածից ավելին տեսնել ու կրել: Դեռ լեռան կեսը չանցած՝ Ղափուջուղի «գայլ խեղդող» բուքը զգացնել տվեց իր ամբողջ ուժը:

Արշավախմբի առաջն ընկած՝ մեկը մյուսից մոտ 50 քայլի վրա ընթացող, ուղեցույց վալադները, թվով 7 հոգի. գունավոր ծողեր խրելով իրենց անցած տարածության վրա, անձայն ու անշեղ առատ ձյունի վրա գծում են մեր ճանապարհը: Մոտ երկու վերստ տարածության վրա ձգվել է մեկը մյուսի հետևից արշավախումբը: Թվում է, որ ամեն մեկը լուռ մտածում է և խոստովանում, թե կռիվը թշնամու գերադաս ուժերի դեմ ավելի հեշտ է, քան կռիվը բնության արհավիրքների դեմ:

Զարհուրելի է Ղափուջուղ հսկան փոթորկի ժամին:

Կարծեք ձմեռը միայն այդ լեռնաշղթայի վրա է հավաքել իր բովանդակ ուժերը՝ մեր ճանապարհը կտրելու համար: Փոթորիկ կա, ձյունախառն մի կատաղի քամի, որ, ձյունի ամբողջ ամպեր ցրելով առաջացող զորքի վրա, համառորեն լցնում է զինվորների աչք ու բերանը, ծեծում երեսները, թուլացնում քայլվածքը:

-Կանգնի՛ր,-հանկարծ բարձրանում է ուղեցույցներից մեկի ձայնը:

-Ճանապարհ չկա,- որպես արձագանք, լսվում է մի ուրիշի ձայնը:

Անցնում եմ առաջ դեպի վալադները և դեմ առնում ճանապարհի վրա փոթորիկից ստեղծված մի մեծ ձյունե բլուրի: Ուրիշ ճանապարհ չկա: Աջից Փիրմադան բարձունքն է, ձախից՝ Փառակայի ձորը: Մնում է ճեղքել բլուրը: Մի ջոկատ անցնում է գործի և վերացնում խոչընդոտը: Զորքը շարժվում է առաջ: Քիչ անց կրկնվում է նույն պատմությունը:

Անցնել Ղափուջուղի լեռնանցքը՝ նշանակում է բարձրանալ ու իջնել, գրեթե, նույնքան ժամանակ:

Լուսաբացին զորաշղթայի առաջին զինվորները հասնում են «Ղազարյուրդ» կոչված անիծված վայրը, ուր բուքի բռնված ճամփորդներից շատ քչերին է հաջողվում հրաշքով խուսափել մահից:

Գիտեինք, որ այդ կետի վրա միշտ էլ կարելի է անթաղ մեռելների հանդիպել, բայց չէինք սպասում, որ այդտեղ կտեսնենք ամբողջ մի գերեզմանատուն: Դիակներ՝ հին ու նոր, մի տեղ գրեթե ամբողջապես, մյուս տեղը՝ կիսով չափ թաղված ծյունի տակ: Դիակներ՝ մասամբ, կամ ամբողջապես գիշատված վայրի գազանների կողմից... Սովի ու զրկանքի զոհեր՝ ցիրուցան դարավանդակի ամբողջ տարածության վրա:

Ահա՛ մեկը՝ Գողթանի ամենածանոթ սուրհանդակներից, որը, մահն աչքն առած, հանձն է առել իր հրամանատարի հաղորդագրությունը բերելու ինձ և զոհ է դարձել Ղափուջուղի կատաղության: Պարտքի ու պարտաճանաչության այդ նվիրական զոհի ծոցից զինվորները հանում են հաղորդագրությունը. *«Արագացրեք օգնությունը, Գողթանը ծեռքից գնում է, վաղը կարող է ուշ լինել: Ղազար»:*

Ահա՛ մի ուրիշը, որը խենթություն է ունեցել մի քիչ հացահատիկ ծեռք բերելու համար անցնել Բաղաբերդ և վերադարձին բուքի բռնվել ու սառել: Գիշատիչները դեռ չեն մոտեցել նրան, մի քանի ֆունտ ցորենով լի պարկը դեռ շալակին է:

Շատ են դիակները, մի փոքրիկ գերեզմանատուն ստեղծելու չափ շատ: Եվ բոլորը լուռ վկայում են, թե ինչպես է ապրել ու մարտնչել եղբայրական Գողթանը:

Արշավախմբերը՝ խորապես ազդված այդ սրտաճմլիկ պատկերից, անցնում են, հա անցնում՝ ժամ, վայրկյան առաջ Քրիստափորի հոգևարող ծննդավայրերը հասնելու համար:

-Պարոն հրամանատա՛ր,- հարցնում է առջևիցս ընթացող Գերասիմը,- մի՞թե Գողթանցիք չգիտեն մեր արշավանքի մասին, որ մի քանի մարդ չեն ուղարկել Ղափուջուղի այս երեսի վրա՝ մեր առաջխաղացումը հեշտացնելու համար:

-Չէ՛, չգիտեն- իմ փոխարեն պատասխանում է Բաղաբերդցի մի զինվոր,- չգիտեն և չեն սպասում մեզ, որովհետև լուսաբացին Ղափուջուղի կատարին թիփի կար, իսկ դա նշան է Գողթանցու համար, որ, եթե այդ ժամին սարին կատարը անցած չեղար, կորած ես:

-Հե, տեսնո՞ւմ եք,- շարունակում է նույն զինվորը,- տեսնո՞ւմ եք մի բան սևին է տալիս էն ծորի մեջ, դա Մեսրոպավանն է: Կարելի է մեկերկու համազարկով այդ գյուղում ահակոչ բարձրացնել, թույլ կտա՞ք, պարոն:

Արշավախմբերը, ամբողջովին ծյունով ծածկված, մոտենում են Մեսրոպավանի դաշտերին: Տեղական պահակները նկատում են Ղափուջուղից իջնող մեր զորաշղթան և ոտքի հանում գյուղը: Մինչև որ մեր վաշտերը կհամախմբվեն գյուղից քիչ հեռու մի վայրում, հայտնվում է տեղական զինվորությունը: Մարտական կարգով, ամբողջապես ծյունի մեջ, զորքը մտնում է գյուղ:

Գյուղացիությունը հանկարծակիի եկած և՛ զարմանք է հայտնում, և՛ ուրախություն արտահայտում: Կանայք լալիս են ուրախությունից: Աստվա՛ծ, փառքդ շատ լինի, վերջապես եկան, մրմնջում է ու խաչակնքում ամբողջ գյուղը:

Եկեղեցու զանգերի տխրանուշ ղողանջների տակ ընդունում եմ գյուղի կողմից մատուցված աղն ու հացը. *«Հալալ լինի ծեզ նման հայերին այդ հացը, որ քաջություն ունեցաք, աշխարհից կտրված, ամենածանր պայմանների մեջ, կառչած մնալ հայրենի հողին»:*

-Հալալ լինի և քո զորքին, որ այսպիսի եղանակին Ղափուջուղի պես սարն անցավ,- լինում է տարիների բեռան ծանրության տակ կքած ծեր քահանայի պատասխանը:

Այսպես, առաջի մեծ հաղթանակը բնության խոչընդոտների ու արհավիրքների դեմ տարված էր: Նոր հաղթանակների ծարավով զորքը ցրվում է տները հանգստանալու:

Մարտի 17-ին տեղի է ունենում մեր ուժերի և պայթուցիկ տակառների կենտրոնացումը Ցղնայում:

18-ին, պատրաստ լինելով հանդերձ, չենք հարձակվում, սպասելով մարտի 20-ին՝ թուրքերի կրոնական ամենամեծ տոնին, թշնամուն հանկարծակիի բերելու մտադրությամբ:

19-ին երեկոյան *զորքը ոգեկոչում է մեր ցեղի ինքնապաշտպանության ճանապարհին ընկածներին, իսկ կես գիշերին, կրոնական երկյուղածությամբ անցնելով Ռոստոմի տնակի մոտով, հաղթական բարձր տրամադրությամբ կորչում է մթության մեջ:*

Մեր պատերազմական բախտը մեզ հետ է մնում և այս անգամ: Մեզ հաջողվում է, դեռ լույսը չբացված, բռնել թշնամու դուռն ու երդիկը և զրկել նրան դիմադրելու հնարավորություններից: Ազայի զորասյունը գրավում է Խարաբագիլան հինավուրց բերդը և սպառնալիորեն կախվում Ազաների վրա: Ռազմափորձային հարյուրյակը գրավում է Դույլունը, Քալանթարը և Դույլուն Դիզաները: Բաղամարի զորասյունը՝ Ղազարի հրամանատարությամբ՝ Տիսարը, Սալը, Վալավերը, Աղբինը, Տիզեն և Վանանդը: Ագուլիսի զորասյունը, Գյուլնազարյանի ղեկավարությամբ՝ Դոնիսը: Գենվազի ուժերը, Կարջիվանի կողմից, գրավում են Օրդուբադի նախադուռը՝ «Ղափու» կոչվող ամրությունը և սրի քաշում տաճկական ամբողջ պահակախումբը:

Այսպես, աննախընթաց տարերայնությամբ ու թափով սկսված և առաջ տարված կռիվը մարտի 21-ին մեր ծեռքն է հանձնում Գողթանի բոլոր թուրք գյուղերը, բացի Արաքսի ափին ընկած Յայջին և Դաս-

տակը, որոնց դեմ գործողություններ չենք սկսում՝ Պարսից ժողովրդին չգրգռելու համար:*

Կռվի երկրորդ օրը, երեկոյան դեմ, Գողթանի մուսուլմանության Նախիջևանից օգնության է հասնում մի զորամաս, երկու դաշտային թնդանոթներով, որը, մեզ մի քանի հրանոթներ ուղղելուց հետո, անսպասելիորեն նահանջում է դեպի Ջուլֆա: Վերջը մեր ձեռքը ընկած գերիների ցուցմունքներից պարզվեց, որ օգնության եկած զորամասը, տեսնելով թուրք գյուղերի ավերածությունն ու Օրդուբադի դատարկումը, վտանգավոր էր համարել այդ շրջանում մնալը և հետ քաշվել:

Մեր զորքի հրամանատարությունը այդ օրը աննախընթացորեն ռազմաշունչ էր: Նրա ճերմակ պատան-դրոշակը այդ օրը զարդարում էին սրբության երկու խորհրդանշաններ՝ *Քրիստափորի կենդանագիրը,* Վանադի գրավման ժամանակ ձեռք բերված մի հարուստ թուրքի տան մեջ, և Օնիսում թուրք չավուշի կողմից սպանված Ագուլիսից փախցրած, *հայ աղջկա փարթամ ծամը:* Միայն 17-18-ի գարուն տեսած հայ գեղեցկուհին հրաժարվել էր հետևելու իր լլկիչին և զոհ գնացել նրա յաթաղանին: Վախկոտ բարբարոսը, չգիտեք, թե ինչ մութ զգացմունքից մղված, կտրել ու դիակի վրա էր նետել իր զոհի ծամը, որն այդ օրից պիտի դառնար ու մնար իմ ժողովրդական վաշտերի համար որպես հայ պատվի խորհրդանշանը:

Կռվի երրորդ օրը մեր ուժերը՝ տեր Գողթանի ռազմագիտական բոլոր կարևոր կետերին՝ ենթարկվում են նոր դասավորումների և շարժ-

* Մեր այս կռիվների մասին «Ադրբեջան» թուրք թերթից հայկական «Մինարեթը» (թիվ 13, 1920) արտատպել է հետևյալը. Օրդուբադի հասարակական գործիչ Ասկյար խանը, որ ապրում է ներկայումս Թավրիզում, Ջուլֆայից ուղարկել է հետևյալ հեռախոսագիրը. «Նովրուզի առաջին օրը, մարտի 21-ին *հայկական զինված ուժերը, բաղկացած 10.000 հոգուց,* հանկարծակի հարձակվեցին հետևյալ թաթարական գյուղերի վրա՝ Դուլլուն, Վանանդ, Վալավեր, Տիսար Աղրի: Գրավելով այդ գյուղերը այրեցին և հարձակ-վեցին Օրդուբադի վրա: Հեռախոսային հաղորդակցությունը ոչնչացված է: Օրդուբադի կողմից լսվում են ուժեղ թնդանոթաձգության ձայներ: Օրդուբադի ժողովուրդը խնդրում է ձեզնից օգնություն մուսուլմաններին ազատելու համար: Հայտնեք Ադրբեջանի կառավարության և եվրոպական պետությունների ներկայացուցիչներին ու միջոցներ ձեռք առնեք պաշարված Օրդուբադը ազատելու»:

Երկրորդ հեռագիրը՝ ստացված Ջուլֆայից ասում է.

«Օրդուբադ տանող բոլոր ճանապարհները հայերը գրավել են: Նախիջևանից եկած օգնությունը աշխատում է անցնել Օրդուբադ Ահարի վրայով: Շրջակա գյուղերի ազգաբնակությունը սարսափի մատնված՝ հավաքվել է Օրդուբադ: Ուտեստեղեն չի ճարվում: Դիմեցեք պարսից կառավարության և օգնություն խնդրեցեք Ղարադաղից: Օրդուբադն ռմբակոծվում է: Երկու կողմից էլ մեծ կորուստներ կան: Հայկական ուժերը կազմված են կանոնավոր կառավարական զորքերից՝ Զանգեզուրցիներից, Պարսկահայերից և տեղացիներից»:

վում առաջ՝ խորտակելու խուճապի մատնված Օրդուբադը, երբ Գողթան է հասնում Ղափանի սուրհանդակը հետևյալ հաղորդագրությամբ՝ - «Շուտ և կարևոր, Նժդեհին: Ամսվա 23-ին սկսվեցին մեր ճակատներում կռիվները: Թշնամին մեծ ուժերով առաջանում է: Թուրքերը վերցրել են իրենց նախկին դիրքերը: Ագարակ-Զեյվա գծի վրա եղած գյուղերի դրությունը օրհասական է: Մեր դեմ գործում է երեք թնդանոթ, մեծ ուժերով: Խնդրում եմ շտապեք մեզ հասնելու, բերելով ձեզ հետ թարմ ուժեր: Շտաբս-Կապիտան Նարինյան: 25 մարտի, 1920թ. ժամը 1, գիշեր, Ղափանի Հանքեր»:

Երկու ժամ անց՝ հասնում է երկրորդ սուրհանդակը Ղափանի ազգային խորհրդի անդամ Արսեն Բաբայանի այս գրությամբ.*

«Սիրելի հրամանատար ! Քո սիրեցյալ Ղափանը ձեռքից գնում է. այս գիշեր Զեյվան հանձնել են թուրքերին: Զեյվան ձեռքից գնալուց հետո, պարզ է, որ Մողեսը, Եղավարդը, Ուժանիսը և Ագարակն էլ այսօր-վաղը կգնան: Հրամանատարություն չկա, զինվորությունը չի կռվում: Ի սեր այն նեղությունների, որ կրել ես մեր հայրենիքի համար, հասիր մեզ»...

-Բրավո՛, Նուրի փաշա, բրավո՛, միայն այդ ձևով կարելի էր փրկել Օրդուբադը, տխրությամբ բացականչում է Աշոտը:

Խելոք ու խորամանկ տաճիկ փաշան, քաջ գիտակ, թե ի՞նչ ուժեր են գործում Գողթանում, ինձ Ղափան քաշելու նպատակով չէր հապաղել հսկայական ուժերով գործողություններ սկսելու վերջինի դեմ: Մաքիավելիի խոսքերի իմաստը՝ *«Եթե կռվում չկարողացար հաղթել, որպես առյուծ, փորձի՛ր հաղթել որպես աղվես»,* և՝ ժամանակին էր հասկացել թշնամին:

Տաճիկ աղվեսին պիտի հաջողվեր Սյունյաց առյուծներին զբաղեցնել Գողթանից դուրս, Օրդուբադից հեռու: Ստիպված դադարեցնում ենք գործողությունները ու նորից բռնում Ղափուջուղի դժվարին ճանապարհը, թողնելով Գողթանին՝ *ռազմագիտական հնարավորություն - մնալու իր տեղում, հացի որոշ պաշար և վառ հավատ, որ այլևս մենակ չէ նա, որ կարիքի դեպքում Ղափանն ու Գենվազը չեն հապաղի օգնության երկաթե ձեռք մեկնելու իրեն անգամ Ղափուջուղի վրայով:*

ՈՐՈՏԱՆԻ ԿՌԻՎՆԵՐԸ

Ապրիլի 1-ի լուսաբացին Գողթանից վերադարձած մեր վաշտերը անցնում են հակահարձակողականի և ճակատային կարճ, բայց շեշտակի գրոհներով թշնամուն հետ շպրտում Հարթիզի և Սուսանի բարձունքներից: Նույն օրը, կեսօրի մոտ, մեր ուժերը՝ թիկունքները այդ

* 1920, 26 մարտի, առավոտ, ժամը 8, Գյութկյում:

սարերին տված՝ հեղեղի պես թափվում են Որոտանի թուրք գյուղերը: Մեր դեմ գործող *Խալիլ փաշայի և Իշխան Ղաջարի* զորքերը, կորցնելով իրենց բարոյական հավասարակշռությունը, նահանջում են դեպի Դոնգարլու և Խոջահան: Հրդեհի ու ավերածության մատնված թշնամու գյուղերում մշակվում է մեր հետագա գործողությունների ծրագիրը:*

Վճռվում է մեջտեղից վերցնել Զանգեզուրի և Ղարաբաղի միջև թաղված թրքական սեպը - մոտ հարյուր գյուղ, և այսպիսով հողային կապ ստեղծել երկու հայկական երկրամասերի՝ Ղարաբաղի և Զանգեզուրի միջև:

Նախածեռնությունը թշնամուց խլելուց հետո, Ղափանի ինքնապաշտպանողական կռիվը վերածվում է մի ամբողջական գործողության, իր կոնկրետ խնդիրներով: Ապրիլի 2-ի լուսաբացին մեր վաշտերը, Զանգեզուրը Ղարաբաղին միացնելու նոր նշանաբանով, շարունակում են իրենց գրոհները: Այդ օրը ռազմագիտական մի լուրջ խաղով հաջողվում է թևանցի ենթարկել հռչակավոր Դոնդարլուն, որի բարձունքներում, գերեզմանատանը և այգիներում ամրացած թշնամու ուժերը տեղի են տալիս, մեծ կորուստով, մեր ձեռքին թողնելով գերիներ, իրենց սպայակույտի արխիվը, ծիեր և հսկայական քանակությամբ հացահատիկ:*

Կռվի երրորդ օրը հաղթություններով արբեցած մեր վաշտերը մի վերջին խոլական գրոհով թշնամուց մաքրում են Որոտանի ձախ ափին գտնվող բոլոր գյուղերը, ամրացնելով իրենց դրոշակը գետափին բարձրացող լեռան կատարին:

---

* Որի պատմական մասը հետևյալն է.

«Զինվորներ, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնենք առանց տատանումի: Օրեր առաջ, իմ արևմտյան ուժերի խենթ հարվածներից ընկավ անառիկ Գեղվածորը: Օրեր անց՝ ձեր նույն Գեղվածորյան թափի և կրակի առաջ պիտի ընկնի Որոտանի աջ ափը: Այնտեղ, Գեղվա բարձունքներում և ձորերում մեզ զորավիգեց Դավիթ-Բեկի վրիժավառ ստվերը, այստեղ, Որոտանի ճակատում, մեզ կառաջնորդի Թորոս Իշխանի հայրենանվեր հոգին: Յոթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ և որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տերը Զանգեզուրի: Ուրեմն առաջ, իմ յոթ անգամ սիրված և քաջ Ղափանցիներ, առաջ, դեպի այդ բարձունքները՝ դեպի Քյափազ, Ային-Դաղ, դեպի Հարթիզ:

«Մեզ հետ Աստված և մեր պատերազմական բախտը, առաջ»:

* Մի շարք պաշտոնական հաղորդագրություններից և մարտագրերից պարզվում է, որ ծանոթ փաշաներից և բեյերից զատ Ադրբեջանական բանակի մեջ գործում էին նաև մեծ թվով տաճկական կրտսեր սպաներ:

ԱՍԿՅՈՒԼՈՒՄԻ ԿՌԻՎԸ

Զանգեզուրի և Ղարաբաղի միջև ընկած թրքական տերիտորիայի առաջին հատվածը մաքրելուց հետո մեր ուժերի երեք քառորդը տեղափոխվում է Ասկյուլումի ճակատը, Շիկահողի շրջանը տեղափոխելով կռվի ծանրության կենտրոնը: Մեր ուժերի մի չնչին մասը, որպես նուրբ սարդոստայն, տարածելով Որոտանի ափին, մնացած ուժերս, որպես հարվածող բռունցք, կենտրոնացնում եմ Ասկյուլումի դեմ:

Այս սեպաձև բարձունքը, որպես բնական անառիկ ամրություն, բարձրանում է Օխչի գետի աջ ափին, դեմ հանդիման Սուսան սարին, անցափակելով Զանգեզուրի նախադուռը:

Ղափանը վաղուց էր ատամ կրճտացնում այդ հսկայի դեմ: Զանգելանի շրջանի թրքությունը, իր ձեռքին պահելով այդ կարևոր բարձունքը, անպատիժ կերպով հազար չարիքներ էր նյութել արևելյան Ղափանի դեմ և միշտ էլ, շնորհիվ այդ լեռան անառիկության, մնացել էր հաղթական ու անպատիժ:

Արևելյան, ինչպես և հյուսիսային կողմից այդ ամրության մերձենալ անկարելի է, որովհետև այդ կողմից նա բարձրանում է ուղղահայաց ձևով, պատի պես: Ճակատային գրոհը մեզնից շատ զոհեր կխլեր: Չեր օգնի նաև պայթուցիկ տակառը, որովհետև այդ գծի բոլոր տիրապետող դիրքերը գտնվում էին թշնամու ձեռքին: Մնում էր վտանգավոր, բայց օրհնված թևանցը:

-Պարոն հրամանատար,- հարցնում է մի տարիքոտ Ղափանցի, թուրքական այդ շրջանում հայոց հին վանքեր կամ բերդեր կա՞ն:

-Գրեթե ամեն քայլափոխում,- լինում է պատասխանը:

-Հե, տեսնո՞ւմ եք,- միջամտում է շրջանին ծանոթ մի Շիկահողցի,- Ասկյուլումի փեշերին ընկած էն մեծ շենքը հայկական հին եկեղեցի է դա, ուր ամառվա տոթերին թուրք հովիվների կամ որսորդների շներն են հանգստանում, իսկ գիշերները մենավոր բուն է վայում:

-Ուրեմն, մեր առավոտյան աղոթքը այդ եկեղեցու՞մ պիտի անենք, պարոն,- հարցնում է տարիքոտ զինվորս:

-Այո՛:

* * *

Ապրիլի 6-ի առավոտյան, մեր ուժերը՝ բաժանված երկու զորասյուների՝ սկսում են առաջխաղացումը: Զորամասերից մեկը պիտի տեղահաներ Ասկյուլումից աջ ընկած մի քանի գյուղեր և վարագուրեր այդ ճակատը Զանգելանից շարժվող թշնամու ուժերի դեմ: Այս գործողությամբ նա հնարավորություն պիտի ստեղծեր, միաժամանակ, մեր ձախ զորասյունի համար՝ մի արագ թևանցով անցնելու Ասկյուլումի բարձունքներին ամրացած թշնամու թիկունքը:

Մեր և թուրք պահակների առաջին շփումից հետո, թշնամու առաջավոր դիրքերում բարձրանում է ուժեղ հրացանաձգություն: Մեր ուժերին հրամայված է առաջանալ առանց կրակելու: Ճակատից Ասկյուլումի դեմ սկսվում են մեր ցուցաբար կիսավաշտի անկախության խաղերը, որոնց թշնամին պատասխանում է փոքրակային կրակով: Մեր աջ թևի ուղղությամբ, գրեթե միաժամանակ, մթության մեջ, մի քանի կետերի վրա բարձրանում են հսկայական բոցեր:

Դա նշան է, որ մեր աջ զորասյունը արդեն մտնում է թշնամու գյուղերը, հրդեհելով դարմանանոցներն ու խոտի դեզերը: Թևանցային զորասյունը դեռ լուռ շարժվում է առաջ: Ասկյուլումի թիկունքում մեր խիզախներից մեկը դինամիտով պայթեցնում է մի հսկա ժայռ, որի մոտակա լեռներն ու ձորերը թնդացնող դղրդյունին հետևում է մեր վաշտերի գոռ ուռռան:

Թշնամին գրեթե պաշարված մի քանի վայրկյան միայն տևող ջղային կրակից հետո, խուճապահար թողնում է Ասկյուլումի բարձունքները: Անկարգ փախուստի ժամանակ նրա մի մասը ջարդվում է մեր թևանցային ուժերի կողմից, իսկ մյուս մասը, օգտվելով մթությունից, փրկում է իր կաշին:

Բացվող լույսն Ասկյուլումի վրա ողջունում է հայկական եռագույնին: Այժմ մեր ձեռքին են Ասկյուլումը, շրջանի տիրապետող բարձունքները և մի քանի գյուղեր: Մնում է օգտագործել օրվա հաջողությունը: Կեսօրվա մոտ Որոտանի ափին թողածս զորամասի և մեր ռազմաճակատի երկրորդ հատվածում գործող մեր ուժերի միջև կապ ու ներդաշնակ գործակցություն ստեղծվելուց հետո սկսվում է ընդհանուր առաջխաղացումը: Գրավելով Ասկյուլումի աջ և ձախ թևերի վրա ընկած թուրք գյուղերը, երեկոյան դեմ մեր վաշտերը հրդեհում են մեծահարուստ Խուջահանի շուկան, կատարյալ հաջողությամբ պսակելով մեր կռիվները և այդ ճակատի վրա:

ՉԱՎԱՆԴՈՒՐԻ ԿՌԻՎԸ

Պատմական Զանգեզուրը - նվիրական ծննդավայրն է Դավիթ-բեկյան դարի մեծ հայրենասերներից Թորոս իշխանի: Այդ մեծ ու խնկելի մեռելը դեռ շարունակում է ապրել Սյունիքի հայության համար: Սյունեցի շինականը դեռ առանձին քաղցրությամբ ու հպարտանքով է տալիս իր այդ հայրենասեր իշխանի անունը և կրոնական երկյուղածությամբ անցնում է նրա գերեզմանի* մոտով, որի վրա տասնութերորդ դարի հայ ձեռքը խորհրդանշորեն հավերժացրել է Սյունիքի հայության և նրա անձնվեր պաշտպանների գոյության ողբերգականությունը:

Գերեզմանաքարի վրա քանդակված *աղվեսը խեղդում է առյուծին:* Ասել է՝ *խորամանկությունը սպանում է քաջությունը:* Առաջինը *Մելիք Ֆրանգյուլն է՝ խորամանկ դավաճան,* երկրորդը՝ *Թորոս իշխանը - քաջ ազգասեր:* Սյունեցին միշտ էլ օտար երկիր, թե կռիվ գնալիս ծնրադրում է այդ մեծ ու խնկելի գերեզմանի առաջ:

Այս անգամ կռվի եկած եղվարդի վաշտը իրեն հետ բերել է նաև *«մի բուռ հող Թորոս իշխանի գերեզմանից»,* որի մասին ասում է, խոսում ամբողջ զորքը:

Թո՛ղ որ մեր տեղահանած ու ավերած բազմաթիվ գյուղերից ազատված թրքության մի մասը կենտրոնացել է հենց այդ ճակատի վրա. թո՛ղ որ Ջիբրայիլից նոր օգնական ուժեր են հասել Զանգելան ու Բարթազ, թո՛ղ որ Խալիլ փաշային և իշխան Ղաջարին օգնում են Ղարադաղի խանները՝ պարսկական ափից: Բայց ի՞նչ արժե այդ բոլորը մի զորամասի համար, որի մոտ «մի բուռ նվիրական հող» կա, որին զորավիգում է Թորոս իշխանի վրիժակ ոգին:

* * *

Ապրիլի 11-ին տեղի են ունենում հարկավոր խմբավորումներ: Նույն օրը երեկոյան դեմ Գենվազի արիական վաշտերը համաձայն ընդհանուր մարտագրի, կենտրոնանում են իրենց համար նախատեսված կետերի վրա և կապվում Ղափանի ուժերի հետ:

Մի օր անց սկսվում են մեր գործողությունները Կապարգողթի արևելյան ճակատի երկրորդ հատվածի վրա, նպատակ ունենալով մեր գրաված հողամասի ամբողջացումը մինչև Արաքսի հովիտը: Մեր առաջին հարվածը տրվում է այդ շրջանի գյուղերից ամենաանհնազանդին - Սոբուն, որը, նեղն ընկած, դիմում է կռվի բարիկադային ձևերին և տեղի տալիս մեծ կորուստով:

Պայթուցիկ տակառները, որոնց գործածության համար լայն հնարավորություններ ունի այդ ճակատը, ժամերի ընթացքում մաքրում են Սոբու հարևան բոլոր գյուղերը: Թշնամին, բարոյալքված, հետա-

---

* Մեր այդ աննախընթացորեն տարերային գործողությունների մասին թուրքական *«Ադրբեջան»* թերթը իր ապրիլի 15 համարում գրում է. «Պառլամենտի անդամ Ջալիլ բեկ Սուլթանովը Ջիբրայիլից պառլամենտին հեռագրում է, որ Զանգեզուրի հայերի վերջին հարձակումը սկսվել է մարտի 20-ին և վերջացել ապրիլի 4-ին: Մահմեդական գյուղերը բոլորովին այրված են: Թալանից զերծ մնացած մահմեդականները փախել են Պարսկաստան: Պարսկաստանում մոտ տասը հազար ադրբեջանցի թուրքեր մնում են անպատսպար և քաղցած: Բնակչությունը խուճապի և սոսկումի է մատնված: Պարսիկները, փոխանակ օգնելու փախստականներին, կողոպտում են նրանց: Սուլթանովը ինքն էլ փախստականների մեջ է»:

պնդվելով, նահանջում է դեպի հարավ-արևելք: Մենք շարժվում ենք դեպի աջ և առաջ, դեպի Արաքսը: Ապրիլի 13-ի գիշերը մեր հարվածող զորամասը գրավում է Շուքյուրաթազի բարձունքները և սպառնալիորեն կախվում թշնամու վերջին հենարանը հանդիսացող հռչակավոր Բարթազի գլխին:

Լեռների վրա դեռ ձյուն կա: Մեր դիրքերում ցուրտ է և փոթորիկ: Փչում է Արաքսի քամին: Բարթազի բարձունքից պարզ երևում են մեր գրաված վայրերի կրակները: Հարթիզի, Սուսան սարի և Ասկյուլումի բարձունքներից մթության մեջ երբեմնակի գծագրվում է մեր «ուժանակային խաչը»: Դա նշան է, որ ամեն ինչ խաղաղ է այդ ճակատներում: Քիչ անց Գյոյալի բարձունքից օդի մեջ ուժանակային մոմով գծագրվում է «կիսալուսինը»: Դա նշան է, որ այդ ճակատի վրա երևացել է թշնամին, որ վտանգ կա: Բարձրանում է ուժեղ, բայց կարճատև հրացանաձգություն: Վայրկյաններ անց տիրում է լռություն, և նույն բարձունքի վրա երկար ու վեհորեն փայլում է «խաչը»:

Հարձակման ժամը մոտենում է:

-Ոտքի՛, լսվում է վաշտապետների հրամանը:

-Ամա մրսեցինք, հա,- ասում է ցրտից դողալով մի զինվոր:

-Ոչի՛նչ, այդ էլ չենք ների թշնամուն, սրախոսում է մի ուրիշը:

-Շուտով կտաքանանք բոլորս, սիրելիս, Բարթազում փայտաշեն տներ շատ կան, կրակն առատ է լինելու, միջամտում է Գենվազի վաշտապետներից մեկը:

Տրվում է առաջխաղացման հրամանը:

-Մեզ հետ Աստված,-բարձրանում է զինվորների ձայնը:

-Եվ Թորոս իշխանի հոգին, որպես արձագանք, կրկնում են վաշտապետները և շարժվում առաջ:

Առավոտյան ուղիղ ժամը 4-ին Բարթազի բարձունքներից ահռելի դղրդյունով դեպի ձորերն են գլորվում մեր պայթուցիկ տակառները: Քիչ անց բարձրանում է գյուղաքաղաքին մոտեցած մեր զորաշղթայի ուռռան, որը մի խիզախ գրոհով խորտակում է թշնամու դիմադրությունը և մտնում Բարթազի արևելյան թաղը: Ինձ հետ բաց դաշտով դեպի Արաքսի ափն առաջացող փոքրիկ ջոկատի զինվորներից ոմանք երբեմն-երբեմն կռանում են ու բարձրանում:

Ձնծաղիկներ ենք հավաքում, պատասխանում են իմ հարցին:

Բնազդորեն կռանում եմ և ես ձյան տակից գլուխը դեռ նոր դուրս հանած մի ձնծաղիկի վրա: Արաքսի ափին բարձրացող մի բլուրից ջոկատիս դեմ սկսվում է մի ուժեղ հրացանաձգություն:

-Այ քեզ անքաղաքավարի թշնամի, կարծես չգիտե, որ ծաղիկ հավաքողների վրա չեն կրակում,- սրախոսում է վտանգն անգիտացող մարտիկներիցս մեկը:

Բաց դաշտի վրա թշնամու կրակի տակ ընկած փոքրիկ ջոկատս անտեղի զոհերից ազատելու միայն մի միջոց կար՝ դինամիտային գրոհը: Մարտական կարգ ընդունելով, ջոկատս պայթուցիկներով նետվում է առաջ: Երկվայրկյան անց գոռում են մեր ռումբերը: Թշնամին լքում է իր դիրքերը և անհայտանում գետափի մացառների մեջ: Իմ ուժերը մտնում են Բարթազ:

-Այ քեզ բրինձ, դառնալով զինվորներին, կատակում է վաշտապետներից մեկը, *ամբողջ Զանգեզուրը ձեռքից փախցնելուց հետո, Բարթազի դաշտերի ձնծաղիկները փրկելու փորձն է անում:*

Մեր վաշտերի մեջ բարձրանում է մի հոմերական քրքիջ, կարծեք, որպես պատասխան փախչող թշնամու հատ ու կենտ հրացանաձգության: Մեր հաղթանակը՝ հետևանք մեզ մոտ եղած «Մի բուռ նվիրական հողի», վճռական է և մեծ:

* * *

Օրդուբադը, տաճիկ փաշայի տակտիկական աղվեսության շնորհիվ փրկվել է շատ թանկ, մոտ հարյուր թուրք գյուղերի ավերածության գնով: Ջեյվայից դեպի արևելք ու հարավ, Դոնդարլուից մինչև Բարթազ և Արաքսի ափը տարածվող թրքական սեպը վերցված է մեջտեղից: Թշնամու մարդկային կորուստը մեծ է: Մեծ է և թշնամու թողած ավարն ու հացի պաշարը, որով Կապարգողթի ժողովուրդը հնարավորություն պիտի ունենա հաղթություն կանգնելու և *«սովի ճակատի»* վրա: Թշնամին պարտված է և բարոյապես:

Մեր տարերային հարվածներից խուճապահար թրքությունը հեքիաթներ է հյուսում ու տարածում մեր կռվի ձևերի և պայթուցիկ տակառների մասին: Մեր վաշտերի մեջ զգացվում է այն ռազմաշունչ տրամադրությունը, որը ֆրանսիացիք անվանում են desir de battre:[8]

*Իմ մեջ այդ կռվի ընթացքում ձևակերպվել ու բյուրեղացել է մեր ամբողջական լեռնաշխարհի գաղափարը:**

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ

Զանգեզուրի զորահրամանատարությանը վիճակված էր մի ավելորդ անգամ էլ խոստովանել և ընդունել, որ *հաջող վախճան ունե-*

---

* «Միներեթ» թերթում (թիվ 14, 1920թ., մայիս) կկարդաք հետևյալը. «Գորիսից հեռագրում են, որ Ղափանի ուղղությամբ գործող թուրք ուժերի մեջ երևան է հանված Ադրբեջանական հետևակային դիվիզիայի մասնակցությունը: Զանգեզուրի և Ղարաբաղի միջև գտնված հողամասը գրավել են հայ գյուղացիները: Գրված են նաև Դեմիրջիլար, Գուբաթլու, Դոնդարլու, Խաչմաղ գյուղերը մինչև Բարթազ»:

նում են միայն այն կռիվները, որոնք նախապատրաստում են իմաստությամբ և առաջ տարվում անվարան վճռականությամբ: Իսկ Ղարաբաղում ժամանակից առաջ հապճեպով ու խակ վիճակի մեջ պայթեցրած ապստամբությունը, ինչպես և սպասում էի, ունեցել էր մեզ համար աղետալի վախճան:

Շուշիի հայության կոտորածը և մի շարք հայ գյուղերի տեղահանությունը՝ Ադրբեջանի կողմից, ստեղծել էին մեր այդ Հանրապետությունից կտրված երկրամասի համար շատ ծանր դրություն: Արդեն Զանգեզուր էր թափվել Վարանդայի տեղահան եղած ժողովրդի մի մասը:

Այդ օրերին, երբ իմ ուժերն զբաղված էին Զանգեզուրի և Ղարաբաղի միջև թաղված հողամասի գրավումով և աննախընթաց հաջողությամբ մաքրում էին Հագարիի վերջին գյուղերը, Զանգեզուրի քաղաքացիական մասի կառավարիչ Մելիք-Յոլչյանը դիմում է Կապարգողթի հրամանատարությանը և հանուն Ղարաբաղի՝ օգնություն խնդրում: Դադարեցնելով գործողություններն այդ ճակատի վրա, Ղափանի իմ ամենաընտիր վաշտերով անցնում եմ Ղարաբաղ և ստանձնում Դիզակի պաշտպանությունը:

* * *

«Օրը արշալույսից է հասկացվում»: Շրջաբանելով այդ ասացվածքը, պիտի ասեմ, որ *ճակատամարտի, մասնավորապես ապստամբական կռվի, հաջող սկիզբը հաճախ ունենում է և հաջող վախճան, իսկ ձախող սկիզբը շատ քիչ անգամ է պսակվում հաջողությամբ:* Եվ հասկանալի է դա: Զանգվածը, որպես այդպիսին, չի փոխվում և՛ կռվի դաշտում: Նա, զինված լինելով հանդերձ, չի դադարում *«հոգեբանական ամբոխ»* լինելուց, ասել է՝ դյուրավ ազդվելուց:

Ճնշիչ ազդեցությունը՝ ծնունդ անհաջողության ու վախի՝ պարտության է մատնում կարող զորամասերն անգամ:

Խանդավառող ազդեցությունը՝ ծնունդ առաջին հաջողության՝ հաղթական է դարձնում երբեմն տկար զորքն իսկ:

Ահա՛ թե ինչու *ամեն կերպ պիտի աշխատել, որ կռվի սկիզբը, առաջին հարվածը լինի հաջող:*

Դժբախտաբար, Ղարաբաղի ապստամբության առաջին օրը սկսվել էր ոչ-ցանկալի արշալույսով:

Սև հողերի վերածված Շուշին և մի քանի հազար հայերի դիակները ավելի քան ճնշիչ էին իրենց ազդեցությամբ:

Ղարաբաղի ռազմական ձախողանքի պատճառներից մեկն էլ՝ ըստ իս ամենաէականը՝ պիտի համարել *ապստամբական գաղափարականության չգոյությունը:*

Ապստամբը ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել: Ուզում եմ ասել՝ յոթիցս հեշտ է պարտության մատնել մի կառավարություն, մի կուսակցություն, մի բանակ, քան մի ժողովուրդ:

Բոլոր դարերի ամենամեծ ռազմավարի՝ 60 ռազմաճակատների վրա հաղթություն տարած *Բոնապարտի* զորքերը 1808-ին Իսպանիայում, իսկ 1812-ին Ռուսաստանում պարտվեցին միայն ժողովրդի կողմից: Սարագոսի և Ժիրոնայի հերոսական պաշտպան իսպանական ժողովուրդը՝ զինվոր, կղեր, քաղաքացի, գյուղացի, կին՝ իր աննման խոյանքներով *երկրորդ հռոմեացի* հանդիսացավ: Թեպետև շատ վայրերում պարտված իսպանական ժողովուրդը միշտ էլ որպես *ֆենիքս* վերածնում էր իր աճյունից և նորից զենքի դիմում, բերդերի վերածելով ամեն մի քաղաք, ավան, վանք, ինչպես և ամեն մի շենք, բարձունք, հարկ, պատ:

Եվ հաղթում է ժողովուրդը:

Իսկ ո՞վ չգիտի, որ *ժողովրդական Ռուսաստանը դարձրեց Նապոլեոնի բախտի անիվը,* սրա զորքերի ու զորության գերեզմանը դարձնելով իր երկիրը:

Այո՛, կռվում են բանակները, հաղթում՝ ժողովուրդները:

Ղարաբաղը՝ հաղթական ցանկությունից զատ՝ հաղթելու բոլոր տվյալներն ուներ:

Հասարակականապես ուժեղ, տեղադրորեն ամուր, գրեթե անառիկ, մեր ժողովրդի այդ հատվածին հաղթելու համար պակասում էր հոգեբանական նախապատրաստությունը միայն:

Իսկ այդ բանում, իհարկե, միայն ժողովրդին չէր կարելի մեղադրել:

* * *

Հունիսի առաջին օրերին երևանյան զորամասը, որի հետ և իմ օժանդակ վաշտերը թողնում են Ղարաբաղը: Անցնելով Զանգեզուր՝ Դրոն մնում է Գորիսում, իսկ ես անցնում եմ Ղափան: Որոշված է պահպանել մեր այդ երկրամասը բոլշևիկյան վարակից ու ներխուժումից:

ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐՄԻՐ ԵՎ ԹՈՒՐՔ ՄԻԱՑՅԱԼ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ

ՇԻՎԱՆԻՁՈՐՈՒՄ

Շիվանիձորի հնամենի եկեղեցում խռնված է հասարակությունը: Խոսում եմ և դիտում: Շվարանք և վախ է նկատվում մեծամասնության մեջ: Այդ գյուղի ներկայացուցչության կողմից Կալերի ժողովում խոսք եղել էր իրենց հասարակության մտատրամադրությունների մասին: Ասեմ, որ առանց այդ էլ ինձ համար գաղտնիք չէր այդ գյուղի մտայնությունը:

Ինձ մնում էր հայտարարել. *«Գյուղը ձերն է, ձերն է և կռվելու-չկռվելու իրավունքը, բայց գիտցեք, որ ձեր գյուղի դիրքերը, որպես ռազմաճակատ, որպես կարևոր ռազմագիտական կետ՝ Հայաստանինն է, իսկ կռիվն սկսելու իրավունքը՝ իմը:* Վաղը կտեսնեք, որ ոչ ոք չի կարող խանգարել ինձ և իմ զինվորներին մեռնելու այդ դիրքերի վրա:

Դե՛, ով ինձ հետ է՝ թող դուրս գա թշնամու դեմ. ով ինձ դեմ է՝ թող միանա թշնամուն»...

Գյուղական վաշտապետի շուրջը հավաքված զինվորությունը, դեռ գիշերով, անցնում է դիրքերը, իսկ մենք ուղևորվում ենք դեպի Մեղրի՝ Ակնունու[9] անվանի ծննդավայրը:

ՄԵՂՐԻՆ

Մեղրեցին - դա Սյունիքի շվեցարացին է:

Մեղրին - ավելի քան մի շվեցարական գյուղ:

Թաղված ծառ ու ծառաստանների մեջ, մեղվաջան աշխատանքով ու խնամքով մշակված իր դաշտ ու այգիներով, իր համալսարանական ուսուցիչներով, իր տեղացի սպաներով ու վաշտապետներով, իր կին դատավորներով այդ անվանի գյուղը, ըստ ամենայնի, կմնա իդեալը հայ գյուղացիության համար:

Սեպտեմբերի 7-ի առավոտյան այդ գյուղը, որի կարծիքը կշիռ և վճռական նշանակություն ունի բովանդակ Արևիքի համար, ինձ դիմավորեց դարավոր *«չինարի»* տակ: Երգ չկա, ցույց չկա այս անգամ: Կենսուրախ Մեղրեցու դեմքը մատնում է վայրկյանի լրջության բովանդակ գիտակցությունը: Մռայլ է և զինվորությունը, բայց ոչ ընկճված:

Խոսում եմ - «Ժողովո՛ւրդ, թշնամին առաջանում է առանց կռվի: Նա չի հաղթում, այլ խաբում: Վա՛յ ձեզ, եթե Ղափանի պես դուք էլ խաբվեցիք: Արևելքի և Արևմուտքի թրքությունը չպիտի հապաղի Արևիքի գերեզմանի վրա տոնելու իր վաղեմի երազի՝ Ադրբեջանի ու Տաճկաստանի միջև հողային կապ ստեղծելու իր ճիգերի հաղթանակը»...

-Արևիքը, հրամանատա՛ր, մտադիր չէ սևացնելու իր պատմությունը,- հուզված հասարակության միջից բարձրանում է կոմիսարի ձայնը,- ուրեմն, և չի կարող լքել ձեզ: Նա ձեզ հետ է և պատրաստ կռվի: Հրամայե՛ք...»

Այսպես Մեղրին հաստատեց, որ Արևիքում դեռ ապրում է XVIII դարի մեր պատմության զարդերից Շահումյանի հայրենասիրական ոգին, որը պիտի զորավիգեր ինձ և ապստամբ ժողովրդին վարելու հետագա անհավասար կռիվները: Մի ժամ անց՝ գյուղում ծերերից, կանանցից և երեխաներից զատ չէր երևում զենք կրելու ընդունակ և ոչ մի անձ: Ուրախ էինք, որ դեռ կա մի անկյուն, ուր կարող է ապաստան գտնել հալածված ազատությունը, որ կան հավատարիմ և մաքուր

ձեռքեր, որոնց կարելի էր վստահել մեր ազգային եռագույնի պաշտպանությունը:

* * *

Գիտեի, որ թշնամին՝ Ղափանին տիրելուց հետո, պիտի ձգտեր կամ մեզ թափելու Արաքսը, շպրտելու Պարսկաստան:

Կար և՛ մի ուրիշ մտահոգիչ պարագա: Օրդուբադում կարմիր զորքերից զատ կային նաև տաճկական չորս թաբուրներ և Շարուրի տեղահանված թուրք տարրերից կազմված մի զորամաս: Ըստ ամենայնի թշնամու հարձակումներն այդ կողմից պիտի լինեին ավելի ուժեղ և ավելի մեծ չափակետով:

Ահա՛ թե ինչու պետք էր ժամ, վայրկյան առաջ ամրացնել Արևիքի արևմտյան ճակատը՝ Կաքավաբերդը, դեպի ուր և աճապարում էինք: Մեր ձիերը գրեթե ամբողջ ժամանակը քառատրոփ առաջանում էին դեպի Կարճևան, ուր, ըստ Մեղրուց դեռ արված իմ կարգադրության, մեզ պիտի սպասեր Կաքավաբերդի գյուղերի զինվորությունը:

Օրվա դեպքերի ազդեցության տակ ես պատմում էի ուղեկիցներիս բիբլիական հրեաների պատերազմական սովորությունների մասին.- «Կռվից առաջ քահանայապետը կանգնում էր զորքի առաջ և ասում՝ լսե՛ք, Իսրայելի որդիք. այսօր պիտի չափվեք թշնամու հետ: Թո՛ղ չդողա ձեր սիրտը: Մի վախեցեք և մի՛ նահանջեք. մի՛ երկնչեք, որովհետև ձեր տեր Աստվածը ձեզ հետ է և ձեզ հետ միասին պիտի հարվածի թշնամուն, որպեսզի փրկի ձեզ վտանգից»:

Այս հանդիսավոր խոսքից հետո թույլատրվում էր տուն վերադառնալ այն բոլորին, որոնք նոր էին ամուսնացել, նոր տուն շինել կամ նոր այգու տեր դառել: Թույլատրվում էր վերադառնալ նաև վախկոտներին...

* * *

Արևիքն իր փոքրիկ Չերնագորիան (Սև Լեռը) ունի - Բաղաբերդը, հպարտ ու ընբոստ:

Չորս գյուղերից է բաղկացած այդ հերոսական շրջանը՝ Վահրավար, Կուրիս, Ագարակ և Գուդեմնիս՝ ընկած Ալագյազ լեռան արևելյան փեշերին:

Ես չգիտեմ, չեմ ճանաչում մարդկային մի այլ հասարակություն, որի մեջ այնքա՛ն ջերմ և այնքա՛ն զորեղ լիներ լեռների տերը, պաշտամունքը, որքան Ալագյազի ստորոտում բուն դրած այդ մի բուռ հայության մեջ: Օրդուբադի թրքության անհաշտ հարևանությունը տարիների ընթացքում Կաքավաբերդցուց ստեղծել է մի եզակի մարտիկ, գրեթե միշտ զինված, անվրեպ խփող, շուտ բռնկվող և մի քիչ էլ անիշխանական:

Այսօր նա ավելի չարացած է երևում: Թշնամին հանդգնել է վիրավորելու նրա դյուրազգացությունը:

Իմ Կարճևան հասնելուց քիչ առաջ այս գյուղն են եկել Օրդուբադի երկու թուրք պատվիրակները, բերելով խորհրդային հրամանատարության վերջնագիրը: Հրամայված է Արաքսի ափի հայության՝ «անմիջական մաքրել Արաքսի ափով ծգվող խճուղին և հնարավորություն տալ խորհրդային Ադրբեջանին միանալու Նախիջևանին»:

Թշնամու պատվիրակները զարմանքով են խոսում կարմիրների մասին և հայ գյուղացիության ահաբեկելու նպատակով տասնապատկում տաճկական ուժերի թիվը: Ինձ մնում էր շնորհակալ լինել բախտից, որ չէր հապաղել հեշտացնելու իմ գործը: Կաքավաբերդը թուրք բանագնացների բերանից էր լսում, որ կարմիրների հետ կան նաև թուրք-թաթար ուժեր: Ի՞նչ խոսք, որ դա մի մեծ առաքելություն էր ինձ համար: Թուրք զորքերի ներկայությունը ավելի ևս պիտի բորբոքվեր իմ զինվորների կատաղությունը, դարձնելով մեր հարվածները տարերային և վճռական:

Երկար խոսելու կարիքը չզգացի: Երկու թուրքերը խոսել էին իմ փոխարեն և լավ խոսել: Ինձ մնում էր մի քանի խոսք ասել թշնամու կռվի կանացի ձևերի մասին, հիշեցնել իմ այդ ճակատի զինվորության իր անպարտելիությունը և տալ Ալագյազն ու Սոյուխները բռնելու հրամանը:

Քիչ անց՝ մեր ուժերը գունդ առ գունդ բարձրանում էին լեռները: Աշոտը, մոռացած իր հիվանդ լինելը, խոսում էր և մի առանձին հպարտանքով ընդգծում հին հրեաների պատերազմական սովորությունների և Գենվազում տեղի ունեցածի միջև գոյություն ունեցող տարբերությունը: Իրավունք ուներ իմ գաղափարապաշտ ընկերը. այդ օրերին կռվից առաջ ոչ ոք թույլտվություն չէր ստանում վերադառնալու տուն:

ՔՅՈՒՐԴԻՔԵՆԴԸ

Միշտ էլ մի երկրի, մի շրջանի, մի բերդի համար ավելի վտանգավոր է եղել այդ երկիրը, կամ բերդը ներսից պայթեցնելու ձգտող մի վատի ներկայությունը, քան դրսից հարձակվող թշնամու մեծաքանակ զորքը:

Եվ միշտ էլ հարձակվողը փորձում է իր հակառակորդի շարքերում եղած վատասիրտների ու վատերի միջոցով թեթևացնելու իր գործը, հեշտացնելու իր հաղթանակը: Միայն բացարձակ ճշմարտություն, կրկնած կլինեմ, եթե ասեմ, թե կարմիրների ամբողջ քաղաքականությունը, ինչպես և ռազմագիտությունը հենց վատերին օգտագործելու մեջ էր կայանում:

Վատերի միջոցով թուլացնել իրենց հակառակորդին և ապա հարվածել,- ահա՛ կարմիր ռազմավարությունը, որը ջարդել էր Դենիկինին, Կոլչակին, Յուդենիչին, Վրանգելին, հաղթական կանգնել Ռուսաստանի բոլոր ներքին ճակատների վրա, որը, առանց գնդակ արձակելու, «հաղթականորեն» մտել էր Անդրկովկաս, որը շուտով պիտի տիրեր Հայաստանին, Վրաստանին և որը ութ ամիս հետո էլ, նույնպես առանց գնդակ արձակելու, պիտի տեսներ իմ հաշիվը:

* * *

Ղափանի անկումով ստեղծված ընդհանուր ռազմագիտական դրությունը ժպտում էր թշնամուն:

Ոչ ոքի, մասնավորապես բոլշևիկների մտքով չէր կարող անցնել, թե մի փոքրիկ գավառակ, Արևիքը, որի ազգաբնակության թիվը հազիվ է հասնում 8000-ի, «սրբազան խենթություն» կունենա վերցնելու Խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի և Արաքսյան հանրապետության* նետած ձեռնոցը:

Կարմիր հրամանատարությունը աճապարում էր: Օր, ժամ առաջ պետք էր խեղդել Զանգեզուրի ապստամբական շարժումը և իմ դեմ գործող բոլոր ուժերը Մեղրի Օրդուբադ խճուղիով նետել Նախիջևան՝ նախ կանգնեցնելու Երևանյան զորքերի առաջխաղացումը, ապա թիկնային հարվածով հեշտացնելու Քյազիմ Կուսրաբեքիրի արշավանքը Հայաստանի դեմ:

Սեպտեմբերի 8-ին Բաղաբերդի գյուղերից Քյուրդիքենդը, որը մի քանի օր առաջ մեծապես հեշտացրել էր թշնամու հարձակումը Գեղվածորից, աղ ու հացով է դիմավորում կարմիրներին: Խորհրդային իշխանությանը նույն օրը հպատակություն են հայտնում նաև Հանդ և Փուխրուք գյուղերը:

Քաջարանն ու Մազրան հրաժարվում են ճանաչել թշնամու իշխանությունը և՝ բռնելով ձորի կարևոր կետերը՝ ինձանից օգնություն են խնդրում:

Աշոտը մնում է Կարճևանում՝ Պարսկաստանի վրայով Երևանի հետ կապվելու փորձեր կատարելու, իսկ ես, վերցնելով հրամանատարներիցս Ղազարին, որն այդ օրերին դիպվածով դուրս էր գտնվում Գողթանից, անցնում են Բաղաբերդ:

Թշնամին՝ Բաղաբերդի գրավումը ամբողջացնելու դեպքում լայն հնարավորություն էր ստանալու հարվածելու մեզ նաև թիկունքից: Բացի այդ, տեր դառնալով Քաջարանին, թշնամին, առանց գնդակ արձակելու, տիրելու էր և Գողթանին, վերջինս կտրելով Գենվազից:

Քյուրդիքենդի վատությունը սպառնում էր աղետալի լինել մեզ համար: Պետք էր ժամ, վայրկյան առաջ մաքրել Բաղաբերդը (Օխչի

---

* Նախիջևան-Օրդուբադի (ծանոթ. հեղ.):

Ձորը), եթե չէինք ուզենա օրհասական ու անհավասար կռիվներ վարել մի շրջագծաձև ռազմաճակատի վրա, առնված երկաթե օղակի մեջ:

Սեպտեմբերի 9-ի լուսաբացին, հարձակումից առաջ, վատության մեջ բռնված երեք գյուղերին ուղղում եմ մի սթափեցուցիչ կոչ, իսկ կարմիր հրամանատարությանը հետևյալ վերջնագիրը.

«Եթե չեք ուզում գերեզման գտնել ձորերում, թողեք Բաղաբերդը: Երկու ժամ ժամանակ ունեք փրկվելու»:

Չնայած, որ շատ լավ էի ճանաչում կարմիրներին, բայց չէի սպասում, որ այդքան շուտ կբռնեն նահանջի ճանապարհը: Բաղաբերդը մաքրված էր:

Վատության մեջ բռնված երեք գյուղերը իրենց բարոյապես ճնշված էին զգում: Ես նրանց աղն ու հացը չընդունեցի:

ԳԵՆՎԱԶՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՆԵՏՎԱԾ ՁԵՌՆՈՑԸ

Սեպտեմբերի 10-ի լուսաբացին Շիվանիձորի ճակատում գոռում են թշնամու զույգ թնդանոթները:

Քիչ անց, նույն օրը, կարծեք որպես արձագանք, թնդանոթային բոմբյուններ են լսվում և Ալագյազի կողմից:

Ռուս և թուրք գնդերը Արևելքից, տաճիկ և ռուս թաբուրները արևմուտքից, գրեթե միաժամանակ, թնդանոթների և գնդացիրների փոթորկային կրակի պաշտպանությամբ ճգնում են սեպաձև թաղվել Արաքսի հայկական ափի և ապստամբ Արևիքի միջև, նպատակ ունենալով մի բուռ խիզախների դիակների վրայով միացնել բոլշևիզմի և պանիսլամիզմի արնոտ թաթերը:

Կռիվը տեղի է ունենում այնպիսի պարագաներում, ուր, երբ անզոր է ռազմավարությունը, գործում է պատերազմական հրաշակերտ բարոյագիտությունը:

Արևելքից թշնամին է, արևմուտքից թշնամին, հյուսիսից թշնամին, հարավից-Արաքսը:

Կռիվը տարվում է մի շրջանագծաձև ճակատի վրա:

Թիկունք չունենք, ճակատ է ամեն մի թիզ տարածությունը: Ռազմամթերքը սակավ է, հացը պակաս, կապ, հաղորդակցություն չունենք դրսի աշխարհի հետ: Մեկը կռվում է տասնյակների դեմ, տասը՝ թշնամու վաշտերի դեմ, Գենվազը՝ մի մեծ պետության դեմ:

Կրակում ենք քիչ, այն էլ միայն 700 քայլի և ավելի մոտիկ տարածությունների վրա, այն էլ հրամանով:

Ցերեկը ինքնապաշտպանվում ենք, գիշերները և միգամած եղանակներին՝ «գայլաբար»* անցնում թշնամու թևն ու թիկունքը:

---

* Թշնամու որակումը (ծանոթ. հեղ.):

* * *

Կռվի երրորդ օրն է:

Թշնամու թնդանոթային կրակը արդեն կորցրել է իր բարոյական ազդեցությունը: Տասնյակ գնդացիրների միապաղաղ տա՛-տա՛-տա՛ թմբկահարումը միայն ծիծաղ է շարժում: Մեր դիրքերից որևէ մեկին տիրելու բոլոր փորձերը, շնորհիվ մեր պայթուցիկ տակառների, փորձանք են դառել թշնամու համար:

Կռիվը կորցրել է իր սրությունը: Թշնամին կրավորական է: Սեպտեմբերի 13-ի գիշերը Գենվազի վաշտերից մեկը՝ ծանոթ շրջանի տեղադրության ու դիրքերին, զինված ուժանակային ձեռնառումբերով թիկնային մի համարձակ շարժումով հանկարծակիի է բերում թշնամու՝ կես քուն կես արթուն գլխավոր ուժերին: Կես գիշերին հարյուրավոր ռումբերի պայթյուններից սարսափահար՝ սև ու կարմիր գնդերը գլխիկոր փախչում են դեպի Նյուվադի: Սակայն ճակատից գրոհող մեր մնացած վաշտերից կրնկակոխ՝ փախչող թշնամու գնդերը, ցիր ու ցան, շշմած, լեռներից ու ժայռերից թափվում են ձորերը:

* * *

Լուսաբացին Նյուվադիի դաշտերում երթևեկում էին թշնամու երկանիվ կառքերը և հավաքում տարերային փախուստի ժամանակ սար ու քարից թափված ու վնասված զինվորներին: Մեր դիրքերում ցնծություն կար, Մեղրիում հաղթանակի տոն: Արաքսի պարսկական ափից հաճախ լսվում էր՝ «հալալ օլսուն, էրմանլար, հալա՛լ...»:[10]

Նույն օրը, երեկոյան դեմ Խուստուպից դեպի Ղափան էին իջնում իմ գիշերագնացները, տանելով իրենց հետ այս կոչը.

Ժողովո՛ւրդ, քեզ հետ խոսողը քո հրամանատարն է, քո վիրավոր, քո սրտից զարնված հրամանատարը, որի սուրը վաղուց է ինչ՝ հանուն քո ինքնապաշտպանության, չի հանգստացել պատյանում: Լսի՛ր մի ավելորդ, գուցե և վերջին անգամ նա դիմում է քեզ, խոսում քեզ հետ: Նա ասում է.

«Քո սև ու նեղ օրին, երբ հայակեր Գեղվա և Օխչու ձորերը, երբ Բարգուշատն ու Հաքյարուն սպառնում էին քո կին ու երեխաների արյունով քո երկիրը ներկել, դու կանչեցիր ինձ և ես հասա քո հավարին: Ասա՛, ժողովուրդ, այն օրն քո երկրում մնա՞ց մի բարձունք, մի սար, մի քար, որի վրա դրած չլինեի իմ հոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ տեսե՞լ ես մի օր, մի ժամ անհոգս, հանգիստ: Դու ինձ տեսե՞լ ես փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու լսո՞ւմ ես քարե՛րը, քարերը կաղաղակեն, կասեն՝ ոչ: Ասա՛, մնա՞ց մի բան, որ խնայեի, չզոհաբերեի քո ազատության, քո փրկության, քո փառքի համար: Քո դաշտերում, քո հողի վրա իմ արյունն է թափվել: Դեռ չի փակվել թշնամու ինձ հաս-

ցրած վերքը, իսկ քոնը, ժողովո՛ւրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտի մնա ու հազար վերքերի ցավով պիտի մորմոքի:

«Ժողովո՛ւրդ, այսօր երբ ադրբեջանական դրամներով կաշառված բոլշևիկները, քո գերեզմանափորները, կեղծ ու պատիր խոստումներով քո դուռն են բախում և քո ձեռով պղծած աղ ու հացիդ սպասում՝ դու դավաճանաբար լքում ես, մենակ թողնում քո վիրավոր հրամանատարին:

«Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահաբեկիչները իմ գլուխն են փնտրում երեք միլիոնով Ադրբեջանին ծախելու: Ապերա՛խտ ժողովուրդ: Քանի՛-քանի՛ անգամ քո կինն ու երեխան կռիվներից վերադառնալիս փաթաթվել են ձիուս վզով, համբուրել ձեռքերս, «փաշա ջա՛ն» կանչել: Քանի-քանի անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՞նչ, մոռացա՞ր իշխան Ղաջարին, որի զորքերին պատերիդ տակից եմ քշել: Վայ քեզ, ժողովո՛ւրդ, ինչ պատասխան պիտի տաս Աստծուդ, խղճիդ, պատմությանը:

«Ժողովո՛ւրդ, կանցնեն օրեր, թշնամին քեզ զինաթափելուց ու ղեկավարներիցդ զրկելուց հետո, երբ այլևս չի լսվի «Աժդահա փաշայի» անունը, կսկսի հազար ձևով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այդ ժամանակ դու կվերհիշես քո հրամանատարին, որի սուրը յոթ անգամ մեծացրել էր քո երկիրը և, քեզ համար բացարձակ ապահովություն ստեղծել, այն ժամանակ հայացքդ կդարձնես Խուստուպին ու նրա կատարին նստած սև ամպերին, կնայես, կկանչես, բայց հրամանատարիդ փոխարեն սարերիդ ու ձորերիդ թույլ արձագանքը կպատասխանի քեզ: Գուցե մի օր էլ թշնամուց հալածական սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ հանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրա իմ սառած դիակը գտնես, ծունկի գաս ու արյուն լացես:

«Ժողովո՛ւրդ, ինձ լքելուց, ինձ դավաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Դու չուղարկեցիր վարպետներիդ բութ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թեև պատմությունը չի ների քեզ և խնդրում, երբ ինձ սպանված տեսնես, դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երևա ինձ և՛ Ղափանը, և՛ Գենվազը, և՛ Գողթանը, և՛ Գեղվածորը:

«Իսկ մինչև այդ՝ հայացքդ մի կտրիր Խուստուպից: Որքան հաճախ, որքան շատ նայես այս տեգ ու սև ամպերով ծածկված սարին, այնքան շուտ կգա, կհասնի փրկությունդ:

«Աստված և իմ սերը քեզ հետ, ապերախտ ժողովուրդ!

Խուստուպյան լեռներ: 17 սեպտեմբերի, 1920թ.»

ՄԵՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ

Սկսված կռվի նախերգանքը շատ անհաջող է անցել Թշնամու համար: Նրա արևելյան ուժերը ժամանակավորապես քաշվել են Նյուվադի, արևմտյանը՝ Օրդուբադ, հյուսիսային ուժերը՝ Ղափան: Նրա նոր խմբավորումների ու շարժումների մասին տեղեկություններ ենք ստանում մեր հետախույզներից, մեր ձեռքն ընկած «կենդանի լեզուներ»-ից և գերիներից:

Ջիբրայիլի կողմից, Արաքսի ափով, դեպի Բարթագեն, շարժվում են նորանոր զինված զանգվածներ: Օժանդակ ուժեր են հասնում նաև Օրդուբադ: Թշնամին ուժեղանում է և՛ տեխնիկապես: Շուշիից հասել են նոր հրետանային միավորներ:

Պարզ է, որ թշնամին ծրագրում է ռազմագիտական ավելի մեծ ձեռնարկներ և որ շուտով կվերսկսվեն գործողությունները: Մենք, համաձայն մեր որդեգրած ռազմավարության՝ թշնամուն ուժասպառել մոտիկ տարածությունների վրա՝ հաջող հետապնդումներից հետո, վերստին քաշվել ենք մեր հին դիրքերը: Գենվազի տրամադրությունը բարձր է: Այժմ փորձով գիտենք, որ կարմիր կոչված զորքը հրաշագործ լինելուց շատ է հեռու:

Հաղթական ենք, բայց անհանգիստ՝ հետևյալ երկու լուրջ պատճառներով: Հունձն ընկել է և գյուղացիությունը պետք է առնվազն երկու ամիս նվիրվի դաշտային աշխատանքների, եթե չի ուզենա սովամահ լինել, այն էլ այնպիսի ժամանակ, երբ կտրված է աշխարհից: Երկրորդ անբախտությունը, դա ռազմամթերքի չգոյությունն է:

Ռազմագիտական զանազան դավերն ու հնարքները, թշնամու համար մեր գործադրած անծանոթ տակտիկական ձևերը, ապստամբների, երբեմն խենթության հասնող խիզախությունը, ուժանակն ու պայթուցիկ տակառները անշուշտ հեշտացնում էին մեր դիմադրությունը, բայց չէին կարող փրկել և չէին փրկում մեզ փամփուշտ գործածելու անհրաժեշտությունից:

Ահա՛, թե ուր էր մեր «աքիլեսյան գարշապարը», մեր թույլ և խոցելի կողմը, որին չէր կարող ծանոթ չլինել թշնամին:

ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ ԻՄ ԵՎ ՊԱՐՍԻՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Արևմուտքում խոփը քարին առած ռուսական բոլշևիզմի ուշադրությունը ուղղված էր դեպի արևելք:

Կարմիրներն արդեն ոտք էին դրել պարսից հողի վրա: Լենքորանը, Ղազվինը և Ռաշտը արդեն գտնվում էին խորհրդային զորքերի ձեռքին:

XI կարմիր բանակի զորամասերից 20-րդ հեծյալ բրիգադային և երկու հրացանածիգ գնդերի հրամայված էր Խուդափերինի կարմրջով անցնել Ղարադաղ՝ Ատրպատականը վտանգելու նպատակով: Քաղաքական նկատառումներից զատ կար Պարսկաստանի առատ հացը, կենսամթերքը, որը հսկայական մագնիսի պես դեպի Թավրիզ էր ձգում կարմիրներին: Խորհրդային խմորին հաջողվել էր արդեն ներքին կռիվներ առաջացնել Ղարադաղում: Կարմիրներից կաշառված Շիրինդիլ Խանը ըմբոստացել էր պարսից կառավարության դեմ և թշնամական գործողություններ սկսել Ամիր Արշատ Խանի դեմ:

Պարսից կառավարությունը, ինչպես և ժողովուրդը խորապես գիտակցում էին, որ Զանգեզուրի անկումով մեծ հարված պիտի տրվի Հյուսիսային Պարսկաստանին: Մեր վերջին հաղթություններից մի օր անց՝ պարսից խաներից Մուբալիմ Սահրանգը ցանկություն է հայտնում Արաքսի ափի մեր պահակին տեսնվելու հետ, և նույն օրը նավտիկով անցնում է մեր ափը:

Տեսակցությունը տեղի է ունենում Կարճևանում: Երիտասարդ խանը հայտնում է, որ եկել է իր «կառավարության ուրախությունը հայտնելու» մեր «վերջին հաղթությունների առթիվ»:

Օգտվելով առիթից՝ խնդրում եմ թույլատրել և ապահովել իմ ներկայացուցիչների երթևեկությունը Գենվազի և Թավրիզի միջև: Խնդիրս հարգվում է և նույն օրը երեկոյան դեմ խանի հետ Գեդեոն Տեր Մինասյանը իմ որոշ հանձնարարություններով անցնում է Ատրպատական:

Հետևյալ օրը տեսակցություն եմ ունենում Մեհտի խանի և իր եղբոր հետ, որոնք խոստանում են ինձ պարբերաբար տեղեկություններ տալ Օրդուբադի շարժումների մասին: Նույն օրերին Մեղրի է հասնում Ղարադաղի Մուժամբար գյուղի քահանան՝ Տեր Մեսրոպը, նույն նպատակով:

Պարզ էր, որ պարսից իշխանությունը գիտակցում է խորհրդային Ռուսաստանի և Պարսկաստանի միջև մի ուժեղ բուֆերի դեր կատարող Զանգեզուրի նշանակությունը և հակառակ Ատրպատականում Մուսավաթի և տաճկական գործակալների կողմից մղվող պանիսլամական ծավալուն պրոպագանդային, որոշել էր բարեկամություն հաստատել և պահել մեզ հետ:

ԹՇՆԱՄՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ

Աշոտը դեռ նոր էր նստել Պարսկական նավտիկը, երբ Ալագյազներից գոռացին թշնամու լեռնային թնդանոթները: Ընկերս որոշ առաքելությամբ անցնում էր Թավրիզ, իսկ ես դուրս էի եկել հետախուզելու դեպի Օրդուբադ տանող խճուղին:

Անելիքս որոշելու համար՝ ինձ պետք էր Արաքսի ափին բարձրացող մի լեռից պարզել թշնամու գործողության ուղղությունը: Գիտեի, որ այս անգամ թշնամին, որը անբախտություն էր ունեցել հենց առաջին կռվում զգալու իր սրի բթությունը, կամ ռազմագիտական նոր խաղերի պիտի դիմի կամ, նկատի ունենալով իր թվական գերակշռությունը, պիտի կրկնի հին դասը:

Բարեբախտաբար նա չհապաղեց փարատելու իմ կասկածները: Պարտված որպես առյուծ, նա վճռել էր և փորձում էր հաղթել որպես աղվես: Այն ժամանակ, երբ արևմուտքից նա սկսել էր իր կատաղի հարձակումը, արևելյան ճակատում տիրում էր մեռելային լռություն:

Խաղը պարզ էր: Թշնամին վճռել էր ժամանակավորապես իմ ամբողջ ուշադրությունը, ինչպես և իմ ուժերի մեծագույն մասը, հրավիրել դեպի Բարթազի ճակատը և թուլացնելով ինձ Շիվանիծորի ճակատում, հեշտացնել արևելքից առաջացող թուրք-բոլշևիկյան միացյալ ուժերի գործը: Ջիավորներիցս մեկը տանում է Շիվանիծոր փոխ-գնդապետ Մելիք-Օհանջանյանին՝ օրվա հրահանգները, իսկ ես անցնում եմ Կարճևանի ճակատը:

* * *

Կռվի երկրորդ օրն է: Երեկո է: Կռիվը դեռ չէր կորցրել իր «աղն ու պղպեղը»: Նա դեռ շարունակվում է նույն թափով, նույն սրությամբ: Տագնապն ուշանում է և դա լավ չէ ձեզ համար: Պարսկական ափից տեղեկացնում են, որ թշնամին դեպի Գենվազ է շարժում նաև մի մեծ խուժան՝ թալանի և կոտորածի նպատակով: Գերի բռնված տաճիկ ասկյարները հաստատում են բարեկամ խաների հաղորդածները:

Այլևս ոչ ոք չի կասկածում, որ տաճկական թաբուրները, Գենվազը գրավելով, սրի և հրի պիտի մատնեն նրա քաջանուն ազգաբնակությունը: Դիրքից դիրք անցնելով՝ քաջալերում, գոտեպնդում եմ ապստամբներիս:

Խոսքերիս իմաստը խորապես գիտակցում են բոլորը՝ «Եթե այս անգամ էլ մեզ չհաջողեցվի դերև հանել թշնամու ճիգերը, վաղը էլ հայրենիք չե՛նք ունենա...»

Փրկության Կոմիտեի անդամները՝ ընկած գյուղերը՝ վերջին մարդն ու փամփուշտն են ուղարկում դիրքերը:

Երևանից ոչ օգնություն և ո՛չ լուր կա: Խորհրդայնացած Զանգեզուրը խաղաղ է: Կարմիր Գողթանի հետ չափվում է միայն փոքրիկ, բայց մեծ Գենվազը:

Նա տեղի չի տալիս և չի տալու, որովհետև չի ուզում, որ իր կին ու աղջիկը բարբարոսների սրի ու կրքի առարկան դառնան, որովհետև արևի տակ նա ոչինչ այնքան չի սիրում, որքան իր սեգ սարերը: Նա համառում է, կռվում այնպիսի պայմանների մեջ, ուր իր կառավարությունն ու կառավարական բանակը, խոստովանելով իրենց անզորու-

թյունը, տեղի են տվել: Նա կռվում է, որովհետև քաջ գիտի, որ իր փրկությունը, իր ապագան այդ լեռների վրա է, վերջապես, որովհետև լեռների պաշտամունքն ունի իր հոգու մեջ: Թշնամին անգիտակ չէ մեր համառության ու բարոյական կորովի աղբյուրներին, և դրա համար էլ նա այսօր կրակի գծի վրա է քաշել ավելի մեծ ուժեր և մեծ թվով թնդանոթ ու գնդացիր:

Պակաս ակտիվ չէ թշնամին և արևելյան ճակատի վրա, ուր մեր «Ելլի Տայիրման» կոչված դիրքերը մի քանի անգամ ձեռքից ձեռք են անցել:

Պահը սպառնում է եղերական լինել: Եթե մինչև խավարն ընկնելը թշնամու թնդանոթները չհաջողեցին գետակների վերածել իմ փոքրաթիվ բանակի մեծագույն մասը, հաղթությունը, ապահովաբար, մերն է:

«Բիբլիական Հիսուս Նավինը իմ դրության մեջ, անշուշտ, պիտի վերագոչեր. «Արև. շո՛ւտ անցիր, գիշե՛ր, շո՛ւտ իջիր»...

Սեպտեմբերի 25-ի լուսաբացին, թշնամին՝ մեր գիշերվա զորեղ շարժումից թևաթափ, վերստին վատաբար փախչում էր դեպի Օրդուբադ, դիակներ ցանելով իր անցած դար ու դաշտերում:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ԺԱՄԵՐ

Հաղթել, բայց և այնպես իրեն պարտված զգալ! Ինձ և Գենվազին էր վիճակված ապրելու այդ ծանր ողբերգությունը:

Աննախընթաց հաջողությամբ մենք ջարդում էինք թշնամու գերադաս ուժերը, հազարներով զինաթափում, գերի վերցնում. բայց և այնպես անհանգիստ էինք, որովհետև վերջ չկար թշնամու հարձակումներին, որովհետև թշնամին լայն հնարավորություն ուներ անվերջորեն պահել մեզ աշխարհից կտրված, Արաքսի ափին սեղմած: Այն ժամանակ, երբ թշնամին նորանոր թարմ ուժեր էր ստանում՝ սպառնալիորեն մոտենում էր մեր վերջին փամփուշտն արձակելու, վերջին տակառը պայթեցնելու օրհասական ժամը:

Թշնամին իր սրի գործը հեշտացնելու համար նորից գործի է դրել իր զենքերից ամենաուժեղը՝ պրովակացիայի թույնը: Նրա բյուրավոր թռուցիկները, ուղղված ժողովրդին, ասում են ու կրկնում՝ «Կարմիր զորքը կռվում է ոչ թե Հանրապետական Հայաստանի դեմ, որը վաղուց է ձեռք քաշել Զանգեզուրից, այլ Նժդեհի, որը զենք է բարձրացրել խորհրդային իշխանության դեմ: Մեզ Նժդեհն է պետք և ոչ թե ձեր երկիրը: Եվ եթե նրան մեզ չհանձնեք, իմացեք, ձեր գյուղերը կրակի կմատնվեն և կարմիր բանակը կշարունակի մնալ ձեր շրջաններում և ապրել ձեր հաշվով»...

Բախտավոր է թշնամին: Նրա հետ են բոլոր վատերն ու թերահավատները:

Ծանոթ Քյուրդիքենդը կրկնել է իր հանցանքը:

Թշնամին՝ իր երկու գնդերը կենտրոնացնելով այդ գյուղում, փորձեր է կատարում անցնելու Խուստուպի թիկունքը:Մոտ 30 օրվա հաջողություններով ու փառքով այնքան հարուստ կռիվներից հետո, Շիվանիձորի զինվորության մի մասը դավադրորեն թշնամուն մտցրել է իր գյուղի արևելյան թաղը՝ գյուղը բաժանելով երկու հակամարտ բանակների: Թշնամին, օգտվելով այդ, իր էժան, հաջողությունից, գրավել է նաև Շահբազյուրդ բարձունքը՝ Գենվազի ռազմագիտական բանալին:

Արևմտյան ճակատում թուրք ու ռուս գնդերը երբեք այնքան ակտիվ և համարձակ չեն եղել: Այդ ճակատում անասելիորեն ուժեղացել է և թնդանոթային կրակը:

Թշնամին թնդանոթներով անվերջ ծեծում է, փշրում մեր դիրքերի առաջ ընկած ժայռերը, թուլացնելով մեր հարազատ տարերքին՝ խավարին, սպասելու հնարավորությունը: Սոյուխներից մի խումբ կանայք դեպի ձորերն են իջեցնում զույգ Կուրիսեցիների ծեծված դիակները: Լաց չկա, կա վեհություն և հպարտություն միայն: Գենվազի կանայք էլ չեն լալիս, որովհետև գիտեն, որ իրենց հպարտ որդիները մեռնում են ապրելու և ապրեցնելու համար, որովհետև նրանց ասել և նեշնչել են՝ «Մի լաց, այլ լացեցուր»...

Ե՛վ օրհասական և՛ վեհ է ժամը:

Արևիքի եկեղեցիներում աղոթում են միայն աղոթելու ընդունակ ծերերը: Կին և երեխան դաշտերում հավաքում է հունձը, իսկ լեռներում հայրենի հողի և սրբությունների համար մեռնող զինվորությունը կերտում է իր մեծ դյուցազներգությունը: Թշնամին գերմարդկային ճիգեր է թափում՝ դեռ արևը մայր չմտած՝ զրկելու ապստամբներին իրենց հարազատ հողից, ջրից-հայրենիքից:

Իսկ վերջինները՝ ուժերի գերագույն լարումով, սպասում են փրկարար խավարին, երբ՝ ցերեկները թշնամու թնդանոթների և գնդացիրների անընդհատ կրակից նեղված՝ մեր ռազմիկը դառնում է կատաղի վագր, իսկ թշնամին՝ վախկոտ աղվես:

Կես գիշերն անց է: Մեր բոլոր ճակատներում մթության մեջ վառվում է ուժանակային խաղը: Մեր հաջողության չափ մեծ է թշնամու կորուստը: Մեր խոր թևանցից հանկարծակիի եկած ու սարսափահար՝ նա փախել է՝ գնդացիրներ, հրացաններ, թնդանոթի մասեր և դիակներ սփռելով անցած ճանապարհներին:

Արևի տակ իր հարազատ ու ազատ անկյունը պահելու Գենվազցու անդիմադրելի ցանկությունը հաղթում է և այս անգամ:

Գենվազի կռիվների քառասուներորդ գիշերն է: Արաքսի ափին առկայծող խարույկների շուրջը հավաքված թիկնապահներս ու մի քանի վաշտապետներս լսում ենք Երևանից և Ատրպատականից վերադարձած մեր սուրհանդակներին:

Ես կարդում եմ ստացածս գրությունները.

«Ընկե՛ր Նժդեհ, Հայաստանը ի վիճակի չէ ձեզ ներկայումս ռեալ օժանդակություն ցույց տալ: Դուք, ինչպես մինչ այժմ, այնպես և հիմա պիտի մեն-մենակ շարունակեք ձեր հերոսական գոյամարտը: Միայն գիտցեք, որ մեր կուսակցության, ամբողջ հայ ժողովրդի համակրանքը ձեզ հետ է:

Հարգանքով՝ պարլամենտի անդամ՝
Ե. Միրաքյան*

1920թ. 11 հոկտեմբեր, Ջուլ»:

«Թեհրանից և Թավրիզից դրական օգնություն սպասելը անմտություն է: Խաչ դրեք բոլորի վրա: Դիմումները Հայաստան և Թեհրան մնում են ձայն բարբառո անապատի: Աշոտ Մելիք-Մուսյան, 1920թ. 16 հոկտեմբեր, Թավրիզ»:

«Թավրիզից ոչ մի հույս չկա օգնության: Բոլորն էլ լալիս են, թե առևտուր չկա, փող չկա և այլն. և այլն: Երկու երեք հեռագիրներ ենք խփած Երևան ձեր դրության և կարիքների մասին, բայց մինչ օրս ոչ մի պատասխան: Գեղեոն Տեր Մինասյան, 1920թ., 23 հոկտեմբեր»:

Այսպես, ուրեմն, ոչ ոք հնարավորություն և ժամանակ չուներ օգնության ձեռք մեկնելու մեզ:

Հանուն իր քաղաքական «կոռեկտության» Երևանը վճռել է ձեռք քաշել Զանգեզուրից: Նա հայտարարել է Լեգրանին՝ Հայաստանի Հանրապետության գերեզմանափորին, որ ինքը որևէ կապ չունի Զանգեզուրի ապստամբական կռիվների հետ և չի ուզում ունենալ: Այդ օրերին նա ավելի անհաջող քաղաքագետ էր, քան հաջող ռազմագետ: Իսկ մոմենտը պահանջում էր լինել վերջինը: «Թնդանոթ ուղարկելն անհնարին ենք գտնում խախտած չլինելու համար օգոստոսի տասի համաձայնությունը»:[11]

Այսպես Երևանը մեզ մեր բախտին էր թողել, լքել, առանց գիտակցելու, որ դրանով արագացնում է և իր անկումը:

* «Ձեզ հետ՝ կապակցություն հաստատելու համար ուղարկված եմ Դարալագյազ: Հայտնեցեք ձեր դրության մասին: Պարլամենտի անդամ՝ Ե.Միրաքյան, 1920թ. 29 նոյեմբեր, Ջուլ»:

Ծանր էր մեր դրությունը և ոչ միայն քաղաքական ու ռազմագիտական տեսակետներից: Մենք ռազմամթերք էլ չունեինք: վաղն էլ հաց չէինք ունենա, եթե հրաշքով չփոխվեր մեր դրությունը:

Այդ սպառնացող կատաստրոֆից խուսափելու համար անհրաժեշտ էր Գենվազին առնվազն մի ամիս դադար տալ՝ իր դաշտային աշխատանքները և այգեկութը վերջացնելու համար: Իսկ այդ հաջողացնելու համար անհրաժեշտ էր կռիվների ծանրության կենտրոնը, գոնե ժամանակավորապես, տեղափոխել Գենվազից դուրս, մի այլ շրջան:

Խորհրդային Ղափանը պայթեցնելու մասին ես շատ էի մտածել և այժմ ավելի քան համոզված էի, որ միայն Ղափանի վերագրավումով կարելի կլիներ փրկել դրությունը: Ժամանակը կարճ էր: Մնում էր օգտվել օրերի, գուցե և ժամերի լռությունից և նետվել «կրակի բոցերի մեջ»:

Արևածագը մոտ էր:

Արաքսի ափին տխուր առկայծում էին մեր խարույկները: Երեք Ղափանցիներ, բաժանվելով ինձանից, ուղևորվում են դեպի Խուստուպ, տանելով Ղափանին հրահանգներ և իմ վերջին կոչը.

«Ղափա՛ն, դու ինձ լքեցիր, մենակ թողեցիր, սակայն իմ պատերազմական բախտը, իմ Աստվածը մնաց ինձ հետ և ես մի ամբողջ ամիս է, ինչ աննախընթաց հաջողությամբ ջարդում եմ թշնամուն հերոսական Գենվազի ռազմաճակատներում: Չգիտեմ, Ղափան, դու հաշտվել ես քո դրության հետ, թե ոչ, բայց հայ ժողովուրդը ցավում է, անասելիորեն ափսոսում, որ դու միամտորեն վիզդ թշնամու անարգ լծի տակ պարզեցիր և ծով փառքդ, փառքի մեջ կորած անունդ աշխարհի չորս քամիներին տվիր: Այն օրը, քո անկման այն սև օրը, Ղափա՛ն, քուն ու դադար կորցրած, սար ու քար ընկած մի քանի հարյուր ինձ հավատարիմ մնացած Գենվազցիներով կուրծք եմ տալիս թշնամու գերադաս ուժերին ու քո կորցրած փառքի փոխարեն նորն ստեղծում քո երկրի, քո անունի համար:

«Ղափա՛ն, զղջո՞ւմ ես արարքիդ համար: Ի՞նչ եղավ Ադրբեջանին ծախված հայ սրիկաների քեզ խոստացած արքայությունը: Խե՛ղճ ժողովուրդ, ասում են՝ արդեն զինաթափել, գլխատել, տնտեսապես քայքայել են քեզ: Ա՛հ, դեռ ի՞նչ ես տեսել: Սև օրերդ դեռ չեն հասել, բայց գալիս են և շուտով կհասնեն թաթար զորքերի հետ:

«Ոտքի՛, խաբված ժողովուրդ, ոտքի՛ ե՛լ, փրկությունդ մոտ է:

«Ոտքի՛, զենքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ ի՛նձ սպասիր Խուստուպից»:

***

Յոթը ծիավոր ենք: Առաջանում ենք դեպի Խուստուպ: Կալերի բարձունքներից երևում են մեր բոլոր ճակատները, որոնց վրա տիրում է մի ծանր, մի ճնշող լռություն, ինչպիսին զգացվում է փոթորկից առաջ: Աճապարում ենք: Մեզ հետ, միաժամանակ, գիշերվա ժամը 12-ին Խուստուպի վրա պիտի կենտրոնական 300 զորընտիր հետևակներ:

Այդ ուժերը ըստ տրված մարտագրի, պիտի հասցնեն ինձ Գենվազի արևելյան և արևմտյան ճակատները և հերոսական Շիշկերտը, որը, հակառակ Ղափանի հավաքական անձնատվության, շարունակում է մնալ հավատարիմ իր հրամանատարին: Մի առանձին քաղցությամբ են խոսում ուղեկիցներս այդ խիզդ գյուղի մասին: Ի՜նչ խոսք, որ եթե Զանգեզուրի հարյուրավոր գյուղերի փոխարեն մնացած լիներ միայն այդ մեկը, դարձյալ պիտի մնայի գերագույն հաճույքով մեռնելու այդ մեկի փրկության համար: Դա այն եզակի գյուղերից է, որոնցով հռչակվում են ամբողջ շրջաններ: Այդ գյուղում այժմ միայն կին և երեխաներ կտեսնեք: Տղամարդիկ վաղուց է ինչ քաշված են լեռները և պարտքի ու փառքի գործ են կատարում: Նրանք, հարյուրից ավելի այդ շիշկերտցիները, որոշված ժամին ինձ մոտ, ինձ հետ պիտի լինեն:

Առաջանում ենք և ուրախ ենք:

Ոչ ոք չի տարակուսում սկսվելիք ձեռնարկի հաջող ելքի մասին: Վաղը, գուցե դեռ լույսը չբացված, Ղափանը ողջունի իմ արշավախմբի մուտքը: Ես, ըստ իմ սովորության, ճանապարհ ընկնելուց առաջ, ոգեկոչել եմ Սյունիքի հին ու նոր պատմական մեռելներին և այժմ ինձ թվում է, որ ինձ հետ դեպի Խուստուպ, դեպի Ղափան են շարժվում յոթի փոխարեն յոթը հազար հոգի:

Դեռ կռիվը չսկսված՝ հաղթանակը տարված է բարոյապես, հոգիներիս մեջ: Մնում է շոշափելի արտահայտություն տալ մեր ներքին վստահությանը, մեր ներքին հաղթանակին: Մնում է անդիմադրելի վճռականությամբ շարժեք սուրը, որ վայրկյանը հրամայորեն մեր ձեռքն է դրել:

Ժամը 12 անց է, և դեռ յոթը հոգի ենք Խուստուպի վրա:

Այդ ձեռնարկին մասնակցելու նշանակված զորախմբերը չկան և արդեն բոլոր նշաններից երևում է, որ չպիտի կարողանան գալ:

Մեր կողմից Արաքսի ափը թողնելուց հետո՝ Շիվանի ձորի ճակատում վերստին երևացել է թշնամին: Պարզ է, որ ճակատապետներս են որոշված ուժերն ուղարկել ինձ, իրենց ճակատները չթուլացնելու համար: Չկա և չի գալու և Շիշկերտի վաշտը, որովհետև թշնամու երևալով նա ստիպված է կրկնելու իր անփոփոխ դերը , հարվածելու թշնամուն թիկունքից:

Դրությունը ծանր է, բայց ոչ հուսալքիչ: Ներքին անհանգստություն չեմ զգում, որովհետև չեմ կասկածում ապստամբական ձեռնարկիս հաջող ելքի մասին: Դրսի ուժերը չէին, որ պիտի ապահովեին հաղթությունը, այլ Ղափանի, իր վզին բռնաբար դրված լուծը թոթափելու ցանկությունը: Համոզված էի, որ ղափանցիների վճռականության դեպքում դրսից տարածս ուժերը ստիպված պիտի լինեն ակամայից մնալու հանդիսատեսի դերում միայն:

300 հոգին, որոնց ներկայությունը Ղափանում ավելի շուտ բարոյական նշանակություն պիտի ունենար, նշանակել էի Ղափանի ներկայացուցչության ցանկությամբ: «Լավ կլինի, եթե հրամանատարը իր հետ զորք և թնդանոթ բերի»:

Այո՛, վատ չէր լինի, բայց ի՞նչ արած, երբ թշնամին չի ուզում, որ «լավ լինի»:

Ուրեմն, ի՞նչ, հետաձգե՞լ. ո՛չ. դրա մասին խոսք լինել չի կարող, որովհետև, ըստ Ղափանի սուրհանդակների տեղեկության, Ղափան ժամանած թշնամու երեք գնդերը վաղը լուսաբացին պիտի վերսկսեն իրենց գործողությունները հյուսիսային ճակատից՝ նպատակ ունենալով թիկնային հարվածով մեզ «սրբել ու թափել Արաքսը»: Կա և այն, որ իմ Խուստուպից ձեռնունայն վերադառնալը կարող է հուսալքել Գենվազի ապստամբներին: Կա, վերջապես, Գենվազում շահած մեր հաջողությունների շնորհիվ Ղափանում, մասնավորապես Խուստուպի փեշերին ընկած գյուղերում ստեղծված ապստամբական տրամադրությունը, որը անգիտանալ նույնպես չէր կարելի:

Ուրեմն, մնում է օգնության կոչել վճռականությունն ու գիշերը և գործի անցնել: Անդիմադրելի վճռականության առաջ «երկինք կխոնարհեն», իսկ խավարը նման ձեռնարկների հաջողության մայրն է: Ուրեմն Յապո՞ն, առաջ դեպի Ղափան:

* * *

Կես գիշերն անց է և մենք՝ յոթը ծիավոր, լեռներից իջնում ենք Ղափան:

Խիստ մառախուղով է խանձարուրված ամեն ինչ: Ձայն չկա, ծպտուն չի լսվում: Վալադն առաջանում է գրեթե բնազդաբար և մեղմ մռմռում տխրորեն:

Քառասուներորդ օրն է, ինչ նա սար ու քար ընկած տարագիր է, ինչ նա դուրս է գտնվում իր խաբված ծննդավայրից, սակայն այժմ 40 տարվա կարոտով ու կարոտի երգով է վերադառնում իր հայրենի տունը:

Ղափանի առաջին գյուղերից արդեն լսվում է շների հաջոցը: Դա նշան է, որ մոտ ենք «Սևքարին», ուր, ըստ արածս կարգադրության, ինձ պիտի սպասեն Գերասիմի և Արմենակի[12] զինվորներից երկու հոգի՝ ինձ դեպի Գյութկյումի ձորը առաջնորդելու համար:

Հանկարծ վալադն իջնում է ձիուց և սուլում «Մեր հայրենիք»-ի առաջին խոսքերը:

«Ո՞վ է եկողը», վալադի սուլոցին հետևում է մի ձայն:

«Հիշի՛ր Գեղվածորը»,- լինում է մեր պատասխանը:

Վայրկյանապես մի մեծ ժայռի տակից դուրս են նետվում երկու զինված մարդիկ և շարժվում դեպի մեզ: Իմ հին զինվորներից են երկուսն էլ: Ավելի քաղցր հանդիպում անկարելի էր երևակայել: Արցունքն աչքերին Ղափանի արծիվները փաթաթվում են իրենց հին հրամանատարին և հանձնում երկու վաշտապետներիցս բերած նշանը՝ իմ շատ սիրելի Գերասիմի հնամաշ մորթե փափախը:

Առաջանում ենք դեպի խորհրդավոր ձորը: Մոտ քառորդ ժամ անց՝ մթության մեջ բարձրանում են ձորի մեջ հավաքված սակավաթիվ ապստամբների զենքերը: Դա զինվորներիս լուռ հուռռան է: Հավաքված են մոտ 50 հոգի, որոնցից մի մասը անզեն:

Լսվում են Գերասիմի կարճ զեկույցը ժողովրդի տրամադրության, թշնամու ուժերի քանակի, Հանքերի բանտում եղած մեր տղաների, դպրոցում տեղավորված կարմիր վաշտի, ռազմամթերանոցների տեղերի, գնդացրային խմբերի, շտաբի և հեղկոմի մասին:

Տրվում է հրամանը: Ապստամբները՝ երեք խմբակների բաժանված, շարժվում են դեպի Գյութկյուղ: Յոթը վայրկյանից մտնում են գյուղ: Կիսաբաց պատուհաններից և դռներից մեզ լուռ ողջունում է ուրախացած, բայց անհանգիստ գյուղացիությունը: Թշնամին, իրեն ապահով համարելով, պահակներ չի դրել գյուղում: Խոր քուն մտած նա հանգստանում է լուսաբացի արշավանքի համար:

Մեր երկու խմբակները անշշուկ պաշարում են դպրոցի շենքը: Երրորդ խմբակը, հրացանները կրակի առած, մտնում է դպրոցը:

«Ոտքի.,- բարձրանում է ապստամբներիցս մեկի գոռ ձայնը:

Կարմիրների վաշտը, հանկարծակիի եկած, նախ մի պահ մնում է շշմած, ապա ուշքի գալով, փորձում է դիմել զենքի: «Չշարժվել»,- լսվում է ապստամբների սպառնալից հրամանը և տասնյակ հրացաններ ուղղվում են դեպի կարմիրները, մեխելով վերջիններին իրենց տեղում:

Հրամայում եմ դպրոցից դուրս տանել գնդացիրը, զենքերը և ռազմամթերքը: Հանկարծակիի եկածների վախը փարատելու համար աճապարում եմ հայտնել իմ ով լինելը՝ և ավելացնում՝ «Մեր կռիվը ձեր դեմ չէ, այլ ձեր հրամանատարության դեմ: Նրանք չուզեցին հասկանալ քայքայված ժողովրդի լեզուն և դրա համար էլ այժմ անպատեհություն ունեն զգալու մեր սրի լեզուն; Ձեր զենքերից և ռազմամթերքից զատ մեզ պետք չէ ոչինչ: Անարյուն կերպով պիտի զինաթափեմ ձեր բոլոր զորամասերը: Ցտեսություն !»:

Քիչ անցած, դեռ լույսը չբացված, կարմիրների գնդացրով և ռազմամթերքով ուժեղացած մեր խմբերը կախվում են Հանքերի գլխին: Գյութկյումի դպրոցի «պատմությունը» չէի կարող կրկնել Հանքերում,

որովհետև անկարելի պիտի լիներ իմ այնքան չնչին ուժերով, գրեթե տասնյակներով, թշնամու գնդերը զինաթափել: Դրա համար էլ վճռեցի թշնամուն նախ խուճապի մատնել և ապա անձնատվության մղել:

Կարգադրվում է երկու ուժեղ համազարկով ծեծել զորանոցի և շատերի պատուհաններն ու դռները: Մեր առաջին համազարկն ավարտում է, և Բարաբաթումի բարձունքներից զարհուրելի դղրդյունով դեպի ձորն են գլորվում երկու պայթուցիկ տակառներ: Վայրկյանաբար զորանոցներից ու շտաբից դուրս են թափվում հազարավոր սարսափահար մարդիկ՝ զինված և անզեն, հագնված և գիշերազգեստով, ոտնամաններով և բոբիկ ու խռնվում ձորի մեջ: Գյութկյումում վերցրածս գերիներից երեք ինտելիգենտ բոլշևիկներ, որոնց դիտմամբ էի վերցրել հետս, իմ կարգադրությամբ նետվում են դեպի շարված կարմիր գնդերը և բարձրաձայն աղաղակում.

«Մի՛ կրակեք, ընկերներ, մեր վաշտը Գյութկյումում հանձնվեց. փրկությունը միայն հանձնվելու մեջ է; Գիտցե՛ք այդ և վայր դրեք զենքերդ»:

Թշնամին վարանում է: Նրա մի մասը փախչում է Օխչու գետի հոսանքով դեպի Գեղվածոր, իսկ մյուս մասը՝ թափում զենքերը և հանձնվում: Հրամայում եմ սեղմել պաշարման շղթան՝ առանց կրակելու: Քիչ անց՝ հանձնվում է և վերջին գունդը, բացառությամբ մի հարյուրյակի: Այս վերջինը, հետևելով գավառական հեղկոմին, թեթև դիմադրությունից հետո ծեծվում է և հանձնվում: Այդ անիմաստ դիմադրության ժամանակ սպանվում են հեղկոմի նախագահ ծանոթ Բագրատը,[13] որը օրեր առաջ, կարմիր զորքին Գորիսից առաջնորդել էր դեպի Ղափան, և Խուրշուդյանը[14] Խորենու և Շիրինյանի նամարդ սպանիչը:

* * *

Հոկտեմբերի 10-ի առավոտյան ժամը տասն է: Մեր ձեռքին է ամբողջ Ղափանը: Զինաթափել ու գերել ենք երեք գնդեր, որոնցից մեկը հեծյալ: Վերցրել ենք քսանից ավելի գնդացիրներ, այլ պատերազմական ավար:

Այժմ յոթը հոգու փոխարեն Հանքերում կենտրոնացել են իմ Ղափանի 37 վաշտերը և ուրախ են, որ՝ դրսից ուժեր չբերելով, հնարավորություն եմ տվել սեփական ուժերով ազատագրելու իրենց Դավիթ-բեկյան ծննդավայրերը:

Կարմիր գերիները հողին են հանձնում իրենց հատ ու կենտ զոհերին: Մենք զոհեր չունենք: Խորհրդային կոշմարից ազատված գյուղերը Հանքերն են հասցնում հաց և մատաղացուներ, որոնց կեսը տրվում է թշնամի լինելուց դադարած կարմիրներին: Ուրախ են թե՛ ապստամբները և թե՛ Ռուսիայի խորքերից զոռով դեպի մեր անհրապույր լեռնաշխարհը քշված «կարմիր զինվորները»:

Ապստամբներն այդ օրը իրենց վեհանձն վերաբերմունքով հաստատեցին Տենիսընի խոսքերը՝ «Ամենաքաջերը ամենաքաղցր մարդիկն են», հավատարիմ մնալով այն ասպետական սկզբունքին, որը կոչվում է «քաղցրություն հաղթողի կողմից դեպի պարտվածը»:

ԽԱԼԻԼ ՓԱՇԱՆ

Այդ «նորահավատ կոմունիստը», Բաքվի արևելյան ազգերի առաջին համագումարում էնվեր փաշայի և Իբրահիմ Թալիի հետ մուսուլման աշխարհը ներկայացնելուց հետո, առատ ոսկու պաշարով* վերադարձել էր Օրդուբադ՝ կենդանի կապ պահելու համար կարմիրների և Քեմալի միջև: Անցնելիս՝ նա իր թիկնապահների և համհարզի հետ Գորիսում ընդունվել էր մեծ պատիվներով և երեք օր անցկացրել անասնաբույժ Ա.-ի հարկի տակ:

- Կարմիրները շատ են ուժեղացել,- ասել էր տաճիկ փաշան բժշկին,- լավ կլինի, եթե Նժդեհը թողնի և անցնի Պարսկաստան: Օրեցօր նոր զորքեր են հասնում: Նժդեհը կարող է գլուխը կորցնել այդ լեռներում: Ես կգրեի նրան և խորհուրդ կտայի բարեկամաբար քաշվելու Զանգեզուրից, եթե մի մարդ գտնեք նամակս տեղ հասցնելու:

- Գորիսը,- պատասխանել էր բժիշկը,- որևէ կապ չունի Նժդեհի հետ և դժվար թե գտնվի որևէ մեկը, որ հանձն առնի Ղափան գնալ:

Հոկտեմբերի 10-ին Ղափանի վերագրավման օրը, երևի իր «բարեկամությունը» հաստատելու համար, Խալիլ փաշան՝ ինձ Գենվազ քաշելու և Ղափանում շահածս հաջողությունը ապահովելու ճիգերս վիժեցնելու նպատակով՝ Օրդուբադի կողմից սկսեց մի նոր հարձակում Կարճևան-Կաքավաբերդի դեմ: Գենվազի փրկության կոմիտեն՝ դեռ անտեղյակ իմ Ղափանում ունեցած հաջողությանը՝ հոկտեմբերի 11-ին ինձ հասցրած գրությամբ հաղորդեց Գենվազում վերսկսված գործողությունների մասին և խնդրեց թողնել Ղափանի վերագրավման փորձը՝ «Գենվազը չկորցնելու համար»:

Մեկնում եմ Գենվազ, վերցնելով հետս երեք հոգի էլ կարմիրներից: Սրանք պարսկական ափով XI բանակի հրամանատարության Անդրկովկասյան ռազմաճակատի զինվորական կոմիսարին պիտի հասցնեին Ղափանում գերի ընկած կարմիր գնդերի մի հավաքական գրությունը, որի մեջ, ի միջի այլոց, ասված էր. «Զանգեզուրում տեղի ունեցող հայ-բոլշևիկյան կռիվների գլխավոր պատճառներն են՝ Ա) Զանգեզուրը կարմիր բանակի բարձր հրամանատարության կողմից Խորհրդային Ադրբեջանի անբաժան մասը հայտարարելը և Բ) Տաճկական փաշաների ու զորամասերի ներկայությունը կարմիր բանակի

* Մոկվայի նվերը քեմալական զորքերին (ծանոթ. հեղ.):

շարքերում»: Կար և այս. «Սուտ են այն լուրերը, թե Նժդեհի մոտ անգլիացի սպաներ կան: Սրա բանակը զինված գյուղացիությունն է, որն ուզում է ազատ ապրել իր լեռների վրա: Նժդեհը հեղափոխական է և ոչ ցարական զորավար և մեզ հետ շատ լավ է վարվում»:*

* * *

Հոկտեմբերի 12-ի առավոտյան Մեղրիում եմ: Փրկության կոմիտեն, որը՝ արժանի իր հերոսական շրջանի հավաքական ներկայացուցչությունը լինելու, պատմում է, թե ինչպես իմ բացակայության ժամանակ Ալագյազի ճակատից ստացված հաղորդագրության՝ «Թշնամին առաջանում է մեծ ուժերով», պատասխանել էր ճակատի պետին. «Վարվեք այնպես, ինչպես նման դեպքերում հրամայում էր վարվել հրամանատարը: Նա կհասնի շուտով»:

«Վարվեք այնպես», ըստ Փրկության կոմիտեի, նշանակում էր՝ աշխատեք գիշերով անցնել թշնամու թիկունքը: «Ահա՛ թե ինչպես փախցրինք փաշային», ուրախ քրքիջով վերջացրեց կոմիտեի նախագահը:

Հետաքրքիր մի դեպք էր տեղի ունեցել արևելյան ճակատում: Հոկտեմբերի 11-ի երեկոյան թշնամին մեծ ուժերով թափվում է Շիվանի ձորի արևելյան թաղը: Նրա մի հեծյալ ջոկատը թևանց կատարելու, ավելի ճիշտը՝ թևանցի պատրանք ստեղծելու համար, երևում է Շահբազյուրդի որոշ կետերի վրա, աշխատելով մեր ուժերին ակնխաբության մատնել:

Ամենից առաջ թշնամու ջոկատի խաղերը նկատում է Շիվանի-ձորցի մի կին,** որը մեր վաշտերի ուշադրությունը լեռան վրա երևացող խմբակի վրա դարձնելու նպատակով, բարձրանում է իրենց տան կտուրի վրա և բարձրաձայն և երկար, կանչում՝ «Կռվեցեք, տղերք ջան, ահա՛ գալիս է, ահա՛ եկավ, ահա՛ հասավ հրամանատարը»...

Կռվում տաքացած իմ վաշտերը՝ թշնամու ջոկատը իրենց օգնության փութացող Ղափանի ուժերը համարելով՝ թև են առնում և մի խիզախ հակագրոհով թշնամուն հետ շպրտում գյուղից և ջարդում Արաքսի ափին: Ինձ մնում էր շնորհակալություն հայտնել Փրկության Կոմիտեին իր «վարվեք այնպես»-ի, իսկ արի հայուհուն իր «եկավ, հասավ»-ի համար և հենց նույն օրը, գիշերով, վերադառնալ Ղափան:

* 1000-ի չափ ստորագրություն (ծանոթ. հեղ.):

** Սպա Տեր-Առաքելյանի քույրը (ծանոթ. հեղ.):

28-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԴԻՎԻԶԻԱՆ

Գերի ընկած ռուսական գնդերի հրամանատարական կազմից շատ կարևոր տեղեկություններ էի ստացել XI կարմիր բանակի մտադրությունների մասին: Գիտեի, որ, եթե թշնամին դեռ գործողություններ չի սկսել նորազատ Ղափանի դեմ, կսկսի վաղը, մյուս օրը և ո՛չ ուշ: Գիտեի և այն, որ այս անգամ կարմիր հրամանատարությունը՝ որ ներշնչվում և ուղղվում էր Բաքվի թուրք և թաթար համիսլամականների կողմից, իմ դեմ պիտի հանի ավելի մեծ ուժեր: Գաղտնիք չէր ինձ համար նաև այն, որ իմ հաջողությունները ամենից շատ ջղայնացնում են՝ Զանգեզուրը փաստորեն խորհրդային Ադրբեջանին կցելու քաղցր հույսերով ապրող Նարիմանովին և ընկերության, որոնք, ըստ գերիներիս խոստովանության, ճիգ ու ջանք չէին խնայում «օձի գլուխը գյավուրի բռունցքով ջախջախելու»:

Գիտակ այդ բոլորին՝ ես անհանգիստ էի և աճապարում էի: Շուտ տեղ հասնելու մտահոգությամբ՝ թողած Բաղաբերդի համեմատաբար հարմար գիծը, անցնում ենք Խուստուպով: Դեռ նոր էի սկսել վերելքը, երբ Ղափանի սուրհանդակների միջոցով ստացա Սամսոն բեկի հետևյալ հաղորդագրությունը. «Ղափանում դրությունը շատ լուրջ է: Խոտանանից մինչև Զեյվա ամբողջ տարածության վրա թշնամին է կանգնած: Անհամբեր սպասում ենք ձեր գալստյան: 17/X, 1920թ. Հանքեր»: Դեռ Խուստուպի կատարին չհասած, ստանում եմ երկրորդ հաղորդագրությունը. «Նորից խնդրում եմ, աղաչում, հասե՛ք հասե՛ք: Այսօր մեծ կռիվ կար: Տղաներին իսկույն ուղարկեցի. դեռ լուր չունեմ: Սամսոն բեկը, 1920թ. 16/X, Հանքեր»:

Մնում էր խթանել ու մտրակել մեր ձիերը մի ժամ, մի վայրկյան առաջ տեղ հասնելու համար: Հիշում եմ, որ երեսուն ձիավորներից տասի չափ լավ ձի ունեցողները կարողացան միասին և միաժամանակ մտնել Հանքերը: Մնացածների ձիերը՝ հոգնած ու ծեծված, ցիր ու ցան վիճակի մեջ մնացել էին ճանապարհին:

Դեռ նոր էինք Բաղաբուրջից իջնում Հանքերը, երբ հանդիպեցինք մի խումբ Արծևանիկից տեղահան եղած կին ու երեխաների: Իմ հարցին՝ «Ո՞ւր եք գնում», «շատ են, պարոն, այս անգամ մորեխի չափ շատ են»,- եղավ պատասխանը:

Մենք մտանք Հանքերը:

* * *

Թշնամին՝ «Ղափանի և Գենվազի ապստամբությունը իր սաղմի մեջ խեղդելու համար» այս անգամ գործի էր դրել ամբողջ 28-րդ հետևակ դիվիզիան, խորհրդային Ադրբեջանի հետևակ բրիգադները,

մի զուտ կոմունիստական գումարտակ և Հաքեարվի շրջանի թրքությունը:

Այդ հսկայական ուժերով նա դուրս էր եկել Ղափանի դեմ: Մի օր անցած՝ այդ ուժերին միացան Գենվազի ճակատների վրա պարտված 20-րդ հեծյալ բրիգադան և երկու հետևակ «կովկասյան գնդերը»:

Թշնամին կռվում էր Ասկյուլում-Ղզլդաշ-Ինջաբել ամբողջ գծի վրա, ասել է՝ Ղափանի հյուսիս-արևելյան ամբողջ սահմանների վրա: Իր ձախ թևը՝ ճակատ գյուղի դեմ սկսած իր անհաջող հարձակումից հետո, ծեծված, հետ էր քաշվել: Կենտրոնը՝ գրավելով Արծևանիկ գյուղը, ձգտում էր օգտագործել իր այդ հաջողությունը: Աջ թևը՝ սեպաձև թաղված Ղափանի և Տաթևի միջև, մասայական գրոհներով փորձում էր գրավել Խոտանան գյուղը: Կենտրոնում գործում էին երկու լեռնային թնդանոթներ, թևերում՝ քառասունի չափ գնդացիրներ:

Կռվի երկրորդ օրն էր: Թշնամին հարձակողական էր և կարող էր օգտվել իր մասնակի հաջողությունից: Պետք էր անկարելին կարելի դարձնել, որ չորրորդ օրը մեր ճակատների վրա թշնամի չերևա:

Մեկ տարուց ավելի էր, որ չէր եղել մի դեպք, երբ թշնամին ամենաուշը երրորդ օրը տեղի տված չլիներ մեր ուժերի առաջ: Իմ ժողովուրդ-բանակը գիտի այդ: Ես թույլ չեմ տվել և չպետք է թույլ տայի նրան մոռանալու այդ պարագան: Այդ գիտեր և թշնամին՝ թաթարը, տաճիկը, ռուսը: Եթե պատերազմող կողմերից մեկը մոռացել էր այդ՝ պետք էր հիշեցնել տալ: Իսկ այդ անելու համար պետք էր ամենաուշը վաղը երեկոյան «ճամբու դնել» թշնամուն, հետ շպրտել մեր ճակատներից:

Սուրհանդակները Ինջաբելի ճակատն են տանում օրվա հրահանգներս. «Խուսափել ցերեկվա գրոհներից և զոհեր տալուց: Ընդունել «Մուրճ ու Ոստայն» ձևը և սպասել ինձ; Ձեզ մոտ կլինեմ մի ժամից: 1920թ. 17 հոկտեմբեր, ժամը 14:20, Հանքեր»:

Հապճեպով կազմակերպածս թիկնային զորախումբը, վաշտապետ Կարապետի գլխավորությամբ՝ թշնամու թիկունքն անցնելու խնդրով, շարժվում է գերաթաղի բարձունքներով դեպի Տափասար: Իսկ ես անցնում եմ Ինջաբելի ճակատը:

Ճանապարհին՝ խորհրդածելով, ինձ համոզում եմ այն բանի մեջ, որ շատ անգամ նման դեպքերում, առանց հաշվի առնելու թշնամու ուժերի քանակը կամ ռազմաճակատի երկարությունը, պետք է և հնարավոր է որևէ կետի վրա մի ջախջախիչ հարված հասցնել հակառակորդին և օգտվելով ստեղծված հոգեբանական վայրկյանից, վճռել ճակատամարտի բախտը: Խորհրդածում և ընդունում էի, որ որևէ կետի վրա պարտություն կրած մի բանակ զգում է մոտավորապես այն, ինչ որ զգում է կենդանի մարմինը իր վրա բացված մի վերքի շնորհիվ, որ տեղական, մասնակի պարտությունը երբեմն վտանգավոր վերքի պես

վարակում է ամբողջ մարմինը - բանակը, որ սարսափի՝ ալիքը էլեկտրական հոսանքի արագությամբ տարածվում է ամբողջ ռազմաճակատի վրա, ցնցելով ամբողջ զորաշղթան:

Ուրեմն վճռված էր և պետք էր նախ վերքը, մի խոր ճեղքված բանալ թշնամու մարմնի մեջ և ապա՝ օգտվել նրա հիվանդ վիճակից:

Ահա՛ թե ինչպես էի պատկերացնում ինձ, ծրագրածս ռազմական ձեռնարկը, երբ հասա ճակատ:

* * *

Ըստ տրված մարտագրիս՝ Ա) Հոկտեմբերի 18-ի լուսաբացին մի ուժանակային գրոհով Խոտանանի իմ զորասյունը շփոթի է մատնում թշնամուն Ինջաբելի ամբողջ ճակատի վրա, Բ) Նույն ժամին մեր թևանցային զորախումբը Տափասարից հարվածում է թշնամուն թևից և թիկունքից, Գ) Գրեթե միաժամանակ, կապ, ու կոնտակտ պահելով, Տաթևի կողմից թշնամուն հարվածում են Պողոս Տեր Դավթյանը[15] և իմ սպաներից Տեր Պետրոսյանը:

Հանկարծակիի եկած թշնամու ուժերի մի մասը փրկություն է գտնում անձնատվության, մյուսը՝ անկանոն նահանջի մեջ: Պողոսը իր հեծելախմբով հետապնդում է փախչող թշնամուն, իսկ Ղափանի հետևակ վաշտերը մի աննախընթաց խանդավառությամբ և տարերայնությամբ նետվում են դեպի Արծևանիկ: Այդ ճակատում գործող թշնամու 84-րդ բրիգադան, թեթև դիմադրությունից հետո, հանձնվում է, գրեթե, ամբողջովին:

Հոկտեմբերի 18-ի երեկոյան մեր սահմանների վրա արդեն թշնամի չկար: Մեր հաղթական վաշտերը բազմաթիվ գերիներով, թշնամուց խլած գնդացիրներով, հրացաններով, հեռախոսային ապարատներով, խրամատաշինական գործիքներով և դրոշակներով վերադառնում էին Հանքերը՝ տոնելու իրենց նոր հաղթանակը: «Մուրճն ու Ոստայնը» հաղթել էին և այս անգամ: Մարդկային կորուստ գրեթե չունեինք: Թշնամու կորուստը ավելի քան մեծ էր:

ՄԻ ԱՐՅՈՒՆՈՏ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հրով և սրով, իսկ եթե սրանք չօգնեցին՝ քաղաքական բոլոր տեսակի լրբություններով - ահա գործելակերպը կարմիր հրամանատարության, որ տմարդություն էր ունեցել ստորագրելու մի արյունոտ մարտագիր: Վերջինիս տակ գերագույն հաճույքով իրենց անունը պիտի դնեին դասական բարբարոսներն անգամ:

Ահա՛ այդ կարմիր փաստաթուղթը:

Գաղտնի.- ռազմական գործողություն

ՀՐԱՄԱՆ

XI ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ 28-ՐԴ ՀՐԱՑԱՆԱԾԻԳ ԴԻՎԻԶԻԱՅԻ ԶՈՐԱՄԱՍԵՐԻՆ

N 29

Ք. Շուշի — 14-ին հոկտեմբերի 1920թ.
Դիվիզիայի շտաբ. — 1 ժամին

Համարյա ամբողջ Զանգեզուրում բռնկվել է ապստամբություն: Ապստամբած հայերը գրավել են Անգեղակոթ-Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը և Օխչի չայի ու Մեղրի չայի ավազանները: Նյուվադի գյուղի շրջանում գործող 252-րդ հրացանաձիգ և Կովկասյան 2-րդ գնդի հետ ունեցած կապը խզված է:

Ղափանի աննշան զորամասը շրջապատված է. նրա վիճակն ակնհայտ է: 251-րդ հրացանաձիգ գունդը կռվում է թշնամու հետ Տանձավերից 4 վերստ դեպի հարավ գտնվող Ինջաբելի բարձունքներում:

20-րդ դիվիզիայի Կովկասյան բրիգադային հրամայված է Արաքսի ափով առաջ անցնել և հոկտեմբերի 16-ին լինել Նյուվադիի շրջանում, ուր իրան ենթարկելով 252-րդ հրացանաձիգ և Կովկասյան 2-րդ գնդերը, վճռականությամբ և դաժանությամբ ջարդել Նժդեհի բանդաները: Այդ գործողությունից հետո հարվածելով Ղափանի շրջանը՝ վերջ տալ ապստամբությանը: Մեր դիվիզիային հրամայված է պատրաստել հարվածող բռունցք և ուժեղ թափով ջնջել ապստամբությունը, կենդանի բաց չթողնելով ոչ մի բանդիտի, կանգ չառնելով ամբողջ գյուղերն ավերի ենթարկելու առաջ:

Հրամայում եմ

1. 83-րդ բրիգադայի հրամանատար

ընկ. Լիտվինենկոյին

247-րդ գունդ և 248-249-րդ հրացանաձիգ միացյալ գունդ. 248 և 249-րդ հրացանաձիգ գնդերի հագուստ ունեցող բոլոր զինվորներից կազմել միացյալ գունդ և 247-րդ հրացանաձիգ գնդի հետ միացնելով՝ պատրաստել հարվածող բռունցք և հոկտեմբերի 15-ին ժամը 16-ին կենտրոնացնելով Տեղ գյուղում՝ հոկտեմբերի 16-ին լուսաբացին վճռական հարձակման անցնելով Զեյվայի, Արծևանիկի և Բարաբաթումի վրա՝ օղակել Ղափանի շրջանն արևելյան կողմից և ճնշելով՝ դաժանու-

թյամբ վարվել ապստամբների հետ, ոչ մի բանդիտի կենդանի բաց չթողնելով:

Դեպի առաջ կապ պահպանել 84-րդ բրիգադայի, իսկ Ղափանը գրավելուց հետո կապակցվել նաև 20-րդ հրացանաձիգ դիվիզիայի Կովկասյան բրիգադայի հետ: Թիկունքն ապահովելու համար վերցնել Տեղ գյուղում կուլակներից 100 պատանդ և կարմիր զորքի թիկունքից մինչև իսկ մի գնդակ արձակելու դեպքում՝ բոլորին գնդակահարել: Ստանալ 84-րդ բրիգադայի հրամանատարից մի դասակ հեծյալ լեռնային հրետանի և եթե հնարավոր չի լինի հարձակման դեպքում օգտագործել, այն ժամանակ զետեղել Տեղի դիմացի դիրքերում՝ գյուղը ռմբակոծելու, եթե կարիք զգացվի:

Հրամայում եմ

84-րդ բրիգադայի հրամանատար

ընկ. Սեմյոնովին

250-րդ և 251-րդ հրացանաձիգ գնդեր.

Զորամասերը ռազմունակ դարձնելով՝ Ղարաքիլիսայի և Բազարչայի ուղղությամբ պահակ դնել և ապահովել այդ կողմից, հոկտեմբերի 15-ին վճռական հարձակման անցնել և Քյամբիլ լեռնանցքով մտնել Խալաջ և Օխչի գետերի շրջանում գտնվող գյուղերը՝ օղակելով Ղափանի շրջանն արևմտյան կողմից:

Ամենադաժան և անխնա ճնշելով ապստամբությունը՝ ոչ մի բանդիտի բաց չթողնել: Ղափանի ապստամբ ազգաբնակությունը հպատակեցնելով՝ զինաթափ անել և Մազրայի կողմից ապահովել: Թիկունքն ապահովելու համար Գորիսում վերցնել կուլակներից 100 պատանդ և թիկունքի կողմից մինչև իսկ մի գնդակ արձակելու դեպքում անմիջապես բոլոր պատանդներին հրապարակորեն գնդակահարել: 3-րդ դիվիզիայի մարտկոցի I հրետանու մի դասակը դնել Գորիսի արևելյան կողմն ընկած դիրքում և ապստամբության դեպքում հրետանու կրակով օժանդակել այդպիսին ճնշելու: Կապ պահպանել 83-րդ բրիգադայի հետ:

2. 28-րդ կապի պետի ժամանակավոր պաշտոնակատար ընկ. Գրոսմանին.

Ձեռք առնել բոլոր միջոցները Կարաբուլաղի (Կարյագինո) վրայով վերստին կապ պահպանել Կովկասյան 20-րդ բրիգադայի հետ: Մշտական կապի համար թռուցիկ փոստի կայաններ հիմնել Կարաբուլաղից սկսած խճուղու գծով մինչև Ջիբրայիլ և նույնիսկ մինչև Հագարի գետը:

3. 28-րդ դիվիզիայի մարտկոցի հրամանատար ընկ. Գուսակովին.

Ի նկատի ունենալով, որ ամբողջ հրետանին հնարավոր չէ գործադրել և որպեսզի պարենավորման գործը չծանրաբեռնվի, թողնելով դաշտային հրետանու մի դասակ Գորիսում, 3-րդ դիվիզիայի հրետանու մյուս մասը տեղափոխել Շուշի, շտաբի կենտրոն Խանքյանդի, իսկ երկրորդ հրետանու դիվիզիան՝ Կարաբուլաղ (Կյարյագինո):

4. 28--րդ դիվիզիայի պարենավորման պետին.

Բոլոր փոխադրական միջոցները կենտրոնացնել ձեռքի տակ և Շուշիի հեղկոմի միջոցով գյուղացիներից հավաքելով 200 սայլ՝ Ավդալլարում հիմնել մթերքների տեղափոխման կայան, որպեսզի զորամասերն իր ժամանակին ստանան ուտելիքն ու ռազմամթերքը: Չպետք է թույլ տալ զորամասերին քաղցած մնալ, որի համար անհրաժեշտ է ամեն բան շարժողության մեջ դնել և օր ու գիշեր 24 ժամ աշխատել, հիշել, որ ապստամբած շրջաններում դիվիզիայի պարենավորման պետի գործունեությունը թույլ է:

5. 38-րդ դիվիզիայի առողջապահական մասի պետին.

Կազմակերպել վիրավոր և հիվանդ կարմիր զինվորների էվակուացիան՝ մթերք տեղափոխելու համար Գորիսից վերադարձող սայլերի վրա: Տեղափոխման կայան հիմնել Ավդալլարում:

Նախօրոք Շուշիում տեղ պատրաստել և վիրակապման համար բավականաչափ նյութ մատակարարել:

Կրկին հիշեցնում և հրամայում եմ 83-րդ և 84-րդ բրիգադների հրամանատարներին խուսափել ամեն տեսակ մարդասիրական միջոցներից և դաժան լինել ապստամբ բնակչության հետ, որպեսզի նա զգա բանվորական բռունցքի թափը: Դիմադրողներին գերի չվերցնել և կենդանի բաց չթողնել ոչ մի բանդիտի:

Միմիայն ապստամբած կուլակներին ոչնչացնելով և նրանց ամբողջ կայքը գրավելով կհասնենք խաղաղության: Եթե հանգամանքները կստիպեն՝ կանգ չառնել ամբողջ գյուղերն ավերելու առաջ, հիշելով այն, որ աններողամտությունը և դաժանությունը, նամանավանդ Կովկասում, կհասցնի լավ հետևանքի: Գրաված գյուղերում ապահովել սովից զորամասերին ապստամբների հաշվին: Ես կլինեմ Շուշիի դիվիզիայի շտաբում. երբ մեկնեմ 84 և 83-րդ բրիգադաների շտաբը, այնտեղ ինձ ուղարկեք ռազմական գործողության մասին զեկուցումները յուրաքանչյուր երկու ժամը մի անգամ:

8. Իմ փոխանորդները՝ - 83-րդ բրիգադայի հրամանատար ընկ. Լիտվինենկոն և 84-րդ բրիգադայի հրամանատար ընկ. Սեմյոնովը:

9. Գրությունս ստանալու և արած կարգադրության մասին տեղեկացնել ինձ:

28-րդ դիվիզիայի պետ՝ Նեստերովսկի.

Զինվորական կոմիսարի փոխանորդ՝ Սարան.
28-րդ դիվիզիայի շտաբի պետ՝ Փրոլով.
Ճիշտ է. դիվիզիայի ռազմական գործողության մասի պետի օգնական -
(ստորագրություն):

Հրամանը տպագրել 11 օրինակ և ուղարկել: 14 հոկտեմբերի 2 ժամ 5 րոպ. 83-րդ բրիգադայի հրամանատարին՝ 1 օրինակ, 84-րդ բրիգադայի հրամանատարին՝ 1 օրինակ, 28-րդ Կովկասյան բրիգադային 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի հրետանու պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի (անընթեռնելի) պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի պարենավորման պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի կապի պետին՝ 1 օրինակ, հատուկ թիվ 2 զորամասի պետին՝ 1 օրինակ, 28-րդ դիվիզիայի սանիտարական մասի պետին՝ 1 օրինակ, XI զորաբանակին ուղարկել 1 օրինակ, Իսկականը 1 օրինակ, բոլորը 11 օրինակ:

«ԿԱՐՄԻՐ ՀԱՆՆԻԲԱԼԸ»

Կարմիր հրամանատարությունը՝ կույր գործիք է Բաքվի համիսլամականների ձեռքին, ըստ ամենայնի, վճռել էր, ի գին իր վերջին զինվորի արյան, ճնշել «Նժդեհի և Դաշնակների ստեղծած սպիտակ շարժումը» և Զանգեզուրը կցել խորհրդային Ադրբեջանին: Նրա մի շարք զորամասերը ծեծված էին, զինաթափված, գերված: Նրա ռազմունակությունն ու բարոյական վիճակը գերեզման էին գտել Գենվազի, Բաղաբերդի և Ղափանի ռազմաճակատներում: XI ռուս զորաբանակը, որպես այդպիսին, որպես մարտական մի զորեղ միավոր, այլևս գոյություն չուներ: Մնացել էր միայն նրա անունը, առանց բովանդակության, առանց ոգու: Սեղմ ասած՝ զորամասերը կարող էին վտանգավոր լինել միայն իրեն՝ թշնամու համար, լավագույն թթխմորը հանդիսանալով նոր կռվադաշտ հասած զորամասերի բարոյալքման:

Ահա՛ նման զորամասերին, 28-րդ հետևակ դիվիզիայի պարտությունից հետո է, որ Հյուսիսային Կովկասից օգնության է հասնում Ռուսաստանում «սպիտակներ»-ի դեմ հռչակ հանած «Խորհրդային Հանիբալ»-ը,- «Ընկեր Կուբոչկինը իր հեծյալ դիվիզիայով»:

Կարմիր ղեկավարներից ոչ ոք այնքան ուրախ չէր Գորիս ժամանած նոր զորքի առթիվ, որքան Զանգեզուր-Ղարաբաղի խորհրդային կոմիսար Ղարագոզյանը: «Զգույշ, սպառնում էր նա բուն Զանգեզուրի և Գորիսի ազգաբնակության, սրան Կուրոչկին կասեն. նա կատակներ չի սիրում: Սա է ջարդել Դենիկինին, Կոլչակին և շատերին: Կտեսնեք, այսօր-վաղն էլ Նժդեհի և Ղափանի փոշին քամուն կտա»...

Երկրորդ օրն է, ինչ Կուրոչկինը հյուր է և մեծարանքի առարկա Գորիսում: Նրա հեծյալ զորամասերը տեղավորված են քաղաքում և շրջակա գյուղերում:

«Կարմիր զորավար»-ի զինվորները՝ առարկա առանձին ուշադրության, շատ բանով են տարբերվում առաջիններից,- առողջ են, կայտառ, լավ զգեստավորված և լավ ձիերով: Գորիսում ամեն բան լավ կարելի է համարել, եթե ունեցած չլիներ 60-ի չափ Կուբանցի կազակների գնդակահարումը: Մոտ 100 հոգի հրաժարվել են «կռվի դուրս գալ Նժդեհի դեմ»: Գորիսի հեղափոխական տրիբունալը հանդուգնների այդ քայլը համարել է «հակահեղափոխություն» և գնդակահարել կեսից ավելին:

Այդ դեպքից մի օր անց՝ «կարմիր թատերասերները» Կուրոչկինի սպայակույտի և զորքի համար կազմակերպում են կարմիր երեկույթ - Աթենքի գիշեր:

Դեռ երեկույթը չսկսված, սրահի մեջ լուր է տարածվում, թե «Նժդեհը կարմիր զորքերի տեղն ու դասավորությունը ուսումնասիրելու նպատակով ծպտված մտել է Գորիս»: Երեկույթը խափանվում է: Երգի, երաժշտության և խաղերի փոխարեն հեղկոմը կարգադրում է բռնել սրահի դուռն ու պատուհանները և քննել երեկույթում եղածներին:

Որոշ անհատների տարածած այդ միտումնավոր լուրը ունենում է իր ցանկալի ազդեցությունը: Երեկույթը տեղի չի ունենում: Քաղաքում իրարանցում կա: Կատարվում են շուրջկալներ:

Այդ բոլորից մի օր հետո Կուրոչկինի դիվիզիան շարժվում է դեպի Ղափան:

* * *

Մեր և թշնամու հետախույզ խմբակների առաջին բախումը տեղի ունեցավ նոյեմբերի 3-ի լուսաբացին: Նույն օրը ժամը տասի մոտերը թշնամու աջ զորաթևը շատ հախուռն կերպով անցավ հարձակողականի:

Իմ վաշտերին հրամայված էր չկրակել և բեմադրել նահանջի նման մի շարժում: Կուրոչկինյանները՝ դեռ անծանոթ իմ ռազմավարական ձևերին, առաջանում են և, աստիճանաբար խտացնելով իրենց շարքերը, թափվում ձորերը:

Վերջ է դրվում մեր խաբուսիկ նահանջին: Մեր պայթուցիկ տակառները կատարում են իրենց գործը, թշնամուն մի քանի վայրկյան պահելով քարե ու երկաթե կարկուտի տակ: Ձորերից դուրս գալու հնարավորությունը կորցրած կարմիրների աջ զորաթևը թափում է զենքերը և հանձնում: Կռվի երկրորդ օրը մի խոր թևանցով պարտության է մատնվում թշնամու ձախ զորաթևը: Կենտրոնը մեծ կորուստով ու խուճապով նահանջում է դեպի Շուռնուխ: Ծեծված դիվիզիայի մնա-

ցորդները՝ իրենց պարտությունը չմատնելու համար, Գորիս են մտնում գիշերով:

Վերցրել ենք մի քանի հայուր գերիներ, 24 գնդացիր, հրացաններ, ռազմամթերք, հացի պաշար և այլ պատերազմական ավար: Մեր կորուստը չեղածի չափ չնչին է:*

Այս անգամ թշնամու ոչ սովորական դիվիզիան, ավելին՝ ոչ սովորական ղեկավարն էր պարտված: Ղափանը գիտակցում էր այդ և ցնցվում:

ՏԱՃԿԱԿԱՆ ԳՈՒՆԴԸ ՁԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Մի օր, սև լինի այդ օրը,- պատմում էին խորհրդային կոշմարից ազատված գյուղացիները,- մեր գյուղական հեղկոմին ավետեցին կենտրոնից՝ «Ուրախություն» Ձանգեզուրի՝ այսօր Գորիս ժամանեց տաճկական կոմունիստական գունդը: Հրամայված էր գյուղերում սրա համար ստեղծել ապրելու հարմարություններ»...:

Հրամանը կատարվեց: Տաճկական վաշտերը անցան գյուղերը և հենց առաջին օրը Տաճկաստանը իր ամբողջ էությամբ տեղափոխվեց Ձանգեզուր:

«Գյավո՛ւր», «մունդար էրմենի», «վեր դիմմա, բաբասընը», «Կոմսա՛ր, բիզդան օթուրի փիլոֆ», «Օսմա՛ն, օ՛կզա գյորդն մը՞, օ՛բենըմ օլաջաք»...[16]

Եվ հայ գյուղացին լսեց, տեսավ այդ բոլորը: Եվ այդ բոլորը հերիք էր, որ տաճկական «նորահավատ» գունդը, անկախ իր քանակից և ռազմունակությունից, մի օր իր դիակները փռեր մեր լեռների վրա, մեր ձորերի մեջ:

* * *

Հռչակավոր Կուրոչկինի պարտությունից հետո, ես մի պահ հավատացի, որ այլևս կարմիր հրամանատարությունը չի փորձի իր զենքի բախտն իմ դեմ, բայց շուտով պարզվեց, որ սխալվել էի: Նոյեմբերի 12-ին տաճկական գունդը, իբրև թե Նախիջևան անցնելու նպատակով, ռուսների հետ շարժվեց դեպի Սիսիանի Ուզ և Ղարաքիլիս գյուղերը:

Պողոսը՝ Սիսիանի ապստամբական զորամասի հրամանատարը, չհապաղեց, օգտվելով մառախուղից, մի խիզախ թևանցով նեղը դնելու տաճիկներին: Թշնամին 3 ժամվա դիմադրությունից հետո դիմեց փախուստի, թողնելով 100-ի դիակներ: Այս կռվում մահացիորեն վիրավորվեց սիսիանցիների հերոս ղեկավարը և՝ մի շաբաթ անց՝ վախճանվեց:

---

* Մի սպանված, երկու վիրավոր (Ծանոթ. հեղ.):

Նոյեմբերի 14-ին կարմիրների բարձր հրամանատարությանն ուղղեցի հետևյալ վերջնագիրը. «Ղարաբաղի և Ձանգեզուրի հայությունն արդեն գլխատված ու տնտեսապես քայքայված է կարմիր բանակի ձեռքով: Ձեր զորքերի ներկայությունը Սյունիքի սահմաններում այլևս անհանդուրժելի է: Հրամայում եմ, եթե չեք ուզում X բանակի մնացորդներն էլ կոտորածի և գերության մատնել, անմիջապես դատարկել Ձանգեզուրը, հակառակ դեպքում ստիպված կլինեմ կռվով տիրելու ձեր ձեռքին գտնված երկրամասին: Նժդեհ, 14 նոյեմբեր, 1920թ., Ղափանի Հանքեր»:

Տաճկական գունդը՝ Սիսիանից նահանջելիս՝ պաշարում է հայկական Յայջին: Գյուղացիությունը դիմադրում է հերոսաբար, սակայն, ռազմամթերքի չգոյության պատճառով տեղի է տալիս:

Նոյեմբերի 19-ին Տաթևի և Դարաբասի ձորերը ինձնից օգնություն են խնդրում: Մոտ մի հարյուրյակ ձիավորներով հենց նույն օրը անցնում եմ Տաթև: Թշնամին իր ձեռքին պահելով Յայջին, գործողություններն է սկսել ապստամբ Հալիձորի դեմ: Նրան հաջողվել է Շինուհայրի կողմից մտնել ապստամբ գյուղի արևելյան թաղը և կրակի տալ մեկ-երկու տուն: Ապստամբները դիմադրում են խիզախաբար: Օգնության են փութացել Տաթևի ուժերը:

Տաթևի թիկունքի բարձունքներից երեկոյան դեմ, կռվի ընդհանուր դիմագիծը ինձ համար պարզելուց հետո, մշակում եմ նոյեմբերի 20-ի մեր հարձակողական օպերացիան:

* * *

Ըստ տրված մարտագրի՝ Սիսիանի ուժերը շարժվում են դեպի Ուչթափալար, Ղարաքիլիս-Գորիս խճուղիով, և լուսաբացին հարվածում են թշնամուն՝ թիկունքից: Դարաբասի ուժերը՝ գիշերով գրավում են Յայջիի թիկունքի Խութիս կոչվող բարձունքը: Տաթևի ուժերը՝ գիշերով անցնում են Որոտան գետը և գրոհում թշնամու կենտրոնի դեմ: Հալիձորի ապստամբները անցնում են հակահարձակման, հարվածելով թշնամու ձախ զորաթևը:

Դեռ գիշերով կատարվում են հարկավոր խմբավորումները: Գործողություններն սկսվում են լուսաբացից մի ժամ առաջ՝ տարերային և ներդաշնակ: Լուսաբացին Խութիսի բարձունքից առաջացող զորաշղթայի կրակից և պայթուցիկներից շշմած, թշնամին թողնում է Յայջին և քաշվում դեպի Ուչթափալար: Ժամը 10-ի մոտ թշնամին հետ է շպրտվում և՛ Հալիձորի բարձունքներից: Ժամը 11-ին մեր ուժերը, ճակատի գիծն ուղղելուց հետո, ամբողջ ուժերով նետվում են թշնամու վրա: Վերջինը դիմադրում է մեկ-երկու ժամ շահելու նպատակով, որ գիշերով մտնի Գորիս: Երեկոյան դեմ թշնամու վերջին մնացորդները հետապնդելով, փախչում են դեպի քաղաքն ու Քարահունջ գյուղը:

Վրա է հասնում գիշերը: Հրամայում եմ դադարեցնել հետապնդումը և կենտրոնանալ Յայջիում և Հալիձորում: Առաջինում տեղավորվում են Սիսիանի և Դարաբասի, երկրորդում՝ Ղափանի և Տաթևի ուժերը: Փրկված են Յայջին և Հալիձորը:

Վերջինում ծրագրում եմ Գորիսի գրավումը:

ԹՇՆԱՄՈՒ ՎԵՐՋԻՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Վերջնագիր ներկայացնել, սպառնալ, բայց չիրագործել սպառնալիքը - կնշանակի թևավորել հակառակորդին: Վերջնագրիս պատասխանը չկար և չէր ստացվելու: Կարմիր հրամանատարությունը Զանգեզուրը դատարկելու փոխարեն Բաքվից նորանոր զորամասեր էր քաշում դեպի այդ տնտեսապես և հասարակականորեն քայքայված երկիրը: Մնում էր զգացնել տալ Բաքվին, որ ապստամբական վերջնագիրը «գրպանի մեջ սեղմված անզոր բռունցք» չէ, այլ հաղթողի կամքը, որը պիտի հարգվի:

Գիշերվա ժամը մեկն էր:

Թիկնապահս, մտնելով ինձ մոտ, զեկուցում է. «Գորիսից սուրհանդակներ են եկել. կարևոր գրություն ունեն հանձնելու և ուզում են ձեզ տեսնել. ընդունե՞լ»:

Ներս են մտնում երկու գորիսցիներ. հիշում եմ մեկի անունը՝ Գարեգին:

«Երեկ Ուչքափալարում ջարդված թշնամու մնացորդները խուճապով թափվեցին քաղաքը,- գրեթե հևալով պատմում է մեկը: Քիչ անց՝ քաղաքում կարմիրների մեջ տարածվեց խուճապը և բոլորն սկսեցին փախչել դեպի Զաբուղ: Գորիսի և Վերիշենի երիտասարդությունը, տեսնելով այդ բոլորը, հարձակվեց փախչողների վրա և զինաթափեց շատերին: Քաղաքն այժմ մեր ձեռքին է: Թշնամին ամրացել է Քարաշենի բարձունքների վրա և ռմբակոծում է քաղաքը: Տղաներն օգնություն են խնդրում: Պետք է հասնել, թե չէ լուսաբացին, նոր ուժեր ստանալով, թշնամին կարող է վերագրավել քաղաքը և սրի քաշել ժողովրդին»...

Համբուրելով սուրհանդակներին, մեկին անմիջապես երկխոսք գրությամբ՝ «Գալիս եմ, դիմադրե՛ք», վերադարձնում եմ Գորիս:

Շեփորը ոտքի է հանում մեր վաշտերը:

Յայջիից հաղորդագրում են՝ «Փամփուշտ չունենք»:

«Ռազմամթերքի կարիքը չենք զգալու. անմիջապես շարժվել դեպի Գորիս»,- լինում է պատասխան հրամանը:

Նոյեմբերի 22-ի առավոտյան բազմահազար մի բազմություն, խռնված Խորենու, Շիրինի, Սաքոյի և այլոց եղբայրական գերեզմանի

շուրջը, եկեղեցական զանգերի քաղցր ղողանջների տակ մատուցում է մեզ Գորիսի աղն ու հացը:

Խանդավառություն կա, կա ուրախություն, ուրախություն, արցունք, ժպիտ...

Գորիսը մերն է:

Նահանջող թշնամին՝ անհույս, ռմբակոծում է մեր դիրքերը: Խճուղիով առաջանում եմ դեպի Քարաշեն և տալիս վերջին գրոհի հրամանը: Բարձրանում է հաղթությամբ արբեցած ժողովրդական վաշտերի գոռ ուռռան և լռության դատապարտում թշնամու թնդանոթները: Երեկոյան դեմ կարմիր XI զորաբանակի վերջին զորամասերը հետ էին շպրտված Աբդալլար:

Զանգեզուրը՝ մաքրված թշնամիներից, տոնում էր իր ազատագրումը:

«Հայրենիք» ամսագիր,
թիվ 2, դեկտեմբեր, 1923թ., թիվ 3, 6, հունվար, ապրիլ, 1924թ.:

ԱԶԱՏ ՍՅՈՒՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Մայիսյան ծանոթ դեպքերից հետո այլևս անկարելի էր ապահով համարել Հայաստանի անկախությունը:

1920-ի տխուր Մայիսը՝ սկիզբը մեր անկախության վախճանի՝ եկավ ապացուցելու, որ մեր հանրապետությունը զուրկ էր այն կարևոր ազդակից, առանց որին, այն էլ Արևելքում, որպես անկախ պետություն դժվար է հարատևել: Այդ ազդակը ազգային կարգապահ ու հավատարիմ զորքն է:

Համազգեստը, սպառազինությունը, ինչպես և զորանոցային կյանքը դեռ բավական չեն, որպեսզի զինված զանգվածը արդիական իմաստով համարվի զորք: Այդ արտաքին կճեպից, կեղևից զատ կա հոգեբանական շաղախը, գիտակցական կարգապահությունը, մարտունակությունը, սեղմ ասած՝ ոգին, առանց որին՝ զինված զանգվածը ամեն ինչ է, միայն ո՛չ զորք:

Ուզում եմ ասել, որ՝ *եթե այդ զանգվածի հավաքական հոգու մեջ դրված չեն իր ազգային իդեալները, իր պետության ներկայի կարիքների և ապագայի պահանջների գիտակցությունը, իր ցեղի նվիրական ավանդությունները, իր պատմության բովանդակ փառքն ու հպարտանքը, դա դեռ զորք չէ*: Եվ նա չէ, որ պիտի կարողանա ապահովել քաղաքա-տնտեսական պայմանների այն նվազագույնը, որն անհրաժեշտ է մի ժողովրդի անկախ և կուլտուրական ներուժ կյանքի համար:

Մենք ազգային զորք չունեինք, այլ՝ զորքի նման մի բան, ահա՛ թե ինչո՛ւ հայ ժողովուրդն ունեցավ իր տխուր Մայիսը և թե ինչո՛ւ տաճիկ զորքերը այնքան ազատորեն ու հոխորտանքով մտան մեր երկիրը: Իսկ ազգային զորք չունեցանք, որովհետև մոռացվեց, որ «ծովից առաջ՝ ջուր», բանակ ունենալուց առաջ պետք էր *զինվոր* ունենալ:

* * *

Շատ բաների հետ կարելի է հաշտվել, միայն ո՛չ՝ տաճիկների Հայաստանում ունեցած հաջողության հետ: Նրանք վաղուց կորցրել էին իրենց վաղեմի ռազմունակությունը: Բալկանյան և վերջին համաշխարհային պատերազմը լավագույն ապացույցն են այդ ճշմարտության:* Բալկանյան պատերազմից հետո, բալկանյան երկրներում քաղաքացիական իրավունք էին ստացել հետևյալ դարձվածքները. *թուրքաբար՝ յավաշ-յավաշ, տաճկական խուճապ՝ իսկական ժանտախտ, ինչու՞ սարսափեցիր թուրքի պես՝ գյավո՞ւրն է գալիս, Ստամբուլի ճանապարհը բռնել՝ նահանջել, և այլն.*:

Թուրքերի քաջության առասպելը իրենց բարբարոսության ծնունդն է և ոչ թե իրենց մարտական առաքինությունների: Նրանց անվան ու զենքի սարսափը Արևելքում եղել է ոչ այլ ինչ, եթե ոչ՝ խաղաղ ու անզեն ժողովուրդների կոտորածն ու կողոպուտը: Բարբարոսությունը թուրքերը միշտ էլ ծառայեցրել են որպես ահ ու սարսափ տարածելու միջոց: Դա եղել է և շարունակում է մնալ թուրքերի զինվորական խաբուսիկ հզորության միակ աղբյուրը: Կույր կրոնամոլությունը դեռ ամեն ինչ չէ:

Գիտության ու բարոյականության ուժին անծանոթ տաճիկ զինվորը զուրկ է կրթությունից, որը, որպես ռազմական ազդակ, իր հսկայական նշանակությունն ունի:** Նա վճռական է միայն կռվի առաջին վայրկյաններում: Բայց վա՜յ իրեն, եթե իր առաջին հանդիպումը թշնամու հետ անհաջող անցավ. բուռ հուսահատությունը և կրավորական հնազանդությունը - ահա՛ այնուհետև նրա ճակատագրապաշտ հոգու տերերը: Շատ անգամ, գրեթե առաջին անհաջողությունից հետո, նա դառնում է «ընկած ձի», անընդունակ աքացելու:

Այս է տաճիկ զորքը, և ո՛չ այն, որին երկու անգամ տեսել է Արարատյան Հայաստանը:

Եվ նման զորքը, վերջին անգամ մեզնից թույլ նաև թվական տեսակետից, հաղթության դափնիներ շահեց Հայաստանում: Նա հաղթեց, որովհետև հայկական զորքը, պարտված էր... դեռ պատերազմը չսկսված:

* * *

«Հոկտեմբեր 30-ին ընկավ Կարսը, որտեղ գերմարդկային ճիգերով մեր համախմբած 15 հազարանոց բանակը չկարողացավ պահել այդ աննման ամրոցը: Այժմ կռիվները շարունակվում են Կարսի և Ալեքսանդրապոլի միջև և երկիրը հավաքում է իր բոլոր ուժերը՝ կանգնեց-

---

* Սրանց անատոլյան հաջողությունը ոչ իրենց զենքի, ոչ էլ ռազմավարության պիտի վերագրել: Քեմալական զորքերը, հունական բանակների փոխարեն քամիներ փախցնելով՝ մտան Զմյուռնիա: Զինադուլ հայտարարած հույն զորքերին պարտության մատնելը ամեն ինչ է, միայն ոչ՝ ռազմական հաջողություն: Հույների անհաջողության պատճառները սոսկ հոգեբանական են: Հույն բանակը պարտության մատնեց *մենակության ողբերգությունը*, որ Մեծ Համաձայնության անդամ պետություններից երկուսը իրենց հանցավոր և դավաճան ընթացքով զգալ ու ապրել տվեցին հույն ժողովրդին: Մենության այդ սպանիչ ողբերգության հետ մեր ժողովուրդն էլ է ծանոթ:

** Այն տարածված կարծիքը, թե գերմանացիները 19-րդ դարի իրենց հաջողություններով պարտական են իրենց ուսուցչին, որը փայլուն նախորդներ ուներ հանձին Ֆիխտեի, Գյոթեների և այլոց, մի բացարձակ ճշմարտություն է:

նելու համար թշնամուն: Թեև բարձր տրամադրություն կա կռվելու, սակայն, իրապես չեն կռվում ցանկալի չափով»:

Ահա՛ մի քանի տողեր ՀՀ Դաշնակցության Բյուրոյի՝ ինձ ուղղած մի գրությունից.

«Չեն կռվում»:

Ինչո՞ւ:

- Որովհետև տրամադրություն չկա:

Պատճա՞ռը:

- Որովհետև կռվեցնող չկա:

Ռազմավարություն ասելով՝ ավելի կռվեցնելո՛ւ, քան՝ կռվելու արվեստ պիտի հասկանալ: Կռվեցնե՛լ կարողանալ. ահա՛ հաջողության գաղտնիքներից մեկը:

Զինվորը, կարգապահության ու ենթարկվելու սովոր, մասնավորապես երբ զուրկ է նախաձեռնության ոգուց, ամեն մի քայլ առաջանալիս բաղդատաբար նայում է իր անմիջական ղեկավարների աչքերին, շրթունքներին և սրի ծայրին:

Վա՜յ այն զինվորին ու զորքին, որն իր ղեկավարների աչքերի մեջ բոց, շարժումների մեջ՝ վճռականություն, սրի ծայրին՝ շանթ չի տեսնում. դատապարտվա՛ծ է նա:

Վա՜յ նրան և այն դեպքում, երբ նրա թիկունքում, ժողովրդի մեջ, հաղթելու հավատ և վստահություն չկա, երբ ճակատն ու թիկունքը երկու տարբեր աշխարհներ են, երբ պատերազմող ժողովրդի բովանդակ միտքը, սիրտը, դիրքերը, առաքինությունները չեն գործում կռվի դաշտում. սեղմ ասած՝ երբ թիկունքը հոգեբանորեն չի դադարում այդպիսին լինելուց և չի դառնում ռազմաճակատի շարունակությունը:*

---

* Հիացմունքով եմ վերհիշում Բալկանյան պատերազմը, երբ բուլղար զորքը, շնորհիվ իր անօրինակ խանդավառության, անցնում էր տեսականապես անանցանելի վայրերով, երբ պահեստի զորամասերը հրաժարվում էին մնալ կրավորական վիճակի մեջ, և, առանց հրամանի, նետվում էին թշնամու վրա և վճռում կռվի բախտը, երբ բուլղար հրամանատարությունը, անհնար և անցանկալի համարելով իր զորամասերի տարերային խոյանքների զսպումը, հրաժարվում էր մեթոդիկ կռիվներ վարելուց, երբ կարիքի դեպքում, բուլղար զինվորը գիտեր փոխարինել իր սպաներին, վերջապես, երբ զորամասերի քաջությունը այն աստիճան հավաքական էր լինում, որ հրամանատարությունը դժվարանում էր անձնական քաջության մասին հիշատակել իր հաղորդագրությունների մեջ:

Եվ գիտե՞ք, թե ինչո՞ւմն էր բուլղար ժողովրդի այդ զարմանալի հաջողությունների գաղտնիքը: Ահա՛ պրոֆեսոր Շիշմանովի պատասխանը. «1877-ը չազատագրեց համայն բուլղարությունը, բայց լցրեց մեր սրտերը հայրենասիրությամբ: Մեր անկախության առաջին օրվանից իսկ, մեր պետական և հասարակական գործիչները գիտակցեցին, որ մեր ազգային իդեալներին հասնելու

1920-ի վերջերին քեմալական զորքը, զինված ու զգեստավորված Մոսկվայի միջոցներով, բոլշևիկյան բարձր հրամանատարության ցանկությամբ, Հայաստանի Հանրապետության զինվորական բովանդակ ուժերը քաշում է և զբաղեցնում Սարիղամիշ-Կարս ռազմաճակատի վրա: Խորհրդային մի աննշան զորամաս, առանց կռվի և դիմադրության, մտնում է Երևան: 1920թ. Դեկտեմբերի 2-ին Հայաստանը, կրճատված մինչև Արփաչայ, հայտարարվում է խորհրդային:

Այդ առթիվ, անշուշտ, ապագա պատմաբանը կասի անեծքով.

«*Պետք էր խնայել հայ ժողովրդին իր լեռները, իր մտավորականությունը և իր մարտական տարրերը, որպեսզի հնարավորություն ունենար վարելու իր դժվարին ինքնապաշտպանությունը տխուր Արևելքում: Բայց բարբարոս համիսլամականության հետ դաշնակցող ռուսական բոլշևիզմին պետք էր շահել մուսուլման մասսաների համակրանքը. ահա՛ թե ինչո՛ւ պետք էր Մոսկվայի և Անգորայի Մերձավոր Արևելյան նպատակների ճանապարհին ընկած Հայաստան երկիրը վերածել դիակների կամուրջի՝ սև ու կարմիր զինակիցների միջև...*»:

Այո՛, ռուսական «հեղափոխությունը» մահմեդականության աչքին քաղցրացնելու նպատակով, տաճիկներին նվիրաբերեցին մեր արյունաներկ երկրի մեծագույն մասը: Դա ճիշտ է այնպես, ինչպես ճիշտ է այն, որ Չիչերինը մինչև վերջ խաբեց մեզ՝ հավատացնելով, թե կարմիր զորքը նպատակ չունի Հայաստան մտնելու:

Իզուր են Հայաստանի խորհրդային վարիչները դեռ շարունակում պնդել, թե տաճիկներն իրենց Հայաստան քաշեցին և ո՛չ թե իրենք տաճիկներին, թե՝ բոլշևիկյան զորքը միջամտեց տաճկական առաջխաղացումը դադարեցնելու նպատակով, և այլն:

Ո՛չ, տաճիկներին Հայաստան մտցրեց Մոսկվան. ահա՛ ճշմարտությունը, որը պիտի չկարողանա սպանել խորհրդային կացինը:

Մոսկվայի արևմտյան քաղաքականության ձախողումից հետո, երբ «կոմունիստական հեղափոխության ուշադրությունը ուղղվեց դեպի Արևելք», Հայաստանի խորհրդայնացում, գրավումը դարձավ անհրաժեշտություն: Ահա՛ վրան բաց մի խոստովանություն այդ մասին. «*Խորհրդայինը, որպես պաշտպան կեղեքվող ազգերի, պետք է պաշտպանի և պաշտպանելու է Տաճկաստանի ազատագրական շարժումը: Դրա համար էլ, Խորհրդային Ռուսաստանը պետք է ունենա մշտական և անմիջական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է*»:*

համար՝ անհրաժեշտ են երկու բան. ազգային արդիական զորք և ազգային լայն կրթություն»:

* «Զանգեզուրի Կոմունիստ», թիվ 2, 1920թ., 20 Նոյեմբեր:

Հայաստանի գրավումը անհրաժեշտ էր և հետևյալ նկատառումներով: Բաքուն գրավողը չէր կարող չառաջանալ դեպի Հայաստան ու Վրաստան: Բաքուն իր ձեռքին պահելու անհրաժեշտությունը պիտի թելադրեր խորհրդային հրամանատարությանը՝ իր ձեռքին ունենալու նաև Երևանն ու Թիֆլիսը: Ահա՛ թե ինչո՛ւ 11-րդ Կարմիր բանակը չէր կարող բավականանալ Ադրբեջանով և չէր կարող նստած մնալ Բաքվում:

Ասածներիս փոխարեն, կարելի էր, առանց ավելորդ մեկնաբանությունների,՝ մեջ բերել միայն մի հատիկ փաստաթուղթ՝ խորհրդային 28-րդ հետևակ դիվիզիայի պարտությամբ մեր ձեռքն անցած քարտեզը,** ապացուցելու համար, թե բոլշևիկյան բարձր հրամանատարությունը Հայաստանը գրավելու նպատակով նախապատրաստական աշխատանքներ էր թափել տաճկական արշավանքից առաջ:

ԱՇՈՏԻ ՄԱՀԸ

Առաքյալ և դերվիշ - ահա՛ մեր կրտսեր Գողթանցին՝ մեկն այն եզակի նահատակներից, որոնք ամենից քիչ իրենց կուսակցության, ամենից շատ իրենց ազգին, ամբողջապես պատմությանն են պատկանում: Մի կրոն ուներ՝ ժողովրդասիրությունը, մի Աստված՝ հայ ժողովուրդը: Նա ազատ էր կրկնելու մեծ լեհացու խոսքերը. «*Ես և հայրենիքս նույնն ենք*»: Հին հռոմյացի էր նա, ծնված մեր դարում, Հայաստանի մեջ: Անձնվիրություն, անշահասիրություն - ահա՛ առաքինություններ, որոնք ավելի արժեքավորում էին երկրպագության հասնող նրա բարձր ժողովրդասիրությունը և ավելի քան հմայիչ դարձնում նրա զորեղ անհատականությունը: Հնարավորություն ուներ հարուստ լինելու, բայց ապրում էր աղքատ: Թույլերի հետ հեզ էր, ուժեղների հետ՝ հպարտ: Գիտեր խարազանել, և անխնա էր: Սիրում էր և գիտեր անգիտանալ վտանգը: Միշտ շարժման մեջ, ժողովրդի հետ էր միշտ:

Եվ մարդս, եթե հրեշ չէր, չէր կարող տեսնել ժողովրդի այդ իդեալիստ վշտակրին և չմատնանշել հիացմունքով. «*Ահա՛ մարդը*»:

* * *

Աշոտին էր վիճակված Հայաստանի անկման առաջին գուժկանը լինելու: Նա Երևան էր անցել Սյունիքի բարձրունքներում կռվողներիս համար թնդանոթ և ռազմամթերք մուրալու: Նա ստիպված էր եղել շատ դռներ բախել, մինչև որ բոլշևիկները մտել էին Հայաստանի մայրաքաղաքը և... և ամեն ինչ, և՛ թնդանոթ, և՛ ռազմամթերք, և՛ հաց, ամեն ինչ հանձվում էր թշնամուն, որպեսզի վերջինը, օրեր անց, զգեստավորված, զինված ու կշտացած Հայաստանում, շարժվեր աշխարհից կտրված, կիսաքաղց ու կիսամերկ Սյունիքի դեմ: Մարդկային ապերախտությունից գազազած, Աշոտը Հայաստանի խորհրդայնացման երկրորդ օրը թողնում է Երևանը: Ճանապարհին՝ դեպի Զանգեզուր՝ վտանգվում են իր թոքերը: Գորիսում պառկում է թոքերի բորբոքում ստանալով, և, երրորդ օրը, ատրճանակի երեք հարվածով վերջ է դնում իր բեղմնավոր կյանքին, թողնելով մի արնոտ երկտող...[17]

ԿԱՐՄԻՐՆԵՐԸ ՀԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

Ամբողջ վեց ամիս տևող բոլշևիկյան զորքերի փորձերը՝ զենքի ուժով ընկճելու Զանգեզուրը, պսակվել էին կատարյալ պարտությամբ: «Կարմիր զրահապատ բռունցքը» խորտակելու տեղ, խորտակվել էին: 11-րդ զորաբանակի տխուր մնացորդները, բարոյալքված ու անմարտունակ, վճռել էին այլևս չանցնել Զաբուղ գետը:

Անդրկովկասի խորհրդային հրամանատարության համար գաղտնիք չէր այդ: Վերջինը, գիտակցելով, որ այլևս զորքը և զենքը չէ, որ պիտի տեր դառնա ապստամբ Սյունիքին, Նոյեմբեր 23-ին դիմում է ինձ հետևյալ գրությամբ:

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԳԱՎԱՌԻ ԱՊՍՏԱՄԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆԸ.

«Ռուսական կարմիր բանակը, գտնվելով Զանգեզուրում, երբեք հետամուտ չի եղել նվաճման դիմելու կամ բռնագրավումներ կատարելու, նամանավանդ նա երբեք իրեն չի համարել Հայաստանի հետ պատերազմական դրության մեջ: Կարմիր բանակին քաջ հայտնի է, որ Զանգեզուրի ժողովրդի ապստամբությունն իր դեմ հետևանք է ծեր հերյուրած ու ոճրագործ պրոպագանդայի, որ իբր թե դա Կարմիր բանակը չէ, այլ՝ Ադրբեջանի վարձկաններն են և այդպիսի ուրիշ շատ տեսակ հերյուրանքներ: Կարմիր բանակին նույնպես հայտնի չէ, որ Զանգեզուրի ժողովրդի մեծամասնությունն ապստամբել է իր դեմ ինքնաբերաբար, այլ ի դեմս Հայաստանից եկած կանոնավոր զորամասերի՝ ծեր զանազան տեսակի սպառնալիքների ազդեցության տակ:

Այդ հիման վրա, առաջարկում եմ.

Քառասունութ ժամվա ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած մեր հիվանդ ու վիրավոր և Հոկտեմբերի 15-ի կռիվներում գերված զինվորներին, Գորիսում մնացած բոլոր գույքն ու ռազմամթերքը. հիշյալ ժամանակամիջոցում հեռացնել Զանգեզուրից կանոնավոր

** Դժբախտաբար, տեխնիկական պատճառներով անկարող ենք տպել այդ քարտեզը, որ տրամադրված է մեզ: *(խմբ. ծանոթ. «Հայրենիք» ամսագրի):*

զորամասերը, [*] *իսկ ապստամբ ժողովրդին տեղավորել իր բնակավայրերում: Միաժամանակ հայտարարում եմ, որ ապստամբների կայքի ու գույքի ապահովությունը, անձի անձեռնմխելիությունը երաշխավորվում է այն պայմանով միայն, եթե նրանք կհանձնեն իրենց ունեցած զենքերը ու զինամթերքը: Հակառակ պարագայում, ռուսական սովետական կառավարությունը կհրաժարվի Հայաստանի և տաճկական հեղափոխական զորքերի միջև կնքվող հաշտության միջնորդությունից: Սպասում եմ պատասխանի մինչև 24 ժամ:*

28-րդ հրացանաձիգ դիվիզիայի զինվորական կոմիսար՝
ՆԵՍՏԵՐՈՎՍԿԻ»:

Կարմիրներին, որպես պատասխան իրենց վերջնագրին, ուղղել եմ հետևյալը, որը պիտի մնա խորհրդային զորքերի այդ օրերի անլուր ենիչերությունների ճշգրտապատում պատմությունը.

«Զանգեզուրի ապստամբական հրամանատարությունն ընդունում է ձեր առաջարկությունը՝ հաշտության բանակցություններ սկսելու համար, բայց ոչ Ջաբուղ գյուղում, այլ՝ Գորիսում, որտեղ և առաջարկում է ուղարկել ձեր լիազոր ներկայացուցիչներին:

Օգտվելով առիթից, ավելացնում եմ.

Դուք ձեր անթիվ ու անհամար թերթերում, թռուցիկներում, ինչպես և ձեր՝ ինձ ուղարկած վերջին երկու գրությունների մեջ Զանգեզուրի աշխատավոր մասսաների ապստամբության և ձեր անհաջողության պատճառը համարում էք Զանգեզուրի ապստամբական հրամանատարությունը:

Ինչպիսի՜ ինքնախաբեություն:

Արյան ու երկաթի սիստեմը, որով դուք կառավարել եք ու շարունակում եք կառավարել ժողովուրդը, հեղափոխական դեմոկրատիայի ու պատմության կողմից վաղուց ի վեր թքված ու դատապարտված այդ սիստեմը ձեզ շատ հեռուն, բնական է, տանել չէր կարող:

Խոսեմ կոնկրետաբար:

Դափանին տիրելու համար դուք ավանգարդ ունենալով դարեր շարունակ հայի արյուն քրտինքով ապրող հետադիմական թրքությունը, հրի ու սրի եք մատնում շրջանիս գյուղերից ամենաբարեկեցիկը՝ Ջեյվան, և ձեր այդ վանդալական ակտը համարում հեղափոխական:

Դուք կրկնում եք ձեր հարձակումները Արծևանիկի վրա և ձեր սանձարձակ արարքներով, կին ու երեխաների կոտորածով ու բռնաբարումներով մեզ հիշեցնել եք տալիս տխրահռչակ ենիչերիների ձեռքով կատարված բարբարոսությունները:

[*] Որոնք գոյություն չունեն Զանգեզուրում (ծանոթ. հեղ.):

Դուք քառասուն օր շարունակ ռմբակոծում եք Շիվանի Ձորը, և երբ երկու հայ դավաճանների դավադրությամբ ձեզ հաջողվում է մտնել այդ չարաբախտ գյուղը, դուք այնտեղ քարը քարի վրա չեք թողնում: Տեղի են ունենում սովորական սպանություններ, կին ու աղջիկների բռնաբարում, ալան-թալան և նման ենիչերիական ակտեր:

Ես հրամայել եմ հավաքել ձեր թնդանոթներից, ռմբաձիգներից ու գնդացիրներից այս գյուղի գլխին թափած ամբողջ երկաթն ու արծիթը և նրանից, Արաքսի ափին, մի բարձր սարի վրա, կանգնեցնել մի տխուր կոթող՝ այս սեղմ արձանագրությամբ»՝

«Նրանց անունը կարմիր էր, գործերը սև: Թող հավերժ անիծված լինեն նրանք»:

Դուք տաճիկ ասկյարներով պաշարում եք Յայջին, տեղահանում ժողովրդին և թալանում: Պանիկայի մատնված ժողովրդի մասը կոտորվում է գյուղի պատերի տակ, մի մասը թափվում գետը, խեղդվում, իսկ ազատվածները, գյուղի վերագրավումից հետո, անիծելով իրենց օրն ու արևը, մերկ ու քաղցած, գալիս ու ծվարում են իրենց ավերված տներում:

Եվ այդ բոլորից հետո, դուք միամտորեն զայրանում ու զարմանում եք և առանց խղճի խայթի շարունակում եք ճառել աշխատավորության շահերից:

Սիա՛ ինչո՛ւ և ինչպե՛ս աշխատավոր գյուղացիության զգվանքն ու թշնամանքը շահեցիք և ստիպեցիք նրան՝ անպատիվ կյանքին գերադասել պատվավոր մահը:

Այլևս գաղտնիք չէ աշխարհի համար, որ ձեր դրոշակի տակ գործում են Արևելքի անեծքն ու ամոթը կազմող օսմանյան ջարդարար ու հայակեր փաշաները:

Տաճկահայաստանի վեց վիլայեթներում մահվան թագավորություն ստեղծող (ութ հարյուր հազար անթաղ մեռելներ...) հռչակավոր էնվեր ու Խալիլ մարդակերներն այսօր ձեր քաղաքական և զինվորական խորհրդատուներն են հանդիսանում:

Դուք, հանուն ձեր ուտոպիստական ցնորքների, չվարանեցիք Քեմալի հայաջինջ հորդաները Հայաստան քաշելու և նրանց սրին ու սվինին մատնելու հայ աշխատավորության ֆիզիկական գոյությունն ու նրա դարավոր քրտինքի արգասիքը:

Ու այդ բոլորից հետո դեռ ձեզ զարմացնում է հայ մասսաների ապստամբությունը:

Օսմանյան հետադիմական փաշաներն ու սոցիալիզմը.

Արևելքի բորենիներն ու հեղափոխական աշխատավորությունը.

Ի՜նչ անհեթեթություն, ի՜նչ պղծանք ու հայհոյանք սոցիալիզմի ու հեղափոխության հասցեին:

Պատմությունը, անկաշառ պատմությունն իր խոսքը, իր անեծքի խոսքն ունի ասելու նրանց, որոնք հանուն իրենց քաղաքական ու ռազմագիտական նպատակների՝ պրոֆանացիայի ենթարկեցին մարդկության տառապող մասի կրոնը հանդիսացող սրբազան սոցիալիզմը:

Դուք գիտեք, որ Ղարաբաղի գյուղացիության ամեն մի շունչն ամբողջ տարվա համար ունի մի փթից մի քիչ ավելի հացահատիկ, իսկ զանգեզուրցին՝ մոտ մեկ ու կես փութ: Դուք գիտեիք այդ, կա վիճակագրություն: Գիտեք և այն, որ երկու ամսից հետո սովն ու տիֆն այդ դժբախտ գյուղացիության մեջ կունենան առատ հունձ: Այդ գիտենալով հանդերձ, դուք շարունակում էիք նոր ուժեր քաշել Զանգեզուր:

Ձեր տրանսպորտն ուժեղացնելու նպատակով դուք վերջին գրաստը խլեցիք հայ աշխատավորներից: Գորիսի պատերի տակ ու ճանապարհների վրա թափթփված հազարավոր բեռնակիր անասունների լեշերը շատ բան են ասում ձեր դաժան անմարդասիրության մասին:

Սակայն միայն տնտեսական քայքայումով չէք բավականացել դուք: Սոցիալապես քայքայել եք ու գլխատել Զանգեզուրի բոլոր հասարակությունները:

Ով ձեր շարքերում չի եղել, դուք նրան ձեր թշնամին եք համարել ու ոչնչացրել:Զաբուղի սպանդանոցն ու Գորիսի բարթողիմեոսյան գիշերները դեռ չեն մոռացվել: Ես տեսա ձեր ստեղծած գերեզմանաբլուրներն ու ձեր զոհերից շատ ձեզ համար ցավեցի:

Եվ հենց ձեր այդ խելագար ու զանգվածային ահաբեկչությունը, ձեր ահաբեկչության հունձը մեծապես արագացրեց ձեր պարտությունը: Դա ճշմարտություն է, ընդունեցե՛ք:

Դուք վաղուց եք թքել բոլոր տեսակի բարոյական սկզբունքների ու հասկացությունների վրա:

Ձեզ համար չկա՛ սրբություն:

Ձեր չեկերի դեզերը, ձեր պոսիզմը, կաշառման համակարգը, ձեր առանձին պոստերը, որոնց առաջ նստեմանում են ցարական բոլոր տեսակի ժանդարմական վարչություններն ու օխրանկաները, ձեր հարուցած կատաղի հալածանքն ազատ խոսքի ու մտքի դեմ, ձեր արծճի և սվինի լեզուն, որ ժողովուրդը չուզեց հասկանալ, ձեր լրտեսությունը, ձեր չրեզվըչայկանները,[18] ձեր խորհրդավոր սպանություններն ու հարյուրներով պատանդ վերցնելու խայտառակ սիստեմը, ձեր քաղաքական անհամբերությունն ու աղանդավորությունը - ահա՛ ձեր պարտության պատճառները: Ընդունեցե՛ք,- դա էլ է ճշմարտություն:

Ձեր նվաճած վայրերում դուք զինեցիք հասարակության տականքները և նրանցով, նախկին ժանդարմներով, լրտեսներով, գրպանահատներով, գողերով, ավազակներով, շանտաժիստներով ու նման քրեական տիպերով խտացրիք ձեր շարքերը:

Դուք անվերջ խոսում եք, գրում հայ և թուրք աշխատավորության համերաշխության ու եղբայրության մասին, և, միաժամանակ, շատ տեղերում թուրք աշխատավորությունը հանում հայերի դեմ, նրանց ձեռքով թափում հայի արյունը, ավերում հայ գյուղերն և այսպիսով ավելի խորացնում ազգային թշնամանքը:

Դուք հաշտություն եք առաջարկում ինձ, իսկ Ադրբեջանի 70 ինժիներներն ու տեխնիկները Հոկտեմբերի հինգից սկսած աշխատում են Ջիբրայիլի գավառում, որպեսզի Զանգեզուրի լեռնային մասերը թնդանոթներ տեղափոխելու հնարավորություն ստեղծեն:

Դուք զինաթափել եք հայ աշխատավորությանն ու շարունակում եք այդ տխուր գործը, երբ մինչև ատամները զինված մուսավաթական Ադրբեջանը հարմար առիթի է սպասում Զանգեզուրն առանց հայի թողնելու:

Ձեզ՝ խաբվածներիդ համար, Ադրբեջանը սովետական է, իսկ հայ աշխատավորության համար՝ դա մնում է նույն հետադիմական հայահալած մուսավաթական «հանրապետությունը», որի դիվիզիաները՝ դեռ տարին չի լրացել, ինչ փորձեցին Զանգեզուրը հրի ու սրի մատնել, սակայն, ջարդվելով Զաբուղում՝ հետ քաշվեցին:

Լսե՛ք և այս ճշմարտությունը:

Մեր ձեռքն են ընկել մի շարք փաստաթղթեր, որոնք այլ բան են ասում Ադրբեջանի մասին:

Թվում է, որ այժմ քիչ բան չի պարզված և ձեր լիազոր ներկայացուցիչ Լեգրանի համար:

Մոսկվան և դուք, բոլորդ խաբված եք քեմալիստներից: Այդ բանը, ըստ իմ ունեցած տեղեկությունների, արդեն պարզված է և՛ Մոսկվայի, և՛ Լեգրանի համար:

Հեղափոխական լոզունգներով՝ Քեմալն ու ընկերությունը քողարկել են իրենց պանիսլամական ամենահետադիմական նպատակները:

Պանիսլամիստների, որոնք շատ են ձեր դրոշակի տակ, նպատակն է միանալ Ադրբեջանի հետ, տիրել Բաքվին, կապվել Դաղստանի հետ և քշել ռուսներին հյուսիսային Կովկասից»:

ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՀՎԱՆ ԴԱՏԱՎՃԻՌԸ

«Լավագույն ընկերների սպանության համար կարմիր բանակը կհատուցի բնաջնջելով Դաշնակցական ամբողջ հակահեղափոխությունը»:[*]

---

[*] «Կարմիր Ավանգարդ», թիվ 56, 30 Հոկտեմբեր 1920:

Ահա՛ այն արնոտ դատավճիռը, որի հաջող գործադրության դեպքում հայ ժողովուրդը պիտի գլխատվեր, պիտի մեռներ կուլտուրապես: «Գլխովին» ոչնչացնել Հ. Յ. Դաշնակցությունը, որ ասել է՝ հայ մտավորականության մեծագույն մասը և նրա մարտական բոլոր տարրերը:

Ինչո՞վ հրեշություն չէ հակապետական ձեռնարկությունների ժամանակ սպանված երկու-երեք կուսակիցների համար ոչնչացնել մի ամբողջ ժողովրդի ուղեղն ու սիրտը, սպանել մի ժողովուրդ:

Սակայն, ինչո՞վ բացատրել կարմիրների տածած անհաշտ թշնամանքը դեպի մտավորականությունը, նրանց կուլտուրական նիհիլիզմը: Ինչո՞ւ բարբարոսաբար հալածել ու ոչնչացնել մտավորականությունը:

- Որովհետև նրանք իբրև թե հակահեղափոխական են:

Խորհրդային իշխանությունն էլ գիտեր, որ հանցանք է, ոճիր՝ ամեն մի մտավորականի «հակահեղափոխական» և «խափանարար» հռչակել և հանձնել Չեկա[19] կոչված գազանին: Բայց քաջ գիտեր և՛ այն, որ անգլուխ և անղեկավար զանգվածներն ավելի հեշտ են կառավարվում:

ԻՆՔՆԱՎԱՐ ՍՅՈՒՆԻՔ

Տաճիկ զորքը, գրավելով Ալեքսանդրապոլն ու Սուրմալուի գավառը, առաջացել էր մինչև Շարուր:

Ադրբեջանը շարունակում էր իր նվաճողական քաղաքականությունը Զանգեզուրի նկատմամբ: Իսկ խորհրդային իշխանությունը, ծանոթ պատճառներով, կայացրել էր հայ մտավորականության մահվան դատավճիռը: Ասել է՝ վտանգված էին մեր ժողովրդի տարածքը և նրա մտավոր ու բարոյական արժեքները:

Որպես հուսո և փրկության միակ խարիսխ, մնում էր մարտնչող Զանգեզուրը: Նա տեղի չէր տալիս և չէր կարող տեղի տալ, քանի դեռ տաճիկ զորքերը չէին հեռացել գոնե Ալեքսանդրապոլից և Շարուրից, քանի դեռ Զանգեզուրը չէր ճանաչված Հայաստանի անբաժան մասը և, ամենաէականը, քանի դեռ հայ մտավորականությունը գտնվում էր կարմիր կացնի սարսափի տակ:

Արարատյան Հայաստանի անկումով, Զանգեզուրը ճիշտ է, որ դադարել էր ինձ համար ինքնանպատակ լինելուց: Նա այլևս նպատակ չէր, այլ՝ միջոց: Ապահովելով մեր լեռնահայության ֆիզիկական գոյությունը սովետ-պանիսլամական վտանգից, վճռված էր փրկել Հայաստանի հողը մահացու անդամահատությունից, իսկ հայ մտավորականությունը՝ գլխովին ոչնչացումից:

Ահա՛ թե ինչո՛ւ պետք եղավ, ներքուստ ավելի ևս ամրացնելու նպատակով Զանգեզուրը, 1920թ. 25 Դեկտեմբերին, Տաթևի առաջին համագումարի միջոցով հայտարարել *Ինքնավար Սյունիք*:

ՄԻ ԴԱՌՆ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅՈՒՆ

Ո՛չ ոք բոլշևիկների չափ ազատորեն չի օգտվել այն բարոյազուրկ սկզբունքից, որն ասում է. «Նպատակն արդարացնում է միջոցները»:

Խորհրդային իշխանությունը, դառնորեն խոստովանելով, որ իմ գնդերը անպարտելի են, և հույս չունենալով իր զորամասերի վրա, Անդրկովկասում գործող իր 11-րդ զորաբանակին «կռվի նոր միջոց» է առաջարկում:

Թող փորձի ընթերցողը, եթե կարող է, առանց ամոթի կարդալ «*Կարմիր Ավանգարդ*»-ի հետևյալ տողերը.

«Կարմիր բանակի հանդեպ խորամանկ և համառ թշնամին՝ Նժդեհը, Դրոն և այլ հին գայլերը լավ գիտեն զինվորական գործը: Ուստի, այդ ապստամբների դեմ անհրաժեշտ է մեծ ուժ՝ ջարդելու համար սրանց հրոսակախմբերը: *Միևնույն ժամանակ չպիտի մոռանանք, որ ապստամբների հաջողությունը մեծապես կախված է ազգաբնակության տրամադրությունից: Ահա՛ թե ինչո՛ւ կարմիր բանակը պիտի ծգտի թշնամու կենդանի ուժերը ջարդելուց զատ, ժողովրդին էլ ըմբոստացնել, թշնամացնել ապստամբության ղեկավարների դեմ*»:*

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆ

Խորհրդային իշխանության ընթացքը այլևս վստահության տեղ չէր թողել: Նրան հավատալ չէր լինում և չէր կարելի: Ահա՛ թե ինչո՛ւ:

Բաքու մտնելուն պես նա Ադրբեջանի մաս է հայտարարում ո՛չ միայն Ղարաբաղը, այլև՝ Զանգեզուրը, Գողթանն ու Նախիջևանը: Իսկ հինգ ամիս անցած, երբ պետք էր խաբեպատիր խոստումներով կաշառել հայ զանգվածները, իր թիվ 8 դեկրետով Ղարաբաղը, Զանգեզուրը, ինչպես և Նախիջևանը նա հայտարարում է Հայաստանի անբաժան մասը: Բայց Հայաստանում տեղավորվելուց և ամրանալուց հետո Ղարաբաղը կցում է Ադրբեջանին, իսկ Նախիջևանը հայտարարում առանձին «հանրապետություն»՝ Ադրբեջանի հովանավորության տակ:

Իմ հավատը պակաս չափով չէին խախտել հետևյալ տխուր փաստերը.

---

* Տե՛ս «Կարմիր Ավանգարդ», թիվ 52, 30 Հոկտեմբեր 1920:

1920թ. Դեկտեմբերի 2-ին լույս է տեսնում, Դրոյի և Ավիսի ստորագրությամբ, թիվ 4 հրամանը՝ ուղղված Հայաստանի զորքերին: Այդ հրամանով հայտարարվում էին Հայաստանի զորքերի վերակազմության հիմունքները:

Դրոն նշանակվել էր հրամանատար խորհրդային զորքերի: Սպայությունը մնում էր իր պաշտոնում, իր տեղը: Քաղաքական հակառակորդներից ո՛չ ոք պիտի չհալածվեր: Պատասխանատու պաշտոններ էին տրված նաև երկու ոչ բոլշևիկների, և այլն...

Ըստ երևույթին, կարծես, լավ էր: Բայց ընդամենը մի քանի օր անց, խորհրդային իշխանությունը սկսում է ցույց տալ իր մագիլները, իր իսկական գույնը: Նա անսպասելիորեն երևան է հրավիրում սպայությունը, զինաթափում և քշում Ռուսաստանի խորքերը, որպես «հակահեղափոխական» տարր: Մի քանի օր անց միևնույն ճակատագրին է արժանանում նաև Դրոն: Ի լրումն այդ բոլորի, պաշտոնազրկում են երկու ոչբոլշևիկ պաշտոնյաները և... սկսվում է չեկայավարությունը:[20]

Ահա՛ Հայաստանի Հեղկոմի գործելակերպը, որ ուրիշ բան չէր, բայց եթե բացասումն ամենատարրական քաղաքական շիտակության, որը անարժեք էր դարձնում նրա բոլոր խոստումները, դեկրետներն ու պայմանագրերը:

Ահա՛ թե ինչո՛ւ ես շարունակում էի մնալ չափազանց վերապահ և զգույշ:

Ես շոշափելի փաստեր էի պահանջում: Հանգերգի պես ես կրկնում էի շարունակ. «*Փաստերո՛վ ապացուցեք ձեր բարյացակամությունը*»: Իսկ կարմիրները, ինձ գործով համոզելու փոխարեն, շարունակում էին անվերջ դիմումներ անել և պատվիրակություններ ուղարկել ինձ մոտ: Ես դժվարանում էի հավատ ընծայել բոլշևիկյան իշխանության և շարունակում էի նրա առաջ փակ պահել Սյունիքի դռները:

* * *

1920թ. Հունվարի առաջին օրերին,[21] Բաքվից, 11-րդ բանակի հրամանատարության և Դրոյի կողմից Սյունիք է հասնում խորհրդային մի պատվիրակություն՝ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ:

Նա բերել էր հետևյալ առաջարկությունները.

Սյունիքը հայտարարել խորհրդային,

Դադարեցնել ապստամբական կռիվները Ղարաբաղում, և

3. Ընդունել 11-րդ խորհրդային զորաբանակի հրամանատարությունը, իհարկե, եթե ցանկայի:

- Սպասում եմ, որ խորհրդային իշխանությունը գործով ապացուցի, թե մտադիր չէ Ռուսաստանը կրկնելու Հայաստանում, եղավ իմ պատասխանը:

Պատվիրակությունը մնաց ինձ մոտ, Գորիսում, ամբողջ երեք օր: Օգտվելով առիթից, Գրիգոր Վարդանյանին, որպես «աջ համայնավարի» և «հին հայ ուսուցչի», իր իսկ պատրաստած Հայաստանի քարտեզի վրա ծանոթացնում եմ մեր լեռնաշխարհի բնական ամրությունների և սրանց նշանակության հետ, ապացուցելով, որ առանց Սյունիքին և Արցախին, ինչ ցուցանակ էլ որ կրելու լինի Հայաստանը, գոյություն ունենալ չի՛ կարող:

Ընդունելով ասածներիս ճշմարտությունը, Բաքվի հայ պատգամավորը ասում է.

- Այլևս ռուսները մենակ պիտի չթողնեն հայ ժողովրդին Արևելքում, կարող եք վստահ լինել:

- Եթե այդ երանելի հավատն ունենայի, առաջինը ե՛ս պիտի պահանջեի, որ մեր ժողովուրդը իր զենքերը արորի և մանգաղի վերածեր:

- Ապագան կոմունիզմին է. վաղ թե ուշ՝ բոլշևիզմի հաղթական ալիքը պիտի հեղեղի հին աշխարհը. արդեն, անշուշտ կարդում եք, գիտեք, որ մի շարք երկրներում տեղի են ունենում սոցիալիստական պոռթկումներ...

- Չեմ կասկածում, որ վաղ թե ուշ պիտի հաղթանակի սոցիալիզմը. բայց վախենում եմ, որ այդ «վաղ թե ուշ»-ի ընթացքում հայ ժողովուրդը դիակների կամրջի վերածվի Արևելքի և Արևմուտքի մահմեդականության միջև: Դուք ընդունում եք, թե բավական էր, որ Բաքվի ձեր խորհրդաժողովում Զինովևը մի անգամ սեղմեր էնվեր ու Խալիլ փաշաների ձեռքերը, որ վերջինները անմիջապես «ընկեր» և մարդ դառնային: Մոտիկ անցյալից խրատված, մենք տաճիկ փաշաների և նրանց հավաքական ծնողի մասին այլ կարծիք ունեինք: Ահա՛ թե ինչո՛ւ կուզեինք, որ մասնավորապես հայազգի բոլշևիկներդ՝ հանուն մեր ցեղի ֆիզիկական գոյության պաշտպանության, բուրժուական հիմարություններ չհամարեինք և չոչնչացնեինք մեր ժողովրդի այն բոլոր կուլտուրական և բարոյական արժեքները, որոնց շնորհիվ նա ապրել է ցայսօր:

- Մոտ քսան տարի, որպես ուսուցիչ, մեր մատաղ սերունդին այդ արժեքների մասին եմ ասել, խոսել և գիտեմ նրանց արժեքը: Բայց գիտեմ և այն, որ ռուս հեղափոխության բերած նոր արժեքները նվազ չափով պիտի չապահովեն հայ ժողովրդի գոյությունը:

- Չափազանց կույր, նեղմիտ, ցնորական և դավանամոլ է ռուս հեղափոխությունը, Պր. Վարդանյա՛ն: Ահա՛ թե ինչո՛ւ չի կարելի ձեր սվիններին վստահել:

- Դուք չափազանց տատանվող եք երևում: Կարմիր բանակն այլ կարծիք ունի ձեր մասին: Այդ չի՛ սազում ձեզ, ընկե՛ր Նժդեհ: Եղե՛ք

վճռական, ընդունե՛ք Կարմիր բանակի հրամանատարությունը և շարժվեք առաջ՝ դեպի Պարսկաստան և հեռուները:

Խորհրդային պատվիրակի այդ խոսքերը ստիպեցին ինձ ծիծաղել: Ծիծաղեց և խոսակիցս ու, այսպիսով, վերջացավ մեր առաջին օրվա փոխասացությունը:

Երրորդ օրը, երեկոյան դեմ, կարմիր պատվիրակությունը մեկնեց Բաքու:

- Ուրե՞մն,- բաժանվելիս, վերջին անգամ խոսք բացեց Վարդանյանը:

- Ի՞ուրեմն, հայ մտավորականությունն արձակվում է բանտերից, Սյունիքը և Ղարաբաղը կցվում են Հայաստանին, թուրքերը քաշվում են գոնե Շարուրից և Ալեքսանդրապոլից, որից հետո ես անցնում եմ արտասահման, բանալով խորհրդային իշխանության առաջ մեր լեռնաշխարհի դռները:

* * *

1921թ. Հունվար 24-ին ստացվում է Շուշի քաղաքի և նրա շրջակայքի կայազորի պետ Վայցեխովսկու մի պաշտոնագիրը, որի համառոտությունն այս է.

«*Անհրաժեշտ է վերջ դնել բոլոր ապստամբություններին և վերահաստատել կապը մեզ հետ: Եթե ցանկանում եք ունենալ բարեկամական հարաբերություններ և կապ մեզ հետ՝ հայտնե՛ք գրաբերովս: Շուշի-Գորիսյան հեռագրային կապը կարող եմ վերականգնել տալ*»:

Նույնիմաստ մի գրություն էլ, երկու օր անց, ստանում եմ 84-րդ բրիգադայի հրամանատար Սեմյոնովից, որի մի հատվածն այս է.

«*Կարմիր բանակը, մտնելով Հայաստան, պաշտպան է հանդիսանում ճնշված հայ ժողովրդին: Սակայն, համաշխարհային կապիտալիզմն այստեղ ևս ցուցադրել էր իր հափշտակիչ դիտավորություններն և արգելք հանդիսացել այն ընթացքին, որը պատմականորեն պիտի կատարվի: Հայաստանի տարաբախտ որդուն բարեկամաբար պարզած մեր ձեռքը մնաց օդի մեջ կախված... Առաջարկում եմ դադարեցնել ամեն տեսակի ռազմական գործողություններ, կապ հաստատել մեզ հետ և փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու...*»

Ինչպես տեսնում եք, երբեմնի հոխորտ կարմիր հրամանատարությունը, յոթնամսյա ծանր պարտությունից հետո, բավականին համեստացել էր: Նա այլևս, ինչպես առաջ, չէր սպառնում «կարմիր բռունցքով»: Թերահույս իր բանակի նկատմամբ, նա փորձում էր խոսքով ու համոզումով բացել «ճերմակ Զանգեզուր»-ի դարպասները: Պարտված՝ որպես առյուծ, փորձում էր հաղթել որպես աղվես: Ահա՛ թե ինչո՛ւ էր ուզում «վերականգնել Շուշի-Գորիս հեռագրային կապը»:

Այդ առաջարկության մեջ «խոտերի տակ թաքնված օձ» կար: Ինձ մնում էր այս անգամ էլ չէական պատասխան տալ, որը հետևյալն էր.

«*11-ՐԴ ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ*

Ձեր նամակով դուք խնդրում եք, որ մենք ձեզ հետ հաստատենք բարեկամական հարաբերություններ: Ես սկզբունքով հակառակ չեմ այդ առաջարկին, սակայն, ներկա հանգամանքներում հաստատել անկեղծ բարեկամական հարաբերություններ միանգամայն համարում եմ աննպատակահարմար, համոզված լինելով, որ այդ հանգամանքը դրական և ցանկալի հետևանքներ պիտի չունենա: Դժբախտ Հայաստանում տեղի ունեցող, այժմյան ձեր բարձր հրամանատարության և Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի գործունեությունը գալիս է ապացուցելու և խախտելու իմ հավատն ու վստահությունը դեպի ձեր առաջարկն ու անկեղծությունը: Ինչպես ինձ, նույնպես և ձեզ համար գաղտնիք չէ, որ ձեր բարձր հրամանատարության վարած քաղաքականության պատճառով Հայաստանը դարձավ սոսկումների և արյան թատերաբեմ: Ձեր բարձր հրամանատարության թելադրանքով էր, որ քեմալիստները գրավեցին Սարիղամիշը, Կաղզվանը, Ղարսը, Ալեքսանդրապոլը և Իգդիրը, տնտեսապես քայքայեցին և սոցիալապես մեռցրին այդ ծաղկած երկիրը և ժողովրդին բեռնակիր անասուններ դարձնելով՝ նրանց իսկ մեջքով ռազմամթերքն ու հարստությունը փոխադրեցին Տաճկաստանի խորքերը: Հայաստանը աշխարհագրական իր դիրքով, գտնվելով այն մեծ ճանապարհի վրա, որով միանում է Եվրոպան Ասիայի հետ, շարունակ ենթակա է եղել բարբարոսների ասպատակության, և դժբախտ աշխատավոր հայ ժողովուրդը հազարավոր զոհեր է տվել վանդալների ասպատակության ժամանակ, որոնք արշավել են Արևմուտքից և Արևելքից: Այժմ պատմությունը կրկնվում է նույնությամբ, միայն այն տարբերությամբ, որ այժմ հայությունը գլխատվում է սոցիալիզմի դիմակի տակ, և ինչպես ինձ, նույնպես և ձեզ համար գաղտնիք չէ, որ Հայաստանի այն մասերում, որոնք գրավված չեն տաճիկներով և գտնվում են խորհրդային իշխանության ներքո, ստեղծված է այնպիսի կացություն, որ սպառնում է հայ գյուղացիության ֆիզիկական գոյությանը և, որ ամենագլխավորն է, գլխատվում, սպանվում է ժողովրդի կենդանի խոսքը: Հարյուրներով հայ հեղափոխական դեմոկրատիայի ներկայացուցիչները բանտարկվում են, գնդակահարվում և աքսորվում են, ո՞ւր, հայտնի չէ: Այդ բանում ես տեսնում եմ խորհրդային-իշխանության ղեկավար շրջանների ակնհայտ նենգամիտ միտումները՝ գլխատել Հայաստանի աշխատավոր գյուղացիությունը և մեռցնել նրա անկեղծ հեղափոխական-սոցիալիստական միտքը: Այն պայքարը, որ այժմ

մղվում է Հայաստանում, նա դասակարգային բնույթ չի կրում, և բոլշևիկները, մանավանդ հայ բոլշևիկները, միմիայն տիրապետելու տենչանքով բռնված, ձգտում են հեռացնել ասպարեզից մյուս սոցիալիստական կուսակցություններին, որպիսիք են՝ դաշնակցականները, էսեռները, մենշևիկները և այլն: Մի մոռանա, որ այն բարձր գաղափարների, սոցիալիզմի իրականացումը, որը դուք այժմ կեղծ ճանապարհով եք տանում, վերջ ի վերջո պիտի իր գաղափարական պայքարով իրականացնի այն հեղափոխական դեմոկրատիան, որոնց այժմ դուք հետապնդում և գլխատում եք: Մի՛ մոռանա, որ ձեր կուսակցական հայ աշխատավորների մեծագույն մասն իր հեղափոխական դաստիարակությունն ու միտքը ստացել է մեզանից, մեր միջից, որ հեղափոխական մտքի այբն ու բենը ստացել է Դաշնակցությունից, որը տասնյակ տարիների ընթացքում պաշտպանել է Արևելքի աշխատավոր գյուղացիության շահերը, և շնորհիվ այդ կուսակցությանն էր, որ առաջ եկավ հեղափոխություն թե՛ Թուրքիայում և թե՛ Պարսկաստանում: Այժմ այդ կուսակցության լավագույն գործիչները, որոնք անիծյալ բռնակալության օրերում հյուծվում էին բանտերում և հեռավոր Սիբիրի տունդրաներում, կանդալները մաշում, այժմ նրանք բանտարկվում են և հրացանազարկ են լինում ձեր կողմից: Այսպիսի պայմաններում խոսել բարեկամական հարաբերությունների մասին՝ ավելի քան միամտություն է:

«Անկեղծ բարեկամական հարաբերություն մեր մեջ կարող է ստեղծվել այն դեպքում, երբ հայ մտավորականությունը կազատվի բանտերից, երբ կդադարեք նրան հալածելուց, երբ ձեր բարձր հրամանատարությունը իրական և կտրուկ միջոցներ ձեռք կառնի մաքրել այն հողամասերը, որոնք գրավված են քեմալականներից, և, վերջապես, երբ կդադարեք Զանգեզուր ուղարկել զանազան մութ անձնավորություններ «գաղտնի և շտապ գործերով», ինչպես այն անում է 11-րդ բանակի գրանցման բաժինը: Երբ ես կհամոզվեմ, որ դուք կսկսեք իրականացնել Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության ցանկությունները, որի հավաքական կամքը արտահայտում եմ ես, երբ ես կհամոզվեմ, որ դուք հանձինս հայ հեղափոխական դեմոկրատիայի տեսնում եք ոչ թե ձեր թշնամուն, այլ նրանց, որոնք կոչված են շարունակելու ընդհանուր հեղափոխական գործը, այն ժամանակ միայն ես կարող եմ հավատալ ձեր անկեղծությանը և ձեր մեկնած ձեռքը չի կախվի օդում: Իմացե՛ք և հիշե՛ք, որ ես և Զանգեզուրի ժողովուրդը, որն ինձ է հանձնել իր բախտը, ներկայացնում է իրենից մի պատկառելի իրական ուժ, որը, ինչպես ես առաջ էլ գրել եմ, մի օր ձեզ պետք պիտի գա:

«Զանգեզուրի կարմիր բանակի օգտակար գործունեության մասին թույլ տվեք կասկածել, որովհետև դուք ևս լավ գիտեք, որ Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության պաշտպանության և մարդասիրության ամենատարրական օրենքներն անգամ ոտնահարված են՝ տնտեսապես քայքայված Զանգեզուրում գտնված կարմիր բանակի կողմից: Կրկնում եմ, որ ինչպես մինչև բոլշևիկների գալը, նույնպես և այժմ, ես բացառապես զբաղված եմ հայ աշխատավոր ժողովրդի ֆիզիկական գոյության և նրա հեղափոխական սոցիալիստական գաղափարների պաշտպանության հոգսով: Երբ գործով ապացուցեք, որ դուք միանգամայն թշնամի չեք դժբախտ հայ ժողովրդին, այն ժամանակ միայն կարելի է բարեկամական փոխհարաբերություն ստեղծել մեր և ձեր միջև»:

ՄԻ ԴԻՄՈՒՄ ԷԼ ԲԱՔՎԻՑ

Անզոր է դիվանագետի խոսքը, եթե նրան ուժ չի՛ տալիս զինվորի սվինը: Կարմիր դիվանագիտությունը բանակցում է առանց զգացնել տալու, թե իր թիկունքում կա կանգնած մի ուժեղ բանակ՝ միշտ պատրաստ հարգել ու ստիպել իր առաջարկությունները:

Անդրկովկասում գործում էին 9 և 11 թվով խորհրդային զորաբանակները: Երկրորդը, ինչպես գիտենք, յոթնամսյա կռիվներից հետո գոյություն չուներ այլևս, իբրև զինվորական իրական լուրջ ուժ, որը նա կորցրել էր Սյունիքի ձորերում:

Իր կազմից և հմայքից քիչ բան չէր կորցրել նաև ինքներորդ բանակը: Սրա հեծելագնդերը, հռչակավոր Կուրոչկինի հեծյալ դիվիզիան, նույնպես փետրահան էին եղել մեր ռազմաճակատների վրա: Իսկ խորհրդային Ադրբեջանի «նորահավատ» թաթար բրիգադաները, ընդունակ միայն Սյունիքի ապստամբների ծիծաղը շարժելու, փախչում էին, ցրվում էին դեռ ճանապարհին, դեռ Սյունիքի սահմաններին չհասած:

Ահա՛ այն ռազմական ուժը, որին հենված, Անդրկովկասի խորհրդային իշխանությունը կատարում էր իր դիմումները՝ երբեմն սաստալից ու սպառնական, երբեմն՝ մեղմ ու խնդրանքի ձևով:

1921թ. Փետրվար 1-ին, 11-րդ բանակի զինվորա-հեղափոխական խորհուրդի անդամ Հեկկերը ուղղել էր ինձ մի երկար գրություն, որի մի հատվածը կարևոր եմ համարում մեջ բերել:

Առաջարկելով «*հրաժարվել խորհրդային Հայաստանի հիմքերը խախտելուց*», նա շարունակում էր.

«*... Բրիգադայի հրամանատարն, ի պատասխան իր դիմումին (իր նախաձեռնությամբ), ձեզնից ստացած պատասխանն ինձ հանձնեց, հաղորդելով ինձ ձեր դեկլարացիայի բովանդակությունը: 11-րդ բանակի հեղափոխական զինվորական խորհրդի և սովետական գերագույն իշխանության կողմից ես լիազորված եմ պատասխանելու ձեզ:*

«Ձեր նամակներից ես եզրակացնում եմ, որ դուք մի քանի խնդիրների նկատմամբ թյուրիմացության մեջ եք ընկել: Եթե դուք, մեղադրելով մեզ տաճիկների արշավանքին օժանդակելու (և մինչև իսկ նա-

խաղեռնության) և նրանց կողմից Կարսն և Ալեքսանդրապոլը գրավելու խնդրում, այդ հանգամանքը ծառայեցնում եք ո՛չ թե միայն պրոպագանդայի միջոց, այլև՝ դա ձեր համոզմունքն է կազմում, այդ դեպքում ես պետք է պարզ ու որոշ ասեմ, որ դուք թյուրիմացության մեջ եք...

«Ձեր մյուս մեղադրանքը՝ մեր զորամասերի Հայաստանի սահմաններում ցույց տված անբարեհույս վարքի ու բարքի մասին, նմանապես պարզ չէ: Համոզված կարող եմ ասել, որ մեր կարմիր զորամասերի վրա անմիջապես այդ մեղադրանքը չի՛ կարելի բարդել, որովհետև մենք ունենք մի շարք փաստեր Անդրկովկասում և մասնավորապես այս րոպեիս Հայաստանում նրանց ցույց տված անբասիր վարք ու բարքի մասին: Զանգեզուրում, հիրավի, տեղի է ունեցել մի ամոթալի դեպք, որի նկատմամբ մենք մեզ չենք գովում, և որը մենք իր ժամանակին աշխատել ենք լուծարել: Խոսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Զանգեզուրով Քեմալի մոտ: Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար: Գնդին կարգադրված է եղել անցնել Նախիջևան. ամեն մեկի համար ակնբախ է, որ այդ գնդի ներկայությունը տաճկական զորամասերի մեջ անհրաժեշտ է եղել նրանց նվազագույն հեղափոխական լինելը հաստատելու համար: Ո՞վ կարող էր ենթադրել, որ տեղի կունենան դժբախտ դեպքեր կամ թյուրիմացություններ, որ թե՛ ազգաբնակությունը և թե՛ այդ գունդը միմյանց դեմ զենք կբարձրացնեն, այն էլ Կարմիր զորքի անվան տակ»:

Կարմիրների այդ գրությանը,- որի մեջ «ամոթալի դեպք» բառախոս-տովանությունից զատ մանանեխի հատիկի չափ ճշմարտություն չկար, և որ հայ մտավորականությունը գլխատելու համար ժամանակ շահելու մի նոր փորձ էր,- պատասխանեցի հետևյալ բաց նամակով.

«11-ՐԴ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ՝ ԲԱՔՎՈՒՄ

Մոռանանք. մի վայրկյան մոռանանք, որ մենք կռվող կողմեր ենք:

Մոռանանք, որ այն դուք էիք, որ խաբելով ավարի ու ավերածության մատնեցիք ըմբոստ ու ազատասեր Ղարաբաղը, Սյունիքն ու Վայոց Ձորը, սոցիալական քայքայումի հետ անաստվածորեն առաջ տանելով այդ լեռնաշխարհը լցնող ժողովրդի գլխատման տխուր գործը:

Մոռանանք և այն, որ դուք էիք, դուք, որ արհամարհելով հեղափոխական բարոյականության ամենատարրական պահանջները՝ զինակցելով Արևելքի գերազանցորեն հետադիմական, կուլտուրավեր ու հայաջինջ ուժերի հետ՝ երեկվա հանրապետական Հայաստանը Քեմալստան դարձրիք:

Մոռանանք նաև այն, որ՝ ձեր՝ հայ աշխատավորության հասցրած չարիքից ու հայահալած և հակահեղափոխական քաղաքականությունից խթանված, Սյունյաց, Արցախի ու Վայոց Ձորի ռազմական ուժերը մի գիշեր իջան լեռներից ու մաքրեցին իրենց երկիրը, աշխարհի չորս քամիներին տալով ձեր բարբարոս զորամասերը:

Մոռանանք այդ բոլորը, չնայած որ պատմությունն ու ձեր ձեռքով խաչված հայ ժողովուրդը երբեք չի մոռանա. մոռանանք, կրկնում եմ, և խոսենք որպես երկու օբյեկտիվ կողմեր:

Սկսում եմ, լսե՛ք:

Ձեր վերջին նամակի մեջ դուք առաջարկում եք ինձ բարեկամանալ Սովետական Հայաստանի կառավարության հետ և միամտորեն հարց եք տալիս՝ թե ո՞ւմ վրա եմ դրել հույսս:

Սովետական Հայաստան չկա՛: Կա քաղաքականապես բռնաբարված, Երևան անունով մի քաղաք և մեկ ու կես տասնյակ գյուղեր, այսինքն՝ տարածքային մի անհեթեթություն:

Ձեր դավադրությամբ՝ Հայաստան երկիրը դարձավ Քեմալստան: Միամիտ չլինենք ենթադրելու, որ Մոսկվայի ձեր վերջին խորհրդաժողովը[22] մուկ չի ծնելու: Ձեր ցանկությամբ տաճիկները մտան Հայաստան, սակայն, ձեր հրամանով նրանք պիտի չհեռանան, և խոստովանենք, որ եթե քեմալիստները քաղաքական հնարավորություն ունենան շարժվելու դեպի Երևան, ձեր, միայն թալանի մեջ մարզված և Ղարաբաղում կին ու երեխաներ կոտորելու գործում մասնագիտացած զորքերը չեն, որ պիտի պաշտպանեն ձեր ձեռքով գլխատված ու զինաթափ եղած հայ աշխատավորությունը: Չգիտեմ՝ նման պայմաններում, անհեթեթային Սովետական Հայաստանի հետ բարեկամանալը միտք կունենա՞: Թվում է, որ իմ՝ Երևանի կառավարության հետ բարեկամանալուց կշահի միայն ձեր երեկվա «բարեկամ», այսօրվա «թշնամի» Քեմալը, որովհետև հայ զինվորն անմարտունակ, փալաս է դառնում, երբ անգամ՝ ձևականորեն դառնում է կամ կոչվում է կարմիր, բոլշևիկյան, սովետական: Ձեր հարցին, թե ո՞ւմ վրա եմ դրել հույսս, Անտանտայի՞, թե՞ Վրաստանի, պատասխանում եմ. միայն իմ ազատասեր ժողովրդի հաղթական ռազմունակության, իմ երկրի բարձր լեռների՛ և իմ պաշտպանած Արդար Դատի՛ վրա:

Ուժեղը նա չէ՛, որ ուտող բերաններ, երկոտանի մեքենաներ, թալանչիներ, կամ թնդանոթներ ու արծիծ շատ ունի, բայց սիրտ և հոգի չունի և սրբություններ չի ճանաչում:

Ուժեղը նա չէ՛, որը, խաբեությամբ դրախտ և հազար ու մի բարիքներ բերելու խոստումներով, մտնում է մի երկիր, թալանում, սոցիալապես գլխատում, ապստամբության մղում ժողովրդին և թողնում, փախչում...

Ուժեղը նա չէ՛, որ ամբողջ բրիգադաներով հարձակվում է Շիվանի Չոր անունով մի գյուղի վրա և քառասուն օր անընդհատ թնդանոթներից և գնդացիրներից արձիձ ու կրակ է թափում հարյուրի հասնող ապստամբների գլխին, և նահանջելուց առաջ, ասպետություն չի ունենում ծունկի գալու ապստամբների դիրքերի առաջ և ասելու. «Փա՛ռք ձեզ, ապստամբնե՛ր, որ այդպես կռվել և ձեր երկիրն ու մարդկային իրավունքները պաշտպանել գիտեք»:

Ուժեղը նա չէ՛, որի ուժերի առաջապահը կազմում են՝ կարմիր սուտը, խաբեությունն ու սադրանքը, որը չգիտի, որ գերմանական զրահապատ բռունցքը ջարդ ու փշուր դարձավ, զինաթափ եղավ բելգիական ողբերգական ու հերոսական հոգու առաջ:

Ուժեղը նա չէ՛, որ հանուն իր աննշան հաջողությունների, իր պյուռոսյան հաղթությունների, դաշնակցում է անգա՛մ սատանայի հետ, որը, լինելով Նապոլեոնի խեղանկարը, Մաքիավելլիին է իսկական:

Ուժեղը նա չէ՛, որը կազմակերպված մեծ բալանն ու մեծագույն ոճիրն անվանում է Ռուսական Մեծ Հեղափոխություն, որը խելագար հալածանք ու ահաբեկչություն է հարուցել անգա՛մ սոցիալիստական մտավորականության դեմ, որն առանց ամոթի ու խղճի խայթի իր ամենագռեհիկ ու քրեական գործիչներին, ինչպիսիք են սադիստ Աթարբեկյանն ու կատու խեղդող Ավիսը, անվանում է ռուսական Մարատ:

*Ուժեղը նա չէ՛, որը օրական յոթն անգամ վերև ու ներքև թքել գիտի, բայց կրծքի վրա, գրպանի խորքում ռուսական խաչն ու Տիրամոր պատկերն ունի:**

Ուժեղը նա չէ՛, որի «հաղթությունները» ո՛չ ռազմական են, ո՛չ էլ բարոյական:

Դուք չգիտեք, թե ո՞վ, ինչպե՞ս և ինչո՞վ է հաղթում:

Լսե՛ք, ասեմ:

Գիշեր է: Մի քանի զինվորներ Գորիսի մի այգում սուր խրամատաշինական գործիքներով փոսեր են փորում: Գերեզմանները պատրաստ են: Ահա՛ բանտի դռներից դուրս նետեցին երկու ականավոր սոցիալիստների: Դատապարտվածները գիտեն, որ իրենց տանում են հողին հանձնելու, բայց չգիտեն, որ պիտի մորթվեն: Մոտեցրին փոսերին: Մի քանի սրեր բարձրացան մթության մեջ ու իջան: Սոցիալիստներից մեկը գլխատված է, իսկ մյուսի ձախ թևը կտրված:

---

* Ինձ մոտ գերի բռնված հազարավոր ռուս կարմիր զինվորներ ցույց են տվել ինձ իրենց վզից կախած խաչը և ծոցերում ունեցած Տիրամոր պատկերը (ծանոթ. հեղ.):

- Սրիկանե՛ր, սպաննե՛ք, կտրե՛ք մյուս թևս էլ, բայց իմացե՛ք, որ դուք ձեզ եք սպանում: Ցարն էլ ձեզ պես վարվեց ժողովրդի պաշտպանների հետ, ու մեռավ բռնաբար:

- Սրիկանե՛ր, մարդասպանն՛ե՛ր, վերջին անգամ գոռաց Շիրինն ու սրերի ծանր հարվածներից գլորվեց փոսը:

- Սրիկանե՛ր, մարդասպանն՛ե՛ր, վախվխելով ու կամացուկ կրկնեց խաբված ժողովուրդն ու սեղմեց բռունցքը:

* * *

Կռիվ էր: Չերոնք, միացած Խալիլ փաշայի թաբուրներին, թնդանոթների ու գնդացիրների հետ կախվել էին Ալագյազից Կարճևան գյուղի վրա: Երրորդ օրն էր, ինչ ապստամբները հեգնում էին թշնամու բոլոր ճիգերն ու փորձերը և առատ հունձ անում:

Ջուր չկար, ծարավ էինք: Կարճևանցի հայ կինը, կուժը լիքը սառը ջրով, բարձրանում էր դեպի մեր դիրքերը: Թշնամին նկատելով, գնդացրային կրակ բացեց նրա վրա: Հարյուրավոր գնդակներից մեկը փշրեց հայ կնոջ կուժը: Կինը նորից իջավ Արաքսի ափը, վերցրեց մի ուրիշ կուժ, լցրեց ջրով ու շարժվեց դեպի մեր դիրքերը: Էլի նա ընկավ կրակի տակ, թեթև վիրավորվեց ու կորցրեց իր կուժը: Հավատացած էինք, որ նա այլևս չի վերադառնա, բայց մի քիչ անց, նորից պաշտելի հերոսուհին, կուժն ուսին, բարձրացավ սարը:

Վիրավորված հայ կնոջ ներկայությունը կրակով ու վրեժով լցրեց ապստամբների հոգիները: Կես ժամ անց, թշնամին մեր սարերից կրնկակոխ փախչում էր:

Ահա՛ իմ ուժը:

* * *

Կուրոչկինը իր հեծելազորով եկել, պաշարել էր Երիցվանիկ գյուղը: Հրամայված էր ցերեկը չպատասխանել թշնամուն: Ապստամբները սրտատրոփ սպասում էին խավարն իջնելուն, իրենց հարազատ տարերքին, երբ հպարտ դափանցին, թշնամու քանակի մասին հարց տալու փոխարեն, հարցնում է՝ ո՞ւր է թշնամին:

Գիշեր է: Գայլավաշտերը սպասում են ազդանշանին՝ սկսելու իրենց ուժանակային գրոհը: Լռության մեջ բարձրացավ ապստամբներից մեկի՝ ահռելի արհամարհող, վտանգն անգիտացող երգը: Վաշտերը դուրս թռան իրենց խրամատներից, լսվեց գոռ «ուռռա»-ն, որին հետևեցին դինամիտային պայթյունները:

- Անձնատուր կլինենք, անձնատուր, գրեթե ճչաց խուճապի մատնված թշնամին:

Լույսը բացվեց: Մեր ձեռքն էր մնացել թշնամու ուժերի կեսից ավելին, մի քանի հարյուր հրացան ու երկու տասնյակից ավելին գնդացիրներ:

Մենք, այսպես, շատ անգամ, ԵՐԳՈՎ ենք հաղթում:

* * *

Սյունիքի երկնքի տակ, բացօդյա, հավաքված են հազարավոր կանայք քաղաքից ու գյուղերից: Միտինգ է: Խոսում է մեկը: Դիմենք Սպարապետին, եթե նա այսօր մինչև երեկո չքշի թշնամուն Զաբուղից էլ դեն, մենք կհարձակվենք դեղատների վրա, մեր մեջ կբաժանենք եղած թույնը և անձնասպանությամբ վերջ կտանք մեր կյանքին, որ մեկ էլ կարմիր զինվորի կամ սև ասկյարի երեսը չտեսնենք:

Հերոսական այդ որոշումը հայտնվեց գործին:

Մութը դեռ չէր ընկել, երբ մեր սուրհանդակն ավետեց, որ ջարդված թշնամին հետ է շպրտված Ավդալլար:

Ահա՛ թե ինչո՛վ և ինչպե՛ս ենք հաղթում մենք:

* * *

Այսպես, եկաք, խաբեցիք, թալանեցիք, ապստամբեցրիք ժողովրդին ու քաշվեցիք: Դուք պարտվեցի՛ք, որովհետև պե՛տք է պարտվեիք, որովհետև դա պատմության վճի՛ռն է, որովհետև մարդկությունն է այդպես ցանկանում:

Դուք պարտվեցի՛ք, որովհետև դուք բարոյապես պարտվա՛ծ եք եղել հենց ձեր քանդված ու գլխատված բուն հայրենիքում՝ Ռուսաստանում, որովհետև ձեր ամեն մի քայլը, ամեն մի գործը բարոյական մի պարտություն է, բարոյական մի անձնասպանություն:

Սյունիքը հաղթե՛ց ձեզ, որովհետև նա պե՛տք է հաղթեր, որովհետև վարձկան զինվորականների տեղ՝ նա ունի երկու հարյուրի չափ ժողովրդական ուխտված վաշտապետներ, նույնքան Դավիթբեկյան գայլավաշտեր, իրեն ապաստան բարձր լեռներ, ծով սեր դեպի հայրենի երկիրն ու արյունով ձեռք բերված ազատությունը, բոլոր ճակատներում անհատակ քսակներ, որոնք բերանբաց սպասում են մեր երկրի թշնամիներին ու գրանիտե հավատ, որ ապստամբած ժողովրդին միայն Աստված կարող է հաղթել:

Խորամանկ Մաքիավելլին էլ չի օգնի ձեզ: Ձեր լավագույն արդիական զենքերը, կարմիր սուտը, չեղած դրախտն էլ չեն փրկել ձեզ, որովհետև այդ զենքերով միայն մի անգամ կարելի է հաջողել, հաղթել: Ձեր մեղրամիսն անցած համարեք: Խոստացած դրախտի տեղ՝ դժոխք, հազար ու մի բարիքների փոխարեն՝ սով, սիֆիլիս, արյուն, արցունք, կոտորած, Քեմալ, Քեմալստան բերիք հայ աշխատավորության համար:

Եզրելով նամակս, ավելացնում եմ. ի զուր եք ենթադրում, որ ես ցանկություն ունեմ պայթեցնելու երևանն ու մեկ ու կես տասնյակ

գյուղերը, որոնց վզին զոռով է դրված սովետական լուծը, եթե ձեր Ղարաբաղում սկսած բարբարոսություններով չստիպեք ինձ անելու այդ քայլը:

Ցգրություն:

Ինքնավար Սյունիքի Սպարապետ՝ ՆԺԴԵՀ:

Գորիս, 24-ին Փետրվարի, 1921թ.»

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ

Բոլշևիկյան դասակարգային ռազմավարությունը հիմնվում է երկու միջոցների վրա.

ա) Ռազմա-տեխնիկական գործողության, և

բ) Ռազմա-քաղաքական գործողության:

Առաջինը որոշվում է պատերազմական արվեստի գիտությամբ և ռազմական փորձառությամբ, երկրորդը՝ դասակարգային հանգամանքների գնահատումով և քաղաքական կարելիությունների հաշվառումով:

Ռազմա-քաղաքական տարրը ուղղումներ, լրացումներ և փոփոխություններ է մտցնում ռազմատեխնիկական գործողության մեջ, մեծապես ապահովելով վերջինների հաջողությունը: Երկու տարրերն էլ ներդաշնակում են, համաձայնվում տրված մոտավոր և մասնակի նպատակի շուրջը: Գործողությունների առարկան շարունակում է մնալ ցանկալին և հնարավորը, որոնցից առաջինը՝ քաղաքական նպատակը պայմանավորում է ձգտումը դեպի կարելին և հեշտացնում է նրա իրականացումը:

Պետք է գիտենալ և այն, որ բոլշևիկները, պատերազմը համարելով քաղաքականության շարունակությունը, իրենց հրամանատարներից, որպես Կարմիր բանակի կազմակերպիչներից, դաստիարակիչներից և առաջնորդներից, պահանջում են ներկայացնել «ռազմական զարգացման և պրոլետարական աշխարհահայացքի օրգանական սինթեզը», ասել է՝ լինել միաժամանակ և՛ մասնագետ զինվորական և՛ մարքսիստորեն մտածող քաղաքական գործիչ:

Ահա՛ թե ինչո՛ւ միամտություն չունեցա կարծելու, թե կարմիրները, պարտված իրենց ռազմա-տեխնիկական գործողությունների մեջ, այլևս անվտանգ են դարձել Սյունիքի համար:

Ճիշտ է, նրանց զորամասերն այլևս չէին հանդգնում մոտենալու մեր սահմաններին, բայց և այնպես, նրանք չէին դադարել թշնամական գործողություններ վարելուց Սյունիքի դեմ: Պարտված, որպես ռազմիկներ, նրանք հրապարակ էին իջել որպես մարքսիստորեն մտածող գործիչներ: Նրանք ձեռնարկել էին մի նոր պատերազմի մեզ համար ավելի

վտանգավոր, քան առաջինը, որը խորհրդային եզրաբանությամբ կոչվում է «*պոտենցիալ*»:

Պետք է ասել, որ մինչ այդ, կարմիր հրամանատարությունը, հենվելով իր հսկայական զորամասերի վրա, կարիք չէր զգացել կռիվներին տալու բացարձակորեն քաղաքացիական բնույթ: Արբեցած Անդրկովկասում և Ղրիմում ունեցած իր ռազմական հաջողություններից, և հավատացած, որ իր բանակները կայծակի արագությամբ կանցնեն նաև Սյունիքի վրայով, նա ցանկալի էր համարել «դեպի ալևոր Արևելքի սիրտը տանող ճանապարհը» բացել, հարթել սվիններով և ո՛չ թե ստորերկրյա, խլուրդային, ծգծգվող աշխատանքներով:

Այսպես, այս ձևով վարվելու նրան թելադրել էր նաև իր հետևյալ ցանկությունը: Նրան պետք էին «ցնցիչ և ամպրոպային հարվածներ», որոնք, ահ ու սարսափ առաջացնելով, մեծապես պիտի հեշտացնեին նրա բանակների արշավը դեպի Պարսկաստան և հեռուները:

Այժմ, ծախողված իր ռազմական գործողությունների մեջ, զգաստացած և անհույս դեպի իր բանակը, նա տեսել էր իսկական քաղաքացիական կռիվ, որի մի քանի հատկանշական գծերը բերում ենք ստորև.

1. Ռազմաճակատ հասկացությունը, որպես բանակների շոշափման և բախման գիծ, ընդունում է միանգամայն նոր բովանդակություն: Դա մեզ ծանոթ կրակի գիծը չէ, այլ՝ մի ամբողջ ցանց՝ անասելիորեն բարդ և հարափոփոխ:

2. Առարկայորեն՝ չեզոքներ չկան և չեն կարող լինել:

3. Հասարակական խմբավորումների փոխհարաբերությունները, ինչպես և քաղաքական ու տնտեսական ազդակները անսովոր կերպով ազդում են դասակարգային հանգամանքների վրա, ասել է՝ և պայքարի ու կռվի ելքի վրա:

4. Պայքարի դասակարգային բնույթի հետ կապված է ժողովրդական զանգվածների առարկայական շահագրգռությունը այդ պայքարի ելքի նկատմամբ:

5. Քաղաքացիական պատերազմում աննախընթաց նշանակություն են ստանում բարոյական ազդակները: Պրոպագանդան և ագիտացիան հաճախ են վճռում կռվի բախտը:

6. Ռազմական գործողություններն ընդունում են գլխավորապես մանևրային բնույթ և զարգանում են փոքրկոտ թափով:

7. Այս կամ այն կողմի հողային զգալի կորուստն անգամ ավելի նվազ նշանակություն ունի, քան՝ այդ ունենում է սովորական պատերազմներում:

8. Բախվող կողմերի կատարյալ անհաշտելիությունը քաղաքացիական կռիվներին հաղորդում է աննախընթաց համառություն, դաժանություն, և այլն:

* * *

Բոլշևիկները մեզ հետ սկսած բանակցություններով փորձում էին վարագուրել Սյունիքի դեմ իրենց կողմից տեղի ունեցող «պոտենցիալ» գործողությունները և ժամանակ շահել իրենց որոշ դիտավորությունների համար:

Պետք է խոստովանել, որ կարմիրները իրենց հարազատ տարերքը հանդիսացող այդ «պոտենցիալ» օրերին իրենց խաղերն ու հնարագիտությունները հասցնում էին կատարյալ հանճարեղության: Մի տեղ նրանք սպառնում էին քարը քարի վրա չթողնել, եթե իրենց զորքերի դեմ մի հատիկ իսկ գնդակ արձակվեր, և ահաբեկված գյուղացիությունը, հին առակի դժբախտ որսի նման, քամու հոսանքից օդի մեջ տարուբերվող փետուրից խրտնած, նետվում էր ուղղակի «որսորդի» գիրկը: Մի այլ տեղ, իրենց թերթերով ու թռուցիկներով ժողովրդին հրամցնում էին Հայաստանի նախկին կառավարության և խորհրդային իշխանության միջև կնքված դաշնագրի պատճենը,* որով Սյունիքը անցել էր կարմիրներին:

Ռուսաստանում և Անդրկովկասում ապրող՝ բոլշևիզմի հոսանքից տարված սյունեցիներից շատերին մութ առաքելություններով ճանապարհ էին դնում դեպի իրենց ծննդավայրերը: Ղարադաղում Շիրինկիլ խանի միջոցով տեղահանել և կողոպտել էին տալիս մի քանի հայ գյուղեր՝ ինձ պարսիկ ժողովրդի հետ թշնամացնելու նպատակով: Վերջապես, գնահատում են իմ գլուխը և «11-րդ Կարմիր բանակի գրանցման բաժնի առանձին հանձնարարություններով» դեպի Գորիս ուղղում իրենց ահաբեկիչները...

Եվ այդ բոլորն անում էին ճիշտ այն ժամանակ, երբ ինձ հետ բանակցություններ էին վարում, երբ ինձ «բարի դրացիություն» էին առաջարկում: Եվ այդ բոլորն անում էին՝ ինձ կրավորական վիճակի մեջ պահելու համար, մինչև որ կհասնեին Հունիս և Հուլիս ամիսները, մինչև որ կընկներ հունձը, և աշխարհից կտրված ու անգամ չոր հացի բավարար պաշարից զուրկ Սյունիքի գյուղացիությունը զենքը կփոխարիներ մանգաղով, տեղի կտար առանց կռվի, ակամայից:

ԿԱՍՅԱՆԻ ՄԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ*

«Քանի դեռ չի գրավված Զանգեզուրը, Դարալագյազում, որը կազմում է չգրավված մեծ երկրամասի թիկունքը, վարել ամենամեղմ քաղաքականություն: Խստիվ արգելվում են աջից ծախից ծերբակա-

* 10 հոկտեմբերի, 1920թ. (ծանոթ. հեղ.):

* Ուղղված Դարալագյազի Հեղկոմին:

լումները և բռնագրավումները: Դեպի քաղաքացիները ցույց տալ ճիշտ վերաբերմունք: Ձերբակալել միայն նրանց, որոնք բացահայտ կերպով պրոպագանդա են մղում իշխանության դեմ: Այն պաշտոնատար անձինք, որոնք կխուսափեն կատարել այս հրամանը, կենթարկվեն հեղափոխական ամենախիստ պատասխանատվության:

Խորհրդային Հայաստանի կառավարության նախագահ՝
Ս.ԿԱՍՅԱՆ

1921թ. 29 Հունվար, Երևան»:

«Քանի դեռ չի գրավված Զանգեզուրը...»

Ահա՛ կարմիրների քաղաքական շիտակությունը: Կասյանի այդ դավադրական գրությունը եկավ մերկացնելու խորհրդային իշխանությանը՝ ինձ հետ սկսած բանակցությունների՝ ժամանակ շահելու նպատակահարմարությունը և արագացնելու իմ ձեռնարկելիք գործողությունները: Այլևս արևի պես պարզ էր, որ, եթե Երևանի բանտերը դեռ չեն վերածվել սպանդանոցների, եթե հայ մտավորականությունը դեռ չի կացնահարվել գլխովին, դրա պատճառը միայն և միմիայն Ինքնավար Սյունիքն է՝ «դեռ չգրավված մեծ երկրամասը»:

Պարզ էր և այն, որ եթե Հայաստանի հետ միաժամանակ տեղի տված լինեինք և մենք, հայ մտավորականությունը, մասնավորապես ՀՅ Դաշնակցությունը վաղուց հանձնված կլիներ հողին:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Մի՛ կառավարիր, այլ՝ առաջնորդի՛ր, այլ՝ ղեկավարի՛ր անձամբ, անմիջականորեն:

Շատ բանով եմ պարտական այդ փրկարար սկզբունքին:

Առաջնորդի և անմիջական ղեկավարի իմ դերը հարկադրում էր ինձ լինել միշտ շարժման մեջ, հասնել ամեն տեղ, անձամբ դիտել, հետախուզել, ուսումնասիրել, և, այսպիսով, գրեթե միշտ էլ անսխալ կերպով որոշել հետ մղվելիք, թե տրվելիք հարվածների ուղղությունը:

Նույն իմաստուն սկզբունքը լայն հնարավորություն էր ընձեռել ինձ՝ լեռնահայությունը և նրա ռազմական ուժերը պահելու իմ անմիջական ազդեցության տակ:

Գիտենք, որ այդ ներքին պայքարն ընդունել էր ստորերկրային բնույթ: Մեր կռիվն այլևս թշնամու բանակների դեմ չէր, այլ՝ նրա քաղաքական ածպարարությունների, աչքակապությունների, թունավոր քարոզչության, սեղմ ասած՝ *«կարմիր միկրոբ»*-ի դեմ: *Բարոյական ուժը ինքնապաշտպանության այդ շրջանում ինձ համար դարձել էր մի ամենակարող աստվածություն, իմ «արքիմեդյան լծակը»:*

Այդ օրերին իմ քարոզչության նյութն էր կազմում ռազմավարության այն, Նապոլեոնի արտահայտությամբ՝ «աստվածային մասը», որն իր մեջ միացնում է ռազմարվեստի էությունը կազմող բոլոր բարոյական գործընթացները:

Բարձր գաղափարների բռնակալություն:

Չգիտեմ, այդ երեք բառերով կարելի՞ է բնորոշել Սյունիքում ստեղծված հոգեբանական մթնոլորտը, թե՞ ոչ, բայց գիտեմ, որ առանց այդ վերջինին անհնարին պիտի լիներ մեր բարոյական դիմադրությունը:

Այդ օրերին իմ հրամանատարներից ամեն մեկը կարող էր կրկնել Գուստավ Ադոլֆի վստահություն ու հպարտություն շնչող այս խոսքերը. «*Ես կարող եմ ննջել իմ զինվորներից ամեն մեկի ծնկների վրա*»:

Վեհությամբ ու խանդավառությամբ այնքա՛ն հարուստ այդ օրերին միշտ էլ Սյունիքի եկեղեցիներում, դպրոցներում, զորանոցներում, ռազմաճակատներում, գյուղում, քաղաքում և ամեն մի հարկի տակ կարելի էր կարդալ իմ քարոզչության նյութը կազմող յոթը պատվիրաններ, որոնք օրեր անց սյունեցին պիտի քանդակեր խուստուպ լեռան կատարին ընկած յոթը ժայռերի վրա՝ ի հուշ եկող սերունդների:

Ահա՛ այդ պատվիրանները.

1. Երբե՛ք առանց Սյունիքի և Արցախի:
Առանց Հայաստանի աշխարհագրական այդ ուժեղ ողնաշարին՝ մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի՛ կարող:

2. Լեռներիդ վրա՛, լեռներիդ մեջ է քո փրկությունը: Արդ, տաճարներիդ մեջ, խաչերիդ կողքին բարձրացրու մի-մի ժայռ, և՛ պաշտիր, և՛ երկրպագիր, որ չքուլանա փրկարար պաշտամունքդ դեպի լեռներդ:

3. Սպարտա՛: Քո երկիրը, որպես նոր Սպարտա, կարող է գոյություն ունենալ տխուր Արևելքում: Չգտի՛ր, կարո՛ղ ես և պիտի դառնա՛ս:

4. Երբե՛ք անզեն: Թող նախ հարևանները իրենց սրերը խոփերի և նիզակները հատոցների վերածեն:

5. Եվ ո՛չ մի ընչազուրկ՝ քո հողի վրա: Խեղճերի արցունքից ու թույլերի անարիությունից են քանդվում հայրենիքները: Բոլոր որդիներդ անկարոտ և արի:

6. Մի ժողովուրդ, մի ընտանիք: Ազգերի մեջ գուցե և միայն դու իրավունք չունես ներքուստ պառակտված լինելու:

7. Եղի՛ր ուժեղ, էլի՛ ուժեղ, և մի՛շտ ուժեղ: Ժողովուրդները վերջ ի վերջո տեր են մնում ո՛չ թե նրան՝ ինչ որ նրանց տրվում է, ինչ որ մուրում են, այլ միայն նրան՝ ինչի որ արժանի են, ինչ որ իրենց սեփական ուժերով ապահովել են կարողանում:

ՊԻՏԻ ԱՊՐԻ՝ ՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի երկրորդ կեսն է:

Իմ ժողովրդական բանակը, գոտեպնդված, պատրաստվում է կատարելու իր ազգային առաքելությունը:

Պետք է Արարատյան Հայաստանի համար դեպի Սյունիք մի դուռ բացել, փրկության մի դուռ մահվան դատապարտված հայ մտավորականության համար: Այդ նպատակով անցել եմ Սիսիան:

Գյուղացիությունը գիտակցում է, որ *հայ մտավորականության «գլխովին ոչնչացումը» համաձայնակ պիտի լինի հայ ժողովրդի մտաբարոյական սպանության:* Նա հասկանում է այդ և իմ ամեն մի խոսքը ստիպում է նրան հայացքը դարձնելու դեպի հեռուները՝ Սյունիքից դուրս, դեպի Արարատյան Հայաստանի գավառները...

- Պիտի մեռնի՝ հայ մտավորականությունը, ասել է Բաքվի համագումարում[23] համիսլամականների հետ համբուրվող Զինովևը:

- Նաև հայ ժողովուրդը, ավելացրել էին «նորահավատ կոմունիստ» տաճիկ փաշաները:

- Պիտի ապրի՝ հայ մտավորականությունը, որ ապրի և հայ ժողովուրդը, վճռեց Սյունիքը, և գործի անցավ:

Մոտ ապագան պիտի ցույց տա, թե ո՞վ է հաղթելու՝ ոճրագո՞րծը, թե՞ հեղափոխականը:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՎԵՐԱԳՐԱՎՈՒՄԸ

Փետրվարի 1-ից ես արդեն գտնվում էի Սիսիանում, ուր անցել էի նախապատրաստելու զորամասերը:

Այդ օրերին, Խորհրդային Հայաստանի որոշ շրջաններից վերադարձող հետախույզներիս հետ Սյունիք են անցնում երեք հալածական դաշնակցականներ: Եկողները պատմում են, թե Երևանում արդեն սկսվել են կացնահարությունները, թե մոտ երկու հազար մտավորականներ գտնվում են բանտերում, իսկ հազարավորներ անցել են գյուղերը և քաշվել «հատակի տակ», թե մտավորականների որսը դեռ շարունակվում է, թե շուտով ձերբակալվածները կհանձնվեն Չեկա կոչված բոլշևիկյան գազանին, և այլն:

Օրեր առաջ մեր մտավորականության տխուր վիճակի մասին տեղեկություններ էի ստացել նաև Բաքվից և Թավրիզից, որոնց համաձայն՝ Փետրվարի վերջերին Երևանում պիտի հրացանազարկ լինեին Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները, Հ. Յ. Դաշնակցության Հայաստանի կոմիտեի, Բյուրոյի, պարլամենտի բոլոր անդամները, իսկ մնացած մտավորականությունը, անարյուն կոտորածի մատնելու նպատակով, պիտի տարագրվեր Ռուսաստանի խորքերը:

Այդ բոլորը, պարզ է, որ պիտի ստիպեր մեզ ածապարելու:

Գիտակ, որ Վայոց Ձորի կարմիր զորամասի 85 տոկոսը իմ նախկին գերիներն էին, որոնց, Հայաստանի անկման նախօրյակին, հացի և կենսամթերքների չգոյության պատճառով, ճանապարհ էի դրել դեպի Երևան, հարձակումից առաջ մի կոչով պահանջում եմ վերջիններից՝ չդիմադրել:

«*Կարմիր զինվորներ,* ասում էի ես, *դուք գիտեք, դուք ճանաչում եք ինձ: Դուք գիտեք իմ մեծահոգությունը, որի շնորհիվ դուք կենդանի մնացիք...: Ես նա եմ, որը ձեր գերի ընկնելուց հետո խղճաց ձեզ, խլելով ձեզ խաբված Զանգեզուրի ձեռքից, ուղարկեց Հայաստան: Այժմ պարզվում է, որ ձեզ նորից հագցրել, զինել և ուղարկել են Դարալագյազ... Զգո՞ւշ, զգուշ եղեք. եթե մի անգամ էլ անբախտություն ունեցաք հանդիպելու իմ հաղթական ժողովրդին, գիտցե՛ք, այլևս իմ մեծահոգությունը չի փրկի ձեզ...*

«1 Փետրվար, 1921, Գորիս»:

* * *

Փետրվարի 10-ին արդեն պատրաստ էր մարտագիրը, ըստ որի՝ պետք էր շահել զուտ տակտիկական հաջողություն. պետք էր որևէ ռազմադավով կամ ռազմաշարժումով զրկել թշնամուն կռիվն ընդունելու, դիմադրություն ցույց տալու հնարավորությունից և անարյուն կերպով գերել նրա ամբողջ զորամասը, ինչպես տրված էր այդ՝ Ղափանը վերագրավելիս:

Ռազմական գործողության առարկան էր Վայոց Ձորը, նպատակը՝

1. Երևանի համար դեպի Սյունիք բացել մի դուռ.

2. Վերցրած գերիներով ապահովել խորհրդային բանտերում եղած հայ մտավորականների կյանքը.

3. Հոգեբանորեն հրահրել և հնարավոր դարձնել մի հակաբոլշևիկյան պոռթկում Արարատյան Հայաստանում:

* * *

Փետրվարի 14-ին մեր զորքերը դրվում են շարժման մեջ: Զորամասերի հետ են Յապոնը,[24] Մեսրոպը և Սիսիանի ուժերի հրամանատարը:

Փետրվարի 16-ին ամբողջ Վայոց Ձորն անցնում է մեր ձեռքը: Արյուն չի թափվում: Գերի է վերցվում ամբողջ զորամասը: Կարմիրները դիմադրություն ցույց չտվին: Խորհրդային հրամանատարությունը, իր զորամասը դիմադրության մղելու նպատակով, դիմում է մի ստոր պրովակացիայի: Նա, հանկարծակիի եկած, գոչում է.

- Մենք շրջապատված ենք թուրքերով. կրակեցե՛ք, պաշտպանվեցե՛ք:

Բայց մեր ձիավորները նետվում են առաջ և կանչում.

- Մենք թուրքեր չենք. մենք Նժդեհի մարդիկն ենք, մի՛ կրակեք:

Եվ, այսպիսով, նրանք խուսափում են անտեղի զոհերից և արյունահեղությունից:

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏՈՒՄ

Սյունիքի մեր հաջողությունների ազդեցության տակ պոռթկում է և Բասարգեչարը:

Այդ շրջանում կանգնած բոլշևիկյան թնդանոթաձիգ գունդը, ապստամբելով խորհրդային իշխանության դեմ, շարժվում է դեպի Նոր Բայազետ քաղաքը և, առանց կռվի, գրավում է վերջինը: Քաղաքի և շրջակայքի բոլշևիկ տարրերը, առանց դիմադրության, քաշվում են հյուսիս և ամրանում Սևանա լճի ափին ընկած մալական (ռուս) գյուղերում:

Ստանալով խմբապետ Աղաբեկի հաղորդագրությունն այդ մասին, Երևանի հետ կապվելու նպատակով, այդ շրջանն եմ ուղարկում մեր ծանոթ խմբապետներից Մեսրոպին և Գ. Շահինյանին: Երկու օր անց՝ ստանում եմ հետևյալ հեռախոսագիրը.

«*Սպարապետ Նժդեհին,*

Ճակատում հաղթություն է և ամուր: Քաղաքում հանգիստ է և տոնական: Սպասում ենք անհամբեր: Աղաբեկ, Մեսրոպ, Գառնիկ»:

Իմ պատասխանը լինում է.

«*Քանի որ դրությունը ձեր շրջանում կայուն է, կարիք չկա իմ այդ կողմն անցնելուն*»:

Վերստին խնդրում են երևալ այդ շրջանում «գոնե 24 ժամով»: Վերջին հեռախոսագրի հետ Դարալագյազ է հասնում Նոր Բայազետի ներկայացուցիչ Ե-ն: Սա, շատ տխուր գույներով ներկայացնելով Նոր Բայազետի շրջանի դրությունը, խնդրում է ժամ առաջ երևալ այնտեղ:

Հրահանգելով Յապոնին՝ Չանախչու վրայով կապվելու Երևանի հետ՝ մի քանի ձիավորներով շարժվում ենք դեպի Նոր Բայազետ:

Ներքին Ղարանլուխում ստանում եմ Ս. Վրացյանի առաջին գրությունը, ուղղված ինձ և Ռ.Տեր-Մինասյանին: Երևանի սուրհանդակները նախ փորձում են անցնել Դարալագյազ՝ Չանախչուի վրայով, բայց ձյունի շատության պատճառով չի հաջողվում: Վերադառնալով Երևան, նրանք անցնում են Նոր Բայազետ՝ Ախտա-Ուչթափա սուրհանդակային գծով: Այդ է լինում գրության այդքան ուշ տեղ հասնելու պատճառը:

Գրությունն, ի միջի այլոց, տեղեկացնում էր.

«*Բոլշևիկների ստեղծած դժոխքը Հայաստանում մի հետևանք ունեցավ: Ամբողջ ժողովուրդը ապստամբեց և տապալեց նրանց բռնապետությունը: Արդեն Բաշ Ապարանի, Թալինի, Ախտայի, Կոտայքի, Երևանի, էջմիածնի, Զանգի Բասարի շրջանները մաքրված են բոլշևիկներից: Միջոցներ են ձեռք առնվում մաքրելու նաև Դարալագյազը, Նոր Բայազետը, Ղազախը, Լոռին: Հույս ունեմ կհաջողվի: Զբաղված ենք լիկվիդացիայի ենթարկելով նրանց բանդաները Ղամարլուի կողմերում, ուր նրանք տարել են մեր երկու պրոնևիկը* (զրահապատ), *մի քանի թնդանոթ և ունեն մոտ 1,000 հոգի ուժ, որի կեսից ավելին ռուս: Այդտեղ են և Հեղկոմի անդամները: Չենք կասկածում հաջողության մասին: Ժողովուրդը ամեն տեղ խանդավառ է և մեզ հետ է: Կազմված է Հայրենիքի Փրկության Կոմիտե իմ նախագահությամբ... Համենայն դեպս, վերադարձ դեպի բոլշևիզմ չկա: Ամբողջ ժողովուրդը կկոտորվի, բայց էլ չի ենթարկվի բոլշևիկյան զազրելի լուծին... Ս.Վրացյան, 1921թ., 20 Փետրվար, Երևան*»:

Անցնելով Սելիմի լեռնանցքը, կանգ եմ առնում Ճանապարհի վրա ընկած բոլոր գյուղերում, խոսում եմ ժողովրդի հետ և դիտում: Ժողովուրդը անշարժ է և անտարբեր: Բոլշևիկ ասելով՝ նա հասկանում է ծով ռուս ժողովուրդը և սարսափում է նրա դեմ զենք բարձրացնելու մտքից: Նա զարմանքով է լսում Սյունիքի կռիվների մասին, նա հիանում է, բայց հանդգնելու թափ չունի: Կան, անշուշտ, տարրեր, որոնք յոթը լեզվով են անիծում կարմիրների Հայաստան ոտք դրած օրը և... այսքանը միայն:

Այստեղ գյուղացիությունը ծանոթ չէ «հանդգնելու արվեստ»-ին. նա չունի ապստամբած ժողովրդի հպարտությունն ու քաղցր ինքնագիտակցությունը: Եվ հասկանալի է դա: Օրերի և ժամերի ընթացքում չեն դաստիարակվում զանգվածները: Երկարատև և ներուժ աշխատանք է պետք զանգվածների հավաքական հոգին կռել-կոփելու համար: Իսկ այդ ուղղությամբ մեր այդ շրջանում գրեթե ոչինչ չի կատարված:

Հոգեբանորեն երկու տարբեր աշխարհներ են Սյունիքն ու Նոր Բայազետը:

Առաջինում, գուցե և մարդ չգիտեք, որ կրոնական անկեղծությամբ չասի. «*Իմ ամբողջ արյունը պատկանում է հայրենիքիս*»: Երկրորդում՝ սյունեցու մտատրամադրությամբ պատրաստ միայն անհատներ կարելի է գտնել: «*Ցածր են այն հոգիները, որոնց մեջ տեղ չունի բարձր հայրենասիրությունը*»: Երկրորդ տարին է, ինչ այդպես է մտածում Սյունիքը:

Երկրորդը գուցե և դեռ նոր է լսում այդ ճշմարտությունը: Վաղուց է, ինչ առաջինը՝ անհայրենասիրությունը, մարդկային պարտականություններից խուսափելու ցանկության հանցավոր ծնունդը համա-

ռում է վատություններից գերագույնը և գարշում անհայրենասերներից: Չգիտեմ, երկրորդը երբևիցե հայրենասիրության դեմ մեղանչողների ցույց տվե՞լ է իր դուռը:

Բոլշևիկ, դասալիք, անհայրենասեր, սրանք այլևս հոմանիշ բառեր են սյունեցու համար: Նա գարշանք ունի սրանց դեմ: Նա խորշում է սրանցից: Ավելին՝ նա հալածում է նաև այն բոլորին, որոնց մասին ասված է. « *Խոնարհաբար համբուրում են հողը և տխուր սողում*»:

Նա չի սիրում անարիներին և այն բոլորին, որոնք վստահ չեն իրենց բազուկին: Վա՜յ դասալիքին. նա տեղ չունի սյունեցու հարկի տակ: Նա Հուդան է, որ կռվի դաշտում մատնում է իր ժողովուրդը: Նա Կայենն է, որ սպաննում է եղբորը: «*Կամ բնակավայրդ, կամ հոգիդ փոխիր*», ասել է և ասում է նա իր լեռների վրա ապրող հայանուն վատին, անհայրենասերին, վախկոտին: Եվ այժմ չկան այդպիսիները: Չկա վատը Սյունիքում, որովհետև չկա թույլը: Ուժեղին է հաղթությունը: Իսկ հաղթությունները բարոյապես բարձրացնում են, մարզում, թրծում են անհատն ու զանգվածը: Այդպիսին է այժմ սյունեցին:

Այդպիսին կարող է և պետք է լինի Նոր Բայազետի ժողովուրդը: Սակայն, դեռ այդպիսին չէ նա: Գուցե և իր աշխարհագրական ապահով դիրքի շնորհիվ կարիք չի զգացել իր մեջ դարբնելու սյունեցու ոգին: Սյունիքը հրամայողաբար պիտի դառնար այն, ինչ որ է այժմ. այլապես՝ նա կորած կլիներ: Թուրք-թաթար վտանգին է պարտական նա, իր կորովի կեցվածքը և հերոսի համբավը: Նոր Բայազետի հայությունը ապրել է ապահով և անկռիվ...

Այս խոհերով մտնում եմ քաղաք:

Ցանկանալով ինձ համար պարզել իրերի իսկական դրությունը Նոր Բայազետի շրջանում, հրավիրում եմ ինձ մոտ խմբապետ Աղաբեկին՝ լսելու:

- Ինչո՞ւ համար ինձ կանչեցիք Նոր Բայազետ:
- Որպեսզի ժողովուրդը տեսնի, որ մենք կապ ունինք ձեզ հետ, որ՝ կարիքի դեպքում կարող ենք օգնություն ստանալ Սյունիքից և որ՝ մեր թիկունքն ապահով է:
- Որքա՞ն զինվոր ունեք ճակատում:
- 500:
- Հեռախոսային կապ ունե՞ք ճակատի հետ:
- Ո՛չ:
- Հեռախոսաթել կամ ապարատներ պակասո՞ւմ են:
- Ո՛չ, ունենք և՛ այս, և՛ այն, բայց...
- Ո՞վ է ռազմաճակատի պետը:
- Մի թնդանոթաձիգ սպա:
- Ինչո՞ւ, հետևակային սպաներ չունե՞ք:
- Ունենք:

- Լեռնային թնդանոթներ ունե՞ք:
- Ունեինք, բայց մի քանի օր առաջ մի անհաջող հարձակման ժամանակ թողեցինք թշնամուն:
- Ո՞ւմ եք ենթարկվում ռազմագործողության տեսակետով:
- Ախտայի ճակատում գործող Երևանյան զորամասի պետ Կորալկովին:
- Կրակի կապ ունե՞ք նրա հետ:
- Ո՛չ, միայն սուրհանդակային:
- Ինչո՞ւ այդպես:
- Որովհետև Ախտայի զորամասը չի առաջանում...

Նա տալիս է և հետևյալ տեղեկությունները.

Մալական գյուղերում ամրացածների 80 տոկոսը քաղաքից են: Բոլորն էլ կապ ունեն քաղաքի հետ, իրենց ծնողների և համակիրների հետ: Ոչինչ չի կարելի ձեռնարկել, որպեսզի ժամեր հետո լսած և նախազգուշացած չլինեն բոլշևիկները:

- Նշանակում է շատ թափանցիկ է ձեր ռազմաճակատը, այլապես անկարելի պիտի լիներ հայ բոլշևիկների համար, ձեր զորամասի վրայով, հարաբերելու քաղաքի հետ: Գուցե և բաց դռներ ունի ձեր ռազմաճակատը: Ուրիշ ինչո՞վ կարելի է բացատրել բոլշևիկների և քաղաքի միջև գոյություն ունեցող կապը. անկանոն դիրքապահությա՞մբ, թե՞ ձեր մեղմ վերաբերմունքով...
- Այս շրջանում խիստ և վճռական լինել չի կարելի, որովհետև ժողովուրդը չի ապստամբել: Եղբայրը եղբոր, որդին հոր, ինչպես և բարեկամը բարեկամի դեմ չի ուզում կռվել: Չեն կռվում և ռուսների դեմ: Իսկ եթե զոռով քշեցիր առաջ, դասալքում են դեռ կռիվը չսկսված...

* * *

Մարտի 8-ի երեկոյեան ներքին Ախտայից ստանում եմ ընկեր Օհանջանյանի[25] հետևյալ տողերը.

«*Ստացա նամակդ և իսկույն ուղարկեցի Երևան, իբրև առաջին պաշտոնական կապը Լեռնահայաստանի և Մայր Հայաստանի*»:

Մարտի 10-ի գիշերը Նոր Բայազետի ուժերի հրամանատարությունը Ախտայի զորամասի պետից սուրհանդակների միջոցով ստանում է մարտական խնդիր: Տեղեկացնելով, թե Մարտի 11-ի առավոտյան իր զորամասը վերսկսելու է իր չորրորդ հարձակումը Ելենովկայի դեմ, Ախտայի ճակատի պետը պահանջում է խմբապետ Աղաբեկից հարձակում սկսել Նոր Բայազետի կողմից:

Այդ միևնույն օրը միևնույն սուրհանդակները հանձնում են ինձ ընկեր Օհանջանյանի հետևյալ գրությունը.

«*Սիրելի Նժդեհ,*

Ամբողջ սրտով ողջունում եմ քո և քո արծիվների գալուստը Արարատյան Հայաստանի շրջանները: Մեծ հույս ունեմ, որ ձեր գալուստը պիտի ոգևորի և քաջություն ներշնչի այդտեղի և այստեղի ուժերին, որոնք, պիտի խոստովանեմ, ինձ բավականին վհատեցրել են իրենց խուճապային տրամադրությամբ... Ձեր բարոյական ազդեցությունը շատ հարկավոր է մեր այս ճակատի հաջողության համար...

Ընկ. համբույրներով՝ Հ. Օհանջանյան, Ն. Ախտա, 10 Մարտ»:

«Բարոյական ազդեցություն» գործ դնելու համար անում եմ այն բոլորը, ինչ որ կարելի էր անել՝ առանց վտանգավոր երկիշխանության և խաչաձևումների տեղիք տալու:

Մարտի 10-ի գիշերը ժամը երկուսի մոտերը Աղաբեկն ու իր օգնականը մեկնում են ճակատ՝ իրենց զորամասը շարժման մեջ դնելու համար: Նրանց հետ է և խմբապետ Մեսրոպը՝ Սիսիանի երկտասնյակ ձիավորներով: Սակայն, դեռ լույսը չբացված, մինչև սրանց կողմից գործողություններ սկսելը, թշնամին անցնում է հարձակման: Քաղաքը լցված է դասալիքներով և մութ մարդկանցով: Արդեն խոսվում է Ախտայի զորամասի նահանջի մասին: Տեղեկություն չստանալով տեղի ունեցածի մասին, իմ մի քանի ձիավորներով շտապում եմ դեպի ճակատ: Ճանապարհին, խմբապետ Մեսրոպի ուղարկած ձիավորն ինձ պատմում է տեղի ունեցածի մասին: Վայրկյաններ անց՝ հասնում եմ ճակատ: Աղաբեկը հայտնում է, թե Ախտայի զորամասը, հակառակ իր մարտագրի, գործողություններ չի սկսել, որ նա թողել է Ախտան, նահանջել է, և այլն:

Զարացած են բոլորը, որ Ախտայի զորամասի հրամանատարությունը չի տեղեկացրել վերջինին, որպեսզի սա որոշի իր հետագա անելիքները:

Զարմանալու ոչինչ չկար: Ամեն մի անհաջող հարձակում, անգամ տեղի ունեցած առանց մարդկային կորուստի, զգալիորեն թուլացնում է հարձակվողի բարոյական թափը և թևավորում, բարոյապես գոտեպնդում հարձակման ենթարկվողին: Երեք անհաջող հարձակումների բարոյալքիչ ազդեցությունն զգացած զորամասի, ինչպիսին էր Ախտայի զորամասը, չորրորդ փորձը, անշուշտ, եթե այս վերջինը թվական կամ տեխնիկ գերազանցություն տվող նոր օժանդակ ուժեր չի ստացել կամ հակառակորդը ոչինչ չի կորցրել իր նյութական և բարոյական ուժերից, առնվազը, տեղի ունենալու դեպքում, պիտի պսակվեր անհաջողությամբ, եթե ոչ փորձանքով:

Հասկանալի պատճառներով, Ախտայի մեր զորամասը նյութական, թե բարոյական նոր ուժեր պիտի չկարողանար ստանալ, և, ընդհակառակը, օրեցօր պիտի թուլանար երկու տեսակետով էլ: Իսկ խորհրդային զորքերը ունեին ժամ առ ժամ ուժեղանալու բոլոր հնարավորությունները: Վրացիների պարտությունից հետո,[26] կարմիր հրամանատարությունը լայն հնարավորություն էր ստացել Վրաստանի իր զորամասերը փոխադրելու հայկական ռազմաճակատները: Գիտակ այդ բոլորին, ես չզարմացա, երբ լսեցի Ախտայի մերոնց նահանջի մասին, բայց խորապես զայրացա:

Այս անգամ էլ արհամարհված էր «ռազմական հարևանության» բարձր սկզբունքը: Դժվար թե Հայաստանում գտնվի կռիվների մասնակցած մի զինվորական, որը դառնացած չպատմի ձեզ, թե այսինչ ժամանակ, այսինչ տեղից նահանջելիս իր զորամասը թողել են բախտի կամքին: Հայ բանակի ամենամեծ թերություններից մեկն էլ եղել է «կրակի հարևանության» սկզբունքի անգիտակցումը:

Նահանջում է Ա. զորամասը, առանց տեղեկացնելու իր այդ տխուր գործողության մասին իր հարևան զորամասերին: Բ. զորամասը տեղի է տալիս, լքում է ճակատը, առանց ժամանակ և հնարավորություն տալու իր հարևան զորամասին ժամանակին և անկորուստ հետ քաշվելու: Գ. զորամասի հրամանատարությունը, ինչ-ինչ պատճառներով, հրամայում է նահանջել իր անմիջական ղեկավարության տակ գործող ուժերին, առանց նոր հրահանգներ հասցնելու իր անմիջական ղեկավարությունից դուրս գործող զորամասերի պետերին սրանց հետագա անելիքների համար:

Չկա ոճիր, որը կարելի լիներ հավասար համարել ընդգծածս սկզբունքի անգիտակցման: Ոչ թե երկուսը փրկելու համար հարկավոր է զոհել մեկը, այլ և ընդհակառակը:

Տգետ է, ավելին՝ չարագործ է այն հրամանատարը, որն իր մի հատիկ զինվորը փրկելու համար գիտակցորեն չի զոհաբերի երկուսը:

Չի՛ կռվում, չի՛ խիզախում այն զինվորը, որը համոզված չէ, որ վտանգի դեպքում, իրեն փրկելու համար, իր ընկերները իրենց գլուխը կտան:

Չի՛ հասնդգնում այն հրամանատարը, որը համոզված չէ, թե իր զորամասը նեղն ընկնելու դեպքում՝ իր հարևան զորամասերը արյուն և կորով չեն խնայի օգնության հասնելու:

Վստահություն, ավելին՝ կույր հավատ դեպի զենքի ընկերը, դեպի հրամանատարությունը և դեպի հարևան զորամասերը. ահա բանակների բարոյական ուժը:

Չկա՞ վստահություն բարոյապես անդամալույծ է բանակը: Պակասո՞ւմ է հավատը՝ կենդանի դիակ է բանակը:

Եվ միայն հարևան զորամասին օգնության փութալու, նրա հետ խզված կապը վերականգնելու և նրանց ժամանակին և ամեն գնով հարկավոր հրահանգներ հասցնելու դեպքերում է, երբ ոչ ոք իրավունք չունի ասելու՝ անկարող էի, չկարողացա: Ծանոթ նպատակներով միշտ էլ կարելի է և պետք է զոհեր տալ, մեռնել:

Սակայն, դառնանք Ախտայի դեպքին:

Տխուր փաստը կատարված էր: Այս անգամ էլ ժամանակ և մեկ-երկու մարդ չէր գտնվել հրահանգներ հասցնելու զորամասերից մեկին: Եվ այժմ Նոր Բայազետի հրամանատարությունը չգիտեր՝ ե՞րբ և ինչո՞ւ է նահանջել Ախտայի զորամասը. թշնամու ճնշմա՞ն տակ, թե՞ տակտիկական նկատառումներով է հետ քաշվել. ո՞ւր է կանգ առնելու՝ դիմադրություն ցույց տալու համար:

Ի՞նչ անել այժմ: Համենայն դեպս, ոչ այն, ինչ որ հաճախ անում են նման դեպքերում լքված զորամասերի պետերը:

Նոր Բայազետի հրամանատարությունը իրավունք չուներ պատահականության կամքին հանձնելու իր զորամասը և չվարվեց այսպես: Նրա թիկունքում կար ազատ Լեռնահայաստանը՝ Վայոց Ձորը, Սյունիքը, Լեռնային Ղարաբաղը, որոնց հետ կապված էր կենդանի կապով: Կորցնելով իր սուրհանդակային կապը Երևանի հետ, ասել է՝ Երևանից հրամաններ և հրահանգներ ստանալու հնարավորությունը, Նոր Բայազետի հրամանատարությունը, բնականաբար, պիտի ենթարկվեր Լեռնահայաստանի իշխանության: Երկու օր անց՝ մեր ուժերը վերստին գրավում են քաղաքը, սակայն, քաղաքացիների թշնամական վերաբերմունքից մղված՝ հետ են քաշվում:

«Սպարապետ Նժդեհին,

Ձեր ենթադրությունը քյավառցիների մասին՝ կատարելապես իրականացավ: Դավաճանությունը քաղաքացիների կողմից էր, որոնք մեզ զրկեցին թիկունքից...

Նոր Բայազետի զորամասի հրամանատար՝ փոխ-գնդապետ Բէկ Ձուրաբով, Մարտ 11, 1921թ., Ղարանլուխ»:

Այսպես, Ախտայի զորամասը, հակառակ իր՝ Նոր Բայազետի հրամանատարության ուղարկած մարտագրի, ոչ թե Մարտի 11-ի լուսաբացին չի անցնում հարձակման, այլ և՝ անսպասելիորեն նահանջում է, թողնում Ախտան: Նոր Բայազետի զորամասը, անիրազեկ տեղի ունեցածի մասին, գործողություններ չսկսած, ենթարկվում է թշնամու հարձակման և տեղի տալիս: Պարզվում է, որ Մարտի 10-ի գիշերը, Ախտայի հրամանատարության մարտագիրն ստացվելուն պես, քաղաքացիները նախազգուշացնում են մալական գյուղերը քաշված հայ բոլշևիկներին, իսկ Աղաբեկի դրոշակի տակ գործողներին դասալքել տալիս՝ փախցնում ճակատից՝ «եղբայրասպան կռվի առաջն առնելու նպատակով»:

11-ի լուսաբացին ճակատում լինում են միայն 200-ի չափ գյուղացիներ, որոնք՝ քաղաքացիների տրամադրությունից գազազած՝ նահանջում են դեպի քաղաք և ցրվում: Աղաբեկն ստիպված է լինում պարպել քաղաքը և քաշվել Ղարանլուխ:

Ստեղծված դրության մեջ, հոգեբանորեն անպատրաստ մի շրջանում, ինչպիսին էր Նոր Բայազետը, *բարոյական* ազդեցությամբ շատ քիչ բան կարելի էր անել:

Թշնամուն իր ծանոթ հաջողությունից օգտվելու հնարավորությունից զրկելու համար, պետք էր մարտական կենդանի ուժ, այն էլ՝ անպայման դրսեցի, որովհետև տեղական ժողովրդի 99 տոկոսը առնվազը անտարբեր էր: Պետք էր ամեն գնով մեր ձեռքին պահել Նոր Բայազետի մի մասը, որպեսզի թշնամին տեր չդառնար Սելիմի լեռնանցքին:

Տիրելով այդ կարևոր կետին, նա կռիվների ծանրության կենտրոնը պիտի տեղափոխեր Վայոց Ձոր, հաջողության դեպքում՝ վերստին փակեր Արարատյան Հայաստանից դեպի Սյունիք բացվող միակ դուռը և անխնա պիտի ոչնչացներ Երևանի ապստամբ տարրերը:

Պետք էր խլել նրանից այդ հնարավորությունը: Իսկ այդ անելու համար պետք էր Սիսիանի վաշտերից մեկը Վայոց Ձորից փոխադրել Ղարանլուխ:

Եվ այդ անում եմ, որպեսզի կարմիրները, մինչև Երևանյան գաղթականության Սյունիք անցնելը, անկարող լինեն օգտվելու Սելիմի լեռնանցքից: Սիսիանցիների զորախումբը Ղարանլուխ ժամանած օրը վերջ է տրվում Աղաբեկի անհիմաստ անձնական դիկտատուրային: Սրա փոխարեն նշանակում եմ զինվորական մի մարմին՝ բաղկացած Աղաբեկից, Մեսրոպից և մի թնդանոթաձիգ սպայից: Այդ «եռապետության» եմ ենթարկում նաև Սիսիանից եկած հետևակային վաշտը:

Հրահանգելով Նոր Բայազետի հավաքական հրամանատարությանը՝ ամեն գնով թումբ կանգնել թշնամու առաջխաղացման դեմ դեպի Ղարանլուխ և Սելիմի լեռնանցքը՝ ես վերադառնում եմ Վայոց Ձոր: Իսկ իմ Սյունիքի վաշտն ու ծիավորները այստեղ էլ կատարում են իրենց փրկարար դերը: Նրանք Նոր Բայազետի շրջանը թողնում են Երևանի անկումից ամբողջ յոթ օր հետո, երբ Արարատյան գաղթականությունը արդեն գտնվում էր Վայոց Ձորում և Սիսիանում:

Երևանում և իր շրջանում տեղի ունեցող դեպքերի մասին գիտեի միայն այն, ինչ որ Փետրվարի 18-ին գրել էր Ս. Վրացյանը: Որևէ նոր տեղեկություն չէր ստացվել, չունեի: Այդ այդպես լինելով հանդերձ՝ այնտեղի դրությունը մխիթարական լինելուց հեռու էի համարում: Կարիք չկար մարգարե կամ պարզատես լինելու, նկատի ունենալով ուժերի իրական փոխհարաբերությունը, այդ օրերին մոտավորապես գուշակելով այն, ինչ որ կարող էր տեղի ունենալ:

Արարատյան Հայաստանի մի մասը՝ ծով Ռուսաստանի դեմ: Ինչ խոսք, որ ոչ ոքի չպիտի զարմացներ առաջինի պարտությունը, այն էլ այն ժամանակ, երբ հակաբոլշևիկ Վրաստանը դադարել էր այդպիսին լինելուց, Մուսավաթը, հասկանալի պատճառներով, վարում էր հակա-

հայ քաղաքականություն, իսկ Անգորան համբուրվում էր Մոսկվայի հետ:

Երևանի ապստամբությունը նպատակ չուներ երկար ժամանակով վերականգնելու հանրապետական Հայաստանը: Ավելի պարզ էր նրա առարկան՝ փշրել խորհրդային բանտերի դռները, ուր հոգևարում էր հայ մտավորականությունը: Հաջողվելով իր այդ փորձի մեջ, նա պիտի ձգտեր վերագրավել Երևանը Սյունիքից բաժանող խորհրդային գավառներից մեկը կամ երկուսը: Ռազմական ընդհանուր դրությունը պիտի թելադրեր Երևանի ապստամբներին մղվելու դեպի Սյունիք՝ Նոր Բայազետի կամ Վայոց Ձորի վրայով:

Առաջին ուղղությունը ընտրելիս, նրանք պիտի գրավեին թե՛ Նոր Բայազետը և թե՛ Վայոց Ձորը: Երկրորդ ուղղությունն ընտրելիս՝ նրանք պիտի գրավեին միայն Վայոց Ձորը և սրա ու Ջանախչիի միջև ընկած թուրքական գյուղերը:

Բարեբախտաբար, Սյունիքը Երևանի ապստամբությունից օրեր առաջ գրավել էր Վայոց Ձորը և իջել Նոր Բայազետ:

Արարատյան ապստամբ ուժերին մնում էր օգտվել Սյունիքի նվաճումներից և անցնել Սյունիք:

Երևանի հրամանատարությունը գիտեր, որ Անդրկովկասի խորհրդային բանակները՝ 11-րդ և 9-րդ՝ գտնվում էին Ադրբեջանում և Վրաստանում, որ առաջինը, պարտված, զբաղված էր մեր ուժերով Ղարաբաղում, իսկ երկրորդը՝ վրացիներին ծովը թափելուց հետո, ազատ էր ամենակարճ ճանապարհով իջնելու Հայաստան: Ասել է՝ իրերի այս դրության մեջ հավանական հարվածը Երևանին պիտի տրվեր Վրաստանի կողմից:

Թողնելով Ախտան, Երևանյան ուժերը՝ ընդհանուր նահանջի դեպքում անխուսափելիորեն պիտի ընտրեին Երևան-Ջանախչի-Վայոց Ձոր գիծը: Այսպես պիտի զարգանային դեպքերը: Այլ կերպ լինել չէր կարող: Մնում էր ժամ առաջ ապահովել ծանոթ գիծը, այն է՝ գրավել մեր և Երևանյան ուժերի միջև ընկած թուրքական գյուղերը:

Այս ծրագրով շտապում եմ Այնազուր: Տեղ հասնելուց մի օր հետո շարժման մեջ եմ դնում Սիսիանի և Վայոց Ձորի միացյալ ուժերը: Ժամերի ընթացքում մաքրվում է Քեռմուրլուի շրջանը, որից հետո, հրահանգում եմ Յապոնին կապվելու Երևանյան զորամասի հետ և մեկնում եմ Սյունիք:

Անցնում եմ Քեշիշքենդով: Այստեղ է շրջանի Փրկության Կոմիտեի նախագահ Ե. Իշխանյանը, որը մեր զորքերի պարենավորման և մեզ ռազմամթերք հասցնելու գործում կատարել է եզակի դեր: Վայելելով ժողովրդի վստահությունը, այդ անխոնջ գործիչը Ղարալագյազ էր անցել դեռ Հայաստանի Հանրապետության օրով: Ծանոթացնելով Իշխանյանի կոմիտեին՝ ստեղծված ընդհանուր դրության հետ և թողնելով որոշ հրահանգներ, անցնում եմ Սյունիք, որտեղից վաղուց էր, ինչ կանչում էին ինձ:

ԱՆՑՔԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

Լեռնային Ղարաբաղի հետ կապված էի դեռ 1920թ. Նոյեմբերի կեսերին, Գորիսը գրավելուց մի քանի օր հետո:

Այդ օրերին, որոշ հրահանգներ ստանալու նպատակով, Սյունիք է անցնում Դիզակի խմբապետ Թևանը:[27] Սրա վերադարձից հետո, Տաթև են հասնում Դիզակի երկու ներկայացուցիչները՝ ղեկավար, ռազմամթերք ու մի զորամաս խնդրելու առաքելությամբ:

Հունվարի 7-ին ստանում եմ հետևյալ տողերը. «*Խնդրում ենք ձեզանից խնայել Ղարաբաղի հայ ժողովրդին, որը սպասում է ձեզ գիշեր-ցերեկ... Հունվար 3, 1921թ.*»:

Հունվարի կեսին Ղարաբաղ ուղարկածս սյունեցիների առաջին զորամասի աջակցությամբ տեղի ապստամբները օրերի ընթացքում մաքրում են բոլշևիկներից աբողջ Դիզակը: Մի քանի օր անց, կարմիրները, պարտված, տեղի են տալիս և Վարանդայի շրջանում, և՝ քաշվելով դեպի հարավ, ամրանում են Հադրութում: Մարտի 8-ին խորհրդային զորքերը կորցնում են Ղարաբաղում ունեցած իրենց վերջին հենակետը: Մերոնց ճակատային մի խիզախ գրոհից հանկարծակիի եկած՝ թշնամին խուճապով փախչում է դեպի Ջիբրայիլ, թողնելով հարյուրավոր սպանված, 150 գերի, ռազմամթերք, գնդացիրներ, հացի պաշար, և այլն:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը թոթափում է սովետական լուծը և միանում Սյունիքին:

Դժբախտաբար, Ղարաբաղի մեր վերջին հաջողություններին հաջորդում է Վրաստանի անկումը: *Վրաստանի գրավումը խորհրդային իշխանության կողմից միանգամայն հուսահատեցրել է ղարաբաղցիներին:* Իր մի հաղորդագրության մեջ, իմիջայլոց, ասում էր մեր Ղարաբաղի էքսպեդիցիոն զորամասի պետ Տեր Պետրոսյանը 1921թ. Ապրիլի 8-ին: «*Ես նույնիսկ կասկածում եմ*, գրում էր նույնը, *որ մենք կարողանանք այստեղից ապահով դուրս գալ*»: Իսկ 1921, Ապրիլի 12 թվակիր գրությամբ Տեր Պետրոսյանը տեղեկացնում էր. «*Կամուրջը քանդված է, հաղորդակցությունը կտրված, կռիվները սկսված*»:

Այսպես, անշուշտ, պիտի վարվեր ռազմական ամենադույզն հոտառություն ունեցող թշնամին անգամ: Նա պետք է շահեցներ իր Վրաստանի և Երևանի նոր հաջողությունները. պետք է իր բոլոր ուժերը արևելքից ու արևմուտքից միաժամանակ շարժեր Սյունիքի դեմ և, օգտվելով գաղթականության ստեղծած մթնոլորտից, անձնատվության մղեր մեզ: Իսկ այդ անելու համար պետք է, նախ, երկու կրակի մեջ առնելով, ոչնչացներ մեր Դիզակի զորամասը: Եվ չուշացավ նա:

Ապրիլի 15-ին նա փորձեր կատարեց սեպաձև թաղվելու Ղարաբաղի և Սյունիքի միջև: Նա ոտքի հանեց նաև Դիզակի և Զաբուղի միջև ապրող թրքությունը: Վերջինը Ապրիլի 7-ից սկսած թշնամական գործողություններ սկսեց մեր դեմ: Նա պարբերաբար խորտակում էր Զաբուղի կամուրջը, հարձակվում էր մեր քարավանների վրա, կտրում էր գիծը...

Վաղուց է ինչ հանդուրժելիորեն ծանրացել էր դրությունը, բայց և այնպես պետք էր դիմանալ Ղարաբաղում, մինչև որ կպարզվեր Երևանի դրությունը:

* * *

Այս վիճակի մեջ, երբ դեռ նոր էի հասել Գորիս և վերսկսել շրջագայություններս ռազմաճակատներում, ստացա Ս.Վրացյանի հետևյալ գրությունը:

«*Սյունյաց Սպարապետ Նժդեհին և Դարալագյազի հրամանատար Յապոնին,*

Գրաբերներս լիազորված են ձեզ տեղեկացնելու այստեղի կացության մասին և մեր կողմից անելու մի շարք առաջարկություններ: Խնդրում եմ նրանց հավատալ և ամենայն լրջությամբ վերաբերվել դեպի նրանց ասածները: Մի բանի վրա միայն առանձնապես շեշտում եմ և խնդրում եմ ուշադրության առնել, Դարալագյազ-Զանգեզուր-Երևան գծի բացումը մեզ համար շատ է կենսական և անհետաձգելի, ինչպես նաև մարտական օժանդակություն հասցնելը: Ամեն գնով պետք է կապվեք մեզ հետ և ճանապարհը ապահովեք: Մնացածը կպատմեն»:

Ձերդ՝ Ս. Վրացյան

Գիտեք, որ օրեր առաջ կատարված էր այն, ինչ որ Երևանից այժմ խնդրում էին մեզնից: Ծանոթ գիծն արդեն բաց էր և ապահով: Երևանի գաղթականությունը անվտանգ ու անկորուստ պիտի անցներ: կարգադրում եմ Վայոց Ձորի հրամանատարության հսկողությունը ուժեղացնելու Քեռմուրլուի շրջանում: Երկու օր անց՝ Յապոնը հաղորդագրում է.

«*Ամսի 2-ին մերոնք թողել են Երևանը: Ժողովուրդը և զինվորությունը հասել են Այնազուր: Քիչ մասը զինված է: Ուժ կունենանք մոտ 10,000: Մերոնք (Նոր Բայազետում) թողել են Երանոսը և քաշվել Ղարանլուխ: Յապոն*»:

Մեկ-երկու օր անց՝ գաղթականությունը թափվում է Սիսիան, Դարաբաս, Տաթև:

Ղարաբաղից տեղեկացնելով մեր վաշտերի պաշարված լինելու մասին, խնդրում են շուտափույթ օգնություն:

Վայոց Ձորից խնդրում են լինել Բազարչայում, որպեսզի խուճապը չտարածվի: Գաղթականության հետ, կազմալուծված վիճակի մեջ, դեպի Սյունիք են շարժվում ամբողջ զորամասեր:

Վայոց Ձորից Ռ.Տեր Մինասյանը[28] և արևմտյան ճակատի պետը խնդրում են Բազարչայի կամենդանտին, զինաթափել Երևանյան զորամասերից ինքնագլուխ կերպով հեռացող խմբերը: Տեղի են ունենում տարաձայնություններ կամենդանտի և դասալքողների միջև:

Եկվորներից ոմանք չեն ուզում հասկանալ, որ գաղթականության հետ հեռացող զինված երիտասարդների վրա տեղացին պիտի նայի որպես դասալիքի: «*Միրելի Նժդեհ*, գրում էր Ս.Վրացյանը Ապրիլի 26-ին Մեղրիից, *հենց հիմա Քաջազնունու և Հակոբի*[29] *հետ հասանք Մեղրի*: Ամբողջ ճանապարհին լավ տրամադրություն տեսանք. բայց գաղթականության միջի երիտասարդները լավ չեն ազդում: *Հարկավոր է երիտասարդներին առայժմ թույլ չտալ անցնել*»:

Առանց իրենց հաշիվ տալու, որ այդ ձևով կարող էին բարոյալքել տեղացի ազգաբնակությունը, նրանք շարժվում են դեպի Արաքսի ափը: Ստիպված անցնում եմ Բազարչայ, հարթում եմ թյուրիմացությունները, խոսում եմ արևմտահայ զորամասի հետ, լսում եմ սրա հրամանատարական կազմին, որը հայտարարում է, թե այսինչ, այնինչ նկատառումներով չի ուզում մնալ արևմտյան ճակատում, կողք կողքի Երևանյան զորամասերի հետ, և անելով հարկավորը, շտապով վերադառնում եմ Տաթև դիմում կատարելու պարսից կառավարության, կազմակերպելու Ղարաբաղում պաշարված զորամասին օգնության հասնելու գործը և գումարելու Լեռնահայության երկրորդ համագումարը:

* * *

Ապրիլի 18-ի գիշերը բուն Զանգեզուրի ուժերը իրենց քաջ հրամանատար Ամիրջանյանի[30] ղեկավարությամբ անցնում են Զաբուղը, սրբում Չինարլու, Մագութ, Բալդրղան, Թուրաբի թուրք գյուղերը, ճեղքում կարմիրների գիծը և հնարավորություն ստեղծում մեր վաշտերի համար՝ անկորուստ անցնելու Սյունիք:

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԿՈՒՄԸ

Նա, որ ցանկություն և ժամանակ է ունեցել ուսումնասիրելու մեր վերջին տարիների ռազմական անհաջողության պատճառները, անվերապահորեն խոստովանում է, որ *մեր բոլոր պարտությունների մեջ վճռական դեր են կատարել մեր տարերային գաղթերը:*

Եվ հասկանալի է այդ: Ոչ մի հիվանդություն այն աստիճան տարափոխիկ չէ, որքան խուճապը:

Այդ զարհուրելի «հիվանդությունն» էլ իր «մանրէն» ունի՝ վտանգից կամ վտանգված վայրից փախչող անհատը կամ զանգվածը: Զինվորը, կամ ոչ զինվորը, ուժեղ է, երբ վտանգի և հաղթանակի ծարավով լցված, որևէ կերպ իր մասնակցությունն է բերում մղվող պատերազմին: Փախչելով կռվից, թշնամուց, վտանգից, նա դառնում է վտանգավոր միայն իր և յուրայինների համար: Նա, ակամայից, ամենամեծ ծառայությունն է մատուցում առաջացող թշնամուն: Նա անում է այն, ինչ որ չպիտի կարողանային կատարել թշնամու բանակները: Երևալով այս կամ այն վայրերում, նա իր նկուն և խղճալի տեսքով, իր պարտվածի և զենքընկեցի հոգեբանությամբ ակամայից թշնամու հզորության գովքն է անում, հարյուրապատկելով նրա ուժերը, թնդանոթները, միջոցները: Նա, ակամայից, դառնում է թշնամու առաջամարտիկ զորագունդը, թշնամու ճանապարհը հարթող ռահվիրան, նրա ամենաանշան հաջողությունները ուռճացնող ու տարածողը, նրա դրոշակակիրը: Վտանգից փախչողն է՝ անհատ, թե զանգված՝ դավադրաբար թիկունքից իր զորքերին առաջին հարվածը հասցնում: Նա է բարձրացնում սեփական կաշվի արժեքը և պսակազրկում սրբություններն ու իդեալները: Հայրենիք, ազատություն, սկզբունք՝ իր երեկվա աստվածությունները նրա համար ավելի քիչ բան արժեն, քան իր դասալիքի, իր պարտվածի տխուր գոյությունը:

Զարհուրելի է գաղթականությունը: Որքան մեծ, այնքան աղետալի է նա: Իսկ մեծանում է նա ժամերով, վայրկյաններով: Բազմանալու զարմանալի կարողություն ունի: Որպես ծնագունդ որքան թավալվում, որքան առաջանում է, այնքան աճում, մեծանում է:

Աճել և աճեցնել թշնամու հաջողությունները, ահա նրա գործը: Պարտություն, ահա նրա անունը, նրա էությունը, նրա շունչը: Ե՛վ բարոյալքվված, և՛ բարոյալքիչ է դա: Հաճախ նա ամբողջ բանակներ ու երկրներ է կործանում:

* * *

Գաղթը, գաղթականությունը, ահա՛ մեր ներքին թշնամիներից մեկը:

Ոչինչ այնքան առատ յուղ չի քսում թշնամու հացին, որքան գաղթը: Ոչինչ այնքան շուտ, այնքան հեշտ չի բարոյալքում և կազմալուծում զորքը, որքան գաղթը, գաղթականությունը: *Ո՛չ մի նյութական անհաջողություն և ո՛չ մի կորուստ, լինի դա հողային, թե մարդկային, այնքան արագ չի խախտում զորքերի բարոյական հավասարակշռությունը, ինչպես գաղթականությունը, գաղթը:* Այդ տխուր և անփառունակ արիությունը մարում է նրանց մեջ ռազմական բոցը, խռովություն և շփոթ մտցնում նրանց հոգիների, նրանց շարքերի մեջ:

-Վտանգ կա, մահ կա, դավաճանորեն հիշեցնում է թշնամու հետ չափվող զորքերից՝ խուճապի մատնված գաղթականությունը և

ստիպում, անգամ ամենախիզախներին ու անձնվերներին ցնցվել, հետ նայել, ասել է՝ մտածել նահանջի մասին:

-Կռվողների հոգիների մեջ սկսվում է տագնապը: Նրանց համար, երբեմն կամաց-կամաց, երբեմն էլ մի վայրկյանի մեջ գունատվում են, անարժեքանում, կորցնում իրենց լուսապսակն այն բոլոր իդեալները, որոնց պաշտամունքը նրանց՝ թշնամու դեմ էր հանել:

Եվ այսպիսով յուրայիններից դավադրված ու պարտված դժբախտ զորքը, որն ուխտել էր տուն վերադառնալ *կա՛մ վահանով կա՛մ վահանի վրա,* վերադառնում է սարսափով բռնված գաղթականության հետ: վերադառնում է վահանը լքած՝ իր հետևից դեպի իր երկրի խորքերը քարշ տալով հաճախ թվապես իրենից շատ թույլ թշնամուն:

Ահա՛ թե ինչու խելոք թշնամին՝ ծանոթ բանակների հոգեկան կյանքի թաքուն զսպանակներին, ամեն կերպ ճգնում է գաղթեր առաջացնել, գաղթականություն ստեղծել իր հակառակորդի անմիջական թիկունքում: Ահա՛ թե ինչու *կռվի հոգեբանության ծանոթ հրամանատարությունը ոչ մի միջոցի առաջ չպիտի կանգ առնի՝ կռվի օրերին, կռվի վայրերում անհնարին դարձնելու գաղթ կոչված չարիքը:*

* * *

Երևանը՝ նորից պարտված:

Ե՛վ սպասելի, և՛ անսպասելի էր այդ ինձ համար:

Սպասելի էր, որովհետև ժամանակին ստացել էի Հայաստանի Հանրապետության նախկին նախարարապետ Հ. Օհանջանյանի ծանոթ գրությունը, որ ասում էր.

«*Սիրելի Նժդեհ,*

Ամբողջ սրտով ողջունում եմ քո և քո արծիվների գալուստը Արարատյան Հայաստանի շրջանները: Մեծ հույս ունեմ, որ ձեր գալուստը պիտի ոգևորի և քաջություն ներշնչի այդտեղի և այստեղի ուժերին, որոնք պիտի խոստովանեմ, ինձ բավականին վիատեցրին իրենց խուճապային տրամադրությամբ...»:

Անսպասելի էր, որովհետև ստացել էի նաև Ս.Վրացյանի հետևյալ գրությունը, որ ասում էր. «*Ժողովուրդն ամեն տեղ խանդավառ է, և մեզ հետ է. համենայնդեպս, վերադարձ դեպի բոլշևիզմը չկա... ամբողջ ժողովուրդը կկոտորվի, բայց էլ չի ենթարկվի բոլշևիկյան զազրելի լծին*»:

Անշուշտ, Երևանը տարիներով չէր կարող դիմադրել. բայց ցանկության դեպքում մի քիչ երկար դիմադրություն կարող էր ցույց տալ: Չեմ ուզում ասել՝ ցանկալի էր, բայց դա հնարավոր էր: Բաշգյառնին երկար ժամանակ կարելի էր ձեռքից չտալ:

Պետք է ասել, որ Երևանի անկման փաստից ավելի աղետալին Սյունիքի համար Երևանի ապստամբական զանգվածների տեղի տալու ձևն էր:

Զորամասերը չեն գաղթում, այլ նահանջում են ռազմագիտորեն: Իսկ նահանջել՝ նշանակում է տեղի տալ կռվով, աստիճանաբար, կազմակերպված ձևով, խուսափելով տնաքանդ խուճապից և բարոյալքումից, որոնք, գիտենք, հաճախ ամբողջ բանակներ ու երկրներ են կործանել: Սակայն, Երևանի անկումը պսակվել էր մերոնց համար ոչ թե ռազմագիտական նահանջով, այլ սովորական խուճապով և գաղթով:

Սեղմ լինելու համար այդ մասին՝ պիտի բավականանամ մի քանի վկայությունների մեջբերումով միայն:

Ահա մի քանի տող Վայոց Ձորի Ազգային Խորհրդի նախագահ Ե. Իշխանյանի մի գրությունից.

«*Տեղ ժամանած ինտելիգենցիան, գաղթականությունը և միանգամայն հոգնած ու ընկճված զորքերը կատաստրոֆա առաջ բերին Վայոց Ձորում: Պետք է այդտեղ ահաբեկել պանիկա գցողներին: Գաղթականության մեջ, անշուշտ, վատահոգի էլեմենտներ կան, որոնք հատուկ միսիայով անցել են Տեղ պանիկա գցելու և տեղեկություններ իմանալու: Տեղ անցկացրածների բուռն ցանկությունն է անցել Պարսկաստան: Տաճկահայերը մի որպես անգամ կանգ չեն առնի այդտեղ, եթե ազատ ելք ունենան սահմանից*»:

«Մարդիկ կան, որոնք կորած են համարում ամեն ինչ: Այդպիսիններից պետք է միանգամայն ազատվել...»:*

Ահա և Ս. Վրացյանի կարծիքը. «*Երևանից եկող տասը հազարանոց բազմությունը, բնականաբար, վատ ազդեց և զանգեզուրցու տրամադրությանը*»:**

«*Ապստամբների, կուսակցականների և մարտիկների հետ էր նաև մի ահագին ամբոխ - հազարներով ու հազարներով ահաբեկված մարդիկ, որոնք հաշիվ չէին տալիս իրենց, թե ո՞ւր են գնում և ինչի՞ համար գնում: Անխուսափելի պարտությունը կատարված փաստ էր արդեն: Այն, ինչ որ տեղի ունեցավ հետագա երկու-երեք ամիսների ընթացքում՝ Դարալագյազի և Զանգեզուրի մեջ, պայքար չէր այլևս, այլ հոգևարք... Հաշվի չէինք առել, որ պարտված, կազմալուծված և նահանջի ճամբան բռնած խմբերը և մանավանդ սարսափահար ամբոխը, կարող են առաջ բերել միայն լքում և հուսահատություն: Ակամայից շփոթ էինք մտցրել տեղական կյանքի մեջ: Ծագել էր մի խուլ հակառակություն եկվոր և տեղական իշխանությունների միջև*», գրում էր Հովհ. Քաջազնունին:[31]

Մեջբերենք նաև արևմտահայ զորամասի հրամանատար Սմբատի[32] մի հաղորդագրությունից հետևյալը.

«*Լեռնահայաստանի Սպարապետ Նժդեհին,*

Խորապես ցավում եմ, որ հնարավոր չեղավ մեզ իրագործելու ձեր հրամանը: Մոտ 1000 հոգով մեկնեցինք Քաջարան, որտեղից ճամբա պիտի ելնեինք դեպի Գողթան: Դժբախտաբար, զինվորությունը, պատճառաբանելով իր հոգնածությունը, մերկ, բոկոտն և քաղցած վիճակը, մերժեց այդ ուղղությամբ շարժվել...»:*

Ինչպես տեսնում եք, գաղթականությունը Սյունիք էր բերել ավելի քայքայիչ բաներ, քան կարող էր արիական, բայց սոված ու աշխարհից կտրված Սյունիքի փոխարեն կործանել յոթը մեծ Հայաստան: Բացարձակ անհուսություն, լքում, խուճապ, պարտվողական ոգի, սով, արտերկրային հոգեբանություն և քաոս՝ ծնունդը այդ աղետաբեր երևույթների:

Դա դեռ բոլորը չէ: Պետք է հաշվի առնել նաև Վրաստանի, Հայաստանի և Սպիտակ Ղրիմի անկմամբ[33] ստեղծված ընդհանուր դրությունը, ճերմակ բանակների վերջնական պարտությունը, սովետալեհական հաշտությունը, հացի, ռազմամթերքի և հաղորդակցության չգոյությունը և, որպես հետևանք այդ բոլորին, մեր ողբերգական մենակությունը: Այժմ հասկանալի պիտի լինի այն աննախընթացորեն ծանր դրությունը, որի մեջ, Երևանի երկրորդ անկմամբ, դրվեց իմ խնամքին հանձնված երկրամասը: Քիչ ազգեր և շատ քիչ անգամ են ներկայացրել նման ծանր վիճակ: Իսկ նման վիճակից՝ պատվով և առանց աղետի, դուրս է եկել, գուցե և միայն Սյունիքը:

Շատերը Երևանի երկրորդ անկումից հետո միայն հասկացան Սյունիքի անկախության անչափելի արժեքը: Տասներկու հազարի չափ գաղթականություն Սյունիքում, կարմիր կացնից հալածված ու ահաբեկված՝ հեղեղելով Սիսիանի, Դարաբասի, Տաթևի, Ղափանի և Գենվազի գյուղերը, աճապարում են դեպի Արաքսի ափը՝ ժամ, վայրկյան առաջ Պարսկաստան անցնելու ցանկությամբ:

Թշնամին գիտեր, թե ինչ կարող է առաջացնել բազմահազար գաղթականությունը Սյունիքի նման աշխարհից կտրված և սոված մի երկրամասում: Նա գիտեր այդ և փորձեր էր կատարում օգտվելու ստեղծված դրությունից: Երբ տեղահան եղած հայ մտավորականության առաջին խմբերը հասան Արաքսի հայկական ափը, մի սաստալի վերջնագրով նա դիմեց Գենվազի գետափնյա գյուղացիությանը և

---

* 1921թ., 17 Ապրիլ, Գնդևազ:

** 1921թ., 3 Մայիս, Լիչք:

* 1921թ., 3 Մայիս, Լիչք:

պահանջեց «հրաժարվել մտավորականության պաշտպանությունից, տեղի տալ և հանձնել զենքերը»:

Այդ սպառնալի պատասխանը եղավ կարճ և պարզ. «Ե՛կ և ա՛ռ»:

Սկսվեց թշնամու կոչերի և վերջնագրերի հեղեղը: Նա սպառնում էր Արաքսի ափերին կրկնել Շահ Աբասի օրերը: Ի զո՛ւր: Չէր դողում և ոչ մի սիրտ, չէր թուլանում և ոչ մի բազուկ: Իմ գնդերը խորապես գիտակցում էին վայրկյանի բովանդակ լրջությունը և իրենց ազատարարի դերը: Նրանք՝ կիսաքաղց, բայց հաղթական, մերկ՝ բայց հոգով արի, մնում էին կառչած իրենց զենքին ու դիրքին: Թառած անբավարար չոր հացով, երբեմն էլ արմտիքով, լեռնակատարներին, ձյուների վրա, երբեմն շարունակում էին բարձունքներից սև ամպերի պես կախված մնալ թուրք, թաթար և ռուս հորդաների գլխին: Այժմ նրանց ինքնագիտակցությունը ավելի քաղցր էր և հպարտ: Նրանք փրկիչներ էին:

Նրանց էր ուղղված իմ հետևյալ գրությունը.

«*Երևանի շուրջն ունեցած կռիվների պատճառով կառավարությունը քաղաքից դուրս է բերել անգեն ու կռվի անընդունակ հասարակության մի մասը. դուրս եկածների մեջ է հայ ինտելիգենցիայի հարյուրից իննսունը, հարյուրներով ուսուցիչներ, ինժիներներ, տեխնիկներ, փաստաբաններ, քաղաքական գործիչներ, ուսանողներ և այլն: Ամիսներ առաջ հերոսական Գենվազը փրկեց հայ ցեղի ու պատմության պրեստիժը, այսօր նա պետք է փրկի հայ ժողովրդի սիրտն ու ուղեղը՝ նրա մտավորականությունը: Այդ պատմական ու վեհ խնդիրը, հայ ինտելիգենցիայի սովից ու թշնամու սրից փրկելու սրբազան գործը ձեզ է տրվում: Հաջողություն ձեզ: Զորավար Նժդեհ, Տաթևի վանք, 1921, Ապրիլի 15*»:

ՏԱԹԵՎԻ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Երևանյան գաղթի առաջացրած բարոյալքումից հեռու պահելու համար՝ պետք էր մի նոր ժեստով գոտեպնդել տեղական ժողովուրդը: Եվ այդ ոչ թե միայն անկախ Հայաստանի գաղափարն ապրեցնելու համար, այլև որպեսզի հոգեբանական հնարավորություն տրվեր Սյունիքի հայության՝ մի որոշ ժամանակով ևս դիմավորելու իրեն օգնակող ռուս և թուրք հորդաներին, մինչև որ մազապուրծ եղած հայ մտավորականությունը կանցներ Պարսկաստան: Երևանի առաջին անկմամբ ստեղծված ծանր դրությունը փրկել էր ինքնավար Սյունիքը: Նրա երկրորդ խորհրդայնացմամբ առաջացած աղետալի դրությունը պիտի փրկեր անկախ Լեռնահայաստանը, որը փաստորեն գոյություն ուներ Ղարաբաղի և Վայոց Ձորի գրավման օրերից:

* * *

1921թ. Ապրիլի 26-ին Տաթևի վանքում տեղի ունեցավ մեր Լեռնաշխարհի հայության երկրորդ համագումարը: Մասնակցում էին 95 ներկայացուցիչներ:

Մեջ ենք բերում այդ համագումարի նկարագրությունը նրա արձանագրություններից:

«*Սպարապետի մանրամասն զեկուցումից հետո ժողովականները ավելորդ են համարում լսել գործադիր մարմինների և կառավարության վարիչների առանձին-առանձին զեկուցումները ու անցնում են օրակարգի հետևյալ խնդիրներին.*

1. Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի կազմի հրաժարականը.

2. Պարենավորումը.

Ինքնավար Սյունիքի սահմանադրության վերամշակումը.

Ազատ հողերի բաշխումը.

Պաշտոնյաների վարձատրությունը.

Դպրոցական գործը.

Պետական հարստության պահպանությունը.

Կառավարության նոր ընտրությունը.

Համագումարում հարուցվելիք խնդիրները.

Պարենավորման համար սպարապետը հայտնում է, որ մինչև նոր հունձը հնարավոր է, Հայաստանի Հանրապետության կառավարության նյութական օգնությամբ, հաց ձեռք բերել և միաժամանակ, ըստ հնարավորության, աշխատել կազմակերպել պետական հաղորդակցությունը և ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականություններից:

Այս հայտարարությունն ընդունվում է ածայն կերպով:

Կառավարավություն կազմելու ձևի առթիվ խոսք է հարուցվում և մի շարք ճառերից հետո հանգում են հետևյալ եզրակացության. քանի որ Սյունիքի՝ Լեռնահայաստանի ամբողջ բախտը և հայ ազգաբնակության ֆիզիկական գոյությունը հավատացել և վստահել են Սպարապետին, ապագա ընտրվելիք կառավարության կազմը ևս վերապահել նրան, այն համոզմունքով և հավատով, որ նա այնպիսի անձնավորություններ կհրավիրի ներկայումս, որոնց սերտ գործակցությամբ և բեղմնավոր աշխատանքի շնորհիվ մեր սիրելի հայրենիքը կհասնի իր ազատագրական վերջնական և կատարյալ վախճանին:

Այս որոշումն ընդունվում է միաձայն և բուռն ծափահարությամբ:

Ապա ձայների մեծամասնությամբ որոշվում է.

Ինքնավար Սյունիքը այսուհետև անվանել Լեռնահայաստան.

Կառավարության անդամները՝ նախարարներ.

Համագումարը հայտարարել որպես Լեռնահայաստանի պարլամենտ.

Կառավարություն կազմելու համար վարչապետ ընտրել Պր. Սպարապետին.

Մի ժամ ընդմիջումից հետո, համաձայն համագումարի տված վստահության և լիազորության, զորավար Նժդեհը գրավոր կերպով ներկայացնում է Լեռնահայաստանի կառավարության կազմը, հետևյալ ձևով.

1. Նժդեհ՝ վարչապետ, զինվորական և արտաքին գործոց նախարար.

2. Ս. Մելիք- Յոլչյան՝ ներքին գործոց նախարար.

3. Հ.Տեր Հակոբյան՝ պարենավորման նախարար.

4. Բժ. Մինաս Մինասյան՝ խնամատարության նախարար.

Հ.Տևեճյան՝ արդարադատության և լուսավորության նախարար.

Ավ. Օհանջանյան՝ հաղորդակցության և փոստ-հեռագրական նախարար.

Բժ. Սմբատ Եղիազարյան՝ ֆինանսների նախարար»:

* * *

Համագումարից հետո ես մնացի Տաթևում՝ կազմակերպելու գաղթականության փոխադրության գործը, իսկ նորընտիր կառավարությունն անցավ Գորիս:

Մայիսի 1-ին լույս տեսավ Լեռնահայաստանի կառավարության դեկլարացիան, որը հետևյալն էր.

«Լեռնահայաստանի ժողովրդական ներկայացուցիչների համագումարը Ապրիլի 27-ի նիստում Տաթևի պատմական վանքում, ընտրեց Լեռնահայաստանի նոր կառավարություն յոթը նախարարներից բաղկացած, սպարապետ Նժդեհի նախարարապետությամբ:

Նոր կառավարությունն իր առաջնակարգ պարտքն է համարում հարել երկրի բոլոր ուժերը՝ զորացնելու մեր հայրենիքի ինքնապաշտպանության ռազմական կորովը:

Մեր զորամասերը, պաշտոնեությունը և եկած գաղթականությունը պարենավորելու համար Լեռնահայաստանի ժողովուրդը զոհաբերում է իր վերջին պաշարները, սակայն, մեծ կարիքը բավարարելու նպատակով կառավարությունը հարկադրված է նաև միջոցներ ձեռք առնել, շտապ կերպով մեր հարևան երկրներից պարենավորման մթերքներ գնել և փոխադրել մեր երկրի ներսը: Փոխադրության գործը դյուրացնելու և արագացնելու համար կառավարությունը կազմակերպում է սեփական փոխադրության միջոցներ՝ տրանսպորտ:

Լեռնահայաստանի կառավարությունը պետք է ջանա սերտ բարեկամական, բարի դրացիական հարաբերություններ հաստատել մեր երկրի սահմաններում բնակվող սահմանամերձ ազգությունների, մանավանդ թուրք ժողովրդի հետ: Տնտեսական և առևտրական փոխհարաբերությունների զարգացումը ավելի ևս կնպաստի հայ ժողովրդի մերձեցմանն թաթար, պարսիկ և տաճիկ ժողովուրդների հետ: Կառավարությունը պիտի ձգտի նաև ապահովել միջազգային բոլոր բարեկամ ուժերի օժանդակությունը մեր ազգային դատի բարեհաջող լուծման համար: Կառավարությունը ամեն կերպ պետք է ձգտի, որ բոլոր ազատ հողերը օգտագործվեն, հնարավորություն տալով սակավահող և հողազուրկ գյուղացիներին մշակել այդպիսի հողերը: Ընդհանրապես կառավարությունը պետք է աշխատի հնարավորության չափ աշխատավոր չքավոր գյուղացիությանը նպաստել սերմանման և գյուղատնտեսության զանազան գործերում:

Միաժամանակ կառավարությունը պետք է ձգտի զարկ տալ ժողովրդի լուսավորության գործին, կազմակերպելով նորանոր դպրոցներ, անգրագետների դասընթացներ, դասախոսություններ, զրույցներ, երեկույթներ և տարածելով գրավոր հրատարակություններ:

Լիահույս լինելով, որ Լեռնահայաստանի ազատատենչ ժողովուրդը և պարտաճանաչ պաշտոնեությունը ոչ մի ջանք չի խնայի ընդառաջ գնալու և բոլոր ուժերով աջակցելու կառավարությանը՝ համագումարի կողմից նրա վրա դրված պարտականությունները կատարելիս, նաև վստահ լինելով, որ, Սյունյաց աշխարհի հերոսացած Դավիթ-բեկյան զորքերը, միացած բուն Հայաստանի զորամասերի հետ նորանոր սխրագործություններով պիտի զորավիգ հանդիսանան կառավարությանը, իրենց սպարապետի ղեկավարությամբ, Լեռնահայաստանի կառավարությունը ստանձնում է երկրի ծանր ղեկը»:

ՄԻ ԳՐՈՒԹՅՈՒՆ

Տաթևում գումարված իր մի նիստից հետո Հայրենիքի Փրկության Կոմիտեի նախագահ Ս.Վրացյանը ուղղեց հետևյալ գրությունը.

«Սիրելի Նժդեհ,

Որոշվեց՝

1. Հայաստանի բոլոր ռազմական ուժերը և գույքերը հանձնել Լեռնահայաստանի կառավարությանը, այդպիսով, ուրեմն, մեր սպարապետն էլ, ամբողջ հրամանատարությունն էլ ենթարկվում են Սյունյաց սպարապետությանը: Կարծում եմ լավագույնը կլինի նշանակել Կուռոյին[34] ձեզ օգնական և արևմտյան ճակատի հրամանատար:

2. Հայաստանի Հանրապետության Փրկության Կոմիտեն ընտրում է իր տեղը փոքրակազմ մի կառավարություն ad hoc[35] խնդիրները լուծելու, իսկ Հայրենիքի Փրկության Կոմիտեն ենթարկվում է լիկվիդացիայի:

3. Կառավարության նախագահությունը հանձնեցին ինձ:

4. Կառավարությունը կմնա այստեղ և կօգնի տեղական իշխանությանը, գաղթականությանը, էվակուացիայի և այլ խնդիրներում:

5. ...

6. Ես և Քաջազնունին վաղը մեկնում ենք Թավրիզ՝ քեզ ծանոթ միսիայով:

Մանրամասնությունների մասին կխոսենք առավոտը, երբ պետք է ինձ անցագիր գրես: Ս. Վրացյան: 1921թ., 21 Ապրիլ»:

ՆԱ՝ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նման վիճակ, գուցե մեկ էլ Շահ Աբասի օրով էր տեսել մեր Լեռնաշխարհը: Արարատյան հայության մի մասը՝ նրա մտավոր և մարտական տարրերը ապավեն ու ապաստան էին գտել Սյունիքում: Ցրված մեր անկախ երկրամասի ամբողջ երկարությամբ, Սիսիանից մինչև Արաքսի ափը, նրանք հերթի էին սպասում Ատրապատական անցնելու համար:

Տեղացի ժողովուրդը իր և իր զինվորների բերնից կտրած վերջին պատառ հացն էր եղբայրաբար տրամադրել նրանց, իսկ սպարապետությունը՝ այն բոլորը, ինչ որ ուներ:

Տաթևի շրջանում կետրոնացել էր գաղթականության մտավորական մասը, որը ցերեկները հավաքվում էր վանքի բակը ցուցակագրվելու:

Վճռված էր առաջին հերթին Պարսկաստան անցկացնել հայ մտավորականությունը:

Արևմտահայ զորամասերը, ինչպես և զինված ու մարտունակ տարրերը պիտի սպասեին հերթի:

Քաոսը երկրում չզորացնելու համար Տաթևից մինչև Արաքսի ափը գաղթականությունը, ըստ մշակածս ծրագրի, շարժվում էր քարավաններով, մեկի գլխավորությամբ: Առաջին խմբակը որոշ առաքելություններով պիտի անցներ Թավրիզ՝ Վրացյանի, Քաջազնունու, Շանթի և այլոց մասնակցությամբ: Այդ խմբակի հետ էր նաև իմ ներկայացուցիչը, որը պարսից իշխանությանը տանում էր իմ հետևյալ գրությունը.

ՆՈՐԻՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԲԱՐՁՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻՆ,
ՆՈՐԻՆ ԱՐԵԳՆԱՓԱՅԼ ՇԱՀՆՇԱՀԻՆ ՀԱՏՐԱՊԱՏԱԿԱՆ
«Ձերդ Արքայական Բարձրություն,

Ձերդ Արքայական Բարձրությանը քաջ հայտնի է, որ մոտ մի տարի է, ինչ իմ ժողովրդի ազատագրության համար ես անողոք կռիվ եմ մղում Անդրկովկասի շեն, վաճառաշահ քաղաքներն ու ավաններն ավերակների վերածող և բոլոր ժողովուրդներին ստրկացնող բոլշևիկ կոչված տարրերի դեմ: Ռուսական դիվիզիաները, միացած տեղական վատահոգի և հայրենիքին դավաճանող ժողովրդի տականքների հետ, հոխորտանքով ոտք դրին Լեռնահայաստանի սահմաններում, բայց իմ քաջ և աներկյուղ ժողովրդի գոռ վաշտերին բախվելով՝ հազարներով իրանց դիակները փռեցին մեր լեռներում և անդնդախոր ձորերում. նրանց թշվառ մնացորդները հազիվ հազ կարողացան փախչելով իրենց կյանքն ազատել ժողովրդի ցասումից: վերջնականապես մաքրելով Լեռնահայաստանը բոլշևիկ բանդաներից և ազատելով երկիրը վերջնական կործանումից իմ կուռ բանակ կազմող ժողովուրդը միաժամանակ ազատում է և մեր դարավոր հարևան, հավետ համակրանքի արժանի Պարսկաստանի բարեկեցությունը և անսասանությունը՝ պաշտպանելով նրա հյուսիսային սահմանները բոլշևիկների ավերածությունից ու սոսկումներից: Իմ ժողովրդի հետ ես ուխտել եմ և անդառնալիորեն վճռել, ինչ գնով ուզում է թող լինի, մինչև վերջին շունչը մաքառել այդ մարդ բորենիների դեմ, զերծ պահել մեր երկիրն ու դրկից դարավոր հարևան ու չքնաղ Պարսկաստանը նոր վանդալների - բոլշևիկների ներս խուժումից:

Ես կարծում եմ, որ Ձերդ արքայական բարձրությունն աչքի առաջ ունենալով մոտիկ անցյալի իմ գործունեությունը ամբողջ կուլտուրական աշխարհի այդ նոր թշնամիների դեմ, համոզված կլինի, որ անսասան և անշեղ ես պիտի շարունակեմ իմ բռնած ընթացքը և ապագայում՝ հոգուտ երկու հարևան ժողովրդների:

Ձերդ արքայական բարձրություն, պատկերացնելով Լեռնահայաստանի դրությունը՝ միաժամանակ ես դիմում եմ ձերդ բարձրությանը մի խոնարհ խնդրով և հավատացած եմ, որ երկու երկրների փրկության և շահի տեսակետից բարի կլինեք առանձին ուշադրություն դարձնել իմ խնդրին և ձերդ արքայական բարձրության վեհանձնությամբ ու բարեսրտությամբ կբարեհաճեք հաջող ընթացք տալ:

Երևանի շրջանի այն մասերից, ուր դեռևս բոլշևիկներն իրանց ավերածությունն են կատարում և սրվածությունը տարածում, հայ ինտելիգենտ մտավոր ուժը, որ մինչև այսօր աննկուն պայքար է մղել նրանց դեմ, չկարողանալով տանել բոլշևիկների կոտորածն ու լլկանքները, հեռացել և պատսպարվել է Լեռնահայաստանում: Բայց, որովհետև, Լեռնահայաստանը այս տարի բոլշևիկների թալանի և բռնագրավումների շնորհիվ զրկվել է իր քրտինքով աշխատած հացի և այլ մթերքների պաշարից, ուստի այդ գաղթած մտավորականությունն իր մեջ պահելու և կերակրելու հնարավորությունը չունի. այդ պատճառով խոնարհաբար խնդրում եմ ձերդ արքայական բարձրությանը, կարգադրել թույլ տալու այդ ինտելիգենտ ուժերին, որոնք թվով մոտ 500 հոգի են և բաղկացած են մեծամասամբ պրոֆեսորներից, ինժեներներից,

տեխնիկներից, ուսուցիչներից, բժիշկներից և իրավաբաններից, անցնելու հյուրընկալ Պարսկաստանի հողը և ժամանակավորապես պատսպարվելու ձերդ արքայական բարձրության վեհաշուք հովանու տակ, Թավրիզում և նրա շրջակայքում, մինչև որ հանգամանքները թույլ կտան դրանց կրկին անգամ վերադառնալ իրենց հայրենիքը: Հարկավոր եմ համարում ավելացնել, որ այդ ինտելիգենտ ուժերը ծանր բեռ չեն լինի մեր բարեկամ Պարսկաստանի համար, որովհետև նրանք ունեն նյութական ապահովություն իրենց միջոցներով ապրելու: Բացի այդ, Պարսկաստան գաղթող ինտելիգենցիան, ամբողջապես համակված լինելով հակաբոլշևիկյան ուղղությամբ և նրանց հակառակորդը լինելով, նույն տրամադրությունը տարածում են նաև ձեր երկրում, որով մեծապես նպաստած կլինեն ձեր խաղաղասեր ժողովրդին զերծ մնալու բոլշևիզմի ավերումներից և թույնից:

Ես հույս ունեմ, որ, ինչպես դարերի ընթացքում անմոռաց Պարսկաստանի Շահնշահների սիրեցյալ հայրենիքը միշտ սրտաբաց հյուրընկալել է հայ տառապյալ ժողովրդին, ներկա պատմական հանգամանքներում ևս, երբ երկու երկրների քաղաքական շահը պահանջում է միասին համերաշխ գործելու ընդդեմ ընդհանուր թշնամու, նրա վեհաշուք արքայական բարձրությունը թույլ կտա այդ ինտելիգենտ գաղթական ուժերին ժամանակավորապես վայելելու Պարսկաստանի հյուրընկալությունը, որով միջոց տված կլինեք ինձ ավելի ազատ և համարձակ գործելու մարդկության թշնամի բոլշևիկների դեմ:

Լեռնահայաստանի Սպարապետ՝ ՆԺԴԵՀ
Գլխավոր շտաբի պետ՝ ՆԱՐԻՆՅԱՆ

Գորիս, 26 Ապրիլ, 1921»:

ԱՐԱՔՍԻ ԱՓՈՒՄ

Հակառակ արածս կարգադրություններին, գաղթականության մեծագույն մասը տարերայնորեն թափվեց Արաքսի ափը:

Ատրպատականի իշխանության ներկայացուցիչները՝ Սահրադ և Մեհտի խաները, որոնք հարգել էին՝ 500 տարագիր մտավորականներ հյուրընկալելու իմ խնդիրը, Արաքսի ափին խճողված բազմահազար բազմությունից խրտնած, դադարեցրին գաղթականության անցքը:

Մեղրուց տեղեկացնելով ինձ այդ մասին, խնդրեցին միջոցներ ձեռք առնել: Վերստին անցա Մեղրի, հրավիրեցի Արաքսի մեր ափը բարեկամ խաներիս և հարգել տվի խնդիրը: Պարզվեց, որ որոշ մութ ուժեր միտումնավոր լուրեր էին տարածել նաև իմ Պարսկաստան անցնելու մասին (մի բան, որ, հասկանալի պատճառներով, չէին ցանկանա պարսից ժողովուրդն ու կառավարությունը) և առիթ տվել խաներին գաղթականության անցքը դադարեցնելու կարգադրության:

Վերսկսվեց անցքը:

Սյունիքի և Պարսկաստանի միջև Արաքսի վրա կամուրջի չգոյության պատճառով գաղթականության փոխադրությունը կատարվում էր ամենանախնական և անբավարար միջոցներով: Գործում էին պարսկական լաստերը, կրիայի դանդաղկոտությամբ: Հենց առաջին օրերին պարզվեց, որ այս ձևով ամիսներ պիտի տևի գաղթականության փոխադրությունը, մի աղետալի պարագա, որը ավելի ևս պիտի ծանրացնի Սյունիքի վիճակը:

Դրությունը փրկելու համար ձեռնարկվեց մի լաստանավի շինության: Մի քանի օրից պատրաստվեց փրկարար նավը, բայց չհաջողվեց օգտվել նրանից: Չհաջողվեց երկաթի հաստ շղթան անցկացնել և ամրացնել պարսից ափը: Փորձեր կազմակերպեցին մտավորականության տեխնիկներն ու ճարտարապետները: Իզո՛ւր, չհաջողվեց: Արաքսի սրընթացության և վարարության շնորհիվ չհաջողվեց շարժման մեջ դնել լաստանավը: Նորից գործել սկսեցին պարսկական փոքրիկ լաստերը:

Ղափանից դեպի Գենվազ շարունակվեց մեր գաղթականության հոսանքը: Մեղրին այլևս գյուղ չէր, այլ մի հսկա բանակատեղի: Այդտեղ էին Արարատյան մտավորականությունը, սպայությունը, խմբապետությունը, ուսանողությունը, գրողները, խմբագիրները, նախկին նախարարները, Խորհրդարանի անդամները և այլն: Գյուղից մինչև Արաքսի ափը խռնված՝ նրանք սրտատրոփ սպասում էին փրկարար լաստին, որպեսզի ժամ, վայրկյան առաջ անցնեն Արաքսը:

Եվ հասկանալի էր այդ ընդհանուր մղումը: Դժբախտ Համազասպի, Մակեդոնի[36] և այլոց հոշոտված դիակները դեռ չեն մոռացվել: Մահը չէր, որ սարսափեցնում էր շատերին, այլ մեռնելու բարբարոս այն ձևը, որի մեջ կարմիրները սիրում են դնել շնականություն, սադիզմ: Ահա՛ թե ինչու շատ քչերն էին ուզում հասկանալ, որ հերթից դուրս անցնելու փորձերը կարող էին աղետալի լինել և՛ իրենց, և՛ բոլորի համար:

* * *

Գիշեր է:

Լաստերը չեն գործում, որովհետև Արաքսը չի ներում իր գիշերվա անդորրը խռովողներին: Ոչ ոք չի հանդգնի, անգամ փորձված մաքսանենգը, այդ ժամին վարար և ծովացած Արաքսի ալիքներին վստահելու: Բոլորալուսինը արծաթել է գետափերն ու ավազուտները, որոնց վրա տխուր առկայծում են հարյուրավոր խարույկներ: Կրակներ կան և մոտակա լեռների վրա՝ վառ և հաղթական փայլով: Այնտեղ Արևելքի արծիվներն են թառել: Նրանք արթուն հսկում են, որպեսզի հայրենի գետափին կուտակված հայ մտավորականությունը մեկ էլ չզգա կարմիր կացնի սրությունը:

Բաժանվելով Արաքսի ափից, ծանր խոհերով պաշարված, մի քանի ծիավորներով վերադառնում եմ Տաթև:

-Ի՞նչ տարբերություն Շահ Աբասի և Լենինի միջև: Մեկն աշխարհակալ, իսկ մյուսը «աշխարհակալների և աշխարհակալության թշնամի»:

Անշուշտ մեծ է տարբերությունը տիտղոսների միջև, բայց՝ ոչ գործերի: Չէ՞ որ երկուսի օրով էլ հայ ժողովրդի մի մասը բնավեր ու հալածական թափվեց Արաքսի ափը: Չէ՞ որ երկուսի օրով էլ քանդվեց Հայաստան երկիրը: Առաջինը, ասում է պատմությունը, գերի վարած բազմահազար հայությունը տաճիկներին չթողնելու համար՝ հրամայեց վերջիններին սրերի և խարազանների հարվածների տակ թափել Արաքսը: Երկրորդը՝ հրամայեց Արաքսի ջրերի մեջ խեղդել հայ ժողովրդի գոյության իրավունքը, նրա ապագան, նրա մտավորականությունը:

ՆՈՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Հայաստանի կառավարության նոր նախագահին էր վիճակված մեծապես օգտվելու Սյունիք թափված Արարատյան գաղթականությունից: Այո՝, քաղաքագետ Մյասնիկյանին, և ոչ կարմիր հրամանատարությանը:

Վերջինը՝ իր Երևանի հաջողությունը ռազմապես շահեցնելու մասին դժվար թե կարողանար նույնիսկ մտածել: Մի այլ երկրում և նման պայմանների մեջ նա մեծապես կօգտագործեր իր զենքի հաջողությունը: Թիֆլիսի գրավումով նա տեր էր դարձել ողջ Վրաստանին: Երևանի առումով՝ ամբողջ Արարատյան Հայաստանին:

Սակայն, Սյունիքը կարմիրների համար ո՛չ առաջինն էր, ոչ էլ երկրորդը: Երկաթը ծամելու համար պետք էին պողպատե ատամներ, որոնցից զուրկ էր խորհրդային զորքը: Ահա՛ թե ինչու նա չպիտի կարողանար օգտվել Սյունիքում խճողված գաղթականության ներկայությունից և հնարավորություն պիտի տար Մյասնիկյանին ապացուցելու, թե լավ բանակներ ունենալուց լավագույնը լավ քաղաքագետներ ունենալն է:

Գաղթականության առաջին քարավանի հետ Թավրիզ է հասնում Մյասնիկյանի կառավարության հռչակավոր «ներման դեկրետը»: Սովորական հայտարարություն չէ այդ, այլ մի սրտառուչ հորդորական, մի խոստումնալի կոչ՝ ուղղված բազմահազար տարագիրներին: «*Վերադարձեք, իզուր եք փախել. Հայաստանում տեղ կա բոլորիդ համար: Վերադարձեք լծվելու սոցիալիստական հայրենիքի վերաշինության գործին: Կարող են վերադառնալ բոլորը, բոլորը, բացի մեկը, երկուսը...*»:

Միայն սրանով չբավականացավ կարմիր կառավարությունը: Դեպի Սյունիք քաշված Երևանյան զորամասերը մասսայական դասալքության մղելու նպատակով նա հրատարակեց մի շարք օրենքներ: Նա «դասալիք» հռչակեց այն բոլորին, «որոնք շարունակում են մնալ Զանգեզուրում, Նժդեհի դրոշակի տակ»: Եվ շատ կարճ ժամանակ տվեց այդպիսիներին Հայաստան վերադառնալու համար:

«*Ժամանակին չվերադարձողները կհամարվեն թշնամի և կզրկվեն Հայաստանում «հող ու ջուր» ունենալու իրավունքից: Նրանց ինչքը կբռնագրավվի, իսկ ծնողները կնետվեն բանտ*»:

Սրանով էլ չբավականացավ Մյասնիկյանը: Նա ժամանակին Թավրիզ հասցրեց իր մարդիկ, մեծամեծ գումարներով և խոստումներով:

«Ամեն ինչ, ամեն ինչ փոխվել է Հայաստանում», ասում են սրանք, և կրկնվում էր հազարբերան լուրը:

«Ավիսը, Աթարբեկյանը և նման ծայրահեղները, խոսվում էր գաղթականության մեջ, հեռացված են գործից և հանձնված դատի»:

Ստացվել էր Լենինի մի մասնավոր գրությունը,[37] որի մեջ նա ավելի չափավոր քաղաքականություն է հանձնարարում:

Մյասնիկյանը անչափ դժգոհ էր Խորհրդային Հայաստանի առաջին Հեղկոմի անդամներից, որոնք փորձել էին «զուտ ռուսական ոճով» քաղաքացիական կռվի բովից անցկացնել հայ ժողովուրդը:

Այդ բոլորը և որիշ շատ բան էր լսում գաղթականությունը: Եվ հավատում էր նա այդ բոլորին, որովհետև ուզում էր, որ այդպես լինի, որովհետև գաղթականի դառը վիճակը ստիպում էր հավատալ: Պետք է վերադառնալ, քանի դեռ չեն գործադրվել հրատարակված օրենքները, քանի դեռ հալածանքի և բանտարկության չեն ենթարկվել մեր ընտանիքները, քանի դեռ բռնագրավված չեն մեր հողերն ու ստացվածքը...

Սկսվում է խմորումը:

Օ՜այր է տալիս կրքոտ քննադատություն երեկվա ղեկավարների դեմ: Մի հայ սպա, որը ազատարար Սյունիքի հողը համբուրելով էր անցել Թավրիզ, «բարեհուսության վկայական» ստանալու նպատակով հրապարակավ գոչում է՝ «Կեցցե՛ Երրորդ Միջազգայնականը» և ձերբակալվում պարսից ոստիկանության կողմից:

Որոշ զանգվածներ պատվիրակություններ են ուղարկում Երևան: Շատերը նամակներ են ուղղում Սյունիքում մնացած զորամասերին և հորդորում ժամ առաջ անցնել Թավրիզ՝ տուն վերադառնալու համար:

Նախիջևանի վրայով Ատրպատականի մայրաքաղաքն է հասնում մի նախկին դաշնակցական (ծա՞խ)[38] գաղթականությանը թունավորելու առաքելությամբ: Այդ «նորընծա»-ի առաքելության լուրը թև առած հասնում է Սյունիք և խռովում տարագիր զինվորների հոգին,

որոնք առանց այն էլ թքով էին կպած սոված և անհրապույր մեր լեռնաշխարհին: Թավրիզից հասած նամակները, իմիջիայլոց, ասում են. «*Երևանի հայությունը մարդ է ուղարկել Թավրիզ հասկացնելու մեզ, թե Սյունիքում մնալը կքանդի թե իրենց և թե մեր տունը*»:

Սյունիքում ապաստանած տարագրության և զորքի մեջ ուժեղանում է ժամ առաջ տուն վերադառնալու ցանկությունը: Օրեր անց ծայր է տալիս *պարտվողական պրոպագանդան*:

Պետք է տեղի տա Սյունիքը, պահանջում են գրեթե բոլորը: *Սյունիքը պետք է վար դնի զենքը, որ բոլշևիկները դադարեն չարչարել Արարատյան հայությունը:* Սյունիքը պետք է զոհաբերի իր անկախությունը, որպեսզի շատերը արժանանան քաղաքական ներումի: *Պետք է տեղի տալ, որովհետև խորհրդային իշխանությունը, որպես տրիտուր իր շնորհած ներումի, այդ է պահանջում:*

Սկսվում է գաղթականության վերադարձը: Մի քանի օր անց Երևան հասածներից շատերը, անշուշտ, սպառնալիքի տակ և բոլշևիկների թելադրությամբ, ուղղում են Սյունիքում մնացած զինվորներին նամակների ամբողջ մի դեզ:

«*Էլ էն չի Երևանը, ամեն բան փոխվել է. ինչո՞ւ եք ուշանում*», գրում է հայրը որդուն, եղբայրը եղբորը, բարեկամը՝ բարեկամին:

Ծայր է տալիս զանգվածային դասալքությունը: Առաջին հերթին զանգվածորեն փախչում է Կոտայքի վաշտը: Երկու օր անց՝ մի նոր կիսավաշտ, հետո՝ Նոր Բայազետի գումարտակը:

Պարտվողական հոսանքը պարարտ հող է գտնում Արաքսի երկու ափերի վրա էլ՝ թե՛ Սյունիքում, և թե՛ Թավրիզում:

Ահա՛ մի քանի տողեր այդ օրերի ընդհանուր մտայնության մասին, ստորագրված Ս. Վրացյանի կողմից.

«*Կռիվը շարունակվում է և դեռ հարց է, ո՞ւմը կլինի վերջնական հաղթությունը: Եթե մի քանի տասնյակ հազար ռուս զորքեր բերեն, իհարկե, կարող ենք մենք Լեռնահայաստանում էլ տեղի տալ, բայց այդ բանը չի նշանակի, որ հայ ժողովուրդը բոլշևիկ է դարձել, կամ որ մեր նպատակն է վիժել: Հայաստանը նորից կլինի ազատ և ինքնիշխան: Այս հավատն ունենք մենք: Ավելի մեծ է այս հավատը Լեռնահայաստանի ժողովրդի և այնտեղ գործող զորքերի մեջ: Իզուր են մեր մասին կարծիք կազմում Թավրիզ լցված ճապաղած մտավորականներով և իրենց հունից դուրս եկած զինվորականներով: Մեր ուժն այնտեղ է, Հայաստանի խրոխտ լեռներում*»:*

* Տե՛ս «Այգ» թերթ, թիվ 33-34 (ծանոթ. հեղ.):

ԹՇՆԱՄՈՒՆ ՊԱՏԱՆԴ Է ՊԵՏՔ

«*Ծարավ է, բայց հաց է փնտրում*»: Այս բառերով կարելի է բնորոշել Մյասնիկյանի օրվա գործելակերպը:

Նրան Լեռնահայաստանն է պետք, բայց առերևույթ զբաղված է տարագիրների վերադարձի հարցով: Նրա դեկրետների, կոչերի և ճիչերի առարկան այժմ նրանք են, որոնց օրեր առաջ փորձել էր հանձնել Աթարբեկյանի արնոտ տապարին, որոնց դեռ երեկ փորձել էր ոչնչացնել Երևանի բանտերում, Ջղինի ձորերում և Արաքսի ջրերի մեջ:

Նա կանչում է բոլորին, բոլորին, կոկորդիլոսյան արցունք թափելով մտավորապես ամայացած Հայաստանի համար: Եվ վերադառնում են հազարները, գնում են ակամայից գործիք դառնալու թշնամու ձեռքին՝ իրենց փրկող երկրամասի դեմ: Վերադառնում են, որովհետև ստիպված են վերադառնալու: Վերադարձողներին պետք են հայրենի տուն, ընտանիք, հող և այն բոլորը, առանց որին սև է տարագիրի օրը, իսկ խորհրդային իշխանությանը պետք են *նոր պատանդներ*:

ԵՐԵՎԱՆԻ ՁԱՅՆԸ

Մայիսի կեսին Սյունիք է հասնում բոլշևիկյան մի նոր պատվիրակություն Կարինյանի գլխավորությամբ: Պատվիրակության մեջ են նաև երկու հանրածանոթ հայ մտավորականներ՝ Ա-Դօ-ն[39] և Դավիթ Անանունը:[40]

Եկողները Լեռնահայաստանին բերել են *Երևանի ժողովրդի ձայնը և խորհրդային իշխանության առաջարկը՝ անկախ լեռնաշխարհին հայտարարել խորհրդային և տեղի տալ:*

Բանակցությունները տեղի են ունենում Սիսիանում: Մենք նոր պահանջներ չունենք, բայց հներն էլ չենք մոռացել:

«*Քանի դեռ Լեռնահայաստանը խորհրդային իշխանության կողմից չի ճանաչված Հայաստանի անբաժան մասը, մենք չենք ճանաչելու խորհրդային իշխանությունը*», այս է լինում ներկայացուցիչների պատասխանը, որը բազմիցս դրված էր եղել բոլշևիկներին:

Մենք պահանջում էինք կցել Հայաստանին նաև Նախիջևանը՝ թաթարական երկրորդ «գրպանային հանրապետությունը», որը, օգտվելով իր անկախությունից, պիտի փակեր Հայաստանի դուռը դեպի Պարսկաստան և պիտի շարունակեր գուրգուրել Սյունիքի վրայով Ադրբեջանին միանալու համիսլամական երազը:

Կարինյանի պատվիրակությունը վերադարձավ Երևան՝ Հայաստանի Հեղկոմին ներկայացնելու մեր պահանջները: Նա վերադարձավ, կատարելով իր անմիջական առաքելությունը, այն է թունավորելով Սիսիանում տեղավորված մեր զորամասերը:

Անշուշտ, երկու ծանոթ մտավորականները չէին եկել այդ նպատակով, բայց նրանց՝ կարմիր պատվիրակության մեջ լինելու փաստը խորապես պիտի ազդեր տարագիր զինվորության վրա:

Մյասնիկյանի կոմիսարիատը կանխավ գիտեր, թե ինչ է լինելու մեր պատասխանը, բայց քաջ գիտեր և այն, թե երկու ոչ բոլշևիկ մտավորականների հաշտության միսիայով երևալը Սյունիքում ինչ ազդեցություն պիտի ունենար բնավեր եղած տարագրության վրա:

Թավրիզի «հաջողությունից» թև առած բոլշևիկներին պետք էր բարոյալքել նաև Բազարչայում թափված երևանյան զինվորությունը: Իսկ այդ անելու համար պետք էր Լեռնահայաստան հասցնել «Արարատյան հայության ձայնը», մեծ քանակությամբ կարմիր թռուցիկներ, թերթեր և հարյուրի չափ ագիտացիոն նամակներ»:

ԹՈՒՆԱՎՈՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Թշնամին բախտավոր էր: Ամեն նոր օր նոր յուղ էր քսում նրա հացին: Չգիտեմ, թե ինչ ճանապարհով էին Սյունիք հասել հետևյալ տեղեկությունները. «Դաշնակցության Բուքրեշի խորհրդաժողովը[41] որոշել է պահանջել Նժդեհից վերջ դնելու անկախության կռիվներին և տեղի տալու». «Դաշնակցության Արտասահմանյան Պատասխանատու Մարմինը[42] բանակցություններ է վարում բոլշևիկների հետ և դեմ է Սյունիքի հետագա հակաբոլշևիկյան պայքարին». «ՀՀ Պատվիրակությունը հեռագրով խնդրել է՝ թշնամաբար չվերաբերվել Խորհրդային Հայաստան»-ին և այլն:

Այս լուրերը, որոնք բերնե բերան անցնելով, շրջան էին կատարում Գնդևազից մինչև Թավրիզի փողոցները, ավելի ևս խորացնում էին պարտվողական հոգեբանությունը: Եվ Մայիսի վերջերին գրեթե ընդհանուր համոզում դարձավ հետևյալ միտքը. «Մինչև որ տեղի չտա Լեռնահայաստանը, խորհրդային իշխանությունը չպիտի դադարի թշնամաբար վերաբերվելու Արարատյան հայությանը»:

Գաղթականության մի մասը վերադարձել էր արդեն: Գաղթականությունը և զորամասերը թունավորելուց հետո, բոլշևիկները այլևս կարիք չէին զգում աչքակապուկ խաղալու: Նրանք բացել էին իրենց խաղաթղթերը և կտրուկ կերպով պահանջում էին վայր դնել զենքը՝ տեղի տալ, սպառնալով, հակառակ դեպքում, սև անել իրենց լծի տակ ապրող հայության օրը:

ՁԱՅՐՈՒՅԹԻ ՑՈՒՅՑԸ

Մայիսի 28-ի լուսաբացին լեռներից դեպի ձորերը՝ դեպի Լեռնահայաստանի մայրաքաղաքն էին իջնում, երգ ու երաժշտությամբ,

բուն Զանգեզուրի, Տաթևի և Դարաբասի շրջանների վաշտերը և ժողովրդի բազմահազար մի զանգված: Մարտնչող հայությունը, Արարատի փեշերի կարոտը հոգու մեջ, այդ օրը իր զայրույթը պիտի հայտներ մարդկության խղճին: Կեսօրվա մոտ բոլշևիկյան կացնից ընկած Շիրինի, Խորենու, Սաքոյի և այլոց եղբայրական գերեզմանի շուրջը ստեղծվելու էր սվինների, սրերի և դրոշակիրների մի ամբողջ անտառ: Նվիրական հողաթմբի վրա արևի տակ վեհորեն ու հպարտ փայլում էին Սյունիքի սուրն ու խաչը՝ առաջինը որպես հաղթության, երկրորդը՝ տառապանքի խորհրդանշան:

Ձերմ խոսք կար. «*Մայիսի 28-ը - դա ոչ սովորական նվեր է մեծ ազգերի կողմից տրված մեր ժողովրդին, ոչ ողորմություն՝ աշխարհի խղճի կողմից մարդասիրաբար տրված մեզ. ոչ էլ հին հարստություն՝ թողնված մեզ մեր պապերից: Դա արժեքն է մեր վարած այն մեծ, այն եզակի ազատամարտի, որի նմանը չունի ազգերի տարեգրությունը: Դա արժեքն է մեր հոյակապ, մեր աշխարհացունց մարտիրոսագրության*»:

Կար դառնություն, կար ուրախության արցունք:

Այդ օրը միայն ես հասկացա, որ մի պետության բարոյական բովանդակ մեծությունը կամ ոչնչությունը կարելի է կարդալ նրա քաղաքացիներից մեկի հայացքի վրա, մեկի աչքերի մեջ:

Այդ օրը սյունեցու աչքերի մեջ կարելի էր տեսնել նրա բարոյական բովանդակ թափը, նրա ուժը:

Ես այդ օրը տեսա Սյունիքը՝ իր ուժի, փառքի իր մեծության մեջ: Նա հպարտ էր, որովհետև պարտության էր մատնել Ադրբեջանը, ջարդել տաճիկ գնդերը, զինաթափել բոլշևիկյան 11րդ զորաբանակը: Նա հպարտ էր, որովհետև հերոսական ժեստով հետ էր մղել դեպի հայ մտավորականությունը երկարող խորհրդային մահաբեր տապարը: Նա հպարտ էր, որովհետև իր մեջքը փրկության կամուրջ էր դարձրել հազար և հազարների համար՝ դեպի Պարսկաստան:

Սակայն, սյունեցուն ծանոթ աչքն այդ օրը նրա հայացքի վրա իր պատմական գործերի գիտակցության հետ կկարդար նաև իր դրության ողբերգականության գիտակցությունը:

Այդ օրը բոլորը, դեկավար թե զինվոր, տղամարդ թե կին, ընդհանուր խանդավառության մեջ լուռ և անխոս մտածում էին. «Ի՞նչ լավ պիտի լիներ, եթե մեր ռազմամթերանոցներն ու կենսամթերանոցները դատարկ չլինեին: Մենք ազատության համար թշնամու հազարապատիկ մեծ ուժերի հետ չափվողներս հաց և փամփուշտ չունենք»:

Այո՛, շատ բաների հետ Սյունիքը չուներ կռվի համար նաև ամենաանհրաժեշտը՝ հաց և ռազմամթերք: Նա գիտակցում էր, որ սիրամարգի պես իր «շքեղ թևերի» տակ չպիտի կարողանա թաքցնել իր «սև ոտները», իր պահեստների դատարկությունը: *Նա հպարտ էր, որովհե-*

տև հաղթել էր. բայց դառնացած էր, որովհետև հնարավորություն չուներ օգտվելու իր հաղթանակներից:

Այդ օրն իմ սպաներն ու ժողովրդական վաշտապետները, որպես բարոյական վարձատրություն ստացան աստիճանի բարձրացում: Իմ սպաներից, ինչպես ժողովրդական վաշտապետներից շատ քչերի վրա այդ օրը կարելի էր ճերմակեղեն, դրամ, անգամ ծխախոտ գտնել: Բայց ինչպես սրանց, նույնպես և ամեն մի Դավիթբեկյան ենթասպայի մոտ միշտ էլ կարելի էր տեսնել իմ հետևյալ գրավոր պատվիրանները:

1. Կռիվը ծրագրիր անգլիացու պես, իրագործիր որպես ֆրանսացի:

2. Առաջինը եղիր հարձակման, վերջինը՝ նահանջի ժամանակ:

3. Քաջերին, միայն քաջերին է լսում և զորավիգում պատերազմների քմահաճ աստվածը: Վախկոտներն իզուր են կանչում նրան: Ով է նա նրանց համար:

4. Քեզ վրա նայիր, որպես դատապարտվածի, որ հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության պիտի միշտ էլ պատրաստ լինի ընդունելու գեղեցիկ մահը:

5. Ունեցի՛ր բոլոր մարտական առաքինությունները, բայց մի մոռացիր, որ առաջին առաքինությունը, առանց որին պատերազմների քմահաճ աստվածը քիչ անգամ կժպտա քեզ, դա խիզախությունն է:

6. Հազար անգամ ճիշտ է ասում լատինական առածը. «*Լավ է ոչխարների մի հոտ, առյուծի գլխավորությամբ, քան առյուծների մի խումբ, ոչխարի ղեկավարությամբ*»:

7. Եղի՛ր խիզախ, խստաբարո և չարքաշ: Հատկությունների այդ բարձր երրորդությունը քեզ կմոտեցնի Կատարյալին:

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆ

Հունիսի 1-ին Լեռնահայաստանը հայտարարվում է Հայաստան:

Ճիչեր, կանչեր, ահակոչ, սպառնալիք, զորահավաք, ահա՛ այն, ինչ որ առաջացրեց բոլշևիկների մեջ Լեռնահայաստանի պետական վերամկրտությունը:

Ապստամբ մի երկրամասի հետ ակամայից կարող էին հաշտվել կարմիրները, մի նոր, երկրորդ Հայաստանի հետ՝ երբեք:

Թեհրանի Խորհրդային Ռուսիայի դեսպան Ռոդշտեյնը Երևանի երկրորդ անկման առաջին իսկ օրը Ռեյզիրի և այլ գործակալությունների միջոցով a la բոլշևիկ տարփողել էր Հայաստանի վերստին խորհրդայնացումը:

Երկրորդ Հայաստանի գոյությունը չէր կարող մարսել Մոսկվան: Նա վախ ուներ, որ Հանրապետական Հայաստանը կարող է հեռնարան դառնալ ամբողջ Անդրկովկասի հակասովետական շարժումների համար, և որ դա կարող է թևավորել Ադրբեջանի և Վրաստանի դժգոհ տարրերին և նրանց ևս հանել խորհրդային իշխանության դեմ: Ահա թե ինչու նա սկսեց հավաքել իր բովանդակ ուժերը և պատրաստվել կռվի: Պետք էր տապալել «երկրորդ Հայաստանը»: Եթե նորիցն կարիք զգացվեր, բոլշևիկները օգնության պիտի կանչեին քեմալական զորքերը:

ՍՈՎ-ԹՇՆԱՄԻՆ

Մեր թերևս մեծագույն թշնամին և բոլշևիկների հզոր զինակիցը սովն էր:

Վաղուց էր, որ նա իշխում էր Սյունիքում, դեռ 1918-ից, երբ Անդրկովկասը քաոսի մատնվեց, երբ ծայր տվին հայ-թուրքական և հայ-վրացական բախումները, երբ ճանապարհները փակվեցին և կդգիացավ մեր Լեռնաշխարհը:

1920-ին նա հաց ճարեց իր սրի ծայրով: 1921-ի սկզբին սովի դեմ նա կռվեց կարմիր զորքերից խլած պաշարներով: Բայց գարնանը՝ նա վերստին կիսաքաղց էր:

Ապաստան տալով Արարատյան բազմահազար գաղթականությանը, պարզ է, որ նա իր վերջին պատառ հացը պիտի կիսեր նրա հետ: Արաքսի վրայով կամուրջի, նավակամուրջի կամ լաստանավի չգոյության պատճառով հնարավոր չեղավ բավարար քանակությամբ հաց ստանալ Պարսկաստանից:

Սովը սաստկանում էր օրըստօրե, ժամ առ ժամ: Շատ գյուղեր իրենց օրը մթնացնում էին բանջարով և արմտիքով: Դիրքապահ վաշտերը շատ ռազմաճակատներում ապրում էին վայրի շագանակի ալյուրից պատրաստված հացով: Գողթանը գործածեց անգամ կատվի և էշի միս: Դաշտերում չմնաց ոչ աղվես, ոչ ագռավ: Դիրքապահ գնդերի մի մասի պարտականությունը դարձավ որսով սնունդ ճարելը:

Այդ օրերին հաճախ կարելի էր տեսնել, թե ինչպես մեր հերթավաշտերը իրենց հետ ճակատ էին տանում երկրագործական և տնային որոշ իրեր, որպեսզի մոտիկ գտնվող թուրք գյուղերում, որոնք, նեղված կարմիրներից, հակված էին դեպի մեզ,փոխարինեն հացով դիրքապահների համար:

Այսպես, այս դաժան ձևով էին «պարենավորում» Լեռնահայաստանի Դավիթբեկյան վաշտերը:*

---

* 1921թվի ձմռանը, ինչպես և ամեն ձմեռ, Դափուջուղի բարձունքը սպիտակելուն պես, Գողթանը պիտի կտրվեր Սյունիքից և մնացյալ աշխարհից: Եվ ահա Դեկտեմբերի վերջին բոլշևիկյան մի զորամաս, թաթար ուժերի զինակ-

Եվրոպական զորքերի գործածած շաքարի, սուրճի, կակաոյի, ծխախոտի, կոնսերվաների և առատ ճերմակ հացի փոխարեն միայն չոր հաց էր պետք Սյունիքին և Սյունեցիներին, բայց դա էլ չկար:

Իսկ թե ինչպես էր «զգեստավորված» իմ զինվորը՝ գիտեն այն բոլորը՝ թուրք, թաթար և ռուս, որոնք գործ ունեցան նրա հետ: Որքան զինվոր, գրեթե նույնքան ձևի և գույնի զգեստ, այն էլ պատրաստված տանը բրդից կամ մազից: Իմ զինվորի ոտները կոշիկների փոխարեն ծածկում էին տրեխները, որի հետ նա իր լեռների վրա մաշում էր և իր ոտների կաշին՝ շատ անգամ և շատ տեղ իր ծեծված ոտքերի արյունով իր անցած ճանապարհը ներկելով: Այսպես, այս ձևով էր զգեստավորված իմ զինվորությունը:

Ավելի տխուր էր ժողովրդի կրավորական մասի վիճակը: Դիրքապահ զինվորությունը՝ զինված և գործոն վիճակի մեջ՝ դեռ մի կերպ կարող էր լրացնել իր աղքատիկ սնունդը: Նրանն էին երկնքի թռչունները, վայրի գազաններից հովազը, արջը. նրանն էին վայրի պտուղները: Ժողովրդի կրավորական մասը պիտի բավականանար միայն նրանով, ինչ որ կար իր հարկի տակ, իր տաշտի մեջ:

«Եթե անտեր սովը սև կամ կարմիր զորք լիներ՝ մենք նրան կզինաթափեինք քսանչորս ժամից, բայց...», հաճախ դառն կատակով ասում էին զինվորներս:

Այո՛, զորք չէր սովը, այլ մի հիդրա, որի գլուխները միայն հացով կարելի էր կտրել:

Մենք թշնամու զորամասերն էինք զինաթափում, սովը՝ մեզ:

Այդ օրերին, Գորիսի պահեստում հրանոթի փոխարեն ստացվում է մի հայ գյուղացու դիակը: Նա իր ջորիով մեկնում է Վայոց Ձոր ռազմամթերք փոխադրելու: Սովից թուլացած դժբախտն ընկնում է ճանապարհին և անշնչանում: Մեռածի ընկերները անտերացած ջորիով հրանոթների փոխարեն Գորիս են փոխադրում մի սառը դիակ...

Ահա՛ այսպես, մեզ վիճակված էր Լեռնահայաստանի անկախության վերջին ամիսներում կռվելու ոչ թե մի, այլ երեք ռազմաճակատների վրա՝ ռուս-թուրք զորքերի, Երևանի երկրորդ անկմամբ առաջացած պարտվողական հոսանքի և սովի դեմ:

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՎԵՐԱԳՐԱՎՈՒՄԸ

Կարինյանի պատգամավորության՝ Մայիս 1-ին, մեր արած առաջարկությունների պատասխանը չէր ստացվում:

Եվ հասկանալի էր ինչո՞ւ: Երբ Թավրիզից՝ հազարներ վերադարձան Երևան, այլևս գաղտնիք չէր՝ խորհրդային իշխանության համար, որ Լեռնահայաստանը տառապում է սովից, որ նա ռազմամթերք չունի, որ հազար ու մեկ ծանոթ պատճառներով մենք շատ մոտիկ ապագայում ստիպված պիտի լինենք տեղի տալու: Գիտեինք, որ Խորհրդային Հայաստանի Հեղկոմը որոշ միտումներով հետաձգում է մեզ տրվելիք պատասխանը, ցանկանալով առանց որևէ զիջումների անձնատվության մղելու մեզ:

Հայաստանի կոմիսարների այդ փոքրիկ և անիմաստ փառասիրության արգասիքն էր մեր վերջին ռազմագործողությունը: *Գիտակ մեր ծանր դրության նրանք ձգտում էին ձգձգել՝ ժամանակ շահել և այսպիսով ազատվել մեր պահանջները հարգելու հարկադրանքից: Իսկ մենք խորապես գիտակցում էինք, թե մեծապես մեղանչած կլինենք հայ ժողովրդի շահերի դեմ, եթե չՕգտվեինք Լեռնահայաստանի ձեռք բերած ռազմաբարոյական հմայքից:*

Պետք է հարգել տար մեր պահանջները: Ահա՛ թե ինչու դեպի Դարալագյազ շարժվեց մեր զորքը:

Հունիսի 1-ին իմ օգնական փոխսպարապետ Կուռոյին տրվում է Վայոց Ձորի ռազմագործողության խնդիրը և որոշ հրահանգներ:

Հակառակ, սակայն, տրված մարտագրին, գործողությունները արևմտյան ճակատում սկսվում են ոչ թե Հունիսի 7-ին, այլ 15-ին: Հունիսի 16-ին ստացվում է առաջին հեռախոսագիրը.

«Գորիս, Սպարապետին,

Մեր քաջարի ձիավորները ժամը 16-ին վերցրեցին թշնամուց 3 թնդանոթ, ռազմամթերք, գերի, որոնցից երեքը գումարտակապետներ: Այսօրվա ընթացքում ընդամենը վերցվել է 4 լեռնային թնդանոթ, 170 գերի: Թշնամու զորքերը ցրվել են և սարսափով նահանջում են: Կարմիրների Վայոց Ձորի զորամասը կարելի է համարել ջախջախված: Սպարապետի օգնական՝ Կուռո, 16 Հունիս, 1921»:

ցությամբ նետվում է մեր այդ շրջանի վրա: Ժողովուրդն իր հրամանատարի գլխավորությամբ հետ է շպրտում անկոչ հյուրին և այս անգամ: Կանցնեն օրեր: Կարմիրները մտնում են Հայաստան: Գողթանի դրությունը, հացի ու հաղորդակցության չգոյության կրկնակի պատճառներով, դառնում են օրհասական: Գողթանի ներկայացուցիչը, որ Հայաստանի անկման նախօրյակին անցել էր Երևան՝ հաց խնդրելու սովահար ժողովրդի համար և չէր հաջողել կատարելու իր առաքելությունը, միևնույն խնդրով դիմում է Կասյանի կառավարությանը:

«Հաց կտանք Գողթանին, եթե նա ճանաչի խորհրդային իշխանությունը», պատասխանում է Հայաստանի Հեղկոմը:

Ժողովուրդը սովից նեղված, զոհաբերում է իր անկախությունը՝ չոր հաց ստանալու համար:

Գողթանը հայտարարվում է խորհրդային, որից հետո Կասյանի կառավարությունը կարգադրում է «բաց թողնել Գողթանի համար 300 փութ ցորեն...» (ծանոթ. հեղ.):

Հունիս 17-ին զորամասերը վերցնում են 700-ի չափ նոր գերիներ և գնդացիրներ:

Արևմտյան ռազմաճակատում մեր զենքի հաջողությունը կատարյալ էր:

Օրդուբադի կողմից, նպատակ ունենալով գրավել Կարճևան-Մեղրի-Շիվանի Ձոր գիծը՝ Արաքսի հայկական ափը, և մեզ կտրել Պարսկաստանից, թշնամին մեծ ուժերով հակագործողություններ է սկսում Գենվազի դեմ: Այդ ճակատի վրա ևս իմ ուժերը դիմադրում են արիաբար և ի դերև հանում թշնամու ծրագրերը:

Խորհրդային Հայաստանը ահազանգ է հնչեցնում: Նրա թերթերը փրփուր և ցեխ են ժայթքում: Նա սպառնում է Երևանում գործի դնել արնոտ կացինը: Ալագյազի և Սոյուխների վրա վերստին երևում են տաճկական թաբուրները և արևելքցիների կողմից ծեծվում են հին ձևով:

Թշնամին ուժեր է կետրոնացնում նաև արևելյան ճակատում՝ Զաբուղի ուղղությամբ՝ բուն Զանգեզուրի և Գորիսի դեմ գործողություններ սկսելու մտադրությամբ:

Հունիսի 18-ին դաշանցիների մի թեթև զորամասերով՝ կարմիրների Որոտանի աջ ափին կետրոնացած ուժերը ցրելու նպատակով, անցնում են խորհրդայնացած թուրք շրջանով՝ դեպի Գորիս: Բարգյուշատի թրքությունը, որը մի ամբողջ տարի գտնվում էր բոլշևիկների իշխանության տակ, մեր երևալուց հանկարծակիի եկած, ընդունում է մեզ աղ ու հացով և հպատակություն հայտնում: Այդ շրջանի միլիցիական մասերը խուճապով փախչում են դեպի Խանլղ:

Թուրք կոմիսար նշանակելով մեզ հպատակություն հայտնած այդ գյուղերի համար՝ անցնում եմ Գորիս:

Հաջողությունը մերն է: Մեր բախտը մեզ հետ է և այս անգամ: Մեր զորամասերը հաղթական են բոլոր ռազմաճակատների վրա: Հանրապետական Հայաստանի կառավարությունը շնորհավորում է մեզ մեր նոր հաղթության առթիվ, իսկ մենք՝ մեր հրամանատարությունը և զորքերը: Ժողովուրդը ցնծում է ամենուրեք: Գորիսը տոնում է մեր նոր հաղթանակը:

Բայց անսպասելիորեն այդ ընդհանուր խանդավառության մեջ՝ Հունիսի 22-ին ստացվում է օգնականիս հետևյալ հաղորդագրությունը: «*Սպարապետ Նժդեհին, Արևմտյան ճակատի հրամանատարը տեղեկացնում է, որ իրենք Քեշքենտից հետ քաշվելու ժամանակ Երևանի զորամասի զինվորները չցանկացան հետ գալ, և ինչպես պարզվեց, պրոպագանդայի միջոցով երեք օր առաջ վճռված է եղել անցնել կարմիրների կողմը: Սևանի գումարտակը, իր հրամանատար Աղաբեկի հետ, անցել է կարմիրների կողմը: Երևանի գումարտակը ցրվել է: Սպարապետի օգնական Կուռռ: 1921, Հունիս 22*»:

Երևանյան զորամասերի այդ քայլն անսպասելի չէր: Նրանք մի անգամ էլ՝ ցույց տվին թշնամուն, որ ցանկության դեպքում կարող են հաղթել... և միայն այսքանը:

Թշնամին առանձին օրենքով դասալիք և թշնամի էր հայտարարել Սյունիքի ապաստանած Արարատյան զինվորներին և սպառնացել «Նժդեհի դրոշի տակ մնալու դեպքում՝ բռնագրավել նրանց սեփականությունը և բանտերը լցնել նրանց ծնողներին»:

Ահա՝ թե ինչու տարագիր զինվորները թշնամու ցանկացած ձևով անցան Երևան և մեր վերջին ռազմական գործողությունները պսակվեցին հաղթություն-պարտությամբ:

ԵՐԿՈՒ ՎԱՎԵՐԱԳԻՐ*

Հունիսի վերջին, որպես հետևանք մեր վերջին ռազմական գործողության, Թավրիզի վրայով Սյունիք են հասնում «ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հայտարարությունը Զանգեզուրի իշխանության» և մի դեկրետ, որով Լեռնային Ղարաբաղը կցվում է Խորհրդային Հայաստանին:

Կարևոր ենք համարում առանց մեկնությունների մեջբերելու մեր վերջին ճիգերի արդյունքը կազմող այդ երկու պաշտոնական վավերագրերը:

1. «*Զանգեզուրի իշխանությանը,*

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կառավարությունը սույն գրությամբ նորից դիմում է ձեզ և առաջարկում Զանգեզուրում ապաստանած բոլոր ըմբոստ տարրերին վերջ տալ ապստամբությանը խաղաղ կերպով և հպատակվել երկրի միակ օրինական իշխանությանը, Խորհրդային Հայաստանի կառավարությանը:

Խորհրդային Հայաստանը՝ հայ բանվորների և գյուղացիների համար հայ աշխատավորության իշխանությունն է: Եվ, որպես այդպիսին, նա գործադրել է և կգործադրի բոլոր ջանքերը մշակելու այն կենսաձևը, որն ավելի հարազատ և մոտ է ժողովրդի պահանջներին և տեղական պայմաններին:

Նկատի առնելով Զանգեզուրի գյուղացիության կարիքները, Խորհրդային Հայաստանի կառավարությունը կարևոր է համարում հայտարարել, որ նա իր կողմից հնարավորություն է տալիս Զանգեզուրի աշխատավորությանը մշակել ուրույն համայնական կենցաղ: Զանգեզուրի բոլոր բնակչությունը պետք է ունենա իր տեղական մարմին-

* Տե՛ս «Խորհրդային Հայաստան», թիվ 106, 1921թ. (ծանոթ. հեղ.):

ները, իր առանձին կենսաձևը: *Սակայն, այդպես լինելով հանդերձ Զանգեզուրը պիտի կազմի Խորհրդային Հայաստանի անքակտելի մասնիկը: Նա պիտի կապված լինի ամենասերտ կերպով բանվորագյուղացիական իր հայրենիքի հետ:* Այդ կապը պիտի ամրացնեն իրենք Զանգեզուրի գյուղացիները, որոնց հնարավորություն կտրվի ձեռնարկել ինքնապաշտպանության և լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները:

ՀՍԽՀ կառավարությունը այժմյանից հայտարարում է, որ Զանգեզուրում ամենալայն չափով կկիրառվի ընդհանուր զինվարժության սկզբունքը, որի համաձայն երկրի ամեն մի քաղաքացի պիտի դառնա իր տեղավայրի գոյությունը պաշտպանող ռազմական ուժ: Միաժամանակ Զանգեզուրում կգործադրվի վճռականությամբ ընդհանուր քաղաքական ներման այն դեկրետը, որ հրատարակվել է Հայաստանում:

Ինչ վերաբերվում է Զանգեզուրի ավերված վայրերին և լքված գյուղերի բնակիչներին, Հայաստանի խորհրդային կառավարությունը գտնում է, որ Զանգեզուրից հեռացած նախկին բնակչության վերադարձը չպիտի կատարվի հակառակ տեղացի աշխատավորության ցանկության: Զանգեզուրում ապրող հայ գյուղացիությունը կարող է ապահով լինել, որ նրանից չի խլվի մի հողավայր...

ՀՍԽՀ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ Մյասնիկյան (Ալ.Մարտունի), Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահության անդամներ՝ Պ.Մակինցյան, Ա.Բեկզադյան, Ս.Սրապիոնյան (Լուկաշին), Ա.Կարինյան. քարտուղար՝ Միք.Ղարաբեկյան:

13 Հունիսի, 1921, Երևան»:

2. «*Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա, հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմյանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը:*

ՀՍԽՀ Ժողկոմների Խորհրդի նախագահ՝ Ա.Մյասնիկյան,
քարտուղար՝ Մ.Ղարաբեկյան:

1921, Հունիս 12, Երևան»:

ՅՈԹՆԵՐՈՐԴ ԱՆԳԱՄ

«*Մենք թշնամուն ենք ծեծում, Երևանը՝ մեզ*»:

Առաջին անգամ՝ 1920թ. Հունիսի 5-ին՝ Երևանյան կանոնավոր զորամասը տեղի է տալիս բոլշևիկների առաջ և լքում Զանգեզուրը, իսկ իմ ուժերը շարունակում են մնալ Կապարգողթում:

Երկրորդ անգամ 1920թ. Օգոստոս 1-ին՝ Հայաստանի հանրապետական մի նոր զորամաս, անհաջող հարձակումից հետո, թողնում է Զանգեզուրը թշնամուն և քաշվում Դարալագյազ, իսկ ես՝ պետական զորամասի նահանջն ապահովելիս վիրավորված վերստին վերադառնում եմ Ղափան և շարունակում կռիվը խորհրդային զորքերի դեմ:

Երրորդ անգամ՝ 1920թ. Օգոստոս 10-ին Դրոն Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարի անունից մի պաշտոնական գրությամբ, համաձայն Երևանի և կարմիրների միջև կնքված զինադադարի, առաջարկում է թողնել Զանգեզուրը և անցնել Հայաստան: Բարոյապես ազատ չզգալով ինձ՝ օգտվելու զինվորական նախարարի առաջարկությունից, Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղածս մի գրությամբ, պարզելով իմ Լեռնահայաստանը թողնելու անպատեհությունները, շարունակում եմ մնալ և պայքարել:

Չորրորդ անգամ՝ 1920թ. Հոկտեմբեր 10-ին՝ Հայաստանի կառավարությունը, իմ Ղափանը վերագրավվելու օրը, Զանգեզուրը անորոշ ժամանակով զիջում է կարմիր զորքերին, մեծապես ծանրացնելով իմ գործը: Իսկ ես նույն օրերին կարմիր հրամանատարության ուղղում եմ իմ երկրորդ վերջնագիրը և երկարատև կռիվներով վերագրավում բովանդակ Զանգեզուրը:

Հինգերորդ անգամ՝ 1920թ. Նոյեմբեր 24-ին՝ Երևանում ընկ. Աշոտը Հայաստանի Հանրապետության կառավարությանը ներկայացնում է հետևյալ գրությունը. «*Զանգեզուրի վերջին գոյամարտի սկզբից մինչև օրս Հայաստանի կառավարությունը ոչ թե միայն մեզ ցույց չի տվել բարոյական, նյութական և ռազմական շոշափելի օգնություն, այլ անտարբեր վերաբերումներով հաճախ մեծապես վտանգել է մեր գոյությունը: Հայաստանի կլառավարությունը ի վնաս իր շահերի, իսկ մասնավորապես Զանգեզուրի, առանց ժողովրդի կամքն իմանալու 4 Հոկտեմբեր 1920-ին կնքում է բոլշևիկների հետ անպատվաբեր մի դաշնագիր՝ զանգեզուրի անկախ ժողովրդի դատը համարելով վիճելի, իսկ կառավարությունը՝ սովետական: Թէ ի՞նչ կորստաբեր հետևանքներ կունենար այդ դաշնագրի իրականացումը ողջ Հայաստանի համար, եթե ի չիք չդարձներ դրա զորությունը ինքը՝ ժողովուրդը, հանձինս իր սիրելի հրամանատար Նժդեհի, դա ակներև կարող էր լինել, երբ կարմիրները 9,000 սվինները Նախիջևան անցնելով, այսօր ոտք կոխեին Հայաստանի մայրաքաղաքը: Այս բոլորից հետո թվում է կառավարությունը որոշ ողջախոհության պիտի եկած լինի համոզվելով, որ իր վերոհիշյալ ընթացքը տանում է ինչպես Զանգեզուրը, նույնպես և ողջ Հայաստանը դեպի կորուստ*»:

Այլ գրության մեջ Աշոտը Զանգեզուրի ապահովության համար պահանջում էր կառավարությունից չորս թնդանոթ, անհրաժեշտ քանակությամբ ռազմամթերք, զենք և այլն, պահանջելով «*Զանգեզուրը ծա-*

նաչել Հայաստանի տերիտորիան և նրա կարևորագույն ռազմաճակատներից մեկը»:

Թնդանոթներ չեն տրվում մեզ, երևի երկու օրից կարմիրներին հանձնելու համար, ինչպես և եղավ: Նման վերաբերմունքից հետո էլ ես ինձ ազատ չեմ զգում թողնելու Զանգեզուրը:

Վեցերորդ անգամ՝ 1920թ. Նոյեմբեր 26-ին, «*պետության գլուխը անցած Դաշնակցության պատասխանատու ընկերները, խոշոր մեծամասնությամբ, որոշեցին ընդունել Ռուսաստանի օրիենտացիան: Դրո*»:

Դեկտեմբեր 2-ին Հայաստանը հայտարարվում է խորհրդային և կարմիր զորքը առանց կռվի մտնում է Երևան:

Չնայած սրան՝ երկարատև կռիվներով մենք վերագրավում ենք բովանդակ Զանգեզուրը և ստեղծում ենք ինքնավար Սյունիք:

Յոթերորդ անգամ՝ 1921թ. Ապրիլի 2-ին, երկրորդ անգամ, ընկնում է Երևանը և 12,000-նրանց գաղթականությունը ապաստան է գտնում անկախ Լեռնահայաստանում:

Այսպես, յոթն անգամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը լքել է, զիջել, ձեռքից տվել մեր լեռնաշխարհը: Եվ միշտ էլ նայելով ինձ վրա, որպես հեղափոխականի, ես մնացել եմ այնտեղ, մնացել մենակ, առանց ռազմամթերքի, պետական զորքի, հացի, հաղորդակցության, երբեմն վիրավոր, երբեմն լքված որոշ հուսահատ շրջանների կողմից, մնացել եմ, համառել, դիմադրել:

ՈՂԲԵՐԳՈՐԵՆ ՄԵՆԱԿ

Երբեք իրեն այնքան մենակ չէր զգացել Լեռնահայաստանը, ինչպես արևմտյան ճակատի ծանոթ դեպքից հետո:

Պարտված էին Դենիկինը, Կոլչակը, Յուդենիչը: Խորհրդայնացած էին Ղրիմը, Ուրալը, Ադրբեջանը, Վրաստանը, Հայաստանը:

Բոլշևիզմը պարտության էր մատնել իր բոլոր ակտիվ թշնամիներին և բոլորին հանել մեր Լեռնաշխարհին դեմ: Թշնամու հետ, նրա բանակների մեջ էին ռուսը, լատիշը, հրեան, լեզգին, վրացին, թուրքը, թաթարը՝ մի ամբողջ Բաբելոն: Նրան օգնության էր եկել նաև ակամայից կարմրած հայը՝ անշուշտ, ոչ կռվելու և հաղթելու, այլ մեզ զրկելու անխնա հարվածելու հնարավորությունից:

Մենք եղբայրասպան կռիվներ չէինք վարել, լեռնաշխարհը քաղաքացիական պատերազմ չէր տեսել: Մենք կռվել էինք թաթարի, թուրքի և սրանց օգնության փութացած կարմիր ռուսի դեմ: Եվ եղել էինք մեր հարվածների մեջ ազատ՝ սրանց նկատմամբ:

Այժմ հայն էր կազմում թշնամու ուժերի առաջամարտիկը, որին պարտության մատնելու համար չպիտի կարողանայինք գործի դնելու

մեր ուժանակային պայթուցիկ տակառները, մեր լեռների ժայռերը, մեր ռազմավարության տարերային ձևերը... մեր վճռականությունը:

Հանուն հայ ժողովրդի գոյության պաշտպանության զենք բարձրացնողները՝ չպիտի կարողանային մեր վարած գոյամարտին տալ եղբայրասպան բնույթ:

«*Մի՛ կրակեք, մենք էլ ենք հայ*». ահա՛ Սյունեցու բազուկը անդամալուծող ճիչը:

«*Մենք էլ ենք հայ*», կանչում էին կարմիր ճակատներից Սյունիքի դեմ զոռով քշված Երևանի հայերը:

Թշնամին գիտակցորեն կռիվներին տվել էր քաղաքացիական, եղբայրասպան բնույթ, համոզված, որ նման կռվի համար իր նետած ձեռնոցը չպիտի կարողանանք վերցնել:

«*Մենք էլ հայ ենք...*»

Բոլշևիկյան ռազմաճակատներից բարձրացող այդ տխուր կանչից առաջ մեզ հասել էին և ուրիշ բարոյալքիչ աղաղակներ: «*Էլ հերիք է*», կանչել և կանչում էին Երևանից, Թավրիզից, Բուքրեշից, Փարիզից:

Չափվում են բանակները, կառավարությունները, բայց հաղթում կամ պարտվում՝ ազգերը, ցեղերը:

Հայությունը իրեն պարտված էր զգում, ավելի ճիշտը՝ անկարող շարունակելու իր անկախության պայքարը: Ահա՛ թե ինչու *առանց կռվի* պիտի տեղի տար նրա վերջին բանակը՝ վիրավոր, բայց անհաղթ՝ լեռնաշխարհը:

ԵՐԿԸՆՏՐԱՆՔԻ ԱՌԱՋ

Սովամահությո՞ւն, թե՞ սովետացում (խորհրդայնացում):

Մասնավորապես Վայոց Ձորի ծանոթ բարոյալքիչ դեպքից հետո Սյունիքի ժողովուրդն ու նրա ղեկավարը իրենց զգացին այդ սուր երկընտրանքի առաջ:

Տեղի տալու դեպքում մենք զոհաբերած կլինեինք երկամյա կռիվներում ձեռք բերված մեր անկախությունը, որը նպատակ չէր միայն, այլ միջոց:

Կռիվը շարունակելու դեպքում հարկադրված պիտի լինեինք ժողովրդի ակտիվ տարրերը պահելու զենքի տակ, լեռների վրա, ասել է՝ հազարների սովամահությամբ ապրեցնել Սյունիքի անկախությունը, որը ստեղծված քաղաքական ընդհանուր դրության շնորհիվ դառնում էր անհնարին:

Հունիսի վերջին ժողովրդի մտատրամադրություններին ծանոթանալու նպատակով անցնում եմ Սիսիան: *Գյուղացիությունը չի թաքցնում, որ զրկված է կռիվը շարունակելու հնարավորությունից:*

«Հրացաններից օգտվել չպիտի կարողանանք, որովհետև ռազմամթերք չունենք, իսկ մանգաղից չենք կարող չօգտվել, որովհետև սովն սկսել է իր ավերածությունները»:

* * *

Սիսիանի խորհրդայնացումով կռիվներ վարելու հնարավորությունից պիտի զրկվեին նաև Դարաբասի, Տաթևի և բուն Զանգեզուրի շրջանները:

Սիսիանին տեր դառնալով՝ թշնամին պիտի հարվածեր Գորիսը թիկունքից առնելով բուն Զանգեզուրը «երկու կրակի» մեջ: Ահա թե ինչու պետք էր ժամ առաջ ապահովել Գորիսի թիկունքը և կապը Ղափանի հետ:

Սիսիանում թողնելով կառավարության անդամ Սմբատ Եղիազարյանին, շտապով վերադառնում եմ Ղափան: Մասնակի զորահավաք կատարելով, որոշ ուժեր Ղափանի հրամանատար Գ-ի[43] գլխավորությամբ ուղղում եմ Սիսիան՝ թեթևակի զբաղեցնելու թշնամուն: Նույն օրը, մի վճռական քայլով լցնում եմ Բարգուշատի բարձունքների վրա, քոչվորների անվան տակ, որոշ ձեռնարկների համար կուտակված բոլշևիկյան ուժերը և ղափանցիների մի թեթև զորախմբով անցնում Տաթև:*

Հետս առած ուժերը, որպես վարագուրող զորախումբ թողնելով Գորիսի թիկունքում, Ուչ թափայի վրա, գնում եմ Գորիս, ուր ստանում եմ Ս. Եղիազարյանի հետևյալ հաղորդագրությունը.

«Կառավարությանը: Պատճենը՝ Սպարապետին: Պատճենը՝ գլխավոր շտաբին:

Նավասարդյանի առանձին դիվիզիան հրաժարվում է մեկնելուց, պատճառաբանելով, որ սիսիանցիներից խաբված է, հոգնած է և թերևս հնարավորություն ունենա աշխատել մեկ ու կես ամիս հանգստանալուց հետո: Իրողությունը այն է, որ ցանկանում են անցնել Պարսկաստան: Այդ ուղղությամբ պրոպագանդա է մղվում սպաների կողմից... Նախարար Սմբատ Եղիազարյան, 1921թ. 27 Հունիս, Ղարաքիլիսա:

Ծածկագրի հետ ճիշտ է՝ Գնդապետ Նարինյան»:

---

* Տաթևում ստանում եմ Արշ.Հովհաննեսյանի հեռախոսագիրը.

«Զինվորական նախարար Նժդեհին.

Ինչպես ձեզ հայտնի է, մերոնք Սիսիանը թողել են, որով վտանգի է ենթարկվում բուն Զանգեզուրը: Թշնամու ուժը չնչին է և մեր պարտությունը զուտ հոգեբանական է... Փոխ-վարչապետ Ա. Հովհաննիսյան, 29 Հունիս, 1921թ. Գորիս» (ծանոթ. հեղ.):

Գորիսում՝ նախարարական խորհուրդը քննության առնելով ստեղծված ընդհանուր դրությունը, որոշում է պարպել Գորիսը: Հեռախոսի մոտ եմ կանչում բուն Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատարին, հայտնում եմ կայացած որոշումի մասին և կարգադրում դիմադրություն ցույց տալ այն դեպքում միայն, երբ կփորձեն Սյունիք մտնել թուրք և թաթար ուժեր, իսկ ռուս և հայ զորամասերի դեմ զենք չբարձրացնել:

Գյուղերի ներկայացուցիչները, դեռ սահմանագլխի վրա, դեռ բոլշևիկները Զաբուղ գետը չանցած, պետք է տեղեկացնեն խորհրդային իշխանությանը բուն Զանգեզուրի և Գորիսի կամովին խորհրդայնացման որոշման մասին:

Նույն օրը, երեկոյան դեմ, կառավարության տան առաջ հավաքվում է Գորիսի բազմահազար ժողովուրդը:

«*Եկել եմ մի քանի խոսք լսելու և*»,- զեկուցում է համհարզս:

Հեշտ չէ նման դեպքերում պաղարյուն մնալ:

Չեմ հիշում ասածս, բայց թվում է, որ պիտի ասած լինեմ. «*Ժողովուրդ, դու վիրավոր ես, բայց ոչ պարտված: Այդ գիտի և թշնամին և դրա համար էլ քեզ հետ պիտի վարվի որպես ոչ պարտվածի: Մարդկային վերաբերմունք դեպի քեզ պահանջում է և թշնամու շահը: Եթե նա անմտություն ունեցավ կրկնելու իր տխուր անցյալը, եղիր վստահ, որ հունձդ հավաքելուց հետո, դարձյալ կտեսնես ինձ քո կողքին...*»:

Գիշերը լուսացնում ենք Գորիսում: Առավոտյան ես անցնում եմ Ուչթափալար՝ դեպի Գորիսի թիկունքը, իսկ կառավարությունը՝ իշխանությունը հանձնելով տեղացիներից կազմված մի մարմնի, անցնում է Տաթև:

Դեռ Գորիսը չթողած՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Վայոց Ձոր էր ուղարկված մի պաշտոնական գրություն, որի մի հատվածը հետևյալն է. «*Լեռնահայաստանը՝ դադարեցնելով պատերազմական գործողությունները հավատում է, որ Խորհրդային Հայաստանի Հեղկոմը կկատարի իր՝ Զանգեզուրի իշխանության ուղղված հայտարարության մեջ արած բոլոր խոստումները*»:

Հուլիսի 3-ին մեր անթելը բռնում է Երևանից՝ Անդրկովկասյան կարմիր բանակների սպայակույտին և Մոսկվային ուղղված հետևյալ հաղորդագրությունը. «*Թշնամին առանց դիմադրության իր ուժերը քաշում է դեպի հարավ, դեպի պարսկական սահմանագլուխը: Այս անգամ հավանական ենք համարում սպիտակ Զանգեզուրի խորհրդայնացումը: Հայաստանի հեղկոմ, 1921թ. Հուլիս 3*»:

Հուլիս 4-ին առանց կռվի* տեղի են տալիս նաև Տաթևի և Դարաբասի ծորերը:

Այդ շրջաններում հավաքված վաշտերը ցրելով իրենց գյուղերը մենք քաշվում ենք Ղափան:

ՂԱՓԱՆՈՒՄ

Տաթևը թողնելուց մի օր հետո Ղափանի Հանքերում տեղի է ունենում այս շրջանի ներկայացուցչական ժողովը: Ներկա են նաև ճակատների պետերը:

«*Ստեղծված կացության մեջ նախընտրելին խորհրդայնացումն է: Սովն ավելի կործանարար պիտի լինի, քան սովետացումը: Գուցե և խրատված լինեն բոլշևիկները և այս անգամ չկրկնեն մոտիկ անցյալի իրենց տխուր արարքները: Թաքարական Բաքուն չէ, այլ հայկական Երևանը, որի հետ այս անգամ պիտի գործ ունենանք...*»

Այսպես էին մտածում ժողովականները:

«*Իսկ եթե թշնամին դավադրե՞ց, եթե նա չհարգե՞ց իր խոստումները և Սյունիքը կցեց Ադրբեջանին*»,- գրեթե միաբերան հարցնում են բոլոր ներկաները:

«*Եթե Երևանն էլ այդպես վարվեց,- դաշտային աշխատանքները ավարտելուց հետո, վերստին կբարձրանաք լեռները, ուր կգտնեք ինձ: Սյունիքը, ցանկության դեպքում, միշտ էլ կարող է իրեն անկախ հռչակել*»:

Ժողովը որոշում է տեղի տալ առանց կռվի և ցրվում:

* * *

Նույն օրը տեղի է ունենում Հայաստանի Հանրապետության կառավարության վերջին նիստը: Մյուս օրը, առավոտյան իր կայացրած որոշման համաձայն, նա անցնում է Մեղրի, իսկ ես մեկնում եմ Ղափանի արևելյան ճակատը: Որոշ նկատառումներով պետք էր այդ օրն էլ Հանքերը պահել մեր ձեռքին:

Ղափանում մենք ունեինք 1000-ի չափ գերիներ, որոնց 95 տոկոսը՝ հայ: Սրանք, նկատելով մեր տեղի տալու նախապատրաստությունները, գալիս շարվում են մեր շտաբի դիմացը և ցանկություն հայտնում տեսնելու ինձ:

---

* Սիսանի արևմտյան գյուղերը հարկադրված էին դիմադրություն ցույց տալու Նախիջևանի կողմից հարձակվող թուրք ուժերին, մինչև որ Բազարչայի կողմից Սիսիան էր մտնում հայ բոլշևիկների մի հեծելագունդ:

-Ի՞նչ է լինելու մեր վիճակը, Պ. Սպարապետ,- մի քայլ առաջանալով զորաշարքից, հարցնում է նրանց պատվիրակը:

-Դուք հա՞յ եք:

-Այո՛,- պատասխանում են:

-Ուրեմն, դուք պիտի մնաք Սյունիքում՝ Երևանից եկողներին զգացնել տալու իրենց հայ լինելը: Հասկանո՞ւմ եք ինձ:

-Այո՛:

-Ինչո՞ւ Սյունիքը,- հարցնում եմ ես,- որպես եղբոր և ոչ որպես թշնամու վարվեց ձեզ հետ, չնայած, որ դուք զենքով էիք դուրս եկել նրա դեմ:

-Որովհետև մենք էլ հայ ենք, որովհետև մեզ զոռով էին քշել ձեր դեմ:

-Այո՛, որովհետև դուք էլ հայ եք. մեկ էլ կրկնեք այդ սրբազան խոսքերը: Կրկնեք ամեն օր, ամեն ժամ և ամեն տեղ կրկնեք հպարտությամբ՝ մենք էլ հայ ենք: Եթե Հայաստանի նոր տերերը ձեզ ասել են՝ էլ մի՛ աղոթիր, ես ասում եմ՝ ձեր նոր աղոթքը թող լինի՝ մենք էլ հայ ենք:

-Հայ ենք և պիտի մնանք հայ, Պ. Սպարապետ:

Այո՛, և պիտի մնանք, որ մի օր, երբ քաղաքական հնարավորություն ստանանք տեսնվելու անկախ Հայաստանում, որ բաց ճակատով կարողանանք ասել հայ ժողովրդին. «*Իգուր անցավ բոլշևիզմի հակազգային թույնը, նրան չհաջողվեց սպանել մեր ցեղի հոգին մեր մեջ*»:

Հայ գերիները երդվում են իրենց ուղղածս խոսքերը հաղորդել Հայաստանի կարմիր բանակի ամեն մի զինվորի:

Երեկոյան դեմ, գերիներին՝ իրենց ղեկավարներից մեկի գլխավորությամբ՝ ճանապարհ եմ դնում դեպի Կավարտ:

Նույն օրը, ժամը ութի մոտերը, ղափանցի սուրհանդակները Ինջաբել են տանում իմ վերջին հրահանգը՝ «*քաշվել ճակատներից և ցրվել գյուղերը*»:

Կես գիշերն անց՝ գյուղի վրայով մենք քաշվում ենք դեպի Խուստուպի բարձունքները:

ՄԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

Լույսը դեռ նոր էր բացվում Խուստուպի վրա, երբ սուրհանդակներն ինձ հանձնեցին Ատրպատականի հայոց առաջնորդ արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի հետևյալ գրությունը.

«*Լեռնահայաստանի հանրապետության համայն զորքերի գլխավոր հրամանատար՝ Նժդեհին,*

Իբրև Ատրպատականի հայոց հոգևոր հովիվ, որ մոտիկ եմ կանգնած Կովկասի հայկական շրջանին, դիտում եմ նրա վերջին տարիների կյանքը, նրա քաղաքական ելևէջները, ապրում եմ նույն ցավե-

րով, խորը խոցված նկատում եմ այն տառապանքները, որ կրում է հայոց ժողովուրդը, որի մեջ վաղուց անհետացել է վստահությունը դեպի միմյանց, թշնամությունը, արմատացած երկու հատվածների մեջ, կրծում է այդ հազարամյա տանջանքներով լի ժողովրդի սիրտն ու հոգին, մաշում, հյուծում է այդ ցավատանջ ժողովուրդը, հեռու հրելով հանգիստ աշխատանքի ուղիից դեպի մութ անորոշ ապագան: Արդ, խոր ցավ զգալով իմ 4000-ամյա հայրենիքիս մնացորդ զավակների այդպիսի վիճակի պատկերով, նույնպես և միանգամայն հակառակ լինելով զենքի ուժով, արյան հեղեղներով և բռնությամբ խնդիրները լուծելու եղանակին, հոգուս ներքին թելադրանքով, իբրև հարազատ զավակն այդ երկրի, դիմում եմ ձեզ՝ երկու կողմերիս՝

1. Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ հիմք ունենալով նրա այն դեկլարացիան, որ ուղղված էր Լեռնահայաստանին, հրավիրելով վերջինիս խաղաղ ճանապարհով հարթելու բոլոր վեճերը և հաշտությամբ վերջացնելու խոչընդոտ հանդիսացած խնդիրները՝ այդպիսի բանակցությունները ընդհատվեցին Դարալագյազի ընդհարումներով:

2.Եվ Լեռնահայաստանի կառավարությանը, խնդրելով՝

Ա. Չինադադար նշանակել...

Բ. Վերսկսել ընդհատված բանակցությունները:

Հույս ունեմ, որ Լեռնահայաստանի կառավարությունը չի անտեսի իմ միջնորդությունը և հնարավորություն կտա իր ժողովրդին ամառային ցանքսերը հավաքելու և դաշտային աշխատանքները անարգել կատարելու:

Առաջնորդ հայոց Ատրպատականի՝ Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան, Թավրիզ, 2 Հուլիս, 1921»:

Ինձ ուղղված էր և Մյասնիկյանին տրված հեռագրի պատճենը, որն այս է. «*Հեռագիր, Երևան: Ժողովրդական կոմիսարների նախագահ քաղաքացի Մյասնիկյանին, պատճենը՝ Սպարապետ Նժդեհին.*

Ստանալով կոմիսարներիդ խորհրդի 1921 թիվ, Հունիսի 13-ին հրատարակած դեկլարացիան Զանգեզուրի մասին, Վրացյանի համաձայնությամբ սուրհանդակ ուղարկեցինք Նժդեհի մոտ պատերազմական գործողությունները դադարեցնելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ: Սրա հետ միասին, այդ հարցի առթիվ, Գրիգոր Օհանջանյանին իմ գրավոր առաջարկությունը ձեզ:

Ատրպատականի թեմական առաջնորդ Արքեպիսկոպոս Ներսես

Թավրիզ, 1 Հուլիս, 1921»:

Մյասնիկյանի կառավարության մեզ ուղղված ծանոթ հայտարարության և Ատրպատականի առաջնորդի հաշտարար գրության պատասխանը մեր կողմից լինում է հետևյալը.

«*Սովետական Հայաստանի Հեղկոմին,*

Որպեսզի հայ աշխատավորությունը և նրա ինտելիգենցիան, այսպես թե այնպես, հաշտվեն Հայաստանում ստեղծված խորհրդային իրավակարգի հետ և նոր ընդվզումներով չփորձեն ազատագրվելու ծեր լծից, ընդվզումներ, որոնք պիտի թուլացնեն սոցիալապես արնաքամ եղած հայ աշխատավորությունը և ձեզ, ես կցանկանայի տեսնել Խորհրդային Հայաստանում այնպիսի բարեփոխություններ քաղաքական և տնտեսական հողի վրա, որոնք համապատասխանեին մեր ժողովրդի լավ հասկացած շահերին:

Այդ բարեփոխությունները հետևյալն են.

Ա. Հարգանք և անձեռնմխելիություն գյուղացիական և առհասարակ մանր սեփականության: Ազատ առևտուր: Բռնագրավումների կատարյալ վերացում: Կոոպերացիայի անբռնադատ զարգացում: Ներքին վերաբնակության կազմակերպում:

Բ. Նախկին թուրքահայերը ստանում են հողաբաժիններ:

Գ. Ազգայնական բախումների վերացման համար կատարվում է հայերի և թուրքերի տեղափոխություն Հայաստան և Ադրբեջան:

Դ. Անձի և բնակարանի անձեռնմխելիություն: Մամուլի, խոսքի ու ժողովների ազատություն:

Ե. Արտակարգ հանձնաժողովների վերացում: Պատասխանատվություն միայն դատարանի առաջ:

Զ. Հայ լեզվի պետական իրավունքի վերականգնում և նրա պարտադիր գործածությունը պետական հիմնարկություններում և զորքի մեջ:

Է. Հայ բանակի առանձին կազմակերպում իր ազգային ղեկավարների գլխավորությամբ. հայ սպայության վերադարձ հայրենիք և նրա պաշտոնընկալությունը հայ բանակում:

Գալով լեռնահայաստանի առանձնահատուկ վիճակին, ես կցանկանայի հետևյալ պայմանների ընդունելությունը Խորհրդային Հայաստանի կողմից:

Ա. Լեռնահայաստանը պարփակում է իր մեջ ամբողջ Զանգեզուրի գավառը, լեռնային Ղարաբաղը, Վայոց Ձորն ու Գողթանը:

Բ. Լեռնահայաստանը իբրև մի վարչական միավոր և Հայաստանի անբաժան ինքնավար մասը, կառավարվում է իր ընտրովի կենտրոնական և տեղական իշխանությունների միջոցով ու ենթարկվում է Հայաստանի կենտրոնական կառավարությանը:

Գ. Լեռնահայաստանը չի զինաթափվում, այլ ստանում է զենքի ու ռազմամթերքի նոր պաշար Հայաստանի կենտրոնական կառավարությունից: Լեռնահայաստանում կարմիր բանակ չի կազմակերպվում, այլ ընդունվում է ժողովրդական ընդհանուր զինման միլիցիայի սիստեմը: Նրա զինված ուժերը չեն հանվում երկրի սահմաններից: Դրսից ուժեր չեն բերվում Լեռնահայաստան:

Դ. Լեռնահայաստանի գյուղացիության սակավահողության պատճառով թուրք փախստականների վերադարձը վերջնականապես խափանվում է և լքված գյուղերը հանձնվում են մնացած սակավահող գյուղացիներին:

Ե. Թուրք քոչվորների խնդիրը հարգվում է Լեռնահայաստանի իշխանության կողմից, ըստ որում քոչվորները սար են բարձրանում անզեն:

Որպեսզի Լեռնահայաստանի աշխատավոր ժողովուրդը հաշտ աչքով նայի սովետական իշխանության վրա, բացի առաջադրածս բոլոր կետերի կիրառումը, ցանկալի է, որ Լեռնահայաստանի սահմաններում չերևան ու չգործեն այս երկրի աչքում իրենց այլանդակ գործունեությամբ արատավորված հայ կոմունիստները:

Տեր դառնալ մի երկրի, դեռ չի նշանակում հաղթել այդ երկիրը լցնող ժողովրդին և նրա ազատ ապրելու ուժեղ ցանկությունը: Ձեր առաջխաղացումը, Արարատյան զորամասի ծանոթ քայլից հետո, կարելի է համարել ամեն ինչ, միայն ոչ ռազմական հաջողություն, հաղթություն: Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու, աշխատեք բավարարել հայ գյուղացիության և նրա մտավորականության այդ արդար պահանջները:

ՀՀ Սպարապետ՝ Զորավար Նժդեհ

Ղափանի Հանքեր, 1921, Հուլիս 7»:

ԳԵՆՎԱԶՈՒՄ

Արևիքի բարձունքներից Ալագյազի և Սոյուխների վրա դեռ նոր էին լռել թշնամու թնդանոթները:

Ռուս և թուրք հորդաները մեկ էլ էին փորձել փակելու Սյունիքից դեպի Պարսկաստան բացվող փոքրիկ պատուհանը՝ խզելու մեր կապը արտաքին աշխարհի հետ: Փորձել էին, փորձանքի եկել և նորից, ծեծված, հալածվել մինչև Օրդուբադի դռները:

Գենվազի արծիվները դեռ նոր էին վերադառնում իրենց բները:

Հակառակ եղած փայլուն հաղթանակին, լուռ, մռայլ, սրտաբեկ է ամբողջ Արևիքը: Լեռնահայության անլուր ողբերգությունը կարելի է կարդալ ամեն մի արևիքցու աչքերի մեջ:

Մի օր առաջ նա հաղթել է թշնամուն, իսկ այսօր իջնում է լեռներից և վաղը ի՞նչ ողբերգություն, նրա ներկայացուցչությունը պետք է մեկնի Գորիս՝ թշնամուն հայտնելու Արևիքի «հպատակությունը»:

* * *

Հուլիսի 7-ին Կալերի և Մեղրու միջև հանդիպում ենք Գենվազի պատվիրակությանը, որը Ղափանի վրայով պետք է անցներ Գորիս՝ «տեսնվելու խելքը գլխին և մի քիչ հայ մեկի հետ»:

Իջնելով ձիերից, տեղավորվում ենք ծառերի տակ Մեղրու գետի ափին:

«*Մի ամբողջ տարի դիմադրել, հաղթել և չպարտված, զրկվել կռիվը շարունակելու հնարավորությունից*»,- պատվիրակության անդամներից մեկի այս խոսքերով է սկսվում մեր խոսակցությունը:

Պետք է որոշ հրահանգներ տալ: Մեր պատվիրակները չպիտի քաշվեին հայ բոլշևիկյան կռիվների պատճառը համարելու սովետատաճկական զինակցության և հայազգի բոլշևիկների «*ծախ տղայությունը*», որի երեսից այնքան տուժեց հայ ժողովուրդը: Նրանք պետք է հասկացնեին և համոզեին հայ բոլշևիկներին, որ միևնույն չէ, թե որ խորհրդային հանրապետության անբաժան մասը կկազմի մեր լեռնաշխարհը՝ Հայաստանի՞, թե՞ Ադրբեջանի: Նրանք պիտի նախազգուշացնեին ոչնչով չկրկնել տխուր անցյալը, մասնավորապես ժողովրդից չպահանջել և ոչ մի հատիկ զենք: Նրանք պիտի լուսաբանեին և պահանջեին խորհրդային իշխանության ներկայացրած իմ գրավոր պայմանների հարգումը:

-Տեսնենք, թե ինչպե՞ս կընդունեն մեզ,- ձիերը նստելիս ավելացնում է մեկը:

-Մեր գործը բոլշևիկների հետ է, որոնք հակառակորդի հերոսությունը հարգելու առաքինությունը չունեն: Բայց չեմ կասկածում, որ ձեզ կլսեն մեծ ուշադրությամբ և երկար, որպեսզի չստիպեն մեզ մեր գոյամարտի երկրորդ տարեմուտը, որ վաղն է, տոնելու Երասխի հայկական ափում:

Ասելով այդ, բաժանվում ենք:

Նրանք ուղևորվում են դեպի Ղափան, իսկ մենք՝ դեպի Մեղրի:

«ՑՏԵՍՈՒԹՅՈՒՆ»

Մեղրի է հավաքվել շրջանի գրեթե ամբողջ ժողովուրդը: Գյուղական վաշտերը եկել են զինված: Դաշտերում և այգիներում ոչ ոք

չկա, ոչ ոք չի երևում: Դեռ լուսաբացից ղողանջում են Մեղրու եկեղեցու զանգերը: Փողոցներում և մեծ հրապարակի վրա տեղ-տեղ համախմբվել է գյուղացիությունը: Լեռների վրա, ուր դեռ երեկ բորբոքվում էր կռիվը, տիրում է խորին լռություն: Տարեվերջն է այսօր հայ-բոլշևիկյան կռիվների:

Ուղիղ մի տարի առաջ, այսօր, թշնամին հանկարծակիի բերելով Ղափանը, մեզ ներկայացրեց առաջին վերջնագիրը՝ «*Ճանապա՞րհ տվեք կարմիր զորքին*»: Մի տարի առաջ, սյունեցին արձակեց իր առաջին գնդակը կարմիր զորքերի վրա, որպես ցույց բոլշևիզմի և պանիսլամիզմի հանցավոր գինակցության դեմ:

Եվ այն օրից ինչե՞ր չտեսան, ինչե՞րի վկա չեղան մեր լեռներն ու հարևանները: Քանի՞ քանի անգամ Սյունիքը կրկնեց հաղթական Ավարայրը: Քանի՞ և քանի անգամ այն օրից թշնամի բանակները փորձեցին Արաքսի ջրերի մեջ խեղդել Սյունիքի մի բուռ ապստամբներին, բայց միշտ էլ դիակներ փռելով մեր լեռների վրա՝ քաշվեցին հեռուները Սյունիքի և հայ զենքի գովքն անելու:

Այսօր, սակայն, ժողովուրդը եկել է ճանապարհ դնելու իր առաջնորդին:

* * *

Արաքսի ափից տեղեկացնում են, թե տարագիրների անցքը վերջանալու վրա է:

Կարգադրում եմ պատրաստվել: Մեղրու հնամենի «չինարի» շուրջը և դեպի Արաքսը ձգվող ճանապարհի վրա խռնվում է հուզված ժողովուրդը:

-Ցտեսություն, հերոս ժողովուրդ. ցտեսություն եմ ասում և ոչ մնաս բարով...

Լալիս է ժողովուրդը, որի խելահեղ գրոհներից ու զարկերից շատ էին լացել թուրք, թաթար և ռուս հորդաները:

Տխուր ղողանջում էին զանգերը: Լալիս էր Արևիքի խորհրդապաշտ հոգին: Մենք թողնում ենք հայրենի լեռները...

ԱՐԱՔՍԻ ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՓՈՒՄ

«Բաբելոնի գետափերի մոտ էինք նստում և Սիոնը մտաբերելով լացում...»

Արաքսի պարսկական ափին նստած, Սյունիքի երեկվա հաղթանակներից ոչ ոք չկրկնեց թագակիր սաղմոսերգուի այդ տխուր տողերը: Նրանք պարտված չեն: Նրանք հաղթել են, պարտադրել իրենց պայմանները և այժմ Արաքսի աջ ափին ամրացած, կսպասեն թշնամու առաջին քայլերին Սյունիքում, որ վճռեն իրենց անելիքը:

Թուրք-թաթար զորքերի միջամտության դեպքում, մենք վայրկյանաբար պիտի գտնվեինք Սյունիք: Մեր պայմանները հարգվելու դեպքում մենք պիտի քաշվեինք հեռուները:

Այդ մասին գիտեր թշնամին. նա գիտեր և այն, որ եթե հարկադրված եղանք իրագործելու իրեն ուղղված մեր պայմանագրի մեջ տրված սպառնալիքը, կարմիր բանակը չէր, որ անկարելի պիտի դարձներ մեր վերադարձը:

* * *

Հուլիսի 12-ի գիշերը Սյունիքում թողածս մարդիկ բերում են հետևյալ տեղեկությունները.

«Գորիս մտած բոլշևիկյան զորամասը մի օր մնալուց հետո հեռացել է Սյունիքից: Ջինաթափության և ծերբակալության դեպքեր չեն եղել: Վերաբերմունքը դեպի ժողովուրդը վատ չէ: Թշնամին, ցանկանալով խուսափել նոր բարդություններից, վճռել է հարգել մեր պայմանները» և այլն:

Այդ այդպես լինելով հանդերձ, ես անհավանական չէի համարում թուրք զորքերի Սյունիքը գրավելու փորձը:

Կարինյանի պատվիրակությունը չէր թաքցրել, թե Խորհրդային Ռուսաստանը վճռել է ամեն գնով բարեկամ մնալու քեմալական Տաճկաստանին, թե խորհրդային իշխանությունը ոչ միայն Կարսը, այլև Թիֆլիսը կգիջեր՝ եթե տաճիկները շարունակեին համառել Մոսկվայի կոնֆերանսում:

Նրանք, որոնք վատություն էին ունեցել հայտարարելու ի լուր աշխարհի, թե «հայ ժողովուրդը կարող է և գոյություն չունենալ, միայն թե կարմիր Հոկտեմբերը հաղթանակի ալևոր Արևելքում», բնավ չպիտի անհանգստանային, եթե թուրք-թաթար ուժերը՝ Սյունիքը, «դիակների կամուրջ»-ի վերածելու նպատակով, օգտվելով առիթից տեր դառնային մեր Լեռնաշխարհին:

Հուլիսի 13-ին մի փոքրիկ խմբակ և հետս վերցրած երկու թնդանոթները, գնդապետներիցս մեկի գլխավորությամբ, թողնելով Արաքսի ափին ընկած պարսկական գյուղում, հետս եղած ձիավորներով և գաղթականներով շարժվում էի դեպի Մուժամբար:

* * *

Տխուր անցնում ենք մի օտար, բայց ոչ թշնամի ժողովրդի միջով, որն երկու ամբողջ տարի վկա է եղել Լեռնահայաստանի հաղթական խոյանքներին և առիթ չի փախցրել հազար ու մեկ ձևով արտահայտելու իր հիացմունքը: Նրա վերաբերմունքը հարգալից է և այժմ: Նա ծանոթ է մեր ապրած ողբերգության: Նրա ներկայացուցիչները հաճախ կրկնում են, թե Սյունիքի դրության մեջ ասիացի մի այլ ժողովուրդ մտքով իսկ չէր անցկացնի դիմադրությունը, իսկ եվրոպացի

զինվորն ու զորավարը անձնատվության կդիմեին կռվի հենց առաջին օրերում:

-Հրրեն, հա՜, դեռ երևում է Ալագյազը,- հաճախ ծանր լռության մեջ բարձրանում է զինակիցներիցս մեկի կամ մյուսի տխուր բացականչությունը և ստիպում ինձ էլ սանձահարելու ձիս:

-Քիչ հետո է՛լ չպիտի երևան Սյունյաց լեռները: Զգալով այդ, տղաներս, կարծեք հրամանով, գրեթե միաժամանակ կանգնեցնում են ձիերը և գլուխները դարձնում դեպի ամպերի մեջ կորած հայրենի սարերը:

Աղոթողի արձանացած դրության մեջ լուռ էին նրանք: Չէին շարժվում նրանց շրթունքները, բայց ես լսում էի նրանց ձայնը: Խոսում էին նրանց հայացքները, լալիս սրտերը...

-«Ո՛վ, Երուսաղեմ, թե որ քեզ մոռանամ, թող աջ ձեռքս իր պաշտոնը մոռանա»,- այս էր ասում ամեն մեկն անխոս:

Այսպես երդվեցին նրանք՝ չմոռանալ Սյունիքը:

«Հայրենիք» ամսագիր,թիվ 7-12, մայիս-հոկտեմբեր, 1925թ.:

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ [44]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆԸ ԹՐՔԱԲՈԼՇԵՎԻԿ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՏԱԿ

Թող ներվի ինձ, եթե պատմական ճշմարտությունը պաշտպանելու համար, ակամա մեղանչեցի համեստության դեմ:

Ita est [45]

«Բոլշևիզմը հղացան հրեաները, իրագործեցին թաթարները, իրենց կաշվի վրա կրեցին սլավոնները»:
ՋՈՍԲԱՐՏ

Համաշխարհային պատերազմի վախճանը կսպառնա դառնալ Թուրքիայի արդար վախճանը:

Զարհուրելի էր դա պարտյալների, մասնավորապես, Թուրքիայի համար:

1918, հոկտեմբերին, Մուդրոսում փորվեց սուլթանական Թուրքիայի անփառունակ գերեզմանը:[46]

Այդ օրվանից Օսմանյան պետությունը վերածվեց մի դռնբաց երկիր՝ հաղթականների համար:

«Թշնամիները,- այդ առթիվ գրում է քեմալական պատմագիրը,- թուրք պետությանը հասցրին մահացու հարված: Նրանք ուզեցին նույն հարվածը հասցնել նաև թուրք ժողովրդին»:

Մուդրոսի հաշտության պայմանագրի ուժով, հաղթականները ազատ էին իրենց զրահապատ թաթը դնել թուրքական երկրի ամեն մի կետի վրա:

Վերջինների, համաձայնական պետությունների, հաճությամբ 1919, մայիսին, հույները գրավեցին Իզմիրը: Նույն տարին Անգլիան և Ֆրանսիան համաձայնության եկան բաժանելու թուրք երկիրը, որով առաջինը ստացավ առյուծի բաժինը՝ Միջագետքը, Պաղեստինը, Անդրհորդանանը և Մուսուլի քարյուղային աղբյուրները:

Ամիսներ անց՝ Անգլիայի կրունկը ծանրորեն կկոխեր նաև՛ Պոլսի և Չանաք Կալեի երեսը՝ իր դրոշի տակ առնելով Անատոլյան երկաթուղագծի ամբողջ երկարությունը:

Ի լրումը թուրք ժողովրդի այդ արդար դժբախտության՝ Լոնդոնը Սուլթանի հետ կկնքեր մի գաղտնի համաձայնություն,[47] որով Թուրքիան, ընդունելով Անգլիայի մանդատը, կպարտավորվեր խալիֆայության հոգևոր և բարոյական բովանդակ ուժերը լծել բրիտանական շահերի կառքին:

Վերջապես, Թուրքիային պիտի պարտադրվեր Սևրի դաշնագիրը:[48]

Դա այլևս Օսմանյան պետության թաղման ղողանջն էր:

Ֆրանսիան գրավել էր Սիրիան և հարևան Կիլիկիան:

Իտալիան՝ Ադալիան:

Հույները, հավելվածաբար՝ արևելյան Թրակիան, մինչև Չաթալջա:

Թուրքիա ասելով այլևս պետք էր հասկանալ Անատոլիայի անմշակ հյուսիսային կեսը՝ Սև ծովի ափով:

Այլևս աշխարհագրորեն ծվատված ու քաղաքականապես սատակ էր Թուրքիան:

Այսպե՛ս, պատմությունը այսպես կպատժեր իր անօրինակ չարագործություններով մեր երկրագնդի երեսը պղծող այն շնացեղ ազգին, որը մի ժամանակ իր գայլության, իսկ վերջին երկու դարերին, եվրոպական պետությունների անհամաձայնությունների շնորհիվ հաջողվել էր ամբողջ ժողովուրդներ և մշակույթներ բնաջնջել:

Կատարված էր պատմության արդարագույն դատաստանը, Թուրքիան այլևս և՛ կար, և՛ չկար:

Այդ օրհասական վիճակի մեջ, սակայն, նրան օգնության պիտի հասներ «թրքացեղ Լենինը»:

Սովետները, դեռ 1918ին, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով հրաժարվել էին այն բոլոր իրավունքներից, որ ձեռք էր բերել ցարական Ռուսիան նեղուցների և Փոքր Ասիայի նկատմամբ:

Այդ առթիվ «Թուրք հանրապետության պատմության»* ծանոթ հեղինակը՝ արտահայտելով իր ժողովրդի երախտագիտության խորին զգացումը՝ «Թուրքիայի սև օրերի միակ բարեկամ»ին, մի շեշտված հպարտանքով պնդում է թե *«Լենինը սերվել է ռուսացած թուրք ծնողներից»*: Լենինը թրքացե՛ղ - ահա լուծումը մինչև օրս անլուծելի համարված առեղծվածի:

Մարդկությունը չգիտեր այդ և կդժվարանար բացատրել թրքաբոլշևիկ հոգեկցության գաղտնիքը:

Մասնավորապես հայը կդժվարանար առեղծանել հանելուկը - թե ինչո՞ւ թուրքի չափ հայատյաց և հայասպան եղավ և՛ բոլշևիզմը. ինչո՞ւ երկուսն էլ իրենց հարվածը նախ մեր ժողովրդի ուղեղին՝ նրա մտավորականությանը իջեցրին. ինչո՞ւ բոլշևիզմից միայն և թուրքը շահեց. ինչո՞ւ: Այդ «ինչու»-ների պատասխանը այլևս տվել է թուրք պատմագիրը:

---

* «Թուրք հանրապետության պատմություն»ը, էջ 7, redige par la Societe pour l'Etude de l'Histoire Turque. Istanbul, 1936 (ծանոթ հեղ.):

Լենինը թրքացե՛ղ - այժմ լուծված է հանելուկը:

Այսպես է գործում ստալինիզմը:

Թուրքը ռուսին մի խառնածին պարգևեց, ռուսը թուրքին՝ մի քաղաքական բարերար, մի ազատարար:

Այսպե՛ս, պատմության մեջ այսպես են գործում irrationel[49] կոչված ուժերը:

Ճշմարտության դեմ բնավ չի մեղանչում թուրք պատմագրողը, երբ Լենինին համարում է թրքացեղ, նրա խոսքին դարերով ռուս մարմնի և հոգու վրա ծանրացած թաթարական լուծը վկա:

Բոլշևիզմը փրկեց Թուրքիան և ոչ թե բախտահաս Քեմալը:

Միթե՞ հասկանալի չէ, որ եթե Թուրքիան իրեն ապահով չզգար Ռուսաստանի կողմից, եթե կնքված չլիներ թրքա-սովետ զինակցությունը՝ Իզմիրի գրավման օրը, իր սակավաթիվ զինակիցներով Պոլսից Սամսոն փախչող «գորշ գայլ»ի ճիգերը պիտի մնային անպտուղ:

Այդ զինակցությունից ընդամենը մի տարի հետո քեմալականները, շնորհիվ բոլշևիկների զինական, ֆինանսական և մասնագիտական առատ օգնության, Սաքարիայում պարտության մատնեցին հույներին, որով երեկվա կիսասատակ Թուրքիան վերստացավ իր գերիշխանությունը ամբողջ Փոքր Ասիայի վրա, մեջը լինելով նաև մեր երկրամասերը՝ Կարսն ու Արդահանը:

Այսպե՛ս ոտքի ելավ թուրք անկյալը:

Այսպե՛ս, թուրք պատմաբանի իսկ վկայությամբ, *հայոց ողբերգությունը պայմանավորվեց Մոսկվայի կողմից Քեմալին ընծեռված կարմիր թևարկությամբ.*

Ita est:*

ԹՐՔԱ-ԲՈԼՇԵՎԻԶՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄ

Խորհրդային իշխանության, նրա թերթերի, բազմապիսի փողհարների և ջատագովների կողմից, թերևս, ազգայնական ոչ մի գործիչ այնքան կրքոտ հարձակումների և զրախոսության չի ենթարկվել, որքան տողերիս գրողը:

Մեկ ու կես տասնյակ տարի է անցել այն ողբերգական օրից, ինչ մենք թողեցինք Հայաստան երկիրը, բայց և այնպես, կարմիր իշխանությունը չի՛ մոռացել, չի՛ մոռանում, և դժվար թե մի օր իսպառ մոռանա ինձ:

Եվ հասկանալի է դա, ավելի քան հասկանալի: *Առաջին գնդակը՝ կարմիր բանակի դեմ, արձակեց իմ զինվորը. և բովանդակ*

---

* Այդպես է (ծանոթ. հեղ.)

Ռուսաստանում և Անդրկովկասում վերջինը լինելով, նա թողեց կռվի դաշտը:

Իմ ժողովրդական վաշտերն էին, որ ջարդեցին, զինաթափեցին և գերեցին XI Կարմիր բանակի գրեթե բոլոր զորամասերը, և, հակառակ հանրապետական Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի միջև կնքված պայմանագրին, որով Զանգեզուրը թողնված էր Ադրբեջանին, իմ ժողովրդական բանակը, զենքի ուժով, խորհրդային իշխանությանը պարտադրեց իր կամքը, *Սյունիքի կցումը Հայաստանին:*

Հայաստանի առաջին խորհրդայնացումից հետո, գրավելով և ամբողջացնելով հայկական լեռնաշխարհը՝ ես ստեղծեցի ինքնավար Սյունիքը,[50] որը պիտի հանդիսանար որպես հոգեբանական հրահրիչը Հայաստանի փետրվարյան համաժողովրդական ընդվզումի: Իսկ Երևանի երկրորդ անկումից հետո՝[51] դա ծառայեց որպես փրկության կամուրջ թուրք-բոլշևիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտավորականության համար:

Հայոց պատմության ամենապատասխանատու մեկ վայրկյանին, երբ թուրքն ու բոլշևիզմը կդավեին մեր ցեղի գոյության դեմ, դա, հերոսական Սյունիքը, որպես հեքիաթային տիտան, իր մի բազուկը պահեց իր լեռների վրա՝ թշնամու դեմ, իսկ մյուսը նախախնամաբար երկարեց Արաքսի վրա, որ Արարատյան դաշտից պոկված բազմահազար մտավոր և մարտական ընտրանին անվնաս ու անաղետ անցնի Պարսկաստան:

Այսպես, այն կորովի դիմադրությունը, որին Կարմիր բանակը չէր հանդիպել Ռուսաստանում, տեսավ մեր լեռնաշխարհում, ուր նա տասնյակ հազարներով սպանվածներ, գերիներ ու մեծաքանակ ռազմական ավար թողեց:

Մի ամբողջ տարի, մեր ժամանակներին գրեթե անծանոթ դյուցազնությամբ, Սյունիքը հեգնեց Մոսկվայի անդրկովկասյան ուժերը, նրան պատճառելով ծանրածանր կորուստներ, ջղայնություն և ամոթանք:

Ահա՛ թե ի՞նչն է պատճառը, որ մինչև օրս էլ խորհրդային վարչաձևի և հացի ամեն կարգի և երանգի բարեկամները ու գովիչները բանավոր ու գրավոր խոսքի թույն են փսխում իմ հասցեին:

Մենք, ես և խորհրդային իշխանությունը, հիմ, կես մոռացված թշնամիներ չենք:

Ես էի և շարունակում եմ մնալ լենինյան գաղափարաբանության անհաշտ թշնամին:

Մենք միայն զենքի թշնամիներ չէինք, չե՛նք: Նմանները շատ շուտ են մոռանում թշնամանքը, և երբեմն էլ գիտակցում:

Մենք թշնամիներ ենք նաև՝ քաղաքական դավանանքով, աշխարհայեցողությամբ:

Եթե այսօր դադար են առել զենքերը, զարնվում են, չափվում են գաղափարները:

Եվ, որովհետև բոլշևիկները պայքարում մարդկայնություն և բարոյական չեն ճանաչում, նրանց համար չկան իդեական հակառակորդներ, այլ՝ դասակարգային թշնամիներ միայն, նրանց թղթե գրոհները դեռ շարունակվում են և պիտի շարունակվեն:

Մեր փոխադարձ թշնամանքը ունի իր երրորդ սնուցիչը՝ թուրքը, որի հետ զինակցած Կարմիր բանակը երևաց մեր դեմ, ռազմաճակատներում, Հայաստանում:

Մեր ողբերգությունը պայմանավորվեց Լենինի «թրքացեղությամբ» - իմա՛ Բոլշևիզմի թրքաշնչությամբ, որ ասել է՝ նրա հայատյացությամբ:

«Խորհրդային Ռուսաստանը,- ժամանակին կշեփորեր «Զանգեզուրի Կոմունիստ» հայատառ թերթը,-*պետք է պաշտպանի և պաշտպանելու է Տաճկաստանի ազատագրական շարժումը: Դրա համար էլ Խորհրդային Ռուսաստանը պետք է ունենա մշտական և անմիջական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է, Նախիջևանի վրայով»*:*

Խորհրդային իշխանությունը, ի մասնավորի հայ մեծամասնականը, գիտի, զգում է, որ թուրք-բոլշևիկյան զինակցությամբ հայության և հայ հայրենիքին հասցված չարիքը հեշտությամբ չի՛ ներվի, չի՛ մոռացվի:

Մոսկվան և իր հայանուն գործակալները գիտեն. որ կենսաբանական բարոյականի տեր հայությունը չի կարող ներել նրանց, որոնք օգնության ձեռք երկարեցին թուրքին՝ իր պատմության ամենադժվարին մեկ վայրկյանին, և *հայոց նորագույն ողբերգության գնով իրականություն դարձրին թուրք-բոլշևիզմի հայադավ եղբայրակցությունը:*

Բաքվում, Երրորդ Ինտերնացիոնալի նախաձեռնությամբ, 1920, Սեպտեմբեր 1-8 գումարված Արևելյան ժողովուրդների համագումարը եկավ հաստատելու երեք բան՝

Ա. Որ Մոսկվայի մեջ կնքված թուրք-սովետ գաղտնի զինակցությունը ստորագրված էր վերոհիշյալ համագումարից առաջ.

Բ. Որ Մոսկվան վճռել էր Հայաստանը նվաճել Թուրքիայի զինակցությամբ:

Գ. Որ Մոսկվա՛ն թուրքերին քաշեց, բերեց Հայաստան:

---

* «Զանգեզուրի կոմունիստ», N 2, 1920, 20 Նոյեմբեր (ծանոթ հեղ.):

Մի քանի մեջբերումներ, առնված այդ համագումարի սղագրված արձանագրություններից, կհաստատեն խոսքերիս բացարձակ ճշմարտությունը.

Չիչովև. «Դուք գիտեք, ընկերնե՛ր, որ սովետական կառավարությունը օգնում է Քեմալին»:

Էնվեր փաշա. «Ընկերնե՛ր, ես սեղմում եմ այն բոլորի ձեռքը, որոնք մեզ հետ կաշխատեն մինչև սկսված կռվի վախճանը...

Մենք ընդունում ենք, թե Ադրբեջանը պատկանում է ադրբեջանցիներին»:*

Իբրահիմ Թալի. Անգորայի ներկայացուցիչը, որը համագումարը Հայաստանի դեմ գրգռելու և նախապաշարելու հաշվով ասում է. «Համաշխարհային իմպերիալիզմը իր ձեռքն երկարեց Թուրքիայի կենսական շնչերակին և միանգամայն ուժասպառեց նրան:

Արևմտյան կապիտալիստները վճռեցին թուրք գյուղացիության դեմ դարձնել իրենց օժանդակողներին, արևմուտքից՝ վենիզելիստներին,[52] իսկ արևելքից՝ հայ դաշնակներին:

Անատոլիան վճռել է պաշտպանել իր ճակատագիրն ու անկախությունը մինչև իր վերջին զավակի մահը, որով *Սովետ Ռուսիայի կողմից իրեն երկարած բարեկամական ձեռքը նա ընդունում է կատարյալ անկեղծությամբ»*:

Չիչովև. համագումարի վերջին նիստում. «Այստեղ հաճախ է լսվում Հայաստանի մասին: Գոյություն չունի մի և անկախ Հայաստան: Մի կողմից կա բանվորագյուղացիական Հայաստանը, որին մենք եղբայրական ձեռ ենք երկարում, մյուս կողմից՝ անհիշյալ, դահճական, դաշնակցական, բուրժուական Հայաստանը» (փոթորկային ծափահարություններ):

Յուսուֆ Քեմալ, թուրք-բոլշևիկ զինակցության ստորագրողը, այդ միևնույն օրերին, Բաքվից կհեռագրեր իր կառավարությանը, թե այլևս վճռված է Հայաստանը նվաճել պատերազմով, որի դեպքում նախահարձակ պիտի լինի Թուրքիան, Կարմիր բանակին թողնելով՝ Հայաստանը նեղել հյուսիսից:

Այդ մասին Մոսկվայից տրված հրահանգի մանրամասնությունները Քեմալը կհաղորդի Քյազիմ Կարաբեքիր փաշային:

Թուրք-սովետ զինակցությունը արագ կերպով իր բախտին թողնված Հայաստանի դեմ դարձնելու նպատակով, այդ օրերին Մոսկվայից Բաքու և Բաքվից Ղարաբաղ ու Նախիջևան կերթևեկեին մի

* Էնվերի խոսքը վերաբերում է Զանգեզուրին, որի մեծ մասն այդ ժամանակ գրավված էր Կարմիր բանակի կողմից:

շարք դավադիր զինվորա-քաղաքական թուրք գործակալներ, նախկին ջարդարարներ:

Վերջինները կապ կպահեին Ադրբեջանում կենտրոնացած Կարմիր բանակի, Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովի և Հայաստանի ճակատի վրա գործող թուրքական ուժերի զորահրամանատարության հետ:

Մոսկվան այդ ջարդարարների ձեռքով պիտի գրեր մեր հայրենիքի նոր ճակատագիրը՝ եղերական:

Լսենք սրանցից մի քանիսին.

Դոկտ. Նազիմ. «Մոսկվայի կառավարությանը դիմելով՝ օգնություն և զենք ուզեցինք»:

Քյուչուկ Թալյաթ. «Ես հանձնարարեցի Քյազիմ Կարաբեքիր փաշային, որ բոլշևիկների հետ շփման մեջ մտնի: Այդպես էլ եղավ»:

Նայիմ Զևաթ բեյ. «1920 Հուլիսին, Կարաբեքիր փաշային դիմելով, նրա հավանությունը ստացա:

Երբ Ղարաբաղ հասա՝ նամակ ստացա: Այդ նամակը ուղղված էր Զավիդ բեյին, որն այդ պահին Բայազետում էր գտնվում: Նամակը հանձնարարում էր շփման մեջ մտնել նահանջող բոլշևիկյան ուժերի հետ: Կացությունը Բայազետ հաղորդեցի:

Այդ հիման վրա Կարաբեքիր փաշայից հեռագիր ստացա, որով հրամայում՝ էր *«Նայիմ Զևաթ բեյ ինչ կուզի թող անի, բոլշևիկյան նահանջող բանակը՝* Նախիջևան թող բերի»*:

Կարաբեքիրի հրամանի վրա՝ Նուրի փաշան թուրք և թաթարներից բաղկացած իր ուժերը քաշում է Նախիջևան և այսպիսով կապվում թուրքական Բայազետի հետ:

Կարմիր բանակը վերստին շարժվում է Զանգեզուրի դեմ և, այսպիսով, Հայաստանը դրվում է երկու կրակների միջև:

Օրեր հետո՝ միևնույն Նայիմ բեյը հեռագրում է Կարաբեքիր փաշային. *«Զենք և ռազմամթերք առնելով, առաջացե՛ք»*:

Զևաթ բեյ. «Հետո շփման մեջ մտա բոլշևիկյան հրամանատարության հետ:

Կարաբեքիր փաշան՝ Խալիլ փաշային, Նարիման Նարիմանովին և բոլշևիկյան բանակի հրամանատարությանն ուղղված երեք նամակներում գրել էր:

Այդ նամակներով բոլշևիկների հետ գործակցության անհրաժեշտությունն էր ջատագովել, և Խալիլ փաշայի կողմից կատարված ծառայությունների համար նրան շնորհակալություն էր հայտնում:

* Զանգեզուրից (ծանոթ. հեղ.):

Դրանից զատ, թնդանոթի, զենքի և ռազմամթերքի փոխադրությունից հետո, օգտագործելու նպատակով, Ադրբեջանի միջով ճամբա բանալու անհրաժեշտությունը պարզող երեք նամակներ ստացա:

Ապահովեցի, որ Օգոստոսին թուրքական և բոլշևիկյան բանակները իրար միանան:

Հետո իմ ստացած հրահանգների համաձայն, Խալիլ փաշայի հետ աշխատեցի, որ *երկաթուղիով էլ ապահովվի երկու բանակների միացումը և Հայաստանը չկարվանա սրան էլ ընդդիմանալ*:
Այս նպատակով Մոսկվա գնացինք: Ենվեր փաշան արդեն այնտեղ էր գտնվում»:*

Ահա և XI Կարմիր բանակի զինվորահեղափոխական խորհրդի անդամ՝ Հեկկերի վկայությունը Լենին-Քեմալ զինակցության մասին.

«... Զանգեզուրում հիրավի տեղի է ունեցել մի ամոթալի դեպք, որի համար մենք մեզ չենք գովում: Խոսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Զանգեզուրով Քեմալի մոտ:

Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար: Գնդին կարգադրված է եղել անցնել Նախիջևան:

Ո՞վ կարող էր ենթադրել, որ տեղի կունենան դժբախտ դեպքեր կամ թյուրիմացություններ, որ թե ազգաբնակչությունը և այդ գունդը միմյանց դեմ զենք կբարձրացնեն, այն էլ Կարմիր բանակի անվան տակ: 1921, 15 փետրվար»:

Թուրք-սովետ հակահայ դավի մասին, վերջապես, վկայելու կանչենք նաև՝ հայ քաղաքական հոսանքներից մեկին.

«Քողը, - Զանգեզուրի և Ղարաբաղի ժողովրդին ուղղված իր կոչի մեջ ասում է հայ սոցյալ-դեմոկրատ բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտեն,- պատռվել է և մերկանդամ իրողությունը հրապարակ է նետվել:

Կեղծիքը բացվել է և ցինիկ խաբեբայությունը թաքցնել անկարելի է:

Մայիսյան խառնակությունների օրերին[53] հայ բոլշևիկները չէին հավատում և պրովակացիա էին համարում այն ուլտիմատում հեռագիրը, որ նույն խորհրդային դարձած Ադրբեջանն ուղղել էր Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը մաքրելու համար հայկական ուժերից. *այժմ ոչ միայն Ադրբեջանն է թուրքական և ռուսական մեծ ուժեր կենտրոնացրել Ղարաբաղի և Զանգեզուրի ուղղությամբ,* այլև հայ բոլշևիկ կոչված տականքները իրենց եռանդուն ծառայությունն են մատուցում օտար ուժերին:

---

* Այս հայտարարությունները տրված են Էնկիվրիի անկախության դատարանի առջև դատվող հակաքեմալականների կողմից, 1926-ին:

Առաջ հայ բոլշևիկները չէին ընդունում և աշխատում էին հերքել այդ փաստը, որ ռուսական բոլշևիզմը գիտակցել և դաշնակցել է տաճիկ-թաթարական պանիսլամիզմի հետ, արևելքում միացած գործելու համար:

Այժմ ոչ միայն չեն հերքում կամ ուրանում այդ փաստը, այլև Բաքվում բուն դրած հայ տականքները, իրենց «Կոմունիստ»-ի մեջ, օրն ի բուն ագիտացիա են մղում և ուժեր կազմակերպում Հայաստանի դեմ, որպես պետական անկախ միավորի, և ջերմ փափագ հայտնում *Հայաստանի վրայով ճանապարհ հարթել դեպի Անատոլիա և կամուրջ ձգել Ադրբեջանի և Տաճկաստանի միջև:*

Հայ դեմոկրատիայի բոլոր թշնամիները խմբվեցին մեկտեղ հայ պետականության մահացու հարված տալու համար:

Ռուսական բոլշևիզմի և թուրք-թաթարական պանիսլամիզմի մերձարևելյան նպատակները զուգադիպում և համերաշխում են իրար: Այդ դիվային ծրագրերի իրականացման զոհ է բերվում հայ երկիրը:

Այդ իմաստով, հայկական դատին ու ազատագրության հավասար թշնամիներն են և՛ բոլշևիզմը, և պանիսլամիզմը:

Բոլշևիզմը, Եվրոպական դեմոկրատիայից կատարելապես նախատված ու արհամարհված, հուսախաբ՝ փարվել է արյունառուշտ պանիսլամիզմին և նրանից է օգնություն աղերսում:

Ապստամբ պանիսլամիզմը՝ մահվան դատապարտված միջազգային հաղթանակով հզորների կողմից, գալարվելով իր հոգևարքի ժամերին, հույսը դրել է ռուսական բոլշևիզմի վրա:

Երկուսն էլ պատմության չար անեծքի դատավճռին են ենթարկված:

Ահա՛ սև դավը, ահա՛ դիվային զինակցությունը, որի գործակալների կողմից Անդրկովկասում թափված հակահայ աշխատանքների շնորհիվ, Բաքվում կենտրոնացած XI Կարմիր բանակը, մի օր, պիտի շարժվեր Զանգեզուրի դեմ, թուրքական ուժերի հետ՝ հարավից ու հյուսիսից ռազմագիտական աքցանի մեջ առնելու Հայաստանը:

Ահա՛ հայադավ զինակցությունը՝ թուրք-բոլշևիկ վկայության լույսի տակ:

Այլ վավերագրերի և վկայությունների կարիք կա՞: Չեմ կարծում:

Մեր դավադրված հայրենիքի համար՝ ստեղծված այդ ծանրածանր պայմանների մեջ թույլատրելի՞ է հարցնել, թե՞ Սյունիքը պիտի ծառանա՞ր Կարմիր բանակի դեմ, թե ոչ:

- Այո՛, դա վճռաբար պիտի կտրեր քեմալական ուժերին օգնության փութացող Կարմիր զորքերի ճամբան, եթե, հաշվի առնելով ուժերի փոխհարաբերությունը, անգա՛մ համոզվեր, թե գերազանցապես անհավասար այդ կռվում իր լեռնոտ բույնը ամբողջապես կվերածվի

Լեոնիդասյան մի կիրճի,[54] և որպես նվիրական կտակ ու հիշատակ, նա դարերին իր ածյունը կթողնի:

Նա պիտի կռվեր և կռվեց դյուցազնաբա՛ր, որովհետև չէր կարող տկարանալ, երբ իր հայրենիքն էր դավադրված:

Նա կռվեց, որովհետև թուրքը, Երրորդ Միջազգայնականի սադրանքներով, մահվամբ կսպառնար Հայաստանին և նրա անկախությանը:

Եվ, ի՞նչ խոսք, որ նման պայմաններում մի սյունեցի, մի նոր Մելիք Ֆրանգյուլ[55] կարող էր տկարանալ, վաճառվել, դավաճանել: Սյունիքը՝ երբե՛ք:

Նա միշտ էլ եղել է հավատարիմ իր ցեղին, հայոց պատմությունը վկա:

Մի վսեմ փառասիրությամբ՝ նա պատնեշի վրա մնաց և ա՛յն օրերին, երբ իր ճակատագրի ղեկավարությունը հանձնել էր ինձ:

Փա՛ռք իրեն:

III

«Ճճիք, որոնք չունեն զորություն, ունեն խայթոց»:

Ուրացողներ կան, որոնց ժամանակին դատել է Եղիշեն՝ նրանց ճակատին խարանելով՝ «Հաճախ վարդապետներ ու վարդապետություններ փոխող»:

Արդար լինելու համար, պետք է ասել, որ նմանները չար չեն, բայց նաև արդարակորով չեն:

Սրանք պատկանում են այն հոգեբանական տիպին, որն իր տկարության բերումով դառնում է անպայքարունակ և հեշտությամբ հարմարվում քաղաքական վայրկյանին ու միջավայրին:

Նմանը միշտ էլ օրվա ամեն կարգի հաղթականի և իշխանավորի հետ է:

Նա չի՛ ծախվում. չի՛ գնվում:

Այդ իսկ պատճառով մեծ չէ իր սակարանական արժեքը:

Սա պատկանում է անարծաթ ու ակամա ուրացողների ստորոգության:

Սրա ուրացումը սահմանափակվում է նրանով միայն, որ դառնում է գաղափարի զենքընկեց, դասալիք, որով որոշ բարոյալքում է առաջացնում իր նախկին գաղափարակիցների շարքերում:

Սակավ չի նման քաղաքական ուրացողների թիվը մեր կյանքում:

Ուրացողներ էլ կան, որոնց անկումը տեղի է ունենում «երեսուն արծաթով», որոնք, սակայն, ստանալով իրենց ուրացումի գինը՝ քաշվում են մթության մեջ և լռության կնիքը դնում իրենց շուրթերին:

Իբրև կրավորական տիպի ուրացողներ՝ սրանք չեն փորձում արդարացնել իրենց անկումը:

Գոյություն ունի երրորդ կարգի ուրացողը, որն իր չարագործություններից հետո դառնում է ավելի հանդուգն իր ընկածության մեջ:

Սա չի բավականանում իրեն արված «արծաթ»ով, և աշխատում է ամեն կերպ շահեցնել այն:

Առ այդ, նա շարունակում է մնալ հրապարակում, հաճախ պայքարի առաջին գծի վրա, և աղմկում իր ուրացումն արդարացնելու համար:

Սրա անկումը պետք է բացատրել ոչ թե իր մտավոր, այլ՝ բարոյական կարճատեսությամբ:

Սա՝ գինակցելով իր ուրացումը գնող արտաքին թշնամուն, պայքարում է նրա դատի, նրա հաղթանակի համար:

Այդ վերջինը ակտիվ տիպի ուրացող է, որով՝ ավելի՛ զզվելի և ավելի՛ վտանգավոր:

Ուրացողների այդ կարգից է Գ.Տեր Մինասյան[56] կոչվածը, որն իր ուրացումից հետո սկսել է ընդունայն փորձեր կատարել՝ իր որդեգրած կարմիր դավանանքի քղամիդով իր հոգևոր նեխությունը ծածկելու համար:

Այդ ուրացողի ելույթը եկավ ինձ վերջնականորեն համոզելու, թե *բոլշևիզմին հարող ամեն դժբախտ էակ դառնում է ճշմարտության ու բարոյականի թշնամի*, հացկատա՛կ ու բանսարկո՛ւ, հոգով կործանված:

Խոսքս այն հատ ու կենտ իդեալիստների մասին չէ, որոնց համար համայնավարությունը մի «հոյակապ զառացանք» է, այլ նրանց՝ որոնց համար բոլշևիզմը ամեն բանից առաջ մարդ արարածի մեջ նիրհող անասնականը բավարարելու խնդիր է, նախ հացի խնդիր:

Բոլշևիզմի հայ գործակալներից ամենածերը, այդ իսկ պատճառով ամենազզվելին, Տեր Մինասյանն այդ գիտեր, երբ դեռ գտնվում էր «նամարդ թշնամուց ոտնակոխ ու պղծված»* Սյունիքում, ուր դեռ իմ ձայնն էր արձագանքում հայրենի լեռների և ժողովրդի *հերոսական* հոգու մեջ:

Նա գիտեր և այն, որ *արդարացնել խորհրդային իշխանությունը կնշանակի արդարացնել այն բոլոր մարդատիպ հրեշներին, որոնք եկել, դավաճանել և ուրացումի ճամբով անցել են ապրելու հայոց պատմության խավարի մեջ.*

---

* Ուրացողի բառերն են (ծանոթ. հեղ.):

Նա գիտեր, և մեզ հետ արդար կատաղության կայծակներ էր թափում Լենինի և նրա հայացեղ ճտերի գլխին: Նա գիտեր, որ *ճանաչել խորհրդային իշխանությունը՝ կնշանակի կանխավ արդարացնել օտար իշխանությունների այն բոլոր տեսակի հայանուն գործակալներին, որոնք վաղը և հավետ կարող են հայտնվել մեր ցեղի կյանքում:*

Ուրացողը գիտեր, որ *տարբեր բան է այս կամ այն իշխանությունը ճանաչելը, տարբեր՝ հանդուրժելը, արդարացնելը:*

Մի դաժան հարկադրանքով մեր ժողովուրդը ճանաչեց և հանդուրժում է կարմիր իշխանությունը, բայց չարդարացրեց և պիտի չարդարացնի այն:

Իսկ տերմինասյանները, զուրկ իրենց ծնող ցեղի առաքինություններից, ոչ թե միայն ճանաչեցին՝ ժամանակին իրենց կողմից իսկ բյուրիցս անիծված իշխանությունը, այլև արդարացրին նրան:

Ավելի՛ն. նրանք, օտար իշխանության աչքին քաղցրանալու շնական հաշվով, միաժամանակ հայհոյեցին ու դատապարտեցին մեր երեկը, մեր հայրենին, մեր նվիրականը:

Ուրացումի անբարոյության ուժով՝ այդ հրեշները մղվեցին շփոթելու քաղաքականությունը՝ վարդապետության, ճանաչումն՝ արդարացումի հետ:

Ցեղային արժանապատվության ու բարոյական սկզբունքների պակասը նմաններին դարձրեց ոչ թե միայն օտարին հոտընկայս ծառայելու տրամադիր, այլև՝ իր հարազատ ժողովրդի պատմությունը կեղծող՝ ճշմարտության թշնամի:

Հացը, անսուրբ հացը սրանց մոռացնել է տվել, և՝ գիտեն, և՝ չգիտեն սրանք, որ *չկա՛ ավելի մեծ պղծություն, քան հարազատ ժողովրդի պատմության չարամիտ աղավաղումը:*

Կեղծել պատմությունը, ասել է՝ եղծանել պատմաստեղծ ժողովրդի կենսաբանական բարոյականը, հարվածել նրա արքուն բնազդը, վտանգել նրա հոգևոր առողջությունը, խեղել հոգին, ծռել նրա զարգացման ճամբան, անիրավել նրա մեծ մեռելներին, որոնք ընկան, որ հայրենիքը սրբանա ու ապրի, շփոթի մատնել պատմության ենթակայի ներկան և խաբել եկող սերունդներին: Միանշանակ, դա ասել է՝ *բաց աչքով թշնամանալ հարազատ հայրենիքին*, դա ասել է՝ *ծառայել իր ցեղի արտաքին թշնամիներին:*

Այդ կարգի ուրացողներից է խորհրդային իշխանության գործակալ Գ.Տեր Մինասյանը, որի հակազգայնական հաչոցին, որպես պատասխան, գրվում են այս տողերը:

* * *

Ընթերցո՛ղ, ես տեսա հոգով ազատը ստրկության մեջ, և սիրեցի մարդը:

Ես տեսա ստրուկին ազատության մեջ և գարշեցի մարդուց:

Ստրո՛ւկը, ով հավասար չափով չի ատել և՝ սրան, նա էապես չի պայքարել բռնության դեմ:

Պատմական մոմենտներ կան, օրինակ՝ մեր ժամանակաշրջանը, երբ բռնավորից ավելի ստրո՛ւկն է զզվելի:

Յոթնիցս զզվելի է հոգևոր ստրուկը , նա՝ որն ազատության մեջ իսկ ապրում է, խորհում, գործում ստրկորեն. նա՝ որի կրծքին թեև չի ճնշում բռնավորի թաթը,-բայց և այնպես, նա միշտ էլ իրեն զգում է ծնկի եկած «զորավորի» առջև. նա՝ որը ծանրապես կոխող գարշապար է փնտրում՝ լիզելու, սուտ աստվածություններ՝ փառաբանելու, կեղծ մեծություններ՝ պսակադրելու:

Ինքնաստրկացած մարդկային մի անասուն, որն այդ բոլորը կատարում է մի շնավայել քծնանքով՝ ողորմություն ստանալու համար: Եթե հերոսներ ունեցել են բոլո՛ր դարերը ապա անհոգի գործիքներից զուրկ չեն եղել բոլոր տեսակի իշխանությունները, հացկատակներից՝ բոլո՛ր արքունիքները:

«Ամբոխին ու թագավորին քծնողները գործադրում են բոլոր միջոցները,- խուժանավարը գինետան կուրտիզան է, իսկ կուրտիզանը՝ պալատական խուժանավար,- ասել է Գյուչարդինին:

Քաղաքական նման մի կուրտիզանի մի քանի ցցուն գծերով հավերժացրած է ռուս հռչակավոր քննադատ Դոբրոլյուբովը: Ավստրիական բանաստեղծ Յակովն է այդ պերճաղիճը, որ Գարիբալդուն կոչել էր «դժոխքի ծնունդ», «մարդագայլերի ընկեր», և այլն, իսկ օրեր հետո, նրան ձոնեց խանդավառ երգեր, երբ Գարիբալդու[57] թշնամին՝ թագավորը փախել էր Նեապոլից:

- «Ո՛վ զորավոր պաշտպանդ ազգերի ազատության, որին ժողովուրդները պաշտում են արդարորեն»:

Սակայն, մի քանի օր անց, երբ Ֆրանսիսկին հաջողվում է վերադառնալ Նեապոլ՝ Յակովը խղճի ամենայն անդորրությամբ վերստին հնչեցնում է իր քնարի հակագարիբալդյան լարը.

- «Նորի՛ց, թագավորի հետ նորի՛ց խաղաղությունն ու կարգ, կանոնը տիրեցին»:

Մի ուրիշը, ժամանակին, այսպե՛ս է գրել Սյունիքի և իր ղեկավարի մասին.

- «Վերջապես հասանք Տաթևի պատմական վանքը, ուր եկավ նաև սպարապետ Նժդեհը:

Նժդեհի անունը, իրոք, պաշտամունքի առարկա է դարձել սյունեցիների համար:

Մի հեքիաթային հերոս է նա, որ, իր կրակ ձիու վրա հևած, ամեն տեղ է:

Նրա խոսքը պատգամ է, նրա ներկայությունը՝ հույս ու ոգևորություն:

Նա ինքն էլ հավատացած է կարծես, որ ինքն անխոցելի է:

«Մահից չվախեցողը ամենից շատ կապրի»,- ասում էր նա:

Սյունյաց ժողովուրդը «Խուստուպի արծիվ» է անվանում նրան, ի հիշատակ այն օրերի, երբ Նժդեհը իր փոքրաթիվ խմբակով քաշվել էր Խուստուպ լեռը, ուր Պրոմեթևսի նման պահեց ազատության կայծը, մինչև որ մի օր էլ իջավ այդ բարձունքից և հրդեհեց ողջ Սյունիքը ազատության և անկախության բոցով:

Ժողովուրդի այդ պաշտամունքը իր հերոսի մեջ կերտել է մի տեսակ բեկական կամք, որին հպատակվել շատ է սիրում սյունեցին:

Առանց Նժդեհի կամքին տերև չի շարժվի Սյունյաց մեջ, և ժողովուրդը գոհ է, որ այդպես է:

Սյունյաց ինքնավարությունը Նժդեհի ծնունդն է»:*

Տարիներ հետո, այս տողերի հեղինակը, հայ գաղթաշխարհում, իր հացն ապահովելու համար, պիտի միանար նրանց, որոնք շահավետ արհեստ են դարձրել իմ անձի դեմ հաչելը:

Ահա՛ և Գ.Տեր Մինասյանը, որը տարիներ առաջ այսպես կողջուներ կարմիր լծից ազատագրված Ղափան-Գենվազը և իր առաջնորդին.

«Ողջո՛ւյն ազատագրված Ղափան-Գենվազին:**

Ողջո՛ւյն քեզ Ղափան, Դավիթ բեկի, Թորոս իշխանների օրրան: Ողջո՛ւյն քո սեգ ու հպարտ լեռներին, որոնց ամեն մի քարը ներկված է հարազատներիդ արյունով:

Ողջո՛ւյն Խուստուպի լեռներն ապավինած, որդեկորույս ծնողներին՝ արնոտ աչքերը Բարգուշատին, Աջանան, Ուղուրչային սևեռած Ղափանի սրտաբեկ քաջերին:

Ողջո՛ւյն հոշոտված, հյուծված երկրագործ ու խաշնարած ժողովրդին, որ երկու տարուց ի վեր, հայրենիքի փրկությանն ի սպաս դրեց իր սիրասուն զավակին ու քրտնաթոր աշխատանքի վաստակը:

Ողջո՛ւյն, բյուր ողջույն քեզ, Ղափան-Գենվազ-Գողթանի յոթն անգամ սիրված հրամանատար հերոս Նժդեհ, բեղմնավոր էին քո ցանած սերմերը և նրանք եղան նրանց տված պտուղները:

Դու ե՛ս և կմնաս Ղափան-Գենվազի պատմության մեջ «երկրորդ Դավիթ բեկ» «Աժդահա փաշա» և «ամեն կռվում հաղթող փադիշահ»,

---

* «Հայաստան», թիվ 185, Ֆիլիպե. Հայաստանի «Նահանջ Բյուրոց»-ը ինքնավար Սյունիքի ընդմեջից. Թռչնիկ, 1921, 10 Հունիս, Թավրիզ:

** «Ազգ», թիվ 43, 1920, Նոյ. 15, Թավրիզ:

տիտղոսներ, որ տվել՝ են քեզ պաշտելու չափ սիրող զինվորությունն ու ժողովուրդը»...:

Այս մարդն էլ տարիներ հետո հուդայաբար իր տերը պիտի ուրանա:

Այս են եղել բոլոր ժամանակների Յակովները, Թռչնիկներն ու Գեղեոնները:

Անցեղ են նրանք, և հատուկ բոլոր ժամանակներին ու միջավայրերին:

Երեկ Գարիբալդիի հետ նրան փառաբանող ու դափնեպսակող, երբ նա հաղթական էր: Այսօր Գարիբալդիի դեմ թշնամացող, երբ նա լքեց Նեապոլը:

Այսպես են եղել հոգևոր ստրուկներն ու պորտաբույծները բոլո՛ր դարերում և բոլոր ցեղերի մեջ:

Եվ մարդկային զզվանքը Դիոգենեսի, Թեսավրոսի և այլոց շրթունքներով մի շարք անարգական անուններ է տվել նրանց՝ «մկունս պալատականս», «շունս արքունիս», «որսողս պարգևաց», «աղուէսս սովեալս» և այլն:

Հասկանալի է, որ դարեր տևող օտար լծերի ազդեցությունների պատճառով այդ անարգ մարդատիպերի թիվը մեր ժողովրդի մեջ ավելի մեծ, որակն ավելի՛ բարձր պիտի լիներ:

* * *

«Աղուէսս սովեալս» - ահա՛ ներքին մարդն այն դժբախտ ուրացողի, որ Հայաստանի խորհրդայնացման ամոթափառ 15-ամյակի առթիվ, «Հուշեր անցյալից» խորագրությամբ, հակադաշնակցական «Ապագայ»ի մեջ լույս է ընծայել մի երկար հոդվածաշարք, «հայ մարդ» կեղծանունով:

Գեղեոն Տեր Մինասյան կոչված դավանափոխն է դա, որը ուրացութամբ իր անձի մեջ *մարդն ու հայը* բարոյապես սպանելուց հետո, հոգեբանական ծպտումի օրենքով իրեն «հայ մարդ» անունն է տվել: Նա իր հուշապատումը սկսում է հետևյալ առաջադրությամբ. «Կուզեի մեր ընթերցող հասարակությանը ներկայացնել Զանգեզուրի կռիվների թռուցիկ, բայց ճշգրիտ պատմությունը 1918-19-20 և 21 թվերի ընթացքում, այլև մասնավորապես Նժդեհի անձնավորությունը ու նրա կատարած դերը 1921ին»:

Ընթերցո՛ղ, մեկ էլ կարդանք ուրացողի վերջին խոսքերը. «...նրա կատարած դերը 1921 թվին»:

Ինչպես տեսնում էք, հոդվածագիրն իր տեգ ու նիզակները ուղղել է ոչ թե 1919-20ին գործող Նժդեհի դեմ, երբ դեռ հակաբոլշևիկյան կռիվներ չկային Զանգեզուրում, այլ նրա 1921ի գործունեության դեմ, երբ Սյունիքը չափվում էր Կարմիր բանակի հետ:

Այդ մարդը, որ Զանգեզուրում ծանոթ էր «աղվես Գեդեոն» անունով, և որի խորամանկությունը 1918ին, մի արդար մտրակով պատժել էր Անդրանիկը՝ ինչպես ամեն հասարակ հավատուրաց, 1925ին բռնեց քաղաքական ուրացումի ճամբան: Նա հրապարակային մի հայտարարությամբ բոլշևիկյան «Գաղափար» թերթի մեջ իրեն հռչակեց բոլշևիկների բարեկամ, թշնամի՝ Դաշնակցության:

Եվ անմիջապես, որպես «երեսուն արծաթ», Երևանից նրան տրվեց խորհրդային իշխանության համար քարյուղ գնելու այնքա՛ն շահաշատ պաշտոնը, որն ամենայն վարպետությամբ ցայսօր վարում է Աստարայում:

Այդ օրից ահա Գեդեոնը դողի մեջ է իր ոսկեբեր պաշտոնի համար:

Եվ պատճառ ունի դողալու, որովհետև քաջ գիտի, թե իժի չափ հիշաչար բոլշևիկները դեռ չեն մոռացել, որ ինքը ուղիղ երկու տարի «Նժդեհի ձիու ասպանդակներն է բռնել», ինչպես «Յուսաբեր»ի մեջ ասել է Սյունեցին:

Այդ օրից նա դեգերում է հավատացնել իր նոր տերերին, թե ինքը դեմ է եղել Զանգեզուրի հակաբոլշևիկյան կռիվներին, որ ասել է և՛ Նժդեհին:

Սրանո՛ւմ պետք է փնտրել՝ Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի առթիվ, Տեր Մինասյանի թույլ տված քաղաքական շնության իմաստը:

Տեսե՛ք, թե ի՞նչ է կատարվում:

Երևանում բոլշևիկները տոնում են Հայաստանի անկման տարեդարձը: Ա՛յդ օրը թուրք-բոլշևիզմը գերեզմանեց Հայաստանի անկախությունը՝ Թուրքիային կցելով մեր հողերի մեծագույն մասը:

Թուրք-բոլշևիկ միացյալ հաղթանակի օրն է, և Երևանում տոնական աղմուկ կա:

Պե՛տք է հավատարմության նոր տուրք տալ Կարմիր իշխանության:

Պե՛տք է հայհոյել, սևացնել այդ իշխանության թշնամիներին. և ահա՛ Գեդեոն վարժապետն էլ շտապում է իր ձայնը միացնել կարմիր օրվա առթիվ հարուցված մեծ աղմուկին:

Իժի թույնը շուրթերին՝ նա գրում է, գրում է, որովհետև իրեն ապսպրված է գրել, որովհետև չի կարող չգրել, որովհետև տոն օրերին իր խոսքը ավելի լավ կլսվի, ավելի հեշտ կհասկացվի, և ամենից գլխավորը՝ լա՛վ կվարձատրվի:

Գրում է բոլշևիկյան ծեր ծաղրածուն, գրում է ոչ թե պատմության, այլ՝ իր կարմիր տերերից ստացած հացի համար:

Սակայն, չարաչար սխալվում է Տեր Մինասյանը, կարծելով թե պատմությունը զբաղվում է ամեն կարգի աղվեսներով ու աղվեսություններով:

Ճիշտ է, դա հավերժացնում է նաև՝ «առյուծ խեղդող աղվեսներ»ին (որոնց մեծ փառասիրությունը, հանուն Հայաստանի թագի, հաճախ իրենց մղել է զինակցել անգամ արտաքին թշնամիներին), բայց ոչ և հավագող աղվեսներին, որպիսին եղավ Սյունյաց նորագույն հերոսականի դեմ, 15 տարի հետո, այն էլ արտասահմանից հաչող «հայ մարդուկը»:

Աշխարհը գիտի, *որ երբ մարդկային անկումը տեղի է ունենում հացի համար, ենթական մղվում է ամեն տեսակի հրեշության:*

Հոգեբանական ճշմարտություն է դա:

Ճշմարիտ է և այն, որ *ծերացած չարությունը ավելի հացախնդիր և շնական է լինում:*

Երկրի, Գեդեո՛ն, երկրի և երկնքի միջև կարելի է բաժանել մարդկային սիրտը, բայց ոչ և՛ հայրենիքի ու բոլշևիզմի:

Դժբա՛խտ մարդ, դու այդ վերջինը փորձեցիր, փորձեցիր ճշմարտության ընկույզի վրա փտած ատամներդ փշրել:

Չգիտեի՞ր, հիմա՛ր, որ քո ստության ետևից ճշմարտությունը կհասներ կրնկակոխ փաստաթղթերի ուժով զինված:

Հրե՛շ, քեզ համար միևնո՞ւյն է, թե որի՞ն կկցվեր Սյունյաց աշխարհը, Հայաստանի՞ն, թե՞ թաթար Ադրբեջանին:

Գոհ չե՞ս, որ իմ վարած կռիվների շնորհիվ միայն Սյունիքն այսօր կազմում է մայր երկրի անբաժան մասը:

Չե՞ս ընդունում, որ հայ բոլշևիկն իսկ կարող է գարշել ապսպրանքով իմ դեմ թխածդ տողերից:

Չէ՞ որ Լեռնահայաստանում ապրող ամեն մարդ գիտի, թե որքան ժամանակ որ ես Կարմիր բանակի դեմ արյունալի կռիվներ եմ վարել, այնքան ժամանակ դու ծառայաբար իմ ձիու սանձերն ես բռնել, ինձ համար հաղթական կամարներ բարձրացրել, իմ հաղթանակները երգել:

Եվ այսօր, երբ իմ արյունով պաշտպանած դատի համար անգամ Խանջյաններ են նահատակվում, երբ ազգայնական հայը, մասնավորապես եղերաբախտ Խանջյանի[58] մահից հետո, պիտի կարողանար պատկերել Սյունիքի կատարած գործի մեծությունը - դու քեզ ազատ ես համարել բանսարկելու իմ մասին:

- «Նա կապել էր կարմիր գոտի և ձգտում էր նույն ժողովրդի արյան գնով թագ դնել գլխին»:

Թա՞գ - դժվար թե թագի կարիք զգար նա, որի խոսքը, քո՛ իսկ վկայությամբ, օրենք էր ժողովրդի համար. նա, որն իր գլուխն ամենայն վստահությամբ կարող էր դնել ամեն մի սյունեցու ծնկին:

Թագ ու ձևական իշխանություն փնտրում են այն ոչնչությունները միայն, որոնք անթագ իշխել, թագավորել չգիտեն:

Նա, որ Սյունիք էր մտել առանց բանակի, առանց նյութական միջոցների, անգամ առանց հացի և ռազմամթերքի, և զորահավաքի ենթարկելով ցեղի ոգին՝ հաջողվել էր թրքությունից մաքրել Գեղվաձորի, Բարգուշատի և Հաքյարիի մոտ երկու հարյուր գյուղերը, դժվար թե թագի կարիք զգար:

Իմ թագը՝ կրոնապես ինձ կապված զինվորն էր, որ իմ ձայնի մեջ իր ցեղի ձայնը լսեց և այնքան շուտ յուրացրեց կռվում մահվան հետ կատակելու աստվածային արվեստը:

Իմ թագը՝ դա Սյունյաց ժողովրդի դեպի իր ղեկավարը ունեցած հավատն էր:

«Իմ թագը գլխիս չէ, այլ՝ սրտիս մեջ»,- պիտի ասեր Գյոթեն: Հայաստանում, ուրացող, թեկուզ այսօր, դավանածդ լենինականության օրով, կհանդգնեի՞ր խոսելու իմ անձի դեմ:

Եվ, բարոյապես ազա՞տ ես խոսելու:

Որքա՞ն արդար կլիներ, ապերախտ, եթե ձեր գյուղի ճամբաների վրա փռված անասնաղբի մեջ զեռացող միջատը մեկից գլուխը վեր բարձրացներ և հայհոյություններ ուղղեր արևին:

Մոռացա՞ր, ուրացող, որ դու էլ փրկված ես իմ սրի շնորհիվ, մոռացա՞ր, որ «Նահանջ Բյուրոց»ի օրերին,[59] հազարների հետ, դու էլ անարժեք կաշիդ փրկելու համար, կոխեցիր մեջքիս վրա - որպես փրկության կամուրջի - և անցար Պարսկաստան:

Երբ փրկվածն ապերախտում է իր փրկչին, մատնում է, որ ինքն արժանի չէր փրկության, արժանի չի ապրելու:

Գեղեո՛ն, ես արգահատում եմ արարքիդ վրա:

Եվ միաժամանակ՝ մտածում. իսկ եթե՝ անձիս դեմ հաչելով մարդիկ իրենց ծերությունն են ապահովում: Միթե՞ յուրատեսակ բարեգործություն չէ կարելիություն տալ մարդկանց, որ հաց ունենան, թեկուզ իրենց երեկվա տերը մատնելով, ուրանալով:

* * *

Ըստ իր առաջադրության՝ հոդվածագիրը պիտի խոսեր Զանգեզուրի և Նժդեհի մասին, սակայն, գիտակցելով, որ դրանով չի բավարարվի դժվարահաճ Երևանը, նա անվանարկության իր քարերը վատաբար դարձնում է նաև հանրապետական Հայաստանի, նրա անկախության, կառավարության, ապա «Փրկության կոմիտե»-ի, Վրացյանի «փախցրած վալյուտա»-ի, Ռուբեն Տեր Մինասյանի «Ճատրակ»ի և այդ կարգի հազար ու մեկ բաների դեմ:

Նա այսպես է բանսարկում.

- «Հայկական հանրապետությունը, որ ծնունդ առավ թուրք դիվանագիտության հարկադրանքի տակ և ընդամենը երկուսուկես տարվա կյանք է ունեցել (1918 Մայիս 28ից մինչև 1920 Նոյեմբեր 28ը) շարունակ կռիվների մեջ է եղել արտաքին ճակատներում, Տաճկաստանի, Վրաստանի, Ադրբեջանի հետ, իսկ ներսում՝ Զոդում, Զանգիբասարում, Բոյուք-Վեդիում, Շարուր-Նախիջևանում և Զանգեզուրում:

Այս բոլոր կռիվների մեջ նա պարտվել է և ապա գաղթի ճամբան է բռնել՝ տանելով իր հետ մի քանի հազար գյուղացիներ և զինվորներ»: Տեսա՞ք, թե ինչպես է գրվում-կեղծվում մեր երեկվա պատմությունը:

Մելիք Ֆրանգյուլի կաթնեղբայրն է հուշագրողը:

Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Ամեն ուրացող - ազգայնորեն անբարոյացած ամեն էակ - իր ցեղը հռչակում է կենսաբանորեն անբարոյական:

Ամեն դավաճանող իր ժողովուրդին համարում է անարժան.

Նա այդ անում է իր անկումը արդարացնելու բնազդական հաշվով:

Նա այն հրեշն է, որ բռնված անառաքինության մեջ, ասում է դատավորներին. «Մեղքն իմս չէ, մայրս էլ առաքինի չէր»:

Ճշմարտության զգացումից զուրկ՝ ծեր ուրացողը օտարի չափ իսկ արդար չէ դեպի իր ժողովրդի անունն ու պատմությունը:

Նա էլ, հայոց պատմության կողմից անիծված մեր դասական ուրացողների նման, նա՝ էլ միայն «պարտություն ու գաղթ» է տեսնում մեր ցեղի կյանքում, և լրբորեն հեգնում «միայն երկուսուկես տարվա կյանք» ունեցող մեր անկախությունը:

Ուրացողին հատուկ չարությամբ՝ նա ծգնում է արժեքազրկել այն ամենը, որ վերջին տարիները դավադրված հայությունը ապրեց որպես ազատագրական պայքար, որպես հերոսություն և ողբերգություն:

Նա գիտի, որ փառահեղ հաղթանակներ ունեցել ենք և մենք. նա, հենց ինքը, հաճախ մեր զենքի հաջողության գնով, իմ զինվորների ոտներն է համբուրել, և ներբողներից ամենաշքեղները հյուսել մեզ համար:

Նա գիտի, նա չի մոռացել այդ բոլորը: Քիչ հետո կկարդաք իր տողերն այդ մասին և կտեսնեք մեզ համար հյուսած իր դափնիները, մեզ տված իր փառակիր անունները:

Նա գիտի, որ անմարդկային պայմանների մեջ, հուսահատ հերոսամարտերով անկախ հայրենիք ստեղծող ժողովուրդը արժանի է հավիտենական փառաբանանքի ու խունկի, բայց և այնպես ուրացողաբար նա թշվառաբանում է, թե հայը իր անկախությամբ պարտական է թուրք դիվանագիտությանը:

Նա վկա եղավ Լեռնահայաստանի՝ թուրք բոլշևիկ հորդաների դեմ վճռաբար ծառանալու ինքնաշեմ հերոսական շարժումներին:

Հավատափոխը գիտի այդ բոլորը, գիտի ճշմարտությունը, բայց խոստովանելու քաջություն չունի, որովհետև այսօր հաց տվողը խորհրդային իշխանությունն է, ոչ թե ճշմարտությունը կամ տարագիր Նժդեհը:

* * *

Վերջապես, տեսնենք, թե ինչ է բարբաջում ուրացողը Նժդեհի մասին:

- *Ադրբեջանյան հորդաների,- ասում է նա,- և Ղափանի թիկունքում գտնվող Գեղվածոր-Նախիջևանի թուրքերի հաճախակի հարձակումներն ու ոտնձգություններն էին պատճառ, որ Ղափանի ժողովուրդը և նրա ղեկավար մարմինները ճառեցին և երգեցին Նժդեհի գովքը և սինեմայի արագությամբ բարձրացրին նրան գնդապետի, սպարապետի և գեներալի աստիճաններին»*:*

Մեսրոպյան տառերին ծանոթ ամեն մարդ Տեր Մինասյանի այդ տողերից վճռապես կեզրակացնի, որ՝

ա) գոյություն ուներ Սյունիքին սպառնացող մի մեծ վտանգ:

բ) Նժդեհին հաջողվել էր զինաթափել այդ վտանգը:

գ) Եվ այդ իսկ պատճառով, «ժողովուրդն ու նրա ղեկավար մարմինները» իր գովքը կերգեին:

Գիտի ողջ լեռնահայությունը, որ Սյունիք մուտք գործածս առաջին օրերից մինչև մեր այդ երկրամասի խորհրդայնացումը, Տեր Մինասյանը, որպես ժողովրդի և նրա ղեկավար մարմնի մի անդամը, եղել է իմ խնկարկուն:

Պատասխանիս պիտի կցեմ պատմությունը կեղծելու աշխատող այդ թշվառականի մի շարք գրություններից մեկը-երկուսը, որ ընթերցողը տեսնի, թե վերջինս ինչո՞ւ և ինչպե՞ս էր խնկարկում նրան, որին խորհրդային իշխանության կողմից այսօր խծբծելու է կոչված:

Աղվեսանուն «հայ մարդուկ»ը, ուղիղ 15 տարի հետո, ինքնամատչորեն, լույս ընծայելով ժամանակին իրեն գրածս երկտողը,* ինձ անվանում է «խռովարար»:

---

* Տեր Մինասյանի տգիտության ներելի է սպարապետությունը աստիճան համարել: Դա պաշտոն է. այդ չգիտի ուրացողը, բայց գիտի. որ գնդապետի աստիճանը ինձ տրված է Հանրապետական Հայաստանի խորհրդարանի, իսկ զորավարի աստիճանը՝ Լեռնահայաստանի խորհրդարանի կողմից:

* «Առաջ քաշելով քեզ, կարծեցի թե քեզնից մի բան դուրս կգա, բայց սխալվեցի. Նժդեհ»:

Խռովարա՞ր. այո՛, երկու տարվա ընթացքում չորս անգամ տվել եմ բարձր «խռովարարության» ապացույցը:

- Երբ Խատիսյանի կառավարության կողմից հրամայված էր գաղթեցնել պաշարված Գողթանի հայությունը, ես «խռովարարաբար» անգիտացա այդ հրամանը, և Գողթանի հայության փոխարեն սրբեցի, տեղահանեցի թրքությունը, որով ոչ թե միայն փրկվեց այդ շրջանի հայությունը, այլև գողթանցուն կարելիություն տրվեց կառչած մնալ Հայաստանի ամենաառաջնակարգ ռազմագիտական կետերից մեկին:

- Զորավար Ղազարովը, տեղեկանալով, որ ես պատրաստվում եմ Ղափանի իմ ուժերով շարժվել դեպի Գողթան՝ այդ վերջինը թուրքական սրից ու սովից փրկելու համար՝ արգելեց իմ արշավանքը:

Նա իր արգելքը արդարացնում էր ռազմամթերքի պակասի և ձմեռ ժամանակ Կապուտջիղ լեռից անցնելու անկարելիության կրկնակի պատճառներով:

Ես անգիտացա և այդ հրամանը:

- Լեգրանի և Հայաստանի կառավարության միջև կնքված պայմանագրի[60] հիման վրա՝ Հայաստանի զինվորական նախարարը, Դրոյի միջոցով, հրամանագրում էր՝ թողնել Սյունիքը և վերադառնալ Երևան:

Վերին իշխանության այդ հրամանն էլ արժանացավ իմ «անհնազանդության»:

- Վերջապե՛ս, երբ վիրավոր էի, և Երևանյան զորամասի հրամանատարությունը ինձ կառաջարկեր թողնել Սյունիքը և վերադառնալ Հայաստան, ես «խռովարար»աբար Հայաստանի մայրաքաղաքի փոխարեն ընտրեցի լեռները, քաշվեցի Խուստուպ, որպեսզի հետագայում ստեղծվեր ինքնավար Լեռնահայաստանը, որպեսզի Ադրբեջանին թողնված մեր Լեռնաշխարհը ուժով կցվեր Հայաստանին, և որպեսզի հոգեբանորեն կարելի դառնար փետրվարյան հակաբոլշևիկյան պոռթկումը ու հայ մտավորականությունը փրկվեր գլխովին ոչնչացումից:

Այսպե՛ս, Սյունիքում, մեկից ավելի անգամներ ես «խռովարար» հանդիսացա, որպեսզի ճշմարտապես կարողանամ ծառայել մեր հայրենիքին:

Թե իմ «խռովարարություն»ից ի՞նչ շահեց Հայաստանը՝ գաղտնիք չէ և՛ ուրացողի համար:

Տեր Մինասյանը չգիտի, որ *իմացականությամբ ու սրտով փոքրիկ էակներին է միայն հատուկ՝ կուրորեն կատարել վերևից տրված ամեն հրաման:*

Սրբագրելի է մարդկային ամեն հրաման, թեկուզ դա տրված լինի մի երկրի կառավարության կողմից:

Կարող է սխալվել, տկարանալ ամենաբարձր իշխանությունն անգամ:

Մարդկային իմացականության դեմ խորապես մեղանչում է նա, ով իրեն տրված հրամանը չի գործադրում ստեղծագործաբար:

Վտանգի ժամանակ, մասնավորապես, երբ մի երկրի և ժողովրդի լինել-չլինելու խնդիր կա, դավաճանություն է՝ զինվորական կանոնագրի այս կամ այն հոդվածի տակ վատորեն թաքնվելը կամ անձնական պատասխանատվությունից փախչելը:

Նման պատմական պայմաններում՝ ղեկավարի չափանիշը, նրա հարցումը պետք է լինի՝ ի՞նչ կթելադրի երկրիս ու ցեղիս հավիտենական շահը, և ոչ թե միայն՝ օրվա իշխանությունը:

Կան վայրկյաններ, կան քաղաքական անցքերի այնպիսի ծախող դասավորումներ, երբ իշխանություններն իրենց անզոր են զգում, ավելին՝ դառնում են տատանվող, զիջող, պարտվողական:

Իշխանություններ կան, որոնք իրենց ենթակա պետերից սպասում են մարդկորեն կարելին միայն:

Կան այնպիսիները, որոնք, անծանոթ մարդկային հոգևոր մեքենան շարժող ուժերին, ծեր անձի մեջ կարող են տեսնել սոսկական պետը, ինչպես և ծեր ղեկավարության հանձնված զորքերի ուժը՝ նրա թվով, նրա տեխնիկայով միայն:

Վերջապես, կարող են ափսոսալ ձեզ, խնայել, ձեզ պահել վաղվա համար: Այդ բոլոր դեպքերում ձեզ կմնա, որ դուք, եթե ճշմարիտ ղեկավար եք, որ դուք չափսոսաք ծեր անձը, որ դուք ներշնչեք ծեր զորքին, ծեր ժողովրդին, թե *միայն թվական հաշիվներով կռիվ մղելը կամ կռվից խուսափելը՝ պղծություն է մարդկային պատմության և այն շարժող հրաշագործ ոգու դեմ:*

Պե՞տ եք, ապա ուրեմն, ձեզ կմնա,- վստահ ծեր ցեղաշնչության,- լուծել «նյութ - ոգի» անտիթեզը, և նետվել դեպի վտանգը, մնալ պատնեշի վրա, որ ասել է՝ դառնալ «խռովարար»: Հասարակ հացկատակներին տրված չէ հասկանալ, որ իր երկրին, իր հոգուն, իր ժողովրդի իրավունքին կառչողին - վտանգը դիմագրավողին, միայն մտքով անբարոյացածները կարող են խռովարար կոչել:

Նրանց տրված չէ հասկանալ այդ կարգի խռովարարության վեհությունն ու փրկարարությունը: Գեղեոններին տրված չէ նաև՝ տարբերել առաջնորդը պաշտոնյայից, ասպետը՝ հասարակ ծիավորից:

Ճշմարիտ առաջնորդներ չեն նշանակվում - նրանք փնտրվում են, հայտնվում, պարտադրվում: Նշանակվում են պաշտոնյաները միայն, որոնք մի բան գիտեն՝ մեքենաբար կատարել վերևից տրված ամեն հրաման:

Եթե Սյունյաց աշխարհում, ես ինձ պետ, պաշտոնյա համարեի, ես կատարած պիտի լինեի բարձր իշխանության ծանոթ հրամանները, որ ասել է՝ ես պիտի հաշտվեի Սյունիքը Ադրբեջանին կցված լինելու փաստի հետ:

Եվ, այդ դեպքում, ի՞նչ խոսք, որ ուրացողները ինձ «խռովարար» անունը չէին տա:

«Նա, Նժդեհը, չի ուզել ոչ ոքի հաշվի առնել. նա Լեռնահայաստանի երկրորդ համագումարում հայտարարել է.

«Օրենքն իմ կամքն է և իմ զինվորի նիզակը»:

Այսպես է նկարագրում անցքերը ու վարքագրում ինձ բոլշևիկյան ծեր գործակալը:

Անաչառության դեմ չմեղանչելու համար՝ Գ. Տեր Մինասյանի մասին վկա կանչենք հենց իրեն՝ Գ. Տեր Մինասյանին:

Թողնենք, որ այդ մարդը ինքնավկայությամբ մերկացնի ու դատի իր անձը:

Այժմ դիմենք մի քանի վավերաթղթերի՝ նախ տեսնելու համար, թե նա, իսկապես, դե՞մ է եղել իմ վարած հակաբոլշևիկյան կռիվներին, թե՞ ոչ:

IV

1920, Հուլիսի սկզբներին, Կարմիր բանակը գրավեց Գորիսը, և նրա մի զորամասը, հուլիսի 8-ին, անսպասելիորեն մտնելով Ղափանի նախադուռը կազմող Խոտանան գյուղը՝ առաջանում է դեպի Ղափանի հանքերը:

Իմ հեծելախումբը Զալին-Գյուլի մոտ կտրեց կարմիրների ճամբան, և գործի դնելով մի տասնյակ պայթուցիկ տակառներ՝ հարկադրեց թշնամուն նահանջել դեպի Խոտանան:

Այդ դեպքից մի օր անց ստացվեց Կարմիր զորքերի կոմիսարի գրությունը, որով հրամայում էր «ճամբա տալ Վերին Խոտանանում գտնվող զորամասին անցնելու Մեղրիի վրայով՝ Օրդուբատ-Զուլֆա»:*

Գրությունը հանձնվեց Ղափանի Ազգային խորհրդին, որը հուլիսի 12-ին, Առաջաձոր գյուղի մեջ, գումարեց մի արտակարգ ժողով՝ նախագահությամբ ծանոթ Գեղեոն Տեր Մինասյանի, քարտուղարությամբ Վ. Փարսադանյանի: Ժողովը միաձայնությամբ որոշեց.

ա) «թույլ չտալ կարմիրներին մտնելու Ղափան.

բ) Վերին Խոտանանը և նրան հետևող մյուս գյուղերը, եթե եղան, կհամարվեն հայրենիքի դավաճան և թշնամի»:**

Ստանալով շրջանի հավաքական և անվերապահ կամքն արտահայտող այդ որոշումները, հուլիսի 12-ին երեկոյան Կարմիր զորքերի պետին ուղարկեցի մի վերջնագիր - հեռանալ Ղափանի սահմաններից:

---

* Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

** Ժողովի արձանագրություններից:

Նշանակածս ժամանակը դեռ չլրացած, բոլշևիկները խուճապահար փախչում էին դեպի Գորիս, իրենց հետ տանելով իմ բանագնացին՝ երկրաչափ Սմբատ Մելիք-Ստեփանյանին:

Տեսնո՞ւմ եք, որ *առաջին գնդակը, առաջին պայթուցիկ տակառը, առաջին վերջնագիրը Կարմիր բանակին ուղղելու հերոսական որոշումը ստորագրված է եղել նաև Գ. Տեր Մինասյանի կողմից.*

Առաջածորի պատմական ժողովի նախագահը, 15 տարի առաջ, «Հայրենիքի դավաճան ու թշնամի» է հռչակել այն հայ գյուղը, ուր, հակառակ բնակչության կամքին, ելուզակաբար, իր ոտն էր դրել՝ քեմալականներին օգնության փութացող Կարմիր զորամասը:

Իսկ այսօր, 15 տարի հետո, նա ելել է ուրացողաբար լիզելու իր ստորագրությունը՝ իր հասցեին ընդունելով իր իսկ կայացրած դատավճիռը - «Հայրենիքի դավաճան ու թշնամի»:

* * *

Մթության մեջ, քեմալական գործակալները, շարունակում էին իրենց հայադավ աշխատանքները:

Պետք էր օր առաջ Կարմիր զորքը հասցնել Նախիջևան:

Այդպես էր ուզում Քյազիմ Կարաբեքիր փաշան:

Հուլիսի 29-ին, Կարմիրները մեծ ուժերով վերսկսեցին իրենց հարձակումը Ղափանի դեմ, այս անգամ՝ արևելքից:

Կռիվներն անհավասար էին, կատաղի, բորբոքուն, որոնք տևեցին 72 օր:

Հացի և ռազմամթերքի չգոյության պատճառով՝ ժողովուրդը հարկադրվեց վար դնել զենքը և վերցնել մանգաղը՝ իր հունձը հավաքելու համար:

Սակավաթիվ հետևորդներով՝ ես քաշվեցի Խուստուպ լեռը:

Այստեղ էլ մեզ հետ է Տեր Մինասյանը.

Կարմիրները, գրավելով Ղափանը, հոգեբանական մի հեռատես հաշվով, կաճապարեին գրավել Մեղրիի շրջանը - Արևիքը և մեզ «սրբել, թափել Արաքս»ը, ինչպես այդ օրերին կարտահայտվեր բոլշևիկյան ռուսատառ թերթերից «Կարմիր ավանգարդը»:

Խուստուպի վրա թողնելով իմ մի բուռ մարտիկները, ես մեկնեցի Արևիք՝ խորհրդակցության հրավիրելու այդ շրջանի Փրկության կոմիտեին:

Ինձ հետ էր Գողթանի վշտակիրը՝ Աշոտ Մելիք-Մուսյանը,[61] որի նախագահությամբ, Սեպտեմբերի 6-ին, Կալեր գյուղում գումարվեց Արևիքի ներկայացուցչական ժողովը:

Այստեղ էլ ժողովին ներկա է Տեր Մինասյանը.

Նա, ապագա դավանափոխը, ամբողջովին բաժանում էր արևիքցիների կարծիքը. ավելին, նա պահանջում էր՝ «հարց տալ Բաղաբերդի ժողովրդին, թե ինքը ի՞նչ է ուզում. ուզո՞ւմ է մնալ հավատարիմ իր ազատագրման, իր ինքնապաշտպանության գործին, թե՞ ուզում է նետվել թշնամու գիրկը»:*

Արդար էր Տեր Մինասյանի զայրույթը այն հայ գյուղախմբի դեմ, որը Ղափանի կռիվների ժամանակ, առանց ուզելու, մերկացրել էր մեր ծախ թևը և այսպիսով հեշտացրել թշնամու առաջխաղացումը:

«Ազգադավություն» համարելով Բաղաբերդի արարքը, նա՝ Տեր Մինասյանը, դատ ու դատաստան էր պահանջում վերջինի համար:

Եվ ժողովը որոշեց՝ «Արևիքը, իր ուժերը դնելով ռազմական դրության մեջ, բռնում է բոլոր դիրքերը»:

Այսպե՛ս, Արևիքն էլ վճռեց ծառանալ Կարմիր բանակի ճամբի վրա:

Ու այդ առթիվ մեզ հետ, բոլորիս հետ ուրա՛խ է նաև Տեր Մինասյանը, որն այդ օրերին որոշ առաքելությամբ իմ կողմից ուղարկվեց Թավրիզ:

Կարմիր բանակը չուշացավ իր ներկայությունը զգացնել տալու մեզ:

Նա, գրեթե միաժամանակ, սկսեց իր գրոհները թե՛ Օրդուբատի և թե՛ Բարթաղի կողմից: Նա ոտքի հանեց Զանգելանի ողջ թաթարությունը և Օրդուբատի թուրքական ուժերը, որոնց անվիճելի սեփականությունը համարում էր Զանգեզուրը:

Կռի՛վ էր, կռիվ, որի նմանը քիչ անգամ են տեսնում պատերազմող կողմերը:

Թշնամին կաշվից դուրս էր գալիս Արևիքի, որ ասել է՝ մեր դիակների վրայով միանալու քեմալականներին:

Արևիքի հերոսական որդիները գերազանցեցին ամեն ակնկալություն, թշնամուն զարմանք, հարևան Պարսկաստանին հիացում պատճառելով:

Վերջապես, ջարդվեց թշնամին, և անփառունակ կերպով իր ուժերի բարոյալքված մասը փախցրեց Ղափան:

Հայ զենքի այդ փայլուն հաջողությամբ ես կարելիություն ստացա՝ ծրագրել ու գործադրել Ղափանի վերագրավումը:

Այժմ մերն է և՛ Ղափանը:

Էլեկտրականացած է լեռնահայությունը, սարսափած՝ Կարմիր բանակը:

---

* Ժողովի արձանագրություններից: Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

Ահա՛ ռազմական այդ վայրկյանը բնորոշող մի հատված 28-րդ Կարմիր հրացանաձիգ դիվիզիայի պետ Նեստերովսկու հրամանագրից.*

- Համարյա ամբողջ Զանգեզուրում բռնկվել է ապստամբությունը:

Ապստամբած հայերը գրավել են Անգեղակոթը, Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը և Օխչի և Մեղրի չայի ավազանները:

Նյուվադի գյուղի շրջանում գործող 252-րդ հրացանաձիգ և կովկասյան երկրորդ գնդերի հետ ունեցած կապը խզված է:

Ղափանի աննշան զորամասը շրջապատված է, նրա վիճակը անհայտ է:

25-րդ հրացանաձիգ գունդը կռվում է թշնամու հետ Տանձավերից դեպի հարավ գտնվող Ինջաբելի բարձունքներում:

20-րդ դիվիզիայի կովկասյան բրիգադային հրամայված է Արաքսի ափով առաջանալ և Հոկտեմբեր 16-ին լինել Նյուվադիի շրջանը, ուր, իրեն ենթարկելով 252-րդ հրացանաձիգ և կովկասյան երկրորդ գնդերը, վճռականությամբ և դաժանությամբ ջարդել Նժդեհի բանդաները:*

Այդ գործողությունից հետո, հարվածելով Ղափանի շրջանը, վերջ տալ ապստամբությանը:

Մեր դիվիզիային հրամայված է՝ պատրաստել հարվածող բռունցք, ուժեղ թափով ջնջել ապստամբությունը, կենդանի բաց չթողնելով ոչ մի բանդիտի, կանգ չառնելով ամբողջ գյուղեր ավարի ենթարկելու առաջ, հիշելով այն, որ *աններողամտությունն ու դաժանությունը, նամանավանդ Կովկասի մեջ, կհասցնեն լավ հետևանքի:*

Գրավված գյուղերի մեջ սովից ապահովել զորամասերը ի հաշիվ ապստամբների»:

* * *

Կարդացիք կարմիր զորավարի հրաման-մարտագիրը, լսեցիք նրա խոսքի անշանթ ամպրոպները:

Մարդկային խոսքն իր հոգեբանությունն ունի:

Այդ հրամանը մատնում է իր հեղինակին - հրամանատարին:

Անզոր «լենկթեմուրականություն» շնչող այդ մարտագիրը մատնում է այն խուճապային ու սարսափահար հոգևիճակը, որ այդ օրերին ստեղծվել էր գլուխը կորցրած կարմիր զորահրամանատարության մեջ:

---

* Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

* Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

Մեր զենքի հաջողության լուրը կարծագանքեր անգամ Թուրքիայից:

Ահա՛ թե ինչ է ասում բժ. Արտաշես Բաբալյանը «Մի տարի գերության մեջ» իր հոդվածաշարքում.

- Նորից կենդանություն առավ Յակուտիից:

Մեզնով սկսեցին հետաքրքրվել:

Հաճախ գալիս էր գնդապետ Էմին բեյը և կարդում մեզ Զանգեզուրի դեպքերի մասին տեղեկագրեր:

Նա ոգևորված՝ պատմում էր մեզ հայերի քաջության մասին:

Պաշտոնական զեկույցները այլևս չէին ասում «դաշնակները քաջությամբ հետ մղելով թշնամու հարձակումները, ջարդեցին բոլշևիկյան գնդերը և մեծ քանակությամբ ռազմամթերք ու գերիներ վերցրին»:**

Այդ օրերին էլ մեզ հետ է Տեր Մինասյանը-անշուշտ, ի հեռուստ:

Մեր նոր հաղթանակներով գինովցած՝ նա գրում է. *«Սիրելի Գարեգին, Եպիսկոպոսը*[62] *և ամբողջ գաղութը խորապես գնահատում են քո և Ղափանի ժողովրդի հերոսական կռիվները՝ Ղափանի ազատագրման գործում:* Թավրիզ, 23 Սեպտեմբեր, 1920»:

Հասնում է նրա երկրորդ գրությունը. «Սիրելի՛ Գարեգին, այսօր ցնծում է ամբողջ Թավրիզը՝ Մեղրու և Ղափանի հաջողության լուրերով: Ղափանի վերագրավումը և ծեռք բերված զինամթերքի և ավարի լուրը ուղղակի հուզեցին մեզ, բոլորիս:

Ամենուրեք, ամենքի բերանում հոլովվում է Նժդեհի անունը:

Մեր սիրտը պայթում է, որ այդ պատմական րոպեներին քո կողքին չենք:

Է՛հ, Գարե՛ջան, հաջողությո՛ւն քո սկսած գործին և բարի ելք: Համբույրներով՝ միշտ հարգող և սիրող Գ.Տեր Մինասյան: Թավրիզ, 16 Հոկտեմբերի 1920: Յ.Գ.Ներսես սրբազանը, օգտվելով առիթից, օրհնում է քեզ, քո քաջարի զորքին, և համբուրում քո ճակատը»:

Ահա՛ Տեր Մինասյանը, երբ դեռ ծախված չէր թուրք-բոլշևիզմին, երբ դեռ հայ էր և մարդ:

Ըստ իր վկայության՝ իմ գործը ազատագրական էր, իմ վարած կռիվները՝ հերոսական:

Նրան հուզմունք ու ցնծություն է պատճառել իմ ամեն մի հաղթանակը: Նրա «սիրտն է պայթում», որ «այդ պատմական վայրկյաններին» իմ կողքին չէ:

Եվ, այդ բոլորից հետո, հաշտվել այն մտքի հետ, թե իմ վարած ամենաօրհասական կռիվների օրերին, իր ծննդավայրից - վտանգի,

---

** «Հայրենիք», ամսագիր, Բ. տարի, 1924, թիվ 7:

կրակի, մահվան գծից դուրս գտնվող իմ խնկարկուն, մի օր, շնություն կունենար հաչելու «ամենուրեք, ամենքի բերանում հոլովվող» անունի դեմ...

Չէ՛, չէ՛, նման անկումների հետ մարդկորեն չի՛ կարելի հաշտվել:

* * *

Ամրանալով Ղափանում, գալիք արյունահեղություններից խուսափելու ցանկությամբ, կարմիր զորահրամանատարության հղեցի հետևյալ վերջնագիրը. «Ձեր զորքերի ներկայությունը Սյունիքի սահմաններում այլևս անհանդուրժելի է: Հրամայում եմ, եթե չեք ուզում XI բանակի մնացորդներն էլ կոտորածի և գերության մատնել, անմիջապես դատարկել Զանգեզուրը. հակառակ դեպքում, ստիպված կլինեմ կռվով տիրել ձեր ձեռքում գտնվող երկրամասին»:

Իմ այդ վերջնագրին խորհրդային զորահրամանատարությունը պատասխանեց սրով, ուղարկելով իմ դեմ Բաքվից հասած նոր ուժեր – թուրքական գունդը՝ Ջավալ փաշայի հրամանատարությամբ և հռչակավոր Կուրոչկինի հեծյալ բրիգադան:

Տաթևի և Գորիսի միջև, Եռաբլուր դաշտի վրա, տեղի ունեցավ մեր վերջին վճռական ճակատամարտը, որի ընթացքում Կարմիր բանակը մի անգամ էլ զգաց Սյունիքի զարկերի թափը:

Իմ վաշտերը, թուրքական դիակներ կոխելով, մտան Գորիս:

Վիրավորված ու գերի է նաև՝ Ջավալ փաշան:

Ազատագրված՝ ցնծում է ողջ Զանգեզուրը:

* * *

«1920թ. Դեկտեմբեր 25-ին Զանգեզուրի հայ ժողովրդի ցանկությամբ, Տաթևի պատմական վանքում կայացավ համազանգեզուրյան համագումարը, ուր ներկա էին Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գյուղերից ընտրված և ուղարկված 100 պատգամավորները, Զանգեզուր-Գողթանի սպարապետ Նժդեհը, Զանգեզուրի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, ընդամենը 118 հոգի: Կեսօրվա ժամը 2-ին ժողովը բացում է բուն Զանգեզուրի գյուղացիական ժամանակավոր խորհրդի նախագահ Տ.Մելիք-Հուսեինյանը՝ և առաջարկում ընտրել համագումարի դիվանը:

Ձայների մեծամասնությամբ ընտրվում են. նախագահ՝ Եգոր Հարությունյան և Տիգրան Մելիք-Հուսեինյան, քարտուղարներ՝ Սամվել Մաշուրյան և Նիկոլայ Դորունց:

Նախագահը, նիստը բաց հայտարարելուց հետո, համառոտ կերպով բացատրում է համագումարի պատմական նշանակությունը և առաջարկում է անցնել օրակարգի հետևյալ հարցերի քննության.

1) Զեկուցում Հայաստանի քաղաքական կացության մասին և համագումարի բռնելիք դիրքը:
2) Ինքնավար Սյունիքի կառավարության ձևը:
3) Իշխանության կազմակերպումը:
4) Սպարապետի հրավիրումը:
5) Ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի ընտրություն:
6) Իշխանության կենտրոնատեղի:
7) Փոխհարաբերություններ՝
ա) Հայաստանի Հանրապետության,
բ) Ադրբեջանի Հանրապետության,
գ) Պարսկաստանի կառավարության,
դ) հարևան թուրքերի հետ, և այլն:

* * *

«Մի շարք ներկայացուցիչների երկար և բազմակողմանի արտահայտություններից հետո, համագումարը երկար ծափահարություններով և «հուռռա»ներով, միաձայն ընդունում է հետևյալ բանաձևը.

«Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը, շնորհիվ մի շարք տականքների և ազգուրացների, որոնց հրավերքով, առանց ազգաբնակության կամքը և ցանկությունը հարցնելու, Զանգեզուր մտան սովետական զորամասերը, 5 ամսվա ընթացքում դատարկեց դառնության բաժակը մինչև նրա վերջին կաթիլը: Սովետական հրամանատարությունը հենց առաջի քայլից գավառի գյուղացիության նկատմամբ սկսեց իր ավերիչ, քայքայիչ քաղաքականությունը, որի առաջ նսեմանում են պատմական Լենկթեմուրյան և Արևելքի բարբարոսների արշավանքներն ու գործելակերպը:

Հայ աղքատ գյուղացիության տնտեսապես քայքայված շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր և կապիտալիստների դեմ մղվելիք քաղաքականությունը գործադրում աղքատ, անօգնական գյուղացիների և այրի կանանց դեմ:

Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարավ մեր աղքատ գյուղացու միակ եզը, կովը, ձին ու ավանակը, գրավեց մեր անասունների կերը, և թողեց մեզ մերկ և զուրկ ամեն ինչից:

Սովետական հրամանատարությունը, մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լոզունգները, ավերեց, հողին հավասարացրեց մեր գյուղերը, և իր գրավածների հանդեպ մեզ չտվեց մի թել անգամ:

Նա անկարող եղավ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրվանքա նավթ անգամ, չնայելով մեզ նավթ, մանուֆակտուրա և այլ մթերքներ տալու խոստումներին: Այս բոլորից հետո մենք համոզվեցինք, որ

սովածների այդ բանակը եկել էր միմիայն հափշտակելու մեր կյանքը, գույքը, թալանելու մեզ և իսպառ ոչնչացնելու:

Սովետական կառավարությունը իրեն հատուկ արյան բաղնիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ և տասնյակներով կոտորեց նրանց, չխնայելով մեր գրական վաստակավոր գործիչներ Խորենուն,[63] Շիրինյանին [64] և տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքոներին հոշոտելուց: Առանց քննության և որոշ մեղադրանքների մեր ռանչպար գյուղական երիտասարդներից տասնյակներ գլխատվեցին և փոսերը թափվեցին, և վերջում իր հայակործան հաղթանակը կամենալով առաջ տանել, մեր գավառը մտցրեց 1000-ով տաճկական ասկյարներ, որոնք իրենց հայի Աստված էին անվանում:

Սովետական կառավարությունը, մոռանալով տաճկական դարավոր հայաջինջ քաղաքականությունը հայ ժողովրդի նկատմամբ, դեպի հայ գյուղերը ուղղեց տաճկական ասկյարներին, որոնք Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Յայջի, Զեյվա և ուրիշ գյուղերում իրենց բարբարոս և գազանային ինստինկտները գործադրեցին հայ կնոջ և կույս աղջիկների վրա, նրանց պատիվը ոտքի տակ տալով:

Կոխոտեցին, ցեխի հավասարեցրին մեր պապենական ամեն տեսակի սրբություն, եկեղեցի, ընտանեկան պատկառանք և պատիվ:

Սովետական կառավարությունը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնությունները և տարածված սիֆիլիսը կատարյալ կերպով առաջ տանելու համար և վախենալով ժողովրդական բռնկումներից, հարյուրավոր անմեղ մարտիկներ բանտ ձգեց ու խեղդեց, սպառնալով ազգաբնակության իր տեռորներով որևէ ցույցի և ապստամբության դեպքում կոտորելու նրանց:

Զանգեզուրի աշխատավոր գյուղացիությունը չկարողանալով տանել նման բարբարոսությունները, որոշեց դուրս վռնդել սովետական Ռուսաստանի զորքերին և նրա դիմակի տակ թաքնված ադրբեջանյան վարձկաններին, որոնք ավերեցին իր երկիրը, և ազատեց իր օջախն ու պատիվը: Տարվա Հոկտեմբերի 10-ից սկսած ապստամբական դրոշ պարզելով՝ իր սիստեմատիկ բռնկումներով մինչև տարվա Նոյեմբեր 21-ի գիշերը դուրս քշեց իր սահմաններից անկոչ այդ զորամասերը, որոնք իրենց հինգամսյա ներկայությամբ նրան կորստյան դուռը հասցրին:

Սովետական Ռուսաստանն ու Ադրբեջանը չբավականանալով այս ամենից, ցանկացան գլխատել ու իսպառ ոչնչացնել հայ ժողովուրդը և ներս հրավիրեցին տաճկական հորդաներին, Քեմալի գլխավորությամբ, Հայաստան, և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը, մի ռեժիմ և ծրագիր, որոնց չի կարող այլևս հանդուրժել թե՛ մեր երկիրը և թե՛ բովանդակ հայ ժողովուրդը:

Նկատի ունենալով վերոհիշյալները, և այն, որ Զանգեզուրը երեք տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրույն կյանքով և շարունակելու է մնալ նույնը, համազանգեզուրյան համագումարը իր սույն օրվա նիստում որոշեց.

1) Զանգեզուրը հայտարարել ժամանակավորապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, լինելով անկախ՝ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրին՝ Հայաստանին:

- Ինքնավար Սյունիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները:

2) Համագումարը լսում է շրջանային խորհուրդների համառոտ զեկուցումները և դիտողությունները իրենց գործունեության մասին և առնում է ի գիտություն:

3) Մտքերի փոխանակություններից հետո համագումարը միաձայն ընդունում և հաստատում է ինքնավար Սյունիքի կառավարության ձևի հետևյալ գլխավոր կետերը.

- Սույն համագումարը ճանաչել ինքնավար Սյունիքի բարձր օրենսդրական մարմին-պարլամենտ, որին վերապահել Սյունիքի բախտի լիակատար տնօրինությունը:

ա) Համագումարը միաձայն որոշում է հրավիրել իր ազատարար, իր հերոս Նժդեհին որպես Սյունյաց սպարապետ և, բուռն ծափահարություններով իր կատարյալ վստահության քվեն տալով, նրան է հանձնում իր բախտը :

բ) Զինվորական բոլոր տեսակի գործերը տարվում են սպարապետի ղեկավարությամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում պրեզիդիումին:

գ) Ինքնապաշտպանության հարցի վերաբերյալ բոլոր միջոցների ձեռնարկումը և գործադրությունը թողնել սպարապետի կարգադրությանը»...

* * *

Այդ պատմական համագումարը, որին նախագահեց Գ.Տեր Մինասյանը, անվերապահ կերպով հաստատում է որ՝

ա) Սովետական զորքերը մտել են Զանգեզուր, առանց ազգաբնակչության կամքն ու ցանկությունը հարցնելու:

բ) Սովետական հրամանատարության քաղաքականությունը եղել է «ավերիչ, բարբարոս, լենկթեմուրյան:

գ) Սովետական իշխանությունը ստեղծել է արյան բաղնիքներ:

դ) Բոլշևիկները 1000-ով տաճկական ասկյարներ են մտցրել Զանգեզուր, և որ

ե) Տաճկական հորդաներին Հայաստան հրավիրեցին Ռուսաստանն ու Ադրբեջանը, և Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու խորհրդային իրավակարգը:

Ահա սովետների դեմ ուղղված այն ծանրածանր, այն արդար մեղադրականը, որ հաստատված է Տեր Մինասյանի նախագահական ստորագրությամբ:

Նկատեցիք, անշուշտ, որ համագումարի բոլոր որոշումները առնված են բացարձակ քվեով, միաձայնությամբ:

Տեսաք, այստեղ էլ մեզ հետ է ուրացության թեկնածուն, ergo,[65] նա դեռ թշնամի է խորհրդային իշխանության: Այս էր, ընթերցո՛ղ, հացի համար այսօր պատմությունը խեղաթյուրելու հարկադրված թշվառականը 15 տարի առաջ, երբ դեռ չէ՛ր խորհում, չէ՛ր զգում, չէ՛ր գործում կարմիր փայտիկի շարժումով, երբ դեռ ընդունակ էր հերոսական որոշումներ ստորագրելու և հերոսներ դափնեպսակելու:

Ահա, որպես հոգեբանական արձագանգ, Տեր Մինասյանի խմբագրականը* այդ համագումարների մասին.

«Ապրիլի 27-ը հայ իրականության պատմական օրերից մեկն է. այդ օրն էր, որ մարդկության քաղաքակրթության ոխերիմ թշնամիների, ռուս բոլշևիկների անարգ լծից ազատված Լեռնահայաստանի գյուղացիությունը եկավ անվարան և առավել քան երբեք վճռական՝ մի անգամ ևս հայտնելու աշխարհին իր ազատ և անկախ ապրելու կամքը:

Տաթևի հնամենի կամարների տակ՝ ուր թերևս ապրում է մեր անհաղթ նախահայրերի, Դավիթբեկերի և նմանների ըմբոստ ոգին, Սյունիքի և Վայոց Ձորի քաջամարտիկ որդիները, գիտակից որպեի լրջության, ընտրեցին իրենց համար նոր կառավարություն, խոստանալով տալ նրան ամեն աջակցություն, վերջնական հաղթանակը ձեռք բերելու համար:

Երկրի ղեկը հանձնվել է ևս այն անձնավորությանը, որը այլևս ոչ մի դափնիի չի կարոտում, ապացուցելու համար, որ ինքը արժանի և զտարյուն հաջորդն է այն քաջերի սերնդի՝ որ դարերի ընթացքում ապրեց ու պայքարեց այս անվանված լեռներում և երկու սրբություն միայն ճանաչեց, նախ անհուն սեր և պաշտամունք դեպի ժողովուրդը և հետո նույն ինքն այդ ժողովրդի ազատությունը՝ որի համար ոչինչ չխնայեց»...:

Տեր Մինասյանի գրչին են պատկանում նաև հետևյալ տողերը.

«Մեր քերթողահայր Խորենացու նկարագրության համաձայն, դյուցազն Վահագնի առասպելական ծնունդը հայտնի պիտի լինի ամեն մի հայ գրագետի, թե ինչպես երկնքի և երկրի ու ծիրանի ծովի բռնված երկունքից ու բոցավառ եղեգնից ծնվեց մանուկ Վահագնը:

Ինքնավար Սյունիքի ազատ և անկախ կառավարությունը ևս պակաս հրաշքով և առասպելական երևույթներով չծնվեց ու գոյություն ստացավ:

Զանգեզուրի գյուղացիությունը իր տառապանքների, իր տված զոհերի և իր վերջին արյան բաղնիքների և Բարդողիմեոսյան գիշերներով ծնեց ինքնավար Սյունիքը, ու գերազանցորեն անհավասար ուժերի դեմ կռվելով և մաքառելով, դավաճան և մատնիչ հարազատի դեմ ծառանալով ու հաղթելով, նա, Զանգեզուրը ևս անցավ առասպելական ու գյուղացիների հատուկ պատմության շարքը»...

* * *

Ազատ ու ինքնավա՛ր է Սյունիքը:

Հաղթական՝ նա իր վաշտերն է հասցրել Լեռնային Ղարաբաղ: Լույս է տեսնում Սյունյաց կառավարության անդրանիկ կոչը, խմբագրված Տեր Մինասյանի կողմից.

«Հա՛յ ժողովուրդ,

Ամսի 21-ին, Գորիսի Սուրբ Լուսավորիչ եկեղեցում, հանդիսավոր մաղթանքից հետո, ժողովրդի հոծ բազմության և զինվորական վաշտերի ներկայությամբ, օծվեց Սյունիքի կառավարության կողմից սպարապետին տրվելիք գոտին և դրոշակը, որից հետո նախագահը օծված գոտին կապեց սպարապետի մեջքը և դրոշակը հանձնեց նրան:

Հա՛յ ժողովուրդ, այդ օրը և այդ փառավոր տոնը եզակի տեղ պիտի ունենա Սյունիքի համար:

Կառավարությունը ժողովրդի անունով հանձնելով սպարապետին ազատ Սյունիքի եռագույն դրոշակը, դրա հետ նրան հանձնեց և մեր քաղաքական բախտը, Ձեր պատվի, նամուսի պաշտպանությունը, համոզված լինելով, որ ձեր սպարապետը, ինչպես մինչև այսօր, և այնուհետև, իր հերոսական քաջությամբ, կշարունակի փառավոր հաղթություններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը տոգորված ազատ և անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է զոհաբերել այն ամենը, ինչ որ հարկավոր կլինի հասնելու ցանկացած նպատակին:

Սպարապետն ընդունելով Սյունիքի պաշտպանության դրոշակը, ուխտեց և երդվեց՝ միշտ բարձր պահել կառավարության և ժողովրդի կողմից իրեն հանձնված դրոշակը:

Սյունիքի՝ ժողովուրդ, բոլորվեցե՛ք Ձեր սիրելի սպարապետի շուրջը, թև ու թիկունք հանդիսացեք նրան, որ կարողանա կատարել այն ծանր պարտականությունը, որը դրված է նրա վրա Ձեր և հայրենիքի կողմից:

---

* «Ազատ Սյունիք»:

Կեցցե՛ Սյունիքի ազատարար Նժդեհը, կեցցե՛ Սյունիքի ազատասեր հայ ժողովուրդը:

1921. Փետրվար 23ին, Գորիս»

Այդ կոչից ընթերցողը կեզրակացնի, որ

ա.- Սպարապետը հերոսական քաջությամբ է վարել Սյունիքի կռիվները.

բ.- Նա ազատարար է.

գ.- Մինչ այդ՝ կառավարությունը որոշել է իր և ժողովրդի անունից սպարապետին հանձնել Սյունիքի եռագույն դրոշակը.

դ.- Սպարապետին տրվելիք դրոշակն ու գոտին օծված են ժողովրդի հոծ բազմության և զինվորական վաշտերի ներկայությամբ.

ե.- Եվ որ նախագահը՝ Գ. Տեր Մինասյանն է գոտին կապել սպարապետի մեջքը և դրոշակը հանձնել նրան:

Ա՛յս է պատմական իրողությունը:

Սակայն, տարիներ հետո, Տեր Մինասյանը ,բոլշևիկին հատուկ շնականությամբ, պետք է ուրանար նրան տրված դրոշակը ու հայհոյեր իր ազատարարին:

Ավելի՛ն՝ նա պետք է խեղաթյուրեր մեր երեկվա պատմությունը:

V

Անցքերն արագորեն հաջորդում էին իրար:

Քեմալական զորքերը նեղում էին Հայաստանը: Մոսկվայի հրավերով, թուրք բանակը հրով և սրով մտնում էր Հայաստան, և նրա առջևից դավաճանաբար, որպես փողհար և մունետիկ, ընթանում էր մեր ցեղի տականքը:

Մեր ժողովրդի դիմադրական կորովը հարվածելու ցանկությամբ՝ կոմունիստական կուսակցության Ալեքսանդրապոլի գավառական կոմիտեն՝ հայ զինվորների մեջ ցրում էր հետևյալ կոչը. «Զինվորնե՛ր, գյուղացինե՛ր և գաղթականնե՛ր, դաշնակցական խայտառակ կառավարության խմբապետներից կազմված զորքը նահանջում է Քեմալի զորքերի ահավոր հարձակումից... Բավական չէ, որ նրանք հայ աշխատավոր ժողովրդի գլխին չարիք դարձան, այժմ էլ խաբում են ձեզ՝ ասելով, թե գալիս են թուրքերը հայ աշխատավորությանը թալանելու և կոտորելու:

Մենք կոչ ենք անում ձեզ՝ չհավատալ դաշնակների հազարավոր ստերին, որովհետև եկողները ոչ թե թալանչի ավազակներ են, այլ՝ գյուղացիների, զինվորների և բանվորների ընկերներ՝ թուրք աշխատավորներ:

Նրանք գալիս են ոչ թե ձեզ կոտորելու, այլ՝ թալանչի դաշնակների ձեռքից ձեզ ազատելու:

Դուք լավ հավատացեք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում և գրավված մյուս տեղերում նրանք ո՛չ թալանել են և ո՛չ էլ կոտորել, այլ՝ հաստատել են բանվորա-գյուղացիական կարգ ու կանոն...: Նորից կոչ ենք անում ձեզ՝ տեղերից չշարժվել, մնալ հանգիստ, չգաղթել...: Կոչ ենք անում բոլորիդ այժմ հավաքվելու բոլշևիկների դրոշակի տակ, որոնք միայն կարող են ձեզ փրկել»...:*

Այսպե՛ս, Մոսկվան այսպես բոլշևիկացնում էր հայ գյուղացիությունը՝ իր առջևից քեմալական սուրն ու սարսափը քշելով:

Նա ո՛չ թե հեշտացրեց թուրքական առաջխաղացումը, այլև հրեշային պրովոկացիաներով մոլորանքի ու տատանումի մատնեց հանկարծակիի եկած հայությունը:

Նա տմարդորեն խաբում էր, հայտարարելով, թե թուրքերը Կարսում խորհրդային կարգ ու կանոն են հաստատել:

Եվ խաբվելով՝ չկռվեց, չգաղթեց հայությունը - մնաց ու քեմալական սվինների հարվածների տակ իր քաղաքական միամտությունը քավեց:

Թուրքերն անցան Արփաչայն ու Ախուրյանը և մտան Ալեքսանդրապոլ:

Եվ հարավից ու հյուսիսից արշավող թուրք-բոլշևիկ բանակների հարվածների տակ, 1920, Դեկտեմբեր 2-ին, Հայաստանի կառավարությունը մեր երկրի իշխանության ղեկը հանձնեց բոլշևիկներին:

«Հեղափոխական» Մոսկվան այսպե՛ս վարվեց մանուկ Հայաստանի հետ:

Նա՝ իսլամ Արևելքը դաշնակիցների դեմ զորաշարժելու փոխարեն, թուրքն ու թաթարը շարժեց «դաշնակ Հայաստան»ի դեմ, բաժանեց, կիսեց դա, առյուծի բաժինը թողնելով թուրքերին:

Հասկանալի է, որ Հայաստանի անկումով Սյունիքի դրությունը ավելի ևս պիտի ծանրանար:

Այժմ դա կտրված էր ամբողջ աշխարհից: Դա մենակ էր այժմ, ողբերգորեն մենակ, մենակ քաղաքականապես, անզինակից՝ կռվադաշտում:

Մայր երկրի անկման նախօրյակին՝ մարտնչող Սյունիքի համար հաց ու ռազմամթերք ճարելու առաքելությամբ Երևան ուղարկված մեր դժբախտ Աշոտը[66] վերադառնում է ծեռնունայն, մեզ բերելով Հայաստանի պարտության ու խորհրդայնացման գուժը:

Աշոտի հետ, գրեթե միաժամանակ, 1920, Դեկտեմբեր 16-ին, ուղիղ հեռագրաթելով հասնում էր խորհրդային Հայաստանի զինվորա-

* Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

կան կոմիսար Ավիս Նուրիջանյանի և Դրոյի կոչը՝ ուղղված Սյունիքի գյուղացիության և հրամանատարության:

Ահա՛ նրա մի հատվածը. «Թող հայտնի լինի բովանդակ Զանգեզուրին, որ Հայաստանը հայտարարված է սովետական հեղափոխական հանրապետություն: Հին կառավարությունը նետել էր երկիրը արյան ու արցունքի անդունդը: ... Ձեր ժողովրդի միակ փրկությունը կախված է Կարմիր բանակի և Սովետական Ռուսաստանի օգնությունից: Սովետական Ադրբեջանը զիջել է Սովետական Հայաստանին Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջևանը: [67]... Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չի հետապնդվում, բացի հին կառավարության անդամներից, որոնք Հեղկոմի ձեռքով ձերբակալված ու հանձնված են ժողովրդական դատի: Մենք կոչ ենք անում Զանգեզուրին խորհրդային Հայաստանի իշխանության դրոշի տակ կանգնել, մերձենալ Ռուսաստանին և Ադրբեջանին»...

Ավիս-Դրոյի այդ կոչով սկսվեց բանակցությունների երկրորդ շրջանը:

Այժմ խորհրդային Հայաստանի կառավարությունը աշխատում էր հեշտացնել Կարմիր բանակի գործը:

Այլևս մեզ հետ գործ չունեին «Հայ» մարդիկ:

Այլևս մեզ հետ չէին խոսի հայերեն, Երևանից և ոչ թե թաթար Բաքվից:

Բայց և այնպես դժվարանում էինք հավատալ բոլշևիկների խոսքին:

Չէր կարելի հավատալ, չէինք հավատում, որովհետև հազարումեկ առիթներ էինք ունեցել համոզվելու, որ բոլշևիկը թուրքորեն նենգ է:

Մտնելով Բաքու՝ Կարմիր բանակը հայկական Ղարաբաղն ու Նախիջևանը հայտարարել էր «ադրբեջանյան գավառներ»:

Այդ դեպքից հինգ ամիս հետո, երբ պետք էր խաբեպատիր խոստումներով կաշառել մեզ՝ կարմիրները լեռնահայության մեջ ցրած թռուցիկներով միևնույն մեր հողամասերը թղթի վրա հայտարարեցին Հայաստանի անբաժան մասը:

Սակայն, ամրանալով Հայաստանում, նրանք թքեցին իրենց հայտարարության վրա - Ղարաբաղը կցելով Ադրբեջանին, իսկ Նախիջևանը դարձնելով «Նախկրայ» - առանձին «գրպանային հանրապետություն», ենթակա Ադրբեջանի քաղաքական թևարկության:

Ավելի՛ն կա:

Հայաստանի նախկին կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի միջև 1920, Օգոստոս 10-ին կնքված պայմանագրի ուժով, խորհրդային իշխանությունը Սյունիքն էլ հռչակել էր ադրբեջանյան հողամաս:[68]

Ահա՛ թե այդ առթիվ ի՞նչ է ասում կարմիր 28-րդ հրաձիգ դիվիզիայի քաղաքական բաժինը. «Ռուս Կարմիր բանակը, որ ջարդեց բարոն Վրանգելի տասնյակ հազարավոր ճերմակ գվարդիայի բանդաները, կկարողանա պաշտպանել նաև Սովետական Ադրբեջանը:*

Իսկ կարմիր ռազմաճակատամասի պետ Սեմյոնովը, ընդունելով Ադրբեջանի իրավունքն ու գերիշխանությունը Սյունիքի վրա, իր 1920, 26 Նոյեմբեր պաշտոնագրով հայտնում էր ինձ. «ՌՍՖՍՀ Կարմիր բանակի զինվորական հրամանատարությունը և Ադրբեջանի սովետական իշխանությունը երաշխավորում են կատարյալ ապահովություն հայ ժողովրդի խաղաղ աշխատանքի և ապստամբներին անարգել վերադարձ իրենց բնակավայրերը»:

Ինչ խոսք, որ Սյունիքը բնա՛վ տրամադիր չէր օտար երկրամասեր նվաճելու:

Նա իր անդրանիկ համագումարում հայտարարել էր, թե «ինքնավար Սյունիքի սահմաններն են նախկին Զանգեզուրի սահմանները»:

Այդ այդպես լինելով հանդերձ, Կարմիր բանակը, որ փաստորեն դրված էր Ադրբեջանի կառավարության տրամադրության տակ, շարունակում էր Զանգեզուրը համարել Ադրբեջան, և նրա նկատմամբ հետապնդել նվաճողական քաղաքականություն:

«Հաշտության» դիմումները Կարմիր բանակի կողմից շարունակվում էին:

1920, Նոյեմբեր 26-ին, Սեմյոնովը առաջարկում էր՝ 1- «դադարեցնել ռազմական գործողությունները, և դիմել բանակցությունների, 2- բանակցություններ վարելու համար ուղարկել ներկայացուցիչներ Զաբուղ գյուղը, ուր ձեր համաձայնությունը ստանալուց հետո կգան ՌՍՖՍՀ Կարմիր բանակի ներկայացուցիչները»:

1921, Հունվարի 22-ին, N բրիգադայի հրամանատար Սեմյոնովը գրում էր ինքնավար՝ Սյունիքի կառավարությանը. «Հետևելով իմ գաղափարներին, ես առաջարկում եմ ձեզ, դադարեցնել ամեն տեսակի ռազմագործողություններ, կապ հաստատել մեզ հետ և փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու»:*

1921, Հունվարի մեջ, Սյունիք է ժամանում Կարմիր բանակի կողմից ուղարկված Գր.Վարդանյանի պատվիրակությունը,[69] բերելով իր հետ հետևյալ առաջարկությունները՝ 1-դադարեցնել ապստամբական կռիվները Ղարաբաղում, 2-Սյունիքը հայտարարել խորհրդային,

* Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

* Լեռնահայաստանի զինվորական շտաբի արխիվ:

3-ընդունել 11րդ Կարմիր բանակի հրամանատարությունը (եթե ցանկանայի)»:

Այդ պատգամավորությունը իր հետ բերել էր մի գրություն Դրոյից, որի մեջ, ի միջի այլոց, գրված է. «Վերջին րոպեին, պետության գլուխը անցած դաշնակ կուսակցության պատասխանատու ընկերները, Նոյեմբերի 26-ի ժողովում,[70] խոշոր մեծամասնությամբ որոշեցին ընդունել Ռուսաստանի օրիենտացիան: Հայաստանը հայտարարվեց խորհրդային, հիմնված այն համոզմունքի վրա, որ միայն հեղափոխական Ռուսաստանը կզգա անկեղծ կերպով պաշտպանելու հայ աշխատավորության շահերը: Ներկայումս Մոսկվայում հավաքվում է կոնֆերենցիա, որտեղ պետք է լուծվի Հայաստանի սահմանների խնդիրը, Ռուսաստանի, Տաճկաստանի և Հայաստանի մասնակցությամբ»...[71]

Այս գրությամբ ևս - այս անգամ Դրոյի միջոցով - կառաջարկվեր «Սյունիքն անմիջապես հայտարարել խորհրդային»:

1921, Հունվարի 22-ին, Շուշի քաղաքի և նրա շրջակայքի կայազորի պետ և զինվորական կոմիսար Պոտեշինի ստորագրությամբ, կարմիր բանբերների ձեռքով ստացվել է հետևյալ գրությունը. «Անհրաժեշտ է վերջ դնել բոլոր ապստամբություններին և վերահաստատել կապ մեզ հետ: Եթե ցանկանում եք ունենալ բարեկամական հարաբերություններ և կապվել մեզ հետ՝ հայտնեցեք գրաբերիս միջոցով:

Շուշի-Գորիս հեռագրային կապը կարող եմ վերականգնել տալ»:

Վերջապես, 1921, Փետրվար 15-ին «XI Կարմիր բանակի Զինվորահեղափոխական խորհրդի և սովետական գերագույն իշխանության կողմից լիազորված» Հեկկերը պատասխանում էր «քաղաքացի Նժդեհին և քաղաքացի Տեր Մինասյանին». «... Դուք մեղադրվում եք մեզ Կարսն ու Ալեքսանդրապոլը գրավելու խնդրի մեջ որպես թուրքերի արշավանքին օժանդակող»:

Խորհրդային իշխանությանն ուղղած իմ այդ ծանր մեղադրանքը ջրելու նպատակով, Հեկկերը դիմել է ծիծաղելի բացատրությունների, և կրկնել կարմիրների հին հանկերգը՝ «Զանգեզուրը Հայաստանի հետ միացնելու պայմանները ճշտությամբ գծելու համար խնդրում եմ ձեզանից որևէ մեկին ուղարկել Շուշի, ուր ես կսպասեմ Ձեր գալստյան»:

Ինչպես տեսաք, Հեկկերը խոսում է ոչ թե միայն Կարմիր բանակի այլև՝ սովետական գերագույն իշխանության անունից:

Իր այդ երկարապատում գրության մեջ նա, հանուն Կարմիր բանակի զորահրամանատարության և Մոսկվայի, խոստովանում է, որ «Զանգեզուրում, հիրավի, տեղի է ունեցել մի ամոթալի դեպք, որի համար մենք մեզ չենք գովում: Խոսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Զանգեզուրով Քեմալի մոտ:

Որ մենք վճռականորեն հաշվեհարդարի ենթարկեցինք այդ դեպքը՝ սրան ապացույց կարող է ծառայել. զորաբաժնի պետի հեռացումն իր պաշտոնից: Ուրիշ որևէ գործի մեջ, թերևս. մեզ վրա լուրջ մեղադրանք բարդել չի կարելի՝»:

Կանգ առնենք. կբավեն վկայությունները:

Կողք-կողքի դնելով բոլշևիկ զորականներից և քաղաքական գործիչներից ստացված պաշտոնագրերը, կարելի է հանգել մի հատիկ անսխալ եզրակացության. այն է, որ բոլշևիկ ղեկավարների աստիճանի հետ, որպես օրենք, բարձրանում է և իրենց մաքիավելիականության աստիճանը:

Սովետական գերագույն իշխանության անունից խոսող Զինվորահեղափոխական խորհրդի անդամը «գերագույն» լրբությամբ թուրքական գնդի ներկայությունը Զանգեզուրում ճգնում էր արդարացնել «ուրիշ ճամբա չկար»ով:

Ծիծաղ է շարժում Հեկկերի այն պնդումը, թե թուրքական գնդի հետ կապված «ինցիդենտ»ը հաշվեհարդարի է ենթարկել Բաքուն: Իրողությունը այն է, որ այդ զորամասի երեք քառորդը, ինչպես և իր հրամանատար Զավալ փաշային, պատմական Ուչքափալարում, դաժան ու արյունալի հաշվեհարդարի ենթարկեց Սյունիքի հաղթական սուրը:

Իր այդ գրության մեջ, Մոսկվայի ներկայացուցիչը ասել է և հետևյալը. «Ձեր ուշադրությունն եմ դարձնում այն անհանդուրժելի վերաբերմունքի վրա, որ սյունեցիները ցույց են տվել մեր բանագնացներին:

Կարմիր զինվորներին հարց ու փորձ են արել սպառնալիքի ազդեցության տակ. մեկից էլ վերցրել են նրա ոտի փաթաթանները»:

Կարդա՛նք, կարդա՛նք մեկ էլ, յոթն անգամ, այդ հատվածը՝ ճանաչելու համար սովետ իշխանությունը, որին մի հատիկ զինվորի «ոտի փաթաթաններ»ը ավելի պիտի զբաղեցնեին, քան թաթարների և քեմալականների կողմից գրավված հայկական հողամասերը, քան Հայաստան երկիրը:

Ընթերցո՛ղ, այժմ կդժվարանա՞ս ասել, թե ո՞րն է ավելի շնա՛կան, Եվրոպայի այն ծանոթ դիվանագե՞տը, որ չուզեց իր մի զինվորի ոսկորները փոխել Հայաստանի հետ, թե՞ թրքացեղ Լենինը, որին իր մի զինվորի փաթաթանները ավելի զբաղեցրին, քան մարդկության կողմից այնքան անիրավված մեր ցեղի գոյության պրոբլեմը:

Այսպես, շարժանկարի արագությամբ իրար էին հաջորդում պատվիրակությունները, բանագնացներն ու պաշտոնագրերը:

Սակայն, այդ չէր խանգարում, որ բանակցության ընթացքում իսկ, մթության մեջ շարունակեր գործել բոլշևիկյան մաքիավելիականությունը:

Անցողակի ասեմ և այն, որ Կարմիր բանակի քաղաքական բաժինը կատարում էր նաև՝ քեմալական պրոպագանդիստի դեր:

Զանգեզուրի և Ղարաբաղի գյուղացիության ուղղած իր մի կոչի մեջ* նա ասում է. «Միևնույն ժամանակ Քեմալն աշխատում է իր բանակը միացնել Ռուսաստանի և Ադրբեջանի Կարմիր բանակներին, որպեսզի ընդհանուր ուժերով ջախջախենք անգլիական, ֆրանսիական և մյուս՝ Արևելքը ճնշող կապիտալիստներին»...

Նույն կոչի մեջ կկարդաք և՝ այս տողերը. «Ինչո՞ւ դաշնակներն ատում են Քեմալին և Կարմիր բանակին: - Որովհետև մեր բանակն ու Քեմալը բոլոր ազգերի աշխատավորության համար ազատություն են բերում, ազատություն՝ բուրժուազիայի լծից: Վա՛յ նրան՝ ով սուր կբարձրացնի աշխատավորական հանրապետության դեմ»:

Այդ կարմիր «Վա՛յ»ը ուղղված էր զարկող Սյունիքի հասցեին: «Աշխատավորական հանրապետություն» ասելով, Կարմիր բանակը հասկանում էր Ադրբեջանը, իսկ Ադրբեջան ասելով՝ նաև՝ Զանգեզուրը:

Եվ այս բոլորից հետո, ռուս և քեմալական ուժերը - երևի իրենց ճամբան կորցնելով - պիտի մտնեին Հայաստան և, եվրոպական կապիտալիզմի փոխարեն, պիտի ջախջախեին Հայաստանի մանուկ անկախությունը:

Կարմիր բանակի հրամանատարությունը կատարում էր նաև պրովոկատորի դեր:

Այն օրերին, երբ դա «բարեկամական» ձեռք էր մեկնել մեզ, երբ պաշտոնապես և այնքան հաճախակի դիմումներ էր կատարում Սյունյաց կառավարությանը, հայ գյուղացիությանն ուղղած իր մի թռուցիկի մեջ սպառնում էր՝ «մաքրել Զանգեզուրն ու Ղարաբաղը, եթե ապստամբները չհրաժարվեն ավերումներից և թուրքական կոտորածից»:**

Այսպես, բոլշևիկյան արտառոց տրամաբանությունը, «ազգայնական ավերումներ ու թուրքական կոտորած» էր անվանում մեր սրբազան ինքնապաշտպանությունը, որ առաջ էր տարվում հայրենի երկնքի տակ:

Նման պրովակացիաներով թաթար Բաքուն պարբերաբար գրգռում էր Կարմիր բանակը լեռնահայության դեմ:

Կարմիր զորահրամանատարությունը երևան եկավ նաև՝ քաղաքական շանտաժիստի դերում:

«Ներկա րոպեին, - գրում էր ինձ 28-րդ կարմիր զորաբաժնի պետը, - ռուսական սովետական կառավարությունը միջնորդի դեր է

---

* «Կանգնի՛ր, աշխատավո՛ր»:

** «Ամեն մի ապստամբի ուշադրության»:

կատարում՝ բանակցություններ վարելով Հայաստանի և տաճիկ հեղափոխական զորքերի միջև:

Մի՛ խանգարեք այդ հաշտության գործը»:*

Նույն օրերին, միևնույն իմաստով, ինձ գրում էին Դրոյի ստորագրությամբ՝ «քանի դեռ Զանգեզուրը չի ճանաչել խորհրդային իշխանությունը՝ դեռ կասկածով պիտի վերաբերվեն Հայաստանին»...

Այդ միևնույն գրության մեջ կարդում ենք նաև՝ հետևյալը. «Զանգեզուրի բռնած դիրքը «կոզեր» է տալիս տաճիկների ձեռքը՝ չհեռացնելու իրենց զորքերը մեր երկրից»:

Իսկ իմ դեմ գործող ծանոթ զորաբաժնի զինվորական կոմիսարը, իր համար 21 պաշտոնագրի մեջ, վրան բաց կերպով սպառնում էր ինձ. «Առաջարկում եմ 48 ժամվա ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած հիվանդ, վիրավոր և Հոկտեմբեր 15-ից կռիվներում, գերի ընկած զինվորներին, Գորիսում մնացած բոլոր գույքն ու ռազմամթերքը: Նաև՝ հիշյալ ժամանակամիջոցում հեռացնել Զանգեզուրից կանոնավոր զորամասերը:**

Հակառակ պարագայում, ռուս սովետական կառավարությունը կհրաժարվի Հայաստանի և Տաճկաստանի հեղափոխական զորքերի միջև կնքվող հաշտության միջնորդությունից. Սպասում եմ պատասխանի»:

Այսպես, առանց դիվանագիտական փափկամտության իսկ, XI կարմիր զորահրամանատարությունը - որի նյութական և հոգևոր ողջ մեխանիզմը գտնվում էր թաթար Նարիմանովի ձեռքում - սպառնում էր ինձ՝ հասկացնելով, որ եթե վար չդնեմ զենքս՝ թուրք բանակը կքաշեն, կբերեն Երևան:

Ճանաչում էի, ճանաչում էի խորհրդային մաքիավելիական իշխանությունը, և նրա բոլոր սպառնական, թե կեղծ բարեկամական դիմումներին պատասխանում. «Սյունիքը խորհրդային իշխանության առջև կբանա իր դռները, երբ՝ 1) Զանգեզուրը կհայտարարվի Հայաստանի անբաժան մասը, 2) թուրքական զորքերը կհեռացվեն Ալեքսանդրապոլից, 3) հայ մտավորականությունը ազատ կարձակվի բանտերից, և 4) աքսորված հայ սպայությունը կվերադարձվի Հայաստան»:

Այս էր իմ և Սյունյաց ժողովրդի անփոփոխ պատասխանը - այդ օրերի մեր ազգային կատեխեզիսը:

Տարբեր տեսակետ չուներ նաև Գ.Տեր Մինասյանը, որն այսօր, 15 տարի հետո, խորհրդային կոչված դիվային իշխանության դատն է փաստաբանում, առանց անդրադառնալու, թե չարագործին պաշտպա-

---

* 1920, 26 Նոյեմբեր (ծանոթ. հեղ.):

** Զանգեզուրում կանոնավոր զորամասեր չկային:

նողը բարոյապես իր վրա է առնում նրա կատարած բոլոր չարագործությունները:

Ահա՛, ընթերցո՛ղ, տարրական մարդկայնությունից, ինչպես և քաղաքական բարոյականից զուրկ, թուրքի բարեկամ մեր թշնամին - բոլշևիկների իսկ որակումով՝ «Նե՛ռը», որի հետ չափվեց Սյունիքը:

VI

«Եվ առջևներս դժոխք»
ԵՂԻՇԵ

Այժմ տեսնենք, թե ինչ էր կատարվում դժբախտ Հայաստանում:

- Ա՛յն, ինչ որ իրերի երկաթե տրամաբանությամբ պիտի կատարեին երկու գործոններ՝ հայ համայնավարի քաղաքական տգիտությունը և նրա դասակարգային կույր թշնամանքը:

Վա՛յ այն երկրին, ուր ընկերային հեղափոխությունը ղեկավարվում է տգետ և մոլի բանամարտիկների կողմից:

Դեռ խոր ճշմարտություն է շնչում Պոլիվիի դասական խոսքը կարթագենացիների մասին. «Քաղաքական ազատությունը ու հոգևոր կուրությունը բացարձակորեն անհարիր բաներ են»:

Քաղաքականապես կույր և անբարո հայ բոլշևիկները մեր թշվառ հայրենիքում ամենայն ճշտությամբ կրկնեցին Ռուսիան՝ իր ընկերային բոլոր տեսակի սարսափներով ու այլանդակություններով:

«Հեղափոխությունը իր թշնամիների հետ չի վիճում, ոչնչացնում է նրանց»,- այսպես էին տրամաբանում բոլշևիզմի հայ գործակալները:

Իբրև օտարի կենդանի արձագանքը, օտարի հավատով զինված՝ բոլշևիզմի հայ լակոտները փորձում էին միորեն, և ընդմիշտ, տապանել հայ ժողովրդի հոգեկան աշխարհը, առանց գիտակցելու, թե քաղաքականության մեջ տեսակի խնդիրները ստանում են առժամյա լուծում, թե բոլշևիզմն էլ որպես սոցիալական երևույթ, հավիտենական չէ, թե նոր մարդն ու հասարակարգը չեն ստեղծվում միորեն, թե չի կարելի հրամանագրերով ժողովրդին կյանքի նոր ձևեր պարտադրել, սեղմ ասած՝ թե բոլշևիզմի հրամցրած լուծումն էլ վերջնական չէ, և չի կարող լինել:

Հայ բոլշևիկները Հայաստանում չուշացան հաստատելու Լենինի խոսքը* թե՝ «ծախ համայնավարները մտածել չգիտեն»:

---

* «Մեր օրերի ամենագլխավոր խնդիրը», Լենին:

Մեր «ծախ»-երը, որոնք Հայաստանի խորհրդայնացումից շատ առաջ փայտե ձի էին նստել հանուն համաշխարհային հեղափոխության՝ իրենց տիրապետության օրով մեր երկիրը վերածեցին մի կատարյալ ձիարշավարանի:

«Նրանք,- երևանյան համայնավարների մասին ասում է Կասյանը,[72]- ձգտում էին կուրորեն զարդարել սոցիալական ստոր միջավայրը անհամեմատ բարձր միջավայրի փետուրներով», այսինքն՝ ամենայն տգիտությամբ շփոթում էին Հայաստանը - ինա՛ «ստոր միջավայրը» Ռուսաստանի - «անհամեմատորեն բարձր միջավայր»-ի հետ:

«Շատ էին մեր սխալներն ու խանդի վատնումը,- խոստովանում է բոլշևիկ մտավորականը,- մանավանդ որ մեր դոքտրինյորները չէին կարողանում հաշվի առնել իրականությունը»:

Ըստ այդ վերջինի՝ Երևանի բոլշևիկները բռնված էին «գերհեղափոխական քոր ու եռով», և կազմում էին ղեկավարության մեծամասնությունը:

Հայ բոլշևիկներն աշխատում էին Հայաստանում արհեստական կերպով «հեղափոխական տենդ» ստեղծել:

Նրանք չէին ուզում հաշվի առնել մեր երկրի իրական պայմանները, մեր «ազգային ուրույնը» - ասենք Լենինի ոճով:

Աթարբեկյանի[73] հոգեկից Ավիսին[74] է պատկանում հետևյալ բանաձևը. «Հայաստանում չկա՛ ազգային հարց, Հայաստանում կա միայն սոցիալական հարց»:

Այդ զույգ քաղաքական հոգեհիվանդները իրենց արարքներով մեծապես նպաստեցին սպանության ու հալածանքների փսիխոզի ստեղծմանը:

Այլևս եղածը բոլշևիզմ չէր, այլ՝ խելագար բլանկիզմ, ավելին՝ քաղաքական և ընկերային խուլիգանություն:

Լենինականության հայ առաքյալները աշխատում էին Հայաստանում կյանքի կոչել «Նոր» հայը՝ անաստված, անընտանիք, անհայրենիք:

Պարզ են այդ երևույթի պատճառները:

Ապստամբված ամեն մի ստրուկ հեշտությամբ դառնում է ծայրահեղապաշտ ու բարբարոս:

Հայ բոլշևիկների հոգևոր ստրկությամբ պիտի բացատրել ոչ թե միայն նրանց բլանկիզմը, այլև՝ արտառոց սադիզմն ու ամոթալի թրքասիրությունը:

Գրո՛հ՝ երկնքի դեմ, բարոյականի դեմ, ազգայնական ոգու դեմ:

«Երբ հեղափոխության մեծ ներշնչողը՝ մեր ընկեր Լենինը արտասահմանից Ռուսաստան վերադարձավ, իր առաջին խոսքն եղավ՝ կեցցե՛ քաղաքացիական կռիվը:

Այդ կռիվը կկրթի մեր հոգին, մեր միտքը:

Զոհերն անխուսափելի են - ցավել դրանց համար չարժի, քանի որ գլխավորը հեղափոխության հաղթանակն է:

Քաղաքացիական կռիվը - դա այն է, ինչ- որ ասում են, թե Նեռն եկել է աշխարհ:

Քաղաքացիական կռիվը մի Նեռ է՝ չար, կործանիչ ոգի»,[*] - այսպես էր բարբաջում կարմիր հայը:

Այսպես, հայ բոլշևիկը, թաթարը և թուրքը շարունակում էին գրգռել կարմիր Նեռը՝ Հայաստանի և հայության դեմ:

Եվ այդ օրերին, որպես հոգեբանական արձագանք, XI Կարմիր բանակի պաշտոնական օրգանը հրատարակում էր ՀՅԴ-ի մահավճիռը, տրված Բաքու, Զինվորահեղափոխական խորհրդի կողմից.[**] «Կարմիր բանակը գլխովին ոչնչացմամբ կհատուցի դաշնակ կոնտր-հեղափոխության»:

Մի կուսակցություն, ինչպիսին է կոմունիստականը, որի հայ անդամների համար Հայաստանը հայրենիք չէր, այլ՝ հեղափոխական խելահեղությունների մի կրկես, որի համար «ժողովուրդը ոչինչ է, իսկ դասակարգն՝ ամեն ինչ», որի համար «պատմական անհրաժեշտություն է դասակարգային կռվի խորացումը», որը քաղաքացիական կռիվը համարում է իր «հոգու և մտքի կրթիչ»-ը, և քաղաքացիական կռիվ ասելով հասկանում էր «Նեռը՝ չար և կործանիչ», նման մի կուսակցություն, որը ճանաչում է միայն և միմիայն ջունգլիների օրենքն ու վայրագությունը, չէր կարող բավականանալ մեր հայրենիքի անարյուն խորհրդայնացմամբ:

Դա պիտի հրահրեր, դավադրաբար պիտի ստեղծեր քաղաքացիական կռիվը՝ իր չարքերը դասակարգայնորեն կրթելու և իր «Նեռ»-ային չարությունը հագեցնելու համար:

Գեղեռնները ժամանակին համաձայնվում էին ինձ հետ, երբ խոր ցավով դիտել էի տալիս, թե Հայաստանի դժբախտությունը նրանում է, որ բոլշևիկները Հայաստան մտան առանց մի հատիկ գնդակ արձակելու:

Այո՛, հազար անգամ այո՛, եթե Արարատյան դաշտը առաջին անգամ տեղի տար կռվով, նա հետագային ավելի նվազ արյուն կտար բոլշևիզմի գազանին:

Դժբախտաբար, թուրք զորքերի ներկայությունը Հայաստանում հարկադրեց օրվա նախասովետական կառավարության՝ երկրի ղեկը առանց կռվի հանձնելու բոլշևիկներին, որով զրկեց վերջիններին

---

[*] «Զանգեզուրի կոմունիստ», 1926, Նոյեմբեր 7, թիվ 1:

[**] «Կարմիր ավանգարդ», 1920, հոկտեմբեր 20:

իրենց «հեղափոխական լիցքն ու լարվածությունը» դատարկելու կարելիությունից:

Հայաստանը «նվաճող» բոլշևիկների համար դեռ կար ու կմնար *արյան պահանջը*, որ նրանց պիտի մղեր քաղաքացիական կռվի:

Պետք էր ժողովրդին զգացնել տալ, որ «Նեռն է աշխարհ եկել»:

Եվ այդ զգաց Հայաստանը: Եվ եթե բոլշևիկյան արնոտ տապարը գործի չդրվեց մեր երկրի խորհրդայնացման հենց առաջին օրը՝ դա ուներ իր լուրջ պատճառը:

Կար Սյունիքը, որի «քթից դեռ ծուխ էր բարձրանում» - կար բոլշևիզմ կոչված գաղտնի հաղթական զսպիչը:

Ահա այդ մասին Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի 1921, Հունվար 29 թվակիր հեռագիր-հրամանը, տրված Դարալագյազի զինկոմին և գավհեղկոմին. *«Քանի դեռ չի գրավված Զանգեզուրը, Դարալագյազում, որը կազմում է չգրավված երկրամասի թիկունքը, վարել ամենամեղմ քաղաքականություն.*

Խստիվ արգելվում է աջից, ձախից ձերբակալումներն ու բռնագրավումները: Դեպի քաղաքացիները ցույց տալ կոռեկտ վերաբերմունք:

Ձերբակալել միայն նրանց, որոնք բացահայտ կերպով պրոպագանդ են վարում իշխանության դեմ:

Այն պաշտոնատար անձինք, որոնք կխուսափեն կատարել սույն հրամանը, կենթարկվեն հեղափոխական ամենախիստ պատասխանատվության»:[*]

Կասյանի ներքին մարդը ճանաչելու համար կբավի իր այդ մի հատիկ սադայելական հրամանը:

Ինչ- որ իշխանավորն է, այն էլ՝ իր հրամանը.

Կարմիր իշխանավորը իր պաշտոնատարներին հանձնարարում է «ամենամեղմ» քաղաքականություն, բայց դա կատարում է ոչ par principe - ոչ սկզբունքորեն:

Նա արգելում է «ձերբակալություններ ու բռնագրավումներ», բայց ոչ ընդհանրապես, և ոչ ընդմիշտ:

Նա արգելում է բարբարոսությունը ոչ թե նրա համար, որ դա մարդկորեն անթույլատրելի է համարում, այլ՝ որովհետև տվյալ պահին օգտակար ու նպատակահարմար չի գտնում դա:

Նա արգելում է բարբարոսությունը, որոշ վայրկյանի որոշ միջավայրի համար:

Նա «ամենախիստ պատասխանատվությամբ» է սպառնում նրանց, որոնք խուսափում են կատարել Երևանի կամքը, բայց սպառ-

---

[*] Լեռնահայաստանի զինվորական գլխավոր շտաբ:

նալիքը վերաբերում է այսօրվան միայն - քանի կա մարտնչող Սյունիքը, բայց ոչ և վաղվան - երբ Սյունիքը խաբեությամբ զինաթափ լինի:

Դա ասել է - սպանի՛ր, ուր և երբ կարող ես սպանություն կատարել անպատիժ կերպով:

Բռնագրավի՛ր, երբ և ուր բազուկդ բռնող ու զինաթափող չկա:

Կարող ես անպարկեշտ լինել, հալածել, անիրավել, հարվածել, երբ և ուր վախ ու պատասխանատվություն չկա, օրինակ՝ Երևանում:

Բայց ոչ և Սյունիքում, ուր անպարկեշտին, բռնագրավողին ու սպանողին պատուհասող բազուկ կա:

Ահա՛ Կասյանի հոգեբանության լեզուն:

Երբ այս է ձախության հիվանդությունից զերծ նախարարապետի բարոյականը, կմնա երևակայել ձախությամբ տառապող լակոտների քաղաքական հրեշությունը, որին զոհ գնացին մեր լուսապսակ Համազասպները,[75] Խորենիները, Սաքոները:

Լենինի՝ իր հայ ճտերին չափավորություն հանձնարարող ծանոթ երկու նամակները ուշացած էին:

Այժմ տեսնենք, թե կարմիր Երևանում ի՞նչ էին որոճում ինքնավար Սյունիքի մասին:

Լսենք Ս. Վրացյանին.

«Երևանի բոլշևիկներին չափազանց զբաղեցնում էր Զանգեզուրը: Օր չէր անցնում, որ Զանգեզուրի մասին չգրվեր «Կոմունիստ»-ում և չխոսվեր միտինգների մեջ: Խոսվում էր նույնպես, թե XI բանակը Բաքվից զինվորական գործողություններ է պատրաստում Զանգեզուրի դեմ, իսկ մինչ այդ փորձում էին խաղաղ ճանապարհով ընկճելու զանգեզուրցիներին:

«Ինձ հայտնի էր, որ Դրոն էլ Բաքվից քայլեր էր արել զանգեզուրցիներին ընդունել տալու բոլշևիկյան կարգերը: Բոլշևիկներից ոմանք էլ ուզում էին օգտվել նաև ոչ-բոլշևիկ մտավորականների աջակցությունից: Եվ այս միտքը, ինչպես ասում էին, պաշտպանում էին Կաւ'ամը և արտաքին գործերի կոմիսար Մռավյանը: Զանգեզուր ուղարկելու համար տրվում էին Դ.Անանունի, Վ.Մինախորյանի[76] և իմ անունները:

Ինձ անպաշտոն կերպով ուղղված հարցումին՝ ես տվի սկզբունքային համաձայնություն: Սակայն, իբրև նախապայման Զանգեզուր գնալու, ես անհրաժեշտ էի համարում, որ Հայաստանի Հեղկոմը երաշխավորի տալ զանգեզուրցիներին տեղական ինքնավարություն, և վերջ դնի հալածանքներին Հայաստանում: Ինձ հաղորդեցին, որ Կասյանը ընդունելի է համարում այս պայմանները, բայց հանդիպում է խիստ դիմադրության Աթարբեկյանի և մանավանդ Ավիսի կողմից, որը պահանջել է Զանգեզուրը զենքով գրավել»:

Զանգեզուրի խնդիրը մասնավորապես կատաղեցրել էր Աթարբեկյանին:

«Փետրվար 4-ին ես արդեն Աթարբեկյանի մոտ էի,- ասում է Վրացյանը: Ինքը, իբրև համառուսական խորհուրդների լիազոր ներկայացուցիչ, պարտականություն ունի կռվելու ամեն կարգի «հակահեղափոխության» դեմ: Խորհրդային իշխանության համար հերթական խնդիր է «Զանգեզուրյան հակահեղափոխության» վերացումը: Իհարկե, Կարմիր բանակը այնքան ուժ ունի, որ արյան մեջ կարող է խեղդել Զանգեզուրը, բայց իր ցանկությունն է հարցը խաղաղ միջոցներով լուծել: Մինչև գարուն, երբ XI բանակը շարժման մեջ է դրվելու, պետք է սպառել բոլոր խաղաղ միջոցները: Իրենց շրջանում խոսք է եղել նաև իմ ուժերից օգտվելու մասին, բայց նախքան պաշտոնական առաջարկություն անելը ինքը կկամենար անձամբ խոսել հետս և շոշափել իմ տեսակետները:

«Ես պատասխանեցի, թե ոչ թե ինքս եմ առաջարկել իմ ծառայությունը, այլ ընդառաջ եմ գնացել ինձ տրված առաջարկության: Ստեղծված հանգամանքներում Հայաստանը պետք է հենվի խորհուրդների վրա... Քանի Ադրբեջանն ու Հայաստանը խորհրդային են, Զանգեզուրը չի կարող մնալ թշնամական վիճակում... Հարկավոր է խաղաղ եղանակով լուծել Զանգեզուրի հարցը: Այդ նպատակով պետք է Զանգեզուր ուղարկել պաշտոնական մի պատվիրակություն, որին կարող եմ մասնակցել և՛ ես: Պատվիրակության մեջ անպայման պետք է մտնի և՛ բոլշևիկ ներկայացուցիչ: Եվ որպեսզի պատվիրակությունը հաջողություն ունենա, անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական նախապայմաններ, այսինքն՝ վերջ տալ Հայաստանում կատարվող բռնություններին ու բանտարկություններին...: Մասնավորապես,- ավելացնում է Վրացյանը,- *բոլշևիկները պետք է հանձն առնեն մինչև մեր վերադարձը Զանգեզուրից ոչ մի սպանություն չկատարել...*

Աթարբեկյանը իմ առաջին առարկությունները ընդունեց հիմնավոր, և համաձայնվեց, որ պաշտոնական պատվիրակություն ուղարկվի, բայց տատանվում էր մեջը բոլշևիկ դնել, վախենալով, որ զանգեզուրցիները կսպանեն նրան»:

«Դուք՝,- Վրացյանի խոսքը կտրում է Աթարբեկյանը,- կասեք Զանգեզուրում, որ ինչ համաձայնություն որ կնքվի Հայաստանի Հեղկոմի և զանգեզուրցիների միջև, ես եմ երաշխավորում. ես՝ համառուսական խորհուրդների լիազոր ներկայացուցիչս»:*

Վրացյանի մեջբերած փոխասացությունից պարզվում է նաև՛ այն, որ Աթարբեկյանը, առանց քաշվելու համառուսական խորհուրդ-

* «Հայրենիք», 1923, թիվ 4:

ների «լիազոր»-ի իր հանգամանքից, առաջարկել է Վրացյանին՝ «այնպես անել, որ իբրև թե բոլշևիկներից գաղտնի փախել է Զանգեզուր»:

Տեսնո՞ւմ եք, որ Հոկտեմբերյան հեղափոխության հայանուն մարդակերն էլ զերծ չէ մաքիավելիականությունից:

Այսպես, Չեկան գործում էր:

Երևանում այլևս արյուն կհոսեր:

Լուրեր էին հասնում, թե այսօր-վաղը պիտի գնդակահարվեն Շանթը,[77] Աղբալյանը,[78] Հայր Աբրահամը [79] և ուրիշները:

Այս էր իրերի դրությունը Հայաստանում:

Սյունիքը, թեև ինքն էր անհավասար կռվի մեջ, չէր կարող անտարբեր մնալ: Պետք էր աճապարել, պետք էր կանխել հայ մտավորականության «գլխովին ոչնչացումը» հետապնդող Աթարբեկյան կոչված հրեշին:

Սյունիքը խորապես կգիտակցեր այն պատմական անելիքի մեծությունը, որ քաղաքական մոմենտը դրել էր իր առջև:

Պետք էր աճապարել, պետք էր հետ մղել դեպի հայ մտավորականությունը երկարող մահաբեր բազուկը:

Այդ նպատակով ահա՛ - Երևանի համար դեպի Սյունիք փրկության մի դուռ բանալու նպատակով - իմ զորքերը գրավեցին Վայոց ձորը, իջան Նոր Բայազետ, իրենց վրա քաշեցին, զբաղեցրին բոլշևիկյան ուժերի մի մասը, և, այսպիսով, կարելիություն ընձեռնեցին Երևանի ապստամբ ուժերին՝ բռնելու նահանջի ճամբան և քաշվելու Սյունիք:

* * *

Հայաստանի երկրորդ անկումով, Սյունիքի դրությունը է՛լ ավելի կծանրանար: Կծանրանար, սակայն, նաև՛ պատմության կողմից մեր ուսերին դրված գերագույն պարտականությունը:

Թշնամին, խեղդելով Հայաստանի համաժողովրդային ըմբոստացումը, կփութար անօրինակ աղետով պսակել երևանյան «Նահանջ բյուրոց»-ը:

Ի՛նչ խոսք, որ հաջողության դեպքում, բոլշևիկները արժեքազրկած պիտի լինեին Սյունիքի երկամյա հերոսականը: է՛լ ավելին. հաջողության դեպքում, նրանք պիտի թաղեին Սյունիքի՝ Հայաստանին միանալու հույսը:

Վայրկյանը գերագույն էր և պատասխանատու:

Իսկ նման վայրկյաններում, ամեն կարգի փոքրոգություն՝ դավաճանություն է հարազատ ժողովրդի հանդեպ:

Երբ մի երկրի աշխարհագրական թոքերի - ինչպիսին է Սյունյաց աշխարհը Հայաստանի համար - և նրա մտավորականության լինել-չլինելու խնդիրն է լուծվում, այլևս չի կարող խոսք լինել նորանոր զոհերի մասին: Մի ժողովուրդ, որ իր ընտրանին մահացու հարվածից

փրկելու համար չգիտի զոհեր տալ, կենսաբանորեն անբարոյական է, որ ասել է՝ ապրելու անարժան:

Սյունիքին - փա՛ռք իրեն - երբեք չպակասեց այդ բարձր բարոյականը:

Նա, թեև վիրավոր, բայց հաղթական, մնաց իր պատնեշի վրա նաև՛ մայր երկրի երկրորդ անկումից հետո:

Դա պահանջում էր ո՛չ թե միայն իր փառավոր հաղթանակների շարքը, այլև՝ Հայաստանի ապագան:

Եվ հենց այդ նպատակով, այդ ծանր օրերին, երբ Սյունյաց աշխարհով, հեղեղի պես, դեպի Արաքսը բազմահազար արարատյան գաղթականությունն էր հոսում, նա քաղաքական իմաստություն և արիություն ունեցավ հրավիրելու իր երկրորդ համագումարը:

VII

«1921 թ. Ապրիլ 26-ին,* հրավիրված ինքնավար Սյունիքի խորհրդարանի դիվանի, Տաթևի վանքում կայացավ Լեռնահայաստանի հայ ազգաբնակության արտակարգ համագումարը, ուր ներկա էին 64 գյուղերից 95 պատգամավորներ և սպարապետ Նժդեհը:

Կառավարության նախագահ Գ.Տեր Մինասյանը բանալով համագումարը, առաջարկում է ընտրել նախագահություն: Առաջարկված թեկնածուներից միաձայն նախագահ է ընտրվում պ. Ս.Մելիք-Յոլչյանը, ձայների ճնշող մեծամասնությամբ՝ փոխ-նախագահ բժ. Մինասյան, քարտուղարներ՝ Տ.Սազանդարյան և Վ.Վարդապետյան:

Նախագահը նիստը բաց հայտարարելով, բացատրում է ներկա համագումարի ավելի քան պատմական և եզակի նշանակությունը և Լեռնահայաստանի կատարելիք մեծ դերը:

Ապա խոսք է առնում Սպարապետ Նժդեհը:

Սպարապետի մանրամասն զեկուցումից հետո ժողովրդականները ավելորդ են համարում լսել գործադիր մարմինների և կառավարության վարիչների առանձին-առանձին զեկուցումները ու անցնում են օրակարգի խնդիրներին:

«Պարենավորման համար սպարապետը հայտնում է, որ մինչև նոր հունձը հնարավոր է Հայաստանի Հանրապետության կառավարության նյութական օգնությամբ հաց ծեռք բերել, և միաժամանակ, ըստ հնարավորության, աշխատել կազմակերպել պետական տրանսպորտը և ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականությունից:

Այս հայտարարությունը ընդունվում է միաձայն կերպով:

---

* Համագումարի արձանագրություններից:

Կառավարություն կազմելու ձևի առթիվ խոսք է հարուցվում և մի շարք ճառերից հետո հանգում են հետևեալ եզրակացության.

Քանի որ Սյունիք-Լեռնահայաստանի ամբողջ բախտը և հայ ազգաբնակության ֆիզիկական գոյությունը հավատացել և վստահել են Սպարապետին, որն իր ամբողջ գործունեությամբ միշտ էլ հանդես է եկել որպես մի անձնազոհ, տոկուն և նախանձախնդիր ղեկավար, ապագա ընտրվելիք կառավարության կազմը ևս վերապահել նրան:

Ձայների մեծամասնությամբ որոշվում է՝ 1. Ինքնավար Սյունիքը այսուհետև անվանել Լեռնահայաստան: 2. Կառավարության անդամները՝ նախարարներ: 3. Համագումարը հայտարարել որպես Լեռնահայաստանի խորհրդարան: 4. Կառավարություն կազմելու համար վարչապետ ընտրել պ. Սպարապետին:

Հարց է ծագում Սպարապետ Նժդեհին տալ զորավարի աստիճան: Խորհրդարան-համագումարը մտքերի և կարծիքների փոխանակությունից հետո միաձայն որոշում է պ. սպարապետին տալ զորավարի աստիճան և պարգևատրել նրան « Խուստուպյան արծիվ» երկաթե շքանշանով:

Մի ժամով տրվում է ընդմիջում, որից հետո կարդարցվում է ողջույնի հեռագիրը՝ ուղղված Լեռնահայաստանի Դավիթբեկյան զորքին և ղեկավարներին, հետևյալ բովանդակությամբ.

Համազանգեզուրյան Տաթևի 2-րդ խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անհաղթելի և տոկուն բանակի ռազմիկներին և լիահույս է, որ այդ անհաղթ բանակը, որ մինչև օրս իր փառապանծ հաղթանակներով աշխարհն է զարմացրել, այսուհետև էլ պատրաստ կլինի նոր հրաշքներ, նոր զարմանքներ ցուցադրելու քաղաքակիրթ աշխարհին, իր կատարյալ ու վերջնական հարվածը տալով հայ աշխատավորության թշնամիներին:

Կազմված է կառավարություն:

Մեր ինքնավար Սյունիքն այսուհետև կոչվելու է Լեռնահայաստան, որն իր քաջարի զորքով, իր անպարտ առյուծասիրտ մարտիկներով սպառնանք պետք է լինի մեր բոլոր թշնամիների համար:

Մեր ազատարար Սպարապետ Նժդեհին տրված է զորավարի տիտղոս և «Խուստուպյան արծիվ» շքանշան:

Այս սուրբ տաճարում նա ուխտեց և իր սրբազան խոսքն ասաց՝ Ձեզ հետ միասին, սև օրվա համար հայության բաժին համարված Սյունիքը դարձնել հայության վերածնության օրրան»:

* * *

Տաթևում իմ կողմից նշանակված կառավարությունը դեռ նոր էր վերադարձել Գորիս, երբ Գնդևազի ռազմաճակատի պետը հեռախոսեց, թե «Երևանից սահմանագլուխ են հասել մեր երկու հայտնի մտավորականներ Դավիթ Անանունը և Ա-Դօն. ու կուզեն տեսակցել Լեռնահայաստանի կառավարության հետ»:

Կարգադրեցի ընդունել:

Վերջինները հայտնեցին, թե Հայաստանից Հերհեր գյուղն է եկել Ա.Կարինյանը՝ [80] Հայաստանի խորհրդային իշխանության, իսկ Վ.Մելնիկովը՝ ռուս Կարմիր բանակի կողմից:

Նրանք եկել էին բանակցելու իմ կառավարության հետ:

Երևանից մեզ «խաղաղության համբույր» էին բերել:

Այդ օրերին խորհրդային մամուլի օրգանները գրում էին, թե Կարինյանի պատվիրակությունը հրահանգ ունի՝ Լեռնահայաստանի կառավարությանը հաղորդելու Լենինի երկու ծանոթ գրությունները, որոնցից մեկով քաղաքական ներում էր շնորհվում խորհրդային իշխանության հակառակորդներին, իսկ մյուսով հրավիրվում էր Զանգեզուրը միանալ Հայաստանին:

Մայիսի 6-ին, իմ կառավարությունը քննության առավ Երևանից եկած առաջարկը և իր կողմից բանակցելու նշանակեց իր պատգամավորությունը՝ ծանոթ Գ.Տեր Մինասյանի նախագահությամբ:

Երկու պատգամավորությունները իրար հանդիպեցին Ղալաջուղ գյուղում:

«Առաջին նիստը* կայացավ Մայիսի 12-ին, առավոտյան ժամը 10-ին:

Փոխադարձաբար լիազորությունները ստուգելուց հետո, փոխադարձ համաձայնությամբ որոշվում է նիստերի նախագահությունը տանել փոխնիփոխ, իսկ բանակցությունները վարվում են հայերեն լեզվով:

Առաջին նիստին նախագահ ընտրվում է Լեռնահայաստանի կառավարության պատվիրակության անդամ Գեդեոն Տեր Մինասյանը:

Նախագահ. Պաշտոնական նիստը հայտարարում եմ բացված: «Հայաստանի սովետական կառավարության ընկեր դելեգատնե՛ր, ողջունում եմ Հայաստանի սովետական կառավարության ներկայացուցիչների գալուստը Լեռնահայաստան: Հույս ունեմ, որ այս երկու դելեգացիաների խորհրդակցությունը հնար կտա հաստատելու մի այնպիսի փոխհարաբերություն, որ հնարավոր կլինի ստեղծել վերջնական խաղաղություն: Լեռնահայաստանը և մասնավորապես Զանգեզուրը իր աշխարհագրական դիրքով կամուրջն է հանդիսանում բոլոր անցումների, որոնք գալիս են անցնելու դեպի Մերձավոր Արևելք: Զանգեզուրը

---

* Արձանագրություն՝ Լեռնահայաստանի և Խորհրդային Հայաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչների բանակցություն, Ղալաջուղ. 1921թ. Մայիս:

իր հարևան երկրամասերի նկատմամբ ունի նաև ռազմագիտական խոշոր նշանակություն:

Ռուսական հեղափոխության ընթացքում մի քանի անգամ և մի քանի կողմից փորձեր են եղել տիրելու այդ լեռնաշխարհին: Առաջին անգամ անգլիական իմպերիալիզմի ներկայացուցիչներն Անդրկովկասում քանիցս ցանկացան և դիմեցին ակտիվ քայլերի հանձնելու Զանգեզուրը և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին, բայց Զանգեզուրի զինված գյուղացիությունը ընդդիմացավ ամենավճռական կերպով:

Դրանից հետո, Ադրբեջանի նացիոնալիստները քշեցին իրենց բանակները դեպի Զանգեզուր ու Ղարաբաղ և ամեն անգամ ջարդված նահանջեցին: 1919 թվին Ադրբեջանի կողմից եղավ վերջին փորձը, երբ 12 հազարանոց բանակով արշավեցին Զանգեզուր, բայց մեր զինված աշխատավորությունը, հենց Գորիսի պատերի տակ, ջարդեց նրանց: Երբ մի փառավոր օր Ադրբեջանը կարմրեց և դարձավ սովետական, այդ անվան տակ, և շահագործելով բոլշևիկյան լոզունգները, ռուսական կարմիր զորամասեր ուղարկեցին Զանգեզուր, որոնց հաջողվեց տիրել և ժամանակավորապես տեր դառնալ Զանգեզուրի մի մասին, բայց կռիվը շարունակվում էր Ղափանի լեռներում, որը հետզհետե ծավալվեց նորից: Ժողովուրդը տեր դարձավ իր երկրի մեծ մասին և ապա 1920թ. նոյեմբերյան ժողովրդական ընդհանուր ապստամբության հետևանքով եկվոր զորամասերը դուրս քշվեցին վերջնականապես Զանգեզուրի սահմաններից: Ընկեր պատգամավորնե՛ր, մեծամասնական զորամասերի հինգամսյա ներկայությունը Զանգեզուրում ո՛չ միայն ֆիզիկապես բռնացավ Զանգեզուրի հայ աշխատավորության կամքի վրա, այլև, բառիս իսկական իմաստով, տնտեսապես և կուլտուրապես քայքայեց ծայր աստիճան մեր գյուղացիությունը:

Եկվոր մեծամասնականների խոշոր խոստումները մնացին լոկ խոսքեր»...

Ահա՛ մի փոքրիկ քաղվածք այդ նիստերի երկուստեք հաստատված արձանագրություններից, որի մեջ արձանացած կտեսնենք *Տեր Միհնասյանի հակաբոլշևիկ կեցվածքը նաև՛ այդ օրերին:*

Նրա՝ Կարմիր բանակին վերագրած վայրագությունները դարերի ձեռքն իսկ պիտի չկարողանա քերել, սրբել մեր պատմության էջերից:

Դատախազի իր դերը արդարորեն կատարելուց հետո, նա իմ կառավարության անունից հաշտության նախապայմաններ է առաջարկել խորհրդային պատգամավորության, որոնց բնույթի մասին ընթերցողը կարող է գաղափար կազմել՝ աչքի անցկացնելով Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի հայտարարությունը՝ ուղղված Սյունյաց իշխանությանը:

Եռօրյա բանակցություններից հետո, Կարինյանի պատգամավորությունը վերադարձավ Երևան՝ իր կառավարությանը տանելով մեր կոնկրետ պահանջները:

Կարմիր պատվիրակության կողմից մեզ խոստացված «շուտափույթ պատասխան»-ի փոխարեն, Մայիսի վերջերին Սյունիք վերադարձավ ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյանը, որին տարի առաջ, Խոտանանից նահանջելիս, առևանգել էր կարմիր զորամասը:

Վերջինին տրված էր հետևյալ մանդատը. «Թուղթս ներկայացնող ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանյանը Խորհրդային Հայաստանի Հեղկոմի համաձայնությամբ մեկնում է Զանգեզուր՝ լեռներում և գյուղերում թաքնված գյուղացիներին և քաղաքացիներին համոզելու, որ վերադառնան իրենց տեղերը և զբաղվեն խաղաղ աշխատանքով:

Առաջարկվում է բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանության՝ արգելք չհարուցել քաղաքացի Ս.Մելիք-Ստեփանյանի ճամբին և ցույց տալ նրան ամեն տեսակ աջակցություն իր վրա առած առաքելությունը ի կատար ածելու համար:

Նախագահ Խորհրդային Հայաստանի զինվորահեղափոխական կոմիտեի՝ Ալ.Մյասնիկյան (Ալ.Մարտունի),
Արտաքին գործոց ժողկոմ՝ Մռավյան:

1921, 14 Մայիս, Երևան»:

* * *

Թող ընթերցողս զսպի իր զզվանքը և կողք-կողքի դնի Կարինյանի պատվիրակության և Մելիք-Ստեփանյանի տրված մանդատները՝ կարմիր իշխանության խարդախության չափը ճշտելու համար:

Առաջին պատվիրակությունը բազմանդամ է: Նա եկել է ոչ-բոլշևիկ միջնորդների հետ - Դավիթ Անանուն և Ա-Դո - որպեսզի իրեն ավելի հավատ ընծայվի:

Երկրորդը՝ միանձնյա է, որին, մեզ հասկանալի պատճառներով, խորհրդային իշխանությունը ազատել է Բաքվի բանտից, բերել է Երևան և այնտեղից որոշ առաքելությամբ ուղարկել Սյունիք:

Առաջին պատվիրակությունը գործ ուներ մի անկախ, խրոխտ ու հաղթական երկրի կառավարության հետ, որի բարեկամությունը կփնտրեր: Երկրորդը եկել է «համոզելու լեռներում թաքնվածներին, որ վերադառնան իրենց տեղերը»:

Կարմիր պատվիրակությունները ծնունդ կառնեին միևնույն նախաղբյուրից՝ Երևանից, Մյասնիկյանի կառավարությունից: Իսկ Երևանը մեզ կներկայանար երկերեսանի Յանուսի դեմքով:

Որի՞ն հավատար Լեռնահայաստանը:

Մայիսի 12-ին իմ և Երևանի պատվիրակությունները, ծունկ-ծնկի, բանակցել էին՝ սակարկելով Լենինի կամքն և Լեռնահայաստանի շահերը:

Մայիսի 15-ին Կարինյանի պատվիրակությունը, մեր պահանջները շալակած՝ վերադարձավ Երևան: Իսկ Մայիսի 14-ին, Երևանը, որ դեռ չգիտեր և չէր կարող գիտենալ, թե ինչով են վերջացել Սիսիանի բանակցությունները-որովհետև դեռ չէր լսել իր պատգամավորներին-ստորագրում էր Մելիք-Ստեփանյանի մանդատը, և նրան որոշ «առաքելությամբ» ուղարկում էր Լեռնահայաստան:

Վերջինը, որպես բնիկ սյունեցի, ծանոթանալով երկրի և ժողովրդի դրության հետ, «ՀՍՍՀ-ի ժողովրդական կոմիսարների խորհրդին*՝ կտեղեկագրեր.

«Այստեղ ես տեսնում եմ ժողովուրդ, կառավարություն և զորահրամանատարություն՝ միաբան:

Ամեն ինչ նորմալ է այստեղ:

Այստեղ չկան խաներ, բեկեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկա այն ամենը, որ տկարացնում է ժողովրդի ռազմական թափն ու ուժը: Ժողովրդի տրամադրությունը կատարելապես հեղափոխական է... Լեռնային ինժեներ՝ Ս.Մելիք-Ստեփանյան, 1921, 3 Հունիս»:

* * *

Այսպես սկսված՝ կշարունակվեին բանակցությունները: Եվ ոմանք կսպասեին, թե այս անգամ բոլշևիկները կհարգեն իրենց ստորագրությունը:

Սակայն, շատ շուտ պարզվեց, որ մեր գործը միայն Երևանի կառավարության հետ չէ, այլ՝ նաև՝ Կարմիր բանակի, որը ղեկավարվում էր թաթար Ադրբեջանի կամքով:

Հարգելով մեր պահանջները՝ խորհրդային իշխանությունը ստորագրած կլիներ Կարմիր բանակի պարտությունը. ահա՛ թե ինչու Երևանը ուշացնում էր իր պատասխանը:

Գիտեինք, որ *Կարմիր բանակի զորահրամանատարությունը մարտական ելք է փնտրում՝ իր զենքի պատիվը փրկելու համար.*

Մեզ համար գաղտնիք չէր և այն, որ Ավիս-Աթարբեկյան՝ «ծախությամբ հիվանդ» խմբակի ազդեցությունը Երևանում դեռ զգալի է, որ ծախերի դասակարգային կատաղախտը բուժելու սահմանված լենինյան զույգ նամակները չէին հասել իրենց նպատակին:

---

* Պատճենը՝ Լեռնահայաստանի կառավարության:

Մեզ ծանոթ էր նույնպես Մյասնիկյանի կառավարության և ռուս XI Կարմիր բանակի զորահրամանատարության միջև գոյություն ունեցող ներքին անհամակամությունը:

Պետք է հաստատագրել, որ այդ պարագան հաճախ մեծապես դժվարացրել էր թե՛ մեր և թե՛ Երևանի գործը:

Երևանին հղած մեր պահանջների պատասխանին կսպասեինք, երբ ստացվեց Հեղկոմի մեկ կոչը՝ ուղղված Լեռնահայաստան ապաստանած արարատյան գաղթականությանը:

Այդ կոչից պարզվեց, որ Հայաստանի կոմիսարների խորհուրդը մասնավոր դեկրետով «դավաճան և թշնամի» է հռչակել Հայաստանից Զանգեզուր փախածներին, և սպառնում էր «Նժդեհի դրոշի տակ մնալու դեպքում» բանտարկել նրանց ընտանիքներին և բռնագրավել նրանց ստացվածքը:

Այլևս պարզ էր, որ *Հայաստանի Հեղկոմը իր հաճախակի բանակցություններով ծգտում էր ժամանակ շահել, և մի օր մեզ մղել անծնատվության, առանց զիջումների:*

Ա՛յդ կպահանջեին կարմիր զենքի պատիվը և թաթար Ադրբեջանի շահը:

Հազարավոր տարագիրների՝ Թավրիզից Երևան դառնալուց հետո, այլևս խորհրդային իշխանության համար չէր կարող գաղտնիք մնալ, որ Լեռնահայաստանը տառապում է սովից և ռազմամթերքի պակասից:

Ծանոթ մեր այդ ծանր դրության՝ Երևանը շեյթանաբար ձգձգում էր մեզ տրվելիք պատասխանը:

Նա կուզեր, ժամանակ շահելով, ազատվել Կարմիր բանակի համար անպատվաբեր՝ մեր պահանջները հարգելու հարկադրանքից:

Իսկ մենք դեռ չեինք դադարել գիտակցելու, թե մեծապես մեղանչած կլինենք մեր ժողովրդի ապագայի դեմ, եթե չօգտվեինք Լեռնահայաստանի ձեռք բերած ռազմական հմայքից:

Լեռնահայությունը իր երկրի և ապագայի պաշտպանության խորին մտահոգությամբ անձնական վտանգը անգիտացավ և՛ այս անգամ:

Պե՛տք էր, ամեն գնով պետք էր հարգել տալ մեր պահանջները: Դրա համար էլ, վերջին անգամ լինելով, Լեռնահայաստանը շարժման մեջ դրեց իր Դավիթբեկյան վաշտերը:

Պե՛տք էր զգաստացնել խորհրդային իշխանությունը, պե՛տք էր նրան զգացնել տալ, որ գոռ կռիվներում թրծված լեռնահայությունը իր համար ստեղծված ամենածանր դրության մեջ իսկ գիտի զարկել ու հաղթել:

Եվ մեկ էլ, ու վերջին անգամ, զարկեց Սյունիքը: Հունիսի 15-16ին, Գնդևազի մեր զորամասերը խորտակեցին բոլշևիկյան ուժերը:

Այդ նույն օրերին, թշնամին, որ մեծ ուժեր էր կենտրոնացրել Օրդուբատ ու Բարթաղ՝ Արաքսի հայկական ափը գրավելու և այսպիսով մեզ Պարսկաստանից կտրելու ցանկությամբ, անցավ հարձակման՝ Արևիքի դեմ:

Իմ ուժերը ջարդեցին թշնամուն և՛ այդ ճակատների վրա:

Կարմիրները ռազմագործողություններ սկսեցին և՛ Զաբուղի ուղղությամբ՝ բուն Զանգեզուրի[81] դեմ:

Հունիսի 18-ին, թշնամու՝ Որոտանի ափին կենտրոնացած ուժերը ցրելու նպատակով, մի թեթև զորամասով մտա Բարգուշատ, ուր հանկարծակիի եկած թրքությունը աղ ու հացով դիմավորեց մեզ և հպատակություն հայտնեց:

Այսպես, իմ ուժերը հաղթեցին բոլոր ճակատների վրա, վերցնելով հազարի չափ գերիներ, մի քանի լեռնային թնդանոթներ, ռազմամթերք և այլ կարգի ավար:

Ցնծո՛ւմ է լեռնահայությունը:

Գորիսը՝ տոնում է հայ զենքի նոր հաղթանակը:

Կառավարությունը շնորհավորում է մեզ. «Սպարապետ Նժդեհին - Հայաստանի կառավարությունը լսելով Ձեր կազմակերպած, Ձեր հոգով սնված և ձեր գաղափարներով ոգևորված քաջարի արևմտյան բանակի Վայոց Ձորում տարած մեծ հաղթության մասին՝ պարտք է համարում հայտնել Ձեզ շնորհակալություն, և այլն»:*

Մեր այդ նոր հաջողության առթիվ Խորհրդային Հայաստանը ահազանգ է հնչեցնում: Նրա թերթերն ու թռուցիկները անզոր կատաղության փրփուր ու ցեխ են ժայթքում:

Նա «կարմիր զորքերի օղակ»-ով, «երկաթե բռունցք»-ով սպառնում է վերստին Երևանում գործի դնել կարմիր տապարը:

Ահա՛ թե ինչպես է արտահայտվում մեր նոր հաղթանակի մասին «Խորհրդային Հայաստանը»:*

«Ստոր և զազրելի նենգությամբ դաշնակցական մաուզերիստները հարձակվել են մեր սահմանապահ գյուղերի և պահակների վրա, և ներս են խուժել Դարալագյազ:

Հայաստանի կառավարությունը, ժողովրդական կոմիսարների խորհուրդը ամեն բան արել է իր կողմից՝ խաղաղ կերպով դադարեցնելու քաղաքացիական կռիվը: Նրա ուղարկած դելեգացիային Զանգեզուրի դաշնակցականները առաջին անգամ կերակրել են ընդհանուր խոսքերով»:

Խղճալի՛ արդարացում:

---

* Ի դիմաց վարչապետի՝ Ս. Մելիք-Յոլչյան:

* 1921, Հունիս 19, N 106:

Մենք Կարինյանին ճամբու էինք դրել ամենակոնկրետ պահանջներով, որոնք սակայն, լենինյան ալխիմիայի ուժով, Երևանում դարձել էին «ընդհանուր խոսքեր»:

Իր դավամտության մեջ բռնած ու արդարորեն ծևված թշնամին հայհոյելով, դեպքերը խեղաթյուրելով և սպառնալով հանդերձ՝ սկսել էր զգաստության նշաններ ցույց տալ: Որպես հետևանք մեր հաղթական ռազմագործողության, նա կաճապարեր Գորիս և Թավրիզ հասցնել իր ուշացած պատասխանը:

Իր պաշտոնական օրգանի** առաջին էջի վրա կկարդայինք՝ «Կեցցե՜ Հայաստանը և նրա անբաժան մաս աշխատավոր Զանգեզուրը»:

Զույգ դեկլարացիաներով - մեկը թվագրված 12 հունիս, մյուսը՝ 13 հունիս - խորհրդային իշխանությունը Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը հայտարարում է կցված Հայաստանին:

Մեր սկսած ռազմագործողություններից չորս օր անցած, Երևանի Հեղկոմը Ատրպատականի թեմական առաջնորդ Արքեպիսկոպոս Ն.Մելիք-Թանգյանին է ուղարկում ծանոթ երկու հայտարարությունները, որոնց հիման վրա վերջինը հղում է «ժողովրդական կոմիսարների նախագահ քաղաքացի Մյասնիկյանին, պատճեն՝ սպարապետ Նժդեհին» հետևյալ հեռագիրը. *«Ստանալով կոմիսարներիդ խորհուրդի 1921, հունիսի 13-ին, հրատարակված դեկլարացիան Զանգեզուրի մասին, Վրացյանի համաձայնությամբ սուրհանդակ ուղարկեցինք Նժդեհի մոտ, պատերազմական գործողությունները դադարեցնելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ: Սրա հետ միասին այդ հարցի առթիվ Գրիգոր Վարդանյանին հանձնեցի իմ գրավոր առաջարկությունը Ձեզ: Ներսես, Թավրիզ, 1-ը հուլիսի 1921թ.»*:

* * *

Ահա՛ պատմական երկու կարմիր փաստաթղթերը, որոնք պարունակում են խորհրդային իշխանության կողմից մեզ արված զիջումները.

1. «Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության Հեղկոմի դեկլարացիայի և Հայաստանի ու Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների կառավարությունների մեջ եղած համաձայնության հիման վրա, հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմյանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մասը:

** « Խորհրդային Հայաստան», թիվ 106:

ՀՍԽՀ ժողկոմների խորհրդի նախագահ՝ Ա.Մյասնիկյան
(Ալ.Մարտունի), քարտուղար՝ Ս.Ղարաբեկյան:

1921թ. Հունիսի 12, Երևան»:

2. «ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի հայտարարությունը Զանգեզուրի իշխանության.

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կառավարությունը սույն գրությամբ նորից դիմում է Ձեզ և առաջարկում Զանգեզուրում ապաստանած բոլոր ըմբոստ տարրերին՝ վերջ տալ ապստամբությանը խաղաղ կերպով և հպատակվել երկրի միակ օրինական իշխանությանը՝ Խորհրդային Հայաստանի կառավարությանը: Խորհրդային Հայաստանը հայ բանվորների և գյուղացիների, համայն հայ աշխատավորության իշխանությունն է: Եվ որպես այդպիսին, նա գործադրել է և կգործադրի բոլոր ջանքերը մշակելու այն կենսաձևը, որն ավելի հարազատ և մոտ է ժողովրդի պահանջներին և տեղական պայմաններին:

Նկատի առնելով Զանգեզուրի գյուղացիության առանձին կարիքները Խորհրդային Հայաստանի կառավարությունը կարևոր է համարում հայտարարել, որ նա իր կողմից հնարավորություն է տալիս Զանգեզուրի աշխատավորությանը մշակել ուրույն համայնական կենցաղ: Զանգեզուրի բոլոր բնակչությունը պետք է ունենա իր տեղական մարմինները, իր առանձին կենսաձևը:

Սակայն, այդպես լինելով հանդերձ, Զանգեզուրը պիտի կազմի Խորհրդային Հայաստանի անքակտելի մասնիկը: Նա պիտի կապված լինի ամենասերտ կերպով բանվորա-գյուղացիական իր հայրենիքի հետ: Այդ կապը պիտի ամրացնեն իրե՛նք՝ Զանգեզուրի գյուղացիները, որոնց հնարավորություն կտրվի ձեռնարկել ինքնապաշտպանության և լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները:

ՀՍԽՀ կառավարությունը այժմյանից հայտարարում է, որ Զանգեզուրում ամենալայն չափով կկիրառվի ընդհանուր զինավարժության սկզբունքը, որի համաձայն՝ երկրի ամեն մի քաղաքացի պիտի դառնա իր տեղավայրի գոյությունը պաշտպանող ռազմական ուժ:

Բայց պաշտպանելով այդ սկզբունքը, Հայաստանի Խորհրդային կառավարությունը չի կարող թույլատրել իր տերիտորիայի սահմաններում օտար կազմակերպությունը: Զանգեզուրում գործող այժմյան զորամասերը պիտի ենթարկվեն մեր ընդհանուր հրամանատարությանը: Եվ նրանք, ծուլվելով մեր զորքի հետ, պիտի կազմեն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կարմիր զորաբանակի անբաժան մասը:

Միաժամանակ, Զանգեզուրում կգործադրվի ամենայն վճռականությամբ ընդհանուր քաղաքական ներման այն դեկրետը, որ հրատարակվել է Հայաստանում:

Խորհրդային կառավարության դեմ կռվող բոլոր գործիչները ո՛չ միայն ազատ կլինեն որևէ հալածանքից, այլև կարող են անարգել մնալ Զանգեզուրում: Ոչ ոք դրանցից չի աքսորվի երկրի սահմաններից այն չափով, որչափ նրա աշխատանքը չի ուղղվի Հայաստանի Խորհրդային իշխանության դեմ:

Ելնելով այդ հիմնակետից, Խորհրդային կառավարությունը համապատասխան ձևով է լուծում նաև քաղաքական կուսակցությունների և մամուլի ազատության խնդիրը: Բոլոր քաղաքական այն հոսանքները, որոնք կկտրեն վերջնականապես իրենց կապը միջազգային իմպերիալիզմի հետ, բոլոր այն կազմակերպությունները, որոնք կպաշտպանեն Խորհրդային գիծը, իրավունք կունենան միանգամայն ազատորեն գործել Հայաստանում: Այդ հոսանքները կունենան թե՛ իրենց առանձին կազմակերպությունները և թե՛ ազատ մամուլը: Ինչ վերաբերում է Զանգեզուրի ավերված վայրերին և լքված գյուղերի բնակիչներին, Հայաստանի Խորհրդային կառավարությունը գտնում է, որ Զանգեզուրից հեռացած նախկին բնակչության վերադարձը չպիտի կատարվի հակառակ տեղացի աշխատավորության ցանկության:

Զանգեզուրում ապրող հայ գյուղացիությունը կարող է ապահով լինել, որ նրանցից չի խլվի ոչ մի հողավայր:

Ի լրումն շեշտված կետերի՝ Հայաստանի Խորհրդային իշխանությունը հայտնում է, որ ներկայումս համայն Կովկասում հաստատված է ամուր և անպարտելի Խորհրդային իշխանություն: Հայաստանը միացել է եղբայրական կապերով հարևան պետությունների՝ Խորհրդային Վրաստանի և Խորհրդային Ադրբեջանի հետ: Լեռնային Ղարաբաղը վերջին համաձայնությամբ Հայաստանի Խորհրդային կառավարության կողմից հայտարարված է Հայաստանի անբաժան մասը:

Չկա այլևս, բացի Զանգեզուրից, որևէ վայր, որ հակառակ լիներ բանվորա-գյուղացիական իշխանությանը: Նույնիսկ Շարուր-Նախիջևանը՝ այն շրջանը, որն իր ավտոնոմ գոյության պատճառով ստեղծել է ավելորդ և անտեղի տարակուսանքներ, կիրառել է լիովին Խորհրդային սկզբունքը: Դա Խորհրդային մի վայր է և, որպես այդպիսին, նա հարազատ եղբայրն է Խորհրդային Հայաստանի, և ոչ մի վտանգ Խորհրդային Նախիջևանի կողմից չի կարող սպառնալ հայ գյուղացիությանը: Այդ գիտակցում է և վերջինը, որն այժմ երկար շարաններով վերադառնում է իր վայրերը և տեղական իշխանության աջակցությամբ վերահաստատվում է իր հին բնակավայրերում:

Այդպիսի պայմաններում, երբ ամենուրեք հաստատվել է հզորավոր Խորհրդային իշխանությունը, երբ Խորհրդային Հայաստանը

խմբել է իր շուրջը հայաբնակ խոշոր վայրերը և դարձել է իրական հայրենիք համայն հայ ժողովրդի համար, երբ իմպերիալիստներից և հին բռնապետներից ազատագրված հայ աշխատավորությունը ունի իր սոցիալիստական պետությունը, ուր տիրում է հայ լեզուն, Զանգեզուրի ապստամբությունը և նրա մեկուսացումը խանգարում է մեր հայրենիքի խաղաղ շինարարության գործին և նրա բոլոր հատվածների վերջնական միացման:

Ուստի, ՀՍԽՀանրապետության ժողովրդական կոմիսարների խորհուրդը այլևս չի կարող հաշտվել հին դրության հետ և առաջարկում է Ձեզ անհապաղ տալ պարզ պատասխան այս պաշտոնական դիմումին:

ՀՍԽՀ Ժողկոմխորհրդի նախագահ՝ Մյասնիկյան Ալ.Մարտունի)
Ժողովրդական կոմիսարների խորհրդի անդամներ Պ.Մակինցյան,
Ա.Բեկզատյան, Ս.Սրապիոնյան (Լուկաշին), Ա.Կարինյան:
Քարտուղար՝ Միք. Ղարաբեկյան:

13 Հունիս 1921թ., Երևան:»

* * *

Ընթերցողը կարդաց զույգ փաստաթղթերը:

Այժմ կուզեի, որ նա, որպես մարդ, մասնավորապես, որպես հայ մարդ, բաղդատության դներ այդ կարմիր պաշտոնագրերը հայոց աշխարհի մերօրյա սև իրականության հետ:

Ճշմարիտ հայը կարո՞ղ է տարակուսել, որ վաղվա հայ պատմագիրը, իր ձեռքին ունենալով այդ փաստաթղթերից մեկն ու մեկը, եղիշեի սրբազան զայրույթով դատ ու դատաստանի պիտի նստի խորհրդային կոչված իշխանության հետ և տա հետևյալ դատավճիռը. *«Նրանց անունը կարմիր էր, գործերը՝ սև. թող հավետ անիծված լինեն նրանք»*:

Լեռնային Ղարաբաղին վերաբերվող կարմիր գրությունը վաղուց է մոխրացել, հենց իր գրված ու կնքված օրը:

Մեր այդ երկրամասը, որպես քաղաքական կաշառքի և պրոպագանդի միջոց, վայրկյանի ռազմավիճակի թելադրանքով, փոխն ի փոխն, խոստացված և տրված է եղել թե՛ մեզ և թե՛ թաթարներին:

Այդ իսկ պատճառով, մեր օրով նա ուներ, մի տեսակ, երկտեր վիճակ:

Այսօր, սակայն, նա մնում է զատված Հայաստանի մայր տերիտորիայից:

Մի անմարդկային, մի դաժան անարդարությամբ՝ խելագար Մոսկվան կտրեց իր մոտից Հայաստանի քաջաքաջ որդու կարոտավառ հայացքը, և դա շղթայեց Ադրբեջանին:

«Դու ինքնավար ես»,- ասացին ղարաբաղցուն, բայց նրան զլացան Հայաստանին միանալու ազատությունը:

Թաթարասիրական հաշիվներով՝ մեր այդ ամենաարժեքավոր երկրամասը դրվեց այնպիսի դրության մեջ, որ Հայաստանը կարիքի դեպքում չկարողանա ռազմագիտորեն օգտվել նրանից, և որ Ադրբեջանը՝ գրավելով Ղարաբաղը, միշտ էլ վտանգած լինի ո՛չ թե միայն Սյունիքը, այլև՝ ողջ Հայաստանը:

Այո՛, Ղարաբաղի օրվա դրությունը ավելի նպաստավոր է թաթար Բաքվի, քան Երևանի համար:

Այդպես ուզեց Մոսկվան և այդպես էլ եղավ:

Ինչ վերաբերվում է երկրորդ դեկլարացիային, պետք է ասել, որ դա ժամանակին քաղաքականապես լիուլի բավարարում էր մեզ:

Մենք, մի ամբողջ տարի, Կարմիր բանակին ուղղած մեր ամեն մի հարվածի հետ կրկնել էինք՝ *Սյունիքը պիտի կցվի՛ Հայաստանին:*

Խորհրդային իշխանությունը այժմ դեկրետով կպատասխաներ՝ «Սյունիքը կցվում է Հայաստանին»:

Մենք պահանջել էինք՝ «Լեռնահայաստանը չի զինաթափվում, այլ՝ ստանում է զենքի ու ռազմամթերքի նոր պաշար Հայաստանի կառավարությունից»: Այժմ մեզ խոստանում էին՝ «հնարավորություն կտրվի ձեռնարկել ինքնապաշտպանության և լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները»:

Մեր պահանջին՝ Լեռնահայաստանում Կարմիր բանակ չի կազմակերպվում, այլ ընդունվում է ընդհանուր զինման միլիցիայի համակարգը», նրանք պատասխանում էին՝ «Զանգեզուրում ամենալայն չափով կկիրառվի ընդհանուր զինավարժության սկզբունքը, որի համաձայն՝ երկրի ամեն մի քաղաքացի պիտի դառնա իր տեղավայրի գոյությունը պաշտպանող ուժը»:

Մենք՝ Լեռնահայաստանի գյուղացիության սակավահողության պատճառով մերժում էինք թաթար փախստականների վերադարձը, և խորհրդային իշխանությունը արձագանքում էր. «Ինչ վերաբերվում է Զանգեզուրի ավերված վայրերին և լքված հողերի բնակիչներին, Հայաստանի խորհրդային կառավարությունը գտնում է, որ Զանգեզուրից հեռացած նախկին բնակչության վերադարձը չպիտի կատարվի»:

Մենք ուզում էինք՝ «մամուլի, խոսքի և ժողովների ազատություն»:

Եվ ժողովրդական կոմիսարների վեց ստորագրությամբ օժտված դեկրետով մեզ տրվում էր «իրավունք՝ միանգամայն ազատորեն գործել Հայաստանում. ունենալ առանձին կազմակերպություններ և թե ազատ մամուլ»:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, նկատի առնելով Զանգեզուրի գյուղացիության առանձին կարիքները՝ «հնարավորու-

թյուն է տալիս Զանգեզուրի աշխատավորությանը մշակել ուրույն համայնական կենցաղ:

Զանգեզուրի բոլոր բնակչությունը պետք է ունենա իր տեղական մարմինները, իր առանձին կենսաձևը՝ որ ավելի հարազատ և մոտ է ժողովրդի պահանջներին և տեղական պայմաններին»:

Իր երկրորդ դեկրետի մեջ, խորդային իշխանությունը շոշափել է նաև Շարուր-Նախիջևանի խնդիրը. «Դա խորհրդային վայր է, և որպես այդպիսին,-կփութար հանգստացնել մեզ կարմիր իշխանությունը,- նա հարազատ եղբայրն է Խորհրդային Հայաստանի»:

Հայաստանի դռների մոտ նստած քեմալական ավանպոստը հանդիսացող Նախիջևանը իր հայրենիքի եղբայրը համարել կարող է ապազգային, ներկայապաշտ, անցեղահոգ կառավարությունը միայն: Վայրկյանի քաղաքականություն վարող կառավարությունը իրեն պարտական չի զգում միտք և բազուկ հոգնեցնել իր ղեկավարության հանձնված երկրի և ժողովրդի պաշտպանության պրոբլեմի վրա:

Ղարաբաղը թողնելով կղզիացած՝ առանց օրգանական կապի Հայաստանի հետ՝ Մոսկվան մեծապես կտկարացնի Հայաստանի ինքնապաշտպանվելու կարելիությունները:

Իսկ մեր երկրի տերիտորիալ մարմնից կտրելով Նախիջևան-Շարուրը և հանձնելով Ադրբեջանին՝ նա գիտակցորեն Հայաստանը դնում էր ռազմագիտորեն զինաթափ վիճակի մեջ, թուրք-թաթար կրակների միջև:

Հայ բոլշևիկներն էլ մեզ պես գիտեին, որ Հայաստանի համար ավելի մեծ և մահացու վտանգ գոյություն չունի, քան Նախիջևանը:

Մյասնիկյանի կառավարությունը, իր անզորությունը ու դավաճանությունը արդարացնելու մտքով, ճգնում էր միամտացնել մեզ. «Եվ ոչ մի վտանգ Խորհրդային Նախիջևանի կողմից չի կարող սպառնալ հայ գյուղացիությանը»:

Երկրորդ դեկլարացիան պարունակում է մի այլ խոստում:

Մեր վերջին զարկից զգաստացած, Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհուրդը առատության եղջյուր էր դատարկում մեր ապստամբ գլխին: Մեզ տրված քաղաքական բավարարությունը կատարյալ դարձնելու միտումով, նա դիվանագիտական նրբությամբ շոշափել է անգամ հայկական խնդիրը, մեզ խոստանալով հետևյալ քաղաքական կանխույթը՝ «մեր հայրենիքի բոլոր հատվածների վերջնական միացումը»...

Տեսնո՞ւմ եք, նա մեզ տալիս էր ավելին, քան ուզել էինք, քան կսպասեինք:

Այլևս բավարարված էր լեռնահայության ու իր առաջնորդի մեծ, արդար փառասիրությունը:

Իզուր չէր գործել հայ զենքը:

Արդյունավորված էին մեր երկամյա ռազմական ճիգերը:

Այժմ մի նոր դեկրետով չեղյալ էր հայտարարվում՝ տարի առաջ, Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի և Հայաստանի միջև կնքված չարաբաստիկ պայմանագիրը, որի զորությամբ Սյունյաց աշխարհը թողնված էր Ադրբեջանին: Քաղաքական այդ ակտից հետո, իր մայր երկրին միացած մեր հաղթական երկրամասը, մի ծանր հարկադրանքի տակ, խորհրդային իշխանության առջև պիտի բացեր իր դռները:

Է՛լ անելիք չունեի ես:

Ինձ մնում էր ժողովրդին հայտնել, թե կվերադառնամ՝, եթե Ադրբեջանը փորձի իր թաթը երկարել դեպի Սյունիք, և բաժանել հայրենի լեռներից...

VIII

Տարիներ են անցել:

Խորհրդային իշխանությունը վատորեն դրժել է - Սյունիքի կցումից զատ - իր բոլոր հանդիսավոր հանձնառությունները:

Նա թքել է այն կնիքի վրա, որով 1921, հունիսի 12-ին, վավերացրեց իր զույգ հայտարարությունները՝ Ղարաբաղի և Սյունիքի մասին:

Հավատարիմ իր դիվային բնության՝ նա շատ շուտ հաստատեց, որ գիտի ստել, խաբել անգամ դեկրետներով:

Նա դեռ այսօր էլ «Նեռ է՝ չար ու կործանիչ»:

Այդ իսկ պատճառով, դեռ այսօր էլ մեր չեկայաչարչար հայրենիքում, ինչպես մեկուկես տասնամյակ առաջ, «ձախությամբ հիվանդ» տարրերի վայրագությունն է իշխում:

Ի՞նչ եմ ասում:

Մեր ժողովրդի վիճակն այսօր ավելի՛ ծանր է, ավելի՛ անմխիթար:

Այսօր մեր ժողովրդին արգելված է Աշուղ Ջիվանիի «Ձախորդ օրերը» իսկ երգելը:

Այսօր,- պիտի ասեր Աբովյանը,- «Հող ունենք խլված, կյանք ունենք մեռած»:

Երեկ այնտեղ, երկրում ազատ էր գոնե համայնավար հայը:

Իսկ այսօր, մեծ վրացու, ավելի ճիշտը՝ վրացի եռապետության[82] քմահաճույքով, Հայաստանում իրենց գլխի տերը չեն անգա՛մ համայնավարները:

Այժմ այնտեղ փչում են «դավանական» այլ հովեր:

Նոր ժամանակները նոր, հեթանոս պահանջներ դրին Երևանին:

Բավական չէ՛,- հյուսիսից սաստեցին նրան,- *բավական չէ՛ համայնավար լինել, պետք է լինել նախ Ստալինապաշտ.*

Եվ այժմ քաղաքականապես զարնված մեր հայրենիքում ասիական ժանտախտի վարակչությամբ տիրում է Ստալինախտը:

Այժմ այնտեղ մարդիկ հարկադրված՝ մրցում են ստալինապաշտության մեջ:

Վա՛յ նրան, ով թերացավ օրեկան յոթն անգամ, մուսուլմանի մոլեռանդությամբ նամազի նստել Ստալինի պատկերի առջև:

Վա՛յ նրանց, որոնք չգիտեն ուղտի պես ծունկ ծռել նաև՛ կարմիր ցարի կովկասյան փոխարքայի՝ Բերիայի առջև:

Վա՛յ Հայաստանին, եթե հանդգնեց երազել իր Ղարաբաղի, Ախալքալակի և Նախիջևանի մասին, կամ տրտունջ բարձրացնել Ստալինի կողմից յոթնիցս բարերարված Վրաստանի համար միայն հում նյութեր արտադրող աֆրիկյան գաղութի դեր կատարելու դատապարտված իր դառն բախտի դեմ:

Վա՛յ այդ բոլոր դեպքերում, և մա՛հ այն բոլորին, որոնք կփորձեն իրենց Կարմիր տիրոջը հիշեցնել կես մոռացված հայոց երկրի և ժողովրդի մասին:

Մեր ժողովրդին տրված չէ իր ապագայի մասին մտածելու, մտահոգվելու և խոռվելու իրավունք:

Փաստորեն, նրան արգելված է ինքնապաշտպանության իրավունքը:

Դժոխազգի բոլշևիկի, վրացու և թաթարի համար հանդուրժելի է միայն անզոր, անտեր և անապագա Հայաստանը:

Ահա՛ թէ ինչու, ժամանակին, թրքացեղ Լենինի հաճությամբ մեր երկրի ռազմագիտական բոլոր բանալիները հանձնվեցին օտար դռնապանների:

Վերջերս երկրի հայության - փա՛ռք իրեն - լուռ խռովքը, Խանջյանի միջոցով, փորձեց խորհրդային նոր սահմանադրության հեղինակից պահանջել այդ բանալիները, և չեկիստի գնդակներն եղան իրեն պատասխան:[83]

Եվ լա՛վ է, որ այդպես եղավ:

Հաճախ, ժողովուրդներին խորապես ցնցելու, նրանց մահաքունը փարատելու, նրանց մտածողությունը հեղափոխելու համար՝ սիրտ պայթեցնող դրամաներ են պետք:

Խանջյանի արյունոտ ողբերգությունն էր պետք, որպեսզի կարմիր հայն իսկ համոզվեր, թե Մոսկվայի համար հայությունը այնքան արհամարհելի է, որ իր ճակատագիրը ամենաթեթև չափով իսկ չի շոշափում ստալինյան նոր սահմանադրությունը:

Ընդվզեց Խանջյանի մարդկային - ինչո՞ւ չասել՝ նաև՛ հայկական - արժանապատվությունը:

Եվ լա՛վ է - փա՛ռք ճակատագրին - որ այդ այդպես եղավ:

Չհավատա՞նք, որ Հայաստանի առաջին համայնավարի մահառիթ զայրույթը մոխրացրեց հայ մեծամասնականությունը քաղաքական ու գաղափարաբանական կուրության մեջ պահող լենինյան աչքակալները:

Խանջյանը իր արյունով քավեց իր հակազգային մեղքը, իր բոլշևիկությունը:

Եվ երկրի հայությունը, որ այնքան ատում էր Կոմկուսի միահեծան քարտուղարին, վերջինի թաղման, հակառակ իշխանության կողմից ցույց տրված շնական վերաբերմունքին և անխոս արգելքին, մասնակցեց բազմահազար զանգվածով:

Այդ օրը իշխանություն և ժողովուրդ իրար աչքի մեջ նայեցին և զգացին, որ օտա՛ր, մահացուորե՛ն օտար են իրար:

Նա՛, որ մինչև զղջումը Մոսկվային էր, իր մահից հետո դարձավ Հայաստանին, դարձավ իր ժողովրդի մարդը և համարվեց կարմիր իշխանության թշնամի:

Նա, որ տարիներ շարունակ մահու և կենաց գուպար էր վարել մեր դեմ - նրա՛նց դեմ, որոնք ժամանակին իրենց արյունով Սյունիքի, Ղարաբաղի և Նախիջևանի դատն էին պաշտպանել, տարիներ հետո, ի պաշտպանություն մեր այդ միևնույն երկրամասերի, պիտի ծառանար Մոսկվայի դեմ և մեռներ մեր սրբազան դատի համար:

Այսպես, Կրեմլի հայաստանյան ամենազոր մարզպանը արնոտ զղջումի ճամբով վերադարձավ իր երկրին, իր ցեղին:

Մնացին իր երեկվա ծառաները - կարմիր իշխանության անհոգի գործակալները, գործիքները - Տեր Մինասյանները:

Չհավատա՞նք, որ այդ վերջինները - թեկուզ Խանջյանի երկարամյա տիրասեր ու ծառայական ընթացքը կրկնելով՝ մի օր, վաղ թե ուշ, պիտի բռնեն զղջումի ճամբան:

Այո՛, պիտի վերադառնան բոլորը, եթե ցեղորեն և մարդկորեն մեռած չեն:

Պիտի վերադառնան բոլո՛ր ուրացողներն ու մոլորվածները, եթե ցեղի հոգուց ու մարմնից են:

Պիտի վերադառնան դեպի իրենց արդար ու *մեծահոգի ցեղը, որի համար նահատակի, հերոսի և սրբի չափ սիրելի է նաև՛ զղջացյալ ուրացողը:*

Պիտի վերադառնան բոլո՛ր. հայոց պատմությունը սպասում է նրանց:

Պիտի՛ վերադառնան. Խանջյանի արյո՛ւնը վկա:

* * *

Այս վավերագրությունը լույս է տեսնում ոչ թե pro domo sua, ոչ թե պաշտպանվելու, այլ՝ պաշտպանելու համար լեռնահայության մեծափառ մի գործը՝ նրա նորագույն գոյամարտի արժեքը:

Արդար հպարտանքով եմ խոսում այդ գոյամարտի մասին ոչ թե նրա համար, որ ես եմ վարել դա, այլ՝ որովհետև Հայը, Հայն է հաղթանակել այդ գոռ գոյամարտում:

Գ. Տեր Մինասյանն էլ փրկությունը թուրք-բոլշևիզմի տապարից կպարտի ինձ:

Տեսնված չէ, որ փրկիչը պաշտպանվի փրկվածի դեմ, որքան էլ այդ վերջինի ապերախտությունը մարդկորեն ընդվզեցուցիչ լինի:

Որպես իմ ժողովրդի անվան և նրա զենքի պատվին նախանձախնդիր զորական՝ պարտականություն համարեցի պատռել դիմակն այն թշվառականների, որոնք իրենց հոգևոր կուրության բերումով, հայոց պատմության մեջ միայն «պարտություններ ու գաղթեր» են տեսնում:

Ամեն տգետ դավաճան չէ, բայց ամեն դավաճանող միաժամանակ և տգետ է, սրտով տգետ:

Այդպիսին է Գ. Տեր Մինասյանը, որին տրված չէ հասկանալ, որ հարազատ ժողովրդի վարած ազատագրական կռիվների արժեքը կասկածի տակ դնել, դրանք արկածախնդրություն համարել, նշանակում է՝ հարվածել իր ժողովրդի ազգային ինքնազգացողությունը. նշանակում է՝ իր ժողովրդին մղել սեփական ուժերի ստորագնահատման, ինքնանվաստացման և աղետալի պարտվողականության. իսկ դա նշանակում է՝ վտանգել իր ժողովրդի գոյությունը, ապագան:

Բոլոր ժամանակների գեղեցիները՝ իրենց ուրացումն ու դասալքությունը արդարացնելու նպատակով, իրենց ժողովրդի վարած անգամ հերոսական կռիվները հայտարարել են «արկածախնդրություն», առանց հասկանալու, որ հենց կողմերի անհավասարությունից է ծնունդ առնում պատերազմը:

Վատերը չեն հասկանում, որ եթե անհավասար ուժերի միջև տեղի ունեցած ամեն կռիվ համարվեր արկածախնդրություն՝ թվապես տկարի հաշվին, որ եթե թվապես տկարին զլացվեր հանդգնելու, հակահարվածելու իրավունքը, այն ժամանակ կմեռներ արիությունը, էլ Ավարայրներ ու Վարդաններ չէինք ունենա, էլ հերոսներ ու հերոսականներ չէին ստեղծվի, զոհն ու զոհաբերությունը կկորցնեին իրենց անունն ու վեհությունը, Հայրենիքն՝ իր պաշտպանը, արդարությունը՝ իր ախոյանը, իրավունքն՝ իր տերը. այն ժամանակ աշխարհը կկորցներ այն ամենը, որ հերոսական է ու վսեմ մարդկային ցեղերի պատմության մեջ, այն սրբազանը, որով սնվում և դաստիարակվում է մարդկային հոգին:

Պատմության նպատակը՝ ստրուկների - ժողովուրդ թե անհատ - գոյության տևականացնելը չէ, այլ՝ նրանց ազատագրումը արյունալի ընդվզումների ճամբով:

Զորավորի հետ չափվելու գեղեցկությունից երբեք զուրկ չի եղել մարդկությունը:

Մասնավորապես մեր դարում, մեր օրերում չկա՛ ավելի մեծ առաքինություն, քան հանդգնելու, զորավորին հակահարվածելու, բռնացողին զարկելու, ինքնապաշտպանվելու վճռականությունը:

Սրբազան է ինքնապաշտպանողական ամեն գոյամարտ: Այդպիսի՛ն էր իմ վարածը Սյունյաց աշխարհում: Երկու տարի տևող կռիվների առաջին շրջանում պե՛տք էր թուրք-թաթար վտանգից փրկել Սյունիքի հայությունը:

Երկրորդ շրջանում - ինքնավար Սյունիքի օրով - պե՛տք էր մահացու անդամահատությունից փրկել Հայաստանը՝ Մոսկվայի կողմից Ադրբեջանին տրված Սյունյաց երկիրը:

Երրորդ շրջանում - Լեռնահայաստանի օրով - պե՛տք էր հոգեբանորեն հրահրել և ռազմագիտորեն կարելի դարձնել Հայաստանի Փետրվարյան ապստամբությունը, ապա փրկության կամուրջ հանդիսանալ բոլշևիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտավորականության համար:

Սյունիքի գոյամարտը, որի աննախընթաց հաջողության գաղտնիքը պետք է փնտրել մեր Դավիթբեկյան վաշտերի քաջության ու մեր գործադրած՝ թշնամու համար անծանոթ ռազմավարության մեջ, տեղի է ունեցել արդիական կռիվներ վարելու հնարավորությունը ժխտող ծանր պայմաններում:

Սա տարվել է շրջագծաձև ճակատի վրա, առանց խոր թիկունքի, աշխարհից կտրված, դռնփակ:

Զուրկ հացից ու տեխնիկական միջոցներից՝ Սյունիքը, առանց արտաքին օգնության, իր եռագլխանի թշնամուն ծևել է նրանից խլած զինամթերքով: Եվ եթե մեռնողների իրավունքն է՝ գիտնալ, թե ինչո՞ւ է մեռնում - իմ ամեն մի զինվորը գիտակցել է այդ, և «գիտացյալ» մահը դիմավորել աստվածային արհամարհանքով:

Իմ գործադրած՝ Սյունյաց երկրի տեղագրության ու ժողովրդի հոգեբանության հարմար՝ ռազմավարական ձևերի շնորհիվ, մեր ունեցած զոհերի թիվը եղել է չնչին:

Ընդհակառակը՝ հսկայական է եղել թշնամու կորուստը:

Թշնամին՝ իր թվական, տեխնիկական և քաղաքական գերազանցությունից զատ, ուներ նաև մի այլ պլյուս՝ շնական արհամարհանք դեպի մարդկային բոլոր տեսակի սրբությունները:

Նա զգալով իր զենքի անզորությունը, իր պաշտոնական օրգանի մեջ, կրկնակի խորագրության տակ՝ «Զորավոր զենքը - Մեր կռվի

ձևերը», խոստովանում էր. *Կարմիր բանակի դիմաց խորամանկ ու համառ թշնամին՝ Նժդեհ, Դրո և այլ հին գայլերը լավ գիտեն պատերազմական գործը:* Սրա համար էլ բելոգվարդիական այդ ավազակների դեմ անհրաժեշտ է ունենալ ամուր ուժ: Մենք չպետք է մոռանանք, որ ապստամբների հաջողությունը կախված է ժողովրդի տրամադրություններից: Այդ իսկ պատճառով, Կարմիր բանակի նպատակը պետք է լինի թշնամու կենդանի ուժերի ոչնչացումից զատ, *ապստամբության ղեկավարների դեմ հանել ազգաբնակությունը*»:*

Ա՛յս էր թշնամին, որի «զորավոր զենք»-ը իր բանակը չէր, այլ՝ վատությունը, դավը, աղվեսությունը. ա՛յս էր բոլշևիկը, որի «կռվի ձևեր»ը հայհոյություն էին մարդկային արիության և բարոյականի դեմ:

Անցողակի ասենք, որ այդ օրերին՝ Անդրանիկը ո՛չ թե Զանգեզուրում, այլ Հայաստանում չէր: Գիտենք նաև, որ նա դեմ չէր Կարմիր բանակին: Այդ այդպես լինելով հանդերձ, Կարմիր բանակի զորահրամանատարությունը նրան ևս անվանում էր «հայ ժողովրդի դահիճ».

«Բազմաչարչար հայ ժողովրդի դահիճները՝ Դրո, Նժդեհի, Անդրանիկ և այլ ծառաները գիշատիչ իմպերիալիստների»:*

Մենք երբեք չանգիտացանք ռազմական էթիկայի պահանջները:

Իմ զինվորը մնաց մարդ բոլոր կռիվներում, և բոլոր դեպքերում:

Իմ ժողովրդական բանակը միշտ էլ հաղթեց նաև՛ բարոյապես՝ իր թշնամիներին դեպի հայ զենքը հարգանք ու հիացում պարտադրելով:

Թաթարները, որոնք իմ զինվորի գարշապարի ծանրությունը զգացին իրենց մոտավորապես երկու հարյուր գյուղերի սեմին, «անկեղծորեն խոստովանում էին իրենց պարտությունն ու փախուստը»:**

Թուրքերը խոսեցին «հայերի քաջության մասին»:***

Հարևան պարսիկները մեր կռիվներն անվանեցին «մեծ քաջագործություններ»:

Կարմիր բանակի համար մենք եղանք՝ «հին գայլեր, որոնք լավ գիտեն զինվորական արվեստը»:****

Կասյանի կառավարությունը մեր զենքի հաջողությունները վերագրեց Անգլիայի ամենազոր մատին. "Es gelang uns aber dennoch,

---

* «Կարմիր ավանգարդ», 1920, N 52:

* «Կարմիր ավանգարդ», N 52:

** «Ազատ Սյունիք»:

*** «Հայրենիք», 1924, թիվ 7:

**** «Կարմիր ավանգարդ», 1920, 30 հոկտեմբեր, Բաքու:

den Feind zu verdrangen, der in den Beggelande fluchtete, wo ihm die Hilfe der englischen Imperialisten zuteil wurde": Kassian:*****

«Բայց և այնպես կարողացանք թշնամուն փախցնել դեպի լեռնաշխարհ, ուր իրեն օգնության եկան անգլիական իմպերիալիստները»:

«*Մոսկվայի թերթերը,*- գրում էր Ս.Վրացյանը,- *գտնում են, որ Լեռնահայաստանի հերոսական և զարմանք պատճառող...*»:

Այսպիսի՛ն էին իմ վարած կռիվները Լեռնահայաստանում, ուր - հաստատագրենք և այդ - պետական կանոնավոր բանակ չէր իմ ղեկավարածը, այլ՝ մի շինական ժողովուրդ, որը զենքից զատ հարկադրված էր գործածել նաև՛ իր արորն ու մանգաղը: Պետք էր ժողովրդի ծոցից դուրս քաշել նոր պետեր, որովհետև ցարական զինվորականները վաղուց էին թողել, հեռացել: Պետք էր մարզել, թրծել, հասցնել ժողովրդական նոր ղեկավարներ, որոնք կարողանային լեռնահայ զանգվածների մեջ ոտքի հանել, արթնացնել մեր ցեղի նիրհած ռազմախանդ ուժերն ու առաքինությունները:

Թշնամու անվերջորեն կրկնվող հարձակումների դեմ հրամայողաբար պետք էր ստեղծել անցյալի ցեղային արժեքներով, փառքերով ու սրբություններով թաթախուն մի մթնոլորտ, որի մեջ սյունեցին մահն անգիտացող խոյանքների մղվեր:

Եվ արվեց այդ բոլորը:

Արվեց, որ Սյունիքը Հայոց պատմության և Հայաստանի համար կատարի ա՛յն, ինչ որ կատարեց:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Կարմիր բանակը իր լավագույն ընկերների սպանության համար դաշնակ հակահեղափոխության հատուցում է գլխովին ոչնչացմամբ»:

* * *

- Ընթերցողը տեսնում է, որ Կարմիր բանակը, որը, որպես կենդանի զենք, Մոսկվայի կողմից դրված էր թաթար Նարիմանովի և Անգորայի կառավարության ներկայացուցիչ Իբրահիմ Թալիի տրամադրու-

---

***** "Protokol der III kommunistischen Internationale" գրքի մեջ, լույս է ընծայվել 1921, Հունիս 22-ին, Մոսկվայում գումարված Երրորդ Միջազգայնականի կոնգրեսի կողմից:

թյան տակ, իր պաշտոնական օրգանի* միջոցով, դեռ Հայաստան չմտած, սպառնում էր ոչնչացնել ամբողջ Դաշնակցությունը, որ ասել է՝ ազգայնական ու պայքարունակ հայությունը:

Ծանոթ լինելով բոլշևիկների հետագա գործունեությանը, ո՞վ կարող է կասկածել, որ Բաքվի և Միլլիի փայտիկով շարժվող Կարմիր բանակը տառացիորեն պիտի չգործադրե Դաշնակցության մասին արձակած իր մահավճիռը, եթե դյուցազնական Սյունիքը չսանձեր նրան, և ռազմագիտա-հոգեբանական կարելիություն չընծայեր Երևանին՝ իր «Փետրվար 18»-ը կազմակերպելու, ու վտանգվածները Սյունիք ապաստանելու:

Այո՛, և՛ երկրի մտավորականությունը, և՛ մարտական ուժերը, և՛ Հ.Յ.Դաշնակցությունը - այդ բոլորը իրենց գոյությամբ պարտական են Սյունիքին, միա՛յն Սյունիքին:

Երկու խոսք և՛ս:

Եթե ժողովրդի արյունը թափել թույլատրելի է միայն և միմիայն այն դեպքում, երբ հարկադրաբար պետք է պաշտպանել նրա երկիրն ու ֆիզիկականը՝ - 1919, 1920, 1921-ին մեծապես վտանգված էր Սյունիքը:

Եվ նա, Սյունիքը, իմ ղեկավարությամբ, զինաթափեց իրեն սպառնացող վտանգը - հաղթանակեց:

Եթե ժողովրդի առաջնորդը իրեն մատնում է առավելապես իր հայրենիքի նեղ ու ճակատագրական օրերին՝ լեռնահայության ճակատագիրը ես վարեցի մեր պատմության ամենապատասխանատու մեկ վայրկյանին:

«Աշխարհի ամենազարմանալի բաներից,- ասում է Լակորդերը,- մեկն էլ այն է, որ երբեք ո՛չ մի պետություն, ինչպես և ո՛չ մի հաջողություն չի կարողացել իրեն ենթարկել պատմությունը և նրա միջոցով եկող սերունդներին խաբել»:

Սյունիքի գոյամարտը պատմությանն է պատկանում:

---

* «Կարմիր ավանգարդ», 1920, 30 Հոկտ., Բաքու:

ՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Ա

Դիպվածով ձեռքս անցավ խորհրդային իշխանության մեկ հրատարակությունը Լեռնահայաստանում իմ վարած գոյամարտի մասին: Դա լույս է տեսել նաև ռուսերեն լեզվով՝ 1931-ին: Ինչպես բոլշևիկյան գրչի տակից դուրս եկած ամեն մի գրվածք՝ այդ վերջինը նաև մի կատարյալ մահափորձ է՝ ուղղված պատմական ճշմարտության դեմ:

Ապսպարված այդ գրքույկը մի հատիկ նպատակ է ունեցել - խաբել Մոսկվան, որ իբրև թե անկախ Սյունիքի խնդիրը լուծված է ոչ թե բանակցությունների - իմա՛ Մյասնիկյանի կառավարության կողմից մեզ արված զիջումների ճամբով - այլ «մարտական կարգով»: Առ այդ՝ հուշագրքույկի հեղինակը - ոմն Օգոնեզով[83ա] - ամենայն վարպետությամբ խարդախել է Սյունիքի անկախության վերջին օրերի պատմությունը:

Գրքույկը կրում է հետևյալ խորագրությունը՝ «Նժդեհի հրոսախմբի ոչնչացումը»:

Նախիջևանի փողոցներից անցնելիս այդ քաղաքի բնակիչները ժպտադեմ ուղեկցում էին մեզ և անկեղծ-հոգեբուխ խոսքեր ասում, հաջողություն ցանկանալով դաշնակների հետ ունենալիք կռվում: Վազելով մեր հետևից ժպտալով գոչում են՝ «սալա՜մ, սալամ»: էջ 11:

«Հեռու մի տեղ լսելի է ինչ որ մի գազանի մռնչոցը»:

Օգանեզով

1921-ին աշխարհի, ի մասնավորի Արևելքի պայմաններն այնպես էին, որ հաղթական Սյունիքն էլ իր վարած երկամյա գոռ կռիվներից հետո պիտի վայր դներ իր զենքը և սկսեր սակարկել իր անկախությունը խորհրդային իշխանության հետ:

Հարգելով Ատրպատականի առաջնորդ Արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանի դիմումը,** և ապահոված լինելով Սյունիքի կցումը Հայաստանին՝ դադարեցրել էի ռազմագործողությունները կարմիր բանակի դեմ, ու կպատրաստվեյի հեռանալ մեր նվիրական Լեռ-

---

* Երևան, 1931, Պետհրատ: Համար 1493: Գրառեպ. համար 6144(բ): Պատ. 75: Տիրաժ 5000:

** «Ժողովրդական կոմիսարների նախագահ քաղաքացի Մյասնիկյանին, պատճեն՝ սպարապետ Նժդեհին.- Ստանալով կոմիսարներիդ խորհրդի 1921, հունիս 13 հրատարակած դեկլարացիան Զանգեզուրի մասին, Վրացյանի համաձայնությամբ սուրհանդակ ուղարկեցինք Նժդեհի մոտ՝ պատերազմական գործողությունները դադարեցնելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ: Ներսես, Թավրիզ, 1 հուլիս 1921»:

նաշխարհից: Երկիրը թողնելուց առաջ, անհարկի բախումներից և բարդություններից խուսափելու մտոք հրահանգվեց մեր ռազմական ուժերին առժամապես քաշվել լեռները: Այդ դրության մեջ ահա՛ երբ Երևանյան գունդը Նախիջևանի վրայով Սիսիան կմտներ - հեղկոմներ կազմակերպելու և ոչ թե կռվելու առաջադրությամբ - Սյունյաց սահմանագլխի վրա տեղի կունենա *մի աննշան հրացանաձգություն*, որը մի տասնամյակ հետո խորհրդային իշխանությունը պիտի հռչակեր «կռիվ», և գրել տար նրա «պատմությունը»:

Թերթե՛նք թխածո այդ գրքույկը տեսնելու համար, թե ինչպե՞ս մի «գունդ» կարմիրներ՝ Նախիջևանի թաթարների «Սալամ»-ից սիրտ առած՝ եկել ու թեթևորեն սահել անցել են Հայոց Լեռնաշխարհի վրայով, ուր մինչև այդ, ամեն մի ծորում և բարձունքի վրա, առնվազը թրքաբոլշևիկ մի զորամաս իր անփառունակ գերեզմանն էր գտել:

Կարդացեք գրքույկը և պիտի տեսնեք, թե ինչպե՞ս կարմիր հրամանատարը - կաթնեղբայրը անմահ Հաջի Բարայի - «կատաղի մարտեր» է հնարել՝ և նրանց մասին խոսում էր իբրև մեկը, որ նոր է սպանել Նեմեյան առյուծը ու նրա արնաթաթավ մորթին ուսերին առել:

Մահացիորեն տգետ, որով նա՛և ինքնամատնիչ՝ հեղինակը չգիտի որ *պետերը կռվադաշտում էապես իրենց հոգեկան աշխարհը վարելով են կառավարում իրենց հրամանատարության հանձնված զորամասերը:*

Լսե՛նք գումարտակապետ Օգանեզովին.

-«Հրացանի հատ հատ ձայները լսվեցին: Մի հեծյալ լուր բերեց... զեկույցը կարդալը և ընդհարման մասին տեղեկանալը մեզ բնավ չշփոթեցրին»:*

Հաջի Բաբայի արկածները հիշեցնող այդ մի հատիկ հատվածը կբավի, որպեսզի զինվորը հոգեբանության ծանոթ ամեն մահկանացու ընդունի, թե Օգանեզովի և իր զորամասի հոգեվիճակը խուճապային է: Սարսափի մատնվածը միշտ էլ կրկնում է՝ «ես չվախեցա, բնա՛վ, ես չեմ վախենում»:

Ամեն երկչոտ արիություն է կեղծում: Նմանը ճիգ է անում՝ նախ սիրտ տալ իրեն, և ապա քողարկել իր վախը,- մի բան, որի համար նա դիմում է Հաջիբաբայության: Կարմիր պետը մեծախոսում է՝ «ինձ բնավ չշփոթեցրեց կռվի լուրը»:

Նա շարունակում է՝ «Պա՞հ, գոչեց կարմիր բանակային Մեսրոպը, և մի կողմ թռավ»:

-«Վախեցա՞ր, հո կնիկ չես՝ գոռաց դեպի նա մի ուրիշ կարմիր բանակային - Համոն: Իսկ Մեսրոպը գետնին նստած՝ շոշափում էր իր ամբողջ մարմինը, ցանկանալով իմանալ թե հո պատահմամբ վիրավորված չէ՞: -Մեսրո՛պ, ինչո՞ւ ես այդպես գունատ: - Լեղապատառ եղա կնկա նման, ընկեր հրամանատար»:*

Այսպես, դեռ վառոդի հոտը չառած՝ «գունատվել» են կարմիրները: Գումարտակապետի վկայությամբ** «Նյարդոտ» է դարձել անգամ գնդի հրամանատար Տրավկինը: Եվ որովհետև նման պետեր են վարում Երևանից եկած «գունդ»ը՝ այդ վերջինը շուտով պիտի վերածվի ոչխարների սարսափահար հոտի:

Ըստ հեղինակի՝ մութն ընկնելուն պես բարձրանում է Սյունեցիների մարտագրգիռ աղաղակը՝ «խփիր դավաճաններին, ո՛չ ոքի չխնայել»,*** և մի ակնթարթում կարմիր զորամասը - իր պետի արտահայտությամբ - վերածվում է «անկարգ նահանջող վաշտերի»: «Խուճապը տարածվեց ամբողջ գումարտակում, այնպես, որ չորրորդ վաշտն էլ ազդվեց, այնինչ մինչ այդ իր կայունությամբ աչքի էր ընկնում»: Շուտով, սակայն, տեղի է ունենում հրաշքը, և կարելիություն ընձեռնում կարմիրներին դուրս գալու իրենց օրհասական դրությունից: «Թշնամին - հիմարաբանում է կարմիր կոմբատը-ամբողջ ժամանակ սեղմում է անկարգ նահանջող վաշտերը: Նորից լսվեցին ուռա՝, և նորից աղաղակներ՝ խփի՛ր դավաճաններին: Մի ակնթարթ էր այդ, էլի մի փոքր տատանում, և դաշնակները մեզ վար կքշեին Սալվարթա սարից»:****

Նկատեցի՞ք, որ Օգանեզովի բերանում «ամբողջ ժամանակը» վերածվեց «մի ակնթարթ»ի: Նա չի հասկանում, որ երբ խուճապի է մատնված «ամբողջ գումարտակը», երբ իր դիրքերից քաշված՝ նա սկսել է իր «անկարգ նահանջը», այն էլ գիշեր ժամանակ, այն էլ մի երկրում, որի հաղթական սրից զարնված էին տասնիցս ավելի մեծ թուրք, թաթար և բոլշևիկյան ուժեր, մի երկրում, որի անունը վաղուց էր դարձել փառքի և սարսափի հոմանիշ,- կրկնում եմ՝ նա չի անդրադառնում, որ նման պայմաններում՝ իր նկարագրված խուճապները տևում են ոչ թե «մի ակնթարթ», մի ժամ, այլ՝ ժամեր, օրեր, և միշտ էլ պսակվում խայտառակ պարտությամբ, ավելին՝ կատաստրոֆով:

Բ

«Մրջյունի ուղեղն անգամ շուտ չի մոռանում իր կրած պարտությունը»
(Ֆորել):

Խուճապահար զորամասը, զինվորը անդամալուծվում է նախ հոգեպես: Դա ապացույցի չկարոտող ճշմարտություն է ռազմարվեստի

---

* էջ 15:

* էջ 20:

** էջ 20:

*** էջ 21:

**** էջ 21:

այբուբենին ծանոթ ամեն զորականի համար: Կարմիր քաջ Նազարի համար, սակայն, իր նկարագրած խուճապի ժամանակ՝ իսկ կարելի է եղել ոչ միայն գլխովին ոչնչացումից փրկել *«անկարգ նահանջ»*ի ճամբան բռնած իր զորամասը, այլև՝ այդ անդամալույծին մղել հրաշագործության: Հրա՞շք, այո՛, ինչո՞ւ զարմանա: Ճիշտ է, որ կարմիրները, իբրև մարքսիստորեն մտածող նյութապաշտներ, չեն հավատում գերբնական կարգի բաների: Նրանք «գիտականորեն» ժխտում են հրաշքի կատարելիությունը, բայց հավատում են Լենինյան հրաշքին: Չէ՞ որ այն, ինչ զանգվածները դարերով ու դարերով չկարողացան ստանալ երկնքից, այսօր, առանց աղոթքի, առատորեն ստանում են Լենինականությունից: Հենց այդ կարգի հրաշքներից է Օգանեզովի նկարագրածը: *«Դաշնակներն արդեն մեզ էին հասել,*[*] շարունակում է հուշագրողը: *Նրանք ամբողջ ժամանակ սեղմում էին»,* իսկ կարմիրները *«անկարգ նահանջում»:* Ահա՛ հենց այդ համատարած խուճապի և *նահանջի* ժամանակ տեղի է ունենում «պրոլետարական հրաշքը»:

-«Արյունը, պոռոտախոսում է կարմիր պետը - *արյունը գլուխս խփեց. մառզերս առած Մալույմանի հետևից, վաշտերի առջևն անցած, խոյանում եմ դաշնակների վրա»*:[**] Սկսվում է բոլշևիկյան անշանթ որոտմունքը՝

«Ուռա՜, ուռա՜, ուռա՜
Ուռա՜, ուռա՜, ուռա՜»:[***]

Այսպե՛ս, այսպես է գործում հայանուն Հաջի Բաբայի գրիչը՝ սրի փոխարեն, և նրա թղթյա զարկերից Սյունյաց լեռներն են դողում!?...

-*«Բազմաթիվ ոտների խուլ դոփյուն. ընդհատվող շնչառություն, զենքի զրնգոց ու չխկոց». կռվամա՛րտ է, ձեռնամա՛րտ: Դաշնակները սասանվեցին և սվինի հակահարձակման չդիմանալով, ահեղ արծվեհարձակման ենթարկված՝ հավի ճտերի պես ցրիվ անցան»:*[****]

Չասե՞նք – Vive Tartarin! Vive tueur de lions![84]

Տեսա՞նք «կատաղի մարտը», որի «զրնգոցի և չրխկոց»ի նկարագրությունը պիտի մնա հայոց հուշագրության մեջ, իբրև ֆուտուրիստական գլուխ գործոց:

Ըստ հուշագրողի նախահարձակվել են և «ամբողջ ժամանակ սեղմել» դաշնակները, իսկ բոլշևիկները «խուճապահար ու անկարգ» նահանջել: Այդ այդպես լինելով հանդերձ, հաղթանակել են վերջիններ-ը... Դու ծիծաղո՞ւմ ես, ընթերցո՛ղ: Անարդա՛ր ես, քանզի մոռացել ես

---

* էջ 22:
** էջ 22:
*** էջ 22:
**** էջ 22:

բոլշևիկյան դիալեկտիկան, որի ուժով խուճապահարը անսպասելիորեն կարող է «ահեղ արծիվ» դառնալ, իսկ արծիվը՝ հավի ճուտ», այսինքն՝ փախչողը կարող է ոչ միայն հակահարվածել, այլև սվինամարտի դիմել ու ... մի հատիկ զոհ չտալ:

«Հաղթական» է կարմիր պետը - անշուշտ, թղթի վրա - և ահա՛ Սյունյաց վիշապն զգետնող հերոսի շեշտով կարգադրում է՝ *«հավաքել սպանվածներին և վիրավորվածներին»*:[*]

Մի ժամ անցած՝ զեկուցում են նրան՝ *«Ոչ մի սպանված. երեք թեթև վիրավոր: Յոթը սպանված դաշնակներից»*:[**]

Այժմ մենախոսում է՝ *«Այսպիսի տեղեկություններ ստանալով հանգստացա. կրծքիս քարն ընկավ»:* Մի մտածիր, սվինամարտի դիմել, և միայն երեք թեթև վիրավոր տա՞լ...:[***]

Ահա՛ և, վախճանը զավեշտի՝

«Խարաշո՛, հավաքեցեք դաշնակների դիակները և մի տեղ դրեք մինչև վաղը»:[****]

Ի՞նչ է սա - զառանցա՞նք, թե՞ երգիծական:

Ի՞նչ է նկարագրել Օգանեզովը՝ կռի՞վ, թե՞ խամաճկախաղ:

Որ, իսկապես, Սյունիքում, իր անկախության վերջին օրերին, կռիվներ տեղի ունեցած չեն՝ հաստատում է հենց ինքը կարմիր գումարտակապետը:

«Գրավելով Ալիլուն - ասում է նա - *մենք այնտեղ գրեթե բնակիչ չտեսանք, բացի մի քանի ծերունիներից: Վաշտերի հրամանատարները սկսեցին իրենց մարդկանց տեղավորել, իսկ ես քաղղեկների հետ գնացի գյուղական ժողով՝ հեղկոմներ կազմակերպելու»*:[*****]

Այսպես նրանք անարգել մտնում են մեր առաջին գյուղը, և դա համարում «գրավում»: Այդտեղից, առանց մի հատիկ գնդակ արձակելու, նրանք իջնում են Սիսիան: Այդտեղ էլ բախում չկա, չկա դիմադրություն, բայց և այնպես Օգանեզովի թխած հուշագրքում կա բոլշևիկյան «ասում»:

Թողնենք, որ հեղինակը ինքը հերքի իր հնարած կռվի առասպելը: *«Այդ ժամանակ ռազմերթի պահպանությունը գյուղի արևմտ-յան ծայրից սկսեց Դարաբաս մտնել: Շների բազմաձայն հաչոցները մեզ են ուղեկցում: Թվում էր, թե գյուղում շներից զատ ո՛չ ոք չկա: Նույնիսկ*

---

* էջ 22:
** էջ 23:
*** էջ 23:
**** էջ 23:
***** էջ 31:

հովիվները մեզ տեսնելով, թողեցին իրենց հոտերը և թաքնվե-ցին անտառում: Գյուղում մնացել էին բացառապես մանուկները, ծերե-րը և կանայք»:[*]

Նա շարունակում է՝ *«Ձեր գյուղից Գերասիմի հետ էլի ո՞վ է գնացել»* մի ծերունու հարցնում է հրամանատարը:

-*«Գյուղի բոլոր պատվավոր խալխը»* պատասխանում է ծերունին:

«Հասանք Կալլեր: Հանգիստ է: Ծերունիներից, կանանցից և երեխաներից զատ մարդ չկա»:

Նույնը, նույնը ամեն տեղ- *«Մենք անարգել հասանք Յաղջի»*:[**]

Ահա՛ նրանք մտնում են և Մեղրի. «Մեր ռազմերթի պահպանությունը վաղուց Մեղրիում էր, երբ մենք հյուսիսից մոտենում էինք Մեղրու այգիներին: Մեծ Մեղրի մտնելիս իսկույն նկատեցինք, որ գյուղը բնակչությունից թափուր է»:

Այսպես, կարմիր զորամասը անվտանգ հասնում է Արաքսի ափը, և նրա հրամանատարությունը այդ համարում է «ռազմերթ», գյուղեր մտնելը՝ «գրավում», իր տեսած ամեն մի անզեն գյուղացուն՝ «գերի», իսկ անարգել Մեղրի հասնելը՝ «հաղթանակ»: Ալֆոնս Դոդեի հետ չաղաղակե՞նք՝ «Tarascon! Tarascon!»:

* * *

Կարմիրները՝ մոռացած ավեր Թրքահայաստանը, վատորեն ողբում են թաթար գյուղերի վիճակը-*«երևաց ավերված թրքական Գյուլ գյուղը: Ավելի մոտ գալով, տեսանք, որ ավերակների կույտ է դարձել: Գյուղում ոչ միայն բնակիչներ չկային, այլև՝ շեն մնացած տներ: Պատերն էլ էին հողին հավասարեցրած: Այդ ապացույց էր, թե ինչպես բարբարոսաբար են վարվել դաշնակները խաղաղ քաղաքացիների հետ: Հասանք մի ուրիշ ավերված գյուղ - Թեյին. թե ո՞ւր էին գնացել այդ գյուղերի բնակիչները, միայն դաշնակ հայրենասերներին էր հայտնի: Մեզանից յուրաքանչյուրը, քննարկելով թուրքերի վերաբերմամբ դաշնակների գործադրած գազանությունները, հայհոյելով նրանց՝ գնում էինք առաջ»:*[*]

Այո՛, քաղաքացի Օգանեզով, դուք առաջացաք հայհոյելով, և ոչ թե կռվելով: Չի հայհոյում՝ ով զարկել գիտի - գիտական է հոգեբանական այդ ճշմարտությունը:

---

[*] էջ 37:
[**] էջ 58:
[*] էջ 55-56:

Գ

Օգանեզովը շարունակում է՝

«Կատաղի մարտերից և ցերեկվա երթից հոգնած՝ ես մեռելի պես քնել էի և քնի միջից լսեցի, թե ինչպե՛ս մեկն իմ անունն է տալիս»:[**]

«Խոր քնեցինք, չկանխատեսելով, թե որևէ ընդհարում կունենանք»:

«Չգիտեմ ինչքան էի քնել»:

«Չնայած լուրերի պատճառած անհանգստության՝ խոր քուն մտանք»:

«Դե՜հ, այսօրվա համար քաշածներս բավական է, պետք է պառկել քնանալու»...[***]

Կարիք կա՞ շարունակելու այդ կարմիր ցնդաբանությունը՝ համոզվելու համար, որ Օգանեզովին զինվորական համարել կնշանակի՝ զինվորական այբուբենի դեմ հայհոյել:

«Կարմիր բանակայինները - ասում է մեր աճպարարը - *հագիվ ոտքի կանգնելով, օրորվելով շարունակում էին ճանապարհը»:* Այդ պարագան, սակայն, չի խանգարում, որ նա ուժասպառ եղած զինվորներին առաջ վարի *«վայելչաբար»:*

Նա կռիվներ է հնարում, վտանգ կեղծում, բայցևայնպես *«նկատի ունենալով զինվորների հանգիստը»,*[****] թույլատրելի է համարում *«հետախուզություն չուղարկել»:*

Մի այլ տեղ, *«հավատացած լինելով հանդերձ, որ ոչ մի հարձակում չի կարող լինել»,* նա հրամայում է ոչ միայն հետախույզներ հանել, այլև *«ուժեղացնել գիշերային պարեկն ու դաշտային պահակը»:*[*****]

«Հավատացա՞ծ», ո՛չ, ո՛չ, զինվորականին իրավունք տրված չի գործածել այդ բառը,- կռվադաշտում պետք է գիտենալ և հանդգնել: Դուք, Օգանե՛զով, դուք գիտեիք՝ դեռ Սյունիքի սահմանագլուխը չհասած, որ մենք վճռել ենք չդիմադրել այլևս:

Մեր դիմադրության դեպքում - վկա՛ այդ օրերի պատմությունը - ձեր խղճուկ գունդը պիտի չհամարձակվեր նույնիսկ իբրև առաջապահ ծառայել այն հսկայական ուժերին, որոնք ձեզնից առաջ եկել էին Սյունյաց լեռնականների փառքն ավելացնելու: Ձեր կաղ գունդը - որը Սյունիքի դիմադրության օրերին կարող էր մեր մի հիսնյակի ծիծաղը շար-

---

[**] էջ 32:
[***] էջ 40:
[****] էջ 54:
[*****] էջ 54:

ժել - ամենից շատ կարող էր XI բանակի պոչը հանդիսանալ: Իսկ Մոսկվան լավ գիտի, թե իր այդ զորաբանակը ինչպիսի՛ անփառունակությամբ իր մահկանացուն կնքեց մեր լեռներում:

* * *

Կարմիր հնարագործը չգիտի, թե ինչ է նշանակում զինվոր, զորք, կռիվ:

Նա չգիտի, որ *ռազմավարության անփոփոխ հիմքը եղել է և* - անկախ օրը օրին ճարտարված բազմատեսակ նորագույն զենքերից - *կմնա մարդը:*

Ռազմավար չես, եթե չգիտես, թե ինչ ասել է մարդը՝ վտանգի ժամանակ, մարդը՝ ինքնապաշտպանվելիս և մարդը, որ հարձակվում է:

Լենինադավան հուշագրողն ասում է՝

«Դե՛հ, այսօրվա համար մեր քաշածը բավական համարենք և պառկենք քնելու». Տեսնո՞ւմ ես, ընթերցող, որ Օգանեզովների համար կռվադաշտն էլ այն սովորական վայրերից է, ուր ցանկացածդ վայրկյանին կարող ես «բավական համարել քաշածդ և պառկել քնելու», այն էլ *«անզարթնելիորեն».*

Նա բանաստեղծում է՝ *«կարմիր բանակայինները վայելչաբար ու համաչափ առաջ էին գնում»**: Միայն զինվորականորեն բոբիկը կարող է չհասկանալ, որ այնտեղ ուր վտանգ կա՝ մարդիկ «վայելչաբար ու համաչափ» չեն շարժվում: Ահա՛ և կարմիր պետի վառ երևակայությունը - «Կռվադաշտում» տեսնում է *«յոթը սպանված դաշնակ»* և *«ո՛չ մի սպանված բոլշևիկ».* Այդ դեպքում էլ նա չի անդրադառնում, որ իրական կռվի ժամանակ նախահարձակվող Սյունեցիները իրենց յոթը մեռելների կողքին կփռեին առնվազն յոթն անգամ յոթը բոլշևիկ դիակներ:

Արդարև, մի *«խուճապահար ու նահանջող»* գումարտակի նկատմամբ *«հարձակվող և ամբողջ ժամանակը սեղմող»* կողմը կարո՞ղ էր չլինել այն, ինչ որ է գայլը գիշերանց անասնական սարսափի մատնված հոտի մեջ:

Իր հնարած կռվի պատրանքը ուժեղացնելու նպատակով՝ նա իր գումարտակը ենթարկում է դաշնակ *«արկեր»ի, «շրապնել»-ի, և «գնդացրային դիպուկ կրակ»-ին:* Օրինակ՝ ըստ Օգանեզովի *«60 դաշնակ արկեր»* պայթում են կարմիրների գլխին և նրանց *«փոշեծածկ անում»,* բայցևայնպես՝ կարմիրներից ոչ ոք չի սպանվում:

«Օդաբաշյանին պատվիրեցի վճռական հարձակման դիմել: 6-րդ վաշտը ելավ առաջ անցավ: Հակառակորդի գնդացիրը սկսեց կրակ

* էջ 49:

տեղալ վրան: Թվում էր թե դիպուկ կրակը մարդկանց շարքերում ավերածություն է անում» ... Բայց, դարձյալ *«ո՛չ մի սպանված».*

Տեսնո՞ւմ եք կարմիր աճպարարությունը - դաշնակ կրակը *դիպուկ է,* բայց և այնպես «կարմիր բանակայիններին գնդակ *չի դիպչում».* «60 դաշնակ արկեր» են պայթում Օգանեզովի գումարտակի գլխին և նրան «փոշեծածկ անում», բայց կարմիրներից ոչ թե մարդ, այլև մի հատիկ մազ չի պակասում...

Եվ հասկանալի է, թե ինչու - որովհետև հնարովի կռիվը տեղի է ունեցել քնախտավոր կարմիր պետի հիվանդոտ ուղեղի մեջ, և ո՛չ թե Սյունյաց աշխարհում:

Դ

Կռվող կողմերից հաղթանակում է նա, որի բարոյական ուժերն ու առաքինությունները մի հատիկ աղբյուր ունեն - ցե՛ղը, որի պետերն ու զինվորները - եթե այսպես կարելի է ասել - «մի ծնունդով են ծնված»: Հաղթանակում է նա, ով իր «բանակում Աստվածներ ունի»: «Արդ, հարց տանք Օգանեզովին - ի՞նչ, իր վարած ամբոխը ի՞նչ ուներ զորք կոչվելու, կռիվներ վարելու համար: - Ոչի՛նչ, բացարձակապես ոչի՛նչ: Մյասնիկյանի *«Գնացեք, թիկունքը ձեզ կկերակրի»*** ով ամբոխները ռազմախանդ ուժի չեն վերածվում: Հապճեպով, փողոցներից հավաքված, շատերն անվարժ, մեծ մասամբ քաղցի մղձավանջից կարմիրներին միացած իրենից առաջ Սյունիք մտնել փորձող թշնամի ուժերի բաղդատմամբ նա՛և քանակապես ոչինչ, ազգությամբ հայ, որոնց կպակսեր թուրքի, թաթարի և ռուսի ատելությունը, որով և՝ կռվելու տրամադրությունը, որը հայոց լեռնաշխարհին և լեռնականի ոգուն անծանոթ մի տղայամիտ պետի գլխավորությամբ՝ կմտներ Սյունիք, հեղկոմներ կազմակերպելու: Սրտով զինաթափ զինվորներ, հավի ուղեղով պետեր, - ահա՛ կարմիր գունդը, որը կռվի դեպքում ոչ թե հաղթանակ շահել, այլև գողանալ չէր կարող:

* * *

Սյունիքը վաղուց էր սարսափի մատնել կարմիր զորքերին: Մասնավորապես 28-րդ զորաբաժնի ջարդից հետո՝ կարմիրները զարհուրանքով էին մոտենում մեր երկրի սահմաններին: Այլ հոգեվիճակ չէր կարող ունենալ նա՛և Օգանեզովի զորամասը: Թերթեցեք նրա ծանոթ գրքույկը և պիտի համոզվեք, որ կարմիրներին՝ Երևանի առջև խաղաղապես իր դռները բացած Սյունիքում վարել է մի հատիկ կույր ուժ -

* էջ 29:

** էջ 6:

ահաբեկված երևակայությունը: Հանձին Օգանեզովի ես պատկերում եմ այն դժբախտ կենդանին, որ խենթանում է իր պոչից կախված թիթեղի հանած աղմուկից: Սրա սարսափը որոշ դեպքերում հասնում է կատարյալ բանդագուշանքի: *«Ես - ասում է նա - նստած զեկույց էի գրում գնդի հրամանատարին: Վազելով եկավ կարմիր բանակային Մնացականը և վրա տվեց - շուտ, շուտ, դաշնակները հարձակվում են, և բոլորս միանգամից վեր թռանք»*:*

Եվ ի՞նչ է պարզվում - *«տափակ տանիքներին հավաքվել էին կին և երեխա. հարցնում եմ - եկողները ի՞նչ մարդիկ են:-էդ դաշնակների սալդաթներն են (զինվորները), խաբար արինք, գալիս են հանձնվելու»*:

Նկատելի է, որ պետերն ավելի ահընկեց են, քան իրենց զինվորները:

«Հանկարծ մի այլ տեղ ասում է նա - մոտերքս անտառում երկարածիգ հառաչող ձայն լսվեց, կարծես թե մեկը ծառի կատարից պոկվելով ու ծառի սաղարթն իրար տալով, գետնին է ընկնում. ես այդ աղմուկից ցնցվեցի, մոտս պառկած համիարգին հարցնում եմ «Ի՞նչ աղմուկ է».- «բու է, թռչուն է որսում», քնաթաթախ ու դժկամ ասում է նա»:**

Այո՛ մե՛ծ են սարսափի աչքերը. նրանք ամենուրեք հալածում են կարմիր պետին: Երբ թշնամիդ ջղերդ են՝ այլևս քեզ օգնել անզոր է, ոչ միայն լավագույն զենքը, դիրքը, զինակիցը, այլև՝ Աստված:

Տաթևին մոտենալիս նրա վախը վերածվում է զարգանդի: Լսենք այսահար պետի խոսքն՝ իր մասին - *«ճաշի ժամանակից օգտվելով, գնացինք վանքը դիտելու, որը մեր ընկերների մահապատժի իրագործման տեղն էր: Վանքը կառուցված է մի սարսափելի ժայռի վրա: Այդ ժայռի վերևից, հարավակողմից տափարակ է սկսվում: Տափարակի ծայրին այդ «սուրբ» վանքն է զինված: Այստեղ մեզ ցույց տվին այն տեղը, որտեղից մեր Կարմիր բանակայիններին անդունդն են գցել: Ես մտա վանքը, և պատշգամբ ելնելով, ներքև նայեցի: Սարսռեցի: Զարգանդից դող անցավ մարմնովս: Գլուխս պտտվեց, և ես հետ-հետ գնացի»*:*

Ինչպես տեսնում եք, խուճապը-ամբոխների և երկչոտների չար հալածիչը - այստեղ էլ Օգանեզովի հետ է: Դա, սակայն, չի արգելում, որ այդ զարգանդով բռնվածը հաջիբաբայորեն հաղթանակ տանի: Տեսաք, վերջինը, սարսափից մղված, ենթագիտակցորեն չակերտեց

---

* էջ 38:

** էջ 49:

* էջ 45:

սուրբ բառը: Չակերտներն այդ դեպքում պետք է բացատրել ոչ թե բոլշևիկի հակակրոն նշանակությամբ, այլ նրա սարսափով: Սուրբից հետո կա Տաթևը, իսկ Տաթևում կա մի ժայռ, որի հետ կապված է կարմիրների երևակայությունը ահաբեկող մի լեգենդ: Ահաբեկ երևակայությունը ենթակային մատնում է լուսնոտության: Իսկ այդ հոգեվիճակում մարդ արարածը զրկվում է իրերը անսխալ տեսնելու, երևույթները ըմբռնելու կարողությունից: Նմանը հաճախ մոռանում է, որ ինքը զենք ունի, ամուր դիրք, զորավոր թիկունք: Նա փախչում է առանց գիտնալու, թե ով է հալածում իրեն: Սրա համար հորիզոնի վրա բարձրացող լուսինը՝ թշնամու վառած պահակրակն է, իսկ հեռվում տարածվող ոչխարների հոտը՝ թշնամու այրուձին:

Տեսողական և լսողական պատրանքների զոհ՝ Օգանեզովներն ու Տրավկինները հաճախ կռվում են երևակայական վտանգների դեմ:

-*«Գնդապետ Թարխանովը և խմբապետ՝ Աթաջանյան Գերասիմը, գիշերային մթից օգտվելով, հարձակվել են գումարտակի վրա, բայց պարտվելով նահանջեցին»*:**

«Դաշնակ մինիստր Մելիք-Յոլչյանը իր խմբով բռնել է Ալուս Արաթոնի սարը և Կալագան դաղը, ցանկանալով խանգարել մեր շարժման ուղին»:***

«Նժդեհն ամրանում է Խուստուպի վրա»:****

Ա՛յս են խուճապահարները կռվադաշտում - ուրվականներ ու վտանգ տեսնել այնտեղ, ուր դրանք գոյություն չունեն:

Օգանեզովի համար - իր՝ իսկ արտահայտությամբ - Նժդեհը *«Դավիթ Բեկի ուրվականն է»*:*****

Սրա հոգենկարը գծելու համար, կբավի իր հիմարապատումի մեջ հիշատակած մի հատիկ դեպքը:

Պայթում է առաջին գնդակը, և ահա՝ Օգանեզովը զգում է, թե *«քար կա կրծքի վրա»*:* Գնդապետը՝ - Տրավկինը - դառնում է «նյարդոտ»:

Լսվում է Սյունեցիների աղաղակը՝ *«Խփի՛ր դավաճաններին»*, և վայրկենաբար *«խուճապը տարածվում է ողջ գումարտակում»*:

Այդ այդպես լինելով հանդերձ՝ կարմիր գումարտակապետի Մյունհաուզենյան երևակայությունը *«յոթը սպանված դաշնակների»*

** էջ 34:

*** էջ 30:

**** էջ 42:

***** էջ 48:

* էջ 23:

մեջ տեսնում է նաև մի «խմբապետի դիակը»: Ավելին - այդ սպանվածի գրպանից դուրս է գալիս Նժդեհի ստորագրությունը կրող մի հրամանագիր: *«Թերթիկը* - ասում է հուշագրողը - *ձեռքից ձեռք էր անցնում: Լուսաբացին յուրաքանչյուր կարմիր բանակային հետաքրքրվում էր տեսնելու դաշնակ մեռելներին»*:**

Այստեղ էլ, այս դեպքում էլ կարմիրների մեջ խոսողը սարսափն է: Նժդեհի հրամանագիրը և «դաշնակ մեռելներ»ը տեսնելու հետաքրքրությունը – սարսափից ծնունդ առած հետաքրքրությունից:

Ե

Այժմ տեսնենք թե ինչպես այդ այսահար գունդը կմտներ Սյունիք.

-*«Պետք է նշել* - պոռոտախոսում է Օգանեզովը – *որ մենք այն աստիճանի տարակույս չունեինք դաշնակներին հաղթելու վերաբերմամբ, որ հրամանատարական կազմի մեծամասնությունը հետներն առել էին իրանց կանանց»*:***

Այսպե՛ս, ահա՛ մեր կարմիր Տարասկոնցին ընթանում է գումարտակի առջևից՝ իր կինը *«Թամբն առած»*, իսկ առաջապահ վաշտի պետը՝ *«քաջալերում է իր կարմիր բանակայիններին՝ ձեռքը մի մեծ մահակ առած»*:****

Դոնքիշոտական այդ ռազմերթի ժամանակ նա բանաստեղծություն է գրում՝ *«Սարերի հետևից հանդարտորեն դուրս է սողում արևի ոսկեշող ճառագայթը. այստեղ և այնտեղ անտառային թռչուններն են ճռվողում. բազմաթիվ արծաթահնչյուն առվակներ ուրախ խոխոջով ցած էին հոսում»*:***** *Իսկ զինվորները՝ «վայելչաբար և համաչափ առաջ էին գնում»*:******

Եվ այդ՝ «կին», «մահակ», «քուն», «ոսկեշող ճառագայթ», «ճռվողում», «ուրախ խոխոջ» - այդ հովվերգությունը, այդ հաճելի ամառանոցագնացությունը Օգանեզովների հասկացողությամբ ռազմերթ է !?...

** էջ 23 («Կրծքիցս քարն ընկավ»):
*** էջ 12:
**** էջ 17:
***** էջ 41:
****** էջ 99:

Մեկ-երկու բոլշևիկյան վկայություններ այն մասին, թե իրենից ինչ էին ներկայացնում այդ «ռազմերթ»ը կատարող «ռազմական» ուժերը:

«Ընկ. Բալյանը զեկուցանելով Կարմիր բանակի մասին, իմիջայլոց ասում է - *ընկերներ, մեր բանակում կա մի հիվանդություն - դասալքությունն է դա, որ 90 տոկոսով իջեցնում է մեր բանակի ռազմունակությունը»*:*

Այդ քննադատությունը տեղի է ունեցել Սյունիքի խորհրդայնացումից մի տարի հետո: Հասկանալի չի՞, որ իր ռազմունակության 9/10ը կորցրած այդ խուժանը մի տարի առաջ, երբ Սյունիք կմտներ, ավելի անարժեք ու ողբալի էր:

Այդ միևնույն համագումարում մի ուրիշը - Խ.Սարիգյուլյան՝ Կարմիր բանակը ուժեղացնելու, իբրև պետական միջոց, պահանջում է՝ *«պետական գույքերը, խալիները, գրասենյակներում օրիորդների ոտքերի տակ փռելու փոխարեն, փռել զորանոցներում»*:**

Հանճարե՛ղ գյուտ - կուզե՞ս մի ամբոխ ռազմախանդ զորքի վերածել՝ գորգե՛ր, գորգեր փռիր նրա ոտքերի տակ !?. *«Մեր բանակը* - ավելացնում է Բալյանը - *դարձավ ինտերնացիոնալիստական, հակառակ դաշնակցության ազգային բանակին: Եվ որպեսզի դա իսկական կարմիր՝ «մենք նրանց (հայ զինվորների) մեջ մտցնում ենք հիմնական միտքը, թե մեր թշնամին ոչ թե մեր դարավոր հարևան թուրքն է կամ տաճիկը՝ այլ մեր բուրժուազիան և նրա գաղափարախոս դաշնակցությունը: Մենք վերցնում ենք նրանց միջից ազգայնականությունը»*:***

Խոսքը տրվում է Օրջոնիկիձեին՝

«Տաճկաստանը, որ երկար-երկար տարիներ արյունահեղ կռիվներ է մղում Հայաստանի դեմ, մեր բարեկամն է, և կռվում է իմպերիալիստների դեմ: Այդ կռվում նրան մենք պարտավոր ենք օժանդակել»:****

Այսպե՛ս, Սյունյաց դյուցազներգությունից մի տարի հետո, Խորհրդային Հայաստանի անդրանիկ համագումարը՝ դասալքությամբ հիվանդ կարմիր ամբոխը զորքի վերածելու համար կառաջարկեր - ա) գորգեր փռել կարմիր բանակայինների ոտքերի տակ, բ) հայ զինվորի մեջ մեռցնել ազգային գիտակցությունը, գ) վերջինը դարձնել թրքասեր:

---

* էջ 100:
** էջ 95:
*** էջ 115:
**** էջ 59:

Իսկապես որ բոլշևիկ պիտի լինել՝ այդքան վատ ու տգետ լինելու համար:

Ինտերնացիոնալիստական բանա՞կ - անհեթեթություն է դա: Միջազգայնական խմբակցություն, ամբոխ, անհատ - այս և նման դիմազուրկ այլանդակություններ տեսնված են մեր աշխարհում, բայց զորք երբե՛ք:

Հենց ինքը Օգանեզովը գանգատվում է թե Սյունեցիները *«պրոլետարական հոտառություն չունեին»*:*

Մի տարի անցած, Երևանում տեղի ունեցող համագումարը պիտի հանգեր հետևյալ եզրակացության՝ *«Մենք Հայաստանում չունենք պրոլետարական բազա»*:**

Այդ այդպես լինելով հանդերձ, Բալյանը տրամադիր է հակաբուրժուական անտագոնիզմ տեսնել քաղցի մտրակի ուժով կարմիր խուժանի շարքերը քշված թշվառների մեջ:

Ինչ վերաբերում է հայ մարդու թրքասիրությանը - թեկուզ քաղաքական թրքասիրության - պետք է ասել, որ մարդկորեն ու ցեղորեն այդքան թշվառականացած «հայ»ից կարելի է վատթարագույն ամեն բան սպասել, բայց ոչ և՛ գաղափարի ու սրբության համար կռվելու և մեռնելու կամք պահանջող ռազմական ծառայություն:

Ահա՛ դասալքությամբ հիվանդ, իր ռազմունակության 90 տոկոսը կորցրած և մի փոր հացի համար զենքի տակ մտած այն ամբոխը, որին զորք դառնալու համար - ըստ բոլշևիկ պատասխանատու ղեկավարների - դեռ կպակասեին՝ պետական գորգեր՝ ինտերնացիոնալիզմ և թրքասիրություն:

Այդ զինյալ ամբոխը մի օր, կաղնիկաղն պիտի մոտենար Սյունիքին և դեռ նրա սահմանագլխին, անասնական խուճապի մատնվելով, պիտի առաջանար, կռվելով երևակայական վտանգների և «ոգի»-ների դեմ:

Ա՛յս են - անկախ իր դրոշից և գույնից - ա՛յս են խուճապահար բոլոր զորամասերը:

Մինչև իրական թշնամու հետ ճակատ ճակատի գալը, նրանց ուղեղը լցվում է իրենց նախաերևակայացած պատկերներով, որոնք, աստիճանաբար միս ու արյուն ստանալով, ընդունում են իսկ և իսկ իրենց մահվամբ սպառնացող թշնամու կերպարանքը:

«Հեռու մի տեղ լսելի է մի գազանի մռնչոցը, որի արձագանքները ծավալվում են անտառում»,* ասում է Օգանեզովը:

---

* էջ 98

** էջ 49:

* «ՀՍԽՀ խորհուրդների առաջին համագումարը», էջ 78:

Գազա՞ն, մռնչո՞ց, անտա՞ռ...

Կարմիր բանակայինների համար մռնչացող գազանը - դա թաթարի, թուրքի և բոլշևիկների դեմ երկամյա կռիվներում առյուծացած Սյունեցին է, անտառը՝ Սյունիքը, ուր խորհրդային իշխանությունը - Լեռնահայաստանի դյուցազնամարտից մի ամբողջ տասնամյակ հետո, իր մի տղայամիտ սպայի միջոցով կռիվներ է հնարել արքայական առյուծի և կատվի միջև, և «հաղթանակ»ը պարգևել... կարմիր կատվին:

Հաղթանակ - բոլշևիկները Սյունիք մտնելիս այնքան էին հաղթական, որքան և՛ այն օրը, երբ հարավից ու հյուսիսից դավադրված Հայաստանը, առանց մի հատիկ գնդակ արձակելու, իր դռները բացեց Մոսկվայի առջև, և կարմիր բանակի անվան տակ մի խառնածին խուժան մտավ Երևան:

* * *

«Ստյուարտը[84ա] *- ասում է Մռավյանը, - Լոռին դարձրեց մի չեզոք վայր, Լեռնային Ղարաբաղը հանձնեց մուսավաթին, նույնիսկ Զանգեզուրն էին ուզում կցել Սուլթանովի՝ իշխանությանը, սակայն, Զանգեզուրի գյուղացիները արգելեցին այդ անել»*:**

Ճի՛շտ է, պատմականորեն ճիշտ է այդ, սակայն, ճիշտ է և՛ այն, որ եվրոպական անհոգի և կաշառվող դիվանագիտությունից նվազ հակահայ չեղավ նա՛և կարմիր աշխարհակալությունը:

Մոսկվան ամենայն ջերմեռանդությամբ իր XI բանակը մատաղ կտրեց Սյունիքի անդնդախոր ձորերում՝ մեր այդ երկրամասի վրա ևս ազերի թաթարների իրավունքը տարածելու համար:

Հավատարիմ իրենց լեռներին և ցեղային բնազդին՝ «Զանգեզուրի գյուղացիները արգելեցին» պատմական այդ վատությունը:

Ստյուարտների կամքն արհամարհող լեռնականները, Սյունիքը Հայաստանի անկապտելի մասը հռչակելու խնդրում, գիտցան զենքի ուժով իրենց կամքը պարտադրել նա՛և Մոսկվային:

Այսպես, Սյունեցին իր առաջնորդի ցանկությամբ վայր դրեց զենքը, երբ խորհրդային իշխանությունը իր 1921, հունիս 13 թվակիր դեկլարացիայով*** Սյունիքը հայտարարեց կցված Մայր Հայաստանին:

Ահա՛ պատմական ճշմարտությունը Լեռնահայաստանի անկախության վերջին օրերի մասին:

Մնացյալը ի չարի , և ի խավարի:

«Ռազմիկ», թիվ 19- 23, 1941թ.:

** «Խորհրդային Հայաստան», թիւ 106:

*** ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Մյասնիկյան: Ժողկոմխորհրդի անդամներ՝ Պ.Մակինցյան, Ա.Բեկզադյան, Ս.Սրապիոնյան: Քարտուղար՝ Մելիք Ղարաբեկյան:

ՀՈՒՇԵՐ

ՀՈՒՇԵՐ ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻՑ [85]

[24-28 մայիսի 1918թ.]

Իզուր սպասեցինք Անդրանիկին: Նա չկար և չպիտի հայտնվեր: Նրա ունեցած մի քանի հազար զինվորների մեկ յոթերորդն անգամ բավական պիտի լիներ կտրելով երկաթուղու գիծը՝ գալ ու թառել Ղարաքիլիսան եզերող արևելյան բարձունքներին: Այդ անելով նա ոչ թե միայն ձախողանքի մատնած կլիներ մեր զորքերը Ղարաքիլիսայի մեջ շրջապատելու թշնամու փորձը, այլև մեզ հնարավորություն կընձեռներ ռազմագիտական աքցանի մեջ առնելով թշնամուն, դեպի Ալեքսանդրապոլ շպրտել նրան:

«Հինգ օր վերջ, ասում է Անդրանիկ («Զոր. Անդրանիկը կխոսի», էջ 22), Ղարաքլիսէեն հեռաձայնով իմացա Մանասյանեն, թե վերադարձել են Ղարաքլիսա և ոչ մեկ թուրք չէ մտել քաղաքը: Երեք ժամ վերջն ալ հրաման ստացա Նազարբեգյանե պահել երկաթուղիին գիծը: Հետո հեռաձայնով կիմացնէ ինձ Գոմիսեր Մանասյանը, թե հայ զինվորները ոգևորված կհալածեն թշնամին Ղարաքլիսէի երկաթուղիի ուղղությամբ: Անմիջապես կիմացնեմ, որ թշնամիի նահանջը կեղծիք է, խորհուրդ կուտամ չառաջանալ կեդրոնով ու երկու թևերն ամուր պահել միշտ, կեդրոնեն չվախնալով բնավ»:

Երկաթուղու գիծը ռազմագիտորեն պաշտպանելու համար Անդրանիկը պետք էր գրավել մատնանշածս լեռնաշղթան, որպեսզի իր թիկունքում թողներ երկաթուղին և իշխող բարձունքներից սպառնալիորեն կախվեր թշնամու գլխին: Նրա կրավորականությունը, սակայն, կմնար անհասկանալի: Նրան տեղեկացնում են, թե «հայ զինվորները ոգեւորված կհալածեն թշնամին», բայց և այնպես նա շարունակում է նստած մնալ Դսեղում: Ավելին. երբ Մանասյանը նրան հաղորդում է մեր հաղթության լուրը, նա պատասխանում է. «Խորհուրդ կուտամ չառաջանալ կեդրոնով եւ երկու թեւերը ամուր պահել միշտ»:

Տեսնում եք, որ Անդրանիկը գիտեր, թե թշնամին մեր թևերն առնելով, պիտի փորձեր մեզ գերեզմանել ձորում: Նա հասկանում էր այդ, բայցևայնպես կրավորական էր պահում իր հրամանատարության հանձնված ուժերը: Այս դեպքերից երեք տարի հետո Փարիզում հրատարակված «Զոր. Անդրանիկը կխոսի» գրքույկի մեջ խեղաթյուրելով դեռ այնքան թարմ պատմական իրողությունը, ասում է. «Առաջին օրվան չորս ժամ կռիվէն վերջ, հետեւյալ առավոտ կռիվը կվերսկսվի եւ երեք ժամ հետո կիմանամ, թե Քարաքլիսէն հանձնած են արդեն ու նահանջած դեպի Դիլիճան»:

Կարիք չեմ զգում վկայության կանչել մեր նորագույն պատմությանը, Անդրանիկի ասածները սրբագրելու համար: Ղարաքիլիսան անմահացնող հայ զորքը ոչ թե «հետևյալ առավոտ» նահանջեց, ինչպես գրում է Անդրանիկը, այլ չորրորդ օրը երեկոյան: Անդրանիկը երկրորդ օրը առավոտյան կիմանա թե «Քարաքլիսէն հանձնած են արդեն»:

Ո՞վ, ի՞նչ ճամբով կարող էր այդ ստահոդ լուրը հաղորդել նրան, այն էլ մեր ամենամեծ հաջողության օրը:

Անդրանիկը լռում էր այդ մասին:

«Փախչողները գետը թափած են միլիոններով փամփուշտ»,- իմիջիայլոց գրում է Անդրանիկը: Եվ այդ այն զորքի մասին, որ ռազմամթերքի սուր կարիքն զգաց կռվի հենց առաջին օրը:

Մեր մեծ ճակատամարտից հետո, առանց սպարապետի կարգադրության, անցնում է (Անդրանիկը) Դիլիջան, ուր «ոչ ոք չկա, բոլորն ալ փախած են»:

Եվ այդ այն ժամանակ, երբ մեր զորամասերը խաղաղ դիրքապահություն կտանեին: Հասկանում եմ Անդրանիկին, նա ճգնել է արդարացնել իր ունեցած անգործությունը Ղարաքիլիսայի և Սարդարապատի օրերին: Խորապես ցավում եմ այն արտահայտությունների համար, որ նա թույլ է տվել այն մահվան բանակի մասին, որն իր հերոսական խոյանքով հիացումի խոսքեր խլեց Վեհիբ և Խալիլ փաշաներից:

Կռվի երրորդ օրն էր և մեր զորքը հաճախ իր հայացքը կդարձներ դեպի Գուգարաց լեռները Անդրանիկի սպասումով: Նա չկար, նա սովորություն ուներ գործելու մենակուսի: Արդյոք չէ՞ր գիտակցում, թե մի զորամասի ընթացքը դառնում է կորստաբեր, երբ այդ վերջինը հրաժարվում է իր օրգանական աշխատակցությունը բերել իր բանակին, երբ խզելով իր կապը մայր բանակի ընդհանուր գործառնության հետ, սկսում է գործել առանձնակի: [86]

«Հայրենիք», ամսագիր, 1932թ., թիվ 4 (փետրվար), էջ 98-99:

ՄԵԾ ԵՎ ԲԱԽՏՈՐՈՇ ՕՐԵՐ
ՄԱՅԻՍԻ 24-28

Իմ զորամասին էր վիճակված առաջինը վերադառնալ Ղարաքիլիսա:

«Հայ կորպուսի հրամանատարը հրամայում է ձեզ՝ հենց այսօր ձեր զորամասով վերադառնալ Ղարաքիլիսա, շփման մեջ մտնել թշնամու ուժերի հետ և սպասել օգնության: Հեծյալ գնդի պետ՝ Կորգանով, 24 մայիս, Դիլիջան»:

Ստանալով այդ հրամանագիրը՝ զորամասս կենտրոնացավ հայոց եկեղեցու բակը: Վայրկյանների ընթացքում տարածվեց Ղարաքիլիսա վերադառնալու լուրը, և եկեղեցու շուրջը խռնվեց ժողովուրդը: Եկել էին ճամբու դնելու մեզ: Սպայակույտի համարզը կարդաց Երևանից ստացված վերջին հեռախոսագրերը Սարդարաբադում հայ զենքի ունեցած հաջողության մասին: Քիչ անց՝ հայտնվեց Զոր. Նազարբեկյանը, խոր հուզումով հաղորդեց «ազգի պահանջը՝ երեք օր ժամանակ տալ Երևանին, որ կարողանա հաշտություն կնքել թուրք հրամանատարության հետ»,* ապա մի քանի խոսքով օրհնեց մեր զորքին: Գնալով ժողովուրդի հուզումը խորանում էր: Եկեղեցում վաղուց էր սկսվել ժամերգությունը - զանգերի ղողանջը միացած երգեցողության՝ տխրորեն արձագանքում էր հեռուները:

Պետք էր երկու խոսք ասել մեկնելու պատրաստ զորամասիս, և - առավելապես ժողովուրդին: Դեռ խոսքս չէի վերջացրել, երբ հայացքս հանդիպեց ծերունի զորավարի հայացքին - արցունք կար նրա աչքերի մեջ: Լալի՛ս էին, լալիս բոլորը: Ինձ էլ խեղդել սկսեց արցունքը... և հոգեբանական այդ մթնոլորտի մեջ, հազարի չափ զինվորներ ու կամավորներ բռնեցին դեպի Ղարաքիլիսա երկարող ճամբան:

Մայիսի 24-ն էր...

* * *

Զորամասս՝ իր առջև և թևերի ուղղությամբ պարագետներ արձակած՝ առաջանում էր անխռով: Արդեն անցել էինք Սիմեոնովկա գյուղը, երբ մեր ձախ թևի ուղղությամբ ընդհատ գոռացին մի քանի հրացաններ: Թշնամու լրտեսներն էին՝ գարնանամուտ եղած անտառում: Քառորդ ժամի չափ կանգ առավ զորասյունը, մինչև որ առաջապահները կմաքրեին ճամբան: Գիշերվա ժամը 2-ի մոտերը, հասանք ավեր և անմարդաբնակ Վարդանլու գյուղը, ուր թողնելով մեր ուժերը, մի հիսնյակ ձիավորներով առաջացա դեպի Ղարաքիլիսա: Հայ ամառանոցի վրա տիրող մեռելային լռությունը և լույսերի չգոյությունը շատ շուտ

* Արամի գրությունը (ծանոթ. հեղ.):

մատնեցին, որ թշնամին դեռ ոտք չի կոխել այդ տեղը: Տուն չկար, որ սպիտակ դրոշակ պարզած չլիներ: Ճերմակ էր հագել մեր այնքան գեղեցիկ ավանը, որ շուտով պիտի կարմրեր մեր և թշնամու արյունով: Մի տասնյակ ձիավորներ, որոշ հանձնարարությամբ, ուղղվելով Ղշլաղ՝ ձիս քշեցի դեպի այն տունը, ուր գիշերել էի ընդամենը 5 օր առաջ: Բախեցի դուռը և մնացի անպատասխան: Մոտեցա պատուհանին՝ նորից լռություն: Խեղճերը չէին պատասխանում, կարծելով թե գիշերանց թուրքն է հայտնվել: Սկսեցի անուններ տալ, բացվեց դուռը և դուրս նետվեց ինձ ծանոթ, Ալեքսանդրապոլից գաղթած Հակոբ Էիրամճյանի ընտանիքը: Բոլորի դեմքին ուրախություն կար, թե՝ սարսափ: Ավետելով Սարդարաբատի մեր հաղթության լուրը, որոշ տեղեկություններ ուզեցի թուրք ուժերի և շրջանի հայ ազգաբնակչության տրամադրության մասին: Պարզվեց, որ թուրք զորքը գտնվում է Արչութում և որ լուսաբացին տանուտերի գլխավորությամբ մի պատգամավորություն պիտի մեկներ՝ աղ ու հաց մատուցելու թուրք զորահրամանատարությանը: Ուղարկեցի կանչել իշխանության ներկայացուցիչներին: Եկան՝ երկու խոսքով փարատեցի նրանց տարակուսանքը և ապա պահանջեցի հրաժարվել Ղարաքիլիսան առանց կռվի թշնամուն հանձնելու հանցավոր մտքից: Խոստացան «հայոց զորքին մատաղ անել ամեն ինչ՝ և՝ հաց և՝ հարստություն և՝ կյանք»: Պահանջեցի սուրհանդակներ և նրանց միջոցով գրություններ ուղղեցի շրջակա գյուղերին՝ հայտարարելով զենք կրելու ընդունակ գյուղացիներին մի քանի օրվա հացի պաշարով և ունեցած ռազմամթերքով մինչև կեսօր ներկայանալ ինձ, Ղշլաղում: Առանձին գրությամբ պահանջեցի ներկայանալ նաև քահանաներին և ուսուցիչներին: Այդ կարգադրություններից հետո համարզիս՝ Մխիթար Տեր Աբրահամյանին հետ ուղարկեցի Ղարաքիլիսա առաջնորդելու մեր զորամաս, իսկ ես անցա Ղշլաղ: Պետք էր հարմար դիրքեր ընտրել և դեռ լույսը չբացված զետեղել իմ ուժը՝ զորամասիս թվական սակավությունը չմատնելու համար: Ղշլաղում գյուղացիությունը գտա ոտքի վրա և անհանգիստ զորամաս ցանցառակի բռնեց նախապես ճշտած կրակի գիծը - կետրոնը՝ զուգահեռ Ղշլաղին, նրանից մեկ ու կես վերստ առաջ, ձախ թևը՝ դեպի հարավ ընկած անտառապատ բարձունքները, իսկ աջը՝ մոտ 2 վերստ, երկաթուղագիծ դեպի հյուսիս ձգվող բաց դաշտը: Բնական է, որ պահեստի ուժի չգոյությունը, ինչպես նաև ռազմամթերքի պակասը պիտի թելադրեին ինձ ցանցեր փռել թշնամու ռազմագործողության ուղղության վրա, դիմել ռազմադավերի:

Բոնապարտի հստակատեսություն պետք չէր գիտակցել, թե այդ օրվա ամենաթեթև հաջողությունն անգամ գինովցնելու աստիճան պիտի խանդավառեր մեր զորքն ու ժողովուրդը,-քանզի էրզրումից մինչև Գուգարք միայն տխուր պարտությունն էր եղել մեր բաժինը - իսկ

չնչին անհաջողությունը բացարձակապես անկարելի պիտի դարձներ մեր հետագա դիմադրությունը:

Գիտեի, որ թուրքը հավատարիմ իրեն, մեր Ղարաքիլիսա վերադառնալու հանդգնությունը պատժելու համար քինաթափ պիտի լիներ խաղաղ ազգաբնակչության գլխին:

Ուրեմն պետք էր գործի լծել հայ մարդու և՛ արիությունը և՛ հնարամտությունը, որպեսզի քմահաճ Մարսը այդ օրը առաջին անգամ մեզ ժպտար: Այդ մտահոգությամբ՝ մեր կռվի գծից մոտավորապես 1000 քայլ առաջ, երեք կետերի վրա, դարաններ դրի - հետևակներից՝ անտառակի մեջ, ռմբաձիգներից՝ երկաթուղագծային կամուրջի տակ, իսկ հեծյալներից՝ բաց դաշտի մեջ ընկած մի հնօրյա վանքի ավերակներում: Դարանամուտ այդ խմբակները, առանց մատնելու իրենց ներկայությունը՝ թույլ պիտի տային թշնամուն առաջանալու մինչև դարանների գիծը, ապա խաչաձև կրակի տակ առնելով՝ պիտի խորտակեին վերջինը: Նրանք պիտ սպասեին ազդանշանի, որ տրվելու էր հրթիռի միջոցով: Լույսը նոր էր բացվել և արդեն վերադարձել էին Արչութի ուղղությամբ ուղարկված հետախույզները: Այլևս վայրկյանե վայրկյան սպասում էի թշնամու երևալուն: Շրջագայելով մեր առաջադիրքերը խրախուսում էի զինվորներին՝ նրանց մինչև վերջը հոգեպես գոտեպինդ պահելու համար:

Կենտրոնական դարանից նշանացի հասկացրին թշնամու դետերի երևալու մասին: Մի քանի վայրկյան անց՝ մենք այլևս աչքի և կրակի հաղորդակցության մեջ էինք թշնամու հետ: Նա առաջանում էր հաղթ-հաղթ, տողաձև ու խորությամբ բռնած երկաթուղագծի երկու կողմերը: Ժամը 9-ի մոտերը թշնամու կողմից սկսվեց նախակռիվը՝ թեթև հրաձգությամբ՝ մեր դիրքերը և ուժերը շոշափելու նպատակով:

Թշնամին դանդաղում էր: Հասկանալի էր դա, չէ՞ որ մենք առանց կռվի էինք լքել Ղարաքիլիսան և այսօր թուրք զորահրամանատարությունը սպասում էր հայի աղ ու հացին:

Բացի այդ՝ մեր վերին հրամանատարությունը թույլ էր տվել սխալներից ամենաաղետալին - հինգ օր առաջ նա արձակել էր մոտ 6.000 թուրք պատերազմական գերիներ, մի արարք որ թշնամին իրավամբ պիտի բացատրեր հայոց շվարուն վիճակով: Այսօր, սակայն, նա ստիպված էր, զոհեր և ժամանակ վատնելու՝ մեր ֆիզիկական և բարոյական ողնաշարը ջարդելու համար: Ժամը տասն անց էր, երբ սկսվեց ընդհարումը, դարձյալ աննշան ուժերի միջև: Մեր դարանները շարունակում էին իրենց մահառիթ լռությունը: Ղշլաղ էին հասնում կամավորներ՝ հայ գյուղերից և ուղարկվում էին խտացնելու մեր շղթաները: Թշնամու առաջապահ զորամասերը մոտենում էին մեր դարանների գծին, մերոնք սկսել էին ջղայնություն ցույց տալ: Արձակվեց սպասված հրթիռը, որին կայծակի արագությամբ հաջորդեց մեր դարանակալ

խմբերի փոթորկային կրակը: Ծուղակված թշնամու ուժերի մի մասը խուճապով հետխաղացություն փորձեց, իսկ մյուսը՝ խառնախռիվ թափվեց երկաթուղագծի վրա: Մեր դարանները շարունակում էին իրենց ռումբերի, գնդացիրների և համազարկերի տարափի տակ պահել հանկարծակիի եկած թշնամուն: Օգտվելով թուրքերի փափուկ վիճակից՝ իմ ռազմամուտ ուժերը քաշեցի առաջ:

Փամբակի ծորը սկսեց դողալ ռումբերի որոտից: Թշնամին դժվարանում էր ուշքի գալ և հնձվում էր՝ անխնա:

Տրվեց գրոհի հրամանը և սկսվեց հարձակումը: Կռիվը որքան տարերային, այնքան կարճատև եղավ: Թշնամին տագնապով փախչում էր դեպի Արչութ: Նա ժամանակ չունեցավ անգամ իր վիրավորներին փրկելու: Մենք շարունակում էինք մեր տակտիկական ճռաքաղը: Այդ ժամին հայ մարտիկն արժանի էր իր ցեղի անունին: Ճակատամարտի առաջին օրն սկսվել էր հայ ոգու փայլուն գերազանցությամբ: Համոզված էինք, որ պիտի հաջողացնեինք Ղարաքիլիսայում կրկնել Ավարայրը, և տալ Երևանին իր ուզած երեք օրը՝ Բաթումի մեր պատգամավորության գործը հեշտացնելու համար:

Այդ օրը մայիսի 25-ն էր...

«Ռազմիկ», թիվ 121, 1939թ.:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց Հեղափոխական շարժմանը միացել եմ 17 տարեկան հասակից՝ իբրև գիմնազիստ: Հետագայում լքել եմ Համալսարանը և գործել ցարիզմի ու սուլթանականության դեմ: 1906-ին անցել եմ Բուլղարիա և Մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի և Լիապով Գուրինի միջնորդությամբ ընդունվել Սոֆիայի սպայական դպրոց՝ Դմիտրի Նիկոլովի անունով: Ավարտելով դպրոցը (I կարգ) վերադարձել եմ Կովկաս՝ Մուրադի հայդուկային խմբի հետ Հայաստան անցնելու համար: Այնուհետև գործել եմ Պարսկաստանում: 1909-ին վերադարձել եմ Կովկաս և ձերբակալվել:

Բանտերում՝ Ջուլֆայից մինչև Պետերբուրգ՝ մնացել եմ ավելի քան 3 տարի, 163 դաշնակցականների ծանոթ դատավարությունից[87] հետո՝ Սիբիր չընկնելու համար, անցել եմ Բուլղարիա:

2. 1912-ին հայ կամավորներից կազմակերպել եմ մի վաշտ և Անդրանիկի հետ մասնակցել Բալկանյան պատերազմին, հանուն Մակեդոնիայի և Թրակիայի ազատագրության: Պատերազմի վերջին շրջանում, իբրև հեղափոխականներ՝ հրաժարվել ենք մասնակցել բալկանյան ժողովուրդների ներքին կռիվներին և զորացրել Հայկական վաշտը: Ես վիրավորվել եմ այդ պատերազմում: Հայոց դրոշակը և շատ հայ կրծքեր զարդարվել են քաջության խաչերով:

3. Անցյալ համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ ներման արժանանալով ցարական կառավարության կողմից՝ վերադարձել եմ Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Կռիվների առաջին շրջանում վարել եմ Հայկական կամավորական II գումարտակի փոխհրամանատարությունը, վերջին շրջանում՝ ղեկավարել հայ-եզիդական մի առանձին զորամաս:

4. 1917-ին սակավաթիվ ուժերով օգնության եմ փութացել պաշարված Կողբին և փրկել այդ շրջանի հայությանը: Այդ միևնույն օրերին անցել եմ Աբբաս Գիոլ, կապվել եզիդների հետ, հետս առնելով վերջինների առաջնորդ Իվո բեկին, վերադարձել եմ Տփխիս և նրան կապի մեջ դրել Հայոց Ազգային Խորհրդի հետ:

5. Հայաստանի անկախության նախօրյակին վարել եմ Ալաջայի կռիվները, որոնցով կարելիություն ընձեռել էրզերումից, Սարիղամիշից, Ղարսից նահանջող հայկական զորամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապոլ, և Արփաչայը կտրել անցել եմ միայն այն ժամանակ, երբ վերջին նահանջող հայ զինվորի հետ իմ մարդկանց հաջողվեց փոխադրել Անիից պրոֆ. Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնությունները:

6. 1918 մայիսի վերջերին վարել եմ Ղարաքիլիսայի ճակատամարտը: Վիրավորվել եմ: Ներկայացվել ամենաբարձր քաջության շքանշանի:

Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսայի ճակատամարտի ոչ թե օրվա Խորհրդային Հայաստանը, այլև այդ երկրամասի վրա այսօր ապրող հայություն չէինք ունենա: Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատյան հայությանը և հիմքը դրեց Հայկական Պետության:

7. Հայաստանի անկախության օրով, 1919-ի աշնանը փրկել եմ Դավալուի և Վեդիի միջև պաշարված Հայկական 2-րդ գունդը:

8. 1919-ի երկրորդ կեսից անցել եմ Սյունիք՝ էդիֆ բեյի զորքերի կողմից պաշարված, սովի ու սրի մատնված Գողթանին օգնություն հասցնելու համար: Փրկվեցին թե՛ այդ շրջանը, թե՛ այդտեղի հայությունը:

9. Այնուհետև լծվել եմ վտանգված Ղափանի և Արևիքի հայության ֆիզիկական գոյության պաշտպանության գործին՝ ետ մղելով Մուսաֆաքական Ադրբեջանի և Նուրի, Խալիլ թուրք փաշաների պարբերական հարձակումները:

10. 1920-ի կեսերին՝ Դրոյի զորամասի կողմից Ղարաբաղն ու Զանգեզուրը լքելուց հետո՝ ստանձնել եմ բովանդակ Սյունիքի ինքնապաշտպանության գործը: Մեր այդ աշխարհից բացարձակապես կտրված լեռնաշխարհում, առանց բավարար հացի և ռազմամթերքի, առանց սպայական կադրի և արտաքին որևէ օգնության, քաղաքականապես մենակ, շրջագծաձև ճակատի վրա, ավելի քան մի տարի տևող անհավասար ու հաղթական կռիվներով՝ Սյունիքը, որը Հայաստանի կառավարության և Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի միջև կնքված պայմանագրով հանձնված էր Ադրբեջանին,[88] պարտադրում է իր կամքը Խորհրդային իշխանությանը, Մյասնիկյանի օրով իր 1921, հունիս, դեկլարացիայով Սյունիքը համարվում է կցված իր մայր երկրին՝ Հայաստանին:

Սյունիքի հերոսականի շնորհիվ փրկված են նաև Հայաստանի մտավորականությունը, ՀՅ Դաշնակցությունը, հայ հեղափոխական և մարտական տարրերը:

11. Իմ կյանքն ու գործունեությունը կհաստատեն հետևյալ իրողությունները՝

Ես միշտ երևան եմ եկել վտանգների ժամանակ: Խաղաղության օրով պաշտոններ չեմ փնտրել, քանզի չեմ սիրել: Վարել եմ միշտ էլ ժողովրդական ուժեր, մի տեսակ պաղություն զգալով դեպի այսպես կոչված «կանոնավոր» զորամասերը:

Ղեկավար տարրերը քամել եմ ժողովրդից և վերջինները կաղապարել, եթե, այսպես կարելի է ասել, ըստ իր պատկերի: Կռիվնե-

ռում եղել եմ մարդ, ավելի քան մարդ, անգամ թուրք ու թաթարների դեմ, վկա զորամասերիս ուղղված իմ հրամանագրերն ու կանչերը: Սովետական իշխանության կողմից ինձ վերագրվածները հասարակ հերյուրանքներ են՝ սահմանված ամեն գնով հակառակորդին վարկաբեկելու ձգտող պրոպագանդայի համար: Ես երբեք չեմ օգտվել արտաքին ուժերից, անգամ հարազատ Պետության միջոցներից:

Առաջնորդվել եմ Մամիկոնյանների ուխտով. եղել եմ խոր հավատքի և էթիկայի մարդ, և այդ իսկ պատճառով հաճախ դառնության բաժակներ դատարկել: Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը հատկացրել եմ Աստծուն և Հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրավոր սրբազնագույնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու և մեռնելու նրա համար: Դա է եղել իմ սրբազան ցավը, կարոտը, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը, միաժամանակ երկրի ժողովուրդը ջերմորեն կապվել ու կուրորեն հետևել է ինձ: Ինձ թշնամացել են սրբության զգացումից զուրկ կիսամտավորականն ու թղթի... կանոններով ղեկավարվող միջակ զինվորականը:

Ռոճիկ չեմ ստացել* ողջ կյանքում: Հրաժարվել եմ անգամ օտար պետության սահմանած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու և ճոխ ապրելու ամեն կարելիություն, սակայն ապրել եմ իբրև ժողովրդի մարդ, համեստորեն, աղքատ կոչվելու աստիճան: Նյութապաշտությունը հեղափոխականի, զորականի, հայրենասերի համար համարել եմ մեկը մեր աշխարհի ամենամեծ պղծություններից:

Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի Հայկական ափում զինվորներիս կողմից զարնված վագրի մորթին, իմ միակ վարձատրությունը, Զավալ փաշայի դաշույնը, իմ միակ պատերազմական ավարը, պարտություն չտեսած Սյունյաց Դրոշակը, թո՛ղ դա դրվի կրծքիս վրա, գերեզմանիս մեջ, և մի հին Հայկազյան բառարան, իմ միակ մխիթարիչը տարագրանքի մեջ:

12. Հայը Հայաստանից դուրս ենթակա է վատասերումի: Այդ չարիքի դեմ պայքարել հնարավոր է միայն ցեղային արժեքների, առաքինությունների և սրբությունների խոր ճանաչումով ու վերապրումով, մի բան, որ հիմնավորեցի և անվանեցի Ցեղակրոնություն: Դրա նպատակն էր՝ անհայրենիք հայությանը հոգևոր ու քաղաքական անտուն

---

* Այդ սկզբունքի դեմ մեղանչել եմ մի անգամ՝ Ամերիկայում, ուր ընդունեցի, որ ինձ, իբրև գործչի, շաբաթական տրվի: Մեղանչեցի և արդարորեն պատժվեցի: Այդ օրից մարդկային տմարդությունը ստվերիս պես հետևեց ինձ՝ ամենուրեք (ծանոթ. հեղ.):

անտերությունից փրկելով, դարձնել հայրենատեր: Դա Հայրենատիրական շարժում է, որի մեջ վերանորոգվելով միայն պիտի միանան հայության բոլոր հատվածները: Իմ այդ ազգահոգ քարոզչության համար հայության հատվածականացած, ապահայրենացած ու պարտվողական տարրերը դավադրեցին ինձ:

Ներո՛ւմ եմ բոլորին, ներում կրկնակի պատճառներով. առաջին՝ իմ ազգային դավանանքը թույլ չի տալիս թշնամանք տածել դեպի որևէ Հայ մարդ. երկրորդ՝ խորապես հասկանում եմ այդ դժբախտներին, որոնք դեռ չեն հաղթահարել ստրուկն իրենց մեջ, որով և՝ մնացել են տկար և չար:

Այսօր, իբրև հայրենակարոտ տարագիր, մի հատիկ ցանկություն ունեմ. Մեռնե՛լ Հայրենի լեռների վրա:

13. Բուլղարիայում տեղի ունեցավ ռազմա-քաղաքական անցքերի հասունցրած պետական հարվածը: Սպասվում է Կարմիր բանակը: Գիտեմ թե ինչ է սպասվում ինձ, բայցևայնպես որոշել եմ մնալ, հաառակ որի կարելիություն ունեմ par avion* ինձ նետելու Wien:** Չեմ հեռանում, որ հալածանքի չենթարկվեն մեր կազմակերպությունները: Մնալու ավելի լուրջ պատճառներ ունեմ՝ ծանոթ երկու ընկերներիս:

Եկավ սովետական բանակը, և տեղի ունեցավ այն, ինչ որ սպասում էի: Օգտվելով ստեղծված թոհուբոհից՝ իրենց ցեղի կաթով չմեծացած մի քանի վատասերված հայեր արդեն գործի են անցել: Նրանք, առավելապես կոշկակարներ, իբրև ոստիկանական լրտեսներ՝ հետները զինված բուլղար միլիցիոներներ առած, ընկել են տնետուն, ինձ են փնտրում:

Հավիտենական զզվելի ստրուկնե՛ր, որոնք տկար իրենց չարությունը բավարարելու, իրենց հայազգի «թշնամիները» ոչնչացնել տալու սև նպատակով, միշտ էլ օգտվել են օտար ուժերից:

Նվազ զզվելի չեն, սակայն, նաև միայն անվանապես ազգայնական տարրերը: Իբրև շուկայի բարոյականի տեր էակներ՝ անասնանալու աստիճանի սննկացել են սրանք: Ծանոթ, բարեկամ, ազգական, ոչ ոք իր դուռը չի բանա առջևդ, եթե անգամ Նազովրեցու խաչն ուսիդ և փշե պսակը արնածոր ճակտիդ իր պաշտպանությունը փնտրես: Մոռացան, մոռացան բոլորը, որ իմ թափած աշխատանքի շնորհիվ միայն ամբողջ չորս տարի զերծ մնալով հրեաների ճակատագրից՝ հարստացան ու հարստացան: Նրանք, որոնք դեռ երեկ հայացքդ ու բարևդ կորսային, այսօր փախչում են անունիցդ, ստվերիցդ անգամ:

---

* par avion - օդանավով (ծանոթ. խմբ.):

** Wien - Վիեննա (ծանոթ. խմբ.):

Կարմիրները սպասում են ինձ. յոթնիցս ստոր է նա, ով գերադասում է կյանքը մահից բոլոր պարագաների մեջ: Թող կատարվի անխուսափելին: Այսօր կյանքին ես կապված եմ այն չափով միայն, ինչ չափով որ ինձ դեռ պարտական եմ զգում ծառայելու Հայաստանին:

Ո՞ւր ես, ո՞ւր ես դու Հայաստանի տիրասիրտ ու պաշտելի ժողովուրդ, որի ոգին միշտ էլ վսեմանալ գիտի վտանգների ժամանակ:

Գաղո՛ւթ, դու մի անգամ ևս ինձ ապրեցրիր ամոթանքի ողբերգությունը, ամո՞թ քեզ:

ՆԺԴԵՀ

1944, սեպտեմբեր, Սոֆիա

ՀՀ Ազգային անվտանգության նախարարության արխիվ, գործ N 11278, հատոր 4

ՆԱՄԱԿՆԵՐ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԵՌԱԳՐԵՐ

N 1

ԵՐԵՎԱՆՅԱՆ ՁՈԿԱՏԻ ՇՏԱԲԻՆ

30 մարտի 1919թ.

Հաղորդում եմ, որ ինձ վստահված գումարտակի Բաշ-Գառնիում տեղավորված 1-ին վաշտի հրամանատարը հայտնում է, որ Չանգլի և Շուգան գյուղերի ուղղությամբ ուղարկված հետախուզությունը պարզել է, որ տեղի թաթարները վերադարձել են իրենց Չանգլի, Խոսրով, Սաիդ, Կոտուզ, Շուգան և Քոթանլու գյուղերը: Առաջին երեք գյուղերից նրանք դուրս են բերում առվույտը և հարդը: Մյուս գյուղերում նրանք տեղավորվել են իրենց ընտանիքներով:

Գառնիբասարի գումարտակի հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, Ֆ. 276, ց. 1, գ. 114, թ. 35: Պատճեն: Թարգմ. ռուսերենից:

N 2

ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

11 նոյեմբերի 1919թ.

Ղափանի հանքեր

Ղափանի, Գենվազի, ինչպես և ամբողջ Զանգեզուրի համար ճակատագրական նշանակություն է ստացել Օխչիի, Գեղվա ձորի և Շիլարի թրքությունը, որը, սերտ կապ ունենալով Նախիջևանի կառավարության հետ ամենաեռուն պատրաստությունների մեջ է՝ պատեհ առիթին տեղահան անելու Գողթանը և զարկելու Զանգեզուրի հայությունը թիկունքից:

Այսպիսի հանգամանքներում դանդաղելը և Հասկելյան բանակցությունների հետևանքին սպասելը ոչ թե միայն ձգձգած կլինի գործը, այլ և գուցե վտանգ է Զանգեզուրի գոյությանը, ինչպես և Գողթանը-ընդմիշտ: Ի նկատի ունենալով այս բոլորը եկել եմ վերջնական համոզման, որ օր առաջ պիտի ձեռնարկվի հիշյալ ձորերի գրավմանը:

Գողթան-Գենվազ-Ղափանը ունենալով իմ ղեկավարության տակ այս ճակատի գործողությունները պատկերացնում եմ հետևյալ ձևով:

1.Գենվազը գրավում է Օխչին և շարժվում դեպի Գեղվա ձորը:

2.Ղափանը խփում է Գեղվա ձորին մինչև Ինջաբելի գիծը:

3.Գողթանը գրավելով Խուրսը-Նուրգութը և Թիլլաքը՝ կտրում է Գիղի-Նախիջևանի գիծը:

4. Իհարկե անիմաստ կլիներ, եթե միաժամանակ կոնտակտ գործողություններ չսկսվեն ինչպես Սիսիանի, այնպես էլ Զանգեզուրի կողմից: Ինձ թվում է, որ նույն օրն ու ժամին Սիսիանը մի ուժեղ թևով պիտի վերագրավի Նորս-Գիժաձորը և գրավի թրքական Գիղու�ն, իսկ մյուս թևով, միանալով Զանգեզուրի ուժերին, վճռական հարված տա Շիխլարի ձորին ու առաջ շարժվելով խեղդի Գիղին: Ընդգծելով ընդհանուր գործողությունների կմախքը՝ դիտողների մշակումը իմ շրջաններում կազմակերպում եմ ես, իսկ Ձեր շրջաններում, ի հարկե՝ դուք:

Կապիտան *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 22, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

N 3

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՇՏԱԲԻՆ

N 921 29 նոյեմբերի 1919թ.[107]

Նոյեմբերի 10-ին թշնամին մոտավորապես 2000 մարդով շրջապատեց մեզ՝ Նասիրվասը և Ալլյագին: Մեր վաշտերից մեկին հաջողվեց անցնել թիկունք: Պայքարը շարունակվեց 5 ժամ: Երեկոյան թշնամին ետ շպրտվեց մինչև Գիլյակ: Թշնամին ունեցավ մեծ կորուստներ: Մեր կողմից կա մեկ զոհ, մեկ վիրավոր: Փամփուշտի և հացի մեծ պահանջ կա: Խնդրում եմ արագացնել փոխադրումը:

Նժդեհ

ՀՀ ՊԱ, Ֆ. 199, ց. 1, գ. 110, թ. 18: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմ. ռուսերենից:

* Բնագրում այդպես է (ծանոթ. խմբ.):

N 4

ՀՀՊ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

[հունվար]1920թ.

Սիրելի ընկերներ,

Շատ եմ ցավում, որ ժամանակին իմ բոլոր զեկուցումների պատճեններն՝ ուղղված այս կամ այն պարոնին, որոնց թույլտվությամբ միայն ես կարող էի սկսել այս կամ այն ռազմական գործողությունը հանուն Ղափանի, Գենվազի, Բաղաբերդի և Գողթանի փրկության՝ չեմ ուղարկել Ձեզ:

Այժմ ուղարկում եմ Ձեզ մի քանի պատճեններ, որոնցից դուք կտեսնեք, թե ո՞վ է անսխալ ըմբռնել Զանգեզուրի ակտիվ ինքնապաշտպանության գործը և անշեղ և համառորեն ձգտել այդ բանին: Դուք կտեսնեք և կհամոզվեք, որ Օխչու և Գեղվա ձորերի 36 գյուղերը գրավելուց հետո, երբ Օրդուբադը՝ տարերային պանիկայի մատնված իր հարստություններն էր փոխադրում պարսկական ափը, եթե իմ դեկտեմբերի 9-ին արած դիմումը չմնար «ձայն բարբառո անապատի», այժմ՝ մեր ձեռքին կլիներ ոչ թե միայն Օրդուբադը, այլև՝ Զուլֆան:

Այսօր էլ, երբ հրեշավոր չափերի հասած սովի և թշնամու գերադաս ուժերի դեմ մարտնչող Գողթանի մի բուռ ժողովուրդը «գաղթ կամ կռիվ» է պահանջում, նրանք, որոնք չլսեցին ինձ և պատճառ դարձան Ագուլիսների կոտորածին, թեթև սրտով պատասխանում են. «Հրամայված չէ մեզ... Առանց Երևանի թույլտվության չենք կարող, պատասխանատվության հարց կա» և այլն:

Ձանձրացնելու չափ դիմումներ եմ արել, խնդրել, սպառնացել, որ կհեռանամ Զանգեզուրից, եթե թույլ չտան ինձ գրավելու Օրդուբադն ու Բարթազը, բայց միշտ էլ հազար անհիմն պատճառաբանություններով արգելել են ինձ:

Եվ Գողթանը, ավելի քան երկու տարի հավատարիմ պահակի պես ամենադժնդակ պայմաններում, Զանգեզուրի ամրություններն ու նախադուռը պաշտպանող Գողթանը, աչքերը Ղափուջուղի բարձունքներին հառած, սպասում է, անվերջ սպասում: Գողթանցիների համագումարը, ընկեր Աշոտի [90] նախագահությամբ, կայացրել է հետևյալ որոշումը. «կամ գաղթ, կամ կռիվ»:

Պատրաստվում եմ, եթե Ղարաբաղի անցքերը չխանգարեցին, թեթև ուժերով անցնել Գողթան, գուցե ինձ հաջողվի մեռնող Գողթանի աննախընթաց դրությունը մի քիչ բարելավել:

Ձերմ բարևներով՝

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 2 և շրջ.: Ինքնագիր:

N 5

ՁԵԿՈՒՑՈՒՄ ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԸՆՀԱՆՈՒՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

[հունվար],1920թ.

Ղափանի հանքեր

Հաղորդում եմ Ձերդ գերազանցության, որ մի քանի օր ևս և Գողթանի տեղ մենք կունենանք մի հսկայական գերեզմանատուն: Հրեշավոր չափերի հասած սովն սկսել է իր ավերածությունը: Օր չէ անցնում, որ յուրաքանչյուր գյուղում սովամահ չլինեն 15-20 հոգի: Ժողովուրդը կերակրվում է շների և կատուների մսով: Մի բան, որից առաջացել են մի շարք տարափոխիկ հիվանդություններ, որոնք լրացնում են սովի կատարած հունձը:

Հացի հետ վաղուց ի վեր սպառված են բոլոր տեսակի փոխանյութերը (суррогаты):

Ըստ Գողթանի ռազմական ուժերի հրամանատարի վերջին հաղորդագրության, հուսալքված ու քաղցած ժողովուրդը պարզ եղանակի է սպասում, որ անցնի Ղափըջուղը, որ գաղթի, թողնի Գողթանը, որը հանուն Զանգեզուրի փրկության իր գողգոթան դարձրեց:

Երեկ Քաջարանում ինձ և պրն. Աշոտին ներկայացան 200-ից ավելի ուրվականատիպ գողթանցիներ, որոնք նոր էին թողել Գողթանը և փախել սովի ծեռքից:

Առաջարկեցինք վերադառնալ: Նրանք լաց ու աղաչանքով պատասխանեցին: Հուսադրեցինք, որ մինչև ամսիս 18-ը դրսի օգնական ուժերով անցնելու ենք Գողթան: Խոստացան վերադառնալ: Ինչպես տեսնում եք, սովն ու իր առաջացրած մասնակի գաղթերը հասարակականապես օրըստօրե քայքայում են Գողթանը և սպանում նրա մարտունակությունը, որից մոտիկ ապագայում մեծ չափերով կարող է օգտվել իր հարձակումներն անվերջ կրկնող թշնամին:

Կրկնում եմ՝ մի քանի օր ևս և պարտաճանաչ ու մարտնչող Գողթանը, մեր Հանրապետության այդ Բելգիան,-որը երկրորդ տարին է ինչ հավատարիմ պահակի պես ամենադժնդակ պայմաններում, պաշտպանում է Զանգեզուրի նախադուռը-կընկճվի և կկորչի ընդմիշտ:

Ձերդ գերազանցություն, Զանգեզուրի կատարյալ փրկության ձգտողը նախ պիտի մտածի Գողթանի մասին, որի մի բուռն ժողովուրդը այլևս առանց դրսի օգնական ուժերի չի կարող մնալ Ղափըջուղից այն կողմը:

Այս անգամ էլ ինձ և պրն. Աշոտին հաջողվեց մի կերպ խափանել Գողթանի մասսայական գաղթը, որն այնքան կատաստրոֆային պիտ լիներ Զանգեզուրի համար:

Տվածս խոսքը գողթանցիներին դրժել չեմ կարող: /Դա ոճիր և դավաճանություն կլիներ/ :

Գնում եմ, եթե չկարողացա փրկել դրությունը՝ պատվով կմեռնեմ սովի և թշնամու դեմ կռվող ժողովրդի հետ:

Որոշել եմ մինչև ամսիս 18-ը 300 հոգով անցնելու Ղափըջուղը, որի համար և խնդրում եմ Ձերդ Գերազանցության անմիջական կարգադրությունը՝ Գորիսի ռազմամթերանոցից բաց թողնել Գողթան անցնող զորամասիս համար 80.000 եռագծանի փամփուշտ ու հարկավոր քանակությամբ կենսամթերք և շորեղեն:

Կապիտան *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ.499, ց.1, գ.21, թ.1-շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 6

ՁԵԿՈՒՑԱԳԻՐ ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

[Հունվար]1920թ.

Ղափան

Ղափան-Գենվազ-Գողթանի զինված ուժերի հրամանատար նշանակվելու առաջին իսկ օրից ես ուշադրություն դարձրեցի այն հանգամանքին, որ Զանգեզուրում ռազմավարության մասին չեն մտածել: Իսկ երբ սկսել են մտածել և նույնիսկ արշավանք ձեռնարկել դեպի Ղարաբաղ, անտեսվել են Գեղվա, Օխչու և Շիլարի ձորերը: Վերջիններս մասամբ դժվարացրել, մասամբ էլ անհնար են դարձրել կապը առանձին շրջանների միջև: Ղափանը դժվարությամբ է կապվել Սիսիանի և Զանգեզուրի հետ: Գողթանը ևս գտնվել է ծանր պայմաններում՝ Գենվազի և Ղափանի հետ միանալու տեսակետից: Իսկ Գողթանը և Սիսիանը բաժանված են Շիլարի ձորով: Զանգեզուրի թիկունքը վտանգված էր, ուստի ես ուշադրությունս ուղղեցի այդ ձորերի վրա, տանելի դրություն ստեղծելու Գողթանի, Գենվազի, Ղափանի, Զանգեզուրի և Սիսիանի համար: Եվ այնուհանդերձ Գողթանն ու Սիսիանը Շիլարի ձորի պատճառով շարունակում են մնալ միմյանցից մեկուսացված: Դրական արդյունք չեն տվել իմ դիմումներն ու հորդորները Զանգեզուրի ղեկավար շրջաններին: Միշտ մերժում եմ ստացել, որը պատճառաբանվում էր շիլարցիների «հավատարմությամբ» ու լոյալությամբ, մոռանալով, որ

Անդրանիկի օրերին Շահվերդիլարը, էյվազլարը և Օխչու ձորը ևս հայտնել էին իրենց լոյալությունն ու օրինապահությունը:

Ինչպես հայտնի է, այդ նույն հպատակ էյվազլարցիները ճնշում են գործադրել քարահունջցիների վրա, իսկ օխչիձորցիները, երբ Օրդուբադից նրանց մոտ ժամանեցին չորս հրահանգիչներ (խփված են), 25 ասկյարներով, իրենց հայտարարեցին Հայաստանի թշնամիներ, և նույնիսկ փորձեցին հարվածել Գողթանին թիկունքից:

Հարմար պահի, երբ պահանջում են Ադրբեջանի շահերը, Զանգեզուրի հետ նույն չար խաղն են խաղում նաև շխլարցիները: Շխլարի գոյությունը շատ է խանգարում մեր ընդհանուր գործին: Վերջին վեց ամիսների ընթացքում թշնամին հինգ անգամ հարձակվել է Գղթանի և մեկ անգամ Սիսիանի վրա, իսկ մենք հարձակվել են երկու անգամ Գողթանի և Սիսիանի (Զուլ) վրա: Այդ յոթ գործողությունների ժամանակ Սիսիանը և Գողթանը միմյանց օգնելու հնարավորություն չեն ունեցել, քանզի նրանց միջև ընկած է Շխլարի ձորը, որի բնակչության լոյալությանը ոչ միայն չէր կարելի վստահանալ, այլև կլիներ հանցավորություն: Ամբողջ Զանգեզուրում չի գտնվի մեկը, որը հանգիստ խղճով երաշխավորի շխլարցիների համար, թե նրանք չեն լրտեսում Ադրբեջանի օգտին: Ես վստահ եմ, որ Շխլարի ձորը Ադրբեջանի համար լրտեսության մեծ կազմակերպություն է: Նա կդառնա Զանգեզուրի ապագա դժբախտության պատճառ:

Վերջին օրերս հացի համար Գողթանից Օխչու ձոր են ժամանել 350 մարդ: Կապուջուղում բքի և խորը ձյան պատճառով նրանք չեն կարողանում վերադառնալ Գողթան: Հինգ անգամ փորձ է կատարվել անցնել Կապուջուղը և միշտ անհաջող: Այդ փորձերն ուղեկցվել են զոհերով՝ մեռածներ ու խեղդվածներ: Չլիներ Շխլարը, այդ մարդիկ կվերադառնային Գողթան ոչ թե Կապուջուղով, այլ Դավա-յուրդով:

Մնալ այստեղ այդ 350 մարդկանցով՝ խիստ վտանգավոր է, քանի որ թշնամին քնած չէ և կարող է օգտվել Գողթանից նրանց բացակայությունից և հարձակվել Գողթանի վրա: Ներկա պայմաններում Սիսիանը, նույնիսկ ցանկության դեպքում չի կարող այնտեղ ուղարկել կենդանի ուժ, քանի դեռ շխլարի թաթարները գտնվում են տեղում: Չլինեին շխլարցիները, Սիսիանը ազատ, անշեղ և առանց վտանգի կբացեր իր պլանները հակառակորդին՝ կենդանի ուժեր փոխադրել Գողթանի օպերացիայի համար:

Ձերդ Գերազանցության տվյալների համաձայն հակառակորդը զբաղված է Զանգեզուրի դեմ լայնածավալ գործողությունների նախապատրաստությամբ: Հակառակորդի ինֆորմացիան ամենալայնն է և ճշմարիտը՝ շխլարցիների շնորհիվ: Թշնամու նախապատրաստությունը կարող է տևել մեկ ամիս: Հենց այդ ընթացքում հարկավոր է պատրաստվել թշնամուն դիմավորելու համար, ծախողել նրա պլան-

ները, այն է՝ դրսից շխլարի ձոր և Զուլ մտցնել ուժեր, խփել Սիսիանին և Քիլիսալուով միանալ Հաջիսամլուի կողմից գործող թշնամու ստորաբաժանումներին և կտրել մեզ Դարալագյազից, որը, իհարկե, Զանգեզուրը կդներ ամենածայրահեղ դրության մեջ: ուստի անհրաժեշտ է Սիսիանի ուժերով անմիջապես մաքրել Շխլարի ձորը, տիրելով Արավսա, Լաքաթաղ, Թեյվաս, Վերին, Միջին և Ներքին Անզուր գյուղերին, միանալ Գողթանի հետ:

Շխլարի ձորի գրավումով հետագա գործողությունները Նախիջևանի գավառում կդառնան դյուրին և կվերանա Երևանից կտրված լինելու վտանգը:

Զեկուցելով ամբողջ շարադրվածի և, ըստ իս, Շխլարի ձորը մաքրագործելու անհրաժեշտության անվիճելի հիմնավորումների մասին, ես վերջին անգամ խնդրում եմ Ձերդ Գերազանցությանը՝ երբ ի վնաս հայրենիքի շահերի ու հակառակ ռազմավարության պահանջների, որոշ մարդկանց հաջողվի պնդել, որ Շխլարի թաթարները թողնվեն իրենց տեղում, ապա ազատել ինձ զբաղեցրած պաշտոնից, քանզի Զանգեզուրում իմ հետագա մնալը անօգուտ է և աննպատակ: Նման պայմաններում արյունաքամվող Գողթան երկրամասում ես օգտակար կլինեմ որպես շարքային զինվոր:

Կապիտան *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 22, թ. 2-3: Բնագիր: Ձեռագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 7

ԳՐՈՒԹՅՈՒՆ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

Թիվ 129 16 հունվարի 1920թ.
Գաղտնի Ղափան

Ներկա պահին իմ քաղաքական հայացքները և հասարակական գործչի խորհուրդը ինձ թելադրում են Ձերդ Գերազանցությանը անվարան հայտնել հետևյալը. վախենում եմ, որ Գողթանը և Ղարաբաղը դառնան զոհ Շուռնուխի սկսվող օպերացիայ: Ինչպես գրել եմ, թշնամին, եթե ոչ առաջին, ապա 3-4-րդ օրերին կարող է մեր դեմ կենտրոնացնել լուրջ ուժեր, որպիսին անպմայման պատճառ կդառնա որ գործողությունն ընդունի ձգձգվող բնույթ, որով Օրդուբադի օպերացիան կհետաձգվի, նույնիսկ կարող է անհնար դառնալ: Ինչպես հայտնի է Ձերդ Գերազանցությանը, Ղարաբաղ են գործուղվել մարդիկ ինք-

նապաշտպանությունը կազմակերպելու համար: Շուռնուխի օպերացիայի հաջող ելքի դեպքում մեր կողմից ավերված թաթարական գյուղերի գաղթականները կլցվեն Ղարաբաղ «ինքնապահպանման օրենքի ուժով և իրենց հերթին կձգտեն տեղաբաշխվել հայկական գյուղերում»:

Իսկ ինքնապաշտպանության գործի հեշտ կազմակերպումը կդառնար դժվար, գրեթե անհնար, երբ Ադրբեջանը, որպես ռևանշ, գործադրեր, եթե ոչ կոտորած, ապա, լավագույն դեպքում Ղարաբաղի հայության ճնշման դրակոնական միջոցներ:

Պետք է նկատի ունենալ և այն, որ, եթե ոչ Շուռնուխու օպերացիայի ժամանակ, ապա այնուհետև, այսինքն դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո Ադրբեջանը Ղափան-Գենվազի սահմանակից տեղամասում կկենտրոնացներ հակահարվածի ուժեր, որը մեզ թույլ չէր տա Ղափան-Գենվազից անհրաժեշտ քանակությամբ զինվորներ վերցնել Օրդուբադի օպերացիային մասնակցելու համար:

Վերոշարադրյալը բնավ չի նվազեցնում իմ և ինձ ենթակա զինված ուժերի պատրաստակամությունը՝ պատվով կատարելու մեր վրա դրված խնդիրը:

Կապիտան *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 9, թ. 1 և հակ.: Բնագիր: Ձեռագիր:
Թարգմ. ռուսերենից:

N 8

ՁԵԿՈՒՅԱԳԻՐ ՁԱՆԳԵԶՈՒՐԻ ՁԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

18 ապրիլի 1920թ.
Ղափան

Կարծում եմ, որ ես հոգնել եմ գրել, իսկ Ձերդ Գերազանցությունը՝ կարդալ Գողթանի մասին: Բայց և՛ մեկը, և՛ մյուսը մազաչափ անգամ չեն բարելավել նրա դրությունը: Այժմ այնտեղ տիրում է ծանր վիճակ: Այլևս սովից չտառապելու համար, օրական հարյուր մարդ փորձում է անցնել Կապուտջուղի լեռնանցքը, հուսալով այնտեղ կամ գտնել մահ, կամ Ղափանում՝ հաց: Ճանապարհին այդ մարդկանց կեսը կորչում է քաղցից ու ցրտից: Անհյուրընկալ Կապուտջուղի ահեղ բարձրունքներում ու ժայռերում փռված են գոթանցիների հարյուրավոր դիակներ: Այդպես այլևս շարունակվել չի կարող: Գողթանի ժողովուրդը կորցրել է դրսից օգնություն ստանալու բոլոր հույսերը: Եվ երբ, հուրա-

խություն մեզ, մարդկանց հնարավորություն կունենան տեղափոխվել, ապա մի քանի օրվա ընթացքում Գողթանում ոչ ոք չի մնա:

Գողթանացին այլևս հաշվի չի նստում այն բանի հետ, որ Գողթանը կառավարությանը պետք է քաղաքական ու ռազմավարական առումներով:

Ելնելով այժմ Զանգեզուրում ստեղծված ծանր վիճակից, ես վստահ եմ, որ Սիսիանի ուժերից 200 մարդ Գողթան ուղարկելու մասին իմ վերջին ենթադրությունը անհնար է իրականացնել, և որպեսզի Գողթանը պահենք, ես որոշեցի խնդրել Ձերդ Գերազանցությանը՝ միջնորդել Զինվորական նախարարության առջև անմիջապես Գողթան ուղարկել 200 մարդուց բաղկացած ջոկատ՝ Երնջակի շրջանի (Գողթանի և Նախիջևանի միջև) բնակիչներից:

Ջոկատը պետք է ունենա երկու ամսվա պարեն, բավարար սպառազինություն և ուղարկվի իմ տրամադրության տակ: Ջոկատը գլխավորելու են մի քանի լուրջ, փորձված սպաներ, որպիսիք, իմ ստացած տվյալներով, այժմ կան Երևանում: Նույն տվյալներից ինձ հայտնի է, որ Երևանում կան շատերը, ովքեր կցանկանային ընկնել այդպիսի ջոկատ, միայն գտնվեր կազմակերպող և ղեկավարող մարդ:

Միայն այդպիսի ջոկատի ժամանումը կպահի Գողթանը մեր ձեռքում և հնարավորություն կտա բնակչության մի մասն ազատել պահակային ծառայությունից, նրան օգտագործելով բնակչության համար պարենամթերք ձեռք բերելու նպատակով:

Փոխգնդապետ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 22, թ. 4 և հակ.: Բնագիր:
Մեքենագիր: Թարգմ. ռուսերենից

N 9

ՁԱՆԳԵԶՈՒՐ-ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՁՈԿԱՏԻ ՊԵՏԻՆ

Խիստ գաղտնի 8 մայիսի 1920թ.
Թաղասեռ

Ծանոթանալով Ձեր ուղարկած երկու փաստաթղթերի պատճենների բովանդակությանը, ես հանգեցի այն եզրակացության, որ, այսպես կոչված, «Ղարաբաղի հեղկոմը» առաջին իսկ քայլերից մատնում է իրեն: Անմիջապես ակնառու է, որ այդ «Հեղկոմը» ոչ այլ ինչ է, եթե ոչ նույն Սուլթանովները, Նուրի փաշաները և նրանց նմանները,

ովքեր քողարկվելով կեղծբոլշևիզմի դիմակի տակ, ձգտում են ավարտի հասցնել իրենց արյունոտ, հակա-հայկական առաքելությունը: Հետադեմ, իմպերիալիստական Ադրբեջանը, չկարողանալով զենքի ուժով տիրել Ղարաբաղին, այժմ ցանկանում է իր գործակալների միջոցով դառնալ Ղարաբաղի տիրակալը, արդեն բոլշևիզմի դիմակով, խաղաղ և անհիվանդագին ձևով: Զանգվածային կոտորածների ու ջարդերի կազմակերպիչները լկտիություն ունեն իրենց բարձր դասել «Դաշնակցություն» կուսակցության հեղափոխականությունից: «Հեղկոմի» կոչում կարմիր թելի նման արտացոլվում է ցանկությունը սադրել հայ աշխատավոր գյուղացիությանը, նրա մի մասին ուղղել մյուսի դեմ, գյուղացիության շրջանում ստեղծել անիշխանություն և քայքայում՝ միայն թե իրականացնեն իրենց նպատակը, որի մասին խոսվում է «Հեղկոմի» կոչում, այն է՝ «Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանի պաշտպանության տակ»:

Ղարաբաղը, որն ըմբոստացել է Ադրբեջանի իմպերիալիստական ձգտումների դեմ, այժմ նույն Ադրբեջանը նրան հեղափոխության է կոչում: Լսա՞ծ բան է: Հեղափոխության երեկվա թշնամին, հետադիմական Արբեջանի բախտը տնօրինողները չէ, որ Ղարաբաղի գյուղացիությանը հեղափոխություն են սովորեցնելու:

«Հեղկոմը», իմ կարծիքով, Շուշիի շանթարգելն է: Ադրբեջանական հրամանատարությունը մեր հարձակումներից Շուշին ապահովագրելու համար, ստեղծել է այդ «Հեղկոմը», որպեսզի թուլացնի Շուշին գրավելու մեր ձգտումը: «Հեղկոմի» հրապարակ բերելը և տեղեկություններն (մայիսի 7-ի ամփոփագիրը) այն մասին, որ թշնամին Սղնախի ուղղությամբ ուժեղացնում է առաջապահ պահակակետերը, նշանակում են, թե թշնամու մոտ զանգվածային դասալիքություն է, գժտություն, կամ նրա որոշ ուժերի հետքաշում այլ վայր:

Մինչև ռուսական իսկական բոլշևիկների մոտենալը ամեն կերպ կձգտենք, որ Լեռնային Ղարաբաղի սահմաններում տարածում չգտնեն կասկածելի «Ղարաբաղի հեղկոմի» սադրիչ կոչերը, քանզի մի քանի կեղծ բոլշևիկներ, որոնց մեջ քիչ չեն Սուլթանովի կողմից կաշառված գործակալները, այնուամենայնիվ կարող են քայքայիչ ազդեցություն ունենալ մեր պաշտպանության գործի վրա:

Փոխգնդապետ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ.499, g.1, գ.9, թթ.2-3: Բնագիր: Ձեռագիր:
Թարգմ. ռուսերենից:

N 10

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

Հունիս 1920թ.

Ղափանի հանքեր

Սիրելի ընկերներ,

Գողթանում ստեղծված գերսպառնական դրությունը ստիպում է մեզ մի անգամ էլ չան անել* հարայ կանչել, խնդրել, որ դուք անհնարինը հնարավոր դարձնեք, որ արագացնեք 500 զինվորներից բաղկացած զորամասի մեկնումը Ղափան, որտեղից անմիջապես կշարժեմ դեպի Գողթան, և այսպիսով սովի կատարած ավերածություններից և թշնամու գերադաս ուժերից ահաբեկված ժողովուրդը կդադարեցնի կորստաբեր գաղթը և կմնա իր հայրենի հողին կպած:

Ձեզ համար, անշուշտ, գաղտնիք չէ, որ Գողթանն էդիֆների և Խալիլների Կարթագենն է դարձել: «Պիտի կործանվի Գողթանը»,- ահա տաճկա-ադրբեջանական հրամանատարության կատեգորիկ որոշումը, որի իրականացման համար թշնամին նոր ու նոր ուժեր է կենտրոնացնում Օրդուբադում: Ձեզ համար պարզ է և այն, որ Գողթանի տեղահանությամբ թշնամին տեր է դառնում Արաքսի ափից (Կարճևան) մինչև Ձուլ ձգվող լեռնաշղթաների բոլոր կարևոր ռազմագիտական բարձունքներին և կետերին և իր մշտական կրակի ու տեռորի տակ է պահելու Զանգեզուրի հարավ-արևմուտքը:

Ընկերնե՛ր, մի տարվա տաժանակիր գործունեության արգասիքի ապահովման մտահոգությունը չէ, որ թելադրում է մեզ չան անել, օգնություն խնդրել, ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ընդունեք որպես ակսեոմա, որ առանց Գողթանի Զանգեզուր-Ղարաբաղ լինել չի կարող, և որ Գողթանի անկման հետ գերեզման կդրվի և Նախիջևան-Շարուրի վերագրավման հույսը, և մեր ջահել հանրապետության համար կստեղծվի մի աննախընթաց սպառնական դրություն:

Զանգեզուր-Ղարաբաղը միշտ մերն են, եթե ժամանակավորապես վտանգվում են անգամ, եթե Գողթանի մի բուռն հերոսական ժողովուրդը չլքի իր Քրիստափորի և Ռոստոմի նվիրական ծննդավայրը:

Արագացրե՛ք, ժամը, վայրկյանը ճակատագրական նշանակություն ունի, արագացրե՛ք օգնությունը:

Նժդեհ

ՀՀ ՊԱ, ֆ. 198, g. 1, գ. 73, թ. 7-շրջ.: Ինքնագիր:

---

* Չան անել – թախանձագին խնդրել, աղերսել (ծանոթ. խմբ):

N 11

ԽՈՏԱՆԱՆ ԺԱՄԱՆԱԾ ԿԱՐՄԻՐ ԶՈՐԱՄԱՍԻ ՊԵՏԻՆ

10 հուլիսի 1920թ

Առաջածոր

Ի պատասխան Ձեր ամիս 10-ի գրությանը*, հայտնում եմ.

1. Ղափանի բախտը տնօրինելու գերագույն իրավունքը վերապահված է Ղափանի գյուղացիության խորհրդին.

2. Ինձ և ինձ ենթակա բոլոր զինվորությանը հրահանգված է պաշտպանել երկրի սահմանները օտար տարրերի ներխուժումից, ով կամ ինչ անվան տակ այդպիսին տեղի ունենա.

3. Ձեր առաջարկությունը՝ ենթարկել Ղափանը ձեր իշխանության, ես անմիջապես կդնեմ խորհրդին քննության, գրությանս պատասխանը ստանալուց.

4. Եթե դուք համբերություն ունենաք լսելու գյուղացիության կամքը, արյունահեղության մասին խոսք լինել չի կարող.

5. Մինչև խորհրդի գումարումը և Ձեզ տրվելիք պատասխանը նրա կողմից, դուք պարտավոր եք հեռացնել Ձեր զորքերը Ղափանի սահմաններից.

6. Ձեր կողմից ձերբակալված մեր ներկայացուցիչ Սմբաթ Մելիք-Ստեփանյանը պիտի լինի ազատված:

7. Ես անհատապես լայն ինֆորմացիայի համար դեմ չէի լինի տեսակցելու Ձեր ներկայացուցիչների հետ Ղափանի հանքերում, որոնց անձի անձեռնամխելության համար տալիս եմ պատվո խոսք:

Կապարգողթի ռազմական ուժերի հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 565, թ. 4 շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 12

ԳՐՈՒԹՅՈՒՆ ԽՈՏԱՆԱՆ ԺԱՄԱՆԱԾ ԶՈՐԱՄԱՍԻ ՊԵՏԻՆ

13 հուլիսի 1920թ., ժամը 7 անց 10 րոպե

Առաջածոր

Գյուղացիության ներկայացուցիչները ինձ տեղյակ են պահել, որ նրանց կողմից ձեզ տրվել է վերջնագրային ժամանակ՝ հուլիսի 12-ին ժամը 10-ին դուրս բերել ձեր ենթակա ջոկատը Խոտանանից: Միաժամանակ նրանց կողմից ինձ հրամայված է ձեր կողմից Ղափանի գյուղացիության կամքը չկատարելու դեպքում լինել ակտիվ:

Կապանգենգողթի ռազմական ուժերի հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 2002, ց. 1, գ. 565, թ. 7: Բնագիր: Ձեռագիր:
Թարգմ. ռուսերենից:

N 13

ԶԵԿՈՒՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԻԽԱՐԱՐԻՆ[91]

25 օգոստոսի 1920թ.

Ղափանի հանքեր

Ադրբեջանը գործում է: Նրա հարյուրավոր ագենտները՝ իրենց տարած պյուրոսյան հաղթությամբ արբեցած՝ օրնիբուն չափչփում են բուն Զանգեզուրի և Սիսիանի գյուղերը և համոզում, հավատացնում ժողովրդին, որ «սովետական Ռուսաստանը ստիպել է Հայաստանի կառավարության ձեռք քաշելու Զանգեզուրից, որ այդ երկիրը արդեն տրված է Ադրբեջանին» և այլն...

Գլխատված ու ահաբեկված ժողովուրդը լսում է այդ բոլորը ու անզոր կատաղությամբ անիծում և՝ թշնամու կողմն անցած, իր տականքը կազմող մի բուռն կաշառված դավաճաններին և իր ղեկավարներին, որոնք այնքան հանցավոր հեշտությամբ տեղի տվեցին թշնամու ողորմելի ուժերի առաջ:

Չնայած այդ բոլորին Զանգեզուրի հայությունը դեռ չէ դադարել իր հարազատ զորքերին սպասելուց և դեռ ջերմորեն հավատում է, որ շուտով, շատ շուտով Բազարչայից կգոռան մեր թնդանոթները և երկրիս հայությանը կավետեն մեր զորքերի մուտքը Զանգեզուր:

Գիտեմ, դուք ընդմիշտ լքել չեք կարող Զանգեզուրը, որովհետև դրանով դուք երիցս ուժեղացրած կլինեք Ադրբեջանը և լայն հնարավորություն տված կլինեք նրան իրագործելու իր վաղեմի երազը - միանալ Տաճկաստանին:

Ձեռքից թողնելով Զանգեզուրը, դուք կվտանգեք ոչ թե միայն տրագիկ Գողթանը, այլև կվիժեցնեք Նախիջևանի օպերացիան: Ստեղծված պայմաններում ես դժվարանում եմ հավատալ այդ օպերացիայի հաջողությանը: Թշնամին իր ձեռքին պահելով Սիսիանը, լայն հնարավորություն ունի Հաջիսամլուի և Մինքենդի (իսկ ով չգիտե, որ այդ

* Գրությունը տես ՀՀ ՊԱ, ֆ.200, ց.1, գ.565, թ.2-3:

շրջանները կենդանի ուժերի անսպառ ռեզերվեն) իր ուժերի մեծագույն մասը կարիքի դեպքում փոխադրելու Նախիջևան:

Բաքվի մի քանի տասնյակ կաշառված հայերով Ադրբեջանը տեր դարձավ Ղարաբաղին: Սովետականացած Ղարաբաղը վարակեց բուն Զանգեզուրի որոշ գյուղերը և թշնամու՝ թալանի տենչով խելագարված սրիկայախմբերը, գրեթե առանց կռվի մտան Գորիս: Վերջինս իր հերթին արագացրեց Սիսիանի անկումը: Ու այսօր այդ բոլորը՝ և Ադրբեջան, և Ղարաբաղ, և բուն Զանգեզուր ոտքի հանած իրենց բովանդակ ուժերը՝ և զորք, և տեռոր, և թղթադրամների դեզեր, կաշվից դուրս են գալիս ընկճելու իրենց դեմ ծառացած Ղափանը, Գենվազը, Բաղաբերդը և Գողթանը:

Այդ շրջանների ապստամբ ժողովուրդը, որ Ադրբեջանի հետ մեկից ավելի անգամ է չափվել և միշտ էլ հաղթել, ջերմ հավատով սպասում է Հայաստանի զորքերի շուտափույթ երևալուն իր երկրի սահմաններում:

Ուշացնել օգնությունը նշանակում է թուլացնել սպասող ազգաբնակցության մարտական կորովն ու հավատը և հեշտացնել թշնամու գործը, որն աննախընթաց արագությամբ առաջ է տանում բռնությամբ սովետականացած հայ տարրի զինաթափումը, գլխատումն ու տնտեսական քայքայումը:

Արագացրեք զորքերի մեկնումը: Սպասում ենք:

Ղափ-Գենգողթ - Բաղաբերդի Ռազմական ուժերի դիկտատոր
Հրամանատար՝ Նժդեհ

ՀՀ ՊԱ ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 17 և շրջ. : Բնագիր: Ձեռագիր:

N 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[92]

30 օգոստոսի 1920թ.

Ղափանի հանքեր

Ես չգիտեմ, թե ինչով կվերջանան մեր Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի միջև սկսված բանակցությունները, սակայն քաջ գիտեմ այն, որ Ադրբեջանին զիջել ապստամբ Կապարգողթը, նշանակում է՝ մեծապես դժվարացնել մեր ժողովրդի ինքնապաշտպանության գործը:

Մեզ պետք է կառչել մեր երկրի ամեն մի բարձունքին, բնական ամեն մի ամրությանը, անգամ բլուրին, որ մեր անհաշտ թշնամին հնարավորություն չունենա իր մշտական կրակի ու տեռորի տակ պահելու մեր երկիրը: Ձեռքից տալով Ղափանի, Գենվազի, Գեղվածորի ու Գողթանի բնական ամրությունները, Արարատյան հարթավայրում մենք հեշտությամբ չպետք է կարողանանք կազմակերպել ու վարել մեր ժողովրդի ինքնապաշտպանության դժվարին գործը: Թշնամուն զիջել մի երկրամաս (իմա՝ Զանգեզուրը, մասնավորապես՝ ապստամբ Կապարգողթը), որն ամենամոդեռն բերդերի դերն է կատարում մեր հանրապետության համար, իր վրա քաշելով ու զբաղեցնելով թշնամու ուժերի գրեթե կեսը, նշանակում է ոչ միայն զգալիորեն վտանգել մեր երկրի դրությունը, այլև՝ մահվան դատապարտել Կապարգողթի ու Բաղաբերդի ազգաբնակությունը, որովհետև ղափանցիներ ենք մենք, և դա նշանակում է, որ այն մեր խենթ հարվածներից ընկան Օխչու ու Գեղվա անառիկ ծորերը, որ այն մեր գոռ ուռռան մաքրեց Որոտանի և Հաքյարուի ափերը, որ այն մենք ենք, մենք, որ յոթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ գիտենք ատել մեր դարավոր թշնամուն և յոթն անգամ, չէ, կյանքից ավելի ուժեղ՝ սիրել մեր հայրենի հողը:

Ղափանցիներ ենք մենք, և դա նշանակում է, որ այն մենք էինք, որ մահաշունչ ձմեռվա կեսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասիսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձյունները, մեղմացրինք բնության արհավիրքը, բուքն ու բորանը և Գողթան իջանք, հանուն Քրիստափորի սրտից զարնված նվիրական ծննդավայրի՝ թշնամու գյուղերի սև ու թանձր ծուխը բարձրացնելու:

Ղափանցիներ ենք մենք, և դա նշանակում է, որ մեր հպարտ ու փառքի մեջ կորած դրոշակի վրա հարյուրից շատ ավելի ավերված թշնամու գյուղերի անուններ կան, որ մեր կռիվները՝ կանոնավոր, թե անկանոն ուժերի դեմ, մի ձև, միայն մի ձև են ունեցել՝ «ուռռա՛, հառա՛ջ, հրդե՛հ»:

Ու այդ բոլորին ծանոթ թշնամին այսօր իր սուրն է սրում Կապարգողթի ազգաբնակության համար: Բուն Զանգեզուրի և Սիսիանի գրավումը քիչ է ուրախացնում, որովհետև նա լավ գիտի, որ այդ շրջանների նվաճումով դեռ տեր չի դառնում Զանգեզուրին: Նրան՝ մեր թշնամուն, Ղափան՝ Խալիլ և Նուրի փաշաների ուժերը ջարդող հաղթական Ղափանն է պետք, սրա Խուստուպը, Գեղվածորի բերդերն ու բարձունքները, Գողթանի Ղափուջուղը, Գենվազի Այիչանգրը, Կապարգողթի այդ փոքր Մասիսներն են պետք, որոնց տիրելով՝ նա ընդմիշտ տեր է դառնալու Ղարաբաղ-Զանգեզուրին:

Մի՛, մի՛ լքեք այս՝ գերազանցորեն հերոս ու հայրենասեր ժողովրդին, մի՛ զիջեք նրա սրբազան երկիրը, որը իր ծոցի մեջ տեղ է տվել մեր պատմությունը զարդարող հերոսներից ամենամեծերին՝ Դավիթ Բեկին, Թորոս Իշխանին: Ո՛չ մի զիջում: Զիջումը գերություն է, կոտո-

րած ու մահ մեզ համար: Եթե չպետք է տեր կանգնեք մեզ, միացած պահեք մեզ մեր յոթն անգամ սիրած Հայաստանին, թողեք մեզ բախտի կամքին, մենակ, անկախ: Մենք, որ ապրել ենք ազատ ու հաղթական կյանքով, հպարտ ու հերոսական մահով մեռնել գիտենք:
Աստված և իմ սերը իմ Հանրապետության հետ:

Ղափանի-Գենվազի, Գողթանի ու Բաղաբերդի
ռազմական ուժերի դիկտատոր-հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 198, g. 1, գ. 73, թ. 21-22: Ինքնագիր:

N 15

Ա.ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻՆ

10 սեպտեմբերի 1920թ.

Կալեր

Սիրելի Աշոտ Եգորիչ
Պրովոկացիայի համար այսօր սպանվեց բժիշկ Անտոնյանի շանհոգի հայրը: Նա ուղարկված էր եղել պանիկա ստեղծելու Գենվազում: Ղափանում սուլթանաբար գործում են Клебер-ը, Судья-ն և հույնը: Թուրքերը և Բուն Զանգեզուրից եկող հայ սրիկաները թալանում են Ղափանը: Վաշտապետ Ենոքը և ուրիշները վկայում են, որ բժիշկ Անտոնյանն էլ է իրեն թույլ տվել պրովոկացիա անելու Կալերում:
Նա եղել է այդ կողմերը մերկացնելու մեր ծրագրերը (Պարսկաստան): Կարգադրեք, որ այդ մարդուն էլ ձերբակալեն և պահեն (չսպանել):

Բարևներով *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 499, g. 1, գ. 16, թ. 1 և շրջ.: Ինքնագիր:

N 16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[93]

11 սեպտեմբերի 1920թ.

Խուստուփի լեռներ

Աշխարհից կտրված հերոսական Ղափանը իր 70 օրվա կռիվներում վառելով իր վերջին փամփուշտը ռազմական ուժերի մի մասով քաշվեց լեռները:

Թշնամին ինձ վրա հարձակվեց միաժամանակ և Զեյվայից, Ինջաբելից, Գեղվածորից և Գյազբելից:
Մեծամասնականները ոտքի էին հանել Բարգուշատի, Հագարուի, Այրիզայի և Գեղվածորի բովանդակ ուժերը. օգնական ուժեր էին բերել և Ջիբրայելից: Առաջնորդի դեր էր կատարում Զանգեզուրի ժողովրդի տականքը՝ հայ դավաճանների մի ամբողջ լեգեոն:
Զեյվայի կատաղի կռիվներում, որտեղ Ղափանցի ռազմիկը դրսևորեց իր անվիճելի հոգու ամբողջ տափը. թշնամին կրեց մեծ կորուստ: Սեպտեմբերի 3-ի կռվում Զալինգյուլի մոտ ոչնչացրել ենք մեծամասնականների մի ամբողջ դիվիզիոն: Թշնամին առաջանում է թղթադրամների դեզեր ցրելով, կաշառելով բոլոր տեսակի թափթփուկներին: Թշնամու զորքերի շարքերը խտացնում են պրոֆեսիոնալ դավաճանները, լրտեսները, գողերը, ավազակները, շանտաժիստները, գրպանահատները, սեղմ ասած՝ հայ ցեղի բոլոր տեսակի տականքներն ու քրեական տիպերը:
Թշնամին չի ճանաչում ոչ մի սրբություն, ոչ սկզբունք: Կնոջը ձերբակալում են, որպեսզի մատնի ամուսնուն, որդուն ահաբեկում, որ հոր տեղն ասի: Գյուղերը կտրված են իրարից: Չրեզվիչականները, որոնց առաջ նսեմանում են ցարական ու սուլթանական ժանդարմական տխրահռչակ վարչությունները, մութ սպանությունները, թալանն ու կողոպուտը դարձրել են սովորական երևույթ:
Գյուղացիները վրեժով ու զզվանքով լցված, անկոչ հյուրերի երեսը տեսնել չեն ուզում, բայց և այնպես «մեծամասնական» կոչված քաղաքական շառլատանները շարունակում են խոսել հենց նույն այդ գյուղացիության անունից: Թշնամու գործուղություններին տոն տվողը մեր պատմության ամոթը կազմող տխրահռչակ Մելիք-Ֆռանգուլների և Մելիք-Շահնազարների շառավիղներն են:
Ժողովուրդը՝ իր զզվանքն ու զայրույթը արտահայտելու համար, փորձեր է կատարել պղծանքի ենթարկելու Մելիք-Ֆռանգուլի գերեզմանը, որի մոտ այժմ պահակում է թուրք «Մեծամասնական» զինվորը:
Մեր ապստամբ զինվորությունը գիշերները իջնում է լեռներից, ահաբեկում հայ դավաճաններին, ծաղիկներով զարդարում Դավիթ-բեկի և Թորոս իշխանի գերեզմաններն ու նորեն քաշվում լեռները:
Պատմությունը կրկնվում է:
Հերոսական Ղափանը, իր տականքի բացառությամբ, որն ապրել է ազատ ու հաղթական կյանքով, ուխտել է մեռնել հպարտ ու հերոսական մահով:
Իմ ձեռքին են առ այժմ Գենվազն ու Գողթանը: Վճռել եմ՝ հանուն, «մեծամասնականների» կողմից պղծված ու այլանդակված

սոցիալիզմի և մեր ժողովրդի անկապտելի իրավունքների, շարունակել կռիվը մինչև վերջին փամփուշտը:

Սպասում եմ մեր զորքերի առաջխաղացմանը:

Արագացրեք:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 198, g. 1, գ. 73, թթ. 23-24: Բնագիր: Ձեռագիր:

N 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[94]

15 սեպտեմբերի 1920թ.

Մեղրի

Մեծամասնականները բռնաբար սովետականացած Ղափանի գյուղացիությանը հայտարարել են, «որ իրենք կռվում են ոչ թե Հայաստանի Հանրապետության դեմ, որը վաղուց է ձեռք քաշել Զանգեզուրից և որը հայտնել է Լեգրանին, որը այս շրջաններում ոչ ռեգուլյար ուժեր ունի, ոչ էլ ներկայացուցիչներ՝ այլ Նժդեհի դեմ, որը զենք է վերցրել Սովետական իշխանության և նրա զորքերի դեմ»:

Նման պրովոկացիաներով թշնամին ձգտում է թուլացնել մարտնչող գյուղացիության ռազմական կորովը:

«Մեզ Նժդեհն է հարկավոր, ոչ թե ձեր երկիրը և եթե նրան մեզ չհանձնեք, ձեր գյուղերը կրակի կմատնվեն և կարմիր բանակը կշարունակի մնալ ձեր շրջաններում և ապրել ձեր հաշվով»:

Նման զենքերով կռվող թշնամին իմ դեմ է հանել բռնաբար սովետականացած շրջանների կաշառված ամբողջ տականքը: Կռվում եմ: Խփվել է ձիս: Վիրավորված եմ:

Կռվի ծանրության կենտրոնը փոխադրված է Արևիքի շրջանը (Մեղրի):

Երրորդ օրն է, ինչ հերոսաբար դիմադրում է Շիվանիձորը: Այս շրջանի գյուղացիությունը դեռ ինձ հետ է: Հույս ունեմ մի քանի օր ևս դիմագրավել, մինչև որ ձեզնից կստանամ օգնություն և որոշ հրահանգներ:

Աստված և իմ սիրտը իմ Հանրապետության հետ:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 198, g. 1, գ. 73, թ. 18: Բնագիր: Ձեռագիր:

N 18

Ա.ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻՆ

[1920թ. սեպտեմբերի 18-ից ոչ ուշ]

Սիրելի Աշոտ

Վախկոտները, սրիկաները և սրանց հար ու նման մեծամասնականները չէին հավատում, որ Նժդեհը կվերադառնա Ղափան՝ շարունակելու իր սիրած ժողովրդի ինքնապաշտպանության գործը: Բայց Նժդեհը անգամ վիրավոր հրաժարվեց Երևան գալուց և իր մի խումբ արծիվների հետ վերադարձավ Ղափան: Թքել եմ այն ճակատին, որը խոնարհվել գիտե սրիկաների առաջ: Համբուրում եմ Ղափանի և աշխարհի բոլոր հպարտ ճակատները:

Համբույրներով *Նժդեհ*

P.S.

Դրոն Զանգեզուր էր եկել մոտավորապես 200 հոգով: Այդ ուժերով կարելի էր քշել բոլշևիկներին, բայց ոչ պաշտպանել Զաբուղի ձորը: Ժողովուրդը (բուն Զանգեզուրի) վերջին րոպեին անցավ թշնամու կողմը: Դա վախի հետևանք էր և ոչ թե большевизм: Ռեալ ուժ-ահա՛ թե ինչ է հարկավոր ժողովրդին:

Ողջ եղիր! Նույն

ՀՀ ՊԱ, ֆ. 499, g. 1, գ. 16, թթ. 2 և շրջ.: Ինքնագիր:

N 19

Ա. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻՆ

[1920թ. սեպտեմբերի 18-ից ոչ ուշ]

Սիրելի Աշոտ

Վաշտապետ Ենոքը և պորուչիկ Տեր-Պետրոսյանը գրում են, թե Ոխչիձորի հայությունը գրեթե ընդունել է բոլշևիզմը և որ հայկական իշխանությունը չէ ճանաչում և այլն: Մի ուրիշ հաղորդագրություն ասում է, որ բոլշևիկները պատրաստվում են մտնելու Ոխչի ձոր: Այդ բոլորը ստիպում է ինձ խնդրելու քեզ, որ անմիջապես անցնես Դաշտուն տնօրինելու հետևյալը.

1/ Քաջարանից անմիջապես փոխադրել տալ իմ 30000 փամփուշտը-Դաշտուն:

Նույն տեղում կան մեծ քանակությամբ նաև ձեռնառումբեր: Այդ բոլորը փոխադրել էի Ղարաբաղից Օրդուբադի օպերացիայի համար: Այդ բոլորը պահանջել Քաջարանի կոմիսարից և վաշտապետից:

2/ Հանդից Քաջարան բերել տալ մեր մի ձեռնագնդացիրը:

3/ Ապահովել Գողթանից մի թնդանոթի դուրս բերելը: Կարող է լինել, որ թնդանոթը Ղափուջուղից իջեցնելուց հետո ընկնի սրիկաների ձեռքը:

4/ Ազդել Բաղաբերդի ժողովուրդի վրա՝ հետ կանգնելու դավաճանությունից:

5/ Մերկացնել, որ Բագվից Բաղաբերդ եկած սրիկաները կաշառվածներ են:

6/ Բարձր պահել Լիճկ - Դաշտունի տրամադրությունը:

Քեզ բարի ճանապարհ ջերմ բարեվներով քո *Նժդեհ*

P.S.

Օգտագործիր Դաշտունցի Ավագին: Նույն.

ՀՀ ՊԱ ֆ. 499, ց. 1, գ. 32, թ. 1-2: Ինքնագիր:

N 20

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԵԺՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ[95]

18 սեպտեմբերի 1920թ.

Իմ դրության տրագիզմը նրանում է, որ՝ կտրված աշխարհից, զուրկ եմ ինֆորմացիա ստանալու հնարավորությունից: Հայաստանի Հանրապետությունը ինձ դրել է ամենաանել դրության մեջ: Ո՛չ օգնություն, ո՛չ ինֆորմացիա, ո՛չ էլ որոշ հրահանգներ եմ ստանում: Ես շարունակում եմ կռիվները և պիտի դիմադրեմ, քանի դեռ ժողովրդի մի մասն ինձ հետ է: Թշնամին, որպես ռազմական ռյալ ուժ, ինձ համար անարժեք է, արհամարհելի: Թշնամին ուժեղ է իր պրովոկացիոն գործունեությամբ, իր հրաշագործ չրեզվիչայկաներով, լրտեսական ցանցով, ահաբեկիչներով և տարածած պրովոկացիոն լուրերով:

Թշնամին Զանգեզուրի բովանդակ թուրք ուժերը հանել է իմ դեմ: Ինձ՝ թշնամու փոխարեն, ընկճելու են ռազմամթերքի կրիզիսը և Զանգեզուրի հայության տականքը: Քանի դեռ շարունակվում է կռիվը՝ արագացրեք օգնությունը: Ուշացնել օգնությունը-նշանակում է թուլացնել մարտնչող գյուղացիության մարտական կորովն ու հավատը: Տվեք ինձ լայն ինֆորմացիա: Սպասում եմ:

Ջերմ բարևներով՝ Ձեր *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 316Ա 1-5: Ինքնագիր:

N 21

ՎՐԵԺՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

18 սեպտեմբերի 1920թ.

Մեղրի

Սիրելի ընկերներ.

Ուղարկում եմ Ձեզ մոտս եղած կարևոր դոկումենտների մի մասը, ընդունեք և պահեք:

Դաշնակցական ջերմ բարևներով՝ Ձեր *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր:

N 22

ՎՐԵԺՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

19 սեպտեմբերի 1920թ.

Մեղրի

Ընկերներ

Դեպքերը Ղափանում և Գենվազում աստիճանաբար զարգանում ու խիստ վտանգալից բնավորություն են ստանում ինչպես երկրիս հայության, նույնպես և ողջ Հայաստանի նկատմամբ:

Արտաքին աշխարհից կտրված ենք բառի ամենալայն իմաստով: Դրության անորոշությունը մեծ լքումն է առաջացնում ժողովրդի մեջ: Ռազմամթերքի կրիզիսը կռվող ուժին դրել է անելանելի դրության մեջ: Եվ հերոսական Ղափանը կամաց առ կամաց տեղի է տալիս թշնամու աննշան ուժերի առաջ: Մի քանի հարյուր ռուս բոլշևիկներ միացած մի խումբ հայ դավաճանների և տեղական թուրք հորդաների հետ սիստեմատիկաբար ոչնչացնում են ողջ Զանգեզուրը: Այլևս գաղտնիք չէ, որ մենք գործ ունենք միայն և միայն Ադրբեջանի հետ:

Կռվում ենք այժմ Գենվազի սահմաններում: Հաջողությունն առայժմ մեր կողմն է: Շիրվանածորի ճակատում թշնամու առաջխա-

ղացման բոլոր փորձերը հետ է մղված մեծամեծ կորուստներով: Ներկա պայմաններում մեր հաղթությունները, սակայն, մխիթարական համարել չի կարելի-ռազմամթերքի պաշարը անսպառ չէ և Գենվազում: Անորոշությունը անհետեղանք չէ թողնելու Գենվազը ևս:

Հայտնի պիտի լինի Ձեզ, որ Ղափանի և Գենվազի դեպքերը, նախաձեռնված թշնամու կողմից, դավադրական մի ակտ է: Բոլշևիկների և Հայաստանի կառավարության միջև զինադադար է կնքված: [96] Զինադադարի խախտումով նա հույս ունի գրավել Ղափան-Գենվազը, միանալ Օրդուբաթ-Նախիջևանին և այդպիսով Հայաստանի կառավարությանը դնել կատարված փաստի առաջ: Բոլոր նշաններից երևում է, որ մեր կառավարությունը տեղյակ չէ, թե ինչ է կատարվում այստեղվարագույրի ետևը: Հակառակ դեպքում նրա այս անփույթ, անարձագանք վերաբերմունքը դեպի յուրայինների ոչնչացումն ու մի երկրի բռնագրավումը բացատրել անկարելի է:

Ուրեմն, ընկերներ, կանգ չպիտի առնենք և ոչ մի միջոցի առաջ իրազեկ դարձնելու կառավարությանը այստեղի անցուդարձերի մասին: Կառավարության և մեր մեջ կապ պահել միայն և միայն դուք կարող եք-ուրիշ ճանապարհ չկա: Ընկելով Զանգեզուրը՝ վտանգվում է Նախիջևանը, իսկ Նախիջևանի անկումով մահացու հարված է տրվում Արարատյան դաշտին:

Ընկերներ, աշխատեք անդադրում: Ձեզ վրա է մեր հույսը:

Ընկերական բարևներով՝ *Նժդեհ*

Գ. Աղայան *Աշոտ*

Հ.Գ.

Իշխանին ուղղված հեռագիրը անմիջապես ուղարկել:

ՀՀՊ ԿԱ, 316Ա 1-4: Նժդեհի ինքնագիրը:

N 23

Ա. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻՆ

25 սեպտեմբերի 1920թ.

Վարդանաձոր

Սիրելի Աշոտ

Հենց նոր Քաջարանի վաշտապետից ստացա հաղորդագրություն, որով հայտնում է, թե Առստամը և Թևանը գնացել են հանքերը դիմել ռևկոմին, խնդրել, որ գան իրենց շրջանը: Հաղորդագրողը ավելացնում է, որ նույն սրիկաները եկել են Քաջարան և հեղաշրջել մի

քանի հոգու: Գրում է, որ Բաղաբերդում դիրքապահակություն չկա և թշնամին այսօր կամ վաղը կլինի Բաղաբերդում:

Ի նկատի ունենելով այդ բոլորը խնդրում եմ արագացնել ռազմամթերքի փոխադրությունը Քաջարանից, դուրս բերել ձեռքի գնդացիրը Հանդից: Անմիջապես հատուկ սուրհանդակ ուղարկել Ղազարի մոտ, որ Ղափաջուղից իջնելուց առաջ մեկ երկու վստահելի տղաներով պարզի Օխչու ձորի դրությունը իրեն համար, ապա վարվի ըստ այնմ: Ասելիքս է, որ եթե այդ սրիկաները բուն դրած կլինեն և այդ ձորում, թնդանոթը թող վերադարձնի Ղազարյուրդ և սպասի իմ կարգադրության:

Կրկնում եմ, եթե թնդանոթը արդեն բերված է Ղափաջուղ և Օխչու ձորը դեռ մեր ձեռքին է, Փիրդովդանի և Շաբադինի քարերը բռնել տալ մեր դիրքապահներով և առանց բոպե կորցնելու փոխադրել Լիճք և անմիջապես հայտնել ինձ-Մեղրի:

Աշխատեք կենդանի կապ ունենալ Քաջարանի և Կալերի հետ: Գևորգին և Արամին քաշեք ձեզ մոտ:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 499, ց. 1, գ. 16, թ. 3-4: Բնագիր: Ձեռագիր:

N 24

Ա. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻՆ

25 սեպտեմբերի 1920թ.

Մեղրի

Սիրելի Աշոտ

Շահբաղյուրդը գրավված է թշնամու կողմից, պոռնիկ շիկահողցիների աջակցությամբ:

Մազրան և Կիմանցը անցել են թշնամու կողմը: Կալերում թույն է սերմանում՝ Ենոք կոչված (վաշտապետ): Օխչի ձորի մասին Դու ավելի շատ բան գիտես, քան ես: Ռազմամթերքը փոխադրելուն պես անցիր Մեղրի: Ղազարին հասանելիք նամակը ուղարկիր հատուկ սուրհանդակով: Գրիր շրջանիդ տրամադրության մասին:

Քո *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 499, ց. 1, գ. 16, թ. 5 և շրջ.: Ինքնագիր:

N 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[97]

29 սեպտեմբերի 1920թ.

Դրոն զինվորական նախարարի անունից հրամայում է ինձ, համաձայն կնքված զինադադարի, վերցնել իմ զորամասը և անցնել մեր տարածքը:

Ես չգիտեմ՝

1. Ի՞նչ պայմաններով, ո՞ւմ հետ (Ադրբեջանի՞, թե՞ Խորհրդային Ռուսաստանի) և որքա՞ն ժամանակով է կնքված զինադադարը,

2. Եթե Կապարգողթի իմ ուժերը, համաձայն զինադադարի, պետք է թողնեն իրենց երկիրը և քաշվեն մեր տարածքը, ապա՝ մեծամասնականները և ադրբեջանական ավազակախմբերը, ե՞րբ և ո՞ւր են քաշվելու,

3. Ըստ կնքված զինադադարի, ո՞ր օրը և ո՞ր ժամին պետք է Զանգեզուրից քաշվեն, հեռանան մեր և թշնամու ուժերը,

4. Ո՞վ է կառավարելու զինադադարի ընթացքում այս երկիրը,

5. Ի՞նչ է լինելու Գողթանի դրությունը, որը վարչական տեսակետից չի մտնում Զանգեզուրի մեջ,

6. Չե՞ք կասկածում, որ թշնամին կարող է դավադրել, այն է, որ մեր դուրս գալուց հետո, հանկարծակիի բերելով անտերացած ազգաբնակչությունը, կարող է տեր դառնալ Կապարգողթի չորս ապստամբ շրջաններին,

7. Մեր խոր հետախուզությունը պարզել է, որ Այրի-Չայում կուտակված են բավականին մեծ ուժեր (Շարուրի և Նախիջևանի գաղթականությունը): Չե՞ք ենթադրում, որ իմ՝ Զանգեզուրը թողնելուց հետո այդ ուժերը հեշտությանբ կարող են տեր դառնալ Գողթանին: Սա ի՞նչ զինադադար է, որի ժամանակ՝ մեծամասնականները շարունակում են իրենց շահատակությունները, թալանն ու զինաթափությունը Սիսիանում և բուն Զանգեզուրում:

8. Դուք գիտեք, որ ես, բացի ժողովրդական վաշտերից, ուրիշ կանոնավոր զորամասեր չունեմ: Կարող է այնպես լինել, եթե իսկապես կնքված է զինադադար, որ հարկադրված լինեմ երկիրս 30 հոգով, գուցե և այնպես լինի, որ դուրս գամ 300 հոգով: Ընդունենք, որ մինչև թշնամին չքաշվի և մաքրի ամբողջ Սիսիանը, իմ դուրս գալը քանի հոգով էլ որ լինի, ոչ թե դժվար, այլ միանգամայն անկարելի կլինի: Մեր Դարալագյազի ուժերը պետք է առաջանան դեպի Սիսիան, որ

մենք կապվելով նրանց հետ, հնարավորություն ունենանք անցնելու մեր տարածքը:

9. Ի՞նչ դրության մեջ է Նախիջևանի հարցը: Խնդրում եմ հատուկ սուրհանդակով պատասխանել իմ բոլոր հարցերին, տալով ինձ լայն տեղեկատվություն: Ավելացնում եմ, ամսի 12-ին մեծամասնականները փորձեցին մոտենալ մեր դիրքերին, բայց հետ շպրտվեցին: Ժողովրդի ակտիվ մասը՝ թողած հունձ և այլ գյուղատնտեսական աշխատանքներ, ամրացել է դիրքերում: Ժողովուրդը բարձր տրամադրությամբ սպասում է Հայաստանի զորքերի գալուն, որ միացյալ ուժերով քշի թշնամուն Զանգեզուրից:

Դիկտատոր-հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ.198, ց.1, գ.73, թ. 9-10: Ինքնագիր:

N 26

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[98]

1-2 հոկտեմբերի 1920թ.

Կարճևան

Գենվազում կռիվները շարունակվում են նախկին թափով: Սղմում են մեզ երկու կողմից-Շիվանի ձորի և Օրդուբադի: Կասկածից դուրս է, որ Ադրբեջանը որոշել է կապվել Նախիջևանի հետ, վերացնելով մեջտեղից Գենվազը:

Թշնամին չթուլացնելով Շիվանաձորի գործողությունները, կրկնակի համառությամբ այժմ գործում է Օրդուբադի կողմից: Մեծամասնական կոչված խրդվիլակին մեծապես աջակցություն ու անմիջական մասնակցություն են ցույց տալիս տեղական թուրք մասսաները և տաճկական զորքերը-վերջինս Օրդուբադի ճակատում: Մենք թնդանոթներ չունենք: Թշնամու կողմից գործում են 4 թնդանոթ և մեծ քանակությամբ գնդացիրներ:

Գենվազը մի բուռ հայությանը հերոսության աննախընթաց օրինակներ է ցույց տալիս: Հաջողությունը մինչև օրս մեր կողմն է: Վերցրել ենք գերիներ և ավար, թշնամու կորուստները շատ մեծ են:

Որպես առ որպես սպասելով ծեզանից որոշ հրահանգներ, ցուցմունքներ մեր անելիքների մասին, ժամանակավորապես առաջնորդվում ենք հետևյալ երկու հիմնական սկզբունքներով. 1/ Արաքսի ափը (Շիրվանիձոր-Մեղրի-Կարճևան, որոնցից վերջինս գտնվում է Նախի-

ջևանի գավառում) ոչ մի գնով չզիջել թշնամուն, որովհետև դա միակ ճանապարհն է, որով նա կարող է և կամենում է ուժ մատակարարել Նախիջևանին-նախ՝ կանգնեցնելու հայկական առաջխաղացման վտանգը, ապա՝ իրագործելու Տաճկաստանի հետ միանալու իր նվիրական ծրագրերը:

2/ Ժողովրդի ինքնապաշտպանությունը վերահաս կոտորածների հանդեպ:

Զգում ու գիտակցում ենք, որ քաղաքական աշխարհում, իսկ մասնավորապես Նախիջևանի գավառում, ինչ-որ կնճռոտ հարցեր են լուծվում. հասկանալի է նույնպես, որ այդ հարցերի այս կամ այն կերպ լուծման հետ սերտ կապ պիտի ունենալ և մեր բախտի տնօրինումը, սակայն թե ի՞նչ ձևով որոշ կոորդինացիա ստեղծենք մեր և ձեր միջև-չգիտենք: Ինֆորմացիայի կատարյալ բացակայությունը մեզ դրել է ծանր կացության մեջ: - Խոսում են զինադադարի (երբ ամսից ավել է, որ մեզնում կռիվ է) և հաշտության ինչ-որ պայմանների մասին. Աշխատում են հավատացնել, որ հայկական զորքերը արդեն մտել են Նախիջևան և Ջուլֆա. Հուսադրում են, որ հայկական զորքերը մոտ օրերս Օրդուբադ հասնելով կմիանան մեզ հետ. պնդում են Նախիջևանի գավառի թրքության պանիկական փախուստի մասին, այն ժամանակ, երբ այսօր 11-րդ օրն է, որ Օրդուբադը հսկայական ուժերով կռվում է մեզ հետ համառորեն: Խոսվում է վերջապես և այն մասին, որ Հայաստանին տրվում է միայն Ջուլֆա - Ուլուխանլու երկաթուղագիծը և որ մեզ մնում է կամ մեռնել անհավասար կռվում, կամ ստրկության անարգ լուծը շալակ առնել:

Եթե Հայաստանի կառավարությունը արդեն հաշտվել է Ադրբեջանի և Նախիջևանի միացման մտքի հետ, եթե նրա համար այլևս ռազմական կարևորություն չունեն Գողթանի հսկա լեռնաշղթան ու Գենվազի անցման (անառիկ) կիրճերը, ուրեմն մեր այս անվերջ ու միանգամայն անիմաստ զոհողություններին վերջ տալու հնարը պիտի գտնել: Հակառակ պարագային ինչո՞վ բացատրենք ձեր համառ լռությունը: Անմտություն է, իհարկե, ենթադրել, որ Հայաստանի կառավարությունը կարող է գիտակցորեն մի ժողովուրդ կորստին մատնել, կամ այնքան անճար կարող է գտնվել, որ չկարողանար անգամ հաղորդակցության կապ ստեղծել մեզ հետ: - Միթե՞ հասկանալի չէ, որ որքան էլ նվիրական լինի Գենվազի անխախտ որոշումը-կռվել մինչև արյան վերջին կաթիլը-կամ՝ որքան էլ մենք անսասան մնալու լինենք մեր նախագծած սկզբունքների մեջ, այդուամենայնիվ կռիվներին, այս տարտամ դրության մեջ, բնականորեն՝ ծրագրված, նախամտածված լուրջ բնավորություն (ռազմագիտական) տալ անկարելի է, մանավանդ՝ երբ քո առաջ ծառայած ես տեսնում ռազմամթերքի սպառման անխուսափելի վտանգը իր հրեշավոր հասակով:

Թշնամին աննախընթաց եռանդ է գործադրում պատռելու (այսօր հոկտեմբերի 1-ին) մեր շղթան Օրդուբադի ճակատում: Մեր բոլոր դիրքերը ռմբակոծվում են. Սոյուխի (սար) վրա նկատվում են թշնամու նորանոր ուժերի կուտակումներ. բարձունքներից մերոնք հեռանում են: Տղաները փամփուշտ, փամփուշտ և փամփուշտ են խնդրում:

Նժդեհ

Հ.Գ.

Երեկվա կռիվն էլ (Օրդուբադի ճակատում) լիկվիդացիայի ենթարկեց հերոսական Գենվազը: Ամբողջ օրը մենք աջ թևից նահանջելով մինչև հարևան գյուղը, ձախով աստիճանաբար թևանց էինք անում: Լուսաբացին (հոկտեմբերի 2-ին) մեր փոքրաթիվ տղաները արդեն շրջապատել էին թշնամուն: Խիտ մառախուղի շնորհիվ թշնամուն հաջողվեց ճողոպրել մեր ձեռքին թողնելով դիակներ, ուխտեր և բավական ավար: Թվում է լեռներում թողած պիտի լինեն գնդացիրներ. թնդանոթները ըստ երևույթին ուղղակի ցած են գլորել, կամ փախցրած են եղել գիշերով:

Ստացած տեղեկությունների համաձայն կռիվը ղեկավարում էր տաճկական օֆիցեր էդիֆ-բեգը: Օրդուբադում գտնվող մեծամասնականների և տաճկական հրամանատարության մեջ ինչ-որ թյուրիմացություններ են առաջացել: Զինվորական կոմիսար Վարդանյանը և մի քանի այլ հայեր ձերբակալված են որպես դավաճաններ:

Շիվանածորի ճակատում, ինչպես արդեն գրված է ձեզ, կռիվները շարունակվում են իրենց նախկին թափով: Եթե հաջողվի լիկվիդացիայի ենթարկել և այդ ճակատի գործունեությունները, թիկունքն ապահովելու համար, ստիպված կլինեմ ձեռնարկելու Ղափանի վերագրավման գործը:

Մի ավելորդ անգամ ևս խնդրում եմ արագացնել ձեր օգնությունը: Ոչ մի կերպ չեմ կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ դուք կարող եք անտես առնել Ղափանի, Գենվազի և Գողթանի ռազմական խոշոր նշանակությունը մանուկ Հայաստանի համար, ինչպես և այդ շրջանների հերոսական ժողովրդի ֆիզիկական գոյության կարևոր խնդիրը:

Աշոտ,
Նժդեհ

ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 11-13 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

N 27

ՂԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԵԺՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

2 հոկտեմբերի 1920թ.

Կարճևան

Խնդրում եմ ընկ. Աշոտին[99] ցույց տալ լայն աջակցություն՝ կապ ստեղծելու Հայաստանի Հանրապետության հետ: Ընկերոջը իրա-վունք է տրվում ստորագրելու Ամիր Արշադին ուղղված նամակի տակ:

Կուսակցական ջերմ բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 316Ա1-7: Ինքնագիր:

N 28

ՎԿԱՅԱԿԱՆ Ա. ՄԵԼԻՔ-ՄՈՒՍՅԱՆԻՆ

2 հոկտեմբերի 1920թ.

Կարճևան

Վկայականս տրվում է ընկեր Աշոտ Մելիք-Մուսյանին առ այն, որ նա Ղափանի, Գենվազի, Գողթանի և Բաղաբերդի ռազմական ուժերի հրամանատարի առանձին հանձնարարություններով անցնում է Պարսկաստան: Ընկերը կարիքի դեպքում անցնելու է նաև Հայաստան: Խնդրում եմ կուսակցական մարմիններին ու անհատ ընկերներին ցույց տալ ընկերոջը լայն աջակցություն:

Ղափան-Գենվազ -Գողթանի ռազմական ուժերի հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 15, թ. 1: Ինքնագիր:

N 29

Ս.ՄԵԼԻՔ-ՅՈԼՉՅԱՆԻՆ

3 հոկտեմբերի 1920թ.

Գենվազ

Ընկեր Սերգեյ[100]

Չգիտեմ ինչ և ինչպե՞ս գրեմ, որ մեր ընկերները հասկանան ինձ:

Մոտավորապես 100 օր է, որ, կտրված Հանրապետությունից, կռվում եմ թշնամու գերադաս ուժերի դեմ, առանց դրսի օգնության: Միայն իմ զինակիցները գիտեն, թե ի՞նչ ռազմադավերի, ինչ, թշնամու համար անծանոթ, տակտիկական ձևերի, ինչ՝ երբեմն խենթության հասնող, խիզախ քայլերի եմ դիմել՝ ռազմամթերքի ծախսը ամենամինիմալ չափերի հասցնելու համար: Կռվել եմ ուժանակով, պայթուցիկ տակառներով, տեղումս պատրաստած սվիններով: Ցերեկները ակամայից դիմել եմ պաշտպանողականի, գիշերները՝ волчья տակտիկայի: Կռիվներին նման ձև տալով հանդերձ՝ այսօր կանգնած եմ ռազմամթերքի սուր կրիզիսի առաջ:

Կատաստրոֆան անխուսափելի է, եթե հանրապետությունը շուտափույթ կերպով օգնության չհասնի ինձ:

Ընկեր, մի ավելորդ անգամ էլ խնդրում եմ արագացնել օգնությունը: Այս շրջանները իրենց անչափելի ռազմագիտական նշանակությամբ և գերազանցորեն մարտունակ ժողովրդով մեր հանրապետությանը շատ, շատ են պետք:

Աստված և իմ սերը իմ Հանրապետության հետ:

Ջերմ բարևներս ձեզ և կուսակցական բոլոր ընկերներին:

Նժդեհ

P.S.

Նամակս կարդալ Մինիստրական խորհրդում և ֆրակցիայում:

բայց և այնպես դրությունը անհույս չեմ համարում: Շարունակելով կռիվը՝ սպասում եմ deus ex maxina[102] - ին:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 3: Բնագիր: Ձեռագիր:

N 31

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[103]

14 հոկտեմբերի 1920թ.

Մեղրի

Հոկտեմբերի 10-ին Ղափանի ապստամբության օրը, Խալիլ փաշան, որը նոր էր վերադարձել Բաքվից, ինձ Գենվազ քաշելու և Ղափանի վերագրավման փորձը վիժեցնելու նպատակով, Օրդուբադից սկսեց իր ուժեղ հարձակումը Կարճևան-Կաքավաբերդի վրա: Կռիվը տևեց երեք օր ու վերջացավ թշնամու կատարյալ պարտությամբ: Թշնամին հետապնդվեց մինչև Օրդուբարդի դաշտերը:

Այդ կռվում վերցրել ենք երեք գնդացիր, հեռախոսային ապարատներ, հրացաններ ու գրաստներ:

Թշնամին այժմ սկսել է իր հարձակումները Ինջաբել-Ղզլդաշ ճակատից (Ղափանի հյուսիսը): Հասցրեք ինձ երկու թնդանոթ և ռազմամթերք: Կարգադրեք, որ Սիսիանի զորամասը լինի ավելի ակտիվ:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 8: Բնագիր: Ձեռագիր:

N 32

ՀՀ ՂԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎՐԵԺՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

15 հոկտեմբերի 1920թ.

Մեղրի

Սիրելի ընկերնե՛ր.

Մոտավորապես 100 օր է, որ, կտրված Հանրապետությունից, կռվում եմ թշնամու գերադաս ուժերի դեմ: Միայն իմ զինակիցները գիտեն, թե ինչպիսի ռազմադավերի, ինչ՝ թշնամու համար անծանոթ, տակտիկական ձևերի, ինչ՝ երբեմն խենթության հասնող խիզախ քայլերի եմ դիմել ռազմամթերքի ծախսումը ամենամինիմալ չափերի հասցնելու համար:

Կռվել եմ ուժանակով, պայթուցիկ տակառներով, սվիններով: Ցերեկները ակամայից դիմել եմ պաշտպանողականի, գիշերները՝ волчья[104] տակտիկայի: Կռիվներին նման բնույթ տալով հանդերձ՝ այսօր կանգնած եմ ռազմամթերքի սուր կրիզիսի առաջ:

Մի ավելորդ անգամ էլ խնդրում եմ խթանել, հասկացնել մերոնց՝ արագացնելու օգնությունը: Մի՞թե մինչև օրս Երևանը չհասկացավ, որ այս շրջանները իրենց անչափելի ռազմագիտական նշանակությամբ և գերազանցորեն մարտունակ ազգաբնակությամբ մեր հանրապետությանը շատ շատ են պետք:

Ձերմ բարևներով՝ *Նժդեհ*

P.S.

Անշուշտ լսած կլինեք իմ վերջին մեծ հաջողության մասին; Վերագրավել եմ Ղափանը՝ վերցնելով 300-ից ավելի գերիներ, 400-ի չափ հրացան, 16 գնդացիր, զանազան սիստեմների 100-ից ավելի ձիեր, 17 սպա և այլն: Օրդուբադ-Ալանգյազի ճակատում ունեցանք նույնպես մեծ հաջողություն: Թշնամին իր երրորդ փորձի ժամանակ թողել է երեք գնդացիր, հրացաններ <...> արապետ և այլն:

ՀՀԴ ԿԱ, 361Ա1-8: Ինքնագիր:

N 33

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[105]

19 հոկտեմբերի 1920թ.

Ղափանի հանքեր

Օրդուբադն ու Ձանգելանը նորից սկսեցին իրենց հարձակումը հերոսական Գենվազի մի բուռն ժողովրդի վրա:

Թշնամու ուժերը հասնում են մի քանի հազարի:

Հարձակվողների 70% թուրք է: Օրդուբադի ճակատից հարձակվողների մեջ կան նաև օսմանցիներ: Կասկածից դուրս է, որ թշնամին վճռել է գրավել Գենվազը և սրի քաշել նրա գերազանցորեն մարտունակ ու քաջանուն ժողովրդին:

Պարսկական ափից հաղորդում են ինձ, որ թշնամին դեպ Գենվազ է շարժում նաև մի մեծ խուժան՝ թալանի ու կոտորածի նպատակով: Ի սեր Գենվազի, Գողթանի և Ղափանի մարտնչող ժողովրդի, որը ոչինչ չխնայեց Հայաստանի նախադուռն ու ամրությունները պաշտ-

պանելու համար, որը չորրորդ ամիսն է, ինչ հանուն իր հարազատ Հանրապետության իր լավագույն մարտիկների ազնիվ արյունն է զոհի սեղան հանում, օգնություն հասցրեք ինձ զորքով, թնդանոթով և ռազմամթերքով:

Կռիվները շարունակվում են և Ղափանում: Այսօր մի խենթ գրոհով մեզ հաջողվեց՝ Ինջաբելի ճակատում մասամբ ջարդել, մասամբ էլ գերի վերցնել ութ (8) գնդացիրների հետ, թշնամու 250-րդ հեծելագունդը:

Թշնամին կռիվների ծանրության կենտրոնը փոխադրեց Ղափանի հյուսիս-արևելյան ճակատը: Նա կռվում է գերադաս ուժերով: Ռազմամթերքի սուր կրիզիսը և թնդանոթների բացակայությունը կարող է պատճառ դառնալ Ղափգենգողթի հերոս ժողովրդի ոչնչացմանը: Սա չորրորդ հարձակումն է Օրդուբադի կողմից: Օսմանյան հայակեր անարխիստներին Գենվազի ժողովրդի ազնիվ արյուն է պետք:

Ի սեր Աստծու և իմ թափած գերմարդկային աշխատանքների՝ արագացրեք օգնությունը:

Ըստ իս Կապարգողթը փրկելու համար պետք է կամ անմիջապես գրավել Նախիջևանը, կամ թե Լեգրանի միջոցով (լավ կլիներ Նախիջևան-Օրդուբադ մի խառը կոմիսիա ուղարկել) դադարեցնել Օրդուբադի և Գորիսի անվերջ հարձակումները՝ Զանգեզուրի այս կամ այն շրջանի վրա: Օգնություն, օգնություն, օգնություն իր վերջին փամփուշտը կրակող Ղափան - Գենվազին:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 15-16: Բնագիր: Ձեռագիր:

N 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[106]

20 հոկտեմբերի 1920թ.

Ղափանի հանքեր

Էլ լռել չեմ կարող: Բայց ինչ արժե անվերջ, անհավասար կռիվներում արնաքամ և ուժասպառ եղած մի ժողովրդի մեռնող ղեկավարի ճիչը, ցավը, հարայը: Ես մեռնում եմ, գիտե՞ք ինչ է նշանակում սա: Այն, որ ինձ հետ մեռնում է նաև իր ռազմական խոյանքներով մեր վերջին երկու տարվա պատմությունը զարդարող Ղափան-Գենվազ-Գողթանի հերոսական ժողովուրդը:

Ես հաղթում եմ, ջարդում թշնամու գնդերը, հարյուրներով գերի վերցնում, զինաթափում, բայց և այնպես՝ ինձ պարտված եմ զգում և մեռնում: Գիտեք՞, ինչ է նշանակում սա: Այն, որ տեսնում եմ, որ վերջ չկա թշնամու հարձակումներին, որ ես իմ թոքերի վերջին կտորն եմ մաշում, իսկ ժողովուրդը՝ վերջին փամփուշտն է վառում: Հաղթել և իրեն պարտված զգալ: Այդ տրագեդիան զգալու համար պետք է սիրտ ունենալ, սիրտ: Այսօր, Կապարգողթն օղակող թշնամին «խորհրդայնացնելու» տեղ՝ միայն կոտորում է և թալանում:

Մեծամասնականների տեղ այժմ արյան տենչով խելագարված թուրք կանոնավոր ուժերն ու հսկայական խուժանները են պաշարել իմ շրջանները: Իհարկե, պարոն Լեգրանը գիտի այդ և դիվանագիտորեն լռում է: Մինչ այդ մարդը կասի իր խորհրդավոր խոսքը, Կապարգողթի տրագիկ ժողովուրդը կարող է սրի քաշված լինել: Արագացրե՛ք, արագացրե՛ք օգնությունը, եթե ձեզ պետք է այդ՝ գերազանցորեն հայրենասեր և քաջագործ ժողովուրդը:

Գիտեք, չէ՞, որ այդ ժողովուրդը զոհ է գնում իր՝ դեպի Երևանն ունեցած ջերմ հավատին:

Օգնությո՛ւն, օգնությո՛ւն:

Հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 4: Բնագիր: Ձեռագիր:

N 34

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՌԱՄԵՆՏԻ ԱՆԴԱՄՆԵՐ Ե.ՄԻՐԱՔՅԱՆԻՆ ԵՎ Գ.ԲԱԼԱՅԱՆԻՆ

23 հոկտեմբերի 1920թ.

Ղափանի հանքեր

Սիրելի Ընկերներ!

Պողոսն ինձ գրում է, որ հարցապնդել է Ձեզ, թե կարելի՞ է Ղափանում իմ գերի վերցրած բոլշևիկներին, թվով 500 հոգի, փոխադրել Դարալագյազով Հայաստան:

Գերիների փոխադրության համար սա չորրորդ անգամն է, որ գրում եմ, դիմում, խնդրում, որ ինձ և Ղափանը ազատեք սրանցից, որովհետև տնտեսական սուր կրիզիսի շնորհիվ մենք հնարավորություն չունենք սրանց մի ավելորդ անգամ կերակրելու:

Ես սրանց բաց թողնել, հանձնել աշխարհի չորս քամիներին չեմ կարող, որովհետև իրենք էլ, գերիները, չեն թաքցնում, որ եթե

ընկան Ադրբեջան այնտեղ սրանց նորից կգինեն և կուղարկեն Ղափանի դեմ: Վերջապես այլևս ինչու՞ եմ կռվում, երբ ստիպված պիտ լինեմ վերցրածս գերիներին (ամբողջ գնդեր) բաց թողնելու: Մի՞թե այդպիսի գերողբերգական դրության մեջ կարելի՞ է դնել մի ղեկավարի, որը արյուն է թքում, մի ղեկավարի, որին զլանում են, անգամ որոշ հրահանգներ տալու, պարզ ասելու՝ զարկ թշնամուն մինչև կգարնվես սրտիցդ կամ ճանապարհ տուր զուլումին, որ ազատորեն Հայաստան անցնի:

Մինչև ե՞րբ, ընկերներ, մինչև երբ ես հաղթեմ, բայց և այնպես ինձ պարտված զգամ:

Մինչև երբ չան գցեմ,* ռազմամթերք, սպաներ, մի լուրջ ղեկավար, թնդանոթ, աղաղակեմ և Երևանի սպանիչ լռությունը լինի ինձ պատասխան: Մինչև ե՞րբ: Սիրում եմ հավատալ, որ դուք, սիրելի ընկերներ, զգում եք, ապրում իմ տրագեդիան և հասկանում ինձ: Ես կատարելապես հյուծվել եմ:

Թոքերիցս արյուն է գալիս: Սուր ռևմատիզմը փակել է ոտ ու ձեռքս, այնպես, որ շորերս հանիլ-հագնելու հնարավորությունից զրկվել եմ: Հա՜յ գիտի հա՜յ. ինչպես երևում է իմ կյանքը ոչինչ չարժե Հանրապետության համար:

Ընկերական ջերմ բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 1: Բնագիր: Ձեռագիր:

N 36

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[107]

25 հոկտեմբերի 1920թ.

Ղափանի հանքեր

Հոկտեմբերի 20-ից թշնամու ուժեղ հարձակումները Գողթանի վրա շարունակվում են:

Լեգրանի քթի տակ կարմիր կոչված սվոլոչը թուրք ասկյարների և խուժանի հետ Խալիլի և Էդիֆի ղեկավարությամբ պաշարել է քաղցից ուժասպառ եղած Գողթանը: Այլևս ի՞նչ զինադադար, ի՞նչ բանակցություններ: Թշնամին ձգտում է լայնացնել իր բազան և ամրացնել Նախիջևանի թիկունքը:

* Չան անել – թախանձագին խնդրել, աղերսել (ծանոթ. խմբ):

Կրկնում եմ՝ Գողթանին տիրելով թշնամին կդառնա գրեթե անպարտելի և անզուսպ:

Ղափաջուղը, մեր ձեռքին եղած միակ ճանապարհը, որը միացնում է Ղափան - Գենվազը Գողթանի հետ, փակ է: Այսօր չորրորդ օրն է, ինչ Գողթան ուղարկածս օգնական ուժերը գերմարդկային ճիգեր են թափում անցնելու Գողթան և միշտ էլ մարդկային զոհերով հետ էին գալիս:

Բուք ու բորանը ձյունապատ Ղափաջուղի՝ Կապարգողթի այդ փոքր մասի վրա կտրել է մեր ճանապարհը: Արագացրեք Նախիջևանի գրավումը, եթե չեք ուզում ընդմիշտ կորցրած լինել Գողթանը, գուցե և Նախիջևանը:

Հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 6: Բնագիր: Ձեռագիր:

N 37

ԵԳՈՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՊՈՂՈՍ ՂԱՎԹՅԱՆԻՆ

27 հոկտեմբերի 1920

Ղափանի Հանքեր

Սիրելի Եգոր և Պողոս

Ըստ իս Գորիսը պետք է և կարելի է վերագրավել:

ա/ երբ կունենաք բավականին ռեգուլյար ուժեր, որ քաղաքի գրավումից հետո այդ ուժերի մի մասով կարողանանք ամրացնել և մեր ձեռքին պահել Զաբուղի մեր հին դիրքերը :

բ/ Կամ երբ բուն Զանգեզուրի ժողովուրդը կհետևի Ղափան-Սիսիանի օրինակին, կթոթափի սովետա-ադրբեջանական լուծը, երբ իր միջից արմատախիլ կանի կոմունիստ կոչված բոլոր մութ և պրովոկացիոն ուժերին, կծառանա իր սահմանների վրա, միշտ պատրաստ՝ դիմագրավելու թշնամու բոլոր տեսակի փորձերին ու խաղերին:

Որքան ես գիտեմ, այժմ մենք ոչ այնքան կանոնավոր ուժեր ունենք, ոչ էլ ժողովուրդն է ապստամբվելու միտումներ ցույց տալիս: Խոտ-Շնհեր-Հալիձոր կոչված այդ Արշակավանները դեռ շարունակում են խտացնել թշնամու շարքերը, իսկ Խնձորեսկը հավատարիմ իր մոտիկ անցյալին, կրկնապատկված եռանդով շարունակում է տոն տալ մեծամասնականների բոլոր ձեռնարկներին:

Գորիսը կարելի է վերագրավել ամեն րոպե, ամեն ժամ, ամենաչնչին ուժերով, սակայն այդ ուժերով ապահովել բուն Զանգեզուրը չէ կարելի:

Կարելի է մի խիզախ нагем-ով կարճ ժամանակով տեր դառնալ Գորիսին, թշնամուն փախցնել մինչև Զաբուղ, ծեռք գցել թշնամու թնդանոթները, ռազմամթերքը, ազատել բանտարկյալներին, բայց մնալ Գորիսում, առանց Զաբուղն ամրացնելու-ապահովելու, անկարելի է:

Չմոռանամ ասել, որ թշնամին բուն Զանգեզուրում ավելի լայն հնարավորություններ ունի քան թե մենք: Կարիքի դեպքում նրան օգնության են հասնում Հաջիսամլուի և ուրիշ վայրերի թուրքերը:

Մենք այդ պլյուսը չունենք:

Ըստ իս բուն Զանգեզուրը վերագրավելու համար շուտափույտ կերպով պետք է պահանջել կանոնավոր, սոլիտ ուժեր: Պետք է աճապարել, քանի դեռ ադրբեջանյան նոր ուժեր չեն ուղարկված բուն Զանգեզուր: Մինչև կանոնավոր ուժերի գալը պետք է թռուցիկներով-կոչերով, պրոպագանդիստներով հեղեղել բուն Զանգիզուրը,պետք է, այնտեղ ստեղծել ցանկալի հոգեբանական մթնոլորտը (ոcuхолоգuческая аmмосфера):

Աշխատեք Սիսիանում մոբիլիզե անել 26,27,28,29 և 30 տարեկաններին,կազմակերպել եռավաշտ մի ուժեղ գումարտակ, իհարկե, լավ զգեստավորելու (обмундировать) և կերակրելու պայմանով:

Սիսիան ներմուծեք մանուֆակտուրա, թեյ, շաքար, սապոն, լուցկի և նման բաներ: Այդ բոլորն անելուց հետո, հավատացեք, բուն Զանգեզուրի ներկայացուցիչները գալու են հայ կառավարության փեշը բռնած իրենց երկիրը քաշելու:

Որքան լավ կազմակերպված լինի և ուժեղանա Սիսիանը, այնքան կհեշտանա բուն Զանգեզուրի վերագրավման գործը:

Ջերմ բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 18, թ. 1 և շրջ: Բնագիր: Ձեռագիր:

N 38

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻՆ

3 նոյեմբերի 1920թ.

Արևիք

Սիրելի Ընկերներ!

Կապարգողթի ժողովրդի այս վերջին մի տարու կյանքը, ապրումները եղել են ամբողջապես պատերազմական: Նա կռվել է անդադրում, կռվել է գիշեր, ցերեկ, ծմեռ ու ամառ: Նա հանգիստ չի ունեցել, ժամանակ չի ունեցել, չի կարողացել իր առօրյա պահանջների հոգացման ծայրը գտնի, իր ցավը հասկանա: Բայց և այնպես նա ապրել է, ապրել է, որովհետև ունեցել է վեհ հավատ, ունեցել է փայփայած տենչանք, որ մի օր իր դուռն է ծեծելու իր հարազատ կառավարությունը, մի օր իր Հանրապետության զորքն է տեսնելու կանգնած այս սահմանագծի վրա, որտեղ իր զավակներից ամենալավագույններին կորցրեց, որտեղ գոռ գրոհամարտում իր անկրկնելի հոգու թափն ու ավյունը դրսևորեց:

Եվ օրերը հաջորդեցին օրերին, ամիսները՝ ամիսներին ու լրացավ ամբողջ տարին և էլ ավելին, սակայն իր երազած, իր փայփայած կառավարությունը, իր սպասած զորքը չեկավ: Ժողովուրդը լքվեց, ժողովուրդը հուսահատվեց, նրա սպասումների շարանը վերջացավ ու սկսեց ենթարկվել պատահականությունների, ամբոխավարական մանյովրների, ավանտյուրիստական քաղաքականության, մինչ այն աստիճան, որ ի վերջո նետվեց իրեն խայտառակած բոլշևիզմի գիրկը:

Բայց հայ ժողովուրդ և բոլշեվի՞զմ, հայ ժողովուրդ և ցինիկ հասկացողությունների, սոսկումի, զզվանքի, ոճրագործության և մարդկության տականքների կառավարությու՞ն: Սա հասկացողությունների, ըմբռնումների տհաս վիժվածք էր, սա տարօրինակության գագաթնակետ էր: Հայ ժողովուրդը, էն մաքուր վարք ու բարքերի, ընտանեկան սրբությունների պաշտամունքով ապրող ժողովուրդը, դեռ շատ առաջ վսեմ հասկացողություններով ու սկզբունքներով սնված, ապրած ժողովուրդը, չէր կաերող հանդուրժել բոլշևիկական կառավարությունը:

Եվ մի գեղեցիկ առավոտ, երբ բոլշևիկական իշխանությունը արթնանում էր իր մրափից վերսկսելու իր ծիվաղային գործը, Խուստուփի, Ինջաբելի, Երիցվանքի բարձրունքներում ապստամբության դրոշակներն էին ծածանվում. ու ժողովուրդը, երեկվա են ստորացած, ստրկացած ժողովուրդը, մի հոգի, մի շունչ եղած՝ հերոսական մի թռիչքով, ապստամբության մի ծփաքով իր ալիքների մեջ խեղդեց խայտառակությունը, մաքրեց իր սրբությունները ու վերածնված էլ ավելի վեհությամբ, էլ ավելի վառ հույսերով քան առաջ էր, տիրացած իր երկրին, փարվեց հայկական սովորություններին, հայու կարգ ու կանոնին: Ու այսօր անդադրում դարբնում է նա իր դիմադրական կորովը, հերոսական գրոհամարտով զարդարում իր պատմությունը և ապրում այն ոսկի երազներով, որ ահա իր հարազատ Հանրապետությունը, միացյալ անկախ Հայաստանի Կառավարությունն է գալիս և որ շուտով, շատ շուտով վերջ է դրվելու իր կրած բոլոր տառապանքներին:

Եվ մի ժողովրդից, որ այս վեհ հավատով է շնչում, ապրում, մի ժողովուրդ, որ արել է, զոհել ամեն ինչ իր անկախության ճանապարհին, իր փայփայանքների իրագործման հավատամքին, էլ ավելին պահանջելը անկարելի է: Այո, անկարելի է և բավական է նրանից պահանջել, որ նա շարունակ դիրքերում մնա, կուրծք տա թշնամու գերազանց

ուժերի դեմ. բավական է զանազան ծանրաբեռնումներով նրա հավատարմությունը, նրա բարձր հայրենասիրությունը շահագործել, նրան սին խոսքերով կերակրել: Եվ որպեսզի ավելի սոսկալի դրություն, քան բոշևիզմն էր, չգա, չհեղեղի նրա հավատամքը, հուսախաբության ծովը չնետի այն բոլոր լավագույն հատկանիշները, որ վտանգի րոպեին ցուցադրեց նա, պետք է վերջ տալ քաղաքական տատանումներին, պետք է լինել վճռական, պետք է ժողովրդին կենդանի գործ ցույց տալ, տաք խոսքի հետևանքն ապացուցել:

Այս բոլորն ասելուց հետո՝ կարևոր եմ համարում կոնկրետացնելու իմ և ժողովրդի պահանջները:

I) Նախիջևանը և Օրդուբադը այսօրվանից պիտի համարվի մեր ստրադտգիայի ալֆան և օմեգան:

II) Բուն Զանգեզուրի գրավումը, կանոնավոր զորքերով մոտ օրերում:

III) Առանձին ուշադրություն Զանգեզուրի վրա, նկատի առնելով նրա տնտեսական քայքայված, անգեն և հասարակայնորեն գլխատված վիճակը:

IV) Հաշվեհարդար ժողովրդի հետ;

V) Նախաբոլշևիկական Զանգեզուրի պաշտոնեությունը և հրամանատարությունը ենթարկել դատի հանուն արդարության և Հանրապետության շահերի:

VI) Վարձատրություն և պատիժ: Ավելի քան մի տարվա ընթացքում համայն Զանգեզուրում տեղի չի ունեցել վարձատրություն և պատժի ոչ մի դեպք: Վարտերը անարգիչ շարունակել են իրենց կործանարար դերը, իսկ լավերը մասայնության մատնված, աստիճանաբար հուսալքվելով՝ քաշվել, հեռացել են ասպարեզից:

VII) Ուժեղ հրամանատարություն և պաշտոնեության ապստամբ Զանգեզուրում:

VII) ժողովրդական վաշտապետության դրության օրինականացումը:

IX) Տաթևը-ռեզիդենցիա:

X) Ինձ արձակուրդ, վերականգնելու միանգամայն քայքայված առողջությունս:

Հարցերից ամենաէականը դա Նախիջևան-Օրդուբադի գրավումն է, որը պետք է Հանրապետությունը իրագործի մոտ օրերում, որպեսզի միանգամ ընդմիշտ վերջ դրված լինի տաճկա-ադրբեջանական անարգել հարձակումներին և ոտնձգություններին և հնարավորություն Զանգեզուրը կապելու մայր երկրին:

Մնացած հարցերի դրական լուծումը ինձ և իմ խնամքին հանձնած շրջանների ժողովրդի համար, կրկնում եմ, նշանակություն կունենա այն ժամանակ, երբ ամենամեծ զոհաբերությամբ անգամ Հանրապետությունը անհապաղորեն կլուծի Նախիջևան-Օրդուբադի խնդիրը, այլապես, ինչ էլ որ արվի, առանց առաջին հարցի լուծմանը, դրությունը մի նշանախեց անգամ չի փոխվելու:

Ընկերական բարևներով Նժդեհ

ՀՀ ՊԱ, ֆ. 198, ց. 1, գ. 73, թթ. 19-20:Բնագիր: Ձեռագիր:

N 39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ[108]

8 նոյեմբերի 1920թ.

Ղափանի հանքեր

Նոյեմբերի 3-ին թշնամին մեծ ուժերով (20-րդ և 28-րդ կարմիր հեծյալ բրիգադաները, Բարգուշատի թրքությունը և 400 տաճիկ ասկյարներ, Ռուսաստանից բերված գերիներ, որոնց գինել են Գորիսում) կրկնեց իր հարձակումը Ղափանի հյուսիս-արևելյան գյուղերի վրա: Կռիվները աննախընթաց համառությամբ ու կատաղությամբ տևեցին չորս օր և վերջացան թշնամու պարտությամբ: Թշնամին թողել է 250-ի չափ դիակներ, մի քանի տասնյակ գերիներ և 6 գնդացիր: Հերոսաբար հետ է շպրտել թշնամուն նաև սովամահության մատնած Գողթանը: Արագացրեք Նախիջևանի գրավումը:

Նժդեհ

ՀՀ ՊԱ ֆ. 198, ց. 1, գ. 73, թ. 5: Բնագիր: Ձեռագիր

N 40

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

5 դեկտեմբերի1920թ.

Ղափանի հանքեր

Սիրելի ընկերներ.

Շնորհակալությամբ ստացա ընկեր Գեղեոնի[109] միջոցով ինձ ուղարկած Ձեր նվերները և Ձեր գրությունը: Իմ վաշտապետները խնդրել են ինձ հայտնելու կոմիտեիդ, որ իրենք միշտ պատրաստ են տղամարդաբար մեռնելու հայ աշխատավորությունն ապրեցնելու համար: Անզորացած ու Զանգեզուրից քշված թշնամին այժմ Աբդալ-

լարից է առաջարկում հաշտության բանակցություններ սկսել: Եթե Հայաստանում դրությունը բարելավվի, լիահույս եմ, որ Զանգեզուրը մինչև վերջը պատվով կմնա:

Ձերմ բարևներով՝ Ձեր *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 316Ա1-12: Ինքնագիր:

N 41

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

25 հունվարի 1921թ.

Սիրելի ընկեր Գևորգ[110]

Ղարաբաղից հաղորդագրում են ինձ. «Քշեցինք թշնամուն Տողա, Տումա, Թաղլարու, Թաղավարդու, Ջանախչու և Սարգյաշենու շրջաններից: Վերցրել ենք Դրոյի թողած ցեյխհաուզը, 7 գնդացիր, ավելի քան 100.000 փամփուշտ, 2 թնդանոթ, շատ սնարյադ, ձիեր, 100-ից ավելի գերի, շատ ցորեն, գարի, բրինձ, յուղ, աղ, մի խոսքով մեծ պատրաս-տություն: Թշնամին գլուխը կորցրած փախչում է»:

Հաղորդագրողը խնդրում է 10 ընտիր սպաներ: Ես կարևոր գործով վաղն անցնելու եմ Գորիս: Տեղդ է եկել ընկեր Գ.Բալայանը, որին չկարողացա տեսնել: Սիսիանից ինձ տեղեկացնում են, թե երեք հոգուց բաղկացած մի դելեգացիա է գալիս, իհարկե, Երևանից, ինձ մոտ:[111] Այդ լուրը Սիսիան բերել են մեր Դարալագյազից վերադարձած սուրհանդակները: Չգիտեմ, որքան ճիշտ է: Կգրեմ:

Ձերմ բարևներով՝ քո *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 96-2: Ինքնագիր: Նամակը գրված է «ՀՀԴ կոմիտե, 1918թ.» դրոշմակնիքով թղթի վրա:

N 42

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

4 փետրվարի 1921թ.[112]

Գորիս

Սիրելի ընկեր Գևորգ

Դրոյի և Հեկկերի (XI զորաբանակի հրամանատար) կողմից ամսիս 3-ին Գորիս հասավ մի դելեգացիա, բաղկացած 5 հոգուց, որոնցից 3-ը Դրոյի սպաներից, մի տաճկահայ և մի զանգեզուրցի: Չորսին ընդունեցի, իսկ հինգերորդին՝ ոչ: Զանգեզուրցի կոմունիստը Զանգեզուրում մի ժամ անգամ ազատ ապրելու իրավունքը չունի:[113]

Դրոյից բերել են նամակ, որից պարզվում է, որ Դրոն մեկնել է Մոսկվա մասնակցելու կայանալիք կոնֆերանսին: Այդ կոնֆերանսին մասնակցելու են Սովետական Հայաստանի, Ադրբեյջանի, Տաճկաստանի (իմա՛ Քեմալի) և Ռուսաստանի ներկայացուցիչները: Կոնֆերանսը զբաղվելու է Սովետական Հայաստանի և Ադրբեյջանի սահմանների որոշմամբ: Տաճիկները Սովետական Հայաստան չեն ճանաչում, պատճառաբանելով, որ այդ Հայաստանի 3/4-ը գտնվում է իրենց ձեռքին, իսկ Սյունիքը և Ղարաբաղը իրենց հայտարարել են անկախ-ինքնավար: Դրոն խնդրում է աջակցություն ցույց տալ սովետական ուժերին՝ Քեմալին քշելու Արևելյան Հայաստանից: Բոլշևիկներն իրենց շատ վատ են զգում: Նոտաների փոխանակումը Չիչերինի և Կարաբեկիրի միջև պարզորեն մատնում է Քեմալի բռնած դիրքը: Քեմալը թշնամի է Սովետական Ռուսաստանի համար: Փաստորեն Հայաստանի Ռևկոմը (Ռեֆկոմը) հանդիսանում է Երևանի և մի քանի գյուղերի իշխանությունը և ոչ ավելի: «Война между Турцией и Советской Россией и роль Нждей в этой войне»- ահա սովետական հրամանատարությանը զբաղեցնող հարցը: Կարմիր հրամանատարությունը, հանձինս Հեկկերի, ձգտում է բարեկամանալու ինձ հետ: Կարմիր պարոնները այժմ չեն թաքցնում, որ Սովետական Ադրբեյջան ասելով հասկացվում է միայն Բաքուն և մի փոքրիկ տարածություն այդ քաղաքի շուրջը: Մուսաֆաքն ավելի քան ակտիվ է դառել: Տևական, մասնավոր բնույթ կրող ապստամբություններն անվերջ են Ադրբեյջանում: Կասկածից դուրս է (խոստովանում են իրենք դելեգատները), որ բոլշևիկները իրենց շատ վատ են զգում: Շատ լավ կլիներ, եթե մի քանի օրով ընկ. Գերասիմի[114] հետ անցնեիր Գորիս: Շատ կարևոր հարցեր կան, որոնց այս կամ այն կերպ լուծումից կախված է Հայաստանի բաղդը:

Չուշանաս, մեկնիր անմիջապես: Սպասում եմ:

Ձերմ բարևներով՝ քո *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր: Նամակը գրված է «Սպարապետ Ինքնավար Սյունիքի և Գողթանի» դրոշմակնիքով 3 թերթերի վրա:

N 43

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

26 փետրվարի 1921թ.[115]

Գորիս

Սիրելի ընկեր[116]

Հենց նոր ստացա վերջին հեռախոսագիրը, որով Ինքնավար Սյունիքի արևմտյան ճակատի հակահետախուզության պետը տեղե-

կացնում է Երևանի՝ մեր ապստամբ ուժերի կողմից, վերագրավման մասին: Հեռախոսագրի համաձայն դեպքն այսպես է տեղի ունեցել: Հայաստանում եղած ուժերը մեծամասնականները փոխադրել են վրացական ճակատները: Բաշ-Գառնիի շրջանը, օգտվելով առիթից, պարզել է ապստամբության դրոշակը և քշել հատուկտոր կարմիրներին: Ապստամբության ալիքն անցել է մնացած շրջանների վրայով և Երևանը ընկել է մեր ձեռքը: Հենց այս րոպեիս մեկնում եմ Վայոց Ձոր ստուգելու վերջին լուրերը: Չգիտեմ, ինչո՞ւ ես տատանվում և հապաղում: Լավ կլիներ, որ գայիր Գորիս: Ես կվերադառնամ տեղս ոչ շուտ քան մարտի 5-7-ը: Վերցրել ենք Արփայում 71.000.000 ռուբլի չեկերով, 12.000 արշին մանուֆակտուրա և 100 փութ աղ:

Ձերմ բարևներով՝ քո *Սդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքի թղթի վրա:

N 44

ԻՆՔՆԱՎԱՐ ՍՅՈՒՆԻՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՎԱՆԻՆ

5 ապրիլի 1921թ.

Ղափանի հանքեր

Դուք չորս ամսվա ընթացքում արել եք այն, ինչ որ չպետք է անեիք, իսկ այն՝ ինչ որ պահանջում էր մեր երկրի ֆիզիկական ինքնապաշտպանությունն և շահը, դուք՝ չեք արել:

1. Դուք իմ անունից հրամայել, սպառնացել եք Տաթևի գավառապետին, և Տաթևի ու Շնհերի պահեստներում եղած հացահատիկը փոխադրել Գորիս ու Ձեր գիտցած ձևով սպառել, հալեցրել, չնայած իմ հրամանին՝ այդ պահեստներում եղածը թողնել անձեռնմխելի:

2. Դուք թույլ եք տվել պետական պարենավորման պահեստից որոշ քանակությամբ հացահատիկ բաց թողնելու այս կամ այն դիվանի անդամին և նման ընթացքով մեռցրել ժողովրդի հավատը դեպի Ձեր շիտակությունը:

3. Դուք հրամայել եք Ձեր գեներալ-կոմիսարին դիվանի անդամների համար էժան գնով հացահատիկ գնել ու փոխադրել Գորիս: Ավելորդ եմ համարում որակելու Ձեր այդ քայլը, որովհետև ժողովուրդն արդեն ասել է իր խոսքը:

4. Ձեր անդամներից մի քանիսն իրենց այս կամ այն պաշտոնական շրջագայությունների ժամանակ կատարած գնումներով վարկաբեկել են՝ իրենց երկրի կառավարությունը:

5. Դուք ամիսների ընթացքում Ձեր մեռելային գրասենյակամոլությամբ մեռցրել եք Ձեր բոլոր պաշտոնյաների մեջ նախածեռնության ոգին: «Անտառային», «դատաստանական», և «սինոդային» օրենքներ եք մշակել (իմա՝ մի քիչ մեծամասնականներից, մի քիչ էլ՝ Նիկոլայ 2-րդից մնացած օրինագրքից թարգմանել և հրատարակել):

6. Այդ բոլորի հետ կարելի էր ժամանակավորապես հաշտվել, բայց Ձեր վերջին հակաժողովրդական ակտը լցրել է և՛ ժողովրդի և՛ իմ համբերության բաժակը: Դուք, չնայած իմ հազար անգամ Ձեզ ասածներին ու կրկնածներին, առանց խղճի խայթի, իմ բացակայության ժամանակ, չտեսնված ու չլսված տուրքեր եք նշանակում ժողովրդի վրա և հրամայում գավառապետներին՝ «շուտափույթ» կերպով պահանջված գումարները գանձել և մտցնել Սյունիքի գանձարանը:

Այդ բոլորը գալիս են համոզելու ինձ, որ եթե ոչ դիվանդ՝ ըստ էության, բայց նրա որոշ անդամները ձգտել են և ձգտում են ամեն կերպ որոշ դժգոհություն ստեղծել աշխատավոր գյուղացիության մեջ և այսպիսով արագացնել թշնամու ներխուժումը մեր՝ մի անգամ կարմիր սրիկաների ձեռքով ավերված երկիրը: Դիվանիդ բոլոր հակաժողովրդական որոշումները կայացված են Ձեր անդամների մի մասի համառ ցանկության և մյուս մասի՝ անտարբերության շնորհիվ:

- «Պիտի կործանե՛լ Սյունիքը»,- ասել է մի կողմը:
- «Թող լինի, ինչ լինելու է»,- ասել է մյուս կողմը:

Այսպե՛ս եք կառավարել, առանց հասկանալու, որ դատապարտելի է ամեն ձևի կառավարություն (լինի դա՝ միապետական, հանրապետական, թե ավազակապետական, ինչպիսին էր՝ խորհրդայինը), եթե դա ժողովրդից պահանջում է ավելին, քան՝ դա կարող է տալ, որը չի բարեհաճում ժողովրդի դրության մեջ մտնել:

Այսպե՛ս եք կառավարել, և նրա հավատը ջերմացնելու փոխարեն՝ բորբոքել եք նրա դժգոհությունը: Եթե այդ բոլորից հետո գուցե և գտնվի ձեզանից մեկը, որ առանց խղճի խայթի դեռ հայհոյի էլ մեր ժողովրդին՝ թե նա դժվարությամբ է տալիս կամ ոչինչ չի տալիս: Շատ, շատ է տվել, և տալիս է այդ նահատակ ժողովուրդը: Նա իր լավագույն զավակների սրբազան արյունն է տվել անկախ, ինքնավար երկիր ու կառավարություն ստեղծելու համար:

Այն դո՛ւք եք, անբախտ Սյունիքի կառավարության դիվանը, որ բացի այն, որ ոչինչ չի տվել, այլև խլել է ժողովրդից նրա կուռ հավատն ու վստահությունը դեպի իր կառավարությունը: Թողնում եմ, որ դուք նախ Ձե՛ր խղճին հաշիվ տաք ու դատեք-դատապարտեք Ձեզ:

Լեռնային Հայաստանի սպարապետ՝ *Սդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 69-70:

N 45

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

11 ապրիլի 1921թ., ժամը 10

Ղափանի հանքեր

Սիրելի ընկեր Ռուբեն

Եթե Վրաստանի անկումը ճիշտ է՝ ապա Հայաստանի ռազմական դրությունը պետք է վտանգված համարել: Կարմիրները Վրաստանը գրավելուց հետո կարող են Երևանը վերցնել «в клещи», «в переплет»:[117] Ես դեռ չեմ ուզում հավատալ կարմիրների վերջնական–ստրատեգիքական հաջողությանը Վրաստանում: Ըստ իմ ունեցած տեղեկությունների կարմիրները լոկալ հաջողություն ունեցել են Վրաստանում: Թե ինչպե՞ս, ի՞նչ ուղղությամբ և ի՞նչ մաշտաբով են օգտագործել - զարգացրել այդ հաջողությունը՝ չգիտեմ: Ինչ որ է, լինեմ սեղմ:

Յապոնի[118] հաղորդագրությունները Գյուլլութի և Ջաֆարլուի անկման մասին ինձ ենթադրել են տալիս երկու բան, այն է՝ կամ թշնամին նոր օժանդակ ուժեր է ստացել, որ այժմ այդ աստիճան ագրեսիվ է, կամ էլ ստեղծված ռազմագիտական мешок-ից ազատվելու համար ձգտում է Ջղինով միանալ Նոր Բայազետին: Հրամանագրել եմ Յապոնին վերագրավելու այդ երկու գյուղերը և ապահովելու մեր կենդանի կապը Արարատյան Հայաստանի ռազմական ուժերի հետ:

Այժմ չափազանց զգույշ պետք է լինել, թշնամին կարող է մեր Երևանի ապստամբ ուժերին հավաքել мешок-ի մեջ և խեղդել:

Վատ չէր լինի, եթե մեր կուսակցական ուժերի մի խոշոր մասը առայժմ անցներ Դարալագյազ: Ո՞վ գիտե, անտեր մնա կռիվը, թե ինչով կվերջանա Հայաստանի ապստամբությունը: Խոստովանում եմ, որ քո հեռախոսագիրը Վրաստանի կատաստրոֆայի մասին ինձ խելագարվելու աստիճան ջղայնացրել է: Վրաստանի անկումով Հայաստանի համար ստեղծվում է նույն սպառնական դրությունը, որը գոյություն ուներ տաճիկների առաջխաղացման օրերին, որը վերջացավ մեր պարտությամբ:

Խորապես խնդրում եմ ինձ լայնորեն ինֆորմե՛ անել Երևանի և Վրաստանի դրության մասին:

Ձերմ բարևներով՝ քո *Նժդեհ*

P.S.

Ղարաբաղում ժողովրդի տրամադրությունն ընկած է: Ինձ անվերջ հաղորդագրում են Վրաստանի անկման մասին: Հայերն այլևս չեն հավատում Ադրբեյջանի ապստամբությանը: Լեռնային Ղարաբաղում եղել են տեղեր, ուր թուրքերը հարձակվել են հայ գյուղերի վրա: Կարմիրները բաժանում են, որ տիրեն: Մերոնք թողել են Հադրութը:

Շուշիում և Կարեագինում նոր ուժեր են երևացել: Վազվզում են շրջանե շրջան, ճակատե ճակատ: Հացի պակասությունը մեզ նեղել է:

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքով թղթի վրա:

N 46

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

14 ապրիլի 1921թ.

Գորիս

Սիրելի Ռուբեն

Գալիս է Արտաշեսը[119] մի շարք հարցերով, որոնց պատասխանը խնդրում եմ տալ և ճանապարհ դնել: Խնդրում եմ գրել նաև տեղիդ դրության և զորքերի տրամադրության մասին: Եթե Գենվազի համար պետք է ուժեր ուղարկեք՝ գիտցեք, որ ամենավստահաելի տարրը պետք է լինի դա: Ցանկալի կլիներ ուղարկել տաճկահայերին կամ բաշգառնեցիներին:

Ղարաբաղում դրությունը անփոփոխ է:

Սյունիքի ժողովուրդը հատ ու կենտ փախած եկածներից Երևանի մասին գիտեն: Վատ է ազդել: Հացի պակասություն է:

Բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր:

N 47

ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

21 ապրիլի 1921թ.

Տաթև

Սիրելի ընկեր Սիմոն

Ինչո՞վ վերջացավ Ձեր այսօրվա ժողովը: Ի՞նչ որոշում կայացվեց Արարատյան ռազմական ուժերի և սպարապետության մասին:

Խնդրում եմ երկխոսքով հայտնել ինձ, որ, հիմք ունենալով Ձեր որոշումները, անցնեմ գործի:

Ի՞նչ կասեիք Գուսանի մասին: Ի՞նչ պաշտոն տալ նրան:

Բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: ՍՎ. 5-5: Ինքնագիր:

N 48

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

22 ապրիլի 1921թ.

Գորիս

Կարևոր գործով Գենվազ են անցնում Հայաստանի Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Ս. Վրացյանը, Քաջազնունին, Համո Օհանջանյանը և ուրիշները:

Հրամայում եմ ցույց տալ սրանց ամենապարտ ու պատշաճ աջակցությունն:

Սպարապետ՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, ՍՎ. 10-45: Ինքնագիր:

N 49

ԱՄԻՐ ԱՐՇԱԴԻՆ

22 ապրիլի 1921թ.

Գորիս

Սիրելի բարեկամ Ամիր Արշադ

Շատ կարևոր գործով տեղդ են գալիս Հայաստանի Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ պ-ն Ս.Վրացյանը, 5 ընկերներով: Խնդրում եմ Ձեր լայն աջակցությունը սրանց իրենց միսսիան հաջողությամբ կատարելու համար:

Միշտ ձեր բարեկամը՝ Սպարապետ՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, ՍՎ. 5-8: Ինքնագիր: Նույն օրը Նժդեհը Ամիր Արշադին հաստեագրել է նույնաբովանդակ մի այլ նամակ: Տե՛ս նույն տեղը, ՍՎ. 5-7:

N 50

ՊԱՐՍԻՑ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՄՈՒԹԱԼԻՄ ԽԱՆ ՍԱՀՐԱՆԴԻՆ

22 ապրիլի 1921թ.

Գորիս

Տաճկական միսսիայի հետ բանակցելու նպատակով Թավրիզ է անցնում պ-ն Սիմեոն Վրացյանը երկու ընկերներով:

Խնդրում եմ Ձեր լայն աջակցությունը վերջիններիս ապահով տեղ հասնելու:

Լեռնահայաստանի սպարապետ՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, ՍՎ. 5-6: Ինքնագիր:

N 51

ՏԱՃԿԱՀԱՅ ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻՆ

N 807 23 ապրիլի 1921թ.

Գորիս

Գողթանի հրամանատար Ղազարին հրամայված է սպասելու Ձեզ Օխչի ձորում: Միօրյա հանգստից հետո (Քաջարանում) Ձեր զորքերը պետք է իջնեն Գողթան: Նպատակը-ապահովել Սիեարին (ուր կա պարոմ) և անցկացնել գաղթականությունը Պարսկաստան: Այդ գործով հրամանատար Ղազարը Ձեզ ցույց կտա մեծ աջակցություն: Օխչի ձոր հասնելուն պես հաղորդագրեք ինձ, որ ժամանակին գամ և ես:

Սպարապետ՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր:

N 52

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

26 ապրիլի 1921թ.

Տաթև

Սիրելի ընկ.Ռուբեն

Վալեաթին[120] և միսսիաներին ուղղածս գրությունները շատ վստահելի մարդկանցով ուղարկիր Թավրիզ՝ սրբազանին: Մեր ինտելիգենցիան սրից ու սովից փրկելու մտահոգությունը ինձ հիվանդացնելու չափ լարել է: Գրիր, տեսնենք, ո՞վ անցավ, ո՞վ մնաց: Տաճկահայ ուժերը մի մեծ չարիք են, որը որքան շուտ հեռանա Լեռնահայաստանից, այնքան լավ է մեզ համար: Նրանց ալան-թալանը, գյուղերում թույլ տված բաշիբոզուկությունները զզվանքով ու թշնամանքով են լցրել լեռնահայաստանցիներին: Այս երկու օրս Մեղրի կգամ և ես:

Բարևներս Գուրգենին:[121]

Բարևներով՝ քո *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքով թղթի վրա:

N 53

ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Ն.ՄԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻՆ

[26 ապրիլի 1921թ.][122]

[Տաթև]

Սիրելի Սրբազան

Խնդրում եմ վալեաթին և միսսիաներին ուղղածս գրությունները անձամբ (մեր ընկերներից մեկի հետ՝ Քաջազնունի, Վրացյան, Շանթ) ներկայացնել իրենց: Հիվանդանալու չափ մտահոգված եմ հայ ինտելիգենցիայի ողբերգական վիճակով: Անիծվի աշխարհը:

Ձերմ բարևներով՝ Ձեր *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-12: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքով թղթի վրա:

N 54

Ռ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

26 ապրիլի 1921թ.

Տաթև

Սիրելի ընկեր Ռուբեն

Մեր մտավորականությունը սրից և սովից փրկելու մտահոգությունն ինձ հիվանդացնելու չափ լարել է: Գրիր, տեսնենք, ով անցավ, ով մնաց: Տաճկահայ ուժերը մի մեծ չարիք են, որն որքան շուտ հեռանա Լեռնահայաստանից՝ այնքան լավ է մեզ համար:

Նրանց ալան թալանը, գյուղերում թույլ տված բաշիբոզուկությունները զզվանքով ու թշնամանքով են լցրել լեռնահայաստանցիներիս:

Ձերմ բարևներով՝ քո Նժդեհ

ՀՀԴ ԿԱ, թ.ծ. 5, գ.10:

N 55

Ռ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

[ապրիլի վերջ, 1921թ.][123]

Սիրելի Ռուբեն

Էլի կրկնում եմ՝ Ամիր Արշադի մոտ մարդ ուղարկեք և հասկացրեք, որ «Թորփաղ փուլի» կոչված խայտառակությունը միանգամայն անտեղի է և անարդար: Պարսկաստան անցնողները ոչ առևտրականներ են, ոչ էլ սովորական ճամբորդներ: Ապստամբներ, որոնք կռվել են ընդհանուր թշնամու դեմ, այսօր հացի պակասության պատճառով անցնում են Պարսկաստան: Հասկացնել տվեք, որ Թորփաղ փուլին մի մեծ վիրավորանք է, որը Պարսկաստանը հասցնում է ինձ, իր երկրի հյուսիսը ամբողջ մի տարի պաշտպանողին: Թորփաղ փուլին դժվարացնում է գաղթականների անցը Պարսկաստան և խորացնում-սրում Լեռնահայաստանի պարենավորման կրիզիսը: Հազար ու մի միջոցի դիմեք արագացնելու անցը: Մշեցիներից ֆալաշիներ գտիր և կազմակերպիր անցի գործը: Գործի դրեք պարոմը: Գրեք եպիսկոպոսին, որ միջամտի անցի համար:

Սեղմ՝ անկարելին կարելի դարձրեք, որ օր առաջ ազատվենք գաղթականությունից:

Բարև՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 46-2: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքով թղթերի վրա:

N 56

Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

3 մայիսի 1921թ.

Մեղրի

Սիրելի Սիմոն

Դու գիտես ինձ: Ես ուխտած եմ, ես դատապարտված եմ հանուն մեծ գաղափարի, Հայ Հայրենիքի՝ տղամարդավարի մեռնելու իմ սիրած Լեռնա-հայաստանում: Խնդրում եմ լայն նյութական ու քաղաքական աջակցությամբ հնարավորություն տալ ինձ երկար կռվելու և լավ մեռնելու:

Ձերմ բարևներով՝ քո *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ.96:

N 57

Հ Յ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

11 մայիսի 1921թ.

Ղափանի հանքեր

Սիրելի ընկերնե՛ր

Գալիս է ընկեր Համոն,[124] որը Ձեզ ինֆորմե կանե Լեռնահայաստանի, Արարատյան Հայաստանի և Ռուսաստանի դրության մասին:

Բոլոր դրություններից, որքան էլ որ նրանք կրիտիկական լինեն, ըստ իս, *վճռական և ուժեղ ցանկության դեպքում* միշտ էլ կարելի է պատվով դուրս գալ: Մենք և մեր կուսակցությունը փրկեցինք մեր ցեղի մտավորականությունը կարմիր կացինից: Դա ինքնին մի մեծ, պատմական ծառայություն է: Եթե երևանյան ապստամբությունը տարերային բնույթ չունենար, եթե դա առաջացրած ու վարած լիներ միայն ու միմիայն մեր կուսակցությունը՝ գուցե և կատաստրոֆան տեղի չունենար: Ինչ որ է, փաստը կատարված է, Երևանն ընկած: Լարենք մեր բովանդակ ուժերը, ջրցեղենք մեր թուլացած կամքն ու ցանկությունը և պատրաստվենք Ռուսաստանը և Անդրկովկասը լցնող ժողովրդների հետ ընդհանուր գրոհի:

Դաշնակցական ջերմ բարևներով՝ Ձեր *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքով թղթի վրա:

N 58

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

13 մայիսի 1921թ.

Մեղրի

Տաճկահայ զորամասի արած վերջին խայտառակությունը, այն է՝ մի ամբողջ խմբակի թշնամու կողմն անցնելը կիսով չափ կոտրել է և իմ, և Լեռնահայաստանի մեջքը: Այն, որ դու քիչ կարևորություն ես տալիս այդ անչափելի դավաճանությանը՝ ինձ կատաղեցնում է:

Գիտեմ, խեղդվողը իրեն հետ դեպ անդունդն է քաշում և իրեն օգնության ձեռք մեկնողին, բայց չէ որ այդպիսով ինքը չէ փրկվում:

Ես մեկնում եմ Գորիս: Ցտեսություն:

Բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 46-2: Ինքնագիր: Գրված է «Վարչապետ Լեռնահայաստանի կառավարության» դրոշմակնիքով թղթի վրա:

N 59

ՀՀԴ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

11 մայիսի 1921թ.

Ղափանի հանքեր

Սիրելի ընկերներ,

Գալիս է ընկեր Համոն, որը Ձեզ տեղեկատվություն կանի Լեռնահայաստանի, Արարատյան Հայաստանի և Ռուսաստանի դրության մասին: Բոլոր դրություններից, որքան էլ որ նրանք հուսահատական լինեն, ըստ իս, *վճռական և ուժեղ ցանկության դեպքում* միշտ էլ կարելի է պատվով դուրս գալ: Մենք և մեր կուսակցությունը փրկեցինք մեր, մեր ցեղի մտավորականությունը կարմիր կացինից: Դա ինքնին մի մեծ, պատմական ծառայություն է: Եթե երևանյան ապստամբությունը տարերային բնույթ չունենար, եթե դա առաջացրած ու վարած լիներ միայն և միմիայն մեր կուսակցությունը՝ գուցե և աղետը տեղի չունենար: Ինչ որ է. փաստը կատարված է: Երևանն ընկած:

Լարենք մեր բովանդակ ուժերը, ջրցողենք մեր թուլացած կամքն ու ցանկությունը և պատրաստվենք Ռուսաստանն ու Անդրկովկասը ցնցող ժողովուրդների հետ ընդհանուր գրոհի:

Դաշնակցական ջերմ բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, էջ 93:

N 60

Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

20 մայիսի 1921թ.

Գորիս

Հարգելի ընկեր Սիմոն Վրացյան

Այսու անհրաժեշտ ենք գտնում սոսկ իբրև ընկերոջ հաղորդակից անել Ձեզ այն խնդրին, որ այսպես, թե այնպես՝ զբաղեցնում է մեզ և կարող է դժվարությունների և թյուրիմացության դուռ բանալ: Ապրիլ 27-ին Տաթևում ընտրվեց Լեռնահայաստանի կառավարությունը, որին հանձնվեցին թե Երևանի զորամասերը և թե Հայաստանի Հանրապետության փոքրաթիվ գույքը և դրամական արժեքների մի փոքր մասը: Լեռնահայաստանի կառավարության համար, այսպիսով, բարոյական և շոշափելի պատճառներ ստեղծվեցին դառնալ փաստական և իրավական ժառանգորդը Հայաստանի Հանրապետության կառավարության, գործնականում կատարելով նրա բոլոր իրավասությունները:

Այժմ, ուրեմն, Գորիսում գործում է մի կառավարություն, որի տրամադրության տակ են մեր երկրի բոլոր հնարավոր իրական ուժերը: Այդ կառավարությունը ունենալու է, իհարկե, իր արտահայտությունը՝ ինչպես երկրում, նույնպես և՝ արտասահմանում:

Այդ կառավարության հետ գրեթե միաժամանակ նշանակվել է ձեր կողմից Հայաստանի կառավարություն, որի անդամներից մի մասը գտնվում է երկրում, իսկ մյուս մասն՝ արդեն անցել է Պարսկաստան:

Շնորհիվ այն հանգամանքին, որ ձեր կառավարությունը ներկայացնում է իբրև Հայաստանի կառավարություն, երևանյան զորամասերը և մանավանդ իրանց ղեկավարները՝ միշտ իրանց ակնարկն ուղղում էին դեպի այդ կառավարությունն և բարոյապես թեքվում դեպի նա, և այն՝ ինչ պետք է սպասեին Լեռնահայաստանի կառավարությունից՝ կարծեք կապում են ձեր կազմի հետ և իրենց մեջ ստեղծվում է արտաերկրային հոգեբանություն: Տաճկահայ զորամասերն արդեն գրեթե ամբողջությամբ զինաթափ եղան ինքնակամ կերպով՝ չուզելով մասնակցել ոչ մի զինվորական գործողության: Այդ զորքերի հոգեկան վիճակի նկատմամբ ասում են պատասխանատուին, նույնիսկ այնպիսի անձինք, որոնցից ոմանք անդամ են ձեր կառավարության, ինչ որ սրանից հետո՝ անհասկանալի պետք է լինի:

Մեզ դեռևս հայտնի չէ, թե դուք արտասահմանում ինչ անունով եք գործում, բայց այսու հարկ ենք համարում անդրադառնալ այդ խնդրին և հասկացողության գալ՝ տեղի չտալու համար ավելորդ և վտանգավոր թյուրիմացության և չդնելու համար արտաքին աշխարհը Հայաստանի անունով խոսող երկու կառավարության առաջ՝ եթե չհաշվենք մեծամասնականներին:

Արտասահմանյան հայ, թե օտար շրջանակները մինչ այժմ երկու Հայաստանին միայն ծանոթ են, ավելի ճիշտ՝ երկու տեսակի կառավարության՝ ազգային-դաշնակցական իշխանության և խորհրդային: Հայաստանը դարձել է այդ երկու ճակատամարտող ուժերի թատերաբեմ և երկիրը բաժանվել է այժմ երկուսի միջև, որոնք շարունակում են պայքարը: Այդ կռիվը վարում են երկու կառավարությունները, որոնք գտնվում են Հայաստանի հողամասում, մեկը լեռնավայրում, մյուսը՝ դաշտավայրում:

Այժմ, արտասահմանի համար բոլորովին անհասկանալի պիտի լինի, եթե իմանա, որ մեծամասնական կառավարությանը հակընդդեմ կա երկու կառավարություն, ստեղծված միևնույն նպատակի համար՝ ինչ որ անհեթեթ է, մանավանդ, որ կուսակցական խտրությամբ էլ բաժանված չեն վերջիններս:

Այդ պարագան կարող է գաղութներում հակառակորդ տարրերի կողմից չարամիտ մեկնաբանությունների դուռ բանալ և պղտորել ժողովրդական զանգվածներին:

Մենք՝ իբր ընկերներ, այնպես ենք կարծում, որ լավ կլիներ արտաքին աշխարհի առաջ ներկայանալ միայն մի անունով և իբրև մի կառավարություն կատարել ամեն դիմում: Այդ իրականացնելու համար մենք գտնում ենք երկու ելք.

1. Այն, որ դուք լինեք մեր կառավարության լիազոր ներկայացուցիչը Պարսկաստանում կամ այլուր, արտաքին աշխարհի ու մեր գաղութների հետ կապվելու և հարաբերություն պահպանելու համար:

Այդ դեպքում մեր կառավարությունը կարող է անվանվել՝ եթե պետք լինի, Հայաստանի կառավարություն՝ փոխանակ Լեռնահայաստանի:

2. Առաջինը հարմար չնկատվելու դեպքում, այն ժամանակ, մեր կարծիքով գոնե անհրաժեշտ է, որ դուք ներկայանաք ոչ թե իբրև «Հայաստանի Հանրապետության նախարարապետի», այլ իբրև «Փրկության կոմիտեի նախագահի»: Կարևոր ենք գտնում հայտնելու ձեզ, որ Փրկության կոմիտեի լուծումն ու նոր կառավարության ընտրությունը չի եղել Փրկության կոմիտեի անդամների գոնե պարզ մեծամասնության գիտությամբ և մասնակցությամբ: Այս մեր նամակով շոշափած խնդրի և այլ հարցերի շուրջ խորհրդակցելու համար ամսիս վերջին Գորիս են հրավիրվել Հայաստանի Հանրապետության կառավարության՝ երկրում գտնվող անդամները:

Փափագելով այս մասին ունենալ ձեր կարծիքը՝ ցանկալի կլիներ, ինչքան հնարավոր է, շուտ՝ պատասխանեցեք մեր նամակին, ձեր կողմից ցույց տալով հարցը լուծելու համար նպատակահարմար որևէ ձև:

Ընկերական բարևներով՝ Զորավար *Նժդեհ, Ս. Մելիք-Յոլչյան, Հովհաննես Տևեջյան, Սմբատ Եղիազարյան*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 96-98: Բնագիր: Ձեռագիր:

N 61

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

N 1188 20 մայիս 1921թ.
Գորիս

Կառավարությունը, ծանոթանալով Ձեր՝ սպարապետին ուղղած նամակի բովանդակությանը, անհրաժեշտ կնկատե հայտնելու Ձեզ, որ նա ևս կարևոր կդատե մի լեզու գտնել Հայ և Թուրք վեճի շուրջ գոնե ժամանակավորապես մի հասկացողության գալու համար:

Մեր կառավարությունը այն կարծիքին է, որ երկուստեք պետք է համանման զիջումներ լինեն. մի կողմից Ղարաբաղի նկատմամբ, մյուս կողմից Շարուր-Նախիջևանի, առաջինը, որոշ պայմաններով, ենթարկելով Ազրբեյջանին, երկրորդը՝ Հայաստանին:

Կարևոր նկատելով թուրք ներկայացուցիչների հետ վարվելիք բանակցությունները, Լեռնահայաստանի կառավարությունը այդ բանակցությանց մասնակցելու համար իր կողմից պաշտոնական ներկայացուցիչ է նշանակում արդարադատության և լուսավորության նախա-

ռար ընկեր Հովհաննես Տեեճյանին, որը լինելու է մեր կառավարության տեսակետների արտահայտողը և միաժամանակ Հայաստանի Հանրապետության կառավարության և Լեռնահայաստանի կառավարության միջև գոյություն ունեցող մի շարք խնդիրների մասին աշխատելու է գալ որոշ հասկացողության:

Լեռնահայաստանի նախարարապետ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-9: Բնագիր: Ձեռագիր[125]:

N 62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

20 մայիս 1921թ.

Հարգելի ընկեր Ս. Վրացյան,

Լեռնահայաստանի կառավարությունը և սպարապետությունն այսուհետև անհրաժեշտ է նկատում վճռապես հայտնելու Ձեզ հետևյալը.

Երևանի զորամասերը, որ Ձեր կառավարության կողմից դրվել էին մեր զորահրամանատարության տրամադրության տակ, իրենց ղեկավարներով միասին դարձել են մի գործիք քայքայման և դասալքության:

Այն շրջաններում, ուր նրանք գտնվում են՝ տիրում է կազմակերպված թալանն ու սադրանքը: Զորամասի մեջ բացարձակապես բացակայում է կարգապահության ու կռվի տրամադրությունը, ընդհակառակը, օրեցօր տարածվում է դասալիքի հոգեբանությունը՝ շնորհիվ Կուռոյի և այլոց ընթացքին: Վերջինս մինչև այսօր չի կատարել իմ՝ քանիցս կրկնած հրամանները և այդ բոլորն այսպես թե այնպես կապվում է՝ Ձեր կառավարության հետ:

Այսուհետև հայտնում ենք Ձեզ, որ Ձեր նախարարությունը կա՛մ պետք է գա իր զորքի մոտ և տեր լինի նրան ու աշխատի օգտագործել, կա՛մ գրավոր կերպով հայտնի մեզ, թե նա հրաժարվում է այդ զորքի հետ որևէ կապ ունենալու և չի հետաքրքրվում նրա ճակատագրով:

Այս բոլորը տանում է դեպի Լեռնահայաստանի կործանումը, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնելու է Հայաստանի Հանրապետության կառավարության և երևանյան զորամասի հրամանատարության վրա:

Սպասում եմ Ձեր շուտափույթ պատասխանին:

Լեռնահայաստանի վարչապետ՝ Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 99-100:

N 63

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

21 մայիսի 1921թ.

Արևմտյան ճակատում տեղի ունեցող վերջին դեպքերն ինքնապատճառ չեն. նրանք հարազատ ծնունդ են այն պարտվողական քաղաքականության և մարտավարության, որոնցից դժվարանում են հրաժարվել երևանյան զորամասի ղեկավարները և կառավարության անդամներից շատերը: Օրեր առաջ երևանյան աղետից հետո միակ չարիքը համարվում էր արևմտահայ զորամասը, սակայն, այսօր ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ պակաս չարիք չեն և ուրիշները՝ շնորհիվ իրենց ղեկավարների: Զինվորը զորամասում միշտ լավ է, մարտունակ, հաղթական, եթե այդպիսին է՝ նրա հրամանատարությունը: Ես շատ բան չեմ պահանջել այդ զորամասից, եթե Լեռնահայաստանի զորքերի և ժողովրդի կողմից ցույց տված օժանդակության փոխարեն նրանք ամեն կերպ չաշխատեն թուլացնել մեր ճակատները և քայքայել մեր թիկունքը: Ես, բացի շնորհակալությունից՝ ոչինչ չէի ունենա հայտնելու այդ զորամասին և նրա հրամանատարությանը: Արևմտյան ճակատում կանգնած զորամասերը պետք է գիտենան, որ Լեռնահայաստանի ժողովուրդը 7000-ի չափ գաղթականություն է կերակրում՝ ինքը քաղցած լինելով հանդերձ:

Նույն զորամասը պետք է խորապես գիտակցի ու գնահատի Ղափանի, Գենվազի և այլ շրջանների ժողովրդական վաշտերի այն ջերմ ու գաղափարական վերաբերմունքը, որի շնորհիվ միմիայն սովից և սրից փրկվեց հայ մտավորականությունը: Թող գիտենան և այն, որ հայ ժողովուրդը և պատմությունը անեծքով պիտի խոսեն այն զորամասերի և ղեկավարների մասին, որոնց մի մասը նամարդորեն կոխկրտելով Լեռնահայաստանի ժողովրդին՝ անցավ Պարսկաստան, մյուս մասը՝ սպառնում է արագացնել հայ ժողովրդի սև օրվա հայրենիք Լեռնահայաստանի անկումը:

Շինել չե՞ս կարող՝ գոնե մի՛ քանդիր, ահա՛ իմ պահանջը երևանյան զորամասից և նրա ղեկավարներից: Ցանկության դեպքում՝ այդպես վարվել կարելի է: Այդ ուղղությամբ է, որ պետք է աշխատի Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հարգանքներով՝ Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 100-101:

N 64

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

17 հունիսի 1921թ.

Ղափանի հանքեր

Լեռնահայաստանը ինձ համար եղել է ու կմնա ինքնանպատակ և ոչ «1 անընք. բառ» Հայաստան ասելով ես հասկացել եմ նախ և առաջ մեծ Սյունիքը և հենց սրանով պետք է բացատրել իմ որոշումը, ինչ գնով էլ որ լինի, ձեռքից չտալ այս երկիրը:

Ես կուզեի, որ իմ բոլոր ընկերները բաժանեին իմ կարծիքը և Լեռնահայաստանի ինքնապաշտպանության գործում առաջնորդվեին իմ տեսակետով: Առանց Մեծ Սյունիքի Միացյալ և Անկախ Հայաստան լինել չի կարող: Ահա այն մեծ ճշմարտությունը, որի մոռացումով մենք կկորցնենք ամեն ինչ:

Առաջարկում եմ.

1. Ամեն կերպ աշխատել մեր ապստամբական շարժումը վերածել համաանդրկովկասյան շարժման, նոր ռազմա-քաղաքական բազաներ ստեղծելով Ադրբեջանում և Վրաստանում:

2. Չբավականանալ Եվրոպայում ստեղծված կոմիտեով[126] և ամենակարճ ժամանակամիջոցում հայերից, թուրքերից և վրացիներից խառն կոմիտեներ ստեղծել նաև Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Այդ առթիվ հրահանգել մեր դիվանագիտական ներկայացուցչությանը:

3. Ոչ մի միջոց չխնայել ռազմամթերք ներմուծելու Հայաստան (Լեռնահայաստան):

ՀՀ Զինվորական նախարար Սպարապետ՝ Զորավար՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, <...>-11: Բնագիր: Ձեռագիր:[127]

N 65

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

17 հունիսի 1921թ.

Ղափան

Ամսիս 15-ին, 16-ին և 17-ին մեր կողմից վերագրավված է ամբողջ Դարալագյազը: Վերցրել ենք 5 լեռնային թնդանոթ, 26 գնդացիր, 300-ից ավելի գերիներ, որոնցից 5 սպաներ և մեծ պատերազմական

ավար: Թշնամու այդ շրջանում գործով զորամասը կարելի է գլխովին ջարդված ու գերված համարել: Լեռնահայաստանի մնացած ռազմաճակատներում հանգիստ է, անփոփոխ:

Ընկերական բարևներով՝ Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 412 Ա 2-4: Ինքնագիր:

N 66

ՀՀ ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ[128]

17 հունիսի 1921թ.

Ղափանի հանքեր

Դարալագյազի վերագրավումը մեր թշնամիները կարող են բացատրել իբրև թշնամական ակտ դեպի Սովետական Հայաստանը, որի հետևանքով կարող են Երևանում լինել զանազան ռեպրեսիաներ ոչ բոլշևիկ տարրերի վերաբերմամբ:

Այդ բանը կանխելու համար անհրաժեշտ է անել մի հայտարարություն այն իմաստով, որ Դարալագյազի վերագրավումը տեղի է ունեցել նույն վայրի գյուղացիության համագումարի որոշման համաձայն, և որ բռնարար սովետականացրած գյուղերի վերագրավումով մենք ցանկացել ենք միայն և միմիայն ամբողջացնել Լեռնահայաստանի տերրիտորիան:

Զինվորական նախարար Սպարապետ՝ Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-13: Ստորագրված պատճեն: Ձեռագիր:[129]

N 67

ՀԵՌԱԽՈՍԱԳԻՐ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԳՆԴԱՊԵՏ ԿՈՒՌՈՅԻՆ

1921թ. հունիսի 20-ից ոչ շուտ[130]

Թշնամին անզորացած է, սակայն գործողություններ սկսելու մտադրություն ունի: Հավանական եմ համարում հարձակումը Սիսիանի վրա, որը, ինչ մասշտաբով էլ որ սկսվի, վերջանալու է թշնամու կատարյալ պարտությամբ: Արևմտյան ճակատի, այն է՝ Սիսիանի և Դարալագյազի ռազմագիտական դրությունը ավելի ևս կայուն դարձնելու համար հրամայում եմ՝ առաջինը. ամեն տեսակետից ուժեղացնել Սիս-

իանը, պահելով այնտեղ 2 թնդանոթ և գնդացրային մեկ դիվիզիոն: Անհրաժեշտ է Սիսիան վերադարձնել նաև փոխգնդապետ Թորոսյանին, որոշ ուժերի հետ: 2. Ուժեղացնել կենդանի կապը գործանային* գծով Սիսիանի և Դարալագյազի միջև: Թշնամին, որ ճակատից էլ որ սկսելու լինի իր հարձակումը, մեզ թողնելու է լայն հնարավորություն իրեն Սիսիանի մեջ սեղմելու, взять в клещи[131]: Ուրեմն ամեն կերպ աշխատեք սկսվելիք կռիվների ժամանակ դիմելու տակտիկական խելոք միջոցին: Հայտնեք զորամասերին և իրենց պետերին, որ մեր կռիվը այսուհետև լինելու է Ադրբեջանի դեմ, որը՝ մուսաֆաթական, թե սովետական՝ մնում է նույն հայակերը: Հայաստանում և Ադրբեջանում ռուս բոլշևիկներ գրեթե չկան: Եղածները նրանք են, որոնք բոլշևիկների Անդրկովկաս մտնելուց առաջ ապրել են Ադրբեջանում և այժմ, հեռանալու հնարավորություն չունենալով, մնում են Ադրբեջանում որպես վարձկաններ:

Զորասպարապետ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 1650-3՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Ա տետր, էջ 4-5:

N 68

Ռ.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

21 հունիսի 1921թ.

Սիրելի Ռուբեն

Ամիր Արշադը թնդանոթ և երկու գնդացիրը խնդրել է մի քանի օրով: Վերջինիս խնդիրը պետք է հարգել, որովհետև նրա հաջողությունը, թե պարտությունը մերը պետք է համարել: Ամիրը հանուն մեր երկրի և Գործի պետք է ուժեղ լինի Ատրպատականում: Կխնդրեի այդ բանը միշտ ի նկատի ունենալ:

Բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ս.Վ. 5-14: Ինքնագիր:

N 69

ՍՊԱՐԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԿՈՒՌՈՅԻՆ

23 հունիսի 1921թ.

Գորիս

Արևմտյան ճակատի մեր անհաջողությունները կառավարության համար անսպասելի էին: Հրամայեք զորամասերի պետերին, որ դիմադրեն հերոսաբար: Դարալագյազի զիջումով կվտանգեք Սիսիանը, որը Լեռնահայաստանի ամենաուժեղ կենտրոնն է և նախադուռը: Որոշ

* Բնագրում այդպես է (ծանոթ. խմբ.):

տեղերում անցնել հակահարձակողականի և ջարդել թշնամուն: Ծայրահեղ դեպքում բռնել Ղուշչի-Գնդևազ և Ջուլ գիծը: Ամեն կերպ աշխատեք խուճապի չմատնել Սիսիանը: Մեր դեմ կռվողների 70 տոկոսը թրքությունն է: Եղեք վճռական: Շուտով մի տեղից կզարկեմ թշնամուն և կստիպեմ իր ուժերի մի մասը փախցնելու Դարալագյազից:

ՀՀ Սպարապետ զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 1650-3՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Ա տետր, էջ 42:

N 70

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԿՈՒՌՈՅԻՆ[132]

23 հունիսի 1921թ.

Գորիս

Մեր դեմ կռվողը քողարկված Ադրբեջանն է, որին միացել են 2-3 հարյուր մոլորված և ծախված հայ և ռուս սրիկաներ <մեկ անընթ. բառ> լինի ձեզ. եթե ողորմելի թաթարի առաջ է գետի տակ համարեք,* կռվե՛ք, հակահարձակվե՛ք, մեռե՛ք հերոսաբար ու հաղթեք. հրամայորեն այդ է պահանջում ձեզնից հայ ազգը և պատմությունը: Կռվեք, դիմադրեք և այդպիսով հնարավորություն տվեք ինձ շատ մոտ օրերում ուժերի կեսից ավելին մի այլ վայրում քաշել իմ դեմ. կռվեք, Աստված, իմ հոգին և հայ աշխատավորության տերը ձեզ հետ:

Հայաստանի Սպարապետ, զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 1650-3՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Ա տետր, էջ 9:

N 71

ՀՀ ՓՈԽՍՊԱՐԱՊԵՏ ԳՆԴԱՊԵՏ ԿՈՒՌՈՅԻՆ

24 հունիսի 1921թ., ժամը 20

Ղարաքիլիսա

Ձեր հաղորդագրություններից պարզվում է, որ գրեթե կռիվներ տեղի չեն ունեցել, և որ մեր զորքերը զոհ են դա՛ռել հանցավոր պրոպագանդայի: Կռվում պարտված թշնամին պրոպագանդայով հաղթեց,

* Բնագրում այդպես է (ծանոթ. խմբ.):

ցավալի է: Կդատենք, կդատապարտենք հետո, այժմ ոտքի հանենք մեր բովանդակ մարտական և բարոյական ուժերը ստեղծված դրությունից պատվով դուրս գալու համար: Թշնամին որոշ ուժեր է շարժում նաև Գենվազի և բուն Զանգեզուրի վրա՝ ըստ այսօրվա Նախիջևանից վերադարձած սուրհանդակի ինֆորմացիայի: Անխոցելի պետք է դարձնել Գենվազի-Ղափանի և բուն Զանգեզուրի ճակատները, որպեսզի նախ կանտոնը կանտոնից և ապա Լեռնահայաստանը դրսի աշխարհից չկտրվի: Այդ նպատակով անցնում եմ Գեղվաձորով Ղափան-Գենվազ-Բաղաբերդ: Եղեք վճռական, օգտագործեք բոլոր հնարավորությունները և հավատացեք, որ մենք ենք հաղթելու:

ՀՀ Սպարապետ՝ Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 1650-2՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Բ տետր, էջ 126-127:

N 72

ՀՀ ՓՈԽՍՊԱՐԱՊԵՏ ԳՆԴԱՊԵՏ ԿՈՒՌՈՅԻՆ

24 հունիսի 1921թ.

Կարգադրեցի 400 հետևակ զինվորներ ուղարկելու ձեր տրամադրության տակ՝ գնդապետ Թորոսյանի ուժերը փոխադրելու համար: Երևանյան ուժերի հետքաշվելը կարող է լքում առաջացնել, պետք է թողնել ճակատում: Եթե գտնում եք, որ Գնդևազում թնդանոթ թողնելը վտանգավոր է՝ հրամայիր տեղափոխել Բազարչայ: Սիսիանի ճակատները ամրացվում են: Բոլոր զենքի ընդունակները հավաքում եմ: Ինստրուկցիաները կստանաք սուրհանդակով մեկուկես ժամ հետո:

Նժդեհ

ՀՀԴ ԿԱ, 1650-3՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Ա տետր, էջ 16:

N 73

ՀՀ ՓՈԽՍՊԱՐԱՊԵՏ ԳՆԴԱՊԵՏ ԿՈՒՌՈՅԻՆ

24 հունիսի 1921թ., ժամը 24

Լուսաբացին տեղդ կհասնեն նախարարներ Մելիք-Յոլչյանն ու Եղիազարյանը, որոնք տեղնուտեղը կլուծեն այդ հարցը: Մինչև այդ հրամայում եմ մարտնչող Սիսիանը չանվանել անվստահ և դավաճան

ու արհեստական կերպով պանիկա ստեղծելով, առանց կռվի, ինչպես այդ եղել է, և ավելի ևս չվտանգել դրությունը:[133]

Սպարապետ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 1650-2՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Բ տետր, էջ 119:

N 74

ՀՀ ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ[134]

26 հունիս 1921թ.

Ղափանի հանքեր

Իմ 707 գրությամբ ես ցանկացել եմ տալ Ձեզ ստեղծված դրության իրականության մոտ պատկերը: Այժմ կուզեի երկու խոսք ասել ստեղծված կացությունից դուրս գալու միջոցների մասին:

Չկա մի դրություն, որից, վճռականության դեպքում, որքան էլ որ նա կրիտիկական լինի, կարելի չլիներ պատվով դուրս գալ: Ուրեմն, նախ պետք է վճռականություն՝ մեր դիմադրական կռիվը շարունակել մինչև վերջին հնարավորություն, մինչև վերջին զինվորն ու փամփուշտը:

Երկրորդը՝ պետք է ստեղծել այնպիսի մի հոգեբանական մթնոլորտ, որը հնարավորություն տար մեր կառավարությանը, զորքին, հասարակական ու քաղաքական ուժերի գլուխն անցած ղեկավարներին, առանց ջղայնության, պանիկայի ու կորստաբեր հարայհրոցի անձնվերորեն շարունակելու իրանց տրված գործը:

Երրորդ՝ օրվա ընթացքում, ուժերի ծայրաստիճան լարումով, պետք է աշխատել 24 ժամ ու հավատալ, որ, ինչ էլ լինի, հաղթելու ենք մենք, հաղթելու ենք էթիկապես անգամ, անգամ վերջնական ռազմական պարտության դեպքում:

ՀՀ Զինվորական նախարար Սպարապետ՝ Զորավար՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Նժդեհի կողմից ստորագրված 2 պատճեններ: Ձեռագիր:[135]

N 75

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

հունիս 1921թ.
Ղափանի հանքեր

Սիրելի ընկեր!

Մինչև հոգուս խորքը խոցված եմ, վիրավորված երևանյան զորքերի և հրամանատարության կատարած անլուր դավաճանությունից: Ես Լեոնիդասյան կիրճեր,[136] հրաշագործություններ չէի սպասում երևանյան զորամասերից, որովհետև քաջ ծանոթ էի նրա հրամանատարների 90%-ի պարտվողական հոգեբանության հետ, բայց չէի սպասում նաև, որ այդպես անաստվածորեն կապտակեն իմ հպարտությունը, առանց դանակի կմորթեն իմ հավատը:

Սև լիներ այն օրը, երբ այդ թունավորված զորամասերը հայտարարվեցին Դավիթբեկյան ժողովրդական բանակի շարքերում: 3000-ի հասնող զորամասը Վայոց Ձորի մեր հաջողությունից հետո, բացառությամբ Խնկոյի և Մուկուչի հեծելախմբերի՝ մի մարդու պես, թշնամու աննշան կոնտրհարձակումից ահաբեկված, անցնում է կարմիրների կողմը:

Կուռոն, որին հրամայված էր ան<...> մնալ Վայոց Ձորում և արթուն հսկել ու սատարել, ամենակարճ ժամանակում կազմակերպել ժողովրդական վաշտեր և ուժեղ ադմինիստրացիա,- չգիտեմ ինչու ամբողջ շտաբով վերադառնում է Բազարչայ և Արշակ Հովհաննիսյանին վերջնագրի ձևով չորս օր ժամանակ տալիս՝ ընդունելու իր հրաժարականը: Արշակը չի ընդունում հրաժարականը, պատճառաբանելով, որ այդ առթիվ պետք է դիմել զինվորական նախարար-Սպարապետին: Կուռոն մնում է Բազարչայում, իսկ Հովհաննիսյանը գալիս է Գորիս զեկուցելու իրերի դրության մասին: Ընդամենը մի օր անց Կուռոն հաղորդագրում է ինձ, թե թշնամին գործողություններ է սկսել:

Հրամայում եմ ամրանալ և ինքնապաշտպանվել: Երկրորդ օրը կատարվում է անլուր խայտառակությունը: Պատճառները մեկից, երկուսից ավելի են: Չգիտեմ ինչու Կուռոն առանց իմ թույլտվության գերիներից մի քանի հարյուր հոգուն զինում է և խառնում իր զորքերին, որոնք կռվի ժամանակ անցնում են թշնամու կողմը և իրենց հետ քաշում հազարավորներին:

Զորքը եղել է անղեկավար և անկոնտրոլ ու հեշտությամբ բարոյալքման է ենթարկվել: Այդ կատաստրոֆից հետո երևանյան հեծելախումբը ինքնագլուխ թողնում գալիս է Ղուշչիից և մերկացնում Գնդևազի աջ թևը: Սիսիանի զորամասը, թողնելով Խաչիկը, ամրանում է հարավային Դարալագյազում մինչև որ Նախիջևանը և Մինքենդը երկու կողմից սկսում են իրենց հարձակումները Սիսիանի վրա և կատաստրոֆի չորրորդ օրը ստիպում կառավարության հրահանգելու սիսիանցիներին քաշվելու և ամրանալու Սիսիանի սահմաններում:

Այժմ կռիվը Սիսիանի վրա է: Ժողովուրդը պաշտպանվում է հերոսաբար: Զգացվում է եռագծանի փամփուշտի կարիք:

Ամեն կերպ աշխատեք գոնե հարյուր հազար հատ հասցնել ամենակարճ ժամանակամիջոցում:

Բարևներով՝ Զորավար՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-17: Ինքնագիր:

N 76

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

15 հուլիսի 1921թ.

Սիրելի ընկերնե՛ր.

Մեր ընկեր Գուրգեն Աղայանի գլխավորությամբ Ձեզ մոտ են գալիս իմ երեք զինակիցները, որոնց, խնդրում եմ, ընդունել, լսել և անել հարկավորը:

Ընկերական բարևներով Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Բնագիր: Ինքնագիր: Նամակը գրված է Լեռնահայաստանի կառավարության մինիստր-նախագահի դրոշմակնիքով թղթի վրա:

N 77

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ ԵՎ ՀՀԴ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԿՈՄԻՏԵԻՆ

16 հուլիս 1921թ.

Մուժամբար

Ստացա Ձեր երկտողը: Զզարմացա: Այսպես է աշխարհը: Գիտեմ և չեմ ցավում, որ շուտով, շատ շուտով գուցե մնամ մենակ՝ իմ մի քանի հին զինակիցներով: Թո՛ղ այդպես լինի: Ինձ նմանների ճակատագիրն է՝ լինել մենակ: Ինչպիսի ապերախտություն: Դեռ երեկ՝ իմ երկրի հերոսական ազատամարտով էր հիանում և հպարտանում համայն հայությունը և ծափ տալիս ամեն մի հաջողության առթիվ: Դեռ երեկ՝ մեր հարևան ազգերն անգամ՝ բազմիցս ծեծված ու ջարդված թշնամին, կարմիր Մոսկվան, թե սև Բաքուն, ռուսը, թե թաթարը՝ դառնությամբ խոստովանում էին, որ իմ վարած կռիվն և՛ հերոսական է,

և՛ զարմանք շարժող: Դեռ երեկ՝ և՛ Հայաստանի կառավարությունն, և՛ ՀՅԴ Բյուրոն սրբազան ու հերոսական էին անվանում իմ դիմադրական պայքարը Հայաստանի անկախությանը, նրա աշխատավորությանը սպառնացող բոլշևիզմի դեմ: Իսկ այսօր, երբ մի խումբ պաշտոնատարների, հայ սպայության պարտվողական տականքի դավաճանությամբ՝ երեկվա անկախ ու անհաղթ Սյունիքը ստիպված տեղի է տալիս թշնամուն: Այսօր, շատերը, որոնք իրենց ամբողջ գոյությամբ պարտական են ինձ և Սյունիքին՝ պարսկական չարչի խանաներից տմարդաբար ցեխոտ արշավանք են սկսել իմ և Լեռնահայաստանի հերոս ժողովրդի հասցեին:

Նրանք, որոնք կարմիր կացնից ահաբեկված ու հալածական եկան անցան Թավրիզ՝ հոգնածների ու լքվածների երանության կղզին, նրանք, բոլորը՝ և՛ սպա, և՛ մտավորական, և՛ գաղթական, բոլորը, որոնք այսօր կան և ապրում են Թավրիզում, բոլորը, եթե կացնահարված չեղան երևանյան սպանդանոցներում, եթե գերեզման չգտան Աղինի ձորերում և խուճապորեն չթափվեցին Արաքսը, կրկնում եմ՝ բոլորը պարտական են միայն ինձ և իմ ստեղծած Լեռնահայաստանին:

Այո՛, բոլորը, և՛ հայ մտավորականության այն գաղափարական մասը, որը թվում է՝ բացի ջերմ խոսքն ու բարի ցանկությունը չպետք է ունենա իմ և Սյունյաց երկրի նկատմամբ, և՛ այն պարտվողական սպայությունը, որը թյուրիմացությամբ Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից ռազմագերիներ չեն համարվել և չեզոքացվել, որ իր ոչնչությամբ հանդուրժելի էին համարվել մեծամասնականների կողմից և թողնվել Հայաստանում և որի մեծագույն մասը, հավատարիմ իր քաղաքական լրբության, մեր վերջին ռազմական գործողության ժամանակ երեք հազարի հասնող զորամասով անցավ թշնամու կողմը, և գաղթականության այն քաղաքականապես դիմազուրկ մասը, որը, ընչազրկվելով, չարացած է բոլորի դեմ, դառնացած բոլորից, կրկնում եմ, որ փրկված են իմ և Լեռնահայաստանի միջոցով:

Այդ բոլորը պատմական փաստեր են, բացարձակ ճշմարտություններ, որոնց ոչ ոքի չի հաջողվի «կացնահար» անել, սպանել, հողին հանձնել:

Գիտեմ, որ իմ ստեղծած երկիրը խեղդվեց իր փառքի ծովում ու այդ երկրի անբախտությունը հենց իր ծով փառքի մեջ է, որ այդ հերոսական երկրի դափնիները հանգիստ չէին տալիս շատերին: Չկա, ինձ համար քաղաքականապես մեռած է Լեռնահայաստանը, բայց կա և քանի դեռ կա հայ ժողովուրդը՝ կմնա նրա փառքը, նրա հերոսական պատմությունը, նրա անմահությունը մարմնացնող Խուստուպը:

Թոքերիս և արյանս գնով ստեղծած երկիրը քաղաքականապես սպանելուց հետո պարսկական չարչի խանաների հյուրերից շատերը, սև նախանձից խթանված, ձգտում են սպանել նաև իմ և իմ զինակիցների ստեղծած մեծ գործը: Զանգիբասարներ, Բազարչայներ և նման Արշակավաններ ստեղծելու ընդունակ հայ սպայության տականքը, որն իր դավաճանական արարքների համար պիտ խստագույնս պատժված լիներ Հայաստանի կառավարության կողմից՝ այսօր նույն կառավարության քթի տակ սադրանքներով ու դավադրությամբ է պարապում ու դարձյալ մնում է անպատիժ:

Մեր կառավարության անդամներից (Ձեր և երկու ուրիշի բացառությամբ) մեկը լռում է վախից, մյուսը՝ որովհետև իր շահն է պահանջում լռել ու թույլ տալ սրիկաներին սպանելու ճշմարտությունն, երրորդը՝ վտանգավոր բան է համարում Նժդեհի և ճշմարտության բարեկամը մնալ և պիղատոսաբար լվանում է ձեռները:

Ես, սիրելի ընկերներ, որ անգիտանալ գիտեմ վտանգը, արհամարհել մահն, այդ ես վերջին տարիների ընթացքում և ապացուցել եմ և այդ գիտի հայ ժողովուրդը: Մահից ստրուկներն են դողում, ես չեմ վախում, երբ էլ գա՝ պատրաստ եմ ընդունելու, միայն՝ ոչ շատերի պես: Ասում են՝ Արաքսն անցնողներից շատերն իմաստուն են դարձել, իրենց քաղաքական անմեղներ, կույսեր, հրեշտակներ հայտարարել և մեծամասնականների դեմ դուրս գալու ամբողջ պատասխանատվությունը թողել սպարապետ Նժդեհի վրա: Թող այդպես լինի, չեմ ցավում, չեմ ափսոսում, որովհետև մեր պատմությունը շատ լավ գիտեմ:

Թավրիզում թող նրանք հանգիստ առնեն, որոնք հոգնել են շանտաժելու, դավադրելու, գողանալու գործում: Ես Թավրիզ չեմ գա, որպեսզի ճշմարտությունն էլ ինձ հետ չժամանի Թավրիզ, ճշմարտություն, որը շատերի համար (անգամ մեր մինիստրներից մեկի-երկուսի համար) ավելի սարսափելի բան է, քան մարդկանց կացնահար անող մեծամասնականը:

Հարգանոք՝ Զորավար Նժդեհ

Հ.Գ.

Ի՞նչ, կառավարությունը, կուսակցությունը, մտավորականությունն անհետ կորած են համարում Հայաստանը, թե՞ դեռ հույսեր ունեն: Եթե այո, արդյոք գիտե՞ն, որ Հայաստանի անկախությունը միայն մի ճանապարհ ունի, որ անցնում է Սյունիքով, մի երկիր՝ առանց որի, Հայաստանն, իսկապես, առանց ինձ և իմ սյունեցի զինակիցների, ազատ Սյունիք՝ լինել չի կարող:

Նույն

ՀՅԴ ԿԱ, դատական գործ, թ. 88-90:

N 78

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ

Գաղտնի 18 հուլիսի 1921թ.
Մուժամբար

Արարատյան Հայաստանին սպառնացող տաճկական վտանգն ու Լեռնահայաստանը Ադրբեջանի անբաժան մասը հայտարարելու Բաքվի փորձերը ստիպում են ինձ առայժմ մնալ Պարսկաստանում: Կխնդրեի այդ առթիվ կոնֆիդենցիալ տեսակցություն ունենալ Անգլիական և Ֆրանսիական միսսիաների հետ և առաջարկել իմ և զինակիցներիս ծառայությունը:

Սպասում եմ Ձեր պատասխանին:

Ընկերական բարևներով՝ Զորավար՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ինքնագիր: Գրությունը գրված է «Վարչապետ Լեռնահայաստանի կառավարության» դրոշմակնիքով թղթի վրա:

N 79

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

18 հուլիսի 1921թ.

Մուժամբար

Սիրելի ընկեր Սիմոն

Լուրջ հանձնարարությամբ Ձեզ մոտ են գալիս ընկ. Աղայանի գլխավորությամբ իմ 3 զինակիցները, որոնց, խնդրում եմ, ընդունել, լսել և անել հարկավորը:

Ջերմ բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-19: Ինքնագիր:

N 80

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

20 հուլիսի 1921թ.

Մի երկիր, ուր կարելի է ամեն բան անել, չարաշահել, սաբոտաժով զբաղվել, դասալքել, դավաճանել, ակնհայտ կերպով պարտվողականություն քարոզել, սեղմ ասած՝ մի երկիր, ուր չի գործադրվում պատժի սկզբունքն՝ երկար ապրել չի կարող, կքանդվի:

Հայաստանից զատ ես չգիտեմ մի երկիր, որի զինվորականն ինքնագլուխ կերպով թողներ ճակատը, շտաբն, իրեն հանձնված պատասխանատու պաշտոնը, դասալքեր և անպատիժ մնար:

Հայաստանի հրետանու պետ կապիտան Խաչիկյանը, նախօրոք թունավորելով իր թնդանոթաձիգ սպաներին և զինվորներին, որ այլևս չմնան ու չկռվեն Լեռնահայաստանում, թողնում և փախչում է Պարսկաստան ու անպատիժ մնում:

Փոխգնդապետ Թարխանյանն, իր մի շարք ակնհայտ դավաճանությունների համար, որոնք առաջացրին վերջին աղետն, իմ կողմից հեռացված ու հանձնված էր զինվորական դատարանին, որը նույնպես մինչև օրս ոչ թե պատժված, այլ հնարավորություն է ստացել ղեկավարելու (այն էլ՝ կառավարության քթի տակ) մի փողոցային սադրիչ շարժում:

Փախել են շտաբի պետ, ճակատի պետեր, գետափնյա պահակի պետեր և շատ-շատերը ու այդ բոլորը անպատիժ հովանավորվում են Թավրիզում: Կուզեի մի բան իմանալ, Հայաստանի կառավարությունը մտադի՞ր է բոլոր տեսակի դավաճաններին և սրիկաներին պատժելու, թե՞ ոչ: Կխնդրեի պատասխանել ինձ, եթե այո՛ ե՞րբ, իսկ եթե ոչ՝ ինչո՞ւ:

Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 86-87:

N 81

Ս. ՎՐԱՑՅԱՆԻՆ

21 հուլիսի 1921թ.

Սիրելի Սիմոն,

Ամիր Արշադը թնդանոթ և երկու գնդացիր է խնդրել մի քանի օրով: Վերջինիս խնդիրը պետք է հարգել, որովհետև նրա հաջողությունը, ե պարտությունը՝ մերը պետք է համարել: Ամիրը հանուն մեր երկրի և գործի պետք է ուժեղ լինի Ատրպատականում: Կխնդրեի այդ բանը միշտ ի նկատի ունենալ:

Բարևներով՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, ՍՎ 5-14, թ. 68:

N 82

Ս. ՎՐԱՑՅԱՆԻՆ

21 հուլիսի 1921թ.

Մուժամբար

Ընկեր Սիմոն
Անձնական

Ընդունիր, որ եթե ես իմանայի, որ Լեռնահայաստանը Հայաստան հայտարարելով՝ երկու կառավարությունները մեքենայաբար կմիացնես և 11 նախարարներից 4-5 անպատիժ թողնելով ու փոխվարչապետ կնշանակես Արշակ Հովհաննիսյանին, կրկնում եմ, որ եթե այդ բոլորը ենթադրեի անգամ, ես կխնդրեի քեզ, Հայաստանի կառավարությանը, Հայաստանի կոմիտեին չանել այդ քայլը: Երկիրը Հայաստան հայտարարելը ոճիր էր, տասն և մեկ նախարարներից կառավարություն կազմելն առնվազն ժողովրդին խորապես դժգոհելու առիթ տալ էր, իսկ Արշակ Հովհաննիսյանին, մեկին, որը ոչ երկրին էր ծանոթ, ոչ ժողովրդին և ոչ էլ այդ ժողովրդի ու հարևան թրքության փոխհարաբերություններին, առնվազը վիրավորանք էր՝ ուղղված Տաթևի համագումարի միջոցով իր կամքն առանց վերապահության որոշ ուղղությամբ արտահայտած ժողովրդին: Դու միայն մի քանի ժամ մնացիր նորաստեղծ Հայաստանում և բախտավոր էիր, որ, գտնվելով Թավրիզում, չէիր լսում զայրացած ժողովրդի քննադատությունը: Ընդամենը մի քանի օր առաջ՝ այդ ժողովուրդն իր սպարապետին դիկտատոր է հայտարարում և հանկարծ Լեռնահայաստանը՝ Հայաստան, Լեռնահայաստանի կառավարությունը՝ Հայաստանի կառավարություն, 6 նախարարներ 11 են դառնում և այլն և այլն:

Ո՞վ իրավունք տվեց սպարապետին, քննադատում էր հանկարծակիի եկած ժողովուրդը, որ իր դիկտատորական լիազորությունները զիջի իր ավագ ընկերոջը: Ո՞վ ընտրեց և հաստատեց Հայաստանի Հանրապետության կառավարության կաբինետը, այն էլ՝ 11 հոգուց բաղկացած: Այդ ո՞ր համագումարի միջոցով Լեռնահայաստանը՝ Հայաստան հայտարարվեց: Այդ ի՞նչ կառավարություն է, որ նախարարների մի մասը գտնվում է Պարսկաստանում, երկուսը-երեքը՝ պարապ-սարապ ժամանակ են անցկացնում Հանքերում, իսկ փոխվարչապետը՝ հակառակ ժողովրդի և սպարապետի կամքի, բանակցություններ է սկսում Մինքենդի երկու հազարի հասնող զինված թուրք քոչվորների հետ և հիսուն միլիոն հայկական չեկերով Սիսիանի ամենակարևոր ճակատը, որպես արոտատեղեր և յայլաղներ՝ հանձնում է թշնամուն և, այսպիսով, լայն հնարավորություն տալիս նրան կապվելու Նախիջևանի թրքության հետ և արագացնելու Սիսիանի ու Դարալագյազի անկումը, մի պարագա, որ մեծապես վտանգեց Լեռնահայաստանի ռազմական ընդհանուր դրությունը: Ինչերի՞ս է պետք միայն Գորիսում երկու հարյուրից ավելի պաշտոնեությունն, որի մի մասը սկսել է գողանալ (կան փաստեր, գիտե պետական վերահսկիչը), որն անգործությունից ամբողջ օրը նարդիով ու թղթախաղով է զբաղված: Այդ ի՞նչ երկիշխանություն է՝ նայել, որ իբր թե մի կառավարություն գոյություն ունի, ինչո՞ւ սպարապետի հրամանները չեն կատարվում երևանյան զորամասերի պետի կողմից, ինչո՞ւ է ծգծգվում Դարալագյազի ռազմական գործողությունն, երբ երկու մալական գյուղերում հացը վերջանալու վրա է, ինչո՞ւ չեն տեղահանվում մալականները, որոնք հարմար առիթի են սպասում մեր զորքերին թիկունքից հարվածելու, չնայած որ հրամանը վաղուց է տրված: Ինչո՞ւ իշխանությունը վերջ չի տալիս Բազարչայում, Բորիսովկայում ստեղծված այդ նոր Զանգիբասարին, ուր և՛ սպայության և՛ զինվորության և՛ գաղթականության կողմից կազմակերպված է մի կատարյալ վակխանալիա, ուր թալանում են, ծախում, արտարժույթ ստեղծում հազարավոր մարդիկ, ուր հազար խայտառակությունների հետ կատարվել են մալական կանանց բռնաբարության դեպքեր և մեղավորներն անպատիժ են մնացել: Ինչո՞ւ են նախարարների մի մասը և նրանց մոտիկ մարդիկ խորհրդային թղթադրամ, որոշ տեղերում էլ՝ ոսկի ծախսում, իսկ ստորին ծառայողների և սպայության ռոճիկը՝ տրվում է հայկական թղթե անարժեքացած չեկերով: Ինչո՞ւ Լեռնահայաստանի զորքի և ժողովրդի համար Պարսկաստանում գնված ցորենը տրվեց գաղթականությանը: Ինչո՞ւ եպիսկոպոսի գնած 20 հազար փութ ցորենը չի փոխադրվում, ինչո՞ւ ցորենի փոխարեն՝ մեզ հող ու ավազ տվողները չեն պատժվում, ապա ի՞նչ եղավ հիսուն հազար ռուբլու ոսկին, որի համար Տաթևի համագումարում հայտարարեց սպարապետը, որն իբրև թե Հայաստանի փրկության կոմիտեն դնելու էր Լեռնահայաստանի կառավարության տրամադրության տակ, մեր ժողովրդի ու զորքի կարիքները հոգալու: Մեր երկիրը, Հայաստան հայտարարելով, Հայաստանի օրին կընկնի, պետք է երկիրը վերստին հայտարարել Լեռնահայաստան, անվստահություն հայտնել Հայաստանի կառավարությանը, փոխել կառավարությունը և այլն, և այլն:

Ահա թե ինչեր են ասում, խոսում, անվերջ քննադատում՝ և դառնություն, և դժգոհություն ստեղծում շատ շատերը: Ստեղծվել էր անվստահության, կասկածանքի և սառնության մի մթնոլորտ, կառավարությունը կամ ոչինչ չգիտի կամ շատ քիչ բան գիտեր, որովհետև ոչ գյուղերն էր անցնում, ոչ ճակատներն, որ լսեր լայն զանգվածների ձայնը: Հասել էր վայրկյանը, որ երկիրը կարող էր ամեն րոպե պայթել, բայց ժողովուրդը, վախենալով դրսի թշնամուց՝ դեռ լռում էր: Ղափանն ու Գենվազը, ուր ժողովուրդն ու զինվորությունն ականատես էին նախարարներից մի քանիսի պարապ-սարապությանն և Արաքսի ափին

ցորենի հետ տեղի ունեցող խորհրդավոր խաղերին, տոն տվեցին հակակառավարական շարժմանը: Առաջինը Ղափանը եղավ, որ անվստահություն հայտնեց Հայաստանի կառավարությանը և պահանջեց երկիրը հայտարարել Լեռնահայաստան և այլն:

Իմ դրությունն ավելի քան ծանր էր, ես տեսնում էի՝ թե ինչպես երկիրը քանդվում է, բայց ելք, փրկություն չէի գտնում, ես կանգնած էի մի երկընտրանքի առաջ: Ժողովրդի կողմն անցնելով՝ 90 հնարավորություն ունեի որոշ ժամանակով, քանի դեռ երկրում չնչին քանակությամբ ռազմամթերք կար, փրկել դրությունը, բայց կառավարությունը, ճիշտ մեր կուսակցությունը՝ կստանար մի ծանր հարված:

Ես դիմեցի պալիատիվների, բայց ոչինչ դուրս չեկավ: Դու՝ չկայիր, դու որ Գորիսում երկու կառավարությունների խառը նիստում այնքան հաջող մարգարեացար. «Թողնենք Նժդեհին իր պաշտոնում: Նա ծանոթ է ժողովրդին, ժողովուրդը կապված է նրան, մենք պարտված երկրի կառավարություն ենք, մեզ ժողովուրդը չի ճանաչում, մեզ չէ կապված, երկիրը կարող է վտանգվել»: Դու չկայիր, դու, քո բանակցություններով տարված, երջանիկ էիր, որ չապրեցիր այն ողբերգությունն, որ բաժին ընկավ ինձ և Լեռնահայաստանի ժողովրդին:

Ահա, ընկեր Սիմեոն, բացարձակ ճշմարտությունը Լեռնահայաստանի մասին: Այն բոլորն, ինչ որ քեզ ասել են և ասում են՝ մութ և անցողական ստերի ծնունդ քաղաքական մուծիկուլներ, հուշարարներ՝ ստոր զրպարտություններ են: Տաթևի համագումարից մինչև Սյունիք՝ Հայաստան հայտարարվելը շատ կարճ ժամանակ է: Միայն մի քանի օրվա ընթացքում իր սպարապետին անսահման վստահությամբ ու հավատով դիկտատոր հայտարարող ժողովրդի վերաբերմունքը դեպի նույն սպարապետը չէր կարող փոխվել: Պարզ է՝ ժողովուրդն իրեն խաբված զգաց, խորապես դժգոհեց, որի հետևանքը եղավ այն, ինչ որ եղավ:

Ընկերական բարևներով՝Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 92-96:

N 83

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ս.ՎՐԱՑՅԱՆԻՆ

26 հուլիս 1921թ.

Գրությունս ներկայացնող Գուրգեն Աղայանը իմ կողմից ուղարկվում է ներկայացուցիչ, որին լիազորվում է մասնակցելու կառավարական բոլոր նիստերին վճռական ձայնի իրավունքով:

Զինվորական նախարար՝ Զորավար՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Ս.Վ. 5-20: Բնագիր: Ձեռագիր:[137]

N 84

ՀՀԴ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ[138]

հուլիս 1921թ.

Խիստ գաղտնի

Լեռնահայաստանում ես թողել եմ մի լուրջ կոնսպիրատիվ կազմակերպություն, տեխնիկ և այլ միջոցներով: Այդ երկրից ես չէի դուրս գա, չնայած որ Հայաստանի կառավարության փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանը Ղափանում կառավարության և ՀՀ Դաշնակցության անունից պահանջեց, որ ես չմնամ այդ երկրում, եթե այդ երկրի զինված գյուղացիությունը կանգնած չլիներ հացի և ռազմամթերքի կրիզիսի առաջ: Հավատացած, որ Լեռնահայաստանի ժողովուրդը յուր հունձը անելուց, հացը հավաքելուց հետո պիտի քշի կարմիր հյուրերին: Ես, երկուհարյուրի չափ գնդացիրներ և թնդանոթների կեսից ավելին թողնելով երկրի ապահով թաքստոցներում, երկու թնդանոթ և մի քանի գնդացիր իմ ապագա անելիքների համար ինձ հետ անցկացրի Արաքսի պարսկական ափը: Այդ թնդանոթներն այժմ «մեռած», անմարտունակ վիճակի մեջ իմ մի սպայի և յոթը զինվորների հսկողությամբ թողեցի Դուզալում, իսկ գնդացիրների կեսից ավելին, թվով հինգ հատ (5) հասցրել եմ Մուժամբար գյուղը: Բացի գնդացիրները, այստեղ եմ բերել նաև անմարտունակ դարձրած երկու թնդանոթների ամենակարևոր սարքերը՝ զամոկները, պանորամաները և ուղարնիկները:

Խնդրում եմ կոմիտեիդ կողմից ուղարկել հատուկ մարդ, որ գա ընդունի այդ բոլորը և հոգա սրանց ապահով պահելու մասին:

Ընկերական բարևներով՝ Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 115: Նժդեհի կողմից ստորագրված պատճեն: Ձեռագիր:[139]

N 85

Ռ.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻՆ

2 օգոստոսի 1921թ.[140]

Մուժամբար

Ընդունիր, որ եթե ես իմանայի, որ, Լեռնահայաստանը Հայաստան հայտարարելով, երկու կառավարությունները մեքենայաբար կմիացվեն և 11 նախարարներից 4-5 անպորտֆել ու անգործ կմնային, փոխվարչապետությունն էլ կտրվեր մեկ ուրիշին, կրկնում եմ, որ, եթե այդ բոլորն անգամ ենթադրեի, ես կխնդրեի քեզ և Հայաստանի կառավարության, թողնել Լեռնահայաստանը իր հին քաղաքական վիճակում:

Սյունիքը Հայաստան հայտարարելը մի քաղաքական ոճիր էր: Խոստովանենք, այդ 11 նախարարներից կաբինետ կազմելը, գոնե փոխվարչապետությունը Լեռնահայաստանի ժողովրդի միակ ընտրյալին չթողնելը դա առնվազն ժողովրդին դժգոհելու առիթ տալ էր: Դու, ինչպես գիտես, միայն մի քանի ժամ մնացիր նորաստեղծ Հայաստանում և բախտավոր էիր, որ, գտնվելով Թավրիզում, չէիր լսում հանկարծակիի եկած ու զայրացած ժողովրդի կրիտիկան: Ընդամենը մի քանի օր առաջ այդ ժողովուրդը Տաթևի համագումարում իր Սպարապետին դիկտատոր էր հայտարարել և հանկարծ Լեռնահայաստանը՝ Հայաստան, կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն. վեց նախարարների փոխարեն տասնմեկը, երկու տասնյակի հասնող պաշտոնեության փոխարեն միայն Գորիսում երկու հարյուրի չափ և այլն, և այլն:

«Ո՞վ իրավունք տվեց Սպարապետին, որ իր դիկտատորական լիազորությունները զիջի իր կուսակցական ավագ ընկերոջը: Ո՞վ ընտրեց ու հաստատեց Հայաստանի հանրապետական կառավարությունը, այն էլ 11 նախարարներից բաղկացած: Այդ ո՞ր համագումարի միջոցով մեր երկիրը Հայաստան հայտարարվեց: Այդ ի՞նչ կառավարություն է, որի փոխվարչապետն, առանց Սպարապետի կարծիքն իմանալու, բանակցություններ է սկսում Մինքենդի 2000-ի հասնող զինված քոչվորների հետ և 50.000.000ռ. հայկական չեկերով Սիսիանի ամենակարևոր ռազմագիտական կետեր հանձնում թշնամուն և, այսպիսով, լայն հնարավորություն տալիս նրան մալականների վրայով կապվելու Նախիջևանի թրքության հետ, արագացնելու Դարալագյազի և Սիսիանի անկումը և վտանգելու Լեռնահայաստանի ընդհանուր ռազմական դրությունը: Ինչների՞ս է պետք 200 հասնող պաշտոնեությունը, որի մի մասը սկսել է գողանալ, յուրացնել (կան փաստեր, գիտի պետական կոնտրոլը) և անգործությունից ամբողջ օրը նարդիով ու թղթախաղով է զբաղված: Այդ ի՞նչ երկիշխանություն է, չնայած որ իբր թե մի կառավարություն գոյություն ունի: Ինչո՞ւ Սպարապետի հրամանները չեն կատարվում Արարատյան զորամասի հրամանատարության կողմից: Ինչո՞ւ է ձգձգվում Դարալագյազի օպերացիան, երբ երկու մալական գյուղերում հացը վերջանալու վրա է: Ինչո՞ւ չեն տեղահանվում մալականները, երբ հրամանն արդեն տրված է: Ինչո՞ւ իշխանությունը վերջ

չի տալիս այդ նոր Զանգիբասարին, ուր և՛ սպայության, և՛ զինվորության կողմից կատարվում է մի կատարյալ վակխանալիա, որ գողանում են, ծախում, վալյուտա ստեղծում հազարավոր մարդիկ, ուր տեղի են ունեցել անգամ մալական կանանց բռնաբարության դեպքեր և սրիկաները անպատիժ են մնացել, չնայած Սպարապետի կողմից հրամայված է եղել գնդակահարել մեկին, երկուսին: Ինչո՞ւ են որոշ մարդիկ (բարձր պաշտոնյաներ) ներքին շուկայում սովետական թղթադրամ, որոշ տեղերում էլ ոսկի ծախսում, իսկ ստորին ծառայողներին որպես ռոճիկ տալիս հայկական գրեթե անարժեքացած չեկեր: Ինչո՞ւ Լեռնահայաստանի զորքի և ժողովրդի համար Պարսկաստանում գնված ցորենը տրվեց գաղթականության: Ինչո՞ւ եպիսկոպոսի գնած 20.000 փութ ցորենը չի փոխադրվում: Այդ ո՞վ է մեզ ցորենի փոխարեն հող ու ավազ տալիս և անպատիժ մնում: Հապա ի՞նչ եղավ 30.000ռ. ոսկին, որի մասին Տաթևի համագումարում հայտարարեց Սպարապետը: Մեր երկիրը, Հայաստան հայտարարելով, Հայաստանի օրին կընկնի: Պետք է երկիրը վերստին հայտարարել Լեռնահայաստան, փոխել կառավարությունը, Սպարապետից բացատրություն պահանջել ժողովրդի վստահությունն ու հավատը ի չարը գործ դնելու համար և այլն, և այլն»:

Ահա թե ինչ էին ասում-խոսում, թե ինչպես քննադատում և դառնություն ու դժգոհություն ստեղծում շատերը: Երկիրը Հայաստան հայտարարելուց ընդամենը մի շաբաթ հետո ստեղծվեց անվստահություն, սառնություն ու կասկածանքի մի ծանր ատմոսֆերա: Կառավարությունն այդ առթիվ ոչինչ չգիտեր կամ շատ քիչ բան գիտեր, որովհետև նա <1 անընթ. բառ> մնալով Գորիսում, լայն մասսաների հետ կապ չուներ: Միայն ես, <1 անընթ. բառ>, հրամանատարները, կոմիսարները և որոշ <1 անընթ. բառ> գործիչներ գիտեինք: Այդ բոլորը ստեղծել էր մի կացություն, երբ երկիրն ամեն րոպե կարող էր պայթել, բայց ժողովուրդը, վախենալով դրսի թշնամուց, բոլշևիկներից, դեռ լռում էր: Ղափանը և Գենվազը, ուր ժողովուրդն ու զինվորությունը ականատես էին մեր նախարարներից մի քանիսի պարապ-սարապությանը, Արաքսի ափում ցորենի հետ տեղի ունեցող խաղերին, տոն տվեցին հակակառավարական շարժման: Առաջինն այդ երկու շրջանները անվստահություն հայտնեցին կառավարության-պահանջեցին երկիրը հայտարարել Լեռնա-հայաստան, ստեղծել նոր կառավարություն և այլն, և այլն:

Իմ դրությունն ավելի քան ծանր էր: Ես տեսնում էի, թե ինչպես էր երկիրը կործանվում: Բայց ես ելք, փրկություն չէի գտնում: Ես կանգնած էի մի երկընտրանքի առաջ՝ ժողովուրդ կամ. կառավարություն: Ժողովրդի կողմն անցնելով, 90 շանս կունենայի, որ ժամանակով, քանի դեռ երկրում չնչին քանակությամբ ռազմամթերք կար, փրկել դրությունը: Բայց կառավարությունը՝ ճիշտ է: Մեր կուսակցությունը

կարող էր մի ծանր հարված ստանալ և ստիպված ես դիմեցի պալեատիվների և ոչինչ դուրս չեկավ: Դու չկայիր, դու, որ Գորիսում երկու կառավարությունների խառը նիստում այնքան հաջող մարգարեացար. «Թողնենք Նժդեհին վարչապետ, նա ծանոթ է ժողովրդին, ժողովուրդը կապված է նրան: Մենք պարտված երկրի կառավարություն ենք: Ժողովուրդը մեզ չի ճանաչում, կարող ենք երկիրը վտանգել»:

Դու չկայիր, դու, քո բանակցություններով տարված, չապրեցիր այն սրտապատառ տրագեդիան, որը բաժին ընկավ ինձ: Ահա, ընկեր Սիմեոն, բացարձակ ճշմարտությունը Լեռնահայաստանի մասին: Այն բոլորը, ինչ որ քեզ ասել են և շարունակում են ասել՝ մութ և անցողական օրերի ծնունդ, այդ քաղաքական մոցիքուլիներն ու հուշարարները, սուտ զրպարտություններ են, անսահման վստահությամբ ու հավատով իր Սպարապետին դիկտատոր հայտարարող ժողովրդի վերաբերմունքը չէր կարող փոխվել: Պարզ է՝ ժողովուրդն իրեն խաբված զգաց, դժգոհեց և որի հետևանքը եղավ այն, ինչ որ եղավ: Ես չեմ արտահայտում ժողովրդի վերաբերմունքը և չեմ մեղադրում անհատ այս կամ այն մինիստրին, քավ լիցի, բայց որ կատաստրոֆիկ սխալներ եղել են, այդ անուրանալի է:

Ընկերական բարևներով՝ *Նժդեհ*

Հ.Գ.

Ընկեր Սիմեոն.

Քո բարեկամական նամակի որոշ տեղերն ինձ անասելիորեն դառնացրին: Այդ երբ և որտեղ է եղել, որ ես անկորեկտ վերաբերմունք եմ ցույց տվել Հայաստանի կառավարությանը ինկորպորե:[141] Ինձ զրպարտող պարոնը եթե քաղաքացիական քաջություն ունի, թող հրապարակ գա: Քո՝ ինձ գրած անձնական բարեկամական նամակ մեղադրականը մեծ հաճույքով կարդացի: Շնորհակալություն քո ընկերական խորհուրդների համար և այն բանի համար, որ դու կուզեիր չհիասթափվել իմ նկատմամբ, որ իմ անվան հետ որոշ հույսեր ես կապել և այլն և այլն: Բայց և այնպես ընդունիր, որ որոշ խնդիրներում շատ ես շտապել, առանց ինձ լսելու և լուրջ քննությամբ որոշ բաներ լուսաբանելու: Հանիրավի ինձ վիրավորանք ես հասցրել և անարդար որոշում կայացրել:

Նույն

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-21: Բնագիր: Ձեռագիր:

N 86

Ս. ՎՐԱՑՅԱՆԻՆ

18 օգոստոսի 1921թ.

Թավրիզ
Ընկեր Վրացյան

Պլատոնից մեծ բարեկամս ճշմարտությունն է, ասում են լատինները: Ես դեռ հավատում եմ (չնայած Հ. Տեր-Հակոբյանին արդարացնելու նպատակով «Այգ»-ում Ձեր գրած երկտողը թեթև հարվածել է իմ հավատը), որ Ձեր բարեկամներից ամենաբարձրն ու ամենամոտիկն է ու կմնա ճշմարտությունը: Լինել նախարար, ընկեր Վրացյան, այն էլ մեր օրերում, այն էլ մեր երկրում, ուր գրեթե մարդ չմնաց, որ այս կամ այն պորտֆելին չարժանանար,- մեր կուսակցության ու մասսաների համար այնքան էլ անհրաժեշտ ու փրկարար բան չէ: <...>որոներ չկային, բայց դեռ նահատակորեն ապրում ու գործում էին Ռոստոմն ու Զավարյանը և այնքա՜ն հին էր թվում Գաղափարի ծանր խաչը, այնքա՜ն ցանկալի մահը կախաղանների վրա, բանտերի խորքերում, տունդրայում...[142] Չկային նախարարներ, բայց կար ՄԱՐԴԸ, Աստծու պես անես ու աննախանձ, Աստծու պես ճշմարիտ ու բարի, կային Ռոստոմն ու Զավարյանը, և անձնական սերն այնքա՜ն զուսպ, եսերը կաշկանդված էին... Նրանք կային և կուսակցության հմայքը ծով էր, անունը փառքի մեջ կորած: Երանելի՜ օրեր:

Ընկեր Վրացյա՛ն, Մարդը, Գաղափա՛րի Աստվածաշունչ մարդն է մեռել, մարդն է պակասում մեզ եսականության ու մաղձի, նյութապաշտության ու շահի այս անփառունակ ու կոշմարային օրերում:

Ինտելիգենցիայից պակաս աստվածախույզներ չենք և մենք, մտավորականներս: Առանց Ռոստոմների և Զավարյանների, առանց մարդ-աստվածների դժվարանում ենք ապրել, ոգևորվել և ստեղծագործել: Ես, ինչպես գիտեմ, և շատ ընկերներ վերջին տարիներում, Ձեզ ընդունել ենք Ռոստոմին փոխարինողի և հավատացել Ձեզ: Հենց իմ այս անսահման հավատն էր, որ դրդեց ինձ առանց տատանումի Երկրի վարչապետության պորտֆելը ուրախությամբ հանձնելու Ձեզ և ինձ համար ստեղծելու de jure[143] մի ծանր և աբսուրդային վիճակ:

Սակայն այսօր, երբ ինչ-ինչ պատճառներով դուրս ենք գտնվում երկրից և իմ ու ճշմարտության տմարդ թշնամիները դաշույն են կազմակերպում ու հանում իմ դեմ (իսկ այդ անում են, որ իրենց ստեղծած ժխորում կարողանան իրենց կաշին ու անունը փրկել) դուք շարունակում եք լուռ մնալ:

Հասկանալի պատճառներով մինչև օրս լուռ եմ մնացել և ես: Կոնսպիրատիվ կյանք վարելուս և հիվանդությանս պատճառով ես զրկված եմ հասարակությանը ճշմարտությունն ասելու և վրազդելու հնարավորությունից, իսկ երեկվա իմ կուսակցական «բարեկամները» քուն ու դադար կորցրած հասարակական կարծիք ու տրամադրություն են ստեղծում, զրպարտում, դավադրում և այլն:

Եվ Դուք, իրազեկ այդ բոլորին, շարունակում եք լռել: Այս կամ այն նկատառումներով Դուք, որպես նախարար, կարող եք լռել, բայց, որպես Գաղափարի մարդ, Դուք պետք է խոսեք ու փողոցի երեսին

շպրտեք ճշմարտությունը: Առանց ինձ. կամ իմ խոսքը լսելու Դուք Հայաստանի կառավարության որոշ անդամների՝ իմ թշնամիների (որոնք քաջ գիտեն, որ ես և Լեռնահայաստանի ժողովուրդը իրենց չենք ների Մինքենդի ցուսիման[144] և Արաքս գետի պանման)[145] զրպարտանքի հիման վրա որոշումներ եք կայացնել տալիս իմ նկատմամբ: Ի՞նչ լեռնահայաստանցիների մասին է Ձեր խոսքը: Ո՞վ ասեց Ձեզ, որ Լեռնահայաստանից, բացառությամբ հազիվ մի տասնյակի հասնող գենվազցիների, Ղափանի մի վաշտապետի ու մի քանի սպաների, շիտակ մարդ են դուրս եկել: Դուք գիտե՞ք, ով պիտ ասեր Ձեզ, որոշ տեղում ուղղակի զինու ուժով եմ ցրել այն ժողովրդական վաշտերը, որոնք հրաժարվում էին մնալ Սյունիքում և ուզում էին հետևել:*

Բացառությամբ մի քանի հոգու, Լեռնահայաստանից դուրս են եկել մութ ուժեր՝ մեծամասնականների տները ապստամբության շրջանում թալանածները, անձնական հողի վրա քրեական սպանություններ կատարածները, թայֆայականները, ցարական, հին պաշտոնյաները, որոնց ես հասարակական և վարչական պաշտոններից շատ հեռու էի պահում, կեղծ ու պատիր, անմաքուր դաշնակցականները, որոնցից մեկը պետական տրանսպորտից ցորեն գողանալու համար էր ձերբակալվել, մյուսին՝ Գորիսում պանիկա ստեղծելու և բոլորից առաջ փախչելու համար սպառնացել բանտարկությամբ, երրորդին՝ ударный паек պահանջելու համար շշպրել, չորրորդին՝ գյուղերում (Շահինյանի հրահանգով) դասակարգային շերտավորում առաջացնելու համար վռնդել Հանքերից, հինգերորդին՝ գողին ազատելու նպատակով իր միջամտության համար հանդիմանել, վեցերորդին (պետական կոնտրոլ Տեր-Մինասյանին) մալականներից 2 ձիեր վերցնելու և Գորիս բերելու համար թքել, յոթերորդին (մինիստր Մինասին)[146] մալականի ձին յուրացնելու համար զզվանք հայտնել և պա<...> տվել վերջին երկուսին էլ հեռացնելու և այլն...

<Մեր> այն լեռնահայաստանցին և Հայաստանի կառավարության անդամներից մի քանիսը, որոնք շուտով կտեսնեք թե ի՞նչ չափով են մեղանչել ժողովրդի և ճշմարտության դեմ, որ հավատացնում են Ձեզ, որ իմ վերաբերմունքը եղել է անկորեկտ Հայաստանի կառավարության նկատմամբ in corpore: Ինչո՞ւ անունները չեք տալիս, ինչո՞ւ չեք ստուգում: Ինչպե՞ս հաստատեցիք այդ զրպարտությունը, երբ գիտեք, որ այդ կառավարության մեջ կան անհատներ, որոնց ես չէի կարող չհարգել: Մի՞թե Տեր-Հակոբյանի ով լինելը չպարզվեց Ձեզ համար, երբ նրա գրպանից ոսկիների քսակը դուրս եկավ, երբ դա խաբում էր և՛ ինձ, և՛ իր կողմնակից 3 նախարարներին (Արշակ Հովհաննիսյան, Տերտերյան, Խոնդկարյան), որոնց նույնպես հայտարարում է, որ ոչինչ չկա մոտը: Երբ սեփական փողը (ինչպես ինքը հայտարարեց զորքի առաջ և տվեց իր ստորագրությունը) հանկարծ Թավրիզում դարձավ պետական: Եթե դա պետական էր՝ ինչո՞ւ էին պետական թղթադրամները գրավ դնում այդ պարոնին: Ես Մեղրիում ճանաչեցի և փոշմանեցի նրան մինիստր նշանակելուս համար: Խոստովանում եմ, որ եթե նա կամ ես կուսակցական չլինեինք, ես նրան 3 անգամ չէի փրկիլ լինչի դատաստանից: Այդ պարոնը, ինչպես և երկու հոգի ուրիշները թող դուրբան լինեն Դաշնակցությանը, որի խաչը փակել էր բերանս և կաշկանդել ձեռքերս:

Ո՞վ էր ճշմարտության բարեկամը: Եփրեմ Սարգսյա՞նը-դա չէր կարող անաչառ լինել իմ նկատմամբ, պատճառների մասին շուտով կիմանաք: Արշալույս Աստվածատրյանը, որը թյուրիմացությամբ խուզարկվել էր և իրեն վիրավորված էր զգում: Արշակ Հովհաննիսյա՞նը, այդ երկդիմի քաղաքականություն վարողը, որին ես և Լեռնահայաստանի ժողովուրդը դատապարտում ենք Մինքենդի աղետաբեր ցուսիմայի մեջ:

E'rgo, մնում էր, որ Դու ասեիր՝ cmon, ընկերներ, բայց Դուք այդ էլ չարեցիք: Է՛հ, եղիցի կամք քո: Թող այդպես լինի: Թող, որ իմ և ճշմարտության բարեկամները, որ գտնվում են Արաքսի էն ափում, Լեռնահայաստանում, և այսօր քաղաքական հնարավորություն չունին խոսելու, ասելու ճշմարտությունը: Բայց այն, որ ամեն բան մեռնում է աշխարհում, բացի ճշմարտությունը, ինձ հաշտեցնում է իմ դրության հետ:

Ես, ընկեր Վրացյան, այն սև ապերախտությունից, որը ես տեսա Ձեր կառավարության և Հայաստանի փրկության կոմիտեի որոշ անդամների կողմից, հետո հոգեբանորեն անհնար եմ համարում իմ այստեղ կամ Թեհրանում մնալը: Ուստի խնդրում եմ Ձեզ, որպես Բյուրոյի անդամի, թույլ տալ ինձ անլեգալ ճանապարհով իմ զինակիցների հետ անցնելու Լեռնահայաստան և մնալու այնտեղ անլեգալ հողի վրա: Ժողովրդի տրամադրությունը. մեր մարդիկ նոր են վերադարձել երկրից:* Ապստամբական ոչ մի փորձ չեմ անի, մինչև որ հարևան երկրներում այդ բանը տեղի չունենա:

Լիահույս եմ, որ դժվարություններ չեք հարուցի որոշումս իրագործելու: Սպասում եմ Ձեր պատասխանին:

Բարևներով՝ *Սժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Ս.Վ. 5-22: Ինքնագիր:

---

* Բնագրում այդպես է (ծանոթ. խմբ.):

* Բնագրում այդպես է (ծանոթ. խմբ.):

ԲԱՑԱՏՐԱԳՐԵՐ

ՀՀԴ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՏՅԱՆԻՆ

19 օգոստոսի 1921թ.

Թավրիզ

Այսուհետև ներկայացնում եմ Ձեզ ընկեր Եղիշե Իշխանյանի միջոցով իմ բացատրությունները: Խնդրում եմ ցույց տված վկաներին հարցաքննելուց հետո իմ հակառակորդների հարուցած ինձ անծանոթ հարցերի լուսաբանության համար ընկերներից մեկին ուղարկել լսելու և ինձ: Ավելացնում եմ, որ բացատրություններիս ամփոփումը կներկայացնեմ շատ շուտով:

Ձեր *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թ. 108:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

18 օգոստոսի 1921թ.

Թավրիզ

ԻՄ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հակառակ իմ անհատական կամքի ու ձգտումների, անխուսափելի հանգամանքներից ստիպված թողնելով Լեռնա-հայաստանը, որն իր բախտը մի քանի տարի շարունակ հավատացել էր ինձ, և որն արցունքն աչքերին մեզ հրաժեշտ տվեց, չնայելով, որ մենք թողնում էինք և՛ իրեն և իր երկիրը, ես իմ քաղաքացիական և բարոյական պարտքն եմ համարում հետադարձ մի հայացք ձգել ինձ վստահած երկրի վերջին դեպքերին, և փաստերի վրա հիմնված՝ ձեզ իրազեկ դարձնել այն բոլոր պատճառներին, որոնք գլխավոր հիմք ծառայեցին այդ երկրի անկմանը:

Անհատական պրեստիժի խնդիրը չէ, որ ստիպում է ինձ բաց անել թարմ վերքերը, անձնական փառքի ձգտումը չէ, որ մղում է ինձ դեպի այդ ծանր քայլը, այլ՝ ճշմարտությունը, սոսկ ճշմարտությունն՝ իր ամբողջ մերկությամբ, որ բոլորի համար պարզ լինի, թե ինչպես ամենակարճ ժամանակամիջոցում ստեղծվեց Լեռնահայաստանի ժողովրդի տրագեդիան, որը գերազանցորեն ազդեց նրա քայքայմանն և ի վերջո անկմանը:

Մի երկիր՝ ինչպիսին Լեռնահայաստանն է, որը կարողացել էր մեն-մենակ մի քանի տարի անընդհատ ազգայնական և քաղաքացիական կռիվների ընթացքում իր հուժկու կամքն արտահայտել և իր ինքնուրույնությունը պահպանել, անշուշտ՝ նա ընդունակ էր և կարող կլիներ պաշտպանել նաև իր իրավունքներն ու ազատությունը, եթե քաղաքական նոր կացությունը, որն առաջացել էր 1921թ. ապրիլ ամսից, Երևանից եկած գաղթականության շնորհիվ, չդներ նրան քաղաքական ավելի ծանր և միանգամայն անելանելի կացության մեջ: Ձեզ բոլորիդ պարզ հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության անկախության հայտարարությունից հետո, թե Սյունյաց երկրի, և թե Ղարաբաղի հայ ժողովրդի միակ ձգտումն էր՝ ինչ գնով ուզում է լինի, միանալ Մայր Հայաստանին, բայց, ցավոք սրտի, պիտի խոստովանել, որ մեր պետական գործիչներից շատ-շատերը չկարողացան ըմբռնել մեր ժողովրդի այդ հոգեբանությունը և նպաստել իրագործելու նրա իդեալները: Նրանք՝ մինչև իսկ իրենց գործելակերպով, Հայաստանի Հանրապետությունից հեռու վանեցին ծայրագավառների հոծ հայությունն և պատճառ դարձան նրա տնտեսական քայքայմանը ու ֆիզիկական կործանմանը: Սկսած 1919 թվից, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր ներկայացուցիչներն ունեցավ Զանգեզուրում, և հետագա տարիներին էլ զինական աջակցություն կամեցավ ցույց տալ Սյունյաց երկրին և Ղարաբաղին, այդ գործն առաջ տարվեց այնպիսի անհեռատեսությամբ և միանգամայն աննպատակ եղանակով, որ ժողովուրդը հուսալքվեց: Ղարաբաղը բացի վնասից՝ ոչ բարոյական և ոչ իրական օգնություն չստանալով մայր Հայաստանից, հեռացավ, կտրվեց նրանից: Սյունյաց երկիրը մենակ մնաց՝ ինքն իրեն բախտի կամքին հանձնված, և ստեղծվեց մի նոր քաղաքական դրություն՝ ավելի ծանր և ավելի տաժանելի իր հետևանքներով, քան առաջ էր, որովհետև ազգայնական հողի վրա վարած կռիվը, որի շուրջն էր հավաքված ամբողջ հայությունը, տեղի է տալիս սոցիալական պայքարի, որի անվան տակ գործում է Սյունյաց երկրի ժողովրդի դեմ՝ ոչ միայն Ադրբեջանի մահմեդականությունը, այլև ռուսն ու նոր գաղափարներով տարված հայը:

Դրոյի և Հայաստանից եկած զորամասերի՝ համարյա առանց կռվի բոլշևիկների առաջ կրկին անգամ տեղի տալը և ժողովրդին իր բախտի կամքին թողնելը ինքըստինքյան հասկանալի է, որ միմիայն լքում և քայքայում պիտի առաջ բերեր հասարակության ընդարձակ խավերում և սառեցներ նրանց Հայաստանի Հանրապետությունից, որն և իսկապես տեղի ունեցավ: Ահա թե ի՞նչ է գրում այդ առթիվ Ղափանի գյուղերի ներկայացուցչական խորհրդի նախագահ Աշոտ Մելիք-Մուս-

յանը 1920թ. հոկտեմբերի 22-ին Հ.Յ.Դ. Բյուրոյին, Արտաքին գործերի և Զինվորական նախարարություններին. «Երկրորդ անգամն է, ինչ Ղափանը, Գենվազը, Բաղաբերդն ու Գողթանը պարոն Դրոյի ռազմական անմիտ խաղերի շնորհիվ մնում են մենակ, պաշարված, կտրված աշխարհից... Մեր մտքով անգամ չէր անցնում, որ տեղի կունենա մի վտանգավոր խաղ, անմիտ набеъг, կվտանգի մեր դրությունը և երրորդ օրը վերստին կլքի Զանգեզուրն ու կքաշվի Դարալագյազ»:

Զգալով Լեռնա-հայաստանի կատարած և կատարելիք դերը մայր երկրի նկատմամբ՝ ես մի քանի մարդկանց հետ առանց կանոնավոր զորամասի և առանց ռազմամթերքի ամրացա Գենվազում, իբրև Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից ուղարկած մի զինվորական և իբրև հարազատ զավակը հայ ժողովրդի ինձ համար բարոյական մահ կլիներ թողնել մի երկիր, որի ապահովությունը ինձ էր հանձնված, և թույլ տալ մեր թշնամուն հայ բնակչության դիակների վրայով միանալ Նախիջևանի հետ և այդպիսով սպառնալ մեր Հանրապետության անսասանությանը:

Տեղական ժողովրդի մարտունակությունն ու հոգեբանությունն ինձ պարզ հայտնի էր: Գիտեի, որ նա իր երկրի ազատության համար պատրաստ է զոհվելու: Այդ է պատճառը, որ ես դեռ 1920թ. օգոստոս ամսից սկսած, երբ ամեն կողմից շրջապատված էի թշնամիներով, սուրհանդակների միջոցով անդադար դիմելով Հայաստանի Հայրապետության Զինվորական նախարարին, Արտաքին գործոց և Ներքին գործոց նախարարություններին, պարլամենտի նախագահին և Հ.Յ.Դ. Բյուրոյին, անվերջ բախում էի նրանց դռները և օգնություն ու ռազմամթերք խնդրում... «Գլխատված և ահաբեկված ժողովուրդը անզոր կարողությամբ անհիծում է և թշնամու կողմն անցած իր տականքը կազմող մի բուռ կաշառված դավաճաններին և իր ղեկավարներին, որոնք այնքան հանցավոր հեշտությամբ տեղի տվեցին թշնամու ողորմելի ուժերի առաջ: Չնայելով այդ բոլորին, Զանգեզուրի հայությունը դեռ չի դադարել իր հարազատ զորքերին սպասելուց և դեռ ջերմորեն հավատում է, որ շուտով, շատ շուտով Բազարչայից կգոռան մեր թնդանոթները և երկրիս հայությանը կավետեն մեր զորքերի մուտքը Զանգեզուր» (1920թ. օգոստոսի 25-ին):

«Ընկերներ, մի ավելորդ անգամ էլ խնդրում եմ արագացնել օգնությունը: Այս շրջապատներն իրենց անչափելի ռազմագիտական նշանակությամբ և գերազանցորեն մարտունակ ժողովրդով մեր հանրապետությանը շա՜տ-շա՜տ են պետք» (1920թ. սեպտեմբերի 18-ին): «Ի սեր Գենվազի, Գողթանի և Ղափանի մարտնչող ժողովրդի, որը ոչինչ չխնայեց Հայաստանի նախադուռն և ամրությունները պաշտպանելու համար, որը չորրորդ ամիսն է, ինչ հանուն իր հարազատ հանրապետության իր լավագույն մարտիկների ազնիվ արյունն է զոհի սեղան հանում, օգնություն հասցրեք ինձ զորքով, թնդանոթներով և ռազմամթերքով... օգնությո՜ւն, օգնությո՜ւն, իր վերջին փամփուշտը կրակող Ղափան-Գենվազին» (1920թ. նոյեմբերի 19-ին): «Գիտեք, չէ՞, որ այդ ժողովուրդը զոհ է գնում՝ իր դեպի Երևանն ունեցած ջերմ հավատին» (1920թ. հոկտեմբերի 20-ին): Եվ ի՞նչ է լինում այդքան դիմումներիս հետևանքը՝ քար լռություն և կամ մերժում որևէ իրական օգնություն հասցնելու: Ինչ-ինչ քաղաքագիտական նկատառումներով (հեռախոսագիր զինվորական գլխավոր Շտաբի պետ Պրիտոմանովի հոկտեմբերի 27-ին, թիվ 361), մինչև իսկ Զինվորական նախարարը Դրոյի միջոցով կարգադրվում է ինձ թողնել Լեռնա-հայաստանը և վերադառնալ Երևան (1920թ. օգոստոսի 23-ին): Ի՞նչ դրություն կստեղծվեր այդ երկրում, եթե ես իմ իշխանության այդ կարգադրությունը կատարեի, կամ ո՞ւր կդիմեր Երևանի գաղթականությունը, եթե ստեղծված չլիներ ազատ Լեռնա-հայաստանը և բայրացակամ պարսից իշխանությունը: Այդ դեռ բավական չէ, առանց Լեռնա-հայաստանի ժողովրդի կամքն իմանալու, Հայաստանի Հանրապետությունը վաճառքի է հանում այդ երկիրը և պայմանավորվում Լեգրանի (Բորիս Լեգրան- Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչը) հետ՝ Լեռնա-հայաստանը համարել չեզոք և հայկական զորամասերը, որ գոյություն չունեին այնտեղ՝ հանել երկրից: Ահա թե ի՜նչ իրական օգնություն հասցրեց մեզ Երևանն և ի՜նչպես Սյունիքի ժողովուրդը կապեց իր հետ: Ստեղծված անելանելի դրությունը չվհատեցրեց Լեռնա-հայաստանցուն: Նա կարողացավ միմիայն իր ուժերի վրա հենված դուրս վանել թշնամուն իր երկրից և հիմնել ինքնավար կառավարություն, որը մնաց շրջապատված թշնամի տարրերով երեք կողմից՝ Զաբուղ-Հաջի-սամլուի, Շիրվանի ձորի և Օրդուբադի կողմից, իսկ երբ դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունն ինքնաբերաբար իշխանությունը հանձնեց մեծամասնականներին, և վերջիններս շուտով Երևան եկան նաև Դարալագյազում՝ Լեռնա-հայաստանը պարփակվեց նաև չորրորդ կողմից և մնաց կղզիացած: Այնուհետև, Հայաստանը մեզ համար դարձավ թշնամի մի երկիր: Ահա այն քաղաքական պատկերը, որի մեջ գտնվում էր Սյունիքը 1920թ. դեկտեմբեր ամսից սկսած: Այնուհետև, Լեռնա-հայաստանը իր քաղաքական դրությամբ դարձավ Հայաստանից գաղթող գործիչների փրկության միակ վայրը, միակ օազիսը, նաև Հայաստանում մնացած ինտիլիգենցիայի ազատագրման միակ հույսը: Ոչ ոք ուրանալ չի կարող, որ մայր երկրի գործիչների նկատմամբ Լեռնա-հայաստանը կատարեց իր բարոյական և քաղաքական ամենասուրբ պարտականությունը, որքան նա կարող էր՝ իրեն վիճակված ծանր դրության մեջ:

Երևանը մեծամասնականներին հանձնելուց հետո մեր կառավարությունը մինչև իսկ չմտածեց որևէ կերպ կապ ունենալ Լեռնա-հայաստանի հետ, և ես՝ ինձ մոտ գաղտագողի անցած գործիչներից և

Դարալագյազից տեղեկություններ ստանալով բոլշևիկների հալածանքների և բռնությունների մասին, որոշեցի գրավել Դարալագյազը և այդպիսով օգնության հասնել մայր երկրին և բանտերում կոտորածի ու սարսափների տակ գտնվող մեր ընկերներին: Իմ այդ որոշումը միանգամայն անկախ էր Երևանի շրջաններում առաջ եկած ապստամբական շարժումներից, որոնց մասին ինձ ոչ ոք իրազեկ չէր դարձրել: Փետրվարի 17-ին Սիսիանի զորամասը գրավում է Դարալագյազը և տեղացիների հետ միացած՝ անցնում մինչև Քյոմուրլու: Այսպիսով մաքրվում է բոլշևիկներից այն գիծը, որը կենսական նշանակություն ուներ Երևանի շրջանի և Դարալագյազի միացման համար:

Նոր Բայազետի շրջանում առաջ բերած շարժումը և իմ անձամբ այն կողմն անցնելն այն նշանակությունն ունեցավ, որ բավական ժամանակ գրավեց թշնամու ուժերը դեպի իրեն և միառ ժամանակ հապաղեցրեց Երևանի անկումը: Առաջին անգամ, փետրվարի վերջին թվերին միայն ստանում եմ ընկեր Սիմոն Վրացյանի նամակը ու մարտի 2-ին Համո Օհանջանյանի գրությունը, որոնցից տեղեկանում եմ Երևանի ապստամբության և ռազմաճակատների դրության մասին:

Այդ նամակներից պարզ երևում է, որ Երևանի ապստամբությունը անհաջող վախճան պիտի ունենար, որ անհրաժեշտ է միջոցների դիմել, դեպի Լեռնա-հայաստան նահանջելու արահետն ունենալ և ընկեր Ս. Վրացյանը իր մարտի 25-ի նամակով ի միջ այլոց գրում է ինձ՝ «Մի բանի վրա միայն առանձնապես շեշտում եմ և խնդրում եմ ուշադրության առնել՝ Դարալագյազ-Զանգեզուր-Երևան գծի բացումը շատ է կենսական և անհետաձգելի, ինչպես նաև մարտական օժանդակություն հասցնելը: Ամեն գնով պետք է կապվեք մեզ հետ, ճանապարհը ապահովեք»: Համաձայն այդ գրության ես կարգադրում եմ Արևմտյան ճակատի պետ Յապոնին, որի մոտ էր այն ժամանակ ընկեր Ռուբենը (Տեր-Մինասյան), ինչ գնով ուզում է լինի, առաջ շարժվել և միանալ Ղամարլուի և Չիմանքենդի մեր զորամասի հետ, հաջողվում է միայն գրավել Զանախչին և այդպիսով ապահովել նահանջի ճանապարհը, իսկ իմ մյուս կարգադրության կատարումը օր ըստ օրի ուշացնում են, մինչև որ ապրիլի 2-ին Երևանի ապստամբ զորամասերը, քաղաքական գործիչները, ինտելիգենցիան՝ թվով 8-10.000 հոգի հնարավորություն չունենալով Երևանը պաշտպանել՝ անցան մեր զորքով ապահովված գծով՝ դեպի Դարալագյազ: Կրկին անգամ վտանգվում է Լեռնա-հայաստանի Արևմտյան ճակատը, կրկին անգամ նա իրեն շրջապատված է զգում բոլոր կողմերից: Ահա այն քաղաքական վիճակը, որի մեջ գտնվում էր Լեռնա-հայաստան ապրիլի 15-ից սկսած:

Այսքանը բավական համարելով մեր երկրի շուրջը ստեղծված քաղաքական դրությունը պատկերացնելու, այժմ ես կանցնեմ այդ երկրի ժողովրդի հոգեբանական կողմը հանդես բերելու, որի վրա

ամենասոսկալի և մահու չափ ազդեցություն ունեցավ Երևանի գաղթը իր տխուր հետևանքներով:

Հայաստանի Հանրապետության զինվորների և պետական գործիչների գաղթն, և ոչ նահանջը, երբ զինվորները սարսափի ու տեռորի ենթարկված, կանգ չառան մինչև իսկ Դարալագյազում՝ մեր զորամասերի հետ պաշտպանելու սահմանները, երբ կարծեք, ամեն մեկը իր համար գլուխը վերցրած առաջ էր փախչում՝ առանց հետ նայելու, որ հեղեղի պես ողողել էր Դարալագյազի և Սիսիանի ճանապարհին ընկած բոլոր գյուղերը, իր հերթին կատարյալ լքման և հոգեկան քայքայման է ենթարկում մեր թվով փոքրիկ զորամասերը և բնազդորեն ստիպում նրան ևս հետ քաշվելու իր սահմանները: Ահա թե ի՞նչ պատճառներից և ո՞ւմ ազդեցության տակ առաջին անգամ մենք թողեցինք Դարալագյազը և ամրացանք միայն Գնդևազում: Ինձ վստահած ժողովրդական վաշտերի՝ առանց կռվի թշնամուն տեղի տալը խիստ վշտացնում և առիթ է տալիս ինձ ապրիլի 16-ին հետևյալ հեռախոսագիրն ուղղելու Արևմտյան ճակատի պետ Յապոնին. «Այդ ի՞նչ եք անում, մինչև ե՞րբ պետք է շարունակվի ձեր նահանջը, նստել և թշնամուն սպասել՝ սխալ, կորստաբեր տակտիկա է: Անմիջապես անցեք հարձակողականի: Աշխատեք նախաձեռնությունը խլել թշնամուց և միշտ լինել ակտիվ: Այդ առթիվ խոսեք Արարարտյան զորամասերի պետերի հետ և իմացեք, որ *անվերջ նահանջներով դուք վտանգում եք նաև Լեռնա-հայաստանի դրությունը*»: Բայց բարոյական հարվածը արդեն հասցված էր, զորամասերի մեջ արդեն խուճապային տրամադրություն էր տիրում: Այդ դրությունն ինչպես ինձ, նմանապես և Ձեզ համար պիտի շատ պարզ լինի, որովհետև երբ 5000-ից ավելի զինվորականությունը տարերային շարժումով Սիսիան է անցնում, մի քանի հարյուր լեռնահայաստանցին չէր կարող Դարալագյազի բոլոր դռները պաշտպանել: Չափազանց ճիշտ ըմբռնելով ինձ հանձնված երկրի, ժողովրդի և զինվորների հոգեբանությունը, ես դեռ ապրիլի 24-ին թիվ 297 գրությունն ուղղելով Յապոնին և Կուռոյին հրահանգում էի. «Երևանից մինչև Գենվազ տեղի ունեցած նահանջները եղել են խուճապային, անկազմակերպ և բարոյալքող: Նկատի ունեցեք, որ այսուհետև այս երկրի ամեն մի թիզ հողը պիտի պաշտպանենք ամենակատաղի կերպով, եթե անգամ փամփուշտներ չլինեն, պետք է կռվել ատամներով»: Չնայած իմ այդ դրությանը և մի քանի անգամ ռազմաճակատն այցելելուն՝ ոգի ու եռանդ ներշնչելու ժողովրդին ու զինվորությանը, դրությունը մի նշանախեց անգամ չի փոխվում, որովհետև ոչ թե միայն Երևանից եկած զինվորականությունն էր հուսալքվել, թուլացել, անմարտունակ դարձել, այլև նրանց սպաներն ու գործիչները անգամ, համարյա քիչ բացառությամբ, նույն հոգեկան ապրումներն ունեին, նույն պարտվողական վիճակի մեջ էին, էլ ո՞վ պիտի նրանց առաջնոր-

դեր դեպի հաղթություն: Երևանի շրջանների ապստամբական ծգծգվող կռիվներն արդեն հոգնեցրել միանգամայն հուսազուրկ էին դարձրել այդ զորամասերը, որոնց մասին վկայում է Ելենովկայի ճակատի կռիվներին ականատես ընկեր Համո Օհանջանյանը, որը դեռ մ։սրտի 10-ին Ախտայից գրում էր ինձ. «Մեծ հույսեր ունեմ, որ Ձեր գալուստը պիտի ոգևորի և քաջություն ներշնչի այդտեղի և այստեղի ուժերին, որոնք պիտի խոստովանեմ, ինձ բավական վհատեցրել են իրենց խուճապային տրամադրությամբ: Ամոթ մեզ, երեք անգամ հարձակում գործեցինք Ելենովկայի վրա և չկարողացանք վերցնել: Վաղը չորրորդ անգամն ենք հարձակվում»: Ահա մի բնորոշ գիծ երևանյան մեր զորամասերի մարտունակության և նրանց հրամանատարության: Ես կարող էի բազմաթիվ փաստեր բերել հենց նույնիսկ Երևանից ժամանած գործիչների ու սպաների ինձ գրած նամակներից, ցույց տալու, թե հոգեպես ու բարոյապես որքան լքված, որքան ընկճված էր Երևանի զորամասը և նրա սպայությունը, և թե ինչպիսի բացասական ազդեցություն էր թողնում նրանց այդ տրամադրությունը Լեռնա-հայաստանի զինվորության վրա, բայց որովհետև նրանց այդ վիճակը հանրածանոթ է և չի կարելի գտնել գործին մոտ մի անհատ անգամ, որը բացասեր այդ հանգամանքը, ուստի ես կբավականանամ միմիայն փոխվարչապետ Արշակ Հովհաննիսյանի և Ներքին գործոց նախարար Ս. Մելիք-Յոլչյանի գրություններից մի քանի փաստեր բերելով: Փոխվարչապետն իր սույն թվի մայիսի 11-ին գրությամբ, հանուն Ս. Մելիք-Յոլչյանի ի միջ այլոց իր հեղինակավոր կարծիքն է հայտնում իմ օգնական նշանակված Կուռոյի մասին, որին հանձնված էր ամբողջ Արևմտյան ճակատը. «Երկրորդը Դարալագյազի օպերացիայի հարցն է: Կուռոյի հետ երկար, շատ երկար և կտրուկ ու պարզ խոսեցի այդ մասին: Նա դժգոհ է և՛ Փրկության կոմիտեից, և մեր մեծ ընկերներից, և՛ քեզանից, և՛ ձեր կառավարությունից, և՛ Նժդեհից, և՛ բոլորից, որ իրեն չեն գնահատել: Իմ կատեգորիկ հարցին՝ ի՞նչ է քո ուզածդ, նա պատասխանեց. *այդպիսի պայմաններում չեմ կարող, չեմ ուզում աշխատել*: Ես նրան հայտնեցի, որ մեր կյանքի, մեր կառավարության և ընկերների պայմաններն այդ են և ես քեզ համար չեմ կարող ստեղծել այնպիսի պայմաններ, որ գոհ լինես. բոլորս դժգոհ ենք, բայց ժողովրդին թողնել չենք կարող: Նա պատասխանեց, որ.- *ես կուսակցական մարդ չեմ, ես էլ ինձ համար մի մարդ եմ և այլն*: Իմ վերջին խոսքը եղավ, որ ինչպես երևում է՝ չես ուզում աշխատել: Նա պատասխանեց.- *այո՛, չեմ ուզում աշխատել և չպետք է աշխատեմ, խնդրում եմ ինձ ազատել*: Այս հայտնելով, քեզ մնում է առաջինը՝ Նժդեհին հայտնես, որ իմ կարծիքով անպայման պիտի ազատել այդ մարդուն պաշտոնից, երկրորդ՝ դրա համար թող Նժդեհը կանչի նրան զեկուցման իր մոտ և ազատի իր պաշտոնից: Իմ վերջնական եզրակացությունն է Կուռոյին բոլորովին ազատել առհասարակ բոլոր *պաշտոններից* և հայտնել՝ ուր որ ուզում է, կարող է գնալ, որ այդ մարդը հասկանա իրեն էլ, ուրիշներին էլ: Այս բոլորը որքան շուտ կատարվի, այնքան լավ: Զորքի տրամադրությունը բարձր է, նա ուզում է կռվել, բայց ինչպես ժողովուրդն է ասում՝ կռվեցնող չկա: Ես այս խնդրի առթիվ երկար չեմ գրում՝ Կուռոն ինքը մի շարք պատճառաբանություններով չի կատարել Նժդեհի հրամանը և այդ մասին, ինչպես ինքը հայտնեց, պատրաստ է բացատրություններ տալու Նժդեհին»:

Այս երկտողը որակումն է Երևանից եկած հրամանատարության, երբ Կուռոն ինքը իմ հրամանը չի կատարում և առհասարակ հրաժարվում է աշխատելուց, ինչ՞ կարող է լինել նրա խնամքին ենթակա սպայությունը, հետևապես ո՞ւմ առաջնորդությամբ զորքը կռվի պիտի ելներ, ո՞վ պիտի նրան ոգի և եռանդ ներշնչեր, երբ ամբողջ ճակատի հրամանատարը ինքը չի ուզում աշխատել այն ժողովրդի հետ միասին, որի մոտ գաղթելով՝ նա կարողացել էր իր գլուխը փրկել: Ներքին գործոց նախարար Ս. Մելիք-Յոլչյանը մայիսի 12-ին իր ինձ ուղղած նամակի մեջ նույն խնդրի առթիվ գրում է. «Դարալագյազի հարցը և այնտեղի մեր ճակատի պաշտպանության խնդիրը շատ խախուտ հիմքերի վար է դրված: Կուռոն միանգամայն լքված է և նա չի կարողանում գործ անել: Նրան կամ պետք է հեռացնել կամ փոխել ուրիշ ճակատ, կամ արձակուրդ տալ: Ես բացարձակապես կասկածում եմ, որ մի որևէ դեպքի ժամանակ նա կարող լինի պաշտպանել այն ճակատը, թեկուզ՝ այնտեղ կան ավելի, քան պետք են ուժեր»: Ես ինքս ուրախությամբ և Լեռնա-հայաստանի բնակչությանն ընդհանրապես բարի ճանապարհ կմաղթենք այդպիսի սպայությանն ու զորամասերին դեպի Պարսկաստան, եթե Փրկության կոմիտեի 1921թ. ապրիլի 21-ի Տաթևի որոշումը չլիներ, որի մասին ընկեր Վրացյանը թիվ 14 թղթով գրում է ինձ. «Որոշվեց Հայաստանի բոլոր ռազմական ուժերը և գույքերը հանձնել Լեռնա-հայաստանի կառավարությանը: Այդպիսով, ուրեմն, մեր սպարապետն էլ, ամբողջ հրանանատարությունն էլ ենթարկվում է Սյունյաց սպարապետությանը: Կարծեմ, լավագույնը կլինի նշանակել Կուռոյին քեզ օգնական և Արևմտյան ճակատի հրամանատար»: Իբրև կուսակցական ընկեր ես ենթարկվում եմ այդ որոշմանը, մտածելով, թե Երևանից եկած զինվորությունը հանգստանալուց և ապաքինվելուց հետո գոնե քիչ ու շատ ընդունակ կլինի նույնիսկ իր շահի տեսակետից այս կամ այն ռազմական խնդիրը կատարել: Բայց ի՞նչ դրություն է ստեղծվում այդ ձևական որոշումը կայացնելուց հետո: Սպաներ, խմբապետներ, զինվորներ և երիտասարդ մարդիկ ու պետական գործիչներ՝ առանց ուշք դարձնելու այս կամ այն կարգադրության շտապում, վազում են դեպի Արաքսի ափը, օր առաջ իրենց գլուխը փրկելու և անցնելով Ղափանի և Արևիքի շրջաններով՝ նույն խուճապը, նույն հուսալքումն են տարածում

գյուղացիության լայն շրջաններում, որի մասին ընկեր Վրացյանն ապրիլի 26-ին Մեղրիից գրում է ինձ. «Ամբողջ ճանապարհին լավ տրամադրություն տեսանք, բայց գաղթականության միջի երիտասարդները լավ չեն ազդում, հարկավոր է երիտասարդներին առայժմս թույլ չտալ անցնելու»:

Իսկ թե այդ ժամանակ գաղթը ինչ տպավորություն էր թողել Լեռնա-հայաստանի ժողովրդի և զինված ուժերի վրա, ես կբավականանամ բերելով այստեղ ժողովրդական վաշտապետների՝ Ատրպատականի առաջնորդին (Ներսես Արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան), պատճենը՝ Հ.Յ.Դ. Ատրպատականի կենտրոնական կոմիտեին, Հ.Յ.Դ. լիազորներ՝ Համո Օհանջանյանին և ընկերներին, և «Այգ»-ի խմբագրությանն ուղղած նամակը. «Երևանն ընկնելուց հետո Հայաստանի ամբողջ ինտելիգենցիան և զինված ուժերը անցան Լեռնա-հայաստան: Մեր և Հայաստանի Հանրապետության կառավարության համաձայնությամբ այդ ամբողջ ինտելիգենցիան ուղարկվեց Պարսկաստան, որտեղ նա պիտի հնարավորություն ունենար կազդուրվելու, հանգստանալու, որպեսզի Հայաստանը վերագրավելուց հետո կարողանա շինարարական աշխատանքի լծվել, իսկ Հայաստանից եկած ամբողջ զինական ուժը պիտի մնար Լեռնա-հայաստանում, որտեղ մեզ հետ միասին պիտի պայքարեր ընդհանուր թշնամու դեմ, պաշտպաներ իր հայրենիքն և ապա՝ անցնեինք բուն Հայաստան:

Սակայն, առանց թույլտվության՝ զանազան խմբապետներ իրենց զինվորներով անցնում են Արաքսի ափը և անկարգություններ են անում:

Նրանք լքում են Լեռնահայաստանը ճիշտ այնպես, ինչպես որ լքեցին Հայաստանը: Ուստի և նրանք միայն անարգանքի են արժանի և պետք է, որ ստանան իրենց վարմունքի համար արդարացի հատուցում:

Լիահույս ենք, որ հնարավորին չափ լայն աջակցություն կտրվի Հայաստանից եկած ինտելիգենցիային, որն ապագայում մեծ աշխատանք ունի կատարելու Հայաստանում: Միաժամանակ, խնդրում ենք ամենաբացասական վերաբերմունք ցույց տալ բոլոր այն զանազան խմբապետներին, սպաներին և նման անձնավորություններին, որոնք լքել են Լեռնահայաստանը» (10 ստորագրություն):

Ինտելիգենտ գաղթականության ապահովության խնդիրն եղել է միշտ իմ մտահոգության միակ առարկան՝ նրանց դեռևս Դարալագյազ ոտք դրնելու օրից սկսած, որի համար էլ ապրիլի 17-ին հեռախոսագիր ուղղելով Գենվազի հրամանատարությանը, զինվորներին, գործադիր մարմիններին և ժողովրդին, գրել եմ. «Երևանի շուրջը տեղի ունեցած կռիվների պատճառով կառավարությունը քաղաքից դուրս է բերել անզեն և կռվի անընդունակ հասարակության մի մասը: Դուրս

եկածների մեջ են հայ ինտելիգենցիայի 90%-ը, հարյուրներով ուսուցիչներ, ինժեներներ, բժիշկներ, տեխնիկներ, փաստաբաններ, ուսանողներ, քաղաքական գործիչներ և այլն: Ամիսներ առաջ հերոսական Գենվազը փրկեց հայ ցեղի ու պատմության պրիստիժը, այսօր նա պետք է փրկի հայ ժողովրդի հոգին, նրա սիրտը և ուղեղը՝ նրա ինտելիգենցիան: Այդ պատմական և վեհ խնդիրը՝ ինտելիգենցիան սովից և թշնամու սրից փրկելու սրբազան գործը, Ձեզ է տրվում»:

Միաժամանակ, ես պաշտոնական թղթեր եմ գրել Ատրպատականի փոխարքային, Ղարադաղի կառավարիչ Ամիր Արշադին, օտարազգի հյուպատոսներին՝ թույլ տալու հայ ինտելիգենցիային Պարսկաստանի հողն անցնելու և նրանց հովանավորելու: Ինձ համար անհասկանալի է, որ եթե ես իր ժամանակին բարեկամական կապեր չհաստատեի և պահպանեի Պարսից իշխանության հետ՝ ո՞ւր պիտի պատսպարվեր Երևանից եկած գաղթականությունը, որոնցից շատ շատերը շահագործելով իմ անունն և իմ տված վկայականները, իրենց կյանքն ապահովեցին, ապա՝ ապերախտի նման նիզակներ սկսեցին ծոծեցնել իմ դեմ, մոռացության տալով մի րոպե, որ համենայն դեպս մի որոշ ծառայություն մատուցել եմ նրան՝ իր կյանքի ամենակրիտիկական, ամենածանր րոպեին:

Տաճկահայ զինվորությունը, որ Հայաստանի Հանրապետության ամենառազմունակ զորամասն էր կազմում, չկամեցավ Դարալագյազի ճակատում մնալ, նա էլ էր ձգտում դեպի Արաքս, ուստի ակամայից որոշվում է այդ զորամասը ամբողջովին փոխադրվել Գողթան, թե այս շրջանն ապահովելու զանազան անակնկալներից և թե ապագա գործողության ժամանակ գուցե որևէ աջակցություն կարողանան ցույց տալ: Այդ զորամասը, որ թվով մոտ 2500 հոգուց էր բաղկացած՝ Սիսիանի, Զանգեզուրի, Ղափանի և Արևիքի հայկական գյուղերով ճանապարհվում է իբրև թե դեպի Գողթան և ամենուրեք, ուր գիշերում էր՝ վհատություն, լքում և հուսաբեկություն էր առաջ բերում, թե իր խուճապային անկազմակերպ արշավով և թե վարվեցողությամբ: Ճիշտ է, տաճկահայ զինվորությունը կիսաքաղց էր, բայց չէ՞ որ նույն և ավելի վատթար վիճակումն էր նաև Լեռնա-հայաստանի զինվորը, որը պետական պահեստներից չէր հաց ստանում, այլ՝ կամավոր նվեր բերված հացի փշրանքներից, և ոչ թե հինգ օր, տաս օր, այլ՝ ամբողջ ամիսներ շարունակ: Տաճկահայ զինվորի այդ վարմունքը պետք է քայքայում առաջ բերեր գյուղացիության լայն խավերում՝ սկսած Դարալագյազից մինչև Մեղրի, որը և տեղի ունեցավ: Այդ զորամասն այնքան ահաբեկված էր, դիստիպլինան նրա շարքերում այնքան խախտված էր, որ չէր կամենում նույնիսկ իր հրամանատարի կարգադրությունը կատարել:

«Խորապես ցավում եմ, որ հնարավոր չեղավ մեզ իրագործելու Ձեր հրամանը՝ Ղափուջուղի վրայով դեպի Գողթան: Մոտ 1000 հոգով

մեկնեցինք Քաջարան, որտեղից պիտի ճամբա ելնեինք, դժբախտաբար զինվորությունը լեռան առջև, մեկ կողմից անձամբ լսելով տեղացի ազգաբնակչության լեռան և անցքի մասին տված դժվարալուր տեղեկությունները, մյուս կողմից՝ պատճառաբանելով իր հոգնածությունը, մերկ, բոկոտն ու քաղցած վիճակը՝ մերժեց այդ ուղղությամբ շարժվել՝ բանավոր և գրավոր, որոնց օրինակներն և պատճենները կմնան այժմ մեր տրամադրության տակ»: Գրում է ինձ նրանց հրամանատար Սմբատը մայիսի 3-ին: Այդ զինվորությունը ցանկանում է բոլորից առաջ անցնել Պարսկաստան, միայն թե չմնա Հայաստան կոչված երկրի որևէ մասում, միայն թե՝ չմասնակցել որևէ կռվում: Ահա թե ճանապարհից ինչ է գրում ինձ նրանց հրամանատարը՝ Սմբատը մայիսի 3-ին. «Բայց հիմա կարող եմ ձեզ հայտնել, որ շնորհիվ 20 օրվա անցնող կյանքին այդ զինական ուժը դարձել է մի անընդունակ մասսա, որի վրա մեծ հույսեր չի կարելի դնել: Բոլորը գրավոր կերպով մերժեցին իմ՝ գլխավոր հրամանատարի հրամաններ կատարելը, որով այսօր նրանց բոլորին դարձնում եմ Ձեր կողմը»: Նրանք չեն վերադառնում ինձ մոտ, զենքերը չեն հանձնում և ինքնագլուխ անցնում են Արաքսը: Տաճկահայ զինվորության այդ արարքն անմիջապես արձագանք է գտնում Խորհրդային Հայաստանում, որն և չի վարանում շահագործելու թերթերի մեջ, մինչև անգամ՝ առանձին հիշատակություն է արժանանում այդ դեպքն և ծառայում ի վնաս Լեռնա-հայաստանի ինքնապաշտպանության գործին(տես խորհրդային Հայաստան թերթի մայիս NN-ը): Եվ այս բոլորը կատարվում է ժողովրդի աչքի առաջ: Մի՞թե այդպիսի զորամասը կարող է որևէ երկրի պաշտպանության նեցուկը լինել, մի՞թե նա մինչև իսկ իր ներկայությամբ, իր պարտվողական հոգեբանությամբ չի թուլացնի, չի ընկճի կանոնավոր դիստիպլինայի ենթարկված զորամասն անգամ:

Գնդևազում և Բազարչայում զետեղված մոտ 3000 զինվորությունը հեռու էր մարտունակ լինելուց: Ժամանակի ընթացքում նկատելի դարձավ, որ նա էլ է հոգնած և օր առաջ կամենում է՝ ինչ ձևով ուզում է լինի, անցնել Երևանի շրջանը: Ինձ համար ևս շատ պարզ էր, որ այդ զորամասը Ղամարլուի և Ախտայի շրջաններում մոտ ամիս ու կես կռվել էր բոլշևիկների դեմ, անցել էր Խոսրովի լեռնանցքով, ջարդված ու քայքայված էր: Բայց, ինձ համար միանգամայն անսպասելի էր, թե ինչպես այդ զինվորությունը ապահով և տաք անկյուն գտնելով Լեռնահայաստանում, երկու ամսից ավելի հանգստանալով և կազդուրվելով այնտեղ, իր ուժերը հավաքելով՝ չկարողացավ, կամ ճիշտ կլինի ասել՝ չկամեցավ ամենափոքր չափով անգամ աջակցություն ցույց տալ, կամ գոնե չաշխատեց իր պարտվողական բծավոր ախտով չվարակել նաև Լեռնա-հայաստանի զինվորությունը: Այդ զինվորության, ինչպես նաև նրա սպայության համար՝ իրենց առավել հիշատակության արժանի

ընկերներ Խնկոյի և Մեսրոպի, իրենց զորամասերով մինչև վերջին րոպեն մնացին երկրում և ամենայն սրբությամբ կատարեցին իրենց պարտականությունները, մինչդեռ՝ աչքի ընկնող մյուս խմբապետներն առաջին գաղթականության հետ անցան Պարսկաստան: Չկար հայրենիքի գաղափար, այլ կար մի ինչ որ բնազդորեն նրա մեջ առաջ եկած ձգտում՝ դեպի տուն, դեպի մի խաղաղ անկյուն: Դա նույնն էր, ինչ-որ 1918թ. ռուսական պարտվողական հոսանքը առաջ բերեց բոլոր ռազմաճակատներում և պատճառ դարձավ հարյուր հազարավոր զորքերին՝ խուճապի ենթարկված դեպի տուն փախչել, դա նույն զորամասերից էր, որ Երևանից դեպի Ղամարլուի կամ Ախտայի ճակատը գնալուց հալվում չքանում էին և հազիվ հազ մի երրորդ մասն էր տեղ հասնում, որոնք հարյուրներով թշնամու կողմն էին անցնում, նույն անպատվաբեր արարքը կրկնվում էր նաև այստեղ՝ նախքան Դարալագյազի օպերացիան սկսելը Նոր Բայազետիամբողջ վաշտը և Կոտայքի կիսավաշտը Գնդևազից անցնում է թշնամու կողմը: Լեռնահայաստանի զինվորությունը իր վարած բոլոր կռիվների ընթացքում չի հիշում այդպիսի դավաճանական արարք և մինչև վերջին րոպեն էլ նա հավատարիմ մնաց հայրենասեր և ազնիվ զինվորի սուրբ պարտականությանը: Երևանի զինվորության, մանավանդ՝ նրա սպայության, հոգեկան այդ ապրումները բնական էին՝ Լեռնահայաստանը չորս կողմից շրջապատված էր, ամեն ճակատից էլ նա պիտի կռվեր, ո՞ր զինվորականն իրեն թույլ կտար, որը ոչ մի կերպ կապված չէր այդ երկրի ու ժողովրդի հետ, մնալ այդպիսի օղակի մեջ, որտեղից ոչ մի փրկություն չկար, բացի պարտվողական գործողությունից, որը կարող է արագացնել այդ սոսկալի հանգույցի լուծումը և նրանք անշեղ ընթացան իրենց այդ ոլորապտույտ ուղիով:

Բոլշևիկների հետ մի ամբողջ տարուց ավելի գործ ունենալուց հետո՝ պետք է մենք փոքր ի շատե ծանոթ լինեինք նրանց վարժ քաղաքականությանն և տակտիկային, պետք է բոլորիս համար պարզ լիներ, որ նրանք ամեն տեղ, ոչ թե զենքի ուժով են հաղթանակներ տանում, այլ՝ պրոպագանդայով, խորամանկ քաղաքականությամբ և լքում առաջ բերելով հակառակորդի զորամասերի մեջ: Գաղթականությունը Սիսիանի և Դարալագյազի վերջին երկու գյուղերն անցնելուց հետո, նրանց հետևող բոլշևիկ զորամասերն ու գործիչները, մտնելով Դարալագյազ, անմիջական թռուցիկներ են թողնում, դեկրետ հրատարակում, որով ներում են շնորհում երևանյան ապստամբներին և նրանց խրախուսում վերադառնալ իրենց տեղերը՝ խոստանալով ոչ ոքի ձեռք չտալ, հայտնելով նույնիսկ, որ նախկին բոլշևիկ գործիչներից շատ շատերը հեռացված են Երևանից և այլն և այլն: Այդ թռուցիկներն ընկնում են ռազմաճակատի մեր զինվորների ձեռքը, ուժեղ պրոպագանդա են մղում նրանց մեջ այդ ուղղությամբ, այնուհետև հասկանալի

է, թե ինչ հետևանք դա կարող էր ունենալ մի զորամասի վրա, որ առանց այդ թռուցիկների էլ միշտ ձգտում էր Երևան վերադառնալ: Բոլշևիկների այդ ուղղությամբ առաջ տարած պրոպագանդան այնքան ուժեղ էր և այնքան գրավիչ, որ մինչև անգամ դեպի Գորիս պաշտոնական գործով գնացող զինվորների միջոցով տարածվում է Լեռնահայաստանի բոլոր ծայրերը և հասկանալի հոգեկան բեկում առաջ բերում: Սկսվում է ուժեղ պրոպագանդա Արևմտյան մեր զորաճակատում:

Ոչ հրամանատարությունը, ոչ սպայությունն և ոչ մինչև իսկ կառավարության ներկայացուցիչները, որ այդ ճակատում էին գտնվում, ոչ մի միջոց ձեռք չէին առնում այդ այլանդակ գործողությանը վերջ տալու: Բայց այդ դեռ բոլորը չէ, մեր թշնամիների կողմից տեղի է ունենում մի նոր քաղաքական խաղ, մեր զինվորների ռազմական թափն իջեցնելու և նրանց իրենց կողմը գրավելու, որն և կատարելապես հաջողվում է: Բոլշևիկները մարդիկ են ուղարկում Թավրիզ և հորդորում գաղթականներին վերադառնալ, խոստանալով կատարյալ ազատություն տալ նրանց Երևանում ապրելու, այն հեռատեսությամբ, որ եթե այդ լուրը տարածվի նաև Լեռնա-հայաստանում, այն ժամանակ կատարյալ լքում առաջ կգա այնտեղի զորամասերի մեջ, որովհետև երևանցիք իմանալով, որ իրենց ընկերները վերադարձել են արդեն Երևան, և նրանց ոչ թե ոք ոչ ձեռք չի տալիս, այլ, մինչև իսկ պաշտոններ են առաջարկում, իրենք ևս ամեն կերպ կաշխատեն խուսափել բոլշևիկների հետ կռվելուց և կանցնեն նրանց կողմը, որպեսզի օր առաջ իրենց երկիրը վերադառնան: Երևանի գաղթականությունն ընդառաջ է գնում բոլշևիկների աջակցությանն և խմբերով Երևան ճանապարհվում: Նրանք մինչև իսկ չեն էլ սպասում, որ մեր սկսելիք զինվորական գործողությունները որոշ կետի հանգեն: Եվ ահա գալիս են Թավրիզից նամակներ Լեռնա-հայաստանի բոլոր շրջանները, որոնց մեջ մեր ընկեր գաղթականները գրում էին. «Հայ բոլշևիկների տակտիկան փոխվել է, նոր կոմիսարներն ավելի ազգային հողի վրա են կանգնած, ինչպես՝ Վրաստանում և Ադրբեջանում: Գաղթականներին մեծ հոգածությամբ նրանք տանում են Երևան, ոչ մի հալածանք և ձերբակալում չկա այնտեղ, բացի մի քանի անհատներից, որոնց անունները հայտնի են, մնացածները կարող են ազատ վերադառնալ և ծառայության մեջ մտնել»: Ի՞նչպիսի տպավորություն կարող են թողնել այդ բովանդակությամբ նամակները մի զորամասի վրա, որ հայրենիքի ազատության գաղափարը չունենալով՝ միմիայն բոլշևիկների հալածանքներից էր փախել Երևանի շրջանից: Չէ՞ որ, այժմ վերանում են նրա՝ երկիր վերադառնալու, երկյուղի բոլոր պատճառներն և նա իբրև ազատ քաղաքացի՝ կարող է առանց վախի գնալ, ուր որ ուզում է: Ո՞ւմ համար նա պիտի կռվի՝ Երևանը գրավելու համա՞ր: Առանց կռվի էլ՝ նրան թույլ են տալիս այնտեղ գնալու: Հայաստանի Հանրապետության

կառավարությա՞ն համար: Դրա մեծ մասը վաղուց է թողել իրեն և օր առաջ անցել Թավրիզ: Լեռնա-հայաստանի՞ համար: Բայց դա իր հայրենիքը չէ, և ինքը խորթ է այդ երկրին և ոչ մի բանով կապված չէ նրա հետ: Ահա թե ինչ հետևանքներ ունեցավ գաղթականների անժամանակ Երևան վերադառնալը:

Երևանյան զորամասի մի վաշտ ու կեսը թշնամու կողմն անցնելը, մնացածների մեջ տիրող հոգեկան այդ այլանդակությունը, Բազարչայի շրջանում նրա ձեռքով կատարած ալան-թալանը, ստիպում է Լեռնա-հայաստանի կառավարությանը մայիսի 21-ին թիվ 135 գրությունն ուղղել Հայաստանի Հանրապետության կառավարության նախագահ Վրացյանին, որին միայն հավատալով և մեր երկրի կառավարության գլխավոր ղեկը հանձնելով, պետք է իրազեկ դարձնեի բոլոր եղելություններին, որ նա համապատասխան միջոցներ ձեռք առներ և հայտներ. «Լեռնահայաստանի կառավարությունն և սպարապետությունն այսուհետև անհրաժեշտ է նկատում վճռապես հայտնելու Ձեզ հետևյալը:

Երևանի զորամասերը, որ Ձեր կառավարության կողմից դրվել էին մեր զորահրամանատարության տրամադրության տակ, իրենց ղեկավարներով միասին դարձել են մի գործիք քայքայման և դասալքության: Այն շրջաններում, ուր նրանք գտնվում են, տիրում է կազմակերպված թալանը և պրովակացիան, զորամասի մեջ բացարձակապես բացակայում է կարգապահությունն ու կռվի տրամադրությունը: Ընդհակառակը, օրեցօր տարածվում է դասալիքի հոգեբանությունը՝ շնորհիվ երևանյան հրամանատարության ընթացքին: Վերջինս, մինչև այսօր չի կատարել իմ քանիցս կրկնված հրամաններս, և այդ բոլորը այպես, թե այնպես կապվում է Ձեր կառավարության հետ: Այսուհետև հայտնում ենք Ձեզ, որ Ձեր նախարարությունը կամ պետք է գա իր զորքի մոտ և տեր լինի նրան ու աշխատի օգտագործել, կամ գրավոր կերպով պետք է հայտնի մեզ, թե նա հրաժարվում է այդ զորքի հետ որևէ կապ ունենալուց և չի հետաքրքրվում նրա ճակատագրով: Այս բոլորը տանում է դեպի Լեռնա-հայաստանի կործանումը, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Հայաստանի կառավարության և Երևանի զորամասերի հրամանատարության վրա: Սպասում եմ Ձեր շուտափույթ կարգադրությանը»: Նույն ժամանակ, թիվ 1037 գրությունն ուղղելով Հայաստանի կառավարության փոխվարչապետ պարոն Արշակ Հովհաննիսյանին, գրում էի. «Արևմտյան ճակատում տեղի ունեցող վերջին դեպքերն ինքնապատճառ չեն: Նրանք հարազատ ծնունդն են այն պարտվողական քաղաքականության և տակտիկայի, որոնցից դժվարանում են հրաժարվել երևանյան զորամասերի ղեկավարներն և կառավարության անդամներից շատերը: Օրեր առաջ՝ երևանյան կատաստրոֆայից հետո, միակ չարիքը համարվում էր

արևմտահայ զորամասը, սակայն այսօր ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ պակաս չարիք չեն և ուրիշները՝ շնորհիվ իրենց ղեկավարների:

Զինվորը, զորամասը միշտ լավ է, մարտունակ, հաղթական, եթե՝ այդպիսին է նրա հրամանատարությունը: Ես շատ բան չեմ պահանջել այդ զորամասերից, եթե Լեռնահայաստանի զորքերի և ժողովրդի կողմից ցույց տրված օժանդակության փոխարեն նրանք ամեն կերպ չաշխատեն թուլացնել մեր ճակատներն և քայքայել մեր թիկունքը: Ես բացի շնորհակալությունից՝ ոչինչ չէի ունենա հայտնելու այդ զորամասին, նրա հրամանատարությանը: Արևմտյան ճակատում կանգնած զորամասերը պետք է գիտենան, որ Լեռնահայաստանի ժողովուրդը 7000-ի չափ երևանյան գաղթականություն է կերակրում՝ ինքը քաղցած մնալով հանդերձ: Նույն զորամասը պետք է խորապես գիտակցի ու գնահատի Ղափանի, Գենվազի և այլ շրջանների ժողովրդական վաշտերի այդ ջերմ և գաղափարական վերաբերմունքը, որի շնորհիվ միայն սրից և սովից փրկվեց հայ մտավորականությունը: Թող գիտենան և այն, որ ժողովուրդն ու պատմությունն անեծքով պիտի խոսեն այն զորավարների և ղեկավարների մի մասի մասին, որ նամարդորեն կոխկրտելով Լեռնահայաստանի ժողովրդին՝ անցան Պարսկաստան, օտարներից հացի փշրանքներ մուրալու, իրենց գոյությունը քարշ տալու համար, իսկ մյուս մասը՝ սպառնում է արագացնել հայ ժողովրդի սև օրվա հայրենիքի՝ Լեռնահայաստանի անկումը: Շինել չես կարո՞ղ, գոնե մի քանդիր՝ ահա իմ պահանջը երևանյան զորամասերից և նրա ղեկավարներից: Ցանկության դեպքում՝ այդպես վարվել կարելի է: Այդ ուղղությամբ է, որ պիտի աշխատի Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Նախարարներից երեք հոգի ապրում են Հանքերում՝ առանց որևէ իրական օգնություն ցույց տալու գործին, իսկ կառավարության մյուս անդամները՝ նույն եղանակով շարունակում են իրենց գործունեությունը, որի շնորհիվ էլ ոչ մի նշանախեց չի փոխվում եղած դրությունից: Ես ստիպված եմ լինում ճակատից ճակատ թափառել, խոսել զինվորների և գյուղացիության հետ, նրանց մեջ վառ պահել անկախության ոգին: Մինչև իսկ կառավարության անդամները շատ անգամ գրում էին ինձ՝ այս կամ այն շրջանն անցնել և երևալ ժողովրդի աչքին, որ նա չհուսահատվի, չվարանի: Ես առանց դադարի Գորիսից Հանքերն էի անցնում, այնտեղից՝ Մեղրի, երկու օրից հետո՝ երևում էի Տաթև, Բազարչայ և այսպես՝ անընդհատ: Բայց ինչ է լինում այդքան ջանքերի հետևանքը: Ընկեր Վրացյանը մի երկու օրով միայն վերադառնում է Գորիս և էլի իսկույն՝ հետ գնում Թավրիզ:

Լեռնահայաստանի Արևմտյան ճակատում հացի միայն մի քանի օրվա պաշար էր մնացել, որից հետո երևանյան զորամասը կամ

պիտի փախչեր թշնամու կողմը, և կամ ամենալավ դեպքում՝ պիտի արշավելով ցրվեր Սիսիանի գյուղերն՝ իբրև քաղցած, բայց զինյալ ամբոխ, և ավերեր գյուղացու տնտեսությունը, ուրեմն պետք է մի ելք գտնեինք՝ գոնե նրանց հարցը մատակարարելու: Չունեինք նաև ռազմամթերք, մեր ծեռքի տակ եղածը հազիվ բավականացներ մի օրվա թեթև կռվի: Ուստի, որոշվում է գրավել Դարալագյազը և այնտեղի պարենով ապահովել մեր զորամասերը, խլել թշնամուց նրա ունեցած ռազմամթերքը և ամրանալ Դարալագյազի սահմաններում: Այդ մասին հրամանագրելով իմ օգնական Կուռոյին՝ տալիս եմ նրան մանրամասն հրահանգ, որից Ձեր ուշադրության առարկա եմ դարձնում հետևյալը. «Հրամայում եմ Ձեզ տրված մարտական խնդիրը՝ Վայոց - Ձորի վերագրավումը, իրագործել *ոչ ուշ՝ քան ամսույս 7-ին* (հունիսի): Ամեն մի հաջողություն օգտագործել ամենայն մասշտաբով, որի համար թշնամու ուժերի հետապնդումը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ վերջինս կգրկվի այս կամ այն կարևոր ռազմական կետի վրա ամրանալու և ապա՝ հակահարձակողականի անցնելու ամենաթույլ հնարավորությունից: *Կռիվները ղեկավարել անձամբ և բոլոր զորամասերի պետերից պահանջել՝ «մեռնել, բայց հաղթել»*:

Ինձ համար միանգամայն անհասկանալի պատճառներով Կուռոն իմ տված վճռական հրամանի իրագործումը հետաձգում է և քաշքշում մինչև հունիսի 15-ը, երբ Լեռնա-հայաստանի բոլոր մասերում կայծակի արագությամբ տարածվում է այն լուրը, թե գաղթական զինվորները Թավրիզից վերադառնում են Երևան, և ապա հունիսի 16-ին գրավելով Վայոց-Ձորն ու թշնամու այնտեղ գտնված ուժերի համարյա երեք քառորդը գերելով կամ ոչնչացնելով՝ հասնում է մինչև Ռինդ և Արփա գյուղերի շրջանը: Հարկավոր էր միայն գրավված վայրերի սահմաններն ամրացնել և դիմել ինքնապաշտպանության, իսկ եղած ուժերով՝ դա և՛ հնարավոր էր և՛ անհրաժեշտ, եթե միայն Կուռոն ինքն և իր շտաբը իրենց պարտականությունը կատարեին, ինչպես հրահանգված էր իմ կողմից, իսկ սպայությունը պարտազանցությամբ կտրված չմնար զինվորությունից և հեռու պահեր նրան թշնամու պրոպագանդայիցից: Բայց կատարվում է բոլորովին դրա հակառակը՝ Կուռոն առանց իմ գիտության և հակառակ իմ պարզ ու որոշ ցուցումների՝ «կռիվները ղեկավարել անձամբ», իր շտաբով իսկույն վերադարձնում է Բազարչայ, թե ինչո՞ւ, ոչ ոք չգիտի: Ձորքը լսում է դրա մասին և կասկածում է, թե վտանգ կա, որ շտաբը 50-60 վերստ հեռացել է իրենից, զորամասերի մեջ սկսվում է պրոպագանդա, որի մասին վկայում է հենց ինքը՝ Կուռոն իմ անունով ուղարկած հետևյալ հեռախոսագրով. «Արևմտյան ճակատի հրամանատարը Քեշիշքենդից հետ քաշվելու ժամանակ, երբ կարգադրում է Երևանի զինվորներին հետ նահանջել, նրանք չցանկացան հետ գալ, ինչպես պարզվեց, պրոպագանդայի *միջոցով*

երկու օր առաջ վճռված է եղել անցնել կարմիրների կողմը»: Ամբողջ մի զորամաս, մոտ 3000 հոգուց բաղկացած, օրեր առաջ վճռում է թշնամու կողմն անցնել, որոշում է մի դավաճանական քայլ անել, որն ամենասարսափելին է զինվորական դիստիպլինայի տեսակետից, և դժբախտաբար, ոչ հրամանատարությունն է իրազեկ այդ տրամադրությանն և ոչ էլ՝ նրա սպայությունը: Իսկ եթե գիտեին այդ մասին և լռում էին կամ միջոցներ չէին ձեռք առնում դրա առաջն առնելու՝ նշանակում է իրենք ևս մասնակից էին այդ մեծ ոճրին: Բայց ո՞րտեղից առաջացավ այդ բացարձակ պրոպագանդան, որ կարողացավ ամենակարճ ժամանակամիջոցում հեղաշրջել այդ ահագին զինվորությունը: Գիտեինք, որ նա հուսալքված, քայքայված է, բայց որ նա ընդունակ է նաև դավաճանության՝ ենթադրել դժվար էր: Այդ պրոպագանդան կատարվել է երևանյան զորամասերի շարքերում՝ թե թշնամու ձեռքով և թե արևմտյան մեր բարձր հրամանատարության անփութության շնորհիվ: Հունիսի 15-17-ին Դարալագյազը գրավելու ժամանակ վերցրած գերիներից մոտ 400 հոգու արևմտյան ճակատի հրամանատար Կուռոն փոխ-վարչապետ Ա. Հովհաննիսյանի և այլ պատասխանատու գործիչների ներկայությամբ թույլ է տալիս իր զենքով մտնելու մեր զորաշարքերը և կռվել մեր թշնամու դեմ, որից նա մի քանի օր առաջ էր բաժանվել: Ո՞վ և որտե՞ղ է տեսնված, որ քաղաքացիական կռվի ժամանակ թշնամուց գերի վերցրած զորամասերն օգտագործելու նպատակով իսկույն ևեթ մտցնի, առանց այն էլ հոգով վարակված իր զորաշարքերի մեջ: Մի՞թե այդ ճակատում մենք այնքան քիչ զինվոր ունեինք, որ կարիք կար գերի վերցրած զինվորների օգնության դիմել: Մի՞թե այդ անհեռատես և մինչև իսկ ամենահասարակ զինվորականին ոչ հատուկ քայլը չէ՞, որ պատճառ դարձավ Լեռնա-հայաստանի համար անելանելի վիճակ ստեղծելուն: Կարելի է պարզապես ասել, որ Արևմտյան ճակատի հրամանատարությունը իր այդ քայլով, գիտակցաբար, թե անգիտակցաբար, պարտվողական ոգով առաջնորդվելով, միայն մի նպատակի էր ձգտում՝ արագացնել հանգույցի լուծումն ինչ կերպ ուզում է լինի, պարտվել, եթե հնար չէ հաղթել, միայն՝ շուտով վերջ տալ կռիվներին: Որ դրա հետևանքը պիտի լիներ պարտություն, դա կասկածից դուրս էր, որովհետև արևմտյան ճակատի հակա-հետախուզ. գլխ. Մխիթարյանը, իր պաշտոնական գրությամբ՝ դեռ այդ կատաստրոֆից մի երկու օր առաջ, հունիսի 19-ին գրում է Լեռնա-հայաստանի հակահետախուզ. պետ Նիկողայոսյանին՝ ինձ հայտնելու, թե. «Գերիներից 400 հոգու սպարապետի օգնականն առանց զտման և ընտրության վերցրել և մտցրել է մեր զորաշարքերը. դրանք քայքայիչ ազդեցություն պիտի ունենան մերոնց վրա: Մի առ ժամանակ հետո, մեր բոլոր զորամասերը կարող են լինել հեղափոխված: Հայտնեցեք այդ մասին սպարապետին»: Բայց մինչ այդ զեկուցման ստանալը, և

համապատասխան կարգադրություն անելը կատաստրոֆան տեղի է ունենում: Թշնամու կողմից Դարալագյազի հարավային ճակատից փոքր ուժերով մի թեթև շարժումը բավական է լինում, որ երևանյան ամբողջ զորամասը, եզակի բացառությամբ (մեր կողմն են մնում միմիայն Մուկուչի և Խնկոյի հեծելազորի մարդիկ), թշնամու կողմն անցնի, ցանկության դեպքում նրանք շատ չնչին բացառությամբ, կարող էին հետ նահանջել Գենվազ-Ղուշչիի գիծը, որովհետև ռազմաճակատի կողմից մեծ վտանգ չէր սպառնում նրանց, Սելիմի շրջանից բոլորովին փորձ չէր եղել հարձակվելու մեզ վրա, հետևապես նահանջի ճանապարհը միշտ բաց էր, որի համար էլ այդ զորամասի հրամանատարը կարգադրում է հետ նահանջել, բայց Կուռոյի պաշտոնական հեռախոսագրից պարզվեց, որ այդ զորամասը «չկամեցավ հետ նահանջել և թշնամու կողմն անցավ »: Կատաստրոֆան կատարված է գիտակցաբար, որտեղ և պիտի որոնել Լեռնա-հայաստանի կործանման պատճառները: Մենք մի հարյուր հոգով հաճախ գործ ենք ունեցել բոլշևիկների 9-12000 զորամասերի և առանց դրսի որևէ օգնության կարողացել ենք հաղթել, որովհետև պարտվողական զորամաս չի եղել մեր մեջ, իսկ իսկ երևանյան զորամասը գործ է ունենում իրենից թվով մի քանի անգամ իրենից քիչ զորքի հետ և ավելի գերի է տալիս, քան թե թշնամին ինքը զինվորականության ամբողջ ճակատում: Հակառակ զինվորական ամենահասարակ տակտիկայի ծանոթության՝ Կուռոն մնացած զորամասով փոխանակ Գենվազի և Ղուշչիի բարձունքներում ամրանալու, որ ստրատեգիայի տեսակետից միակ պաշտպանելու գիծն էր, ինքն առաջուց իր շտաբով, Բազարչայ տեղափոխված լինելով՝ առիթ է տալիս Դարալագյազում մնացած զորքերին հետ նահանջելու նույնպես Բազարչայ, որի պատճառով միանգամից վտանգվում է Սիսիանը սպառնալից է դառնում նաև այդ շրջանի հյուսիսային կողմը Մինքենդի ուղղությամբ և ստեղծվում է մի այնպիսի վտանգավոր դրություն, որ կառավարությունը ստիպված է լինում հրահանգել պաշտպանելու Սիսիանի սահմանները:

Այդ բոլորն առիթ է տալիս ինձ հունիսի 27-ին ընկ. Ս.Վրացյանին հետևյալ գրությունն ուղղել. «Մինչև հոգուս խորքը խոցված եմ, վիրավորված, զորքերի երևանյան և հրամանատարության կատարած անլուր դավաճանությունից: Ես Լեոնիդասյան կիրճերի հրաշագործություններ չէի սպասում երևանյան զորքերից, որովհետև քաջ ծանոթ էի նրա հրամանատարների 90%-ի պարտվողական հոգեբանության հետ: Բայց չէի սպասում նաև, որ այդպես անաստվածորեն կապտակեին իմ հպարտությունը, առանց դանակի կմորթեին իմ հավատը: Սև լինի այն օրը, երբ այդ թունավորված զորամասերը հայտարարվեցին Դավիթ-բեկյան ժողովրդական զորքերի շարքերում: Երեք հազարի հասնող զորամասը Վայոց-Ձորի մի հաջողությունից հետո, բացառությամբ

Խնկոյի և Մուկուչի հեծյալների, մի մարդու պես թշնամու աննշան կոնտր-հարձակումից ահաբեկված՝ անցնում է կարմիրների կողմը: Կուռոն, որին հրամայված էր մնալ Վայոց Ձորում և արքուն հսկել ու սատարել, ամենակարճ ժամանակամիջոցում կազմակերպել ժողովրդական վաշտեր և ուժեղ ադմինիստրացիա,- չգիտեմ ի՞նչու ամբողջ շտաբով անցնում է Բազարչայ և Արշակ Հովհաննիսյանին վերջնագրի ձևով չորս օր ժամանակ տալիս՝ ընդունելու իր հրաժարականը: Արշակը չի ընդունում հրաժարականը, պատճառաբանելով, որ այդ առթիվ պետք է դիմել զինվորական նախարար-սպարապետին: Կուռոն մնում է Բազարչայում, իսկ Արշակը գալիս է Գորիս զեկուցելու իրերի դրության մասին: Ընդամենը մի օր անց՝ Կուռոն հաղորդագրում է ինձ, թե թշնամին գործողություններ է սկսել: Հրամայում եմ ամրանալ և ինքնապաշտպանվել: Երկրորդ օրը կատարվում է անլուր խայտառակությունը: Պատճառները մեկից-երկուսից ավելի են: Չգիտեմ, Կուռոն ինչո՞ւ, առանց իմ թույլատվության գերիներից մի քանի հարյուր հոգու զինում և խառնում է իր զորքերին, որոնք կռվի ժամանակ անցնում են թշնամու կողմը և իրենց հետ քաշում հազարավորներին: Ձորքն եղել է անղեկավար և անկոնտրոլ ու հեշտությամբ բարոյալքման է ենթարկվել: Այդ կատաստրոֆայից հետո, երևանյան հեծելախումբը ինքնագլուխ թողնում գալիս է Ղուշչիից և մերկացնում Գնդևազի աջ թևը: Սիսիանի զորամասը, թողնելով Խաչիկը, ամրանում է հարավային Դարալագյազում, մինչև որ Նախիջևանն ու Մինքենդը երկու կողմից սկսում իրենց հարձակումները Սիսիանի վրա և կատաստրոֆի չորրորդ օրը ստիպում կառավարությանը հրահանգելու սիսիանցիներին քաշվելու և ամրանալու Սիսիանի սահմաններում: Այժմ կռիվը Սիսիանի վրա է: Ժողովուրդը պաշտպանվում է հերոսաբար: Ձգացվում է եռագծանի փամփուշտների կարիքը, ամեն կերպ աշխատեք գոնե 100000 հատ հասցնել ամենակարճ ժամանակամիջոցում»:

Դարալագյազի կրած անհաջողության, երևանյան զորամասի թշնամու կողմն անցնելու, և շտաբի Բազարչայ տեղափոխվելու լուրը կայծակի արագությամբ տարածվում է Լեռնա-հայաստանի բոլոր կողմերը, գաղթականներից նրանք, որոնք պաշտոնով կամ անպաշտոն մնացել էին Լեռնա-հայաստանի զանազան գյուղերում, սկսում են շարան-շարան դարձյալ դեպի Մեղրի ու Պարսկաստան ճանապարհվել, այս վերջին գաղթը, այն էլ Լեռնա-հայաստանից, բնական իրարանցում է առաջ բերում ժողովրդի մեջ, որովհետև նա տեսնում է, որ վտանգված է նաև իր երկիրը, քանի որ իր մեջ դադար առած անձինք հապճեպով անցնում են դեպի Արաքսը: Առանց որևէ կարգադրության կամ մինչև իսկ լուրջ կռվի մի երկու օրից հետո շտաբը Բազարչայից անհասկանալի պատճառով տեղափոխվում է Ուզ՝ Սիսիանի հարավ արևելյան ծայրի վերջին գյուղը. պանիկան և բարոյալքումը ավելի ևս

ուժեղանում են և այս անգամ՝ առանց որևէ իրավունքի և թույլտվության, ոչ թե մասնավոր մարդիկ են հեռանում Լեռնահայաստանից, այլ պատասխանատու պաշտոն վարող սպաներ, Գորիսում զանազան նախարարությանց մեջ պաշտոն վարողներ: Որպեսզի լոկ խոսքեր չլինեն իմ ասածները և Ձեզ համար պարզ լինի, թե ինչպիսի պաշտոնյաներ են անժամանակ փախուստի ճանապարհ բռնել, ես կբերեմ մի քանի օրինակ. Կապիտան Սյուչյանը Ղափանից փախչում է դեպի Պարսկաստան և ճանապարհին ծերբակալվում, շտաբս-կապիտան Սարգիս Բեկյանը՝ Արաքսի ափի պահակի պետը, Մեղրիից ճանապարհվում է Պարսկաստան, երբ դեռ կռիվը Սիսիանումն էր, Կարճևանի ճակատապետ կապիտան Դիլանյանը, որ Ռուսաստանից իր գլուխն ազատելու համար պատսպարվել էր մեզ մոտ մերկացնում է իրեն հանձնած ճակատը և տմարդորեն փախչում Պարսկաստան:

Հայաստանի Հանրապետության ամբողջ հրետանու պետ կապիտան Խաչիկյանն իր բոլոր ռմբաձիգ զինվորներին թունավորելուց հետո Գորիսից ուղղակի անցնում է Պարսկաստան, դեռ այն ժամանակ, երբ կռիվը Սիսիանի սահմանում էր: Մեր միակ անթել հեռագրի պետը, կռիվը դեռ Դարաբասի շրջանում եղած ժամանակ՝ ինքը փախչում է Ղափանից: Գորիսի զինագործարանի կառավարիչ կապիտան Հարությունյանը, նախօրոք անցաթուղթ է ստանում գլխավոր շտաբից, որ եթե վտանգ սպառնա, շտաբի հետ հեռանա, բայց հենց անցաթուղթ ստացած օրը փախչում է Գորիսից Պարսկաստան: Դարալագյազից նահանջելուց հետո Կուռոն հրամայում է կորնետ Նավասարդյանին մնալ իր դիվիզիոնով Ղուշչի-Բիլագում. իսկ նա առանց որևէ ուշք դարձնելու իր անմիջական հրամանատարին անցնում է Բազարչայ և մերկացնում Գնդևազի աջ թևը: Դրանց հետևելով փախչում է նաև տելեֆոնիստը, պարոնը կառուցանելու համար ուղարկված տեխնիկը, էքսպեդիտորը, և այլն և այլն: Եվ պաշտոնեության արտաերկրային, տարերային գաղթը օրըստօրե շատանում էր, որովհետև փախչողներից ոչ ոք չէր պատժվում, չէր հետապնդվում: Եվ երբ իմ կարգադրությամբ Սիսիանը վերագրավելու համար Ղափանի զորամասն անցնում է թշնամու թիկունքն և գրավում Ախլաթյան գյուղը, նոր է նկատվում, որ Սիսիանի աջ թևից մեր զորքերը քաշվել են, թողել մինչև իսկ Ուչթափալարն և ամբողջ այդ շրջանն արդեն թշնամու ձեռքին է, որի պատճառով էլ նա հետ է գալիս դեպի Տաթև:

Մերոնք առանց որևէ լուրջ կռիվների թողնում են Սիսիանը հունիսի 28-29-ին, որի առթիվ Արշակ Հովհաննիսյանը հունիսի 29-ին հեռախոսագիր ուղղելով ինձ՝ իմիջիայլոց գրում է հետևյալ հակիրճ, բայց բնորոշ տողերը. «Ինչպես Ձեզ հայտնի է, մերոնք Սիսիանը թողել են, որով վտանգի է ենթարկվում բուն Զանգեզուրը, թշնամու ուժերը չնչին են և մեր պարտությունը՝ զուտ հոգեբանական»: Եվ այն ժամա-

նակ, երբ Սիսիանը վերոհիշյալ հանգամանից ստիպված տեղի է տալիս թշնամուն, Զանգեզուրի ամենավտանգավոր ճակատից՝ Խնձորեսկից հուլիսի 1-ին հեռախոսագրով դիմում են ինձ.« Սիսիանում կատարված վերջին դեպքերը մեզ՝ զինվորությանս վրա ոչ մի ազդեցություն չի թողել և նման բան չի կարող մեր կյանքի մեջ պատահել, ուստի Խնձորեսկի ամբողջ զինվորությունը իր շրջանով տալիս է իր քաջարի վստահությունը իր Սպարապետին և բոպե առ բոպե սպասում է նրա կարգադրությանը՝ ցույց տալու իրենց հավատարմությունը»: Եվ այն ժամանակ, երբ Սիսիանը վերոհիշյալ հանգամանքներից ստիպված տեղի էր տալիս թշնամուն, Զանգեզուրի ամենավտանգավոր ռազմաճակատից՝ Խնձորեսկից, հեռախոսագրով հուլիսի 1-ին դիմում են ինձ: Եվ հավատարիմ իր վճռականության՝ հուլիսի սկզբին, երբ թշնամին հարձակվում է միաժամանակ Խնձորեսկի, Կոռնիձորի, Խոզնավարի և Խանածախի վրա՝ նա հերոսաբար կռվում է, խլում է թշնամուց ահագին զոհեր և տեղի է տալիս միայն այն ժամանակ, երբ տեղեկություն է ստանում, թե թշնամին Սիսիանից առաջ անցնելով՝ մտել է Զանգեզուրի շրջանը և գրավել Ուչթափալարն, որը միայն ստիպում է նրան զենքը վայր դնել:

Եզրափակելով վերոհիշյալը, բոլորիդ համար պարզ պիտի լինի, որ երևանյան զորամասի դավաճանությամբ թշնամու կողմն անցնելը, պարտվողական հոգին, որ տիրապետում էր սպայության և զինվորության մեջ, Արևմտյան ռազմաճակատի հրամանատարության իր կոչման բարձրության վրա չգտնվելը, Բազարչայի շուրջը ստեղծված ամոթաբեր թալանն ու կողոպուտը, նոր գաղթականների դեպի Պարսկաստան անցնելը՝ առաջ բերին տեղացիների մեջ կատարյալ լքում, հոգեկան անկում, որի պատճառով էլ նա պետք է անմարտունակ դառնար և տեղի տար թշնամու փոքրաթիվ ուժերին, ինչպես և տեղի ունեցավ:

Դառնում եմ այժմ մի քանի խոսք ասելու նաև պետա-վարչական մարմնի մասին, որը կազմվեց Լեռնա-հայաստանում ինչ-ինչ տեսակետներ ի նկատի ունենալով, և որը չկարողանալով ժողովրդի սերն ու համակրանքը վայելել, մնաց իբրև մեռած մարմին, բայց և այնպես՝ քիչ չափով չվնասեց մեր ընդհանուր գործին:

Սույն թվի ապրիլի 27-ին Տաթևի համագումարն իր սպարապետին վստահելով՝ նրան է հանձնում կազմելու Լեռնա-հայաստանի կառավարությունը: Ես այն կարծիքին էի, որ Հայաստանից եկած Փրկության Կոմիտեն կամ նախկին նախարարական կազմը որոշ տեսակետով առաջնորդվելով՝ իրեն հեռու կպահի այս նոր երկրի վարչական ապարատից և կամ անհատական ընտրությամբ մի երկու հոգի միայն կտա լրացնելու Լեռնա-հայաստանի կառավարության կազմը: Այդ էր պահանջում թե ժողովրդի և թե հենց Երևանից եկած պետական

գործիչների շահը: Հոգեբան չպիտի լինի մարդ՝ հասկանալու, որ երբ մի երկիր քաղաքականապես և զենքի ուժով պարտվում ու ստիպված է լինում իր ժողովրդի մի մասով գաղթել մի այլ անկյուն, այդ երկրի պատասխանատու պետական գործիչները նոր երկրում այլևս չեն կարող օգտվել որևէ հեղինակությամբ, որովհետև ժողովուրդն ինքը, գուցե և առանց խորը քննությամբ, այդ պարտության սկզբնապատճառ համարում է նրա գործիչներին: Բայց Լեռնա-հայաստանում կատարվեց ընդհակառակը: Փրկության կոմիտեն կամ նախկին նախարարները՝ փոխանակ կազմակերպելու գաղթականներին, Պարսկաստան տեղափոխելու, նրանցից պետական գներով ձիեր ու զենքերը հետ ստանալու ամենափափուկ խնդիրները լուծելու, այդ բոլորը համարյա քիչ բացառությամբ, թողնում են մեզ վրա, որ առանց այդ էլ զբաղմունքով ծանրաբեռնված էինք, և իրենք կամ հեռանում էին Պարսկաստան կամ Լեռնա-հայաստանի այս կամ այն անկյունում խաղաղ կյանքի նվիրվում, և կամ նորից փորձ անում կառավարության մեջ մտնել, և դրա հետևանքը այն է լինում, որ Տաթևի համագումարում կազմված վարչական մարմնի յոթ նախարարներից միայն մեկն էր տեղացի, մնացածները՝ Երևանից էին եկել: Բացի զինվորական նախարարի պաշտոնից՝ իմ ընկերները ինձ են հանձնում նաև նախարարապետի պաշտոնը, այն պարզ հասկացողությամբ, որ ժողովուրդը երկար ժամանակ ինձ է միշտ վստահել իր բախտն ու իր երկիրը: Բայց նախարարական այդ կազմը երկար չի տևում և մի քանի օրից հետո արմատական փոփոխության է ենթարկվում: Ընկեր Ս.Վրացյանը Գորիս ժամանելով (մայիսի վերջին) նախարարական ժողով է գումարվում, ուր զանազան քաղաքական հանգամանքներ նկատի ունենալով որոշվում է. «Լեռնա-հայաստանը հայտարարել Հայաստանի Հանրապետություն, վարչապետի պաշտոնը հանձնել Ս.Վրացյանին և նախարարների թիվը հասցնել տասն և մեկի»: Որո՞նք էին այն հիմնական պատճառները, որոնք դրդեցին նախարարներին Լեռնահայաստանը Հայաստանի Հանրապետություն կոչել, երկու կառավարությունները մեքենայաբար միացնել և ներքին ու արտաքին մի շարք փոփոխություններ մտցնել: Այդ պատճառներից ամենագլխավորը արտաքին քաղաքական հանգամանքներն էին, հարկավոր էր ցույց տալ օտար պետություններին, նաև մեր հարևաններին, թե Հայաստանի Հանրապետությունը դեռ գոյություն ունի իր նախարարական կազմով, թե նա իրավունք ունի հայ ժողովրդի անունից բանակցության մեջ մտնել և այս կամ այն որոշումը կայացնել, ի վերջո նա իրավունք ունի հայ ժողովրդի դատը պաշտպանել: Բայց այդ հայեցակետը միանգամայն զուրկ էր քաղաքական որևէ արժեքից, որովհետև միաժամանակ չէր կարող երկու Հայաստան գոյություն ունենալ՝ խորհրդային և հանրապետական, թե օտար պետություններ և թե մեր հարևանները շատ պարզ տեսնում էին, որ Հայաս-

տանի Հանրապետությունը զենքի ուժով տապալված է ապստամբությունը զենքի ուժով ճնշված և մայրաքաղաքը բոլշևիկների ձեռքին է, իսկ դժգոհ տարրերը անցել են դեպի օտար մի երկիր, Պարսկաստան, և կամ պատսպարվել են ապստամբ մի երկրամասում, որ համենայնդեպս Հայաստանի Հանրապետություն չէր կարող կոչվել, քանի որ նա դեռ ամիսներ առաջ Լեռնա-հայաստան անունով էր հայտնի բոլորին: Ուրեմն, քաղաքական այդ տեսակետը չէր կարող քննադատության դիմանալ ակնհայտնի իրողության հանդեպ: Բայց Լեռնա-հայաստանը Հայաստանի Հանրապետություն անվանելն այն դժբախտ հետևանքն ունեցավ, որ առիթ տվեց սովետական իշխանությանը լարել իր բոլոր ուժերը և այս կամ այն կերպ ամենակարճ ժամանակամիջոցում վերջ տալ այդ ինքնակոչ հանրապետությանը:

Լեռնա-հայաստանի կառավարությունը, մինչև երևանյան գաղթը կազմված էր մի տեսակ խառը մարմնից, բացարձակ կուսակցականներ դրա մեջ չկային, բացի ինձնից: Ժողովուրդը կուսակցության չէր բաժանված և նա պարզ ընդունում էր, որ միայն կոալիցիոն կառավարությունը կարող է մոտ լինել նրա սրտին: Բայց երբ մայիս ամսից կառավարությունը կոչվեց Հայաստանի Հանրապետություն, երբ իշխանության գլխավոր ղեկը իմ ընկերները հետ խլեցին այն մարդուց, որին միայն ժողովուրդը վստահել էր իր կյանքի տնօրինումը, այն ժամանակ նա չվարանեց իր դժգոհությունը արտահայտել ամենուրեք, տեսնելով, որ Սպարապետը մինչև իսկ իրեն հավատը ի չարն է գործադրել՝ ժողովրդի՝ իրեն վստահացած իրավունքը տալով դրսից եկած իր ընկերներին, որոնց նա չի ճանաչում և չի էլ կարող իր երկրի կառավարության ղեկը հանձնել նրանց: Ես բազմիցս գանգատներ եմ լսել երկրի կառավարության այս փոփոխության առթիվ, ինձ մոտ մինչև իսկ հունիսի 15-ին պատգամավորներ են եկել Ղափանից՝ Դավիթ Դավթյանի, Սամսոն բեկ Մելիք-Փարսադանյանի, Միքայել Էլչիբեկյանի, Արսեն Բաբայանի և Իվան Պետրոսյան, որոնք կառավարական այդ ձևի նկատմամբ իրենց դժգոհությունը հայտնելով, և բողոքելով, որ ես իրենց հավատը և վստահությունը ի չարն եմ գործադրել, պահանջում էին կոալիցիոն կառավարություն կազմել և երկրի անունը թողնել Լեռնա-հայաստան:

Ես թեև միանգամայն դեմ էի երկրի Հայաստանի Հանրապետություն կոչելուն և տասն և մեկ հոգուց բաղկացած նախարարական կազմին(որոնցից երեքն առանց պաշտոնի էին), մի տեսակետ, որ ես բացորոշ հայտնել եմ դեռ Տաթևի ժողովում, որին մասնակից են եղել մեր բոլոր ընկերները, որովհետև ժողովուրդը պարզապես պիտի տեսներ, որ կառավարության ղեկը իր վստահացած մարդկանց ձեռքին չի, բայց իբրև ընկերներից կրտսերն և իբրև կուսակցական դիստիպլինային ենթակա մեկը՝ ակամայից լռում եմ, այն համոզմամբ, որ գոնե, եթե

կառավարության ընդհանուր ղեկը ինձանից խլում են, բայց տալիս են մի մարդու՝ ընկեր Ս. Վրացյանին, որը կարող կլինի իր փորձառությամբ օգտակար լինել երկրին, եթե միայն նա մնա և ձեռք ձեռքի տված գործի մեզ հետ: Բայց, շատ շուտով, ես հուսախաբվում եմ, ընկ. Ս.Վրացյանը պաշտոնական գործով մեկնում է Թավրիզ, ուր բավական ուշանում է: Փոխվարչապետի պաշտոնն ինձ համար անհասկանալի պատճառով հանձնվում է Ա. Հովհաննիսյանին, մի մարդու, որին ժողովուրդը բոլորովին չի ճանաչում: Պետք է ապրել գյուղացիության մեջ, հասկանալ նրա հոգեբանությունը այն համոզման հանգելու, որ այդ ձևով կազմված նախարարական խորհուրդը չէր կարող ժողովրդի վստահությունը վայելել, բայց և այնպես փաստը կատարված էր և ինձ մնում էր առանց ղեկավարի դեր կատարելու՝ ճակատից-ճակատ շրջել և զինվորական գործով զբաղվել:

Նախարարական նոր խորհուրդը, առանց շրջապատը լավ ճանաչելու, առանց խորը ուսումնասիրելու իր խնամքին հանձնված ժողովրդի տնտեսական դրությունը, առանց մինչև իսկ այս կամ այն կարիքի ճիշտ չափն իմանալու՝ ստեղծում է Գորիսում ծառայողների մի շտաբ, որն ոչ այլ ինչ էր, եթե ոչ սինեկուրաների և ձրիակերների մի ամբողջ խումբ, որոնցից շատ շատերն անգործությունից չգիտեին, թե ինչ անեն. մինչև երևանյան գաղթականության գալը ամբողջ Լեռնա-հայաստանը կառավարում էին միայն քսանևութ հոգով, նոր նախարարության կազմը միմիայն Գորիսում դրանց թիվը հասցրեց մինչև 267-ի (տես պետական պաշտոնյաների սպառողական ընկերության ցուցակ): Նշանակում են առանձին հանձնարարության պաշտոնյաներ, շրջանային կոմիսարների օգնականներ, քարտուղարներ, գրագիրներ, որոնց կարիքը բոլորովին չէր զգացվում, կաշառակեր վարկաբեկված անհատներ նորից պաշտոնի են կանչում, գաղթականներից շատերին տեղավորում են այս կամ այն հաստատության մեջ միայն նրա համար, որ հաց և սնունդ ստանան: Ամբողջ Լեռնա-հայաստանում միմիայն երեք տարրական դպրոց գոյություն ուներ, բայց դրա համար հիմնվում է նախարարություն (Արդարադատության նախարարության հետ) իր առանձին շտատով, Հաղորդակցության նախարարությունը իր ուրույն շտատն ուներ, որ Գորիսում նստած երեք ամսվա ընթացքում ոչ մի դրական գործ չկարողացավ կատարել, մինչև իսկ չկարողացավ օգտվել մասնագետներից և Արաքսի պարոմը շինել: Ավելորդ համարելով մի առ մի թվել Երևանի ձևով նոր շտատներ կազմելը Լեռնա-հայաստանում և դրանցից շատ շատերի անկենսունակությունն և ավելորդ բեռ լինելն, այսքանը միայն կարևոր եմ համարում հիշատակել, որ այդ ահագին պաշտոնեությունը բացի հաց և սնունդ սպառելուց ոչ մի օգուտ չկարողացավ սալ ժողովրդին: Եվ այն ժամանակ, երբ գորիսեցու և քարահանքցու քաղցած, մերկ և վտիտ մարմնակազմով երեխա-

ները խոտ էին արածում երբ Խնձորեսկում և Կոռնիձորում սովամահ էին լինում մարդիկ, Գորիսի պաշտոնեությունը քիչ ու շատ բարվոք էր զգում իրեն, որովհետև հազար ու մի նեղությամբ զորքի սև օրվա հացի փոքրաթիվ պահեստները դատարկում էին օրեցօր, իսկ նոր ավազախառն ցորենը դրսից այնքան չէր ստացվում, որ այդ պաշտոնեության օրվա պարենը բավարարեր, ուր մնաց զորքի համար պաշար պատրաստեր: Քանիցս ես վիճաբանություն եմ ունեցել Ներքին գործոց նախարար Ս. Մելիք-Յոլչյանի հետ և առաջարկել կրճատելու պաշտոնեության թիվը մինչև մինիմումի, որպեսզի անգործ և ծրիակեր պաշտոնյաներն հեռացվեն, զորքի նեղ օրվա համար հացի պաշար լինի, որովհետև զինվորը պիտի կուշտ լինի, որ երկիրը պաշտպանի, բայց իմ այդ առաջարկություններին ի պատասխան միայն անհիմն առարկություններ եմ լսել և շտատները մինչև վերջին օրը նույնությամբ մնացել են, որի պատճառով էլ, երբ Զանգեզուրի շրջանում սկսվեցին կռիվները, Գորիսի պահեստում մի քանի գրվանքա ցորեն էլ չէր մնացել:

Չնայելով այդքան պաշտոնեության և տասն և մեկ հոգուց բաղկացած նախարարական կազմին, ներքին կյանքի մեջ շահատակությունները կատարվում էին ամենուրեք, Բազարչայը դարձել էր թալանի, ավազակության և խայտառակ արարքների մի բուն, և այդ բոլորը տեղի էր ունենում պաշտոնյաների ձեռքով, պետության համար մինչևիսկ Բազարչայից Գորիս ուղարկած մթերքը ճանապարհին գողորշիանում, չքանում էր, իսկ մեծավորները չէին պատժվում: Հիշեցի որ ունեինք Հաղորդակցության նախարություն իր առանձին շտատով, երեք նախարար առանց պորտֆելիի, որոնք չգիտեմ ինչու, միշտ պտտվում էին Հանքերի շրջանում, բայց Երևանի գաղթականությունը օրերով, շաբաթներով թափված մնաց Արաքսի ափին բացօդյա, քաղցած, ցրտի և սարսափի ազդեցության տակ և նախարարներից ոչ ոք կտրուկ միջոցների չդիմեց մասնագետներին պահելու և ամենակարճ ժամանակամիջոցում պարոմը շինելու, թե այդ թշվառ գաղթականությունը փրկելու իր դժոխային վիճակից, թե Պարսկաստանի մյուս ափի հետ մեր հաղորդակցությունը մշտական դարձնելու և թե պարսից հողում գտնված ցորենը հեշտությամբ տեղափոխելու համար: Բայց երբ դեռ Հայաստանի Հանրապետության նախարարության խորհրդի անդամները մեծամասամբ Տաթև էին կամ Հանքերում (ապրիլ, մայիս), երբ դեռ նրանցից ոմանք նախարարական նոր կազմի մեջ չէին մտել և պարտավոր էին իբրև Հայաստանի Հանրապետության կառավարության անդամներ միշտ իրենց գաղթականների հետ լինել, նրանց ապահով Պարսկաստանանցնելու համար, նրանք գաղթականներին իրենցից առաջ են ուղարկում Արաքսի ափը, թողնում անխնամ, իսկ իրենք թիկունքում շարունակում են կազդուրվել: Ահա թե ինչ է գրում Թավրիզից այդ առթիվ N 5 նամակով Ս. Վրացյանը Հայաստանի Հանրապետության կառավարությանը. «Ես կարծում էի, որ դուք արդեն կազմակերպել եք գաղթականության գործը, որը իր ընթացքով շարունակվում է: Ռուբենի նամակից պարզվում է, որ *դուք բնավ չեք մասնակցում գաղթականության գործին, որը շատ ողբալի վիճակի մեջ է*: Պարզվում է, որ դուք Հանքերում եք, մինչդեռ ամբողջ ժողովուրդն Արաքսի ափին է: Չէ՞ որ մենք պայմանավորվել էինք, որ դուք պիտի ժողովրդի Տաթևից հեռանալուց հետո, անցնեիք նրա հետ Մեղրի և վարեիք գաղթականության էվակուացիայի գործը, մինչև ինձնից տեղեկություն ստանաք: *Ժողովուրդը Արաքսի ափին ծայր աստիճան վատ դրության մեջ է, ենթակա սովի կամայականություններին, մինչդեռ մեր բարոյական պարտքն էր մինչև վերջը դյուրացնել նրա անցքը*: Դուք պետք է անցնեք Մեղրի և դյուրացնեք ժողովրդի անցքը, որից հետո միայն կառավարությունը, որպես այդպիսին, կանցնի Պարսկաստան»:

Այդ նամակը բավական պերճախոս մի ապացույց Հ.Հ. կառավարության անտարբեր և սառնասիրտ վերաբերմունքին՝ դեպի իր պատճառով Երևանից Լեռնա-հայաստանի վրայով Արաքսի ափը հասած հարազատ գաղթականությունը:

Հազար ու մի տանջանքներով, մինչև իսկ բավական զոհեր տալով, գաղթականությունը անցնում է մյուս ափը, նույնպիսի նեղությամբ ու հագի շորերը վաճառելով՝ հասնում է Թավրիզ: Դրանից հետո այդպիսի կառավարությունը զգում է պարոմի կենսական նշանակությունը, անհրաժեշտ միջոցների՞ է դիմում ապագայում ևս գաղթականությանը չենթարկելու նույնպիսի տանջանքի, զգում է, այո՛, բայց կատարելու ընդունակությունից միանգամայն զուրկ է. Կառավարությունը ծախսում է մոտ (100) հարյուր, եթե ոչ ավելի ոսկի, Արաքսի այս ու այն ափին կառուցել է տալիս հենարաններ պարոմի համար, բայց ամբողջ երեք ամսվա ընթացքում միացնել չի կարողանում մետաղե թոկով այդ հենարանները, որի պատճառով էլ երկրորդ գաղթականությունը նույնպիսի սոսկալի վիճակի է ենթարկվում, խեղդվում էին մարդիք, ձիաներ, անասուններ և գաղթականությունը ավելի մեծ վնասներ է կրում, քան պարոմը շինելու համար ծախս կպահանջվեր: Շնորհիվ մի ինչ որ Ալեքսանի՝ շահատակությունների ժողովրդից բացարձակապես կորզում են ոսկի, արծաթ, փալաչիները՝ այդ նույն Ալեքսանի ներշնչմամբ երբեմն ճաշից հետո չէին գալիս մարդ տեղափոխելու և կամ անտեղի պահանջներ էին անում: Ալեքսանն այդ ժամանակ տեր ու տնորեն էր ամբողջ գաղթականության կյանքի ու գույքի, ոչ ոք այդ ուրանալ չի կարող: Կառավարությունը Հանքերում որոշում է իր անդամներից մի քանիսին տալ լիազորություն գաղթականներին մյուս ափը անցկացնելու, բայց այդ լիազորները գալիս են, երբ երեք-չորս օր շարունակվում է այդ տեղափոխությունը, երբ սկսած գնդապետից մինչև

հասարակ զինվորի կյանքը դարձել էր Ալեքսանի և նմանների համար խաղալիք: Ահա թե մեր կառավարության ինչպիսի գործերն են տեղիք տալիս դժգոհության և բողոքների:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Լեռնահայաստանի իր կարճատև գործունեության ընթացքում ժողովրդի և մինչև իսկ ստորին պաշտոնյաների շրջաններում մեծ դժգոհության տեղիք է տալիս իր արարքներով, պաշտոնապես հայտարարում են՝ թե ներքին շուկայում միմիայն պիտի գործածել հայկական դրամ, զանցառուներին սպառնում են խիստ պատիժներ, իսկ Արևիքում, Հանքերում, Տաթևում, Բազարչայում և այլուր մեր բարձր պաշտոնյաները՝ (փրկության կոմիտեի անդամներ նախարարներ) ժողովրդի աչքի առաջ գործ են ածում են սովետական և հնչյուն դրամ, գնում են ձի, խոտ և այլ մթերք, Հայկական դրամը միանգամից գործածությունից վերանում է, կյանքը սարսափելի թանկանում է և ժողովուրդն ու ստորին պաշտոնեությունը զրկվում են մթերք ձեռք բերելու հնարավորությունից, որը և առիթ է ծառայում գյուղացիների դժգոհության: Փաստ է, որ երբ ընկ. Ս.Վրացյանը Գորիս է ժամանում վերջին անգամ, այդտեղի ստորին պաշտոնյաները, որոնք ռոճիկ էին ստանում միմիայն հայկական դրամով, ներկայանում են նրան և գանգատվում բարձր պաշտոնյաների այդ արարքի առթիվ և խնդրում կամ իրենց էլ սովետական դրամով ռոճիկ տալ և կամ միջոցներ ձեռք առնել բարձր պաշտոնյաների այդ քայլի դեմն առնելու: Կառավարությունը Հանքերի շրջանն է ուղարկում իր լիազորներին թուրքերից՝ սովետական գնումներ անելու. մի քանի օրվա ընթացքում ցորենի, գարու, բրնձի, չամիչի արժեքն այնպիսի սոսկալի չափերի է հասնում, որ գյուղացիներից ոչ ոք չի համարձակվում որևէ մթերք գնելու, թեկուզ սովետական դրամով, ահա կառավարության ժողովրդին տված օգուտը: Ֆինանսների նախարարը, որը մեր կանոնավոր զորաշարքերում տասն և մեկ ամիս շարունակ ծառայած Սիսիանի սպայության և զինվորության խնայում է ռոճիկը տալ, որը մերժում է մինչև իսկ փոխվարչապետ Հ.Հովհաննիսյանի մակագրությամբ իրեն ներկայացած սիսիանցիներին երկու ամսվա ռոճիկը գոնե բաց թողնել գաղթից մի քանի ժամ առաջ, միլիարդներ է թողնում թափված Հանքերում, որ և բաժան-բաժան է լինում մեծամասնականների ու պատահական մարդկանց միջև:

Հարկավոր է նաև մի նմուշ բերել մեր կառավարության արտաքին քաղաքականությունից, որից պարզ կարելի է տեսնել, թե որքան է նա ճանաչում մեր և հարևան ժողովրդներին և թե որքան իրազեկ է նրանց վերջին տարիների փոխադարձ հարաբերությանը: Վերջին 4-5 տարվա ընթացքում թուրք քոչվորը իրան իրավունք չի համարել ոտք դնել Սիսիան և Զանգեզուր, որովհետև նրանք խաղաղ պայմաններում միշտ վնաս են հասցրել հայի տնտեսությանն. Զանգեզուրի վերջին

տարիների անընդհատ կռիվը մեծ մասամբ այդ խնդրի շուրջն էր պտտվում, թեև իմ կարծիքով, խաղաղ պայմաններում կարելի է և պետք է այս կամ այն կերպ վճռել այդ կնճռոտ հարցը, բայց երբ մենք կռվում ենք բոլշևիկների հետ և համարյա, թե շրջապատված ենք ամեն կողմից, կառավարությունը այնքան հեռատես պիտի լիներ, որ թույլ չտար մեր կողքին բնակվելու մի երկրորդ թշնամու. բայց նա կամենալով, իբր թե, սիրաշահել քոչվորներին՝ այնպիսի միջոցների դիմեց, որով միանգամայն վտանգի ենթարկեց մեր ժողովրդի անկախության խնդիրը: Մինքենդի և առհասարակ Հաջի Սամլուի թրքությունը, ուր տարիներ շարունակ անհաշտ թշնամի է եղել Զանգեզուրի հայությանը, իր այդ ընթացքը շարունակում է նաև այս տարի. դեռ մայիսի վերջին նա այնքան համարձակություն է ձեռք բերում, որ քշում է Վերին Շենի (Գորիսից 6-7 վերստ հեռու) անասունները և մի մարդ սպանում: Նույնպիսի թալան կատարում են նաև քոչվորները հունիսի սկզբին քշելով Շինուհարի ոչխարն ու տավարը, Դարաբասի անասունները և կողոպտում Ղարաքիլիսայի խճուղում պետական տրանսպորտը: Եվ այս բոլոր դեպքերից հետո կառավարությունը, փոխանակ զգուշանալու նրանցից, մանավանդ որ Դարալագյազի օպերացիան որոշված էր սկսել, չգիտեմ ինչ-ինչ պատճառներից դրդված ընդունում է երկու հազար զինված քոչվորների ներկայացուցիչների առաջարկը՝ գալ Գորիս և պայմանավորվել մեր կառավարության հետ: Անհասկանալի է, թե ի՞նչու կառավարությունը կույր հավատ ընծայելով նրանց, այդ պատգամավորությանը ընդունում է Գորիսում, չորս- հինգ օր հյուրասիրում, ինչպես և թույլ էր տալիս Հաքարուի թրքության անարգել ներս ու դուրս անել Գորիս և շրջակա գյուղերը՝ իբր թե մթերքներ վաճառելու նպատակով, երբ շատերը մինչև իսկ դատարկ էին գալիս, ավելի շատ տեղեկություններ հավաքելու մեր թշնամու համար, քան թե ապրանք վաճառելու: Եվ կառավարությունը այդ բոլորի հանդեպ միայն լուռ հանդիսատես էր: Ի՞նչ տեսակետով էր առաջնորդվում կառավարությունը համաձայնության գալով քոչվորների հետ և իր երկրի ամենակարևոր դիրքերը զիջելով նրանց, առանց հարցնելու մինչև իսկ Սիսիանցիների կարծիքը, որը ներկա դեպքում ամենաշահագրգռված կողմն էր և առանց դիմելու զինվորական նախարարության, որը միայն կարող էր որոշել, թե իրեն հանձնված երկրի, որ ճակատներն են ավելի վտանգավոր: Կառավարությունը ընդառաջ է գնում քոչվորների հետևյալ առաջարկներին. 1) Զիջել նրանց հոտերի և անասունների համար Ղարաքիլիսայի, Անգեղակոթի և Մուխաթուրիանի (նույնն է թե ամբողջ Սիսիանի) հյուսիս-արևելյան բոլոր հովիտները, 2) թույլ տալ շուկա բանալու Սիսիանի որևէ հարմար տեղում, 3) եթե բոլշևիկները մինչև աշուն չքաշվեն Ղարաբաղից՝ իրենց ճանապարհ տալ Նախիջևան կամ Պարսկաստան անցնելու, 4) թույլ տալ Գորիսի վրայով իրենց տրանս-

պորտն անցնելու Բարգուշատից դեպի յայլաները: Կառավարությունն միանգամայն հավատացած լինելով, որ քոչվորները հակաբոլշևիկ տարրեր են, ընդունում է նրանց պայմանները, չնայելով որ նույն ժողովին մասնակցող իմ փոխանորդ գլխավոր շտաբի պետ Նարինյանը մինչև վերջը բողոքում է դրա դեմ, և իր կողմից հիմնավոր պայմանն է առաջարկում, որ քոչվորները չեղած արոտատեղերի համար պարտավոր են վճարել 50 միլ. ռուբլի հայկական դրամով (չեկերի հաշվով) որ շուկան պիտի լինի Ղարաքիլիսիայի շոսսեյից չորս վերստ դեպի հյուսիս, Գորիսով անցկացրած մթերքի 30 տոկոսը տալ նրանց, որը և ընդունում են քոչվորների ներկայացուցիչները: Կառավարությունը մինչև իսկ լուրջ ուշադրություն չի դարձնում նրանց առաջարկության երրորդ կետին, ուր պարզ ասված է, թե նրանք կամենում են անցնել Նախիջևան, երբ քաղաքը ինքն է անում այդ առաջարկությունը, դա նշանակում է միայն,թե նա դեռևս ձեռք չի քաշել Կովկասյան մահմեդականության վաղուց ի վեր փայփայած ծրագրից՝ ուժեղացնել այդ շրջանը, կապվել Ադրբեջանի և Տաճկաստանի հետ:

Մեր կառավարության ձեռքով երկրի համար ստեղծված այդ դրությունը առիթ է տալիս ինձ հունիսի 26-ին դիմել Հայաստանի Հանրապետության նախարարական խորհրդին, պատճենը՝ վարչապետ Ս.Վրացյանին, հետևյալ գրությամբ. «Քանի դեռ ինքնավար Լեռնահայաստան կա՝ Սովետական Արարատյան Հայաստանը իրեն ապահով զգալ չի կարող». այսպես է մտածել ու գործի անցել Երևանի հեղկոմը:

«Քանի դեռ ինքնավար Լեռնա-հայաստանը կա, Նախիջևանն ու Շարուրը չեն կարող կցվել Ադրբեջանին, Հայկական Ղարաբաղը չի ադրբեջանանա. մեղմ լինենք՝ մեծ Ադրբեջան չի ստեղծվելու»:

Այսպես է ըմբռնելմտածել մեր կողքին ապրող մահմեդականությունն, և այսպես գործի անցել:

Ինչպես տեսնում եք, կարմիրների և թրքության շահերը նույնանման են ու հենց այդ հողի վրա էլ տեղի է ունեցել երկու կողմերի մեր դեմ ուղղված լուրջ զինակցությունը: Ամսի 20-ից սկսած թրքությունն առայժմ Նախիջևանից և Մինքենդի աշխույժ գործողությունների է դիմել: Հավանական եմ համարում, արդեն նշաններ էլ կան, Բարգուշատի և Հաքյարա-Խանլուի թրքության թշնամական գործողությունները մոտ օրերում: Տեղական թրքության և մեծամասնականների շարքերը խտացնում են նաև եկվոր թուրք քոչվորները: Այսպես, ուրեմն Մուսավաթի և Նարիմանովի (Խորհրդային Ադրբեջանի ղեկավարը) միջև ստեղծված ռազմաքաղաքական կապը կատարյալ է ու ավելի քան՝ հասկանալի: Թաթար հատվածների հավաքման և տարածք (Մեծ Ադրբեջան) ստեղծելու վառ ցանկությունն ամբողջ թրքությունն առանց կուսակցության և դասակարգերի խտրության զինել և հանել է մեր դեմ:

Այդ պարագան զգալիորեն դժվարացնում է մեր՝ կարմիրների դեմ մղած անհավասար կռիվը, բայց չի հուսահատեցնում ինձ, որ մենք ցանկության դեպքում, եթե շատ չնեղվենք ռազմամթերքի և հացի պակասությունից, կկարողանանք շարունակելու մեր հերոսական դիմադրությունը, մինչև որ Անդրկովկասում բռնավոր կերպով խորհրդայնացված ազգերը կմիանան մի ընդհանուր ռազմահեղափոխական ճակատի վրա՝ մի դրոշի տակ՝ ընդդեմ կարմիրների:

Չգիտեմ, ի՞նչ արժեք ունեին հայկական չեկերը, որ մինչև իսկ իրենք՝ նախարարները չէին կարողանում գործածել, երբ քոչվորների հետ կապված այդ պայմանի շնորհիվ մեր աջ թևում, բացի թշնամի Մինքենդից, բնակություն է հաստատում մի նոր թշնամի, որն արդեն իր կազմակերպած թալաններով ցույց էր տվել դեպի մեզ ունեցած վերաբերմունքը, որն և չուշացավ մեր ծանր պայմաններում ինքն ևս զենքի դիմելու ու արագացնելու Սիսիանի անկումը:

Չեմ կարող լռության տալ և չհիշատակել կառավարության և Արևմտյան ճակատի հրամանատարության ներքին քաղաքականության վերաբերյալ և մի այլ անվճռական քայլ, որը չափազանց տխուր հետևանքներ ունեցավ մեր գյուղացիության և մեր երկրի պաշտպանության համար: Հայաստանի Հանրապետության կառավարությանը շատ լավ հայտնի է, թե ինչ տմարդի դեր խաղացին մալականները՝ Ախտայի, Ելենովկայի, Դիլիջանի շրջաններում և այլուր՝ մեծամասնականների դեմ վարած կռիվների ամբողջ ընթացքում: Բազարչայի երկու մալական գյուղերը իրենց գոյությամբ պարտական էին Սիսիանի հայերի պաշտպանությանը. սկսած 1918թվից մինչև 1920թիվը բազմիցս կրկնած թուրքական հարձակումներից նա է միայն ազատել. բայց 1920թ. հուլիս ամսից այդ մալականները երախտամոռությամբ բոլշևիկների կողմն անցնելով, միշտ մեր թիկունքին են խփել, միշտ թալանել և սպանել են մեր նահանջող զինվորներին կամ գյուղացիներին:

Թույլ տալ, որ Սիսիանի կենտրոնում մի այսպիսի դավաճան գյուղ գոյություն ունենա կամ հապաղել նրա տեղափոխությունը, դա միանգամայն հակապետական սկզբունք է:

Այդ է պատճառը, որ վաղուց ի վեր որոշում է եղել հեռացնել այդ մալականներին Լեռնա-հայաստանից, հակառակ իմ բացորոշ հրահանգներին, թե կառավարության ներկայացուցիչները և թե արևմտյան հրամանատարությունը իրենց համար որոշում են այդ տեղափոխությունը իբր թե աստիճանաբար կատարել, այն էլ մայիսի վերջերին: Թե ի՞նչ այլանդակ ավազակություն, թալան և վաճառք է տեղի ունենում այդ երկու գյուղերում՝ դա բոլորիդ հայտնի է: Ստիպված եմ ամոթով արձանագրելու այն փաստը, որ նախարարներից ոմանք մինչև իսկ մասնակից էին այդ արարքներին. երբ հունիսի սկզբին Պետական

Վերահսկիչ Գեղեոն Տեր-Մինասյանը և խնամատարության նախարար Մինաս Տեր-Մինասյանը Ղալաջուղում մեծամասնականների հետ իրենց բանակցություններն են վերջացնում, նրանք չեն զլանում այդտեղից Բազարչայ գնալ, ուր Գեղեոն Տեր-Մինասյանը երկու ծիու քուռակ է վերցնում իրեն բաժին: Երբ պետական վերահսկիչը իրեն թույլ է տալիս այդպիսի մի կեղտոտ արարք՝ ի՞նչ կարելի է պահանջել մյուս պաշտոնյաներից, չէ որ պետական վերահսկիչին էր վերապահված պաշտոնյաների զեղծումների երևան հանելը և նրանց պատժելը. և երբ ժողովուրդը տեսնում է այդ բոլորը, նա կարո՞ղ է հավատալ այդպիսի կառավարության կենսունակության:

Երբ թշնամին մոտենում է մալական գյուղերի շրջաններին և ես նկատում եմ,որ վտանգը երկու կողմից կարող է մեզ սպառնալ, վճռապես հրամայում եմ Կուռոյին տեղահանել Բազարչայը, նա իմ կարգադրությունը չի կատարում: Իսկ փոխվարչապետ Ա. Հովհաննիսյանը, որ այդ ժամանակ գտնվում էր արևմտյան ճակատում և պարտավոր էր նպաստել շուտափույթ լուծելու այդ հարցը, իր Ս. Մելիք-Յոլչյանի անունով գրած նամակում այն միտքն է արծարծում՝. «տակտիկական տեսակետից տեղահանությունը պիտի կատարվի աստիճանաբար, թեև այդ գյուղը միշտ մեր թիկունքին է խփել»: Եվ ի՞նչ հետևանք է ունենում Արշ. Հովհաննիսյանի և Կուռոյի այդ տակտիկան, երբ կռիվը տեղափոխվում է Սիսիանի շրջանը՝ Նախիջևան փախած մալականները, մեծամասնականների հետ միացած, մեր ձախ թևին են հարվածում, դեպի Մինքենդի կողմը փախած մալականները՝ թուրքերի հետ միացած՝մեր աջ թևին են սպառնում, իսկ Բազարչայում մնացածները ճակատից են մեզ խփում և նպաստում Սիսիանի շուտափույթ անկմանը: Ահա մեր կառավարության վարած ներքին քաղաքականության արդյունքը:

Ի՞նչ ռազմամթերք ունեինք մենք, որ ամեն կողմից օղակված թշնամիներով՝ մենք ստիպված պարտավոր էինք բավականանալ մեր ունեցածով. գյուղացիության հոծ մեծամասնությունը գործ էր ածում ռուսական երեք գծանի հրացան, չափազանց քիչ էին ֆրանսիական և տաճկական հրացանները. իսկ ընդհակառակը խիստ սուղ էին մոսինի փամփուշտները: Երևանից անցյալները այդ տեսակի փամփուշտը բոլորից քիչ էր ստացվում, որովհետև այնտեղ էլ այդ տեսակի փամփուշտ չափավոր քանակությամբ կար: Դեռևս անցյալ տարվա նոյեմբեր ամսից սկսած մենք ունեինք այնքան փամփուշտ, որքան գրավել էինք մեծամասնականներից, թնդանոթներ համարյա թե չունեինք, շնորհիվ այն քաղաքականության, որ վարում էր Հայաստանի Հանրապետության կառավարությունը անցյալ տարի, մեծամասնականներին տեղի տալուց մի քանի ամիս առաջ, երբ ինչ որ նուրբ նկատառումներով մերժեցմ Դարալագյազի հրետանին մեզ ուղարկելու:

Դարալագյազը գրավելու գլխավոր շարժառիթներից մեկը ռազմամթերք ձեռք բերելն էր մեր թշնամուց, բայց դժբախտաբար դրանից էլ չկարողացանք հարկավոր չափով օգտվել՝ նախ տրանսպորտի անկանոնության և երկրորդ՝ Դարալագյազը շուտ ձեռքից տալու պատճառով: Հետևապես, մենք ունեինք փամփուշտի այնպիսի փոքր քանակություն, որ տևողական կռիվների ընթացքում մի քանի օր անգամ չէր կարող բավականանալ. այդ է պատճառը, որ ես ամիսներ առաջ գրել էի ընկ.Ս. Վրացյանին և Ատրպատականի առաջնորդին, գնել Պարսկաստանում հարյուր հազար մոսինի փամփուշտ, որի տեղը և արժեքը ցույց էի տվել նրանց. բայց իմ այդ դիմումը մնում է անպատասխան: Այդ բոլորից պարզ կլինի ձեզ համար, թե որքան չնչին ռազմամթերքի պաշար ունեինք մենք և թե որքան ժամանակ կարող կլինեինք դիմադրել թշնամուն:

Այժմ, ես կանցնեմ Լեռնա-հայաստանի զինվորության, ժողովրդի և պաշտոնեության ամենացավոտ կողմին՝ նրա պարենավորման խնդրին:

Լեռնա-հայաստանի մեծագույն մասը առհասարակ զուրկ է եղել հացահատիկի բավարար պաշարից, թե խաղաղ ժամանակ և թե մանավանդ պատերազմների ընթացքում: Նա միշտ ստիպված է եղել դրսից ներմուծելու. Այս տարի նամանավանդ, սոսկալի սով էր տիրում բուն Զանգեզուրի բոլոր գյուղերում և քաղաքում:

Գողթանում, Ղափանում, Արևիքում և Սիսիանի որոշ մասերում մեծամասամբ շնորհիվ բոլշևիկների բռնագրավումների: Դեռ մարտ, ապրիլ ամիսներից սկսած ժողովուրդը բույսերով և այլ հակաառողջապահական նյութերով էր կերակրվում, համենայնդեպս Լեռնա-հայաստանի նոր կառավարությունը իրազեկ էր երկրի այդ դրության, որ իր 1921թ. մայիսի 1-ին հրատարակած դեկլարացիայում իմիջի այլ խնդիրների գլխավորապես շոշափում էր նաև պարենավորման հարցը, ասելով. «Մեր զորամասերին, պաշտոնեությանը և եկած գաղթականությանը պարենավորելու համար *Լեռնա-հայաստանի ժողովուրդը գոհաբերում է իր վերջին պաշարները,* սակայն մեծ կարիքը բավարարելու նպատակով կառավարությունը հարկադրված է նաև միջոցներ ձեռք առնել շտապ կերպով մեր հարևան երկրներից պարենավորման մթերքներ գնել և փոխադրել մեր երկրի ներսը»: Նշանակվում է. առանձին պարենավորման նախարար իր երկու ուրույն շտաբներով՝ մեկը Մեղրիի շրջանում, իսկ մյուսը՝ Գորիսում: Որոշվում է Պարսկաստանում գնել և ամենակարճ ժամանակում փոխադրել առնվազն քսան հազար փութ ցորեն: Քանի որ այդ որոշումը կար, ես լիահույս էի, որ գնումների խնդիրը կդրվի կանոնավոր հիմքերի վրա և շուտափույթ կերպով կիրագործվի, որովհետև երևանյան գաղթականությունը անցնելով Լեռնա-հայաստանով, բավական սպառել էր գյուղացիների մոտ եղած չնչին

պաշարը, որի պատճառով շատ շուտով քաղցած պիտի մնար նաև զինվորությունը: Իսկ բոլորի համար պարզ էր, որ կռիվներն անխուսափելի են: Բայց ի՞նչ է անում կառավարությունը նախքան դրսից որևէ մի հատիկ ցորեն երկիր ներս մուծելը . Իմ կարգադրությամբ Գորիսում, Տաթևում և Սիսիանում միայն զինվորության պետքերի համար ամբարած մի քանի հարյուր փութ հացահատիկը գործադրվում է գաղթականության և պաշտոնեության պետքերի համար, օրեցօր դատարկվում են մեր խղճալի պահեստները, իսկ դրա փոխարեն՝ Արաքսի ափից և այլ տեղերից բավարար քանակությամբ հացահատիկ չի ստացվում, կամ երբեմն այնքան է ստացվում, որ պաշտոնեության օրվա հացին հազիվ է բավարարում: Ես ամեն անգամ Գորիս գնալուց բողոքում, պահանջում էի կրճատել պաշտոնյաների թիվը, սև օրվա համար պաշար պահել, որ զինվորությունը քաղցած չմնա: Բայց ինձ միշտ կերակրում էին հույսերով, իսկ զինվորությունը մնում էր դիրքերում, օրը մի գրվանկա սև հացի կարոտ: Պարենավորման նախարարը ամբողջ երկու և կես ամսվա ընթացքում ոչ մի անգամ չբարեհաճեց կառավարության կենտրոնատեղին՝ Գորիս գալ, մասնակցել նախարարական խորհրդին, և առհասարակ պարենավորման գործի վերաբերյալ զեկուցում տալ, քանի որ շատ թյուրիմացություններ կային պարզելու: Նա մնաց անշարժ Մեղրի, իբր թե իր անմիջական հսկողությամբ և ձեռներեցությամբ ավելի լավ կազմակերպելու հացահատիկի գնումն ու փոխադրությունը. երկու և կես ամսվա ընթացքում հազիվ հազ հաջողվեց մոտ 3000 փութ հացահատիկ տեղափոխել: Այդ պաշարի գնման և փոխադրության շուրջը ստեղծվեց մի նոր պանամա՝ Լեռնա-հայաստանի պարենավորման պանաման, որի հերոսներն հանդիսացան այդ նախարարության պաշտոնյաները: Գորիսում մնացած բոլոր նախարարներն էլ կարող են վկայել, որ կռվի հենց առաջին օրը Գորիսի պահեստում մի օրվա հացի պաշար չէր մնացել զինվորների համար: Բազարչայի պաշարը մի քանի հազար զինվորությունը վաղուց սպառել էր, կամ պաշտոնյաները թալանում էին, էլ չեմ խոսում Զաբուղի ճակատի մեր զինվորների սոսկալի վիճակի մասին, որոնք հացի տեղ խոտ էին ուտում:

Եվ ի՞նչ ամոթաբեր շահատակության աղբյուր դարձավ հացահատիկի գնման գործը. Ատրպատականի առաջնորդը դեռ մայիսի 10-ին գրում է ինձ. «Ցորենի արժեքը Ամիր Արշադը բարձրացրեց 20-28 թումանի և դրա մեղքը Մեղրու մի քանի լրբերինն է, որ 28-ով են առել շահադիտական ձևով»: Հետագայում, ավելի ևս բարձրացավ ցորենի արժեքը: Իսկ ի՞նչ էր անում այդ ժամանակ պարենավորման նախարարը իր առանձին լիազորություններով (որի մասին քիչ հետո), և ամենակարող պաշտոնյաներով, ի՞նչու կտրուկ միջոցների չէր դիմում Մեղրիում, ուր ինքն էր նստում և սպեկուլացիայի առաջն առնելու. դա

միանգամայն անհասկանալի էր: Պարենավորման նախարարի գնած և փոխադրած ցորենի 40 % ավազ էր խառնված, այն էլ Արաքսի ափի ավազ:

Ղափանի, Տաթևի և Գորիսի շրջանների գյուղացիները Մեղրուց այդ պետական ցորենն իրենց գրաստներով տեղափոխելու համար պիտի ստանային բերած ցորենի կեսը, բայց հրաժարվում էին այդպիսի ցորեն ստանալ, ասելով թե իրենք ավազ ստանալու համար չեն գնացել Մեղրի: Գիտեին այդ կառավարության անդամները, բայց ոչ մի անգամ պատասխանատվության չկանչեցին խայտառակ արարքների հերոսներին: Ես թե Ամիր Արշադից և թե Դուզալի թուրք ազգաբնակչությունից ունեմ բազմաթիվ վկաներ, որոնք ցույց են տալիս, թե իրենց վաճառած ցորենը մի քանի անգամ խտխալով անց են կացրել, որովհետև այդպես էր կարգադրել Ամիրը:Վերջինս իր հունիսի 28-ին ինձ ուղղած նամակում այդ խնդրի վերաբերյալ գրում է. «Նմանապես խնդրել էի քեզ գրելու, թե ինչ տեսակ ցորեն ենք տվել մենք այստեղ, իմ կարգադրությամբ հանձնել են ամենալավ տեսակի ցորեն՝ մանր քարերից և ուրիշ կեղտոտություններից երկու անգամ մաքրելուց հետո»: Պարզ է ուրեմն, թե որտեղ կարող է ցորենը ավազի կերպարանափոխվել: Պարենավորման նախարարության պաշտոնյաների այդ արարքները հայտնի էին Մեղրիի շրջանի ամբողջ ժողովրդին և հրամանատարությանը: Ես ինքս բազմիցս, թե բերանացի, թե գրավոր բողոքներ եմ ստացել այդ առթիվ, մինչև իսկ ընկերների մոտ կարդացել եմ գրավոր բողոքներից մի քանիսը, խույս տալով պաշտոնական կերպարանք տալուց, քանի որ նախարարական կազմի մեջ կային և ուրիշ հոսանքների պատկանող անհատներ, բայց իմ բոլոր դիմումները ապարդյուն են եղել: 1921թ. մայիսի 9-ին Կարճևանի հասարակությունը, որը շատ լավ իրազեկ էր հացահատիկի տեղափոխության գործին, դիմում է ինձ հետևյալ գրությամբ. «Մենք ստիպված ենք ձեզ մի րոպե պ.Սպարապետ ծանոթացնել սույն գրության մեջ արծարծած հարցով, ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարենավորման նախարար պարոն Հ. Տեր Հակոբյանը մեր պատգամավորներին «գոհացում» է տվել լավ... հայհոյանքներով»: Կարճևանն Արաքսի ափին ընկած Մեղրիի շրջանի ամենամոտիկ գյուղն է: Վաղուց հայտնի էր, որ նրա ժողովուրդը սովի էր մատնված և ի պատասխան նրանց դիմումին հացահատիկ ձեռք բերելու՝ պարենավորման նախարարը հայհոյանքով է ճանապարհ դնում»:

Մեղրիից վստահելի մի անձնավորություն, Նիկոլա Մինասյան անունով, 1921թ. հունիսի 8-ին Արևիքի հրամանատարության միջոցով ուղղում է ինձ հետևյալ բողոքը. «Իբրև անկեղծ ականատես և շահագրգռված դեպի իմ պետությունն ու պետական շահերն՝ բողոքում եմ կատարվող ավերումների դեմ, շահատակությունների, որը կործանեց

Երևանի կառավարությունը, նույն ուղղությամբ կարծես շարունակվում է կատարվել այստեղ. անց է կացվում պետական ցորեն, շրջապատել են մի խումբ խնամիներ. «Տերն իրենց հետ, գոնե մաքուր լինի». փոխանակ մաքուր և շիտակ ձեռքերով ամբարելու կենտրոնում, մի մաքուր տեղ, բայց չգիտենք ինչու ամբարվեց Արազի ափին: Բայց այդ ինչո՞ւ չուշացավ պարզվել՝ ցորենի մեծագույն մասը գոլորշիացավ, փոխարինելով ավազի: Ո՞վ է պատասխանատու և հանցավոր: Ինչ որ մի Շմավոն կեղծման համար մի քանի ժամ, թե որքան բանտարկվեց ու անցավ Թավրիզ, նորից մի ուրիշը՝ Սեդրակ է, ով է, 4 պ. 10 ֆ. ցորեն, երկու խուրջին մեխ ուղարկել է իրենց տուն, տանողն եկել ու բողոքել է պ. նախարարին՝ չմոռանամ ասելու, որ ցորեն տանողին պատվիրել է, որ Աղանը մի խախալ վերցնի ու գա, ինչո՞ւ, այդ էլ պարզ է մեղրեցիները մինչ այդ Պարսկաստանից ստացել են ցորենը, քիչ քար և փուչ է դուրս եկել, բայց ավազ՝ ոչ, իսկ այժմ տասը փթից երկու պ. ավազ է դուրս եկել: Բողոքելով կատարվող ավերումների դեմ, խնդրում ենք հաշվի առնել և զեկուցել ուր պետքն է: Ինչ խոսք լավ միջոց է, գալիս են կատարում ավերումներ, և անցնում Թավրիզ հանգստանալու և վայելելու ժողովրդից թալանած ոսկիները»: Այս գրությունը, որ ինտելիգենտ մի կուսակցական ընկերի է պատկանում, որը անհատապես ոչ մի կերպ շահագրգռված չի պետական ցորենի գնման գործով, բացի պետական շահը, պարզ վկայում է, որ այդ ձեռնարկության մեջ տեղի ունի և՛ գողություն և՛ ցորենի հետ ավազ խառնել :

Մեղրիի ժողովուրդը, որն հենց գործի սկզբից տեսնելով իր աչքի առաջ կատարվող ավազակությունն ու անբարեխղճությունը, ուժեղ կերպով բողոքում է դրա դեմ և պահանջում պարենավորման նախարարի հեռացումը. պ. Հ. Տեր-Հակոբյանը ստիպված է լինում հրաժարական տալ կառավարությանը և երբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է հեռացնել նրան իր պաշտոնից, որի մասին ինքը իրազեկ էր, այնուամենայնիվ նա մինչև վերջ շարունակեց մնալ իր պաշտոնում և ավելի ևս չարիքներ պատճառեց պարենավորման գործին:

Մեղրիի շրջանի հրամանատար փ. գնդապետ Մելիք Օհանջանյանը՝ իր ինձ ուղղած զեկուցման մեջ (1921թ. հունիսի 12-ին թիվ 720 ռուսերեն լեզվով) իմիջիայլոց պարենավորման խնդրի առթիվ գրում է. «Թնդանոթաձիգ զինվորները, թվով 30 հոգի, 3 օր է, որ մի հատիկ ցորեն չեն ստանում պահեստից և ես ստիպված եմ տներից հաց հավաքել իմ զինվորների համար: Թեև ես իրավունք չունեմ խառնվելու պարենավորման նախարարի գործին, բայց իբրև գենվազգի՝ իմ պարտականությունն եմ համարում զեկուցելու Ձեզ այն խոսակցության, շշուկների մասին, որ տեղի ունի ժողովրդի զանազան խավերում և վախենում եմ, որ այս բոլորն կատաստրոֆիկ վախճան ունենա, օրինակ՝ Արաքսի ափի պահեստի կառավարիչ Շմավոն Մկրտչյանը, որը պարոն Տեր Հարությունյանի հետ Երևանից է եկել և նկատվելով գողության մեջ ձերբակալվել է, չգիտեմ ինչ ձևով ազատվել և անցել է Պարսկաստան: Պահեստի այլ կառավարիչը նույնպիսի գողության համար ձերբակալվելով զինվորական պարետի ձեռքով և հանձնվելով պարենավորման նախարարի ձեռքը արժանի պատիժ կրելու, առանց որևէ պատժի շարունակում է մնալ ծառայության մեջ. գնելով Արաքսի ափին գինի, որ բերում են Կարճևանից և որգեաներ է կազմակերպում շառլատանների խմբով: Այդպիսի քեֆերի համար կարճևանցիներից մեզ հայտնի մի անձնավորություն ստանում է ինը փութ ցորեն: Մի խոսքով գողությունը շարունակվում է, ստացվում է ցորեն, որն ամեն քննադատությունից ստոր է, չկա մի մարդ, որ կարողանա մեղավորներին (պատժել) սանձահարել:

Իվերջո զեկուցում եմ, որ պետության ներսը ոսկի կամ արծաթ դրամ գործածելը կառավարության անդամների ձեռքով այն ժամանակ, երբ ոչ սպան, ոչ զինվորն և ոչ այլ ծառայողներ կանոնավոր և մշտապես չեն ստանում հայկական չեկեր, այնքան է փչացնում ժողովրդին, որ ամեն մի հասարակ իր գնելու համար ծառայողներից ոսկի կամ արծաթ են ուզում»:

Եվ երբ այս բոլոր խայտառակություններից հետո Արևիքի հրամանատարը, ձեռքի տակ ունենալով ակնհայտնի փաստեր, և երկիրն էլ հայտարարված լինելով զինվորական դրության մեջ, իրեն իրավունք է համարում պետական շահը պաշտպանելու տեսակետից ձերբակալել գողության մեջ մեղադրվող պարեն. նախարարության պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանին, ահա թե ինչ պաշտոնական գրություն է ուղղում ինձ պարենավորման նախարարը 1921թ. հունիսի 12-ին N 150. «Արևիքի հրամանատարը իր հունիսի 12 N 712 գրությամբ հայտնում է ինձ, որ նա «մի քանի պատճառներով» հրահանգել է ձերբակալել պարեն. նախ. պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանին. հայտնում եմ. 1) ինձ հայտնի չեն իմ պաշտոնյայի ձերբակալման պատճառներն և հետևաբար պետական ծառայողի ձերբակալումն առանց նրա բարձր իշխանության գիտության համարում եմ վտանգավոր երկրում կարգ հաստատելու և պետական շահերի տեսակետից:

2) Չունենալով Մովսիսյանին փոխարինող մեկը Արաքսի ափում, նրան ձերբակալելու դեպքում, *ես ստիպված պետք է լինեմ հրահանգել՝ դադարեցնելու հացահատիկների փոխադրությունը Պարսկաստանից, գործի ամբողջ պատասխանատվությունը թողնելով զինվորական իշխանության վրա:*

3) Սրա հետ միասին ուղարկեցի հարկավոր կարգադրությունը դադարեցնելու ցորենի տեղափոխությունը՝ ցնոր կարգադրություն»:

Ենթադրենք մի րոպե, թե պարենավորման նախարարության պաշտոնյա Ալեքսան Մովսիսյանը կասկածով է միայն ձերբակալված և թյուրիմացությամբ այդ մասին նախօրոք հայտնված չի եղել իր անմիջական բարձր իշխանությանը, շահագրգռված չի արդյոք նրա պատիվը պաշտպանելու համար գոնե ձևական քննություն կատարելու իր կամ զինվորական իշխանության ձեռքով՝ արդարությունը վերականգնելու համար, քանի որ նրա մասին վաղուց ի վեր խոսակցություն կար ժողովրդի մեջ. կամ ինչ է ներկայացնում իրենից Ալեքսան Մովսիսյանը, որի ձերբակալումը առիթ պիտի ծառայի պետական կարգը խանգարելուն և կամ շահը վնասելուն. առանց որևէ այլևայլության նա երեսի վրա է ծգում պետության և ժողովրդի շահը ու պաշտպանում է իր այն պաշտոնյային, որին ամբողջ գաղթականությունն է ճանաչում Արաքսի ափին, նրա կատարած շահարկություններից իբր թշվառ գաղթականներից ոսկի ու արծաթ էր կորզում. այդ կրիտիկական րոպեին անգամ մինչև Ս.Մելիք-Յոլչյանի Արաքսի ափը գալը Մովսեսյանը չի վարանել նույնիսկ շահագործելու կառավարությանը՝ առանց բացառության ներկայացնելով գետն անցած բոլոր գաղթականների ցուցակը և դրանց բոլորի համար փող ստանալով, չնայելով, որ մի քանի օր շարունակ նա դրամ էր ստանում իբր թե փալանչիներին տալու և գաղթականներին ու նրանց ձիերն միուս ափը անցկացնել տալիս : Մյուս կողմից ի՞նչ մի հայտնի և եզակի մասնագետ էր Ալեքսան Մովսիսյանը, որին փոխարինող ոչ ոք չկար և որի ձերբակալումը առիթ պիտի ծառայեր պար. նախարարին կարգադրելու դադարեցնել ցորենի փոխադրությունը այն ժամանակ, երբ յուրաքանչյուր գրվանկա հացը մի կյանք կարող էր փրկել, երբ Լեռնա-հայաստանի ծայրերից գյուղացիները գրաստներով եկել և ցորենի էին սպասում Մեղրիից տեղափոխելու համար: Պարենավորման նախարարը դեռ ինձանից չստացած իր սպառնալից պաշտոնական գրության պատասխանը՝ դադարեցնել հացահատիկի փոխադրությունը. և սա կոչվում է պետական տեսակետ, ժողովրդի և պետության շահերի պաշտպանություն:

Բայց այդ դեռ բոլորը չէ. Ալանգյազի ռազմաճակատի վարիչի տեղակալ Դավթյանը 1921թ. հունիսի 14-ին N 77 գրությունն ուղղելով Արևիքի զորահրամանատար փոխգնդապետ Մ. Օհանջանյանին՝ պարենավորման պաշտոնյաների և առհասարակ այդ գործի վերաբերյալ, հետևյալն է գրում. «Վերջին հինգ օրվա ընթացքում կարճևանցի Սարգիս Ծատուրյանը, Վարդան Մովսիսյանն և Ծովակ Մովսիսյանը մոտ քսան և հինգ (25) փութ ցորեն են բերել Երասխի մեր ափի պետական պահեստից: Իմ հարցմունքին, թե ո՞վ է տվել նրանց այդ ցորենը և ինչի՞ համարշ. նրանք պատասխանեցին, որ ցորենը տվել են նրանց պահեստի ծառայողները՝ գինու և այլ մթերքների փոխարեն:

Սարգիս Ծատուրյանը մի անգամ կերակուր պատրաստելու համար ստացել է մի փութ ցորեն: Մեկ փութ գինուն տվել են վեց փութ ցորեն: Պահեստի ծառայողները բացառապես Ազեցի գաղթականներ են, որոնց կարճևանցի զինվորությունը ճանաչում են, որպես կեղտոտ և հազար ու մի ավազակություններ արած մարդկանց, որոնքնք սեփական տնտեսություն չունեն, իսկ իրենց ռոճիկով չեն կարող այդպիսի ծախսեր անել, այդպես շռայլ կյանք վարել, հետևապես այդ ծախսերը նրանք անում են պահեստից գողացած ցորենով: Այդ բոլորը պարզ է զինվորության համար, որը շատ խիստ գրգռված է այդ ծառայողների և նամանավանդ պարենավորման նախարար պարոն Տեր-Հակոբյանի դեմ, որ նա չի պատժում գեղծարարներին, և այլ կերպ էլ չէին սպասում, որովհետև դրանք բոլորն էլ նրա բարեկամները և համագյուղացիներն էին: Մեծ բողոք է առաջացրել նաև այն բանը, որ պարենավորման նախարարը իր մոտ գտնված ձին նվիրել է Կարճևանի քահանային և քսան և հինգ ոսկի տալով՝ նորից մի ձի գնել, որի համար ոսկով յոնջա է գնում և տալիս է օրական տաս (10) ֆունտ գարի, իսկ ձին կերակրելու համար ամսեկան հինգ փութ ցորենով հատուկ մի մարդ է պահում: Առհասարակ ժողովրդի մեջ պարենավորման նախարարն անվստահություն է վայելում. զինվորությունն այսօր դեմոնստրատիվ կերպով հայտնեց, որ պետք է պարոն նախարարից ձին խլել և դիրքապահության չգնալ, մինչև որ պարոն Տեր-Հակոբյանը չպատժվի և չհեռացվի պաշտոնից: Զինվորությունը պարզ ասաց, որ նա չի գնում դիրքապահության նրա համար, որպեսզի սոված ժողովրդին ցորենի փոխարեն ավազ բաժանեն, գաղթականությունը սովից կոտորվի Մեղրիում, իսկ պարոն Տեր-Հակոբյանի բարեկամները պետական ցորենով խնջույքներ սարքեն, և նրա ձին օրական տասը գրվանքա գարի ուտի:

Ինձ հաջողվեց առայժմ հանգստացնել զինվորությանը, խոստանալով, որ այդ բոլորը կհաղորդեմ Սպարապետին, որը և վերջ կտա այդ բոլոր գեղծումներին: Ես արգելել եմ այսօրվանից որևէ բան վաճառել պահեստի ծառայողներին»:

Սրանք փաստեր են, աղաղակող փաստեր, որոնց համար կառավարությունը պետք է ոչ միայն Ալեքսան Մովսիսյանին դատի տար և պարենավորման նախարարության բոլոր պաշտոնյաներին, բայց ոչ մի միջոց ձեռք չի առնվել վերջ տալու այդ բոլոր այլանդակություններին, չնայելով, որ ես քանիցս կառավարության անդամների հետ խոսել եմ այդ մասին:

Ինձ համար միանգամայն անհասկանալի պատճառով պարոն նախարարը իր ստացած պետական ցորենը կենտրոնացնում էր երբեմն այնտեղ, ուր բոլորովին կարիք չկար, կամ որի մասին կառավարությունը ոչ մի կարգադրություն չէր արել: Զինվորական տեսակետից ես անհրաժեշտ եմ գտնում հազար փութ ցորեն կենտրոնացնել

փոխգնդապետ Մելիք Օհանջանյանի տրամադրության տակ՝ զինվորների կարիքի համար և այդ բովանդակությամբ դիմում եմ անում՝ պարենավորման նախարարին, բայց նա փոխանակ իմ անհրաժեշտ և անհետաձգելի դիմումը կատարելու, յոթ հարյուր փութ ցորեն է տեղափոխում Շիրվանիձոր գյուղը. Քանի անգամ իր ժամանակին ես խնդրել եմ նրան փոխադրել այդ ցորենը Մեղրի, որ կարիքի դեպքում զորքն առանց հացի չմնա, բայց իմ այդ դիմումները մնացել են անկատար և երբ վերջին օրերը միայն նա կամենում է Շիրվանի-ձորից փոխադրել այդ ցորենը, երբ գաղթականական հոսանքն սկսվել էր, իսկ զորամասերը հետ էին նահանջել Մեղրի և Շիրվանի-ձորից իրազեկ էին այդ դրության՝ նրանք մերժում են պարոն նախարարի կարգադրությունը կատարել, առարկելով, թե այդ յոթ հարյուր փութն էլ իրենց բաժինն է, և այդ ցորենը ընկնում է բոլշևիկների ձեռքը:

Չեմ կարող լռության տալ և պարենավորման նախարարության մի այլ վարմունքը: Լեռնա-հայաստանի գաղթականությունը սկսած հունիսի 27-ից Դուզալ հասնելով՝ ոչ պարեն և ոչ նպաստ չի ստանում ու մի քանի օր շարունակ գաղթականությունը անցնում է դեպի Թավրիզ: Երբ ընկեր Ս. Եղիազարյանը հասնում է Դուզալ (հինգերորդ օրը), այդ ժամանակվանից յուրաքանչյուր գաղթականի տրվում է միանվագ երկու ղռան հացի փոխարեն, որից զրկվում են վերջին օրերի գաղթականները: Վերջին երկու օրը, երբ Դուզալում գաղթականության թիվը համեմատաբար քչացել էր (մեծամասամբ ձիավորներ էին), տեղեկություն է ստացվում, որ պարենավորման նախարարը պահեստից գարի և ցորեն է բաց թողնում՝ ութը գրվանկա յուրաքանչյուր մարդու, նույնիսկ և վարի յուրաքանչյուր ձիուն. ներկայացնում էին ցուցակներ, որոնց մեջ հիշված մարդկանցից շատերն արդեն Թավրիզ էին, և առանց ստուգման, առանց քննության անխտիր բոլոր ցուցակներով բաց էինն թողնում պահեստից փութերով ցորեն և գարի, և որովհետև այլևս ժամանակ չկար աղալու և հաց թխելու, ուստի գաղթականները մի փութ ցորեն էին տալիս թուրքերին՝ փոխարենը՝ 10-ը գրվանկա հաց ստանում: Բայց ինչո՞ւ այդ պահեստի դռներն առաջին օրվանից չբացվեցին երկրորդ գաղթականության համար, ինչո՞ւ միայն վերջին երկու օրը այդպիսի առատությամբ և անխնա ցորեն ու գարի էին բաժանում գաղթականներին, կամ ինչո՞ւ էր պարենավորման նախարարը վերջին րոպեին առաջարկում զինվորական իշխանության՝ ցորենի և գարու պահեստի մնացած հացահատիկը ստանալ, քանի որ նա կարող էր և պարտավոր էլ էր ինձ հետ եկող զորամասի համար այդ նույն շտեմարանից հաց պատրաստել տալ, որ նրանք քաղցած չմնային, որի մասին դեռ հունիսի 9-ին գրել էր ինձ փոխվարչապետ Հովհաննիսյանը Մեղրիից. «Հայտնում եմ նաև, որ աշխատում ենք այստեղ քեզ

հետ եկող զորամասերի 150-200 հոգու հաց պատրաստել, որ զորամասերը հաց վերցնեն»:

Այդ հացը չի պատրաստվում.իսկ պարոն նախարարի պահեստը ստանալու առաջարկի նպատակը շատ պարզ էր. վերջին գաղթականները թողնում էին Դուզալը, իսկ ցորեն և գարին մնում են դեռ պահեստում, որն իր ժամանակին չէին տվել ժողովրդին, այդ հացահատիկը ծախել կամ փոխադրել էին Թավրիզ այլևս չէին կարող, իսկ պարենավորման նախարարին հարկավոր էին ստացական-փաստաթուղթ՝ իր հաշիվները Թավրիզում կառավարությանը ներկայացնելու, և ոչ թե ժողովրդի ու պետության շահը պաշտպանելու: Ինքը՝ պարենավորման նախարարը, նույն օրը իր պաշտոնյաներով պիտի հեռանար Դուզալից, հացահատիկը պիտի երեսի վրա ընկած մնար, իսկ զինվորական իշխանություններն էլ իրավունք չուներ պահեստը ստանալու և դրա պատասխանատվությունը իր վրա վերցնելու, քանի որ Արաքսի այս ափին այդպիսի իշխանություն չկար, այլ կային միայն գաղթականներ, որոնք նույն օրը պիտի թողնեին Դուզալը, և նա սկսում է անխնա ցորենն ու գարին բաժանել, առանց իմանալու թե ո՞ւմ և ինչի՞ համար է տալիս նրան, հարկավոր էին միայն ձևական փաստաթղթեր: Ահա, այս եղանակով էին կատարում պարենավորման նախարարության պաշտոնյաներն իրենց պարտականությունները Լեռնա-հայաստանում, որ մի ամբողջ տարի, առանց պարենավորման նախարարի գոյության, ավելի նեղ հանգամանքներում պատվով է տարել զորքի պարենավորման գործը): Ութ-ից տասը հազար գաղթականությունը մորեխի նման ուտելով, որքան կարողանում էր ձեռք բերել, անցավ Լեռնա-հայաստանով, սպառեց գյուղացու պաշարը, զորքի համար չմնաց շտեմարաններում մի քանի փութ ցորեն անգամ, իսկ պարենավորման նախարարն իր բոլոր պաշտոնյաներով չկարողացավ այդ ամենաառաջնակարգ և կենսական խնդիրը կանոնավոր հիմքերի վրա դնել և քիչ ու շատ ապահովել կռվող ժողովրդի պարենի գործը:

Կարևոր եմ համարում մի քանի խոսք ասել նաև պարենավորման նախարարի հակահետախուզական գործունեության մասին, որ չգիտեմ ի՞նչ տեսակետից նա իրեն լիազորված էր համարում խառնվել զինվորական գործին և այնպիսի կարգադրություններ անել, որ միանգամայն վնաս էին մեր ինքնապաշտպանության գործին: Արևիքի հրամանատար փոխգնդապետ Մելիք Օհանջանյանն իր հունիսի 12-ի N 720 գրությամբ հայտնում է ինձ. «Զեկուցում եմ, որ պարենավորման նախարարի իմ շրջանը ժամանելու հենց առաջին օրից ամեն ինչ կերպարանափոխվել է, ստեղծվել է երկիշխանություն. մի կողմից ես՝ իբրև զորամասի պետ հրամաններ եմ տալիս ինձ ենթակա իշխանությանը, որոնք և կատարում են առանց որևէ պատճառաբանության, մյուս կողմից, պարենավորման նախարարը չգիտեմ ինչո՞ւ, իր պար-

տականությունն է համարում հրամայել և խառնվել իմ գործերին:Օր. ես հայտարարել եմ իմ շրջանը զինվորական դրության մեջ, հրամայված է եղել ռազմաճակատների հրամանատարներին և զինվորական պետերին առանց իմ գիտության, ճակատի կողմից դեպի թշնամին ոչ ոքի բաց չթողնել: Իմ այս կարգադրության հակառակ և իմ բացակայության ժամանակ պարենավորման նախարարը պահանջում է իմ փոխանորդ Մեղրու պարետից անցագիր տալ մի ինչ-որ Ավետիս Դաստակյանի, որն Ագուլիսեցի է և իբրև գաղթական ապրում է Մեղրիում, որը խիստ կասկածելի մի անձնավորություն է, որի որդին՝ Արամ Դաստակյանը մինչև իսկ Օրդուբադի շրջանային հեղկոմի նախագահն է, իբրև թե հետախուզություն կատարելու: Իմ փոխանորդը բացատրում է, որ նա կասկածելի տիպ է, որ օգուտի փոխարեն նա մեզ արջի ծառայություն է մատուցում և հրաժարվում է նրա հրամանը կատարելուց: Այն ժամանակ պարենավորման նախարարը վերոհիշյալ անձին առանց մեր գիտության ուղարկում է Դուզալ-Սիարով Օրդուբադ, որը չի էլ վերադառնում»:

Թողնել իր անմիջական պարտականություններն և խառնվել զինվորական գործին, իբր թե հակահետախուզական նպատակով, մի մարդու ուղարկել Օրդուբադ, որի մասին զինվորական իշխանությունը իր իրավացի կասկածն է հայտնում, դա բոլորովին անհասկանալի է. չգիտեմ, ո՞րն է ավելի վնասակար պետական շահի տեսակետից՝ Ալեքսան Մովսիսյանին, որը մեղադրվում է գողության մեջ, ծերբակալելը, թե հեղկոմի նախագահի հորը՝ Դաստակյանին Օրդուբադ ուղարկելը, որ այնտեղից այլևս չվերադառնա:

Պարենավորման նախարարը հանդես է գալիս երբեմն դատավորի դերում: Նրա կարգադրությամբ ծեծի է ենթարկվում Մեղրիի հիսնապետ Արամ Հովհաննիսյանը միայն նրա համար, որ իր, նույն նախարարությանը, ամիս ու կես առաջ ներկայացրած տասն և յոթը տիկերի փողն է ուզում ստանալ, նախորոք որոշված պայմանով (յուրաքանչյուր տիկին մի ռուբլի արծաթ դրամ) նախարարությունը ստանում է տիկերը, գործածության մեջ է դնում և ամիս ու կես ձգձգելուց հետո կամենում է ազատվել նրանից, տալով մի տասանոց ոսկի դրամ, որից երբ Արամը հրաժարվում է՝ արժանանում է ծեծի:

Եվ այս ամենը տեսնում է Լեռնահայաստանի ժողովուրդը, տեսնում է, որ առաջ իրենց կառավարիչները չեն եղել նախարարներ, բայց և չեն եղել պանամաներ, չի եղել իշխանության ապարատի կատարյալ քայքայում, չի եղել Բազարչայի թալան, երկիրը ոչ մի վալյուտա չի ունեցել, բայց ժողովուրդը ապրել է, թեև դժվար, բայց գոհ սրտով: Այժմ կա վալյուտա, կան թվով ավելի շատ գործիչներ՝ բայց դժբախտաբար այդ վալյուտան չկարողացավ նպաստել ժողովրդի տնտեսության բարվոքմանը, այլ ընդհակառակը, դա ծառայեց ժողովրդի շահերին ի

վնաս՝ հնչյուն և սովետական դրամի գործածությունը մտցնելով և մթերքների գները սոսկալի չափով բարձրացնելով: Ահա թե որտեղից է առաջանում ժողովրդի լքման և իշխանության հեղինակության վարկաբեկումը:

Վերջացնելով իմ ասելիքը, ճշմարտությունը պահանջում է խոստովանել, որ Լեռնա-հայաստանը կատարեց իր պատմական միսիան. դա Հայաստանի Հանրապետության այն միակ և եզակի երկրամասն էր, որ զերծ մնաց կոտորածից ր ավերումից ոչ թե միայն Ադրբեջանի հետ վարած բոլոր կռիվների ընթացքում, այլև բոլշևիկների սոսկումներից ու սրածությունից շնորհիվ իր ժողովրդի անկախ ոգուն, հայրենասիրության և ազատ ու անկախ կամքին: Լեռնա-հայաստանը մինչև վերջին րոպեն մայր երկրի համար մնաց այն փարոսը, դեպի ուր դիմելով Հայաստանի գաղթականությունը՝ հնարավորություն ունեցավ իր գոյությունը փրկել, կարողացավ սոսկալի մղձավանջից իր լքված ուժերը կազդուրել. նա իր անօրինակ ապստամբությամբ և ժամանակավոր անկախությամբ նոր հույսեր ներշնչեց մեր ժողովրդին, իսկ իր այդ նույն անկախությունը զոհ բերելով՝ Երևանից դեպի իրեն դիմող գաղթականության կյանքն ապահովեց: Մինչև վերջին րոպեն նա հավատարիմ մնաց իր ընտրած հրամանատարությանն և կառավարիչներին, մնաց այն համոզմամբ, որ տարիների ընթացքում մենք խոսքով և գործով ներշնչել էինք նրան. երբեք չդավաճանել հայրենի երկրի անկախությանը, երբեք վիզ չթեքել Ադրբեջանին, ինչ անվան տակ էլ նա երևան գալու լինի: Սկսած Սիսիանի նահանջից, երբ մեր երկրի ժողովուրդը ինքը նկատում էր, որ մենք հեռանում ենք իրենից, նա ոչ թե մեզ չվիրավորեց, մեր թիկունքից չխփեց, այլև, զինվորությունը հարյուրներով հետևեց մեզ, չկամենալով բաժանվել իր հարազատ հրամանատարությունից և մենք ահագին ջանք գործադրեցինք դրանց հետ դարձնելու իրենց գյուղերը:

Ի լրումն այդ բոլորի՝ Գենվազի զանազան շրջաններից Մեղրիում հավաքված գյուղա-ցիությունը լացով ու արտասունքով հրաժեշտ տվեց մեզ՝ իր հրամանատարությանը: Լեռնա-հայաստանից հեռացել են միայն գործիչ-անհատները, բայց հայրենի երկրի անկախության իդեան, նրա ներշնչած գաղափարը մնացել է անխախտ այդ հավատարիմ և կենսունակ ժողովրդի մեջ:

Եզրափակելով իմ բերած բոլոր փաստերն ու առարկություններն, հայտնում եմ, որ Լեռնա-հայաստանի անկման գլխավոր պատճառներն են.

1. Քաղաքական այն նոր կոնյուկտուրան, որ ստեղծվեց Լեռնա-հայաստանում Երևանից եկած գաղթականության շնորհիվ:

2. Բարոյական այն լքումն ու հոգեկան անկումը, որ առաջ բերեց գաղթական սպայությունն ու զինվորությունը իրենց պարտվողական և խուճապային հոգեբանությամբ:

3. Մեր վարչական ապարատի ժողովրդի սրտին ու մտքին անհարազատ լինելը:

4. Ռազմամթերքի պակասությունը:

5. Պարենավորման խնդրի շուրջը ստեղծված պանաման:

Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թթ. 109-162:

ՀՀԴ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆԻՆ

28 օգոստոսի 1921թ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԵՎՍ ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ա. Մի պատերազմող կողմի, մի ժողովրդի մասին ստեղծված բոլոր կարծիքներից ճշմարտության մոտիկն և ավելի անաչառն պիտ համարել այդ երկրի թշնամիների կարծիքն և այդ կարծիքով էլ պիտի որոշել նրա բարոյամարտական տոկունության աստիճանը: Խոսում եմ Լեռնահայաստանի մասին և գիտակցորեն հայ մտավորականությունն ու նրա կարծիքը վկայության չեմ կանչում, որովհետև նրա մեծագույն մասը, ինչպես ամբողջ զինվորականությունը ոչ բարեկամ էր ոչ էլ թշնամի, այլ սոսկ կարմիր կացնից հալածական ու ահաբեկված ճամբորդներ, որոնց վիճակված էր գալու և անցնելու Լեռնահայաստանի վրայով դեպ օտար հորիզոններ:

«Լեռնահայաստանի մեր դեմ մղած կռիվները հերոսական են և զարմանալի, բայց քաղաքականապես անհեթեթ... ամիսներ առաջ Թավրիզից, Մոսկվայի այդ կարծիքի մասին գրում էր ընկ. Ս. Վրացյանը: Այլ կարծիք ունենալ չէր կարող Մոսկվան, որքան էլ իրեն անհաշտ զգար դեպի մի ժողովուրդ, որ կտրված աշխարհից, առանց դրսի օգնության հույսերի՝ արհամարհելով թշնամու թվական ու տեխնիկ գերազանցությունը, նրա հետ չափվում է ամբողջ մի տարի և աննախընթաց հաջողությամբ ջարդում ու գերում է նրա ռուս, հայ, թաթար և օսման զորամասերը, խլելով նրանցից 12000-ի չափ զոհեր, 3-4000 գերիներ, 200-ից ավելի գնդացիրներ, թնդանոթներ, դրոշակներ, ռազմամթերք և այլ պատերազմական ավար: Այլ կերպ խոսել չէր կարող Մոսկվան, որի, մասնավորապես ռուսական զորքերը, ահաբեկված ու շշմած Լեռնահայաստանի տարերային հարվածներից, անպարտելի համարելով այդ երկիրը, հրաժարվում էին կռվի դուրս գալ նրա դեմ և 100-ներով բանտարկվում և գնդակահարվում իրանց հրամանատարների կողմից, ինչպես այդ տեղի ունեցավ անցյալ տարի Գորիսում: Մուսուլմանությունը, թաթարներն և օսմանցիք մի բան գիտեին Սյունիքի մասին, որ նա անպարտելի է, որ Աստված է օգնում այդ երկրին, որի համար ամեն ինչ կարելի է, որը հաղթում է ամենքին և նման լեգենդներ: Էդիֆներն ու Խալիլ փաշաները, Նուրին և պրինց Ղաջարները, զորավարներ Մեխմանդարովներն ու Շիխլինսկին էին ստեղծել այդ կարծիքը՝ Զանգեզուրի մասին: Այդ բոլոր փաշաներն ու զորավարներն իրանց բախտն էին փորձել՝ Սյունիքը գրավելու փորձն արել, բայց միշտ էլ իրենց զորքերի կեսից ավելին, կենդանի թե սպանված,

մեր ձեռքին թողած խուճապորեն Աղդամ ու Բաքու էին նահանջել: Իսկ երբ մենք էինք հարձակվել՝ բախտը միշտ էլ ժպտացել էր մեզ և միշտ էլ հաղթել ու հաջողել էինք հռչակավոր Գեղվա-Ձորը, երբեմնի Բաղաց երկիրը, որին Սյունիքի հայությունը յոթը գլխանի վիշապ էր անվանում, որովհետև այդ հանցավոր ձորը հայկական յոթը շրջանների (Գողթանի, Օխչիձորի, Գենվազի, Ղափանի, Տաթևի և Դարաբասի ձորերի և Սիսիանի) հայությունը վերջին յոթը տարիների ընթացքում ահ ու սարսափի տակ էր պահում, տեղի տվեց իմ պայթուցիկ տակառների և գործադրած լեռնային կռիվների տարերային ձևերի առաջ: Այդ անսպասելի հաջողությունից հետո, երբ արդեն ինձ համար ստեղծվել էր ցանկալի հոգեբանական մթնոլորտը, մեկը մյուսի հետևից մաքրում եմ Բարգուշատի, Հաքյարուի, Խանլըղի, Ջավանդուրի և Գողթանի թուրքական շրջանները, հրդեհի ու ավերածության մատնելով ավելի քան 160 գյուղ: Ահա թե ինչպես ստեղծվեց Նոր Սյունիքն և թշնամիների կարծիքը այդ երկրի անպարտելիության մասին: Բայց միայն մեր թշնամիների մեր երկրի մասին ունեցած կարծիքի մեջ չպետք է փնտրել, Սյունիքի ռազմաբարոյական ուժը: Մուսաֆաթական Ադրբեջանի դեմ տարած մեր նոր հաղթությունները մի նոր դիմադրություն էին ստեղծել, նոր շունչ, նոր ոգի ներշնչել այդ ժողովրդին, որն ավելի խրոխտ ու ավելի անպարտելի էր դարձրել Սյունիքը: Լեռնահայաստանի բոլոր գյուղերում կազմակերպված էին Դավիթ-բեկյան ուխտեր, ժողովրդական վաշտեր, որի ամեն մի զինվորից պահանջվում էր՝ *բարձր հայրենասիրություն, անձնվիրություն, անշահասիրություն, խստաբարոյություն, ասպետականություն, քաջություն և հերոսական մահ*: Բոլոր գյուղերում կառուցված էին միջնաբերդեր, որոնք կոչվում էին այս կամ այն ազգային հերոսի կամ նահատակի անունով՝ Խեչոյաբերդ, Քեռիաբերդ... Երկրում գոյություն ուներ զինվորական դիկտատուրա: Կռվի հրամանը վաշտերի կողմից ընդունվում էր որպես քեֆի ու խրախճանքի հրաման և երկրի ռազմական ուժերն այս կամ այն ուղղությամբ շարժվում էին մի չտեսնված խանդավառությամբ: Կռվի և հաղթելու արվեստն իր նոր և տարերային ձևերով յուրացված էր բոլորի կողմից: *Կռվի դուրս գալը հաղթել էր նշանակում, որովհետև երկու տարվա ընթացքում Սյունեցին չէր տեսել և ոչ մի պարտություն*: Անկարելիության հասնող դժվարինը գրեթե գոյություն չուներ այդ ժողովրդական բանակի համար: Մահաշունչ ձմեռվա կեսին նա Ղափուջուղով՝ Ղափանի այդ փոքր Մասիսով, որը մոտ 13000 ոտնաչափ բարձրություն ունի, անցնում է Գողթան և ավերածության մատնում թշնամու 12 գյուղերն, որով և ռազմագիտական հնարավորություն է ստեղծում Գողթանի մի բուռն ժողովրդի համար՝ մնալու կպած իր հայրենի հողին:

Նա հարյուր վերստերով կտրվում է իր բազայից, իր ծննդավայրից և օգնության հասնում եղբայրական Ղարաբաղին՝ ապահովում

նրա ինքնապաշտպանության գործն և վերջին պահին հեշտացնում արարատյան զորքերի նահանջը: Վերջին երեք տարին արտաքին աշխարհի հետ կապ չունենալու պատճառով Սյունիքի ժողովրդական վաշտերը, ինչպես և ամբողջ ժողովուրդը, ապրել է կիսաքաղց, կիսատկլոր և հաճախ բոբիկ, բայց և այնպես տրտունջ և դժգոհություն չի լսվել այդ երկրում: Զինված գյուղացիությունը շատ հեռու է եղել կաստայական զորք լինելուց, բայց գիտակցական դիստիպլինան նրա մեջ եղել է օրինակելի. *վաշտապետն ու զինվորը կռվի ժամանակ եղել են հրամանատար և հրամայվող, իսկ խաղաղ պայմաններում՝ գաղափարակից ընկերներ: Զինվորը, ինչպես և ամբողջ ժողովուրդը, սիրել ու հարգել է իր ղեկավարներին, որովհետև տեսել է, որ նույն չարքաշ ու պարզ կյանքով են ապրել վերջիններս: Երկիրն վալյուտա չի ունեցել: Ոսկի չի եղել. նյութական վարձատրություն չի ստացել ո՛չ զինվորը և ո՛չ էլ վաշտապետը: Հրամանատարության վարձատրությունը եղել է զուտ բարոյական՝ ժողովրդի և զինվորության սեր*: Երկիրը հայտարարված էր պատերազմական դրության մեջ, սահմանված էր մահապատիժ՝ դավաճանության, լրտեսության, պրովոկացիայի և կաշառակերության համար: Երկիրն ունեցել է քաղաքացիական տարրականացած իշխանություն: Եվ ո՛չ մի ավելորդ պաշտոն, որը կապված չի եղել տքնության և ստեղծագործ աշխատանքի հետ: Եվ ո՛չ մի պաշտոնյա, որը չի վայելել ժողովրդի վստահությունը: Քաղաքական խիստ խաչաձևող հոսանքներ չեն եղել: Ժողովրդի ֆիզիկական գոյության և նրա անկախության ապահովությունը՝ ահա այն գերագույն նպատակը, որին այնքան համերաշխորեն փարված են եղել ազգաբնակության բոլոր խավերը: Ահա, ընդհանուր գծերով, Ազատ ու Անկախ գծերով Սյունիքը, մինչև Արարատան Հայաստանի երկրորդ անկումն և գաղթականության մուտքն այդ երկիրը:

Բ. Երկրորդ անգամ ընկավ Արարատյան Հայաստանը և դիրքերը փոխվեցին: Ապստամբ Սյունիքը, որ դեռ 1920թ. դեկտեմբերին Տաթևի համագումարում հայտարարված էր ինքնավար, և որպես այդպիսին պիտի մնար, մինչև որ քաղաքական հնարավորություն կունենար միանալու մայր երկրին՝ Արարատյան Հայաստանին - հանկարծակի եկած իր սահմաններից ներս ընդունեց տասնյակ հազարի հասնող մի խուճապահար մասսա՝ *երևանյան գաղթականությունն ու զորքը, որը անմարտունակ լինելուց զատ, իրենից ներկայացնում էր մի կատարյալ քաոս՝ ընդունակ հեղեղի պես իր ճանապարհին քշելու տանելու ամեն ինչ*: Այդ զինված մասսան, որը ճանաչում էր մի քանի ղեկավարների կամ ճիշտը ոչ ոքի, դեռ Սիսիանի սահմաններին չհասած արդեն կատարել էր իր առաջին տխուր գործը - *լքում ու խուճապ ստեղծելով Վայոց-Ձորում թշնամուն էր հանձնել այդ կարևոր շրջանը՝ Սյունիքի նախադուռը*:

Գաղթը կրում էր տարերային, անկազմակերպ բնույթ: Առանց Հայաստանի փրկության կոմիտեի, կամ հրամանատարության թույլտվության որոշ զորամասեր ինքնագլուխ անցնում էին Սիսիան և շարժվում դեպի հեռուներ: Աչքի ընկնող հրամանատարների մեջ չկար կոնտրակտ ու համերաշխություն: Կար ընդհանուր հրամանատար, կար ընդհանուր ղեկավար, բայց նա անվանական էր, զորամասերը Բազարչայ հասնելուն պես արևմտահայերի հրամանատարությունը հայտնեց ինձ, որ նա Արևմտյան ճակատում մնալ չի կարող չցանկանալով աշխատել Կուռոյի և նմանների հետ: Մարտիրոսը ինչպես և մի քանի ուրիշ խմբապետներ նույնպես չուզեցին մնալ և հեռացան երևանյան զորքերի հրամանատարական կազմից: Պակաս չափով քաոսը չէր ուժեղացվում Փրկության կոմիտեի արևմտահայ անդամների (որոնք միաժամանակ ինչ-որ զինվորական խորհրդի անդամներ էին) անհաշտ վերաբերմունքը դեպ այդ կոլեկտիվը: Մխիթարական չէին և ինտելիգենտ ուժերի ինչպես և մեր կուսակցական ընկերների մի մասի փոխհարաբերությունները: Դժգոհ էին բոլորը. քննդատում էին բոլորը. մեղադրում ու մեղադրվում՝ բոլորը: Մեղմ ասած՝ քաոսն ու լքումը կատարյալ էր: Մխիթարական ու հուսատու ոչինչ չկար այդ՝ հազարների հասնող, տեղահան եղած գաղթականության մեջ, բացի այն, որ նա գտնվում էր վտանգի սֆերայից դուրս, որ նա փրկված էր: Սյունիքն ունեցավ մի նոր ճակատ ևս՝ Արևմտյան ճակատը: Սյունիքի շուրջը ստեղծվեց մի շրջագծային ռազմաճակատ, որի վրա նա պիտի պաշտպանվեր թշնամուց, իր ներսում ունենալով տասնյակ հազարների հասնող տարերայնորեն խուճապային, բարոյալքված և բարոյալքող, մասամբ զինված, մասամբ անզեն մի մասսա: Սպառնական լինելու չափ բարդացել էր Սյունիքի դրությունը: Այդ բանը տեսնում ու զգում էր գաղթ և պանիկա չտեսնող Սյունեցին և ազդվում էր: Գաղթականության խուճապ և լքում առաջացնող ազդեցությունը պետք էր չեզոքացնել, տեղական մասսաները պետք էր հեռու պահել այդ ազդեցությունից: Բայց ինչպե՞ս: Այդ երկիրը ոչ լիք պահեստներ ուներ, ոչ միջոցներ: Դա ինքը կիսաքաղց կյանք էր քարշ տալիս, բայց և այնպես պետք էր արարատյան ժողովրդի այդ տեղահան եղած մասին մի կերպ կերակրել, տաքացնել, հնարավորություն տալ հանգստանալու և անցնելու Պարսկաստան: Եվ յոթ հազարի հասնող գաղթականությունը տրվում է գյուղեր պատսպարվելու և սնունդ ստանալու համար: Լեռնահայաստանի բոլոր շրջանները լցվում են գաղթականներով և տեղացի ժողովուրդը լսում է դառնացած գաղթականության պատմությունը այն մասին, որ Երևանը հանկարծ, անասելիորեն թողնելու շնորհիվ չեն կարողացել հետներն ոչինչ վերցնել, որ բոլորը համոզված էին, որ Բաշ-Գառնիում զորքերը կվերակազմվեն, ուշքի կգան ու նորից կվերադառնան Երևան, որ կռվողներ կային, բայց կռվեցնողներ չկային, որ այս ինչը, այնինչը

քանդեցին Երևանն ու իրենց տները և այլն և այլն... Անզեն գաղթականությունը մնում էր և անցնում խաղաղ, իսկ զինված մասը բացի լքումն ու հուսահատությունը՝ առաջացնում էր նաև դժգոհություն: Սկսվում է գետանցը: Որպես հայ մարդ ամաչում եմ հիշատակել այն բոլորը, որ տեղի ունեցավ Արաքսի ափում: Չնայած որ իմ կողմից բազմիցս հայտարարված էր, որ նախ անցնելու են վիրավորները, հիվանդները, կանայք և ապա ամբողջ գաղթականությունը, բայց ով որ ճարպիկ էր, ով որ կալյուտա ուներ՝ անցնում էր հերթից դուրս. կաշառելով ֆալաչիներին: Որովհետև, պարոնը շարժման մեջ դնել չկարողացան մեր ճարտարապետներն ու մասնագետները, ճիշտը, բարեխղճորեն չկարողացան գործել՝ այդ փրկարար նավը գլուխ բերելու համար՝ գաղթականությունը ստիպված եղավ երկար մնալու Լեռնահայաստանում և իր կոշմարի տակ երկար պահելու տեղական ազգաբնակությանը: Բացի այդ, գաղթականների՝ ֆալաշներով Արաքսն անցնելը մեզ զրկեց նաև Լեռնահայաստանի զորքի և սովամահության մատնված ժողովրդի համար Պարսկաստանից հացահատիկ փոխադրելու հնարավորությունից: Ավելի քան երկու ամիս Լեռնահայաստանի ամբողջ ադմինիստրացիան, հրամանատարությունը, անգամ ես թողած մեր անմիջական պարտականությունները, զբաղված էինք միայն և միմիայն գաղթականության փոխադրության գործով: Միայն Հայաստանի փրկության կոմիտեի անդամներն էին, որոնց ընկեր Վրացյանը իր մի նամակում իրավացիորեն նախատում է այդ առթիվ, և երևանյան զորքի հրամանատարությունը, որ հեռու էին այդ գործից: Չերկարելու համար վերջացնում եմ խոսքս Պարսկաստան անցնող գաղթականության և նրա բարոյալքող ազդեցության մասին և անցնում Բազարչայում մնացող երևանյան զորամասի խնդրին, որը, ճիշտը՝ որի ղեկավար տարրը, չնչին բացառությամբ, ամենամեծ չարիքն, իսկ վերջը Լեռնահայաստանի անկախության գերեզմանափորը դարձավ: Ճշմարտությունը պահանջում է ասել, որ երևանյան զորքն, որպես այդպիսին, այսինքն որոշ տվյալներով և գիտակցական դիստիպլինայով մի դրոշակի տակ միացած զինված ուժ չկար: Դա թշնամուց պարտված, հալածական և իր հանապազորյա հացը ճարելու մտահոգությամբ, մի տեղ, մեկի թևի տակ հավաքված մի մասսա էր և ավելի կապված խմբապետներին, քան սպայությանը, որովհետև մեծամասնականների տիրապետության օրոք խմբապետները հալածվելիս են եղել, որպես որոշ քաղաքական հոսանքի պատկանողներ, իսկ սպայության պատկառելի մի մասը մնացել էր ծառայության մեջ և քաղաքականապես հանդուրժելի համարվել, որովհետև թշնամու շարքերում ապստամբ ժողովուրդը հայ սպաներ շատ էր տեսնում իսկ խմբապետ և ոչ մի հատ: Եվ հենց այդ տեսակետից Սմբատի կամ մի այլ խմբապետի ապստամբ ուժերի սպարապետ նշանակելն ըստ իս ավելի նպատակա-

հարմար կլիներ, քան Կուռոյին, որը ժողովրդական ուժեր չէր ղեկավարել, ծանոթ չէր պարտիզանական կռիվներին և ամենակարևորը, ինչպես Մարտիրոսն և շատերն են պնդում, որ ապստամբությանը մասնակցել է ակամայից: Փոխ-գնդապետ Կուռոն - դա ընկեր Դրոյի քաղաքական հոգեզավակն էր, որը այլ օրենտացիա քան ռուսականը՝ ունենալ չէր կարող: Այդ պարոնը բոլշևիկների դեմ չկռվեց նաև Ղարաբաղում, Զանգեզուրում 1920 թ-ին: Ինձ չէր զարմացնում այն, որ նրա քթի տակ Բազարչայում, որ վերածված էր մի նոր Արշակավանի, հայ սպայության այլասերված ու ապազգայնացած տականքը պարտվողականություն էր քարոզում ու վալյուտա ստեղծում, որ նա այդ երկու մալական գյուղերը, որոնք մինչև այդ ենթարկվում էին Սիսիանի ադմինիստրացիային, որովհետև վարչական տեսակետից այդ շրջանի անբաժան մասն էին կազմում, միայն իր իրավասության տակ է հայտարարում և գիտակցորեն չի կատարում իմ՝ այդ երկու գյուղերի տեղահանության հրամանը, մինչև որ այդ գյուղերից փախած մալականները միացած մեծամասնականներին և թուրքերին, կպաշարեին Դարալագյազն և կվտանգեին Սիսիանի դրությունը:

Ամփոփում եմ իմ ասածներս փոխ-սպարապետ Կուռոյի մասին.

1. Կուռոն պարտվողական պրոպագանդայի միջոցով մինչև Վայոց-Ձորի վերջին օպերացիան բարոյալքեց, թունավորեց երևանյան զինվորությունն և արհեստականորեն ստեղծեց Դարալագյազի կատաստրոֆան:

2. Դարալագյազն առաջին անգամ թողնելու պատճառը նույնպես այդ պարոնն էր, որովհետև նա, զորքը գաղթականությունից չէր բարեհաճել գոնե յոթից-տասը վերստ հետ պահել, մինչև որ գաղթականությունը կգար, կանցներ Սիսիան, որից հետո միայն ինքը ռազմական կարգով կմտներ Դարալագյազ:

3.Դարալագյազի օպերացիան սկսվելուն պես նա օրվա ընթացքում մի քանի անգամ դիմում էր Ղափանի, Գենվազի՝ հրամանատարներին, որ իր կնոջն անմիջապես փոխադրեն Պարսկաստան և այսպիսով արհեստականորեն խուճապ ստեղծում:

4. Նա իր շտաբը թշնամու կոնտր գործողություններից ընդամենը մեկ օր առաջ Քեշիշքենդից փոխադրում է Բազարչայ և անտեր ու անկոնտրոլ թողնելով շրջանն ու զորքը, ստեղծվում է կատաստրոֆա:

5. Գերի վերցրված մեծամասնականներից 400 հոգու զինում է առանց իմ թույլտվության և հակառակ Արևմտյան ճակատի կոնտրռազվետկայի պետի կամքին գրում է երևանյան զորքի մեջ և թունավորում, դեմորիլիզացիայի ենթարկում վերջինը:

6. Նա միայն երկրորդ օրն է հայտնվում Այնազորում, երբ նա ինքը իմ՝ իրեն տված դիստիպլինայի ժ-12-ի պետք է բոլոր կռիվները ղեկավարեր անձամբ:

7. Անտեղի ու դավադրական նահանջի ամբողջ պատասխանատվությունը ընկնում է Կուռոյի վրա, որովհետև նա պիտի վարվեր իրեն տրված թիվ 12-ի դիսպոզիցիայիի հիման վրա. Յապոնը իրավունք չպետք է ունենար նահանջի խայտառակ հրաման արձակելու, այն էլ այն ժամանակ երբ զորքերի մեջ կռվելու տրամադրություն կար, երբ հրամանատարական կազմի դավաճանությունից հետո զինվորությունը հրաժարվում էր Բազարչայ վերադառնալ, նահանջել:

8. Սիսիանի զորամասից 100 հոգի վերադարձնելու և այսպիսով այդ զորամասի թուլացնելու գործում, մեղավորը նույնպես Կուռոն է:

9. Կուռոն չի կազմակերպում կռիվը, չի ոգևորվում կռվով ու ոգևորում, չի ղեկավարում, չի կռվեցնում, ինչպես վկայում է իր նամակում Արշ. Հովհաննիսյանը, այլ մեքենաբար հրամանագիրն ստանում և հանձնում է Արևմտյան ճակատի պետին: Այս ձևով միայն խայտառակորեն պարտվել կարելի էր, ինչպես և եղավ:

10. Կուռոն քանիցս հայտարարել է Արշակ Հովհաննիսյանին, որ ինքը կուսակցական չէ (որ ինքը դաշնակցական չէ), որ չի ուզում և չպետք է աշխատի (նամակ N 5,1921թ.,12.05): Այդ առթիվ Արշ. Հովհաննիսյանը դիմում է կառավարությանը, որ վերջինս հայտնի սպարապետին, այդ պարոնին հեռագրելու համար (նամակN5 1921թ.12.05):

Կուռոյի և սպաների ոմանց վերաբերմունքը երբեմն ցինիկության էր հասնում: Կուռոն վերջնագրի ձևով պահանջում է նախարար Արշ. Հովհաննիսյանից ազատել իրեն, որ անցնի Պարսկաստան, սպառնալով պատասխանին սպասել չորս օր և այդ արվում էր կռվի շրջանում: Կռվի ամենավճռական մոմենտին կորնետ Նավասարդյանը հրաժարվում է օգնության հասնել սիսիանցիներին և պահանջում է 1.[05] ամսվա արձակուրդ ոչ թե իրեն համար այլև ամբողջ դիվիզիայի. մի զորամաս, որ ամբողջ 3 ամիս 2 մալականների գյուղերում ապրել էր շռայլության մեջ:

11. Դարալագյազի կատաստրոֆայից հետո, Հայաստանի կառավարության որոշմամբ ես հեռացրել եմ Կուռոյին փոխ-սպարապետի պաշտոնից, նշանակելով քննություն Դարալագյազի դավաճանության առթիվ: Պատշաճ գրությունները Կուռոյին իր պաշտոնը հանձնելու պատրաստված ու տրված են եղել նախարարներ Ս. Եղիազարյանին և Մելիք-Յոլչյանին: Սակայն ինչ-ինչ պատճառներով նա շարունակում է մնալ Դարաբասում Ս.Եղիազարյանի մոտ, մինչև Տաթևի էվակուացիան, որից հետո գալիս է Ղափան և անցնում Պարսկաստան առանց իմ թույլտվության: Այդ օրվանից նա հաշվվում է դասալիք:

12. Կուռոյի հրամանները չէին կատարվում: Կորնետ Նավասարդյանին հրամայվում է իր դիվիզիայով մնալ Ղուշչի-Բիլագում և ապահովել Գնդևազի աջ թևը: Վերջինս կարևորություն չտալով այդ

հրամանին, իր հեծելախմբով շարժվում է ուղղակի դեպի Բազարչայ, վտանգելով Գնդեվազի դրությունն և ստիպում մեր ուժերին թողնելու Սիսիանի նախադուռն կազմող այդ կարևոր ռազմագիտական կետը:

13. Կուռոյին ես նշանակել էի ինձ օգնական՝ հակառակ իմ կամքի, որվհետև, Լեռնահայաստանի ժողովրդի հիշողության մեջ դեռ թարմ էին Կուռոյի պանիկական նահանջները Ղարաբաղից և Զանգեզուրից, հարգած լինելով ընկեր Ս.Վրացյանի առաջարկը:

Գ. Թշնամու հացին պակաս յուղ չքսեց նաև Արշակ Հովհաննիսյանը՝ նորաստեղծ Հայաստանի կառավարության փոխ-վարչապետը, Մինքենդի 2000-ի հասնող թուրք քոչվորներին զիջելով Լեռնահայաստանի ամենափափուկ և կարևոր ճակատներից մեկը: (Այդ ճակատը, որպես ռազմագիտական խոշոր նշանակություն ունեցող կետ, իմ կողմից ուսումնասիրված ու գնահատված է դեռ 1920թ. փետրվարին: Իմ բապորտը այդ առթիվ գեներալ Ղազարովին N 7) եթե այդ վտանգավոր և աղետալի քայլը արվում էր միայն նրա համար, որ ժողովուրդը հասկանա, որ այժմ Հայաստանի կառավարություն կա և ոչ թե Սյունիքի սպարապետություն՝ դա առնվազն ոճիր էր, հանցանք: *Որպես ի՞նչ էր 50- միլիոն ռուբլի հայկական չեկերով ծախում այդ շրջանը: Ճակա՞տ: - Դա դավաճանություն կլիներ: Արոտատեղինե՞ր՝ - այդ դեպքում հարկավոր էր հարցնել Սիսիանի ժողովրդին,* պետք էր վերջինիս համաձայնությունը, որովհետև ամբողջ երեք տարի նա այդ արոտատեղիի, ճակատի համար էր կռվել: Փոխ-վարչապետը գիտեր, որ Լեռնահայաստանում ամեն մի թիզ հողը ճակատ էր մեզ համար, բայց և այնպես չբարեհաճեց ծանոթանալու այդ վաճառելիք շրջանի հետ, որ իրեն համար պարզ լիներ, թե ի՞նչ է զիջում և կարելի՞ է այդ քայլն անել առանց վտանգելու մեր երկրի ռազմագիտական դրությունը: *Փոխ-վարչապետի կատարած ծառայությունը թշնամու համար, որքան հեշտացրեց թշնամու մարտական խնդրի կիրառումը, այնքան ծանր կացություն ստեղծվեց մեր երկրի համար: Սիսիանի և Զանգեզուրի ռազմագիտական բանալին հիսուն միլիոն ռուբլով իր ձեռքը ձգելուց հետո, թշնամին հերթով բանալ սկսեց Լեռնահայաստանի բոլոր դռները:* Մի անգամ միայն, մի անգամ էր հարկավոր վիճելի շրջանը տեսնել համոզվելու համար, որ այդ շրջանի կորուստը հավասարազոր է Սիսիանի և բուն Զանգեզուրի կորստին: Փաստը կատարված էր՝ Սիսիանի և Գորիսի բախտը որոշված էր: Լեռնահայաստանի կեսից ավելին թշնամու ձեռքին էր:

Դ - Թշնամին բախտավոր էր: Նրա ծրագիրները գիտակցորեն հեշտացնում էին պարենավորման նախարարի ավազակաբարո պաշտոնյաները, որոնք Պարսկաստանից հացահատիկ էին փոխադրում զորքի և գաղթականության պետքերի համար: Պարսկական Դուզալ գյուղում և Արաքսի մեր ափում պարենավորման նախարարի պաշտոնեության կողմից կազմակերպված պանաման Սյունիքի ժողովրդի համար կմնա մի դավաճանական ակտ, որը կարծես թշնամու ցանկությամբ ամենահարմար ժամանակին եկավ հարվածելու Լեռնահայաստանի ժողովրդի դեպի իր նոր ստեղծված կառավարության հավատն ու այդ կառավարության հեղինակությանը: Ճշմարտությունը միայն հարգած կլինեմ, եթե այդ խայտառակ պանաման անվանեմ ոսր во время чумы: Այն ժամանակ, երբ Լեռնահայաստանի ազգաբնակության 90% խոտով և արմտիքով էր կերակրվում, երբ սովամահությունն օրեցօր ընդունում էր մասսայական բնույթ, երբ պետության համար Վայոց Ձորից հրանոթներ (снаряды). Զանգեզուրցին սովի՞ց մեռնում էր ճանապարհին, և հրանոթների փոխարեն տարաբախտ հայ գյուղացու սառը դիակն էր հասնում Գորիս՝ այդ ժամանակ անհոգի սրիկաների մի խմբակ իր գրպանն էր հաստացնում ի հաշիվ սովի և խորհրդային զորքերի դեմ կռվող Սյունեցիների: Ալեքսան ու Գևորգ՝ ահա՝ այն հրեշները, որոնք ավելի քան երկու ամիս շահատակեցին Արաքսի այս և այն ափում: Ինչե՞ր, ինչե՞ր ասեք որ չկատարեցին պարենավորման նախարարի հովանավորությամբ այդ ամենակարող պաշտոնյաները: Գողանալ, խաբել ցորենը կշռելու, քաշի մեջ, պետական ցորենով կենսամթերքներ ու խմիչքներ ձեռք բերել, վաճառել, թալանել Պարսկաստան անցնող գաղթականներին, թույլ տալ, որ մի շարք մութ անձնավորություններ անցնեն պարսկական ափը, հեշտացնել Օրդուբադի մեր թշնամու լայն տեղեկատվություն ստեղծելու գործը, գաղթականներին տրվելիք երկու դռանի փոխարեն շատերին մի դռան, ոմանց կես դռան տալ, իսկ շատ-շատերին էլ՝ ոչինչ չտալ և ճանապարհ ձգել դեպ Թավրիզ, զանազան դասալիք սպաների և պաշտոնյաների կաշառքով անցկացնել Պարսկաստան, անցնող գաղթականներից վերցնել որպես թորփախ փուլի, ոսկի և արծաթ՝ երբ ինքը, կառավարությունը վճարում էր անցնող ամեն մի գաղթականի համար, խաների հետ գործարքներ սարքել, բարձրացնելու ցորենի գինն և նման հազար ու մի շառլատանություններ: Եվ այդ բոլորը պարենավորման նախարարի քթի տակ, նրա գիտությամբ և այդ բոլորը զայրացած ժողովրդի քննադատության առարկա: Ժողովուրդը խոսում է, քննադատում, հայհոյում, սպառնում, վիրավորանք հասցնում նախարարին, ոչինչ, թող այդ այդպես լինի, միայն թե Ալեքսանը, Գևորգը և ընկերությունը շարունակեն իրենց «պետական» գործը: Վիրավորանք ստանալուց հետո պարոն նախարարը դիմում է կառավարության ընդունելու իր հրաժարականը, կամ պատժելու իրեն վիրավորողներին: Կառավարությունը կարգադրում է գործերը հանձնել մի ուրիշին և վերադառնալ Գորիս: Պարոն մինիստրն ինձ և շատերին հասկանալի պատճառով հայհոյվելուց և անպատվելուց հետո մնում է «ծառայելու»:

Ամփոփում եմ.

Նախարար Հակոբ Տեր-Հակոբյանը ներքին շուկայում ոսկի է ծախսում և ժողովրդի մեջ խոր դժգոհություն ստեղծում:

Նա հովանավորում է ակնհայտնի գողերին, ինչպիսիք էին՝ պաշտոնյաներ Ալեքսան, Գևորգ և ուրիշներ:

Ալեքսանին ծերբակալել փորձելու համար, նա հրամայում է դադարեցնել ցորենի փոխադրությունն և դադարեցվում է, ու այդ այն ժամանակ, երբ ժողովուրդն ու զորքը սովամահ էին լինում:

Իմ կարգադրությունը՝ որպես Լեռնայայաստանի կառավարության վարչապետի, երկու օրվա ընթացքում Գենվազի հրամանատարի տրամադրության տակ դնել որպես անձեռնմխելի պաշար 1000 փութ հացահատիկ՝ նա չի կատարում, և մեր զորքերին դնում է ամենածանր դրության մեջ:

Նա յոթ հարյուր փութ ցորեն չգիտես ինչու, փոխադրում է Շիվանիձոր և թողնում է բոլշևիկներին, և այդ այն ժամանակ, երբ մեր զորքերը 15 օրվա ընթացքում մի պատառ հաց չէին տեսել,

6. Հակառակ Գենվազի հրամանատարի և պարետի կամքին, օգտվելով ֆալաներից, Օրդուբադ է ուղարկում մի կասկածելի գաղթականի, որի *որդին այնտեղի հեղկոմի փոխ-նախագահն է*, որն այլևս հետ չի վերադառնում:

7.Անիրավի ծեծել է տալիս Մեղրիի վաշտի վաշտապետին, որով ամբողջ զինվորությունը գրգռում է իր և կառավարության դեմ:

8. Հայհոյում է Կարճևանի հասարակության պատվիրակությանն և ժողովրդի մեջ առաջացնում է խոր թշնամանք:

9.Չի բարեհաճում վճարել կարճևանցիներին հեռախոսային սյուներ կանգնեցնելու վարձը, չնայած որ մեկից ավելի անգամ դիմում են նրան:

10. Թշնամացած լինելով Գենվազի հրամանատարության հետ, հրաժարվում է կատարել նրա պահանջն, այն է՝ բաց թողնել Գողթան մեկնող զորամասերին 4-5 օրվա հաց և այսպիսով, պատճառ դառնում այդ զորամասի Գողթան չանցնելուն:

11.Հայհոյում, վիրավորանք է ստանում Գենվազի ժողովրդից և որպես նախարար չի թողնում անցնում այդ շրջանից:

12.Կառավարությունը հրամայում է գործերը հանձնել ու վերադառնալ Գորիս, սակայն իրեն հետ տեղի ունեցող այն բոլոր խայտառակություններից հետո հնարավոր է համարում մնալ Գենվազում:

13. Դուզալում, ուր փախել էր գենվազցիների ցասումից, հրաժարվում է պարաններ գնելու Մուժամբար հացահատիկ փոխադրելու համար, պատճառաբանելով, որ իրեն մոտ դրամ չկա, բայց երբ խուզարկվում է գրգռված զինվորության կողմից՝ ինչպես իր, այնպես էլ որոշ պաշտոնյաների գրպաններից դուրս է գալիս մեծ քանակությամբ ոսկի:

Ե. Լեռնահայաստանի քաղաքական վերամկրտությունը՝ Հայաստան հայտարարվելը՝ տակնուվրա արեց ամեն ինչ: Երկիրը կորցրել էր համագումարի կողմից հաստատված օրինական կառավարությունը, իսկ նորաստեղծ Հայաստանի կառավարությունն, որն և կար և որն ապօրինի լինելուց զատ, քաղաքական մի կատարյալ ֆիկցիա էր, որը միայն Լեռնահայաստանի ժողովրդի համար էր Հայաստանի կառավարություն, իսկ արտաքին աշխարհի համար չկար և լինել չէր կարող, որովհետև միաժամանակ երկու Հայաստաններ խորհրդային և հանրապետական, գոյություն ունենալ չէին կարող: Զգալով իր իրավաբանորեն աբսուրդային վիճակը, այդ նորաստեղծ կառավարությունը բոլոր հայտարարություններն ու դիմումներն բոլշևիկներին անում էր Լեռնահայաստանի անունից:

15. Երկրի օրինական կառավարությունը, որպես այդպիսին, դադարել էր գործելուց, իսկ նորաստեղծ Հայաստանի կառավարությունը ապօրինի համարվելով ժողովրդի կողմից, չէր ճանաչվում: Սկսվել էր ճգնաժամը, որը դժբախտաբար անցավ, չեղավ:

Զ. Կուսակցական որոշ ընկերներ (Արշակ Հովհաննիսյան, Եփրեմ Սարգսյան, Հակոբ Տեր-Հակոբյան, Գառնիկ Շահինյան) մասին առայժմ լռում են, բայց շատ լավ կլիներ, եթե նրանք մնացած չլինեին Լեռնահայաստանում:

Այսպես, Կուռո՝ նոր Արշակավան, պարտվողական հոսանք, դավադրական նահանջ, աղետ, Արշակ Հովհաննիսյան՝ Սիսիանի կարևոր ճակատի զիջումը թուրք քոչվորներին, ներքին շուկաներ, թուրքերի երթևեկություն, ինքնամատնություն, զանգվածների դժգոհություն, Սիսիանի անկումը: Հակոբ Տեր-Հակոբյան՝ պանամա, ժողովրդական դժգոհություն, հակակառավարչական շարժում, և այլն, և այլն: Այդ բոլորին ավելացրեք նաև մի շարք բացասական երևույթներ, որոնք առաջացան Արարատյան զորամասի ու գաղթականության Լեռնահայաստան անցնելուց հետո, ինչպես հայկական չեկերի կատարյալ անարժեքացումը: Պարենավորման և ֆինանսական նախարարների կողմից ներքին շուկաներում, խորհրդային և ոսկե դրամների գործածությունը, երբ սպայության ու քաղաքացիական պաշտոնեության ռոճիկները տրվում էին չեկերով, նոր պաշտոնեության ահռելիությունն ու անհարազատությունն, իրական երկիշխանությունը -դրսեցիների և տեղացիների, սինեկուրաները, դրսեցիների գերիշխանությունն և արտաերկրային հոգեբանությունն, երևանյան մասնագետների և սպաների պարբերական դասալքությունն, երևութական կուսակցական դիկտատուրան, դասակարգային կռվի նոր անհաջող ձևերն և սրանցից առաջ եկած անվճռականությունն ու քաղաքական դուալիզմը, Հայաստանի կառավարության անդամներ Տերտերյանի և Արշակ Հովհաննիսյանի և մեծամասնական որոշ գործիչների մեջ գոյություն ունեցող անձնական

բարեկամությունը, Շահինյանի դավաճանությունը և այդ բոլորից առաջացած ծավալուն քննադատությունն և խորը դժգոհությունը ազգաբնակության բոլոր խավերում և դուք կստանաք ապրիլյան Լեռնահայաստանի և ապա՝ նորաստեղծ Հայաստանի թույլ պատկերը:

է. Երկու բան անհասկանալի պիտի մնան՝ մեկը կարմիրների, մյուսը՝ ինձ համար: Թե ինչպե՞ս մեծամասնականները պիտ լուծեին անհաղթ Լեռնահայաստանի հարցը, եթե տասնյակ հազարի հասնող, բարոյալքված ու խուճապային գաղթականությամբ ներսից չպայթեցնեին այդ երկիրը: Կասկածից դուրս էր, որ զինու ուժով չպետք է փորձեին մոտենալ այդ երկրին, որովհետև շատ անգամ էին փորձել, բայց միշտ էլ մի քանի հազար սպանվածներ ու գերիներ, հարյուրավոր գնդացիրներ և այլ հարուստ ավար թողնելով աննախընթացորեն պարտվել էին:

Եվ դժվար թե կյանքիս ամբողջ ընթացքում կարողանամ հասկանալ Արարատյան Հայաստանից հալածական այն բոլորի, լինի դա արհեստավոր, սպա, զինվոր, մտավորական, խմբապետ, նախարար թե պարզ գյուղացի, կրկնում եմ դժվար թե հասկանամ ոխերիմ կարմիր կացնից հալածական արարատյան գաղթականության ապերախտությունը, որոնց փրկության համար, Լեռնահայաստանի սպարապետությունն արեց ամեն ինչ, անգա՛մ զոհաբերեց իր երկրի անկախությունը, որ ձեռք էր բերված տարիների անհավասար կռիվներում թափված արյունով: Արդյո՞ք, հազարների հասնող հայ մտավորականների, ապօրինի սպաների, խմբապետների ամենաչնչին մասը գոնե մի անգամ հաշվի նստե՞լ է իր խղճի հետ, հարցրե՞լ է իրեն, թե ի՞նչ պիտի լիներ իր օրը, եթե ազատ ու անկախ Լեռնահայաստանը գոյություն չունենար: Ի՞նչ, եթե հուսո բազա, որպիսին էր Սյունիքը, չունենային՝ ապստամբության չէի՞ն դիմի: Ապա բանտերում կացնահարվող հայ մտավորականության փրկության գործը: Կապստամբեի՞ն, այն էլ Վրաստանի անկումից հետո՝ անհավանական է, բայց եթե նման գաղթ տեղի ունենար, էլ ո՞վ չգիտե, որ բանտերից ազատվածներն ու շատ-շատերը գերեզման կգտնեին Խոսրովի ու Ջղինի ձորերում:

Բարեբախտաբար, կար խրոխտ ու հաղթական Սյունիքը, որի վրայով, որպես փրկության կամուրջի՝ եկան ու անցան հալածականների քարավաններն, և երբ (իմ երկտողը) իմ և պարսից իշխանության միջև գոյություն ունեցող բարեկամության շնորհիվ Թավրիզ հասան՝ սրանց մի մասը, որ դավադրել էր Լեռնահայաստանի անկախության դեմ, ներսից պայթեցրել այդ անպարտելի երկիրը՝ պարսկական չարչի խանաներից, ամենաստոր միտումներով (շատերը ամենաստոր միջոցների էին դիմում, ինչպես մատնության, դավադրության, որպեսզի մեծամասնականներից բարեհուսության վկայական ստանան՝ երևան

վերադառնալու) մի անզոր արշավանք սկսեցին Լեռնահայաստանի և նրա սրբությունների հասցեին:

Փրկվածներն այսպես էին վարձատրում իրենց փրկչին: Սև, եզակի, անլուր, հայի ապերախտություն, որը, կրկնում եմ, կյանքիս ամբողջ ընթացքում չպետք է հասկանամ ու ներեմ:

Զորավար *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, դատական գործ, թերթ 213-230:

ՀՐԱՄԱՆՆԵՐ, ԿՈՉԵՐ

ԽՈՒՍՏՈՒՊՅԱՆ ԿԱՆՉԵՐ [147]

Ճապոնացու արևոտ սիրով սիրի՛ր հայրենիքդ և ամեն օր, որպես աղոթք, կրկնի՛ր ճապոնական կայսրի խոսքերը.

- Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի՛ բարձր է կանգնած Մեծ ու գեղեցիկ Արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամեն մեկիս համար թռչնի փետուրից էլ թեթև կթվա:

ՀՐԱՄԱՆՆԵՐ

N 1*

1919, 23 հոկտեմբեր, Լիճք

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին[148]

Բուլղարական զորքի մեջ կա մի գեղեցիկ սովորություն, այն է՝ զինվորների անվանացուցակների ստուգման ժամանակ նախ հիշատակել իրենց երկրի ազատագրության ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս է այդ նվիրական անունները՝ - «Ընկան», պատասխանում է զորաշարքի աջ թևի առաջին զինվորը:

-«Փառք»,- կրկնում է աջ թևի երկրորդ զինվորը:

-«Հավե՛րժ փառք»,- ավելացնում է ամբողջ զորաշարքը:

Ազգային նահատակների անունների ամենօրյա հիշատակումը զինվորների մեջ ստեղծում է բարոյա-հայրենասիրական բարձր տրամադրություն՝ ընկած նահատակների հավատարմությամբ ու անձնվիրությամբ ծառայելու ու քաջորեն մեռնելու իրենց հայրենիքի համար:

Հրամայում եմ Ղափան-Գենվազ-Գողթանի զորամասերի պետերին՝ որդեգրել այդ գեղեցիկ սովորությունը և ամենօրյա ստուգումների ժամանակ հարցել մեր ցեղի ընտիր որդիների խնկելի անունները՝ Քեռի,[149] Խեչո[150]...

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝ ***Նժդեհ***

---

* Հրամանները և կոչերը համարակալված են խմբագրության կողմից:

N 2

1919, 30 նոյեմբեր, Ղափանի հանքեր

Ղափան-Գենվազ-Տաքևի զորամասերին[151]

Զինվորնե՛ր, թշնամու ցանկությամբ սկսվում է մեր արշավանքը, մեր խաչակրաց արշավանքը Գեղվա Չորի դեմ:

Վաղը, երբ Ձեր խենթ գրոհներից և զարկերից թշնամին շշմած կթողնի իր գյուղերը, Ձեզ կ՛ողջունեն մեր հինավուրց, այսօր թշնամու կողմից պղծված բերդերի և վանքերի ավերակները:

Վաղը, երբ այդ ծորում կլսվի Ձեր ոտքերի ծայնը, Ձեր զենքերի շաչյունը, հայ գերիները, Քեյֆաշենիբեկերի շնաբարո կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք աղոթեն Ձեր զենքի հաջողության համար:

Վաղը, երբ քաջերդ Աջիբակ հասաք, հիշեք խալիլբեկյան սև օրերը, երբ այս գյուղի մոտ թշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ, օսմանյան սրից ճողոպրած, հայ կին ու երեխաներ: Ասում են՝ այժմ այնտեղ մի ամբողջ ծոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր հաճախ հյուր են գալիս Գեղվա Չորի շներն ու գիշատիչները:

Հիշե՛ք այդ և եղեք անխնա՛ Ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ և մարդ եղեք կանանց, երեխաների և ծերերի նկատմամբ:

Ուրեմն, առա՛ջ, մեզ հետ է Աստված և՛ Դավիթ-բեկի վրիժակ հոգին:

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝ ***Նժդեհ***

N 3

1920, 17 հունվար, Ղափանի հանքեր

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին[152]

Զինվորնե՛ր, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնե՛նք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արևմտյան ուժերի խենթ հարվածներից ընկավ անառիկ Գեղվա Չորը: Օրեր անց՝ Ձեր նույն Գեղվածորյան թափի և կրակի առաջ պիտի ընկնի Որոտանի աջ ափը: Այնտեղ, Գեղվա բարձունքներում և ծորերում մեզ զորավիգեց Դավիթ-բեկի վրիժավառ ստվերը, այստեղ, Որոտանի ճակատում, մեզ կ՛առաջնորդի Թորոս-իշխանի հայրենանվեր հոգին: Յոթ բարձունք

ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մեջ, որոնց վրա է մեր փրկությունը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տերը Զանգեզուրի: Ուրեմն առա՛ջ, իմ յոթն անգամ սիրուած և քաջ դափանցիներ, առա՛ջ դեպի այդ բարձունքները՝ դեպի Քյափագ, Այինդաղ, դեպի Հարթիզ:

Մեզ հետ է Աստված և մեր պատերազմական բախտը, առա՞ջ,

Դափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝ *Նժդեհ*

N 4

1920, 12 փետրվար, ժամը 7-ին, Դափանի հանքեր

Դափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերին[153]

Զինակիցնե՛ր, հասել է օրը, անօրինակ հերոսությամբ ավելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Զանգեզուրի նախադուռը պաշտպանող այն մի բուռ ժողովրդի փրկության օրը, այն քաջանուն ժողովրդի, որն ամիսներ առաջ, խորապես գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակությունը, բացճակատ հայտնեց մեզ իր որոշումը՝

«Գողթանը կմեռնի՛, բայց չի՛ գաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր Հայորդիների՝ Աստվածաշունչ Քրիստափորի և Ռոստոմի արյունաներկ ու սրբապղծված ծննդավայրերը՝ երբեմնի չքնաղ Ագուլիսները, պիտի վերագրավվեն, պիտի վերականգնվեն իրենց շենությամբ ու բարոյական մեծությամբ:

Լսե՛ք, հնչել է ժամը, զինակիցնե՛ր, երբ վախկոտ էդիֆների տմարդ սրից զարնված հազարավոր անքաղ մեռելները ձեզնից արդար ու արյունոտ հատուցումն են պահանջում:

Լսե՛ք և հարյուրավոր գերված ու լլկված հայ կանանց, որոնք, ձեր գոռ արշավի և ուռաների սպասումով, ձեզ հերոսության են կանչում:

Լսե՛ք և ինձ, ձեր ղեկավարներին, որը ձեզնից ծուխ, թշնամու գյուղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք և՛ պատմական Որոտանի ափերում, և՛ Գեղվա ձորերում:

Լսե՛ք իմ քաջ ու հայրենանվեր զինակիցնե՛ր, լսե՛ք, լցվե՛ք բոցով ու վրեժով, առե՛ք զենքերդ ու առա՞ջ:

Առա՞ջ, մեզ հետ Աստված և մեծ Հայորդիների՝ Քրիստափորի և Ռոստոմի անհանգիստ հոգիները: Առա՞ջ:

Դափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝ *Նժդեհ*

N 5

1920, 13 հունիս, Դափանի հանքեր

Դափան-Գենվազի ռազմական ուժերին[154]

Դափանցիներ ենք մենք, և դա նշանակում է՝ որ էն մեր խենթ հարվածներից ընկան Օխչու ու Գեղվա անառիկ ձորերը, որ էն մեր գոռ ուռռան մաքրեց Որոտանի և Հագարուի ափերը. որ էն մենք ենք, մենք, որ յոթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ գիտենք ատել մեր դարավոր թշնամուն և յոթն անգամ չէ, կյանքից ավելի ուժեղ սիրել մեր հայրենի հողը...

Դափանցիներ ենք մենք, և դա նշանակում է՝ որ էն մենք էինք, որ մահաշունչ ծմեռվա կեսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մոտենում Դափուջուղին՝ Դափանի այդ փոքր Մասիսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ծյուները, մեղմացրինք բնության արհավիրքը և Գողթան իջանք՝ հանուն Քրիստափորի սրտից զարնված նյութական ծննդավայրի՝ թշնամու գյուղերի սև ու թանձր ծուխը բարձրացնելու...

Դափանցիներ ենք, և դա նշանակում է՝ որ մեր հպարտ ու փառքի մեջ կորած դրոշակի վրա հարյուրից շատ ավելի ավերված թշնամու գյուղերի անուններ կան, որ մեր կռիվները՝ կանոնավոր թե անկանոն ուժերի դեմ, մի ձև, միայն մի ձև է ունեցել՝

«Ուռա՞, առա՞ջ, հրդե՛հ»:

Զորավիգ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Դավիթ-բեկի ու Թորոս-իշխանի հայրենանվեր ու վրիժակ հոգիները՝ դափանցիներ ենք մենք՝ միշտ հաղթող ու անպարտ:

Դափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի հրամանատար՝ *Նժդեհ*

ԿՈՉԵՐ ԴԱՓԱՆՑԻՆԵՐԻՆ

N 6

ԴԱՓԱՆՑԻՆԵ՛Ր[155]

Քո մի մասի վախկոտության ու դավաճանության շնորհիվ թշնամին մտավ Դափան և քո ռազմական ուժերի ամենաքաջանուն ու խիզախ մասը, կրակելով իր վերջին փամփուշտը, քաշվեց լեռները: Յոթն օր է, շա՞տ կարճ ժամանակ, ինչ քեզ արժանի թշնամին իշխում է քո երկրում, և լուրերը թև առած գալիս, հասնում են ինձ, որ դու շատ

տեղ արդեն աղ ու հացդ ես պղծում՝ ինքդ գնում ու եկողի փեշը բռնած, գյուղդ ես քաշում:

Զգո՛ւշ, Ղափա՛ն, մեռցնելով իմ հավատը դեպի քո հավատարմությունը, դու քեզ ես մեռցնում:

«Իջի՛ր, իջի՛ր լեռներից»,- դավադրաբար կանչում է թշնամին:

«Իջի՛ր».- հիմարաբար կրկնում ես դու:

Եվ քո ապստամբ մարտիկներից շատերը թողնում են լեռները: Զգո՛ւշ, էլի զգուշ, թողնել լեռները՝ նշանակում է անարգ մահ գտնել ծոր ու ծմակներում:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, որոնք հեշտությամբ քո գերեզմանը կարող են դառնալ:

Լսիր և մի՛ մոռանա՝ մնալ լեռներում, սարերի վրա, ղափանցիներ՛, նշանակում է լինել ապստամբ. չիջնել լեռներից՝ նշանակում է չճանաչել անկոչ եկողների իշխանությունը ու սանձահարված պահել նրանց:

Ա՛հ, ո՞ւր եք, ո՞ւր, իմ երեկվա ուխտված զինվորնե՛ր, Գեղվածորյան հպարտ փառակիցնե՛ր: Ո՞ւր եք: Ձորերո՞ւմ: Վա՜յ Ձեզ, իմ սիրտն արնոտվում է Ձեզ համար, տեսնելով, թե ինչպես թշնամին ձեր անփառունակ գերեզմանն է փորում:

Դո՛ւրս, դո՛ւրս արեք ձորերից: Դո՛ւրս ծմակներից, միանալու Դավիթբեկյան հզոր ուխտին:

Դո՛ւրս դեպի ինձ, դեպի լեռները:

Ի՞նչ, չլինի թե որոշել եք, մեր, Ձեզ հետ միասին, ձեռք բերած ամբողջ փառքը, թողնելու մենակ մեզ՝ լեռները քաշված ապստամբներիս:

Այո՞, է՛հ, թող այդպես լինի:

Հրամանատար՝ *Նժդեհ*

1920, 12 սեպտեմբեր, Խուստուպյան լեռներ

N 7

ՂԱՓԱՆՑԻՆԵ՛Ր[156]

Ես՝ Դավիթբեկյան ուխտին հավատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրավոր, ու ավելի հպարտ, քան էի:

Ա՛յժմ ես լիզում եմ քո և թշնամու՝ ինձ հասցրած վերքերը և սպասում քեզնից խնդրածս վարպետին, որ գա, շուտ գա՝ կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումները, քո խայտառակությունը, քո բարոյական անկումը:

Դու արեցիր այն, ինչ ուզում էր թշնամին: Նա գոհ է քեզնից, անչափ գոհ, բայց գիտե՞ս, Ղափա՛ն, թե որքան ուժեղ է նա ատում և արհամարհում քեզ: Դու քո վիրավոր, սրտից զարնված հրամանատարին ես դավաճանել, մենակ թողել:

Գիտակցո՞ւմ ես, չափում կատարածդ տմարդության անչափելի մեծությունը:

Ա՛ռ, հետ առ ինձնից քո տված անունները՝ «Երկրորդ Դավիթբեկ», «Աժդահա-Փաշա», «Ամեն կռվում Փադիշահ»: Այդ անուններով դու կաշառեցիր, խաբեցիր ինձ, որ այսօր ինձ մենակ թողնես: Ինչո՞ւ են ուշանում քո լրտեսները, քո ահաբեկիչները:

Ադրբեջանը հոգնեց իմ գլխին սպասելուց, փոքրիկ գումար չէ երեք միլիոնը: Ստացի՛ր և գործի անցիր:

Հրամանատար՝ *Նժդեհ*

1920, 15 սեպտեմբեր, Խուստուպյան լեռներ

N 8

ՂԱՓԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ[157]

Ժողովո՛ւրդ, քեզ հետ խոսողը քո հրամանատարն է, քո վիրավոր սրտից զարնված հրամանատարը, որի սուրը վաղուց է ինչ հանուն քո ինքնապաշտպանության, չի հանգստացել պատյանում:

Լսի՛ր, մի ավելորդ. գուցե և վերջին անգամ նա դիմում է քեզ, խոսում քեզ հետ: Նա ասում է.

-Քո սև ու նեղ օրին, երբ հայակեր Գեղվա և Օխչու ձորերը, երբ Բարգուշատն ու Հաքարուն սպառնում էին քո կին ու երեխաների արյունով քո երկիրը ներկելու - դու կանչեցիր ինձ և ես հասա քո հավարին: Ասա՛, ժողովո՛ւրդ, այն օրից քո երկրում մնա՞ց մի բարձունք, մի սար, մի քար, որի վրա դրած չլինեի իմ հոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ տեսե՞լ ես մի օր, մի ժամ անհոգ, հանգիստ: Դու ինձ տեսե՞լ ես փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու լռում ես. քարերը, քարերը կ՛աղաղակեն, կ՛ասեն՝ ոչ: Ասա՛, մնա՞ց մի բան, որ խնայեի, չզոհաբերեի քո ազատության, քո փրկության, քո փառքի գործին: Քո դաշտերում, քո հողի վրա իմ արյունն է թափել: Դեռ չեն փակվել թշնամու՝ ինձ հասցրած վերքերը, իսկ քոնը, ժողովո՛ւրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտի մնա ու հազար վերքերի ցավով պիտի մորմոքա:

Ժողովո՛ւրդ, այսօր, երբ ադրբեջանյան չեկերով կաշառված «բոլշևիկ» կոչված սրիկաները, քո գերեզմանափորները, կեղծ ու պատիր խոստումներով քո դուռն են բախում և քո ձեռքով պղծած աղ ու

հացիդ սպասում՝ դու դավաճանաբար լքում ես, մենակ թողնում քո վիրավոր հրամանատարին: Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահաբեկիչները իմ գլուխն են փնտրում՝ երեք միլիոնով Ադրբեջանին ծախելու: Ապերա՛խտ ժողովուրդ: Քանի՞-քանի՞ անգամ քո կինն ու երեխան կռիվներից վերադառնալիս փաթաթվել են ձիերիս վզով, համբուրել ձեռքերս, «փաշա ջա՛ն» կանչել: Քանի՞-քանի՞ անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՞նչ, մոռացա՞ր պրինց Ղաջարին, որի զորքերին պատերիդ տակից եմ քշել: Վա՜յ քեզ, ժողովուրդ, ի՞նչ պատասխան պիտի տաս Աստծուդ, խղճիդ, պատմությանը:

Ժողովո՛ւրդ, կ՛անցնեն օրեր, թշնամին քեզ զինաթափելուց ու ղեկավարներիցդ զրկելուց հետո, երբ այլևս չի լսվի «Աժդահա փաշա» անունը, կսկսվի հազար ձևով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այն ժամանակ դու կվերհիշես քո հրամանատարին, որի սուրը յոթն անգամ մեծացրել էր քո երկիրը և քեզ համար բացարձակ ապահովություն ստեղծել, այն ժամանակ հայացքդ կդարձնես Խուստուպին, նրա կատարին նստած սև ամպերին, կնայես, կկանչես, բայց հրամանատարիդ փոխարեն սարերիդ ու ձորերիդ թույլ արձագանգը կպատասխանի քեզ: Գուցե մի օր էլ, թշնամուց հալածված, սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ հանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրա իմ սառած դիակը գտնես, ծունկի գաս ու արյուն լացես:

Ժողովո՛ւրդ, ինձ լքելուց, ինձ դավաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Դու չուղարկեցիր վարպետներիդ՝ բութ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թեև պատմությունը չի՛ ների քեզ, և խնդրում՝ երբ ինձ սպանված գտնես, դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երևա ինձ և՛ Ղափանը, և՛ Գենվազը, և՛ Գեղվաձորը, և՛ Գողթանը:

Իսկ մինչ այդ, հայացքդ մի՛ կտրիր Խուստուպից: Որքան հաճախ, որքան շատ նայես այս սեգ ու սև ամպերով ծածկված սարին, այնքան շուտ կգա, կհասնի փրկությունդ:

Աստված և իմ սերը քեզ հետ, ապերա՛խտ ժողովուրդ:

Հրամանատար՝ *Նժդեհ*

1920, 17 սեպտեմբեր, Խուստուպյան լեռներ

N 9

ՂԱՓԱՆ![158]

Դու ինձ լքեցիր, մենակ թողեցիր: Սակայն իմ պատերազմական բախտը, իմ Աստվածը մնաց ինձ հետ, և ես ամբողջ ամիս է, ինչ

անընդհատ հաջողությամբ ջարդում եմ թշնամուն՝ հերոսական Գենվազի ռազմաճակատներում:

Չգիտեմ, Ղափա՛ն, դու հաշտվել ես քո դրության հետ, թե ոչ, բայց հայ ժողովուրդը ցավում է, անտեսելիորեն ցավում և ափսոսում, որ դու միամտորեն վիզդ թշնամու ծանր լծի տակ պարզեցիր և ծով փառքդ, փառքի մեջ կորած անունդ աշխարհի չորս քամիներին տվիր: Այն օրից, քո անկման այն սև օրից, Ղափա՛ն, քուն ու դադար կորցրած, սար ու քար ընկած, մի քանի հարյուր ինձ հավատարիմ մնացած գենվազցիներով կուրծք եմ տալիս թշնամու գերադաս ուժերին ու քո կորցրած փառքի փոխարեն նորն ստեղծում քո երկրի, քո անունի համար:

Ղափա՛ն, զղջո՞ւմ ես արարքիդ համար: Ի՞նչ եղավ Ադրբեջանին ծախված հայ սրիկաների քեզ խոստացած արքայությունը:

Խե՜ղճ ժողովուրդ, ասում են՝ արդեն զինաթափել, գլխատել, տնտեսապես քայքայել են քեզ:

Ա՜հ, տես ի՞նչ ես տեսել: Սև օրերդ դեռ չեն հասել, բայց գալիս են և շուտով կհասնեն, թաթար զորքերի հետ:

Ոտքի՛, խաբված ժողովո՛ւրդ, ոտքի՛ ել, փրկությունդ մոտ է:

Ոտքի՛, զենքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ ինձ սպասիր Խուստուպից:

Հրամանատար՝ *Նժդեհ*

1920, 5 հոկտեմբեր, Խուստուպյան լեռներ

N 10

ՅՈԹԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐ ԻՄ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻՆ[159]

Քաջերին, միայն քաջերին է լսում և զորավիգում պատերազմների քմահաճ Աստվածը:

Վախկոտներն իզուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար:

* * *

Նա է միշտ հաղթում, որը արդեն հաղթել է իրեն, այսինքն՝ որն իր մեջ մեռցնելու չափ թուլացրել է մահվան երկյուղը:

* * *

Նրանք, որոնք ծառայում են բարձր հայրենասիրությունից, կամ փառասիրությունից դրդված, միայն նրանք են ավելացնում իրենց զենքի ու ցեղի փառքը:

Հենց այնպես ծառայել, ծառայել, որովհետև պահանջում են, կամ ստիպված ես մի զույգ ուսադիրներ կրել մի կտոր հացի համար - նշանակում է դատապարտված լինել կատարելու սովորական մահկանացուի հատուկ ամենաանշան ու անփառունակ գործեր:

Վա՜յ քեզ, բանակ, եթե նմաններով հարուստ են շարքերդ:

Ունեցի՛ր բոլոր մարտական առաքինությունները, բայց մի՛ մոռանար, որ առաջինը, առանց որին պատերազմների քմահաճ Աստվածը քեզ քիչ անգամ կժպտա՝ դա խիզախությունն է:

* * *

Քեզ վրա նայիր որպես դատապարտվածի, որը հանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանության՝ պիտի միշտ պատրաստ լինի ընդունելու մահը:

* * *

Եղի՛ր խիզախ, խստաբարո ու չարքաշ: Հատկությունների այդ բարձր երրորդությունը քեզ կմոտեցնի կատարյալին:

* * *

Երկար ու լուրջ տքնությամբ մեռցնելու աստիճան թուլացրո՛ւ քո մեջ մահվան վախը և դու չես մնա առանց փառքի, պատմությունից դուրս:

* * *

Ճապոնացու արևոտ սիրով սիրի՛ր հայրենիքիդ և ամեն օր, որպես աղոթք, կրկնի՛ր ճապոնական կայսրի խոսքերը.

-Եթե խորապես գիտակցենք, որ սերը դեպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ավելի՛ բարձր է կանգնած մեծ ու գեղեցիկ Արևին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամեն մեկիս համար թռչնի փետուրից էլ թեթև կթվա:

Հրամանատար՝ *Նժդեհ*

N 11
ԴԻՍՊՈԶԻՑԻԱ*

30 նոյեմբերի 1919թ.

Ղափանի հանքեր

Թուրք սպաների, ինչպես է էդգիբ բեյի և ուրիշների, ներկայությանը Գողթանում, սրանց՝ Ադրբեջանի թելադրությամբ կազմակերպած հաճախակի հարձակումները Գողթանի և Սիսիանի հայ գյուղերի վրա, սրանց վերջին օրերի ընթացքում ցույց տված ակտիվությունը, երբ Ադրբեջանը կռիվ է սկսել Զանգեզուրի դեմ, վերջապես սրանց պատերազմական գործողությունները Զանգեզուրի թիկունքում հայ տարրի բնաջնջմամբ, Նախիջևանի և Ադրբեջանի միջև կապ ստեղծելու նպատակով, կրկնում եմ այդ բոլորը ստիպեցին Գենվազի, Ղափանի և Տաթևի զորամասերին վերջ դնել Նախիջևանի նվաճողական ծրագրերին, այսինքն մաքրել Գեղվաճորը (որը այսօր թևավորում, դեպ իրեն է քաշում թե Նախիջևանի և թե բուն Ադրբեջանի ուժերը) և, այսպիսով, մի անգամ ընդմիշտ ապահովել Զանգեզուրի հայության ֆիզիկական գոյությունը և խաղաղ կյանքը:

1. Մարտական լուրջ խնդիրը լուծելու համար հրամայում եմ. Գենվազի զորամասին՝ իր ուժերի մի մասով (մոտավորապես 400 սվին) գրավել Փիրմատան լեռնաշղթան (Օխչի գյուղից դեպ հյուսիս և զուգահեռ Օխչվա և Գեղվա ձորերին) և վճռականորեն գործել Գեղի և Փիրալլու գյուղերի դեմ:

Աջ զորաթևով արագորեն հարվածել Գալկուտ և Մոլլալի գյուղերը և կապվել Ղափանի զորամասի հետ «Կոբախ» կոչված բարձունքի ստորոտում:

2. Ղափանի արևմտյան ուժերին. բաժանվել երեք մասի և նշանակված ժամին կենտրոնանալ Կոմբախի և Հալիձորի վրա, իր աջ զորաթևով գրավել «Չիման» կոչված բարձունքը ու այս բարձունքից դեպ արևելք ձգվող լեռնաշղթան և արագ հարվածով գրավել Շհարջիկ և Աչաղլու գյուղերը:

Ձախ զորաթևով գրավել Տունուս, Աջիշլու և Մուսալլամ գյուղերը և անմիջապես կապվել Գենվազի զորամասի հետ,

3. Տաթևի զորամասին. բռնելով Օգլան-նիժա, Կիզիլ-Ղայա և Ազա-Գայա բարձունքները, ձախ զորաթևով գրավել Վերին և Ներքին Գերարտղերը. կապ և կոնտակտ պաշտպանելով, ամբողջ ժամանակ Ղափանի զորամասերի հետ: Աջ զորաթևով գրավել Քիրսը և շարժվել Ջիրիշի վրա:

* Մարտակարգ (ծանոթ.խմբ.)

Կռիվներին ծգծգվող բնույթ չտալու համար հրամայում եմ բոլոր զորամասերին իրագործել իրենց վրա դրած մարտական խնդիրները առանձին վճռականությամբ ու արագությամբ:

Նույն նպատակով Տաթևյան զորամասի աջ զորաթևին և Գենվազի ծախին, թշնամու համար թողնել նահանջի ճանապարհ Աջիբաջով դեպ Նախիջևան:

Գեղվա ծորի օպերացիային մասնակցող բոլոր ուժերին խստորեն արգելվում է թալանը, հայ մարտիկի անունն արատավորող այդ ստոր երևույթը:

Այդպիսիները տեղն ու տեղը կոչնչացվեն գնդացրային կրակով, առանց զինվորադաշտային դատարանի պատշաճ որոշման, որն արդեն նշանակված է իմ կողմից:

Գործողությունները միաժամանակ սկսել դեկտեմբերի 1-ին, ուղիղ ժամը 6-ին:

Վիրակապական կետերը նշանակվելու են զորամասերի պետերի կողմից:

Կռվի առաջին օրը իմ դաշտային շտաբը գտնվելու է Հալիծորի բերդում, ուր զորամասերի պետերը օրեկան առնվազն երեք անգամ պետք է ուղարկեն հաղորդագրություններ:

Արտակարգ դեպքում հաղորդագրել վայրկենաբար:

Ղափան-Գենվազ-Գողթանի ռազմական ուժերի
Ընդհանուր Հրամանատար *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 475, թ. 56-57: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 12

1920թ. 18 փետրվարի

Ղափանի հանքեր

Հրաման
Ղափան-Գավազ-Գողթանի ռազմական ուժերի
N 21
Զորաշարքային մաս
(Քարտեզ 10 վերստ)

§ 1

Թշնամին տենդային պատրաստություններ է տեսնում, թվում է վերջին անգամ փորձելու է իր պատերազմական բախտը՝ այն է մեծ

ուժերով մի քանի կետերից հարձակվելու հաղթական Զանգեզուրի վրա:

Գալիս է թշնամին, «թող գա», ասենք մենք և պատրաստ լինենք Զանգեզուրաբար ընդունելու նրան:

Ես չգիտեմ մի դեպք, որ մեր թշնամին երկու օրից ավելի կարողանար շարունակել իր սկսած կռիվը:

Այո՛, նա շատ շուտ է կորցնում իր մարտունակությունը, կորովազրկվում և ամենաուշը կռվի երրորդ օրը նահանջի ճանապարհը բռնում: Այսպես է մեր թշնամին, որի մասին այլ բան չեն ասում Զանգեզուրում և Գողթանում իր անվերջ կրկնած հարձակումները:

Գալիս է թշնամին, թող գա, միայն թե լինենք արթուն և ռազմապես պատրաստ զանգեզուրաբար դիմադրելու նրան:

Մեզ հետ Աստված և մեր պատերազմական բախտը !

§ 2.

Բոլոր մարտական շրջանների պետերին՝ ամենօրյա խորը հետախուզություններով մերկացնել թշնամու բոլոր ռազմափորձերը և շարժումները ու անմիջապես հաղորդագրել ինձ:

Հետախուզությունների ժամանակ որսալ կենդանի լեզուներ և ուղարկել զորամասիս շտաբ:

Հրամանս կարդալ բոլոր հեծելախմբերում, զորախմբերում և վաշտերում:

Ղափան - Գենվազի - Գողթանի Ռազմական
ուժերի ընդհանուր հրամանատար՝ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 499, ց. 1, գ. 1, թ. 5: Բնագիր: Ձեռագիր:

N 13

1920, 15 մարտի, ժամը 18, Բիստ

Հրաման
Ղափգենգողթի ռազմական ուժերին
N 25
Զորաշարքային մաս
(Քարտեզ 10 վերստ)

§ 1.

Երկրորդ տարին է, ինչ թշնամին անվերջ կրկնում է իր հարձակումները՝ Զանգեզուրի նախադուռը պաշտպանող Գողթանի մի բուռն

ժողովրդի վրա՝ այդ շրջանին տեր դառնալու ու այդպիսով միացնելու երկու մուսուլման երկրները՝ Ադրբեջանն ու Տաճկաստանը: Տանակերտը տեղահանելուց հետո թշնամին աննախընթաց բարբարոսությամբ սրի և հրի մատնեց Գողթանի կուլտուրական փառքը կազմող Ագուլիսների լոյալ ազգաբնակությունը: Գողթանը ցայսօր ամենադժնդակ պայմաններում իր վրա է քաշել, զբաղեցրել ու դիմագրավել Նախիջևանի և Օրդուբադի շրջանների բովանդակ մուսուլման ուժերին և, այսպիսով, ապահովել Զանգեզուրը թիկունքից: Այժմ նա՝ թշնամու համառորեն կրկնվող հարձակումներից տնտեսապես ու հասարակականապես ծայր աստիճան քայքայված, յուր վերջին համագումարում որոշել է՝ «կամ կռիվ, կամ գաղթ»: Խորապես գիտակցելով Գողթանի ռազմագիտական խորը նշանակությունը, գնահատելով նրա Զանգեզուրի համար կատարած դերը և նկատի ունենալով նրա արդի կրիտիկական դրությունը՝ հրամայում եմ Ղափգենգողթի ռազմական կամավոր ուժերին մի շարք մուսուլման գյուղերի տեղահանությամբ և այրումով հայկական Գողթանի ժողովրդի համար ստեղծել ռազմագիտական ու տնտեսական հնարավորություն՝ շարունակելու իր գոյությունը հայրենի երկրում:

§ 2.

I Ազայի զորասյուն
Պարուչիկ Թադևոսյան
հետևակ . . 150
հեծելազոր. . . 7
գնդացիր 1
Ընդամենը 150 հետևակ, հեծելազոր 7 և գնդացիր 1

Գրավել Խարաբագիլան բերդը և Այզայի կարևոր դիրքերը՝ անդամալուծելու Յայջիից և Նախիջևանից Օրդուբադին օգնություն հասցնելու բոլոր փորձերը, կտրելով թշնամու հաղորդակցությունը ինչպես շոսեյով, նույնպես և Արաքսի ափով:

II Ռազմափորձային հարյուրյակ
Պրապորշչիկ Ոսկանյան
Հետևակ 100
հեցելազոր 4
Գնդացիր 1
Ընդամենը 100 հետևակ 4 հեծելազոր և 1 գնդացիր

Գրավելով Դոյլունը ճնշում է Քալանթար և Դոլյուն դիզաները, որոնց տեղահանությունից հետո մի հիսնյակը միանում է Ազայի զորասյունին, իսկ մյուսը՝ մի գնդացրով ընդունում է դեպի ծախ և գրավում է մի կարևոր կետ Դաստայի-Վանանդի և Ազայի միջև՝ խանգարելու թշնամու շարժումները շոսեյի վրա և Արաքսի ափով:

III Բաղամարի (Վանանդի) զորասյուն
Գողթանի ռազմաճակատի հրամանատար Ղազար
հետևակ 300
հեծելազոր 20
լեռնային թնդանոթ 1
գնդացիր 2
Ընդամենը 300 հետևակ, 20 ձիավոր, 1 թնդանոթ և 2 գնդացիր

Դիսարը տեղահանելուց հետո վճռական հարվածով գրավել Վանանդը, Սալը, Վալավերը, Աղբին և Դիզին: Ամբողջ ժամանակ հաստատ կապ ու կոնտակտ պաշտպանելով իր հարևան զորասյունների հետ: Վանանդի և վերոհիշյալ գյուղերի անկումից հետո զորասյունը յուր ուժերի 2/3 իջեցնում է Ագուլիս և խիզախում է կապ ստեղծել Գենվազի ուժերի հետ: Միանալուց հետո մի հետևակային հարյուրյակ և մի գնդացիրով մնում է զբաղեցնելու Նուռնուսը, իսկ Գողթանի և Գենվազի միացյալ ուժերը գրոհում են Օրդուբադի վրա:

IV Ագուլիսի զորասյուն
Պոդպորուչիկ Գյուլնազարյան
հետևակ 200
հեծելազոր 6
լեռնային թնդանոթ 1
գնդացիր 1
ռմբաձիգ 1
Ընդամենը 200 հետևակ, 6 հեծելազոր,1 թնդանոթ, 1 գնդացիր և 1 ռմբաձիգ

Արագ առաջխաղացությամբ գրավել Ունուսը և Դռնիսը, թողնելով անհրաժեշտ թվով զինվորներ-Նուռնուսին, Դռնիսին օգնության գալու փորձերը խանգարելու և իջնել Վերին-Գետ թրքական թաղը գրավելու նպատակով:

V Կարճևանյան զորասյուն
Շտաբս կապիտան Ամիրջանյան
հետևակ 250
հեծելազոր 40
լեռնային թնդանոթ 1
գնդացիր 1
Ընդամենը 250 հետևակ, 40 ձիավոր, 1 թնդանոթ և 1 գնդացիր:

Ունենալով երկու զորասյուն՝ Օրդուբադյան և Գանձային, առաջինով գրավել Ղափա կոչված ամրությունը և վճռականորեն հարվածել Օրդուբադը: Երկրորդով գրավել Գանձան, առաջանալ դեպի Ագուլիս՝ Գողթանի ուժերին միանալու նպատակով:

VI Պահեստի ուժեր

Պորուչչիկ Տեր-Սարգսյան հետևակ 100

Կատարյալ մարտական պատրաստությամբ լինել Շոռջրում:

VII Բիստի պահակախումբ

Շտաբս կապիտան Մադակյան հետևակ 100
հեծելազոր 3
գնդացիր 1
Ընդամենը 100 հետևակ, 3 հեծելազոր և 1 գնդացիր

Ուժեղացնելով Բիստ-Ալահի և Նասիրվազի ճակատը և խոր հետախուզություններով շփման մեջ մտնել Բայահմատի և նրա հարևան գյուղերի հետ:

§ 3.

Հրամայում եմ բոլոր զորասյուներին ու զորախմբերին իրենց վրա դրած մարտական խնդիրները իրագործել առանձին վճռականությամբ և արագությամբ: Կռիվներին տարերային և ահաբեկիչ բնույթ տալու համար բոլոր վաշտապետներին և զորախմբերի պետերին՝ ունենալ հրձիգ տասնյակներ և գայլախմբեր: Սրանց գործածել մեծ քանակությամբ ուժանակ և ձեռնառումբեր:

Ուռռա, առաջ, հրդեհ! Ահա մեր կռվի ձևը:

§ 4.

Կռիվը սկսել մարտի 20- ի առավոտյան ժամը 5- ին: Կարևոր դիրքերը գրավել գիշերվա ընթացքում:

§ 5.

Վիրակապական կետը Ցղնա և Կարճևան:

§ 6.

Կռվի առաջին օրը ես կլինեմ Ագուլիսյան զորասյունի հետ, ուր զորասյուների և զորախմբերի պետերին՝ ուղարկել հաղորդագրություն օրեկան երեք անգամ, արտակարգ դեպքում՝ վարկենաբար:

Մեզ հետ Աստված!

Ղափգենգողթի ռազմական ուժերի ընդհանուր հրամանատար կապիտան՝ *Սժդեհ*

ՀՀ ՊԱ ֆ. 199, ց. 1, գ. 1, թ. 6-7: Բնագիր: Ձեռագիր:

N 14

30 ապրիլի 1920թ. Հին Թաղլար

«Դասալիքներին և նույնիսկ մեկ քայլ նահանջողներին գնդակը ճակատին»

Հ ր ա մ ա ն
Ղափան-Դիզակի զինված ուժերին
N 1
(քարտեզ 5 վերստ)

1

Ստրկությունը՝ խայտառակություն և հանցագործություն, հատկապես հիմա, երբ ժողովուրդները քաղաքականապես ինքնորոշվել են կամ գտնվում են ինքնորոշման ընթացքում: Դա խորապես զգացել և հասկացել է մեր ժողովրդի մի մասը՝ Ղարաբաղը, և իր լեռների հպարտ գագաթներին բարձրացրել է ապստամբության դրոշը: Փառք և ուռռա՜:

2

Զանգեզուր-Ղարաբաղյան Ձոկատի Հրամանատարի ս/թ ապրիլի 27-ի N 00152 գրավոր հրամանի համաձայն, ստանձնելով Ղափանի և Դիզակի միացյալ ուժերի հրամանատարությունը խոր հավատ եմ տածում նրանում, որ ինձ վստահված զինված ուժերը ի վիճակի են և պետք է հաղթեն թշնամուն, որը հանդգնել է ստրկացնել հպարտ և անպարտելի, ինչպես իր լեռան գագաթները, հարազատ Ղարաբաղում:

3

Ինձ վստահված ուժերը պետք է իմանան միայն մեկ բան՝ որոտալից ուռայով դեպի առաջ:

4

Իր եղբորը սպանած դասալիք Կայենը՝ ընկերներին դավաճանած Հուդա: Դասալիքը պետք է հալածվի Հայաստանի բոլոր հավատարիմ որդիների կողմից: Նա չպետք է ապաստան գտնի հայի տանը, որպեսզի չպղծի նրա սուրբ օջախը:

Դասալիքներին և նույնիսկ մեկ քայլ նահանջողներին՝ գնդակ ճակատին:

5

Հրամայում եմ յուրաքանչյուր վաշտից առանձնացնել հատուկ գայլային ջոկատ, որը կռվի ընթացքում գիշերը կգործի գայլավարի, ամպամած եղանակին, մշուշոտ եղանակին՝ համարձակորեն:

6

Կրակել թշնամուն 800 քայլից ոչ ավել տարածության վրա: Մեծ տարածությունների վրա կրակում են միայն վախկոտները և իրենց վրա անվստահ խուճապահար տրամադրված տարրերը. նմանատիպ զինվորները ցուցադրում են իրենց վախկոտությունը և ոգևորում թշնամուն: Չմոռանանք՝ նշանառությունը 800:

7

Գայլային տակտիկայի և դիմանիտային գործի տիրապետման համար, ինձ վստահված ջոկատի շտաբին կից, կազմակերպվում են 7-օրյա դասընթացներ: Հրամայում են Դիզակի ջոկատի հրամանատարին՝ յուրաքանչյուր կանոնավոր և անկանոն վաշտերից երկուական կրթված և քաջ զինվորների գործուղել:

Հարավային ճակատի հրամանատար
փոխգնդապետ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 499, ց. 1, գ. 5, թ. 1 և հակ.: Վավերացված պատճեն: Ձեռագիր:

N 15

ԶԳՈՒՇԱՑԵՔ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԱՂՎԵՍԻՑ[160]

20 հունիսի 1920թ.
Ղափանի հանքեր

ԿԱՊԱՐԳՈՂԹԻ ԵՎ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Ադրբեջանը՝ մեր տմարդ թշնամին՝ ամեն կերպ աշխատում է խաբել, թուլացնել մեզ և ապա ներխուժել մեր երկիրը:

Չկարողանալով իր ռազմական ուժերին հենված, տիրել Ղարաբաղին, խորամանկ թշնամին աղվեսության դիմեց: Նա հաշվի առնելով ռուսական զորքերի շարժումը դեպի Բաքու, ցանկանալով դյուրությամբ հարված տալ Հայաստանին, իր երկրում հայտարարեց Խորհրդային իշխանություն:

Այժմ խորամանկությամբ ու դավերով՝ բոլշևիզմի դիմակի տակ նա ձգտում է իրականացնել իր հին երազը, այն է՝ հեշտ ճանապարհով տեր դառնալ Ղարաբաղին ու Զանգեզուրին:

Իր այդ սևեռուն նպատակին հասնելու համար նա ոտքի է հանել իր ռազմական, նյութական և բարոյական բովանդակ ուժերը:

Նա վարձել է, կաշառել է լրտեսների, էմիսարների, ահաբեկիչների և սրիկաների մի ամբողջ լեգեոն և սրանց ցրել Ղարաբաղի ու Զանգեզուրի գյուղերում իր սև ու չար գործը կատարելու:

Հայ կանանց ու երեխաների կարմիր արյունից վաննաներ ընդունող Սուլթանովի 50 միլիոնը իզուր չէր անցել: Բաքվի էժան բոներին ծախված քաղաքական շանտաժիստներն ու ստահակները բոլշևիզմի կեղծ վերարկուն հագած՝ ընկան հայ գյուղերն ու սկսեցին որսալ միամիտ հայ գյուղացիներին:

Իրենց եռանդով ու քաղաքական շարլատանությամբ վարձկան բանակի մեջ աչքի ընկան մասնավորապես մի քանի ստորահոգի և ուրացող հայեր:

Վերջինները քափ ու քրտինք կտրած երևացին Ղարաբաղի բոլոր ծայրերում, ասեցին, խոսեցին Ադրբեջանի, մասնավորապես Սուլթանովների, Մեխմանդարովների ու Նուրիների՝ Շուշիի հինգ հազար անթաղ մեռելների[161] վրա հայ կանանց ու մանուկների նամուսի ու սրբությունների հետ խաղացող այդ ասիական սատրապների «կարմիր» բոլշևիզմի մասին:

Այդ՝ իրենց խիղճը Ադրբեջանին ծախած, մեր ժողովրդի տականքի արժանավոր ներկայացուցիչներին հաջողվեց մի չափով քնացնել, թուլացնել Ղարաբաղի գյուղացիության կորովն ու մարտունակությունը, որի հետևանքը եղավ այն, որ թշնամին չհապաղեց տեր դառնալ մի շարք կարևոր ռազմագիտական կետերի ու բարձունքների:

Կեղծ, կարմիր դրոշակի տակ աղվեսաբար թշնամին մոտեցավ մեր դիրքերին, առերես եղբայրացավ, հավատացրեց, որ էլ կարիք չկա դիրքեր պահելու, արքուն ու անքուն սարերի վրա նստելու, որ ամեն ինչ փոխվել է, գայլը գառին ընկեր է դարձել, որ հեղափոխություն է, հաշտություն...

Այսպես, օձի լեզվով, խոսեց ձեռները հազարավոր շուշեցիների արյան մեջ թաթախած, հազարավոր հայ կանանց նամուսի վրայով անցած նենգ թշնամին ու միամիտ Ղարաբաղցին հավատաց և շատ տեղ թողեց դիրքերն ու իջավ լեռներից և ի՞նչ՝ իր սեփական ձեռքով քանդեց իր տունը, փորեց իր գերեզմանը և զրկվեց մի շարք նոր ու շեն գյուղերից:

Բայց շատ շուտով, երբ թուրքն ու ռուսը ձեռք ձեռքի տված և հայ «բոլշևիկն» առաջ գցած սկսեցին ավերել երկիրը, առևանգել և բռնաբարել իր քրոջն ու թալանել իր ունեցվածքը, զգաստացավ, զգաց, որ խաբված է, բայցևայնպես թշնամու հրդեհած մի քանի հայ գյուղերի մխացող ծուխն ու անթաղ դիակները մինչեւ օրս էլ դեռ շարունակում են «զարդարել» Ղարաբաղի հարավը:

Ահա՛ թե ինչպես Ադրբեջանի «բոլշևիկացած» աղվեսը խաբեց Ղարաբաղի միամիտ առյուծին:

Զգուշացեք Ադրբեջանի կարմիր աղվեսից:

Գնդապետ *Նժդեհ*

«Հառաջ» (Երևան), 10 հուլիսի 1920թ.:

N 16

ՓԱՌԱԿԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

20 մարտի 1921թ.

Ղափան

Փառակայի հասարակության.

Չգիտեմ ձեր գյուղը բոլորն են սրիկա, թե նրա մի մասը միմիայն: Ամբողջ մարդկությունը կարմիր սրիկաներից ազատվել է ուզում, իսկ դուք ընդհակառակն եք անում: Գիտեմ, շատ լավ գիտեմ, ձեր գյուղի և շրջանի ազգի դավաճան սրիկաներին, որոնք տարիների ընթացքում ձեռք բերած երկրի և ազգի պատիվն են ուզում ոտքի տակ տալ: Բայց թող լավ հասկանան, որ կգա մի օր, որ պատասխան կտան իրենց արածների համար:

Ճանաչում եմ արևելյան աղվես սրիկա Ջանգյուլին, նաև Ցղնա գյուղացի Քրիստափոր[162] կոչյալին, սրիկային, որը 5 փութ ցորենով ամբողջ երկիրն էր ուզում ծախել թուրքերին և լիրբ կնոջը թուրքերին բաշխող բժիշկ Գարեգինին.[163] մահ այդ ազգի դավաճաններին: Այն էլ պետք է իմանաք, որ վերջին ժամանակներս ամբողջ Ղարաբաղը մաքրված է նրանցից, այսինքն փառավոր հաղթանակներ ենք տարել, վերցնելով նրանցից 400 գերի, թնդանոթներ, գնդացիրներ:

.....[164] իսկական հայի և մարդու դիրքում եղեք, ինչպես եղել եք:

Աստված ձեզ հետ:

Սպարապետ *Նժդեհ*

ՀՀ ՊԱ, ֆ. 314, ց. 1, գ. 37, թ. 1: Պատճեն: Ձեռագիր:

N 17

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՏԵՐ-ՄԿՐՏՉՅԱՆԻՆ[165]

30 մարտի 1921թ.

Պարոն Քրիստափոր

Երբ դեռ Արարատյան Հայաստանը կարմիր սրիկաների ձեռքին էր՝ հասկանալի էր Ձեր կատարածը, Գողթանի սովետականացումը, իսկ այսօր, երբ Արարատյան Հայաստանի ժողովուրդը ապստամբությամբ մաքրել երկիրը, Ձեր սովետական իշխանության ճանաչելը անմիտ լինելուց զատ նաև դավաճանություն է: Երևանից քշված սրիկայախմբերի թափթփուկները փախչել-պատսպարվել են Նախիջևանում, իսկ Դուք Գողթանի խաբված ժողովրդին շարունակում եք պահել մթության մեջ և հավատացնել, որ Հայաստանը կարմիր սվոլոչի ձեռքին է: Աթարբեկյան, Ավիս, Կասյան կոչված кошкодав-ները փախել, այդ կողմերը և առևտուր սկսել պարսկական կոնսուլի հետ, որ, ստանալով երկու թնդանոթ, թույլ տա 7-10 հոգու անցնելու Պարսկաստան: Մի մոռանաք, որ այդ երեք հոգուն ուղարկելու համար ոչ թե միայն Դուք, այլև Գոթանի երեք դավաճան գյուղերը հավետ անեծքի առարկա պիտի դառնան: Այդ սրիկաներից ամեն մեկի խղճի վրա ծով արյուն կա:

Ի՞նչ, ուզում եք թուրքերի հետ առևտրական փոխհարաբերություններ սկսել: Կարելի էր, բայց դա չէ նշանակում, որ դուք երկիրը պետք է հայտարարեիք սովետական: Ինչ են իրենցից ներկայացնում Գողթանի երեք դավաճան գյուղերը: Երկու Հայաստանների (Արարատյան և Լեռնահայաստան) միջև ընկած մեր թշնամու հացին յուղ քսող մի ողորմելիություն, որն առանց դրսի օգնության չի ապրել և ապրել չի կարող: Ուշքի բերեք ձեր վատ ընկերներին, որոնք արջի ծառայություն են մատուցում և ձեզ, և՛ խաբված գյուղերին:

Առաջարկում եմ՝

1. Անմիջապես Գողթանը հայտարարել Արարատյան Հանրապետության անբաժան մասը:

2. Ձերբակալել դրսեցի սրիկաներին և հանձնել ինձ:

3. Կանոնավորել հայ-թրքական երթևեկությունն ու փոխհարաբերությունները:

4. Մի պատգամավորություն ուղարկել ինձ մոտ, որ, որոշ գրություններ ստանալով, անցնի Երևան՝ հոգալու Գողթանի կարիքը:

Սպարապետ *Նժդեհ*

Հ.Գ.

Ամբողջ Ռուսաստանում բռնկվել է ապստամբություն: Ամենուրեք ժողովուրդը պահանջում է համառուսական սահմանադիր ժողով: Կրոնշտադը, Պետրոգրադը, Կոզլովը, Ռյազանը, Պսկովը, Օրյոլը, Վորոնեժը, Խարկովը և ամբողջ Ուկրաինան գտնվում է ապստամբների ձեռքին: Մարտի 21-ից Մոսկվայի ռադիոն չի պատասխանում Երևանին և Տփխիսին: Ապստամբություն է և այստեղ: Ապստամբությունը ղեկավարում են Կոզլովը, Չերնովը (Էսէռ), Սավինկովը և Պետլյուրան: Դոնը, Կուբանը, Թերեքը և Դաղստանը վաղուց է (փետրվարի վերջին) մաքրված կարմիրներից: Վրացիները կռվել են հերոսաբար՝ պատճառելով մեծ կորուստ թշնամուն: Կարմիրները նահանջում են բոլոր ճակատներից: Անգլո-տաճկական դեսանտը շարժվում է դեպի Բաքվի թիկուն-

քը: Կարմիրները Գածակից գիշերով են փախել: Հայաստանի դրությունը կայուն է, ժողովրդի տրամադրությունը մարտական ու խանդավառ: Լեռնահայաստանի (իմ) զորքերը Չանախչի-Չիմանքենդով և Նոր Բայազետով միացել են Արարատյան Հայաստանի զորքերին:

Նժդեհ

ՀՀ ՊԱ, ֆ. 314, g. 1, գ. 38, թ. 1-6: Ինքնագիր:

N 18

ՑՂՆԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

[մարտ 1921թ.]

Ձեր վերջին օրերի ընթացքում կատարած (գուցե ոչ գյուղի ամբողջ հասարակության կողմից) ապօրինությունները, դավադրությունը, դավաճանության ակտերը լցրին իմ համբերության բաժակը: Դուք նպատակադրել եք դավաճանել հայությանը: Դուք Քրիստափոր կոչված կաշառված և ծախված արարածին եք սպասում: Դուք քաղաքապես բռնաբարված ու յոթն անգամ թալանված Երևանին միանալ եք ուզում. գուցե դուք ձեր սեփական ձեռքով ձեր գերազմանն եք փորում և արագացնում Գողթանի անկումը: Ձեզ հաջողություն այդ սև և ստոր գործում: Շարունակեք հուդայաբար ոսկով, արծաթով ծախել Գողթանը: Շարունակեք ձեր Կայենի, Հուդայի գործը, բայց մի մոռացեք, որ նա, որը ջարդեց կարմիր սրիկաների ամբողջ դիվիզիաները, վերցնելով մի քանի միլիոն փամփուշտ և 200-ի չափի գնդացիրներ, հազարներով գերիներ, նա հեշտությամբ կմաքրի նաև մեկ երկու դավաճան գյուղեր: Ամոթ, ամոթ, մեղք և թուք ձեր գյուղի այն սևահոգի դավաճաններին, որոնք մի կտոր հացի համար պատրաստ են իրենց կինն ու սրբությունները վաճառքի հանել: Գիտեմ ճանաչում եմ ձեր օձերին, բժ.Սարգսյանին, որն այնքան հեշտությամբ մոռացավ իր նահատակված կնոջ հիշատակը, ճանաչում եմ նաև Վահան կոչվածին, որը համառորեն ձգտում է վերան դարձած Ագուլիսի բախտին արժանացնել նաև Ցղնան: Չեմ մոռացել նաև Ջանգուլին, այդ արևելյան աղվեսին, որը, առանց խղճի խայթի, հայությանը երեք կոպեկով կծախի: Հաջողություն այդ երեք դավաճաններին, հաջողություն նաև այն գաղափարական հայրենասերներին, որոնց վրեժխնդիրը և զինված բռունցքը կամաց-կամաց սեղմվում է այդ պոդլեցների ջանքերը փշրելու համար:

Ցղնեցիներ, թողեք ձեր դավաճանությունը հրամանատարների դեմ, եթե չեք ուզում ագուլիսցիների օրին հասնել, թողեք վատությունները և քաջ գիտցեք, որ Աստված և երկիր միայն կարող ենք պահել և ոչ թե հիշածս ծախված երեք դավաճանները:

Սյունյաց սպարապետ *Նժդեհ*

ՀՀ ՆՊ, ֆ. 114, g. 2, գ. 70, թ. 41: Պատճեն: Ձեռագիր:

N 19

ԼԵՌՆԱՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՊԱՐԱՊԵՏԻ ՕԳՆԱԿԱՆ ԿՈՒՌՈՅԻՆ

Խիստ գաղտնի և կարևոր 23 ապրիլի 1921թ.
Գորիս

Արևմտյան ճակատի թիկունքի հրամանատարը՝ Պարոնյանը տեղեկացնում է, որ մալականները սկսել են մեկ-մեկ, երբեմն խմբերով փախչել դեպի Նախիջևան և այլուր: Նույն այդ բանը պնդում է Սիսիանի կոնտրհետախուզության պետը: Դա չափազանց վատ նշան է: Մալականները կարող են թռուցիկ խմբեր կազմակերպել և գիշերները խլրտել մեր զորամասերի թիկունքում և թևերում, բացի այն, որ կարող են միանալ թշնամուն և լրտեսել:

Թշնամի տարրի ներկայությունը մեր բանակի թիկունքում վտանգավոր է և միանգամայն անհանդուրժելի:

Հրամայում եմ՝

48 ժամվա ընթացքում տեղահանել մալականներին Բազարչայ և Բորիսովկա գյուղերից:

Տեղահանությունը կազմակերպել այս ձևով՝

1. Նախ ձերբակալել բոլոր տղամարդկանց 18-45 տարեկանը և ուժեղ հսկողության տակ ուղարկել Տաթև:

2. Կանանց, երեխաներին ու ծերերին տալ 4 օրվա հաց և ուժեղ հսկողության տակ, առանց որպեն կորցնելու, ուղարկել Գորիս:

3. Ամբողջ վալյուտային ապրանքը՝ արժույթը, ոսկին, խալիները, խաս ապրանքը, դրամը և այլն պետականացնել:

4. Ամբողջ տավարը (կթան, ծի, ջորի) պետականացնել, դնելով բոլորի վրա կլեյմո[166] և 3/4-ը ուղարկել Տաթև, իսկ մի քառորդը թողնել բանակի համար:

5. Տնային ապրանքը, որը կարելի է փոխարինել ցորեն-գարիով, նույնպես պետականացնել, իսկ ավելորդ իրերի մի մասը հավաքել ու ամբարել մի տեղ, իսկ մնացածը տալ գաղթականներին:

6. Ցորենը, գարին, կորեկը, հաճարը, կարտոֆիլը պետականացնել, հավաքելով մի քանի ամբարներում:

7. Թաքստոցների տեղն ասելու համար պահել մի քանի հոգի ծերեր և երեխաներ:

8. Տեղահանությունը կատարել առանց աղմուկի և կազմակերպված ձևով:

9. Թալանչիներին գնդակահարել:

10. Գործի անցնել գրությունս ստանալուն պես և խորապես գիտակցել, որ այդ արվում է հանուն մեր երկրի ինքնապաշտպանության:

Սպարապետ՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ, Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Գ տետր, էջ 157-159: Բնագրի կրկնօրինակ: Ձեռագիր:

N 20

ԳՈՂԹԱՆԻ ԶՈՐԱՄԱՍԻ ՊԵՏԻՆ

N 007 7 մայիսի 1921թ.

Գողթանի գյուղերը ծևականորեն, առերես, իրենց հայտարարել են սովետական՝ հարևան թրքությունից հացահատիկ ստանալու համար:

Ըստ վերջին տեղեկությունների Գողթանի հայ գյուղերում, բացի տեղացի ռևկոմների անդամները, դրսից եկած մեծամասնական ուժեր չկան:

Հրամայում եմ՝

1. Ձեր զորամասով Ղափուջուղի վրայով անցնել Գողթան այդ շրջանին տիրելու նպատակով: Շարժվել այսօր ևեթ:

2. Գյուղերը գրավելուն պես՝ շրջանը հայտարարել զինվորական դրության մեջ:

3. Ստեղծել քաղաքացիական իշխանություն և ենթարկել Ձեզ:

4. Բռնագրավել եղբայր Սարգսյանների մոտ եղած ամբողջ խաս թելը (մոտավորապես 60 փութ) և փոխանակել հացահատիկով՝ զորքի համար:

5. Հավաքել և դնել զորքի տրամադրության տակ գյուղացիության կողմից պետական պահեստներից տարված ռազմամթերքը, գնդացիրները և թնդանոթը:

6. Գնդակահարել բժիշկ Գարեգին Սարգսյանին, նախկին վարատար Շիգանյանին և Ջանկուլյանին:[167]

7. Կապվել մուսուլման ապստամբ ուժերի հետ և՝ պարզել նրանց մեր քաղաքական նպատակը: Թուրք ապստամբների պարագլուխներն են՝ Ռահիմ խան, Քելբալայի Քերիմ և Քելբալայի Մուխթար:

8. Լուրջ լրտեսությամբ պարզել թշնամու ուժերի քանակը և դասավորությունը Օրդուբաթում, Ջուլֆայում և Նախիջևանում և հաղորդագրել ինձ:

9. Կապ և կոնտակտ ստեղծել Գենվազի ուժերի հետ և նախապատրաստել Օրդուբաթի գրավումը:

10. Թշնամու՝ Օրդուբաթի կողմից Կարճևանի վրա հարձակման դեպքում զարկել, հարվածել թշնամուն թիկունքից:

Զորավար՝ *Նժդեհ*

ՀՀԴ ԿԱ: Բնագիր: Ինքնագիր:

N 21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽՍՊԱՐԱՊԵՏ ԿՈՒՌՈՅԻՆ

Խիստ գաղտնի 1 հունիսի 1921թ.
Ղափանի հանքեր

Հրամայում եմ Ձեզ տրված մարտական խնդիրը՝ Վայոց Ձորի վերագրավումը իրագործել ոչ ուշ, քան ամսույս 7-ը: Օպերացիան հաջողությամբ պսակելու համար առաջնորդվել այս հրահանգներով.

1. Խուսափել կռիվներին դիրքային, ձգձգվող բնույթ տալուց:

2. Գործողությունները տարերային ու ահաբեկիչ դարձնելու համար գործածել մեծ քանակությամբ ձեռնառումբեր և ուժանակ (*динамит*):

3. Գիշերով բռնել կարևոր ռազմագիտական կետերը և դեռ լույսը չբացված արագ ու վճռական առաջխաղացմամբ հանկարծակիի բերել թշնամուն:

4. Ամենուրեք թշնամու ուժերը առնել աքցանի մեջ (*взять в клещи*) և այսպիսով զրկել նրան դիմադրելու կամ համառելու հնարավորությունից:

5. Հարձակումից առնվազն մեկուկես ժամ առաջ թեթև զորախմբակներ անցկացնել թշնամու թիկունքն ու թևերը:

6. Երբեք մասսայական կրակ չբանալ և թույլ տալ զինվորներին միայն իրենց պետերի հրամանով կրակել, այն է 800 քայլի վրա:

7. Առաջին հարվածով իսկ անդամալուծել թշնամու հրետանիները, որոնց տեղը հաստատորեն պետք է իմանալ նախօրոք:

8. Ամեն մի հաջողություն օգտագործել ամենալայն մասշտաբով, որի համար թշնամու ուժերի հետապնդումը շարունակել այնքան ժամանակ, մինչև որ վերջինս կզրկվի այս կամ այն կարևոր ռազմագիտական կետի վրա ամրանալու և ապա հակահարձակողականի անցնելու ամենաթույլ հնարավորությունից:

9. Զորասյուների պետերից պահանջել, որ խստիվ ներդաշնակեն իրենց գործողությունները, երբեք չթուլացնելով օպերացիայի ամբողջ ընթացքում կենդանի կապն ու կոնտակտը:

10. Բոլոր խնդիրները իրագործել առանձին վճռականությամբ և արագությամբ, քաջ գիտակցելով, որ լեռնային կռիվներում մեթոդիզմից գերադասելին խիզախությունն է, վտանգի անգիտակցումը (ruck):

11. Կռիվները ղեկավարել անձամբ և բոլոր պետերի խնդիրները դնել այս ձևով.

«Մեռիր, բայց հաղթիր»:

Հայաստանի սպարապետ զորավար *Սժդեհ*

ՀՀԴ ԿԱ, 1650-3՝ Սպարապետի օգնական Կուռոյի վավերագրերի Ա տետր, էջ 48-49:

N 22

ԲԱՐԳՈՒՇԱՏԻ, ԶԱՆԳԵԶԱՆԻ, ԶԱԲՈՒՂԻ ԵՎ ՀԱՋԻ ՍԱՄԼՈՒԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

1 հունիսի 1921թ.

Արդեն մեկ տարուց ավելի Ադրբեջանը գտնվում է բռնակալների իշխանության տակ: Այդքան ժամանակ ամբողջ ադրբեջանական աշխատավոր ժողովուրդը կրում է ռուսական բոլշևիզմի ծանր լուծը: Բոլշևիզմն իրեն համարում է աշխատավոր ժողովրդի միակ ու իսկական ներկայացուցիչը, թե պաշտպանում է նրա շահերը: Մինչդեռ իրականում ոտնահարում է այդ ժողովրդի բնական ու օրինական իրավունքները, զրկում նրան ազատ ինքնորոշման իրավունքից, ոչնչացնելով Ռուսաստանի Մեծ հեղափոխության բոլոր նվաճումները: Այժմ, ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ մեզ մոտ՝ Կովկասում չկա անգամ ստվերը այդ մեծ շարժման ու նվաճման: Գրեթե ամբողջ Կովկասը հեծում էր ռուսական բոլշևիզմի բեռի տակ. սկզբում Ադրբեջանը, հետո Հայաստանը, այնուհետև Վրաստանը: Կովկասի բոլոր ժողովուրդները հերթով կրել և կրում են բոլշևիկյան կառավարման ամբողջ դառնությունը: Միայն հպարտ ՍՅՈՒՆԻՔՆ է, որ դեն նետելով օտար լուծը, ջարդելով 11-րդ բանակի զորամասերին, դրանով իսկ ազատագրել է ազատասեր երկրամասը բոլշևիկների ճնշումից ու կամայականությունից:

ՍՅՈՒՆԻՔԻ բնակչությունը, տոգորված բոլոր և հատկապես փոքր ժողովուրդների համար թանկ ազատությունը պաշտպանելու անհրաժեշտության գիտակցությամբ, ազատություն, որ արժեցել է աշխատավոր մարդկանց անհաշիվ կյանքեր, կտրուկ թոթափել է ռուսական բոլշևիզմի լուծը և նորից պարզել Սյունիքի ազատության դրոշը: Ջարդելով կարմիր ավազակների խղճուկ գնդերին, անհաղթ ՍՅՈՒՆԻՔԸ կարող էր օգտագործել իր հաղթանակը՝ «փառապանծ» 11-րդ բանակի խուճահար փախչող մնացորդներին հետապնդել մուսուլմանական շրջաններով, մահացու հարվածներ հասցնել կարմիրներին: Սակայն իմանալով, որ ռազմական գործողությունները կարող են խիստ անդրադառնալ այդ տարածքների բնակչության բարեկեցության վրա, որ ՍՅՈՒՆԻՔԻ արծիվների առաջխաղացումը մուսուլմանական տարածքներից ներս՝ թաթարներին կբերեր քայքայում ու աղքատություն, ես հրամայեցի դադարեցնել հակառակորդի հետագա հետապնդումը:

Այժմ ամբողջ Կովկասում թագավորում է բոլշևիկների կամայականությունն ու խրախճանքը և միայն անհաղթ ՍՅՈՒՆԻՔԻ անմատչելի բարձունքներում է ծածանվում անկախության ու ազատության դրոշը: Բոլշևիկները, լավ գիտակցելով, որ զենքի ուժով անկարելի է տիրել ՍՅՈՒՆԻՔԸ, դիմել են խորամանկության, ձեռնարկել աշխարհի բոլոր սադրիչների կողմից փորձված սադրանքի և մի ազգին մյուսի դեմ հրահրելու միջոցը: Ռուսական բոլշևիզմը, բաժանելով Կովկասի ժողովուրդներին և սերմանելով ազգամիջյան թշնամություն, ցանկանում է ամրապնդել իր տիրապետությունը Կովկասում: Բայց չենթարկվեք այդ սադրանքին, քանզի ուժեղացնելով հակառակորդին, դրանով իսկ երկարացնում եք Կովկասում նրա մնալը և տիրապետությունը: Երբ բոլշևիկները թողնեն Կովկասը, ինչպես դա տեղի ունեցավ 1918թ., այդ դեպքում այստեղ կողք կողքի կմնանք մենք՝ բնիկ ժողովուրդներս: Ըստ այդմ հրամայական անհրաժեշտություն է դառնում անկեղծ բարեկամությունը և գործողությունների միասնությունն ընդդեմ ընդհանուր հակառակորդի: Բայց, դժբախտաբար, ոչ բոլորն են գիտակցում ընդհանուր գործի համար այդ անհրաժեշտությունը: Կան շրջաններ, որոնք իրենց գործողություններով միայն մեծացնում և ամրապնդում են բոլշևիզմի ուժը: Ես նկատի ունեմ մինքենդցիների վարքագիծը, ովքեր վերջին ժամանակ անընդմեջ ասպատակում են հայկական գյուղերը, քշելով անասուններին և սպանելով խաղաղ բնակչությանը: Դրա հետևանքով ստեղծվում է բոլշևիկների համար միանգամայն ցանկալի ազգային թշնամանքի ու երկպառակության մթնոլորտ: Ես առաջարկում եմ հանուն ժողովուրդների համերաշխության և մեր երկրի օտար լծից մաքրելու ընդհանուր գործի, ստանձնել նախաձեռնություն՝ հասկացնելու, համոզելու մինքենդցիներին՝ դադարեցնել ասպատակու-

թյունները, որոնք ուժեղ կերպով նյարդայնացնում են Սյունիքին և հող ստեղծում անցանկալի տրամադրությունների ու գործողությունների համար: Հույս ունեմ, որ խելամտությունը և անհաշիվ զոհեր տված մարդկանց ու Կովկասի բոլոր ժողովուրդների գալիք լուսավոր կյանքի առաջ պատասխանատվության զգացումը բարձր կկանգնեն բոլշևիկների նկատմամբ, և մինքենդցիները կգիտակցեն իրենց սխալներն ու կդադարեցնեն Մոսկվայի լծից Կովկասի ժողովուրդների ազատագրության դեմ ուղղված կործանարար գործողությունները:

Թող կորչե՛ն բոլշևիկները և եկվորների լուծը:

Կեցցե՛ Կովկասի ժողովուրդների եղբայրությունն ու համերաշխությունը:

Գեներալ *Նժդեհ*

ՀՀ ՆՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 1, թ. 2: Տպագիր օրինակ: Թարգմ. ռուսերենից:

ԲԱՆՏԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

ԻՆՉՈ՞Ւ ՍՏԵՂԾՎԵՑ ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ [168]

[1946-1948թթ.]
[ՀԽՍՀ ՊԱՆ ներքին բանտ]

Տարիների ընթացքում ես ուսումնասիրում էի գաղութահայության տրամադրություններն ու նրանց քաղաքական հոսանքները: Գիտականորեն զննում նրանց հոգեբանությունը հայ ժողովրդի աննախադեպ աղետի՝ կոտորածների շարքի լույսի ներքո:

Ինձ հատկապես մտահոգում էին մեր երիտասարդ սերնդի տրամադրությունները, սերունդ, որը ծնվել էր Հայրենիքի սահմաններից դուրս կամ մանուկ հասակից, իրերի բերումով, հայտնվել էր արտասահմանում: Գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ աղետներ տեսած և մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են տառապել հոգեկան ետընթացով, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսևորումների ձևով: Աղետի ենթարկվածը, հոգեպես խիստ ուժասպառվելով, ամեն ինչ կորած է համարում. լքում է իր պատմական առաքելությունը, կրավորաբար և հնազանդորեն համակերպվում իր վզին փաթաթված քաղաքական ճակատագրին: Նախ և առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից՝ անստեղծագործ: Հոգեպես նա դառնում է անիշխան, ժխտելով ամեն մի արժեք, հեղինակություն, իշխանություն, դառնում է զզվելի անձնապաշտ, փոքրհոգի ու խորթ հասարակությանը և սկսում հետապնդել սոսկ մեկ առօրեական նպատակ - իր սեփական հացն ու հանգիստը: Որպես «ուրացող» (պարտվողական), նա լքում է իր դիրքերը ողջ ճակատով: Իր գոյության պայքարը նա արտաքին ճակատից տեղափոխում է իր ներաշխարհը, որի հետևանքով ավելի է «կոտրվում», ուժասպառվում:

Այսպիսով նա մոռացության է մատնում իրեն սպառնացող արտաքին վտանգը՝ թշնամուն:

Միով բանիվ, նա անընդունակ է դառնում նոր պայքարի, ճիգի, զոհողության, դուրս ընկնում պատմության հունից և սկսում է քարշ տալ իր անստեղծ ու անիմաստ գոյությունը՝ հարուցելով իր հանդեպ ազգերի զզվանքն ու խղճահարությունը:

Հայկական պարտվողականությունը արտահայտվեց նաև հիվանդագին կրոնականությամբ: Ընդհանուր քայքայման պայմաններում հայկական գաղթօջախներում առաջացան բազմաբնույթ անհեթեթ աղանդներ. «ռուհչիներ», որոնք իրենց հոգու փրկության համար քարոզում էին հրաժարվել ազգային-հասարակական կյանքից, «անդենականներ», որոնք, հայերի երկրային հայրենիքը համարելով անիրական, հորդորում էին նվիրվել անդենական, երկնային հայրենիքին, «վերամկրտչականներ»՝ նույնքան ապազգային, հակահասարակական և հիվանդագին: Իսկ Ստամբուլում թուրքական իշխանությունների խորհրդով կազմավորված «հայկական կոմիտեն» հայերին քարոզում էր՝ իրենց համարել «լուսավորչական թուրքեր»:

Այս պատկերը լրացնում էին հայկական կուսակցությունները, որոնք ներքին տարաձայնություններով հայության մեջ առաջ էին բերում պառակտումներ և ազգային ոգու սառեցում:

Այսպիսով, գաղութահայերը, տրվելով կույր պարտվողականությանը, սկսել էին ջուր լցնել հայ ժողովրդի գոյության թշնամիների ջրաղացին, խելահեղ պոռթկումով ձգտելով սեփական պարտությունն ու դժբախտությունը դարձնել վերջնական:

Մի խոսքով, սփյուռքի մեր գաղթօջախներում ստեղծվել էր մի մթնոլորտ, որում մեկ միլիոնի հասնող գաղութահայերը, ի ուրախություն թուրքերի, փորձում էին ինքնասպան լինել: Այդպիսին է հայ իրականության մերօրյա պատկերը գաղթօջախներում:

Այնտեղ ինձ վիճակվեց ապրել խորը ողբերգություն՝ ազգային ամոթի ողբերգություն: Սակայն, տասնամյակների ուսումնասիրությունները ու մտորումները ինձ հանգեցրին մի այլ ճշմարտության ևս. պարտվողականությամբ տառապող ժողովուրդները անբուժելի չեն, կյանքը հարափոփոխ վերածնունդ է, հնարավոր է և մեր գաղթօջախների հայության առողջացումը: Իսկ դա կարող է տեղի ունենալ միայն վերանորոգմամբ, որն էլ հնարավոր է միայն սեփական պատմության իրական արժեքները վերապրելու ճանապարհով:

Մեկնվելով այս վերլուծությունից՝ ես, հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգությամբ, ձեռնարկեցի մեր երիտասարդ սերնդի կազմակերպման գործը՝ նրան համարելով ամենակարող վերակերտիչ գործոնը:

Քանի որ գաղութահայության ամենամեծ զանգվածն ապրում է ԱՄՆ-ում, որտեղ և մեր սերնդին ամենամեծ վտանգն է սպառնում (ի դեմս ամերիկյան միջավայրի ամենակուլ, ծուլող հատկության), ես Ցեղակրոն շարժումը սկզբնավորեցի Ամերիկայում: Ցեղակրոն շարժումը ոչ մի ընդհանուր բան չունի և չէր էլ կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի այն, նախ և առաջ, բարեփոխիչ շարժում-վերածնունդ է, որը հնարավոր է միայն սեփական, այլ ոչ փոխառնված արժեքներով: Միայն թուրքամետ, պարտվողական ու պատմագիտության ասպարեզում տգետ հայը կարող է պարսավել Ցեղակրոն շարժումը:

Ցեղակրոն շարժումը ոչ թե կուսակցություն է, այլ Ուխտ: Նրա կազմակերպություններն այդպես էլ կոչվում են՝ Ուխտեր: Ով այս կամ այն չափ ծանոթ է Հայոց պատմությանը, անմիջապես կհասկանա, որ Ցեղակրոն շարժումը, որպես ուխտ, նման է Մամիկոնյան ասպետների Ուխտին: Մամիկոնյանների պես՝ ցեղակրոնը դավանում է ազգին անշահախնդիր նվիրվածություն և հանուն Հայրենիքի մահը քաջաբար ընդունելու վճռականություն:

Իմ շարժման անհրաժեշտությունը թելադրված էր մի շարք այլ կարևորագույն դրդապատճառներով ևս:

Քեմալական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, թուրքերը՝ բարբարոս, բայց արթուն քաղաքական բնազդով օժտված մի ազգ, փորձեցին մեզ ոչնչացնել նաև բարոյապես: Թուրքիայում կատարված հայերի ցեղասպանությունն արդարացնելու կամ, ծայրահեղ դեպքում, հասկանալի դարձնելու նպատակով, թուրքերը մի շարք եվրոպական ծախու գրչակների ու հասարակական գործիչների աջակցությամբ, հակահայկական քարոզչության արշավ սկսեցին:

Հայկական սպանդին հետևեց բարոյական եղեռնը՝ հայերի վարկաբեկումը: Ամերիկյան ու եվրոպական ամբիոններից ոչ թուրքերը հաճախակի հայտարարում էին. «Իրենց անարգ բնավորության պատճառով հայերը դարձան թուրքերի նողկանքի, այլ ոչ թշնամության զոհերը»: Այսպիսով, մեղադրվում և վարկաբեկվում էին միլիոնավոր զոհերը, իսկ արդարացվում մարդասպանները: Հակահայկական քարոզչությունը պնդում էր, որ մեղավոր են սպանվածները և ոչ մարդասպանները՝ հայերին վերագրելով գոյություն չունեցող արատներ.

ա) քոչվորականություն, իբր հայերն իրենց հողը չեն սիրում,

բ) տնտեսական բնագավառում՝ անամոթ գիշատչի վերաբերմունք իրենց «զոհերի» նկատմամբ,

գ) բարոյականության բնածին պակաս, որի հետևանքով և հակահասարակական կեցվածք և այլն:

Ահա թե ինչպես էին թուրքերը հայերին ներկայացնում ամերիկյան և եվրոպական ժողովուրդներին:

Այդ հակահայկական քարոզչությունը, իրենց ռազմական, առևտրական ու մամուլի կցորդների հետ միասին, վարում էին թուրքական դեսպանություններն ու հյուպատոսությունները: Դրանում ակտիվ դեր էր խաղում և արտասահմանի թուրք ուսանողությունը: Հակահայկական քարոզչությամբ հատկապես աչքի էին ընկնում գրող Խալիդե հանըմը, Վեհիբ փաշան և ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար բեյը:

Բնականաբար, թուրքական ծավալուն քարոզչությունը որոշ երկրներում պետք է խթաներ հակահայկականությունը (հայամետությամբ հայտնի Կրաֆտ Բենարը հայկական հարցին նվիրված իր գրքերից մեկում ցավով նշում է, որ Եվրոպայում հայերին համարում են «թալանչի ժողովուրդ»: Իսկ ջերմ հայասեր Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում 1928 թվականին ցավով հիշեցնում էր, որ հայը, չնայած իր բարձր հոգևոր առաքինություններին, մարտունակ չէ):

Նման իրավիճակում, երբ հայկական կուսակցություններն ու կրոնական հատվածները, փոխանակ հակազդելու թուրքական քարոզչությանը, ելել էին իրար դեմ, մեր վերաստեղծված Ցեղակրոն Ուխտերը ձեռնամուխ եղան հակաթուրքական քարոզչությանը՝ ի պաշտպանություն իրենց անարգվող Ցեղի: Նրանք հավաքեցին հայերի ու թուրքերի մասին տարբեր փիլիսոփաների, պատմաբանների, մարդաբանների, գրողների, աշխարհագրագետների արտահայտած կարծիքներ և ներկայացրեցին ամերիկյան ու կանադական ժողովուրդների դատին:

Կար Ցեղակրոն շարժման անհրաժեշտությունն ընդգծող մի կարևորագույն հանգամանք ևս. դա մեր հին սերնդի քաղաքական տեղատվությունն էր Թուրքիայի նկատմամբ: Մեր հին կուսակցությունները սկսել էին լքել Հայկական հարցն ու համակերպվել այն մտքի հետ, որ պետք է հրաժարվել Թուրքիայում մնացած հայկական տարածքներից ու մերձենալ թուրքերի հետ: Այդ ուրացումը երիտասարդ սերնդի աչքում մեզ կդարձներ արհամարհելի ժողովուրդ:

Ցեղակրոն շարժումը կոչված էր հայությանը տեր դարձնելու Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին: «Լոզանը-երբե՛ք» կարգախոսը զարդարում էր Ցեղակրոն Ուխտերի առաջին ծրագիրկանոնագրքի տիտղոսաթերթը: Մեզ համար Հայկական հարցի պատմությունը չէր սպառվում թուրքերի համար բարենպաստ Լոզանի պայմանագրով: Ցեղակրոն Ուխտերը, ի հակակշիռ հին սերնդի, շարունակում են մնալ Թուրքիայի պարտատերերը:

Որտեղ էլ լինի ցեղակրոնը, ինչպիսի ընկերային դիրք էլ գրավի, նա կշարունակի մնալ հպատակն ու մարտիկը Հայաստանի: Ցեղակրոն շարժման առաջացրած խանդավառությունն ու ձեռք բերած հաջողությունը աննախընթաց երևույթներ էին մեր գաղութներում: Մեկ ու կես տարվա ընթացքում այն իր դրոշի շուրջը համախմբեց մոտ 6000 երիտասարդների ու պատանիների, որոնք երդվել էին Հայաստանից դուրս ևս հայ մնալ:

Շարժումն ուներ Ուխտեր Հյուսիսային Ամերիկայում, Կալիֆորնիայում, Կանադայում, իսկ տեղերի երիտասարդության նախաձեռնությամբ Ուխտեր ստեղծվեցին նաև Խարբինում, Սիրիայում, Իրանում, Թրակիայում, Երուսաղեմում, Բուլղարիայում: Մեր համարյա բոլոր գաղութներից ինձ էին դիմում իրենց երկրներն այցելելու առաջարկով՝

համախմբելու տեղի երիտասարդությանը և հաղորդակից անելու նրան Ցեղակրոն շարժմանը:

Հենց այդ պատճառով էլ Դաշնակցությունը, որն իր տեղը կորցնելու վախից դրդված՝ հայ կյանքում երևան եկավ, ցանկացած նոր ուժի նկատմամբ թշնամական վերաբերմունք էր դրսևորում, հանդես եկավ Ցեղակրոնության դեմ:

Երես թեքելով լաց լինելու քաղաքականությունից ու գթասրտություն քարոզելուց, ինչպես նաև պարտվողական գծից, որ կիրառում էին հին կուսակցությունները, նոր սերունդը տարերայնորեն նետվեց հարազատի գիրկը:

Ցեղակրոնությունը՝ դա կենդանի բողոք է, ցույց՝ մեր ժողովրդի քաղաքական կամքը նենգափոխած հին կուսակցությունների դեմ:

Ցեղակրոնի համար առաջնային դաշնակիցը ռուս մեծ ժողովուրդն է: Նրա համար հայաստաններ չկան, այլ կա Հայաստան: Եթե այժմ Հայաստանը խորհրդային է, դա նշանակում է, որ, պատմական զարգացման օրենքների համաձայն, նա կարող էր լինել միայն այդպիսին:

Նույնքան տրամաբանական ու հստակ է ցեղակրոնի վերաբերմունքն Անգլիայի՝ Թուրքիայի պաշտպանի նկատմամբ: Անհնար է լինել Թուրքիայի թշնամին, իսկ նրա պաշտպանի՝ բարեկամը: Ցեղակրոնները բարյացակամ են իրենց թշնամու թշնամիների նկատմամբ և թշնամություն են տածում իրենց թշնամու բարեկամների հանդեպ:

Մենք շատ լավ գիտակցում ենք, որ Անգլիան, որի հովանու ներքո ապրում են հարյուր միլիոնավոր մահմեդականներ, նախապատվությունը չի տա մի բուռ հայերին: Որպես իմպերիալիստական ժողովուրդ, անգլիացիները դաժան են, բարոյազուրկ (ինչպես հռոմեացիներն էին): Եթե նրանց շահերը պահանջեն, ապա կզոհաբերեն ոչ միայն հայ ժողովրդին, այլև տասնյակ այդպիսի ժողովուրդների:

Մենք ոչինչ չունենք՝ ո՛չ մեծ տարածք, ո՛չ մեծ քանակություն, ո՛չ տնտեսական մեծ հնարավորություններ, հանուն որոնց Անգլիան ցանկանա ճանաչել մեզ իբրև՝ թեկուզ անդրկովկասյան ժողովուրդների ընտանիքի իրավահավասար անդամ:

Արդեն երկար տարիներ, Անգլիայի օրհնությամբ, գործում է պանթուրքիզմը, որի ճանապարհի լայնքով տեղադրված է Հայաստանը, որը հեշտությամբ կարող է վերածվել Անկարայի ու Բաքվի միջև դիակների կամրջի: Ահա ինչով պետք է բացատրել Ցեղակրոն Ուխտերի թշնամանքը նաև Անգլիայի հանդեպ:

Այս մասին գիտեն և՛ թուրքերը, և՛ անգլիացիները, այդ պատճառով էլ վերջին տարիներին թուրքական մամուլի օրգանները մեղադրանքներ էին հնչեցնում միայն իմ հասցեին, իմ գործունեության դեմ, այլ ոչ թե Դաշնակցության:

Այն ժամանակ, երբ Դաշնակցության պատասխանատու գործիչներ Համո Օհանջանյանը, Ջամալյանը, Կարո Սասունին օգտվում էին Թուրքիայի բարեկամ երկրներ ազատ մուտք գործելու ու բնակվելու իրավունքից, 1937թ. հունական կառավարությունն ինձ մերժեց Եգիպտոս ուղևորվելու տարանցիկ վիզա տրամադրել՝ պատճառաբանելով, որ ես «Թուրքիայի անհաշտ և վտանգավոր թշնամին եմ»: Համանմանորեն, ինչպես Եգիպտոս մեկնելու դեպքում, ինձ նաև մերժեցին Պաղեստինի մուտքի վիզա հատկացնել: Իսկ Եգիպտոսի վիզան ինձ հաջողվեց ստանալ մի շարք աշխատանքներից հետո խոշոր կաշառքի միջոցով, ընդ որում, ինձանից ստորագրություն վերցրեցին, որ «ես Եգիպտոսում ոչ մի հրապարակային դասախոսությամբ հանդես չեմ գա ու ոչ մի ժողով չեմ հրավիրի»:

Տեր-Հարությունյան Գարեգին

ՀՀ ԱԱՆ արխիվ: Մեքենագիր: Թարգմ. ռուսերենից:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

հունվար 1947թ.
ՀԽՍՀ ՊԱՆ ներքին բանտ

1. XIX դարի երկրորդ կեսին արևմտահայերն ապրեցին իրենց պատմության առավել տագնապալի ժամանակաշրջան: Լինելով դատապարտված պարբերական ստրկացման, բռնի մահմեդականացման և ֆիզիկական ոչնչացման՝ նրանք վերածվել էին անպաշտպան և անօգնական ստրուկների, որոնց հրեշավոր սուլթանականությունը զրկել էր ապրելու տարրական իրավունքներից, ունեցվածքից ու մարդկային արժանապատվությունից:

Եվրոպան ու քաղաքակիրթ մարդկությունը ոչ միայն ոչ մի օգնություն չցուցաբերեցին, այլև նույնիսկ հանդես չեկան բարոյական վրդովմունքի սովորական արտահայտություններով:

Այսպիսի քաղաքական իրադրությունում հայերին մնում էր երկուսից մեկը. կա՛մ հարմարվել՝ գոյատևելու համար, կա՛մ ապստամբել: Նրանք ընտրեցին վերջին ճանապարհը: Հայերը նույնպես ստիպված եղան գնալ հեղափոխական ուղիով, որով մոտ անցյալում գնացել էին թուրքական լծի դառնությունը ճաշակած բոլոր ժողովուրդները:

Այդ ժամանակ գերիշխում էր «աշխարհին ղեկավարում են կարծիքները» տեսակետը:

Այդ ժամանակվա Եվրոպան ազատության ձգտող ժողովուրդներից պահանջում էր «հավելյալ արյուն»՝ միակ ապացույցը նրա, որ տվյալ ժողովուրդն արժանի է ավելի լավ ճակատագրի: Եվ հայ ժողովուրդը կտրեց իր զարկերակը: Սկսվեց հայ ազատագրական շարժումը՝ որպես պատմական պահի պահանջ:

2. Արևմտահայերի հեղափոխական շարժմանը շուտով միացավ ռուսահայերի համալսարանական ուսանողությունը: Անցած դարի 90-ական թվականներին առաջացավ Դաշնակցություն կուսակցությունը. այն ստեղծեցին Քրիստափոր Միքայելյանը, Ռոստոմ Զորյանը և Սիմոն Զավարյանը: Նրանք սկզբում ուզում էին իրականացնել Դաշնակցության հեղափոխական նախորդների՝ արմենականների ու հնչակյանների համատեղ գոյակցությունը, որոնց գործունեությունը կրում էր անջատ բնույթ: Նրանք փորձեցին ստեղծել հայ ժողովրդի՝ գոյություն ունեցող բոլոր ազատագրական ուժերի միություն: Սակայն, դա չհաջողվեց, և, այդպիսով, Դաշնակցությունը, փոխարեն դառնալու հայ հեղափոխականների դաշնակցություն (միություն), մնաց որպես հայ հեղափոխական դաշնակցություն:

Իր գոյության սկզբում այս կազմակերպությունը բնույթով առավելապես հեղափոխական, մարտական և ազգային էր: Այդպիսին նա մնաց մինչ 1907թ.: Նրա ծրագրային խնդիրները որքան համեստ էին, այնքան և հասկանալի՝ արևմտահայերի կյանքի, ունեցվածքի ու պատվի ապահովում. այլ կերպ ասած՝ բարենորոգումներ:

Նա որպես մարտավարական զենք ընդունեց հայդուկային հարձակումները, ահաբեկչությունը և քարոզչությունը: Առավել գործող էր նրա ահաբեկչական զենքը: Կարճ ժամանակում նա իր ակտիվում ունեցավ որոշ արգասավոր արդյունքներ. օրինակ՝ Օտոմանյան բանկի գրավումը Ստամբուլում, Խանասորի արշավանքը, սուլթան Աբդուլ Համիդի վրա մահափորձը և այլն:

«Հայկական պայքարը ցնցել է Եվրոպայի հասարակական կարծիքը»,- գրում էին ֆրանսիական թերթերը սուլթանի դեմ մահափորձի առթիվ:

Դաշնակցությունը վճռականորեն հանդես եկավ նաև այն օրերին, երբ ցարական կառավարությունը պատրաստվում էր բռնագրավել եկեղեցական ունեցվածքը: Նա փրկիչ դեր խաղաց հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, երբ ցարիզմը ազգամիջյան երկպառակություններ հրահրելով՝ փորձում էր անդրկովկասյան աշխատավորական զանգվածներին հեռու պահել մոտեցող ռուսական հեղափոխության մասնակցությունից:

Հեղափոխական հայդուկը կոփվեց հեղափոխական պայքարում ու դարձավ անձնվիրության և անձնազոհության մարմնավորում: Առաջին շրջանի հայդուկներին կարելի է դնել մեր դասական հայրենասերների կողքին՝ չմեղանչելով մեր հերոսական անցյալի դեմ:

Ոչ պակաս հեղինակություն էին վայելում հայ մտավորական հեղափոխականները՝ ժողովրդի վիշտը կիսող նրա զավակները: Նրանց, ինչպես նաև հայդուկների համար ազգային գործը սուրբ էր, որին ծառայելը նրանք համարում էին պարտք ու պատիվ:

Իր առաջին շրջանի ժողովրդականության ու հերոսականության համար Դաշնակցությունը պարտական էր հենց այդ երկու կարգի հեղափոխականներին, որոնց առկայությունը պայմանավորված էր Դաշնակցության հիմնադիրների բնութագրերի արտակարգ բարոյականությամբ: Նրանք իրականում մեծություններ էին՝ հայտնի իրենց կենցաղի համարյա զինվորական խստությամբ, ուղիղ նայում էին վտանգի աչքերին, վայելում անվիճելի հեղինակություն: Նրանց համար գերագույն օրենք էր անձնազոհությունը: Նրանք բոլորն էլ չունեին անձնական կյանք և մահացան վտանգներով լի հեղափոխական պայքարի դիրքերում:

Անհնարին է զուգահեռներ անցկացնել Դաշնակցության սկզբնական և այժմյան ղեկավարների, այն ժամանակվա հայդուկների ու

հետո եկած մաուզերիստների միջև՝ առանց հիանալու առաջիններով և՝ խորապես նողկալով վերջիններից: Իսկապես, ի՞նչ համեմատություն կարող է լինել Նիկոլ Դումանի և ավազակ Դրոյի, լեգենդար Սերոբի ու մորթապաշտ Տեր-Մինասյանի (Ռուբեն փաշա) միջև:

3. Սակայն, կուսակցության հիմնադիրների մահը և բարձրագույն կուսակցական մտավորականության՝ տեսաբանների ու ղեկավարների ոչնչացումը (հայոց մեծ ողբերգության օրերին՝ Ստամբուլում և Թուրքահայաստանում) հոգեպես գլխատեցին Դաշնակցությանը, որն անճանաչելության աստիճան այլասերվեց:

Նոր ղեկավարության հոգևոր աղքատությունը շուտով իր կնիքը դրեց Դաշնակցության դեմքին ու գործունեությանը: Լինելով փոքր տրամաչափի բարոյական մարդիկ՝ նոր ղեկավարները եղան անարժան ու անհավատարիմ իրենց առաջնորդներին, որոնց համար կյանքի հիմնական սկզբունքը, ինչպես պատմական անցյալում, այնպես էլ իրենց ապրած օրերին, եղավ գաղափարների սրբությունը, որին նվիրեցին իրենց և հենց այդ վեհ գաղափարներով էլ ձեռնամուխ եղան հայ ազատագրական շարժմանը:

Նոր ղեկավարները հեղափոխական շարժումն առաջնորդելու իրենց անկարողությանն ավելացրին նաև կեղծ բարեպաշտական (երկերեսանության) հոգեբանությունը, որի հետևանքով Դաշնակցությունում այլևս հմուտ ղեկավարություն երևան չեկավ: Նրա բյուրոն ոչ մի անգամ չկանգնեց պահի բարձունքին: Գաղափարական առաջնորդների գործի շարունակողները դարձան միջակ շեֆերը:

Դաշնակցությունը դարձավ «շեֆական» կուսակցություն, և, քանի որ «շեֆականությունը», հայտնի հոգեբանական օրենքների համաձայն, միշտ հանգեցնում է «թայֆականության», դրանով Դաշնակցությունը կորցրեց իր գաղափարական և կազմակերպական միասնությունն ու միածույլ բնութագիրը: Միասնական Դաշնակցությունը դադարեց գոյություն ունենալ. առաջացան Դաշնակցություններ, տեղի ունեցավ խորը պառակտում:

«Շեֆականությունը» միշտ ուղեկցվում է կարիերիզմով, շահամոլությամբ ու փոգրոգիությամբ: «Շեֆականությունն» անկարող է գաղափարին տրվել ամբողջությամբ, անկարող է առաջացնել խանդավառություն, առանց որի անհնար է որևէ հեղափոխական գործ, նա թշնամին է տեսական խղճմտանքի. բնորոշ գծեր, որոնց բացակայության դեպքում ղեկավարությունը վերածվում է լոկ ղեկավարության ծաղրանկարի: Այդպիսին դարձավ Դաշնակցությունն իր հիմնադիրների մահից հետո, այդպիսին նա դարձավ Հայաստանի Հանրապետության ժամանակ, այդպիսին է այժմ, երբ արդեն չի արդարացնում իր հեղափոխական, մարտական ու ազգային ատրիբուտներից և ոչ մեկը:

4. Զրկված լինելով պատմա-փիլիսոփայորեն հիմնավորված աշխարհայացքից՝ դաշնակցական ղեկավարությունը չհասկացավ պատմական երևույթների դիալեկտիկան, չհասկացավ հասարակական օրենքների օրինաչափությունը, որպեսզի գործի համապատասխանորեն: Նա տրվեց պատահականություններին և գործեց իրականությունից կտրված՝ առանց հաշվի առնելու տեղի ու պահի կոնկրետ պայմանները:

1907թ. նա որդեգրեց սոցիալիզմը, որը ոչ միայն ուտոպիա էր, այլև պետք է կրեր լոկ քարոզչական բնույթ: Դաշնակցական սոցիալիզմը չդարձավ կենդանի գործ, քանի որ դրա համար պակասում էր անհրաժեշտ (համապատասխան) իրավիճակը:

Այն չէր բխում մեր սոցիալական միջավայրից և, դառնալով սոցիալական քվիետիզմ[169] ծառայեց միայն որպես հարմար թեմա նշանավոր արևմտահայ գրող, երգիծաբան Երվանդ Օտյանի այրիչ երգիծանքի համար: Դաշնակցության գաղափարական զգեստափոխումը, նրա «սալոնային» սոցիալիզմը ոչ մի օգուտ չբերեցին հայ աշխատավորին, բայց մեծ չարիք պատճառեցին հայ ազատագրական պայքարին:

Հայկական կուսակցությունների քաղաքական պայքարը խորապես պառակտեց հայ ժողովրդին՝ թուլացնելով նրա դիմադրական ուժն այն պահին, երբ, Թուրքիայում տեղի ունեցող հեղափոխական իրադարձություններին համապատասխան, հայությունից պահանջվում էր լինել համերաշխ, միակուռ, ընդունակ ինքնապաշտպանության: Հայության ակտիվ տարրերը, ի ուրախություն մեր արտաքին թշնամիների, այդ օրերին, երբ սուլթանական բռնակալության դեմ պայքարող երկրի հայերը նրանց աղաչում էին ուղարկել ղեկավար ուժեր ու զինամթերք, իրենց ժամանակը և ուժը վատնում էին ներքին ճակատում: Բռնկված ներքին հակամարտությամբ՝ նրանք թշնամուն հնարավորություն ընձեռեցին անգիջում և անպատիժ շարունակել հայերի ոչնչացման քաղաքականությունը: Կովկասի հայերը պայքարող թուրքահայերի համար պիտի հանդիսանային որպես պահուստային ուժ և քաղաքական թիկունք: Փոխարեն էլ ավելի ամրապնդելու իր թիկունքը և առավելագույնս օգտագործելու այն, Դաշնակցությունը բարձրացրեց սոցիալիզմի դրոշը և դրանով զգալիորեն բարդացրեց Երկիր մարտական ուժեր ու զենք առաքելու կենսապես անհրաժեշտ գործը:

Սուլթանականության դեմ հանդես գալով հեղափոխական պայքարով՝ Դաշնակցությունը, միաժամանակ, պիտի ջանար թեկուզ ապահովել հայ բուրժուազիայի տրամադրած նյութական օգնության առաքումը: Հայկական կուսակցությունների ներքին գզվռտոցն ու Դաշնակցության սոցիալիզմն այն դարձրին անհնարին:

Հեղափոխությունը և հեղափոխական պայքարը չեն հանդիսանում լոկ քարոզչության նյութ. նրանք նախապատրաստվում են: Իսկ Դաշնակցությունը չէր նախապատրաստել պայքարը: Մի խոսքով, Դաշնակցությունը կոպտորեն մեղանչեց հեղափոխական ռազմավարության տարրական պահանջների դեմ: Մինչ պայքարի սկսվելը, նա չկարողացավ կազմակերպել այն հոգեբանորեն, քաղաքականապես և նյութապես: Այդ պատճառով էլ Թուրքահայաստանում հեղափոխական կռիվները եղան ողբերգականորեն հերոսական, բայց քիչ արդյունավետ:

5. Ինչպես Դաշնակցության աշխարհայացքը, այնպես էլ՝ նրա քաղաքականությունը միշտ տառապել են հակասություններից, բայց առավել աղաղակող հակասությունը մնում է այն հանգամանքը, որ նա, նույնիսկ սոցիալիզմի որդեգրումից հետո, հայկական հարցի լուծման համար (ինչպես ժամանակին Գրիգոր Արծրունին և մշակականները) լծվեց եվրոպական իմպերիալիզմի կառքին:

Սպասվում էր, որ Դաշնակցության ղեկավարությունը, իր անհաջողություններից հետո, էմիգրացիայում հանգամանորեն կվերանայի սեփական գործունեության ակտիվն ու պասիվը: Այո, դա սպասվում էր, բայց տեղի չունեցավ, չնայած բոլորը ազգային, հասարակական կազմակերպությունները, որ ունեն պատասխանատվության զգացում, հետագա սխալներից և աղետներից խուսափելու համար վերլուծում են իրենց գործունեության անցած ուղին: Ցավոք սրտի, դաշնակցական ղեկավարությանը միշտ չի հերիքել պատասխանատվության զգացումը: Այդ պատճառով էլ նրա սխալները ընդունեցին ազգային աղետի չափեր: Դաշնակցական համագումարները զբաղվում էին չնչին հարցերով, բայց ոչ կուսակցության գործունեության բնույթի վերանայմամբ: Դաշնակցական մտավորական երիտասարդության որոշ ռևիզիոնիստական փորձեր մնացին անարդյունք:

Փորձեր արվեցին ճշտել պատասխանատվությունը 1915թ. Տարոնում (Մուշ), 1920թ. Նախիջևանում և Շուշիում հայերի կոտորածների ու Ղարսի խայտառակության համար: Դեռ Հայաստանում դաշնակցական իշխանության ժամանակ փորձեր արվեցին հայտնաբերել ու պատժել ներքին գործերի նախարար Կարճիկյանի (որն այդ օրերին ջանում էր սանձահարել մաուզերիստներին) սպանողներին, հատկապես՝ սպանության ոգեշնչողին:[170]

Հարցեր հարուցվեցին պարսկական հեղափոխական շարժման առաջնորդ Եփրեմ խանի և Տարոնի լեգենդար հերոս Գևորգ Չաուշի սպանությունների վերաբերյալ: Սակայն, այդ փորձերը դաշնակցության ղեկավարության կողմից խեղդվեցին իրենց սաղմնային վիճակում: Դաշնակցական բյուրոն, իրենից բացի, ոչ մի դատական ատյան չի ճանաչում և դաժանորեն հետապնդում է բոլոր նրանց, ովքեր հայրե-

նասիրական մտահոգություններից դրդված՝ պատասխանատվության մասին որևէ հարց են հարուցում: Դաշնակցությունում պարբերաբար ծագող բոլոր ներքին խռովությունները՝ Վարդ Պատրիկյանի և Սաֆոյի հակակուսակցական ելույթները 1906-1907թթ. Բալկաններում, միհրանական շարժումը 1908թ. Թիֆլիսում, Լևոն Աթաբեկյանի անջատողական շարժումը 1909թ. Բաքվում, Անդրանիկի ու Սմբատի շարժումները 1917թ. Թիֆլիսում, Ֆերահյանի և Շահան Նաթալիի շարժումները, մարտկոցականների խռովությունը, նույնը Նիկոլ Աղբալյանի և Լևոն Շանթի գլխավորությամբ՝ 1936-1937թթ. Սիրիայում, վերջապես, իմ կողմից սկսած շարժումը 1937թ. Բուլղարիայում. այս բոլորը հայրենասիրական և հեղափոխական գիտակցության դրսևորումներ են: Իսկ որոշ դեմքեր, հանդիսանալով ազգային աղետների պատճառ, շնորհիվ դաշնակցական կուսակցությանն իրենց պատկանելությանը, ոչ միայն մինչ այժմ մնացել են անպատիժ, այլև շարունակում են զբաղեցնել կուսակցական ղեկավար պաշտոններ:

Հակառակ իր ֆորմալիզմին և ցուցադրական դեմոկրատիզմին, դաշնակցական ղեկավարությունը չի հանդուրժում կուսակցական ընկերների քննադատությունը: Սակայն, ստեղծարար քննադատության փոխարեն, ղեկավար շրջանակներում հրեշավոր չափերի հասան խարդավանքները, բանսարկությունները, թայֆականությունը:

Աննկարագրելի անհանդուրժողական ու սառն են հարաբերությունները Բյուրոյի անդամների միջև, երբ խոսքը գնում է խառը բյուրոյի մասին, երբ նրա կազմում գտնվում են երկու ճամբարների ղեկավարները: Այս դեպքում ներքին հակամարտությունը միանգամայն կաթվածահար է անում բյուրոյի աշխատանքը: Հենց այդպիսի պատկեր էր ներկայացնում Դաշնակցությունը մինչ Փարիզի 12-րդ կուսհամագումարը, որտեղ ընտրվեց միասնական բյուրո: Այժմ Դաշնակցության գերագույն մարմինը նորից հանդիսանում է երկճամբարային: Նրանում մասնակցում է Դրոն՝ որպես Սիմոն Վրացյանի խմբի ներկայացուցիչ: Ռուբեն Տեր-Մինասյանի բյուրոն ատում է Դրոյին: Դոկտոր Օհանջանյանի ու Նավասարդյանի աչքերում Դրոն «գյադայի» տիպար է՝ ընդունակ ցանկացած հանցագործության: Տեր-Մինասյանն ինձ ուղղած մի նամակում Դրոյին անվանել է «հայ ժողովրդի դավաճան», որն «իր կամավորական հարձակումներով հարուցեց հայ ժողովրդի սպանդը Թուրքիայում»:

Չնայած դրան, Տեր-Մինասյանի բյուրոն 1938թ. Դրոյին ընդգրկեց բյուրոյի կազմում՝ Վրացյանի լռությունը «գնելու» համար, որն իր կողմից խմբագրվող «Վեմ» ամսագրում առաջ էր քաշել Տարոնում (Մուշ) հայերի կոտորածի հարցը: Փաստորեն, Տեր-Մինասյանը, տվյալ դեպքում, Դրոյի նկատմամբ իրեն պահեց ճիշտ այնպես, ինչպես 1919թ. վերջին, երբ հարկ եղավ իր համար ապահովել ռազմական նախարարի

պաշտոնը, որին ձգտում էր նաև Դրոն: Այդ օրերին Դրոյին Երևանից հեռացնելու լավագույն միջոց համարվեց մուսաֆաթական Ադրբեջանի դեմ ապստամբություն կազմակերպելու առաքելությամբ նրան Լեռնային Ղարաբաղ ուղարկելը:

Հետևանքները մեզ հայտնի են. մուսաֆաթական ուժերի կողմից կատարված հայերի սպանդը Շուշիում և երկու տասնյակից ավելի հայկական բնակավայրերում: Բոլորը վրդովված էին Դրոյից, ղարաբաղցիները պահանջում էին դատի տալ նրան, իսկ Դրոն անվրդով շարունակում էր «քեֆ անել Երևանի այգիներում»: Եվ այսպես, Տեր-Մինասյանը ղարաբաղյան ժողովրդի արյան գնով դարձավ նախարար: Այս դեպքում նույնպես, որպեսզի Տեր-Մինասյանը շարունակի հանգիստ նստել Բյուրոյի իր պաշտոնում, Դրոյին հնարավորություն ընձեռվեց մեր ժողովրդին նետելու նոր արհավիրքների գիրկը:

Վերջին համաշխարհային պատերազմի օրերին Դրոն պակաս ակտիվ կլիներ, եթե չլիներ Բյուրոյի անդամ: Այդ մասին գիտեին նրանք, ովքեր մտցրել էին Դրոյին Բյուրոյի կազմի մեջ. նրանք գիտեին, որ Դրոն հեշտությամբ կարող է հասնել մինչև հայրենիքի դավաճանության: Այնուամենայնիվ, նրանք Բյուրոյում Դրոյին տեղ տվեցին, որպեսզի Սիմոն Վրացյանը լրիվ չբարձրացնի Տարոնում հայերի ջարդի պատճառների քողը, որի տակ թաքնվում է Տեր-Մինասյանը:

6. Սպասվում էր նաև, որ Դաշնակցությունն էմիգրացիայում կվերանայի իր աշխարհայացքն ու գործունեության մեթոդները՝ հարմարեցնելու դրանք մեր ժամանակի ոգուն և մեր ազգային գոյատևման իրական պայմաններին: Բայց այստեղ էլ չիրականացան նրանց հույսերը, ովքեր տառապում էին հայ կյանքի դատարկությունից և անդեմությունից:

Փոխարեն իրենց մտածողության ու գործունեության մեջ մի փոքր գիտակցություն դնելու, պարզություն մտցնելու կուսակցության գաղափարական կերպարանքում, Բյուրոյի գործավար (քարտուղար) Տեր-Մինասյանը մի սվաղ ևս քաշեց կուսակցության աշխարհայացքի վրա: 1935թ. լույս ընծայվեց նրա «Հ.Յ.Դ. կազմակերպությունը» բրոշյուրը: Այդ բրոշյուրից տպավորություն է ստացվում, թե հեղինակը հանդիսանում է Դաշնակցության երդվյալ թշնամին, և որ ինքը որոշել է բարոյապես այլանդակել, մեռցնել Դաշնակցությունը: Հաստատելու, որ չի ունեցել տեսաբաններ և այժմ էլ չի զգում նրանց կարիքը, որ Դաշնակցության ծրագրում տեղ են գտել տարբեր ուսմունքներ՝ սկսած մանր բուրժուականությունից մինչև կոմունիզմ՝ նա անում է անվերապահ հետևություն. Դաշնակցության համար նշանակություն չունի ո՛չ բարոյականությունը, ո՛չ տեսական պատրաստվածությունը, ո՛չ կուսակցական ստաժը: Ո՞րն է արժեքավոր: «Կարգապահությունը», - պատասխանում է Տեր-Մինասյանը: Իսկ ի՞նչ բան է կարգապահությունը. բոլոր

դեպքերում՝ Տեր-Մինասյանը և նմանները պիտի մնան անպատիժ, իսկ շարքային անդամները՝ լռակյաց:

7. Էմիգրացիայում Դաշնակցությունն իր աշխարհայացքի անորոշության, քաղաքական անհիրազեկության և պատասխանատվության զգացումի բացակայության հետևանքով դարձել ու շարունակում է մնալ քայքայիչ և խորտակիչ ուժ:

Դաշնակցության առավել աններելի արարքների թվում հարկավոր է նշել քաղաքական սպանությունները, որոնք էլ ավելի պառակտեցին արտասահմանի հայերին:

Դաշնակցությունը, ինչպես նաև նրա քաղաքական հակառակորդները՝ հնչակներն ու ռամկավարները, անուղղակիորեն խթանում են հայերի, մասնավորապես, նրա երիտասարդ սերնդի ուծացումը: Իր մեջ պառակտված ժողովուրդն ավելի շատ ցուցաբերում է սեփական բնավորության բացասական գծերը, այդ պատճառով էլ դառնում ավելի վանող այն ժողովրդի աչքում, որի երկրում նա ժամանակավորապես ապաստանել է: Երբ օտարերկրացիների նկատմամբ ատելությունը դառնում է գերիշխող երևույթ, տարրական իմաստությունը և ազգային արժանապատվությունը հայ քաղաքական կուսակցություններից պահանջում են լինել առավել շրջահայաց:

Մեր ժողովուրդը ոչ միայն քաղաքականապես խաբված է, այլև բարոյապես զրպարտված Եվրոպայում և Ամերիկայում: Այդ պատճառով հայը պարտավոր պիտի լինի հանդես գալ որպես «ցեղորեն գիտակից էակ», այսինքն, ինչպես ասում է Մարքսը, «էակ, որը ցեղին (ժողովրդին) վերաբերվում է այնպես, ինչպես իր սեփական անձին»: Դա է պահանջվում կենսաբանորեն բարոյական ժողովրդից: Սեփական ինքնապաշտպանությունը դժվարեցնող ժողովուրդն արժանի է արհամարհանքի, արժանի է իր ճակատագրին՝ ինչքան էլ որ այն ծանր լինի: Այս տեսանկյունից՝ Դաշնակցությունը, որպես հզոր գաղութային կազմակերպություն, ունի ամենամեծ մեղքը: Այն, ինչն արտասահմանում կոչում են հայկական քարոզչություն, ոչ այլ ինչ է, քան գթասրտություն աղերսող լալկան նվնվոց, որն արտասահմանցիների մոտ առաջացնում է լոկ խղճահարություն և շարունակ աճող արհամարհանք: Դաշնակցական ղեկավարությունն իսկական քարոզչության մասին հասկացողություն չունի: Նա ցուցադրում է իր այժմյան հոգևոր ցնցոտիքը՝ անվանելով այն քարոզչություն:

Նա չկարողացավ օգտագործել հայ ժողովրդի պոտենցյալ ուժը հեղափոխության շրջանում, քանզի չէր ճանաչում սեփական ժողովրդին, և այժմ ի վիճակի չէ տանել ազգային իրական արժեքների քարոզչությունը, որովհետև հիմնավոր չգիտի հայոց պատմությունը, այդ պատմության փիլիսոփայությունը:

Եթե նույնիսկ, վերջին քառորդ դարում, որևէ եվրոպական լեզվով լույս է տեսել այս կամ այն հայամետ գիրքը, ապա հեղինակը արտասահմանցի է եղել:

Այսպես կոչված հայասեր քարոզչության համար Դաշնակցությունը ոչինչ չի արել: Ժամանակ չուներ: Նա զբաղված էր Անդրանիկին սևացնելու անշնորհակալ գործով: Անդրանիկին վարկաբեկելու համար, Դաշնակցության պատվերով հրատարակվեց նրա դեմ ուղղված մոտ 1000 էջանոց երկհատոր աշխատություն: Ամբողջովին Անդրանիկին նվիրված Սեպուհի հուշերը հանդիսանում են այդ ազգային հերոսին իր փառքի բարձունքից տապալելու դատապարտելի փորձ: Հենց որ Անդրանիկը հեռացավ Դաշնակցությունից, միանգամից դարձվեց «հարբեցող», «անկիրթ», «վախկոտ», «այս կամ այն ճակատում իր մասնակցության համար նախօրոք սակարկող», «աննշան գործողությունների ճանապարհով մեծ դափնիներ քաղող» և այլն:

Բոլոր ջանքերը ներդրվեցին Անդրանիկին «զարդարելու» քաջնազարյան (դոնքիշոտյան) որակումներով, չգիտակցելով, որ դրանով իրականում ծիծաղում են հայ ազատագրական շարժման վրա, քանզի ժողովուրդն Անդրանիկին համարում է հայ ազատագրական պայքարի խորհրդանիշ:

Անկում են ապրում բոլոր այն ժողովուրդներն ու կուսակցությունները, որոնք թեթևամտորեն են վերաբերվում սեփական հերոսականությանն ու հերոսներին: Այդ հոգևոր վայրագությունը մեր երիտասարդ սերնդի վրա թողեց առավել քայքայիչ ազդեցություն:

1921թ., Զանգեզուրից իմ հեռանալու հաջորդ օրը, Արաքսի պարսկական ափին ես թույլ տվեցի «անտակտություն»՝ պատժելով երկու դաշնակցական նախարարների՝ Հակոբ Տեր-Հակոբյանին ու Եփրեմ Սարգսյանին, միաժամանակ և՝ Բյուրոյին փոխարինած Գերագույն մարմնի անդամներին: Այդ դեպքից մի քանի օր անց ես Ս. Վրացյանից ստացա նամակ, որում ասվում էր.

«Դու թո՛ղ քո այդ անդրանիկյան արարքները: Անդրանիկը պահում էր իրեն այնպես, ինչպես դու, իսկ այժմ անօգնական թափառում է Եվրոպայում: Կուսակցությունը որոշ հույսեր էր կապում քո անվան հետ: Լսիր քո հին ընկերներին, չլսես՝ քեզ համար վատ: Միայն գիտեմ, որ մարդիկ բարձրանում են մեծ դժվարությամբ, շատ տարիների ընթացքում, բայց ընկնում են մեկ վայրկյանում»:

Այսպիսով, ինձ հետ արդեն անշնորհակալ էին վերաբերվում, սպառնում սևացնել մեկ ակնթարթում, գահընկեց անել, որովհետև ես մտրակով ծեծել էի երկու վախկոտի: Այո, ես հաշվի չէի առել, որ դաշնակցական ղեկավարները օգտվում են մի տեսակ արտոնյալ դիրքից և ազատ են ամեն կարգի պատասխանատվությունից:

Ինձ սպառնում էին Անդրանիկի ճակատագրով:

Վերը նշված նամակի ստացման օրը ես խորապես ափսոսացի, որ մտրակելու փոխարեն չգնդակահարեցի Դաշնակցության Գերագույն մարմնի այդ երկու անդամներին: Նույն օրը ես զգացի ինձ հոգեպես հեռացած, կտրված Դաշնակցությունից:

8. «Դաշնակցությունը՝ Դաշնակցության համար»: Հայաստանից դուրս՝ Բյուրոն հավատարիմ մնաց այս լոզունգին: Էմիգրացիայում նա չուներ որոշակի հետևողական քաղաքական գիծ կամ, ավելի ճիշտ, այն հետևողական էր միայն ինքնապահպանման գործում՝ գաղափարապես մնալով ռուս նարոդնիկների հին «ճանապարհներին»: Դաշնակցությունն իր քաղաքական գիծը չէր պայմանավորում հայ ժողովրդի բացառիկ դրությամբ: Իր հանցագործ անփութությամբ Դաշնակցությունն արհամարհեց մեր ժողովրդին սպառնացող թուրքական (Երկրի հայերի համար) և ուծացման (արտասահմանի հայերի համար) վտանգները:

Նրա շատ անդամներ համոզված են, որ Հայաստանի ցուցադրական անկախացման գաղափարը կարող է դառնալ նրա գերեզմանափորը: Նրանք դա գիտեն, բայց մինչ այժմ ինքնանպատակ կուսակցականությունը և կուսակցական եսապաշտությունը չեն թույլատրել դաշնակցական ղեկավարությանը խելամիտ հարաբերությունների մեջ մտնել սովետական իշխանության հետ:

Ճշմարիտ չէ այն հայրենասերը, ու իր հայրենասիրությունը բոլոր դեպքերում կապում է հայրենիքում այս կամ այն վարչակարգի հետ:

Անձամբ ես քարոզել եմ սովետների դեմ, բայց իմ անբարյացակամ վերաբերմունքը սովետական իշխանության հանդեպ պայմանավորված էր ոչ թե Հայաստանում գոյություն ունեցող վարչակարգով, այլ բացառապես այն բարեհաճությամբ, որ սովետները ցուցաբերում էին Թուրքիայի նկատմամբ:

Բացի այդ, իմ քարոզչությունը ոչ մի անգամ չի կրել հակահայաստանյան բնույթ, ընդհակառակը՝ ես արտասահմանի հայերին համարել եմ Հայաստանի հպատակներ ու մարտիկներ՝ անկախ նրանց սոցիալական, քաղաքական և կրոնական պատկանելությունից: Այս ճշմարտության վկան է հանդիսանում Ցեղակրոն ուսմունքը: Մեր ազգային բարոյականության նշված հայեցակարգն ինձ էմիգրացիայում թույլ չի տվել երբևէ թեկուզ մեկին այս կամ այն առաքելությամբ Հայաստան ուղարկել:

Դաշնակցությունը պաշտոնապես չմտավ «Պրոմեթևս»-ի մեջ (դրան խոչընդոտեցին կուսակցության շարքային անդամները), բայց, վերջին պատերազմի նախօրեին, դաշնակցական բյուրոյի կողմից հայ-թուրքական հարաբերությունների վերանայման հարցի շուտափույթ քննարկումը հաստատեց, որ նրան տրված չէ սեփական սխալներից

դասեր քաղելու կարողություն: Նա այժմ թուրքերի հետ մերձենալու փորձեր է անում՝ հաշվի չառնելով, որ ներկայիս պայմաններում թուրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու փորձերը նշանակում են բարոյապես տանուլ տալ հայկական հարցը: Սեփական թուլությամբ թելադրված այս քաղաքական ակտը արտասահմանի հայերի մոտ առաջացնում է խորը բարոյազրկում, իսկ քաղաքակիրթ մարդկության մոտ՝ նողկանք: Այն հանգամանքը, որ Անգլիան այժմ հանդիսանում է Թուրքիայի բարեկամը, ամենևին էլ չի արդարացնում Դաշնակցության ուխտադրժությունը (ուրացությունը): Որպես առաջնակարգ իմպերիալիստական տերություն, Անգլիան շարունակում է վարել իր ավանդական գաղութային քաղաքականությունը. ընդ որում, նա թուրքերին հովանավորելու ոչ քիչ հիմքեր ունի՝ ի հաշիվ հայերի արյան: Ավելի քան 100 տարի Անգլիան պարբերաբար հայտարարում է, որ իր դրոշը ծածանվում է Միջին Արևելքի ծովերի վրա, որպեսզի ապահովի և պաշտպանի իր հին դաշնակցի՝ Թուրքիայի անկախությունը: «Որտեղ հասնում են մեր թնդանոթները, այնտեղ մեր դաշնակիցները պիտի վայելեն հարգանք», - գրում էին անգլիական թերթերը Ղրիմի ռուս-թուրքական պատերազմի օրերին:[171]

Եթե հայերը ցանկանային, որ անգլիական թնդանոթները հասնեն մինչև Արաքսի ափերը, ապա իրենք, որպես թույլ կողմ, ստիպված պիտի լինեն հարգել Թուրքիայի՝ Անգլիայի դաշնակցի կամքը:

Այժմ Դաշնակցությունը գտնվում է «ո՞ւմ հետ լինելու» երկընտրանքի առջև՝ թուրքերի՞, թե՞ ռուս մեծ ժողովրդի: Նա դավաճան կլիներ, եթե վճռականորեն չպատասխաներ. «Ռուսների հետ՝ Թուրքիայի դեմ»:

Հենց այս քաղաքական կողմնորոշումն են պահանջում մեր ազգային և մարդկային արժանապատվությունն ու հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովման շահը:

9. Երկրորդ համաշխարհային պատերազմում դաշնակցական բյուրոն հանդես եկավ պառակտված ճակատով: Ինչո՞վ էր դա պայմանավորված՝ արկածախնդրությա՞մբ, թե՞ կանխամտածված երկերեսանի քաղաքականությամբ: Այս հարցում ես հակված եմ երկրորդ տարբերակին. դաշնակցական ղեկավարությանը հատուկ է թեթևամտությունը:

Այն հանգամանքը, որ Դրոն Բալկաններում, Փարիզում, Բեռլինում բազմիցս ժողովներ գումարեց և ստեղծեց քաղաքական կոմիտե, ապացուցում է, որ նրան չհաջողվեց ապահովել Բյուրոյի պաշտոնական հավանությունն իր արկածախնդրական նախաձեռնություններին: Մինչ Սարգիս Արարատյանի հետ ընդհարումը և դրանից հետո, Դրոն չդադարեց ջանալ ապահովել իր թիկունքն անհաջողության դեպքում: Նա կանգ չառավ նույնիսկ Հայաստանի ժողովրդին սադրելու փորձի դեմ: Արդյունքում՝ նա հասավ մինչև հայրենադավության:

10. Մեր ժողովրդին բաժին ընկած աննախընթաց դժբախտությունների պատճառը, ինչպես պատմական անցյալում, այնպես էլ նոր ժամանակներում, հանդիսանում է հայկական տխրահռչակ, անհաղթելի անհատապաշտությունը՝ պայմանավորված մեր պատմական կյանքի ու տեղագրական առանձնահատկություններով, դարերով ապրած ստրկությամբ: Այս հոգևոր հատկանիշը, հատկապես այնպիսի փոքր ազգերի մոտ, որպիսին մենք ենք, դառնում է չարիքների աղբյուր՝ անհատին վերածելով անարխիստի՝ բառիս առավել բացասական իմաստով: Վերջին շրջանի դաշնակցական մտավորականությունը, լինելով եվրոպականության գերին, փոխարեն հաղթահարի իր մեջ անհատապաշտությունը, հռչակեց այն որպես հոգևոր դրական հատկանիշ և ջանում էր իր մեջ ավելի զարգացնել այդ անհատական-անիշխանական տարերքը:

Ժողովրդի համար չկա ավելի մեծ չարիք, քան անհատապաշտություն դավանող ղեկավարը: Նա հեշտությամբ է դառնում կոլեկտիվ ջանքերի ու շահերի թշնամին: Այդպիսի ղեկավարն ավելի շուտ ընկնում է սեփական իրավունքների, քան պարտականությունների հետևից: Նրա իդեալը մեկուսի անձնական երջանկությունն է:

Այսօր այդպիսին են նրանք, որոնք կոչված են ղեկավարելու Քրիստափորի ու Ռոստոմի կուսակցությունը:

11. ա) Աշխարհայացքի անորոշություն,

բ) քաղաքական անկարողություն,

գ) ոչ բավարար պատասխանատվության զգացում.

ահա այն երեք չարիքները, որոնցից աղետալի կերպով տուժել է մեր ժողովուրդը և ինքը՝ Դաշնակցությունը:

Դաշնակցությունն այժմ հանդիսանում է որպես մեռնող երևույթ: Նրա գոյությունն այսուհետ անօգուտ է, անտրամաբանական, ոչ անհրաժեշտ: Նա գտնվում է հակասության մեջ ներկա ժամանակաշրջանի հետ: Նա պե՛տք է հեռանա:

Այս գիտակցումով էլ ես հեռացա Դաշնակցությունից:

Տեր-Հարությունյան Գ.

ՀՀ ԱԱՆ արխիվ, Մեքենագիր: Թարգմ. ռուսերենից:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

1947թ.
ՀԽՍՀ ՊԱՆ ներքին բանտ

1. Բուլղարիայի Դաշնակցությունն այդ կուսակցության հնագույն շրջանային կառույցներից է:

Հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանը և Ռոստոմ Զորյանն իրենց առաջին հեղափոխական քայլերն արել են այս երկրում: Բուլղարիան որպես հենակետ է ծառայել Դաշնակցության հակաթուրքական գործունեության համար: այստեղ է առաջացել հայ-մակեդոնական եղբայրությունը՝ որպես սուլթանական Թուրքիայի դեմ ընդհանուր ճակատ:

Օտոմանյան բանկի ստամբուլյան բաժանմունքի զինված ներխուժման և սուլթան Աբդուլ Համիդի դեմ մահափորձի[172] բոլոր նախապատրաստական աշխատանքներն անցկացվել են Բուլղարիայում: Հենց այդ ժամանակահատվածում էլ տեղի ունեցավ առաջին պառակտումը Դաշնակցությունում: Ստամբուլյան հայտնի չհաջողված մահափորձից հետո նրա մասնակիցներից երկուսը՝ Սաֆոն[173] ու Քրիսը, դժգոհ կուսակցության գործողությունների ոճից, սկսեցին շարքային դաշնակցականներին լարել Բյուրոյի դեմ: 1906թ. Վառնայում հայտնի հեղափոխական գործիչ Վարդ Պատրիկյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Շարժում» թերթը (բացահայտորեն ուղղված Բյուրոյի դեմ): Զգալի թվով շարքային անդամներ հեռացան Դաշնակցությունից և հարեցին Վարդ Պատրիկյանի շարժմանը: Վերջինս 1917թ. սպանվեց դաշնակցական ահաբեկչի կողմից: Այսպիսով, Դաշնակցությունում տեղի ունեցավ ճեղքվածք:

2. 1906թ. Բուլղարիան դեռ Թուրքիայից կախված վասալ երկիր էր: Բուլղարական կառավարության թույլտվությամբ Դաշնակցությունը պատմական Ռիլա վանքում կազմակերպեց իր զինվորական դասընթացները, որոնցում բուլղար սպաները սկսեցին պատրաստել շուրջ 50 երիտասարդ հեղափոխականների: Դասընթացների խնդիրն էր նրանց՝ որպես զինվորական հրահանգիչների, նախապատրաստական աշխատանքներ տանելու համար ուղարկել Թուրքիայի հայերով բնակեցված եվրոպական ու ասիական շրջանները:

Այդ դասընթացների ղեկավարներից Փանովը[174] կուրսանտների շրջանում սկսեց քննադատել դաշնակցական ղեկավարության գործելաոճը: Նրան հաջողվեց բաժանել նրանց երկու մասի՝ Բյուրոյի կողմնակիցների ու հակառակորդների: Նշանակված քննությամբ պարզվեց, որ Փանովը համագործակցում է Թիֆլիսի մշակականների հետ, որոնք այդ ժամանակ կրքոտ պայքար էին մղում Դաշնակցության դեմ: Բյու-

րոն որոշեց Փանովին պատժել մահվամբ: Փանովը հեռացավ Ռիլայից ու անհետացավ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, գործելով բուլղարական բանակի շարքերում, նա իրեն դրսևորեց որպես առաջնակարգ մարտավար: Պատերազմից հետո նա նորից անհետացավ:

3. 1907թ., Բուլղարիայի ռազմական նախարարության թույլտվությամբ, ես ընդունվեցի սպայական ուսումնարան՝ չնայած այնտեղ օտարահպատակների ընդունման արգելքին:

Նպատակը. ավարտելուց հետո նվիրվել հակաթուրքական պայքարին: 1912թ. Բուլղարիայի կառավարությունը ինձ հանձնարարեց կազմավորել հայկական կամավորական վաշտ, որն իմ հրամանատարությամբ և Անդրանիկի զինվորական ղեկավարության ներքո, բուլղարական բանակի հետ կողք-կողքի, գործեց Բալկանյան պատերազմում: Վաշտը մեծ հաջողությունների հասավ, որոնց արձագանքը հանդիսացան այդ ժամանակ Սոֆիայում որպես էմիգրանտ ապրող Տրոցկու՝ հայ կամավորների սխրանքների մասին գովասանական հոդվածները: [175] Այս հայկական վաշտը չուներ կուսակցական բնույթ: Այն ստեղծել էին բուլղարահայերը: Սակայն, վաշտի հեղինակությունից զգալիորեն օգտվեց Դաշնակցությունը:

Լոնդոնում, բուլղարա-հունական նախնական բանակցությունների ժամանակ, Ֆերդինանդ թագավորը, հաշվի առնելով հայ կամավորների մասնակցությունը Բալկանյան պատերազմին, հայասեր ժեստ արեց. առաջ քաշեց նաև Թուրքիայում ապրող հայերի անվտանգության հարցը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, համաներում ստանալով ցարական կառավարությունից, ես և Անդրանիկը մեծ թվով կամավորների հետ վերադարձանք Անդրկովկաս՝ մասնակցելու Թուրքիայի դեմ սկսվելիք պատերազմին: Մինչև 1914թ. Անդրանիկն ապրում էր Բուլղարիայում, Վառնայի մոտակայքի բնակավայրերից մեկում՝ մեկուսացած ու խորապես դժգոհ դաշնակցական ղեկավարությունից: Նրա հետ շփվում էին դաշնակցական գործիչներ Ե. Ալաջալին ու Ղուկաս Մինասյանը՝ նույնպես դժգոհ դաշնակցական վերադասից: Արդեն կարելի էր նկատել, որ Անդրանիկը հոգեբանորեն հետզհետե հեռանում էր Դաշնակցությունից: Նա ժամանեց Կովկաս որպես Բյուրոյի անհաշտ հակառակորդ: Նրա հետագա հակադաշնակցական ելույթներն ու պայքարը հարկ է բացատրել Բուլղարիայում ապրած խորը հիասթափությամբ:

4. 1919թ. Սոֆիայում բացվեց Հայաստանի Հանրապետության առաջին հյուպատոսությունը: Հասկանալի է, որ դա պիտի բարձրացներ Դաշնակցության հեղինակությունը: Սակայն նրա վարկի բարձրացումը շարունակվեց միայն մինչև Հայաստանի խորհրդայնացումը, որի

հետևանքով Բուլղարիայի հակադաշնակցական տարրերը վերակենդանացան և ավելի ակտիվացան: Նորից երևան եկավ եկեղեցու ու դպրոցի, ծխական ու հոգաբարձական խորհուրդների շուրջ մղվող միջկուսակցական մանրախնդիր պայքարը: Խմբակային կրքերի բորբոքմանն առավել նպաստեց թեմական խորհուրդը: Սկսվեցին խժդժությունները հնաբնակների ու նորեկների (փախստականների), բուլղարահպատակների ու նանսենականների (նրանց Ազգերի Լիգային կից Նանսենյան բյուրոյի կողմից տրված էին անձնագրեր, որոնցով քաղաքացիություն չէր ճանաչվում) միջև:

Որևէ ազգային հաստատությունում գերիշխանության ձգտող խմբավորումներն առաջնորդվում են ոչ թե այս կամ այն քաղաքական դոկտրինայով, այլ լոկ մտածում են սեփական կապերի ու շահերի ապահովման մասին: Շնորհիվ իրենց պաշտոնական բնույթի, թեմական ու ծխական խորհուրդները միշտ կարողանում են բուլղարական իշխանությունների հետ իրենց կապերը ծառայեցնել սեփական սոցիալական բարեկեցությանը: Բուլղարիայում այդ տարրերը հայտնի են իրենց երեսպաշտությամբ՝ ձևանալով ցանկացած վարչակարգի բարեկամ ու գաղափարական համախոհ՝ անկախ նրա որդեգրած սոցիալական քաղաքականության էությունից:

Այս կարգի ականավոր տիպար է հանդիսանում Գրիգոր Զաքարյանը՝ մի անկիրթ հարուստ, որը, որպես թեմական խորհրդի նախագահ, 15 տարի Բուլղարիայի հայկական գաղութի անդամներին զրկեց ազգային անձնագրերից՝ ընտրություններին մասնակցելու տարրական իրավունքից և դրանով նրանց բուլղարական իշխանությունների աչքին ներկայացրեց որպես քաղաքականապես անվստահելի անձեր: Մինչ երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը, նա հանդուրժեց թեմական խորհրդում հնչակյանների ներկայությունը, բայց հենց երևացին գերմանացիները, առանց ձևականության, վռնդեց հնչակներին ու փոխարենը հրավիրեց դաշնակցականներին:

Հայերը Բուլղարիայում ունեն նաև իրենց մշակութային, մարզական, բարեգործական կազմակերպությունները. անօթևան աղքատների օգնության անկուսակցական միությունը, որի շուրջ հավաքվել են ունևոր խավի կանայք, կին արհեստավորների միությունը, «Քնար» երգչախումբը՝ կազմված բոլոր հոսանքների ներկայացուցիչներից, Կովկասահայերի եղբայրությունը, որը ջանում է օգնել իր ընչազուրկ անդամներին, հայկական մարզական միությունը՝ ներառյալ սկաուտները, որը պառակտված է, բայց ոչ թե գաղափարական հենքի վրա, այլ այս կամ այն ղեկավարի շուրջ համախմբվելու արդյունքում՝ անկախ նրա կուսակցական պատկանելությունից:

5. Դաշնակցությունը Բուլղարիայում միշտ ունեցել է իր Կենտրոնական կոմիտեն և մամուլի օրգանը՝ շաբաթաթերթ կամ օրաթերթ:

Վերջինը եղել է «Ազատ խոսք» թերթը, որը խմբագրել է Օնիկ Մխիթարյանը: Այդ ժամանակահատվածում ներքին դժգոհություններին ու գժտություններին վերջ չկար:

1926թ. տեղի կուսակցական կազմակերպությունները բաժանվեցին Նժդեհի և Բյուրոյի կողմնակիցների: Բուլղարիայում Դաշնակցության այս պառակտումն ազդանշան հանդիսացավ նաև մյուս շրջաններում (Ամերիկա, Ֆրանսիա, Հունաստան) կուսակցության պառակտման համար: Այդ օրերին, որպես Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ-թուրքական կնճիռը» գրքի պատասխան, լույս տեսավ իմ «Որդիների պայքարը հայրերի դեմ» գիրքը: Դաշնակցական բյուրոյի քարտուղարն իր այդ գրքում պաշտպանում է հետևյալ դրույթը. Թուրքիայի հետ լեզու գտնելը կարելի է և ցանկալի: Ես պաշտպանում եմ տրամագծորեն հակառակ տեսակետը, որն է. մեր ժողովրդի ապագայի ու շահերի տեսանկյունից՝ Թուրքիայի հետ ցանկացած հաշտություն կբերի աղետալի հետևանքների: Այսպես է արտահայտվում կուսակցությունում «եռացող» դժգոհության պատճառը, որի հետևանքով Դաշնակցության ներսում հրապարակավ դրվեց կողմնորոշման հարցը. ո՞ւմ հետ՝ Խորհրդային Միությա՞ն, թե՞ Թուրքիայի, որի թիկունքում, որպես խոշոր հովանավոր ուժ, կանգնած է Անգլիան: Միայն անգլիասեր հայն է ձգտում լեզու գտնել Թուրքիայի հետ:

Իսկ հայը, որ ընդդեմ Թուրքիայի կեցվածք է ընդունում, նույնպիսի դիրք է բռնում նաև Անգլիայի նկատմամբ: Լեզու գտնել, հաշտվել Թուրքիայի հետ՝ նշանակում է բացահայտ լծվել Անգլիայի իմպերիալիստական կառքին, նրա դրդմամբ կռիվ հայտարարել Խորհրդային Միությանը, այսինքն՝ ինքնասպանության մատնել մի բուռ ժողովրդին:

Իմ «Որդիների պայքարը հայրերի դեմ» գրքի հետ լույս տեսան Զարևանդի «Կրնա՞նք հաշտվիլ թուրքին հետ», և «Պանթուրանիզմ» գրքերը: Այս վերջինները նույնպես գտնում են, որ մերձեցումը Թուրքիայի հետ մահացու վտանգավոր է հայ ժողովրդի համար: Հայ-թուրքական հարաբերությունների մասին հարցերը գրքերից անցել են հայկական մամուլի էջերին: Փոխվե՞լ է Թուրքիան, թե՞ ոչ. ահա հարցը, որին ջանում են պատասխանել մեր թերթերը:

Նրանք, ովքեր գտնում են, որ Թուրքիան առաջընթաց է ապրել, էապես փոխվել, որ նա արդեն հին Թուրքիան չէ, խորհուրդ են տալիս շուտ բարեկամություն հաստատել նրա հետ: Հակառակ հայացքի կողմնակիցները զգուշացնում են հայ ժողովրդին՝ հեռու մնալ Թուրքիայից: Դաշնակցական հրապարակախոսությունը շուրջ երկու տասնամյակ՝ մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը, քննարկում էր այդ նույն հարցը. փոխվե՞լ է Թուրքիան, թե՞ չի փոխվել:

6. Ես հեռացա Դաշնակցությունից 1937թ.՝ Բյուրոյի դեմ ծանր մեղադրանքներ ներկայացնելով կուսակցության համագումարին: Սոֆիայում սկսեցին լույս ընծայվել Դաշնակցությունից հեռացածների օրգան «Ռազմիկ» թերթը և Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության (մի քանի տասնյակ հազար անդամներով) պաշտոնական օրգան «Տարոնի արծիվ» ամսագիրը: Երկու օրգանների քարոզչությունն էլ կրում էր բացահայտ ռևիզիոնիստական բնույթ՝ խնդիր դնելով արտասահմանի հայերի մեջ ստեղծել «Հայկական Իռեդենտա» բազմանդամ հզոր կազմակերպություն, որն, իր վրա վերցնելով Թուրքիայի հայկական տարածքների խնդրի լուծումը, Դաշնակցության գոյությունը կդարձներ ավելորդ և, այդպիսով, արտասահմանի հայության բոլոր տարրերին հոգեպես կկապեր Խորհրդային Հայաստանի հետ: Դաշնակցական բյուրոն սկսեց գործի դնել իր սովորական սպառնալիքները. մեր «Ռազմիկ» թերթի ու նաև «Տարոնի արծիվ» ամսագրի խմբագիր, փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանի անվամբ ստացվեցին սպառնալից նամակներ՝ այդ երկու օրգանների հրատարակությունների դադարեցման պահանջով, որոնք, սակայն, դրանից հետո ավելի ակտիվացան՝ տանելով զուգահեռ քարոզչություն: Իմ կողմից որոշակի գործնական աշխատանքներ տարվեցին Դաշնակցությունից հեռացածների ու Բալկաններում, Հունաստանում (Սալոնիկի շրջան), Ամերիկայում, Իրանում, Ֆրանսիայում, Ռումինիայում մեր շարժման համակիրների առաջին համագումարի նախապատրաստման և անցկացման համար: Թուրքական մամուլը մեր շարժման հանդեպ ցուցաբերեց հասկանալի վերաբերմունք: «Ջումհուրիեթ» ու «Ջաման» թերթերը հարձակվեցին ինձ վրա. «Օձը գործում է», «Գեներալ Նժդեհը ջանում է ստեղծել Մեծ Հայաստան»: Այս երկու հոդվածներով թուրքական թերթերն իրենց կառավարությանը խորհուրդ էին տալիս դիմել բուլղարական իշխանություններին՝ Բուլղարիայից ինձ վտարելու պահանջով: Իրողությունների այսպիսի դասավորության պայմաններում էլ բռնկվեց երկրորդ համաշխարհային պատերազմը:

7. Պատերազմի առաջին իսկ օրերին Բուլղարիայում սկսվեց հակահայկական շարժում: Որոշ բուլղարական ազգային կազմակերպություններ՝ «Կուրբատը», «Լեգեոներները» (պահեստի սպաների), «Ենթասպաների միությունը» և ուրիշներ, իրենց տարեկան համագումարում ընդունեցին հակահայկական բանաձևեր՝ իշխանություններից պահանջելով հրեաների նկատմամբ կիրառվող օրենքները գործադրել նաև հայերի նկատմամբ: Ազգային ժողովում որոշ պատգամավորներ հանդես եկան հակահայկական ելույթներով (պրոֆեսոր Ստոյանովը և ուրիշներ): Առավել տարածված «Ջարա» թերթը հարձակվեց հայերի վրա՝ որպես բոլշևիկյան տարրերի:

«Ռազմական միտք» ամսագիրը գրում էր. «Վտարե՛լ հայերին երկրից»: Տագնապալի վիճակ էր ստեղծվել հատկապես Թրակիայի

հայերի համար, որտեղ նրանց տալիս էին օրական 150 գրամ հաց: Հայերին արգելված էր մի շրջանից մյուսը տեղաշարժվել:

Այդ օրերին Ռումինիայի հայերն իրենց եկեղեցիներում կազմակերպեցին սգո խաղաղ ցույցեր, որովհետև վարչապետ Անտոնեսկուն, մի քանի ֆրանկմասոնների ձերբակալման կապակցությամբ, հրամայել էր Բուխարեստից և այլ հայկական մեծաքանակ բնակչություն ունեցող քաղաքներից վտարել հայերին:

Ֆրանսիայում պրոֆեսոր Մարշալը պահանջում էր «հավաքել հայերին ու նետել ծովը»:

Գերմանական «Վիներ թագեբլատ» և «Ալգեմայնե ցայտունգ» թերթերը հրապարակեցին հայերին ծայրաստիճան վարկաբեկող հոդվածներ՝ արդարացնելով նախորդ պատերազմում հայերի կոտորածներն ու տեղահանությունները: Թուրքական ռադիոն հեռարձակում էր մտացածին լուրեր, թե իբր Երուսաղեմի հայոց պատրիարքն ու Խորհրդային Հայաստանից ժամանած մեկ այլ հոգևորական Սիրիայում կազմավորում են կամավորական լեգեոններ, որոնք սովետների ու անգլիացիների դրոշների ներքո պիտի պայքարեն գերմանական բանակի դեմ:

Գերմանիայում հայերի ոչ արիական ծագման մասին պաշտոնապես հարց հարուցվեց: Եվ վերջապես, որպես այդ հակահայկական սադրանքների արդյունք, Բեռլինում պաշտոնապես հայտարարվեց, թե հայերը վերջնականապես անցել են Գերմանիայի թշնամիների կողմը, և որ համապատասխան նախարարությունն այժմ Բեռլինում ուսումնասիրում է այդ հարցը, ու եթե պարզվի, որ բոլոր հայերը հակա-գերմանական տրամադրություններ ունեն, ապա գերմանական կառավարությունը հայերի նկատմամբ կկիրառի առավելագույնս խիստ միջոցներ (հրապարակվել է բուլղարական թերթերում. նայիր 1942թ. Պլովդիվի «Վոլյա» թերթը):

Վտանգի կանխման համար բուլղարա-հայկական մշակութային կոմիտեն (նախագահը պրոֆեսոր Կացարովն էր, փոխնախագահը՝ ես) կազմեց հայերի համար նպաստավոր հուշագիր՝ ստորագրված բուլղարական հայտնի պետական ու հասարակական գործիչների կողմից, և ներկայացրեց Սոֆիայում գերմանական դեսպանատուն:

Այս հուշագրում խոսվում էր հայ ժողովրդի արիական ծագման, մարդկության քաղաքակրթության գործում նրա ունեցած մեծ ավանդի մասին:

Հուշագիրը խնդրում էր Հիտլերին միջոցներ ձեռք առնել, որպեսզի անհնարին դարձվեն հայերի տեղահանություններն ու կոտորածները, որոնք տեղ էին գտել անցած պատերազմում:

Գերմանիայի դեսպանն ու բուլղարական իշխանությունները խորհուրդ տվեցին որևէ մեկին Բեռլին ուղարկել, որպեսզի նա տեղում

անհրաժեշտ բացատրություններ տա և հայերին ազատի հրեաների ճակատագրին արժանանալուց: Բուլղարա-հայկական կոմիտեյի ու Սոֆիայի հայերի ցանկությամբ, ես մեկնեցի Բեռլին:

8. Հենց սկսվեց գերմանա-սովետական պատերազմը, որպես Բյուրոյի անդամ, Դաշնակցության անունից ասպարեզ ելավ Դրո Կանայանը: Նախ և առաջ, նա Բուխարեստում ժողով հրավիրեց, որին մասնակցում էին պատվիրակներ Հունաստանից, Բուլղարիայից: Ժողովին ներկա էին Արամ Հակոբյանը և Հակոբ Ինջեյանը:

Այդ ժողովից հետո հայ բնակչության հետ աշխատանքներ տանելու համար Ռումինիայից Բուլղարիա ժամանեց Դրոյի մտերիմ աշխատակից Հովհաննես Դևեջյանը: Նա սկսեց ցուցակագրել զինվորներին, արհեստավորներին, բժիշկներին և այլ մասնագիտություն ունեցողների՝ միաժամանակ տանելով գերմանասեր քարոզչություն: Ռումինիայում ստեղծվեց քաղաքական կոմիտե, որն էլ ձեռնամուխ եղավ դեռ գոյություն չունեցող հայկական կորպուսի համար (որի հրամանատարն էր նշանակված Կանայանը) մեծ գումարներ հավաքելուն: Այս միջոցառումներն իրականացնելուց հետո, Դրոն մեկնեց Գերմանիա, որտեղ շուտով իր գերմանամետ գործունեությանը միացրեց իրեն այնքան հատուկ խարդախությունը:

Իրեն մեծ կշիռ տալու նպատակով, նա սեփական նախաձեռնությամբ անում էր ավելին, քան պարտավորվել էր կատարել քաղաքական կոմիտեն: Նա ժամանակին հաշվի չնստեց Հյուսիսային Կովկասի հայության վիճակի հետ: Ազգային շահի տեսանկյունից՝ Դրոն շարունակում էր ձեռնարկել անազնիվ ու աղետաբեր քայլեր:

Գործակցելով գերմանական որոշ սպաների հետ՝ նա խրվեց խոշոր առևտրային, թալանչիական գործողությունների մեջ: Դրոն ձեռնամուխ եղավ ոսկու և արծաթի հավաքմանը ու միլիոններ կուտակեց: Բացի այդ, որոշ գերմանական հաստատություններում նա ցույց էր տվել կեղծ փաստաթուղթ՝ դաշնակցական բյուրոյի կեղծած ստորագրությամբ: Իմանալով Դրոյի այս մութ մեքենայությունների մասին՝ Արարատյանը ընդհարվեց նրա հետ ու հայտնեց այդ մասին Դաշնակցության Ֆրանսիայի կենտրոնական կոմիտեին, որից հետո վերադարձավ Ռումինիա, հեռացավ քաղաքական կոմիտեից ու հանդես եկավ Դրո Կանայանի անօրինակ արկածախնդրության դեմ:

Որոշ ժամանակ անց, Դրոյի դեմ հանդես եկավ նաև Դաշնակցության Ֆրանսիայի կենտկոմի մեծամասնությունը:

Ինքնապաշտպանության նպատակով Դրոն Բեռլինում Դաշնակցության երեք շրջանային կազմակերպությունների պատվիրակների մասնակցությամբ նորից ժողով «սարքեց»:

Այդ օրերին Դրոյին սանձահարելու նպատակով, մենք դոկտոր Հայկ Ասատրյանի հետ ստորագրեցինք ու Արարատյանին ուղարկե-

ցինք (այդ ժամանակ վերջինս դեռ չէր հեռացել Դաշնակցությունից) Կանայանի դեմ ուղղված մեղադրական ակտ՝ սպառնալով փոխանցել այն հանրային դատարանին, եթե Դրոն չվերադառնա արևելյան ռազմաճակատից: Մեր այս նամակը քաղաքական կոմիտեի անդամ Դավիթ Դավիթխանյանի միջոցով փոխանցվել էր Դրո Կանայանին: Որպեսզի բարձրացնի իր վարկը գերմանացիների մոտ և, ունենալով մեզ ու Ս. Արարատյանին նրանց ձեռքով ոչնչացնելու ստոր ցանկություն, Դրոն մեր նամակը հանձնեց էսէսականներին:

Խելահեղորեն տարվելով հարստություն դիզելու ցանկությամբ՝ Դրոն այդպես էլ սանձարձակ մնաց:

Արարատյանը հեռացավ Դաշնակցությունից:

Գ. Տեր-Հարությունյան

ՀՀ ԱԱՆ արխիվ: Մեքենագիր: Թարգմ.ռուսերենից:

ՆԱՄԱԿ Ս. ՎՐԱՑՅԱՆԻՆ [176]

12 մարտ 1953 թ.
Երևանի բանտ

Սիրելի Սիմոն,

Գիտեմ, տեսնելով ձեռագիրս՝ պիտի խռովես հոգով: Նժդեհը կենդանի՞, հավատա՞լ:

- Այո՛, ձայնս գալիս է ոչ թե գերեզմանից, այլ՝ բանտից, ուր ինձ վիճակվել է ապրել կյանքն ու մահը իրար խառնած, անտրտունջ, քանզի սեփական ձեռքով ես հարթեցի իմ զնդանի ճամբան՝ հաստատելով Արևելքի հին խոսքը, թե ամեն մարդ ինքն է կառուցում իր բանտը: Լսի՛ր, թե ինչո՞ւ և ինչպե՞ս:

1944-ի աշնան, երբ Կարմիր բանակը գտնվում էր Ռումինիայում, և հազարավորները, իրենց քաղաքականապես վտանգված համարելով հեռանում էին՝ ես չհեռացա Բուլղարիայից, թեև իդեալական կարելիություններ ունեի ուզածս վայրկյանին անցնելու ուզածս երկիրը: Ես մնացի, որովհետև պետք էր մնալ: Մնացի, որովհետև շատերի պես ես էլ կկարծեի, թե Կարմիր բանակը պիտի շարժվի Թուրքիայի դեմ, որով իրականացած կլիներ մեր ազգային երազը: Կար և՝ այն տանջող միտքը, թե իմ հեռանալը կարող է պատճառ դառնալ շատերի ձերբակալման: Ավելացնեմ և այն, որ հավատում էի, թե իմ արած ասպետահայրենասիրական քայլը - իմ մնալը - բավական կլինի խորհրդ. իշխանության մոռացնել տալու իմ հակասովետական անցյալը: Ահա՛, մոտավորապես, այն դրդապատճառները, որոնք ստիպեցին ինձ մնալ, չհեռանալ: Դժբախտաբար խորհրդ. բանակը չշարժվեց Թուրքիայի դեմ, և հենց դրանով էլ պայմանավորվեց իմ ողբերգությունը: Մի օր, Կարմիր բանակի ժամանումից ամիս անց՝ ինձ հրավիրեցին խորհրդ. լիգացիա, օդանավով փոխադրեցին Մոսկովա և առաջնորդեցին... բանտ:

Գիտես, սիրելի՛ս, որ կյանքում իմ ուրախությունն ու վիշտը մի հատիկ անուն ունեին - Հայաստա՛ն: Երբ կյանքիս մայրամուտին ինձ չհաջողվեց, իբրև զորական, կռվել ու մեռնել հայ հողի համար՝ վճռեցի մեռնել բանտում իբրև նահատակ: Այս ապրումներով, 1948-ի ամռան, փոխադրվեցի հեռավոր հյուսիս:[177] Ուժասպառ էի, բայց ոչ ոգեսպառ: Ապրում էի նահատակի կրքոտությամբ և ուրախությամբ: Ճիգ էի անում, ինչպես և այժմ, մնալ ոտքի վրա և մեռնել գիրքը ձեռքիս: Այս վիճակում էի, երբ անսպասելիորեն, որպես Deus ex machina, հայտնվեց Հովի. Դևեջյանը[178] - նրան էլ բերին նույն բանտը և նույն խուցը, որում գտնվում էի ես:

Գիտես, որ տարիներով մենք խորթացած էինք իրարից: Խոր տառապանքը ենթակային ամեն բանից առաջ երես երեսի է բերում ճշմարտության հետ: Բավական եղավ, որ իրար աչքերում ուրախության արցունք տեսնենք, որպեսզի անխոս հաշտվենք, եղբայրանանք:

Եվ, այնուհետև, սկսվեցին մեր անանձնական մտմտուքները: Ի լուր խմորվող նոր համաշխարհային սպանդի - որ կարող է անդարմանելի անդրադարձում ունենալ մեր ժողովրդի ճակատագրի վրա՝ մենք և՛ խորհրդածում էինք, և՛ տագնապում: Պատերազմ - անհայտության թագավորություն է դա: Վաղը կարող են տեղի ունենալ այնպիսի քաղաքական անակնկալներ, որոնք մերօրյա Մետերնիխների և Տալեյրանների մտքով իսկ չեն անցնում: Ի՞նչ կլինի վաղը - չգիտե՛նք:

Սակայն, հաշվի առնելով՝ մարդկության պատմության մեջ նախընթաց չունեցող թշնամատեցության պարոկսիզմի և նորահնար զենքերի իրողության փաստը՝ չենք կարող հայորեն չանհանգստանալ, թե վաղը մահացիորեն կարող է աղետվել Հայաստանը:

Մեկնելով այն իրողություններից,

1) որ թրքությունը պատմականորեն հաստատած է, թե պատրաստ է ամենայն չարիք հասցնելու հայության.

2) որ առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցան հայկական կոտորածներ, և եղեռնագործ ազգը մնաց անպատիժ.

3) որ վերջին պատերազմին միլիոնավոր հրեաների ջարդը արժանացավ՝ մարդկություն և արդարություն ծաղրող դատական մի ֆարսի միայն.

4) որ ազգերի միության կողմից առնված որոշումը «Գենոցիդ»ի մասին՝ թելադրված է այն մտահոգությամբ, թե ամբողջ ժողովուրդների ոչնչացումը անհավանական չէ և՛ վաղվա պատերազմի ժամանակ.

5) որ մեր երկիրը իր աշխարհագրության բերումով նախասահմանված է վաղը դառնալու ռազմագիտական ակտիվ պլացդարմ կամ ինքնապաշտպանության բազա, որով - երկու դեպքում էլ - թշնամու առաջին հարվածը տրվելու է Հայաստանին, և որ հարվածողը լինելու է թուրքը՝ իբրև զինակից և հովանավոր ունենալով մի շարք զորավոր պետություններ:

6) որ Թուրքիայի վճռական մասնակցությունը գալիք պատերազմին, նրան վստահված ավանգարդի դերը, և այն, որ նա երևան է գալու ազգերի միության դրոշի տակ - այդ և այլ կարգի իրողություններ երկյուղի լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու, որ շատ հեշտությամբ կարող է «գենոցիդ» տեղի ունենալ Հայաստանում - կարող է գլխովին ոչնչանալ մեր ժողովուրդը:

Թուրքը փորձեց՝ առաջին համաշխարհային պատերազմին, բայց չկարողացավ սեփական ուժերով միանգամից թաղել հայությունը

և իր դատը: Այժմ նա իր հայասպան ծրագիրը պիտի աշխատի իրագործել թե իր և թե այլոց ձեռքերով:

Ճիշտ է, մեծ են Հայաստանի պաշտպանողական միջոցները, և անսպառ՝ Խորհրդ. Միության պոտենցյալը: Այդ այդպես լինելով հանդերձ՝ պանթուրանական երազներով ապրող Թուրքիայի ներկա վճռական կեցվածքը, նրա մահացու թշնամանքը դեպի հայությունը, ինչպես և այն պարագան, որ պատմության մեջ առաջին անգամ լինելով համընկնում են, համերաշխում քրիստոնյա Արևմուտքի և Թուրքիայի շահերը՝ լուրջ հիմք են տալիս խորապես մտահոգվելու մեր ժողովրդի ճակատագրով:

Մի ափ երկիր, որի վրա կենտրոնացած է հայության 2/3-ը - ահա՛ օրվա Հայաստանը: Նման վիճակում, պատերազմի ժամանակ, գլխովին չոչնչանալու համար պետք է կենդանի Արարատ լինել:

Նկատի ա՛ռ - թուրքերը հակախորհրդային օդային ուժերի համար պիտի կատարեն «սրբագրիչ»ի դեր՝ իրենց ուզած ուղղությունը և օբյեկտները տալով իրենց քրիստոնյա զինակիցներին: Նրանք պրովոկատիվ հաշիվներով, հազար ու մի մեքենայություններով պիտի գրգռեն իրենց զինակիցներին Հայաստանի ու հայության դեմ: Օգտվելով առիթից՝ նրանք կաշվից դուրս պիտի գան՝ կործանելու Թուրանի ճամբան կտրող մեր երկիրը:

Նշեմ և՛ այն, որ վաղվա պատերազմը, լոկ իր գոյության փաստով, և անկախ պատերազմող կողմերի կշռից ու պատերազմի այս կամ այն ելքից, կարող է անդարմանելիորեն աղետել մեր ժողովուրդը: Չպիտի մոռանալ, որ ավելի քան հավանական է ազգերի միության և որոշ քրիստոնյա պետությունների անվան չարաշահումը թուրքերի կողմից՝ Հայաստանը կործանելու նպատակով:

1952-ի ամռան, Վանի մեջ տեղի է ունեցել մի հակահայ ցույց՝ իբրև արձագանք Անգարայում և Պոլսում կատարված հայադավ գրգռությանց: Այդ առթիվ «Վան Սեսի» թերթը կոչ է ուղղել թրքության՝ «ոչնչացնել հայերին մինչև վերջին մարդը»: Ըստ այդ թերթի՝ «թուրքերի պանթուրանական երազը կարող է իրականանալ միայն այն ժամանակ, երբ Թուրքիայի բոլոր անկյունները կմաքրվեն հայ ազգաբնակությունից»: Ինչպես տեսնում ես՝ հայերի նոր ջարդի խնդիրը թուրքերը ծեծում են հրապարակավ - հոգեբանորեն և քաղաքականապես նախապատրաստում 1915-ի արյունոտ ռեցիդիվը: Գիտցիր և այն, որ թուրքերի սպառնալիքն ուղղված է ոչ միայն Թուրքիայի մեջ ապրող հայերի, այլև՝ Խ.Հայաստանի դեմ: Վերոհիշյալ թերթը՝ թուրքերին համարելով ուրարտացի, իսկ Խ.Հայաստանի տարածքը՝ բաղկացուցիչ մասը հին Ուրարտական թագավորության՝ ժխտում է հայերիս պատմական իրավունքը մեր հայրենիքի և նախահայրենիքի վրա: Սխալ կլիներ Վանի թուրքերի հակահայ ելույթը համարել իբրև սպորադիկ[179] ելույթ -

դա մատնում է թուրք կառավարության և զանգվածների ընդհանուր մտայնությունը: Ահա՛ թե ինչու օր առաջ միջազգային հրապարակ պիտի դրվի մեր ժողովրդի բացառիկ վիճակի խնդիրը: Միայն այսպիսով կարելի է կանխել աղետը՝ նախապատրաստվող:

Արտաքնապես հակաթուրք Եվրոպա կար, բայց և այնպես տեղի ունեցան հայկական ջարդերը: Այսօր, երբ այնքան թրքապաշտպան ուժեր կան, ի՞նչ երաշխիք, որ թուրքն իբրև պատմության ծանոթ ռեցիդիվիստ՝ չի՛ կրկնի իր եղեռնագործությունը: Ապա ուրեմն՝ ի՞նչ անել, որ պատերազմի դեպքում նկատի առնվի մեր ժողովրդի անօրինակ աղետվածության փաստը (առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ) և օրվա իր բացառիկ վիճակը հյուլեականով չոմբակոծվի Հայաստանը...

ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՐԱՁԱՏՆԵՐԻՆ [180]

N 1

6 մարտի 1955թ.

Թանկագիններս

Այսօր կիրակի է, և ահա մտածեցի գրել ձեզ: Դուք ուզում եք իմանալ, թե ինչում են ինձ մեղադրում: Նամակներից մեկում ես պատասխանել եմ այդ հարցին: Իմ հանցանքի առաջին կետը Զանգեզուրի պաշտպանությունն է, ինչի համար դեռ 1921թ. այդ պաշտպանության բոլոր մասնակիցները համաներում էին ստացել: Դա հանրահայտ պատմական փաստ է: Երկրորդ կետը, որով ինձ հանցավոր են համարում, իմ ուղևորությունն է Բեռլին: Ինչպես գիտեք, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Թուրքիայում հայերի մեծ կոտորածից հետո համաշխարհային հասարակական կարծիքը Գերմանիայի բարձրագույն հրամանատարությանը մեղադրում էր այն բանում, որ վերջինս դրդել է թուրքական կառավարությանը տեղահան անել երկու միլիոն հայերի, քշել դժոխային Դեր-Զոր անապատը և մեռցնել վերջիններին: Ողջ հայությունն անիծում էր Կայզերական Գերմանիային և արդարացի ատելություն էր տածում նրա նկատմամբ: Հայերի՝ Գերմանիայի նկատմամբ այդ ատելության զգացմունքի մասին գիտեին նաև հիտլերյան գեներալները (պատերազմի տարիներին այդ զգացմունքի մասին ասել է նաև Հայաստանի մեր բանաստեղծ Ավետիք Իսահակյանը Երևանում): Այդ իսկ պատճառով երկրորդ համաշխարհային պատերազմի դեռ առաջին օրերին գերմանական մամուլի հայտնի օրգանները սկսեցին իրենց թշնամական ելույթները հայերի դեմ՝ մեղադրելով նրանց ռուսասիրության մեջ: Նացիստների «պաշտոնական գիտությունը» գտավ, որ հայերն ունեն ոչ թե արիական, այլ առաջավորասիական ծագում: Նա, այդպիսով նախապատրաստում էր հայերի հալածանքը: Այն ժամանակվա Գերմանիայի նկատմամբ հայերի տածած այդ զգացմունքի մասին ասում է և Գյորինգը իր «Կանաչ թղթապանակում» (վերջինս հրատարակվել է խորհրդային կառավարության կողմից): Արտասահմանի հայության համար ստեղծվում էր ծայրահեղ վիճակ: Հայերի պաշտպանության համար «Մշակութային մերձեցման բուլղարա-հայկական կոմիտեն» պատրաստեց մի հանգամանալից հուշագիր (մեմորանդում), որտեղ մատնանշվում էր հայության մշակութային ազդեցության դերը անցյալում, նրա դարավոր ողբերգությունը, և ներկայացրեց Սոֆիայում գերմանական դեսպանորդին: Վերջինս խորհուրդ տվեց ինձ և պրոֆ. Կոմարովին, որպեսզի հուշագրի հանձնման համար Բեռլին պատվիրակություն ուղարկվի: Մեր կոմիտեն որոշեց ինձ ուղարկել Գերմանիա: Այսպես, քաղաքական պահից ստիպ-

ված, արտասահմանի հայությանը սպասող նոր աղետները կանխելու նպատակով ես մեկնեցի Բեռլին (պետք է ավելացնել նաև, որ ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև դիվանագիտական հարաբերությունները դեռ նորմալ էին): Հանձնելով հուշագիրը՝ ես վերադարձա Սոֆիա: Մեկ ամիս անց ես մեկ անգամ էլ գնացի Բեռլին, որտեղ այդ ժամանակ տեղի հայերի հրավերով աշխատում էր մարդաբան Քերումյանը (Փարիզից): Ստեղծվեց հանձնաժողով, որը պետք է գիտականորեն ապացուցեր, որ հայերն արիական ծագում ունեն, դրանով նրանց զերծ պահել հրեաների դառը ճակատագրից:

Ահա իմ՝ հայրենասերի մեղքը, որը չկարողացավ ձեռքերը ծալած նստել, երբ նախապատրաստվում էր հայերի նոր ջարդ: Մի խոսքով, որպես խորհրդային քաղաքացիներ, հավատացած եղեք, որ ես ոչ մի հակախորհրդային գործողություն չեմ կատարել:

Ինձ դատել են որպես Նժդեհի՝ Զանգեզուրի պաշտպանության համար, ինչի համար որ 1921 թվին համաներում եմ ստացել: Բերիային տպավորիչ զոհ էր պետք, ահա ողջ ճշմարտությունը:

Եղբայրաբար՝ ձեր *Գարեգին*

Անձնական արխիվ: Թարգմ. ռուսերենից:

N 2

30 մարտի 1955թ.

Սիրելինե՛րս,

Չնայած բժիշկները հաստատել են, որ ես, որպես վատառողջ, լիովին համապատասխանում եմ ՆԳՆ հրամանագրին և վաղաժամկետ ազատվելու օրինական հիմք ունեմ, դեռևս գտնվում եմ բանտում: Այս հանգամանքն ինձ համոզում է, որ հայտնի մարմինները դեռևս տեղյակ չեն ճշմարտությանն այն դեպքերի վերաբերյալ, որոնք տեղի ունեցան Զանգեզուրում 35 տարի առաջ:

Այնինչ, այդ իրադարձություններն արժե վերլուծել հետևյալ փաստերի լույսի տակ՝ համոզվելու համար, որ 11-րդ բանակի հրամանատարության և Զանգեզուրի միջև «պատմական թյուրիմացությունը» հրահրել էին հայ ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստները և պանթուրանիստները.

1) Հայաստանի Համայնավար կուսակցության Կենտրոնական կոմիտեի պաշտոնաթերթը, հաստատելով պատմական փաստը, գրում է. «Քեմալիստները Հայաստանի դեմ հարձակողական - զավթողական պատերազմ էին վարում» (թիվ 128, 1952թ.):[180ա]

Պաշտոնապես չհայտարարված, բայց հայկական մարզերի վրա պարբերական հարձակումների և բնակչության կոտորածների ձևով իրականում տեղի ունեցած այդ յուրօրինակ պատերազմը կազմակերպել էին պանթուրանական գործիչները՝ Նուրի փաշան, Խալիլ բեյը, Էնվեր փաշան, Էդիֆ բեյը և ուրիշները: Այդ պատերազմի հետևանքով հայի արյունը հեղվեց Նախիջևանում, Ագուլիսներում, Շուշիում, Մինքենդում. այս բոլոր քաղաքներում Թուրքիայի դրդմամբ մուսավաթականները իրականացրին հայերի կոտորածներ:

2) 1918 թվականի վերջին մուսավաթական Ադրբեջանը հարձակվեց Զանգեզուրի վրա, ինչը, բնականաբար, առաջ բերեց ինքնապաշտպանություն:

3) Այն ժամանակ, երբ Զանգեզուրը պարբերաբար վանում էր մուսավաթական դիվիզիաների հարձակումները, որոնց ղեկավարում էին թուրք փաշաները, Անդրկովկասում դեռևս չկար խորհրդային իշխանություն:

4) Ողբերգական մենության պայմաններում Զանգեզուրը օգնություն խնդրեց: Հայաստանի խորհրդարանը, ի վիճակի չլինելով զանգեզուրցիներին իրական օգնություն ցուցաբերել, որոշեց ինձ ուղարկել: Ես Զանգեզուր մեկնեցի 1918 թվականին,[181] այսինքն՝ Ադրբեջանում Կարմիր բանակի երևալուց մեկ տարի առաջ:

Ի հեճուկս այս անվիճելի փաստերի, ի հեճուկս ճշմարտության՝ տրոցկիստները, որպեսզի Մոսկվային մոլորության մեջ գցեն, Զանգեզուրի ինքնապաշտպանությունը ներկայացրին որպես քաղաքացիական պատերազմ: Այդ առասպելը նրանք հորինել էին գոյություն չունեցող «գաղափարախոսական բախման» պատասխանատվությունը Զանգեզուրի բնակչության ուսերին բարդելու նպատակով: Չափազանց անլուրջ կլիներ խոսել 1918-1920 թվականներին Զանգեզուրում գաղափարախոսական բախման մասին, երբ հայ բնակչության ֆիզիկական գոյությունը վտանգի մեջ էր:

«Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանն է առանց ցարի. ցարը չկա, բայց կա Ռուսաստանը, առանց որի օգնության հայերը չեն կարող հարևանությամբ ապրել Թուրքիայի հետ»,- ահա ինչպես էր հասկանում մեր գյուղացիությունը Ռուսական հեղափոխությունը: Այս պարզ հայեցակարգում է Զանգեզուրի ողջ գաղափարախոսությունը: Բայց տրոցկիստներին առասպել էր պետք:

Օգտվելով այդ առասպելից՝ գրող Մ. Շահինյանը իր գրքերից մեկում («Խորհրդային Անդրկովկաս») գրում է. «1921 թվականին Զանգեզուր է գալիս առասպելական Նժդեհը... Նրան հաջողվում է զինել բնակչությանը և ապստամբություն բարձրացնել խորհրդային իշխանության դեմ»: 1921 թվականին Զանգեզուրում ապստամբություն լինել չէր կարող այն պարզ պատճառով, որ այն ժամանակ այնտեղ խորհր-

դային իշխանություն չկար: Գրողը գիտակցաբար կեղծում է Զանգեզուր իմ մեկնելու տարեթիվը. ես Զանգեզուր մեկնել եմ 1918 թվականին և ոչ 1921 թվականին, ինչպես միտումնավոր ստում է Շահինյանը:

Այսպես ստեղծվեց և պաշտպանվեց տրոցկիստների սարքած առասպելը: Նրանք, Հայաստանում խորհրդային իշխանության առաջին իսկ օրերից, Զանգեզուրի մասին ճշմարտությունը խեղաթյուրելու միջոցով, ձգտում էին մեր ժողովրդի և խորհրդային իշխանության միջև ընդհարում սադրել՝ ի հաճույս պանթուրանիստների:

Այն փաստը, որ ի վերջո Զանգեզուրը թողնվեց Խորհրդային Հայաստանին, խոսում է այն մասին, որ այս մարզը պատմականորեն և էթնիկապես պատկանել է Հայաստանին: Բայց ո՞ւմ ուղեղում, եթե ոչ թուրքամետորեն տրամադրված տրոցկիստների, կարող էր ծնվել հայկական Զանգեզուրը Ադրբեջանին զիջելու սադրիչ միտքը:

Պանթուրանիստները ազդեցություն ունեին տրոցկիստների վրա, որոնց խրախուսում էին հակահայ մեքենայություններում՝ ահա ինչով էր պայմանավորված Զանգեզուրի հերոսական ողբերգությունը:

Կարո՞ղ էր արդյոք Մոսկվան արդարացնել Հայաստանի նկատմամբ աղաղակող անարդարությունը: Կարո՞ղ էր Մոսկվան մերժել հայ ժողովրդի ինքնապաշտպանության բնական իրավունքը՝ երբեք: Մոսկվային մոլորության մեջ գցելու համար տրոցկիստները Զանգեզուրի ինքնապաշտպանությունը սադրիչ կերպով բացատրում էին զանգվածների վրա իմ ազդեցությամբ: Այս հերյուրանքը նրանց պետք էր իրենց իսկ արհեստականորեն առաջացրած շփոթը արդարացնելու համար մի երկրում (Լենինի կամքին հակառակ՝ «չկրկնել ռուսական փորձը Հայաստանում»), որի կառավարությունը իշխանությունը կամավոր հանձնել էր բոլշևիկներին:

Զանգեզուրում ես չեմ ունեցել ոչ մի կանոնավոր զինվոր, ո՛չ տեխնիկական պաշարներ, ո՛չ նյութական միջոցներ. չկար այն ամենը, որով ինքնակալ անհատները ժողովրդական զանգվածներին են փաթաթում իրենց կամքը: Մեր ժամանակներում ոչ ոք չի կարող ժխտել ժողովրդական զանգվածների վճռորոշ դերը: Ես չեմ ժխտում նաև անհատի դերը, նրա ազդեցությունը պատմական իրադարձությունների ընթացքի և ելքի վրա: Բայց հաստատում եմ, որ Զանգեզուրը կպաշտպաներ իր լեռները նաև առանց ինձ:

Ոչ մի անհատ, թեկուզ հանճարեղ, չի կարող ժողովրդին փաթաթել իր կամքը, եթե չի արտահայտում նրա կամքը: Զանգեզուրի ուժը պետք է որոնել ոչ թե իմ ազդեցության, այլ գաղափարապատմական ժառանգորդության մեջ. դարերի ընթացքում լեռնահայությունը հաճախ է ստիպված եղել պաշտպանել. իր լեռները՝ խորը գիտակցելով նրանց նշանակությունն իր ինքնապաշտպանության գործում:

17-րդ դարում, չնայած Թուրքիայի և Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանման տխուր փաստին, Զանգեզուրն իր լեռների շնորհիվ անկախ իշխանություն է եղել (որտեղ գործել է առասպելական Դավիթ-Բեկը): Պատմությունը չէր ների մեզ, եթե, խոստովանելով մեր անկարողությունը, փոքրոգաբար հրաժարվեինք ինքնապաշտպանությունից: 1918-20 թվականներին նման արարքը հավասարազոր կլիներ ինքնասպանության: Զանգեզուրի ինքնապաշտպանությունը մեծագույն բարոյական արիության գործ էր: Հայաստանից Զանգեզուրի խլումը, երբ Կարս, Սարիղամիշ, Իգդիր, Արդահան ամրությունները գտնվում էին Թուրքիայի սահմաններում, հայության համար մեծագույն ողբերգություն կլիներ:

Ինձ մեղադրել նրա համար, որ Հայաստանի խորհրդարանի որոշմամբ ղեկավարել եմ Զանգեզուրի ինքնապաշտպանությունը, կնշանակի մեղադրել լեռնահայությանը և արդարացնել հայ ժողովրդի ֆիզիկական գոյության թշնամուն՝ թուրքերին, որոնք 1918-1920 թվականներին, ինչպես վերևում նշվեց, «Հայաստանի դեմ վարում էին հարձակողական-զավթողական պատերազմ»:

Հանուն ճշմարտության՝ վերոհիշյալին պետք է ավելացնել նաև հետևյալ փաստերը.

Ա) 1921 թվականին 11-րդ բանակի հրամանատարության կողմից Գեկկերը, ի միջի այլոց, ինձ գրել է. «Մենք մեզ չենք գովում այն բանի համար, որ Զանգեզուր ենք ուղարկել թուրքական գումարտակներ: Բայց ո՞վ կարող էր մտածել, որ թուրքերը կարմիրբանակայինների անվան տակ զենք կբարձրացնեն Զանգեզուրի գյուղացիության դեմ»...* Ինչպես տեսնում եք, 11-րդ բանակի հրամանատարությունը խոստովանում է, որ թուրքերը Զանգեզուրում զենք են բարձրացրել գյուղացիության դեմ: Իմաստ ունի՞, արդյոք, հրամանատարության խոստովանությունը. այո, այն անվիճելիորեն ճշմարտության լույս է սփռում Զանգեզուրի ինքնապաշտպանության պատմության վրա:

Բ) 1921 թվականին Խորհրդային Հայաստանի կառավարությունը պաշտոնական հռչակագրով, բոլոր ժողկոմների ստորագրություններով, Զանգեզուրը հայտարարեց Հայաստանի անբաժան մասը. նույն հռչակագրով համաներում շնորհեց բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել Զանգեզուրի ինքնապաշտպանությանը:

---

* Այս փաստաթուղթը հրապարակված է նույն թվականին Գորիսում: Այն կարելի է կարդալ Զանգեզուրի կառավարության հրատարակած գրքում, որը գտնվում է Հայաստանի Պ.Ա.Ն.-ում. գիրքը կոչվում է «Արնոտ գիրք» (ծանոթ. հեղ.):

Եթե այս բոլոր անառարկելի փաստերը հայտնի են որոշ մարմինների, և ես դեռ գտնվում եմ բանտում՝ սա աղաղակող անարդարություն է:

Իսկ եթե բերված փաստերի խորապատկերի վրա իմ գործը վերանայողներին պարզ դառնա Զանգեզուրի մասին ճշմարտությունը, նրանք պետք է ինձ անհապաղ ազատեն:

Սիրելինե՛րս, այս անգամ ձեզ երկար եմ գրում. կարծում եմ, որ դուք պետք է հստակ պատկերացում ունենաք այն մասին, թե ինչպես և ինչու ստեղծվեց Զանգեզուրի մասին առասպելը և ինչու եմ ես այսօր բանտում:

Համոզված եմ, որ արդեն ստացել եք իմ նախավերջին պատվիրված նամակը:

Քանի դեռ այստեղ եմ՝ հիվանդանոցում, օգտվեք տեսակցության թույլտվությունից. եթե ինձ Վլադիմիր տեղափոխեն, այնտեղ տեսակցություն չեն թույլատրի: Հեռագրով տեղեկացրեք ձեր գալստյան մասին:

Համբուրում եմ բոլորիդ, ձեր *Գարեգին*

Անձնական արխիվ: Թարգմ.ռուսերենից:

ՀԱՎԵԼՎԱԾ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆԿԵՐ ՆԺԴԵՀԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐՆ ԻՐ ԴԵՄ ՀԱՐՈՒՑՎԱԾ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ [182]

1921թ., սեպտեմբերի 4

Թավրիզ

Հարցում. Երևանից փոխադրած մեծամասնական բանտարկյալներին Ձե՞ր կարգադրությամբ են սպանել Տաթևում:

Պատասխան. Ինձ նոր է հայտնի լինում, որ Երևանից Տաթև բանտարկյալներ են ուղարկված:

Հ. Ընկերներից պնդողներ կան, որ դուք Տաթևում մտել եք բանտարկյալների մոտ, խոսել նրանց հետ, հարցաքննել նրանց:

Պ. Այդ գերիները բերվել են Նոր Բայազետից և ոչ՝ Երևանից:

Հ. Ձեր կարգադրությամբ ռուս մեծամասնական բանտարկյալներ սպանվե՞լ են և առհասարակ սպանությունները Ձե՞ր հրահանգով են տեղի ունեցել՝ թե՞ այլ ճանապարհով:

Պ. Այդ բանտարկյալների մեջ ռուսներ չեն եղել: Զանգեզուրի զանազան շրջաններում ցրված են եղել իշխանության կարգադրությամբ ռուս գերի զինվորներ, որոնց նկատմամբ իմ վերաբերմունքն եղել է միանգամայն բարյացակամ, որովհետև այդ զինվորներին ես մեծամասնական չեմ համարել, այլ՝ տգետ գյուղացիներ, որ մեծամասնական սվիններով մեր դեմ էին ուղարկված, և իմ այդ մարդասեր վերաբերմունքի հետեւանքով էր, որ ռուս զինվորներն իմ դեմ չէին կռվում: Ես ռուս ոչ մեկ զինվորի չեմ կարգադրել սպանել: Ինչ վերաբերում է այն խնդրին, թե ո՞ւմ կարգադրությամբ են սպանություններ կատարվել՝ պիտի ասեմ հետևյալն. որ կազմված կար առանձին ռազմադաշտային դատարան, որի նախագահն էր իմ շտաբի պետ Ռուբեն Նարինյանը, քննիչն էր Արտաշես Պարոնյանն և երկու հոգի տեղի հասարակությունից: Բոլոր սպանությունները կատարված են այդ դատարանի վճռով: Ոչ միայն որևե սպանություն կատարելու հրահանգ չեմ տված, այլև՝ առհասարակ դատական գործերին ամենևին չեմ մասնակցած: Առհասարակ, թե՛ ռուս գերիներին և թե՛ Երևանից բերված մեծամասնական բանտարկյալներին իմ կարգադրությամբ սպանելու

սուտ լուրը տարածել է Տաթևի շրջանի հրամանատար Վարդանը, որը մի քրեական տիպ է:

Հ. Ի՞նչ են եղել Երևանի պարետ Քոթանջյանի կողմից Տաթև ուղարկված մեծամասնական ռուս 40 զինվորները:

Պ. Այդ 40 ռուս զինվորների մասին ևս ես որևէ տեղեկություն չունեմ, այդպիսի զինվորներ՝ ինչպես առաջ էլ շեշտեցի, Տաթև չեն բերվել, ուրեմն և ես նրանց սպանել տալու հրաման տալ չէի կարող:

Հ. Գորիսում Ձեր կարգադրությամբ սպանվե՞լ է մի ռուս դատավոր իր ընտանիքով:

Պ. Ռուս դատավորի և ընտանիքի սպանությունը կատարվել է ժողովրդի ձեռքով, որպես հետևանք այն բանի, որ խորհրդային իշխանության օրոք նա քաղաքական վատ դեր էր կատարել: Սպանության մանրամասնություններով, ինչպես նաև այն բանով՝ թե ինչո՞ւ են այդ արել, արդյո՞ք տեղին էր, թե՞ անտեղի, ես հնարավորություն չեմ ունեցել հետաքրքրվելու:

Հ. Արծվանիկ գյուղում Տեր-Հարությունյանին ո՞վ է սպանել և ինչո՞ւ:

Պ. Տեր-Հարությունյանն Արծվանիկ գյուղում կազմակերպել էր մեծամասնական երիտասարդական միություն: Սկզբնական շրջանում իշխանությունն և ես ուշադրություն չէինք դարձնում այդ բանի վրա, վստահ լինելով գյուղացիների՝ դեպի մեր կառավարությունն ունեցած վստահության վրա, բայց հետո, երբ Տեր-Հարությունյանը մարդ էր ուղարկել խորհրդային իշխանության մոտ՝ Գորիս և առաջարկել, որ գան ու իրենց շրջանը գրավեն և երբ այդ բանն իմացել էր վաշտապետ Գերասիմը՝ բարկացել ու ատրճանակով վիրավորել էր նրան, որից և մեռել էր Տեր-Հարությունյանը:

Հ. Ճի՞շտ է, որ վերջին նահանջին Արծվանիկ գյուղն առանց դիմադրության հանձնվել էր թշնամուն:

Պ. Այո՛, ճիշտ է, ոչ միայն Արծվանիկն, այլև ամբողջ Ղափանն առանց դիմադրելու հանձնվեց: Կռիվներից 15 օր առաջ Ղափանից պատվիրակներ էին գնացել թշնամու մոտ և հայտնել, որ ժողովուրդը նոր կազմված Լեռնահայաստանի կառավարության (Հայաստանի կառավարության) հետ ոչ մի կապ չի զգում, եւ խնդրում է գալ ու տիրել երկրին:

Հ. Սմբատ Խոջամիրյանին սպանե՞լ են Գորիսում և ինչո՞ւ:

Պ. Սմբատ Խոջամիրյանը սպանվել է Գորիսում այն պատճառով, որ ռազմամթերք է ծախել թուրքերին:

Հ. Սմբատ Խոջամիրյանը սպանե՞լ է 6 հոգու Գորիսում և ո՞ւմ կարգադրությամբ:

Պ. Այո, սպանել է 6 հոգու Գորիսում՝ դատական մարմնի վճռով:

Հ. Սմբատ Խոջամիրյանին դուք ուղարկե՞լ եք Ղարաբաղ:

Պ. Այո՛:

Հ. Արդյո՞ք այդ սպանված վեց հոգու սպանության պատասխանատվությունից զերծ պահելու համա՞ր չէ, որ նրան ուղարկել եք Ղարաբաղ:

Պ. Ո՛չ, ընդհակառակը, նա ուղարկված է եղել Ղարաբաղ, որպես այդ տեղին քաջածանոթ մարդ և առհասարակ ապստամբության սկզբի շրջանում լավ ապստամբներից էր և իրեն շատ լավ էր պահում:

Հ. Որքա՞ն հարմար էր, որ դուք Ձեր շտաբի պետին դատական մարմնի նախագահ էիք կարգել:

Պ. Ժողովրդի ներկայացուցիչներն էին ընտրել նրան՝ հիմնվելով այն բանի վրա, որ երկիրը ռազմական դրության մեջ էր հայտարարված:

Հ. Վաշտապետներն ինքնագլուխ, առանց դատական մարմնի քննության ու վճռի, սպանություններ չե՞ն կատարել:

Պ. Ո՛չ:

Հ. Հաջի Մարկոսին և իր որդուն ճանաչո՞ւմ եք:

Պ. Ո՛չ:

Հ. Նա ղամարլվեցի է, նրա որդին մեծամասնական է եղել և հակառակ ընկերների միջամտության, դուք երկուսին էլ սպանել եք տվել:

Պ. Ես ոչ ճանաչում եմ, ոչ էլ տեղեկություն ունեմ այդ մասին: Չեմ պնդում, կարող է պատահել, որ առանց իմ և դատարանի գիտության սպանված լինեն, որովհետեւ խառը ժամանակ էր: Թայֆայական հողի վրա նրան խփել են, այդ մասին ցուցմունքներ կտան Նիկոլ Նիկողայոսյանն և Ղազար Քոչարյանն: (Այս հարցաքննության ժամանակ ընկեր Նժդեհը հայտարարեց, որ իր մասին ցուցմունքներ տվողները մեծ մասամբ հակառակորդ կողմ են, առանձնապես մատնանշեց Եփրեմ Սարգսյանի վրա և հայտնեց, որ նա իրեն թալանել է հետևյալ ձևով. երբ Երևանից ինքը Բյուրոյի կարգադրությամբ գալիս է Լեռնահայաստան, Բուլղարիայից բերած իր թանկագին իրերը (սուր, խանչալ) և արտարժույթը, թողել է Եփրեմ Սարգսյանի մոտ: Վերջինս Երևանի նահանջից հետո գալիս է Լեռնահայաստան և հետը բերում Նժդեհի միայն մի տետրակն, իսկ մյուս իրերի մասին հայտնում է, որ մեծամասնականները խուզարկության ժամանակ տարել են, հետո երբ Նժդեհն ինքը հետաքրքրվում է այդ խնդրով, ընկերներն ասում են նրան, թե այդ իրերն ոչ թե մեծամասնականներն են տարել, այլ Եփրեմ Սարգսյանի կինն իրենց ասել է, որ նրանք թաղված են Եփրեմ Սարգսյանենց գյուղում: Ոչ միայն այս, այլև այն պատճառով, որ Շահինյանի վերջին գործողություններն անհայտ չէին կարող լինել Եփրեմ Սարգսյանին, և որ դեռ Գորիսի կուսակցական ժողովում նա հայտարարում էր, թե կռիվը մեծամասնականների դեմ չպիտի շարու-

նակել, քանի որ նրանք էլ մեզ պես սոցիալիստներ են, այդ նպատակով նույնիսկ Եփրեմ Սարգսյանն և Գ. Շահինյանը մարդ էին ուղարկել դասակարգային շերտավորում առաջ բերելու Զանգեզուրի գյուղացիների և զինվորության մեջ: Պետք է ամենևին չհավատալ Եփրեմ Սարգսյանին):

Հ. Մեծամասնականներին Տաթևի ծորը գլորելուն մասնակցա՞ծ եք:

Պ. Կտրականորեն հայտարարում եմ, որ ոչ միայն նման գործառնությունների և սպանությունների մասնակցած չեմ ու հրաման չեմ տված, այլև՝ դատական մարմնի աշխատանքներին չեմ մասնակցել: Բացի կռիվների ժամանակ տեղի ունեցած սպանություններից, մյուս բոլոր սպանությունները տեղի են ունեցած դատական մարմնի վճռով:

Հ. Նոր Բայազետն ինչո՞ւ եք թողել:

Պ. Ես Նոր Բայազետի տերը չէի, որ թողնեի, նա ընկնում էր Արարատյան իշխանության սահմաններում: Մեսրոպը և Շահինյանը գնում են Նոր Բայազետ և նամակ են գրում. գեթ 24 ժամով Բայազետ գնալ, որովհետև այդ 24 ժամն անգամ վճռական նշանակություն ուներ, նրանց կարծիքով՝ Բայազետի ապստամբ ժողովուրդը կազմակերպելու, նրա տրամադրությունը բարձրացնելու համար: Մինչև իմ գնալս՝ Աղաբեկն իրեն Բայազետի շրջանի դիկտատոր էր հայտարարել և կոլեգիալ աշխատանքներին դեմ էր, բոլոր փորձերն Աղաբեկին համոզելու, որ մյուս ապստամբ գավառների նման Բայազետում էլ ստեղծվի Հայրենիքի փրկության կոմիտե, ապարդյուն է անցնում: Իրեն շարունակ քեֆերի և հարբեցողության տված Աղաբեկը հարկավոր ուշադրություն չի դարձրել ռազմական ուժերի կազմակերպման և քաղաքից խուճապով փախած թշնամու հետապնդմանը: Բանտարկված մեծամասնականների և թշնամու ճակատի մեջ մշտական կապ է տեղի ունեցել՝ ժողովրդի տրամադրությունը միանգամայն բացասական էր դեպի մեզ: Երբ ես Բայազետ գնացի, իսկույն զգացի, որ այդտեղ հեղաշրջում չէր, որ տեղի էր ունեցել, քանի որ մեծամասնական ուժեղ իշխանություն էլ չէր եղել: Չկար զինվորական կազմակերպություն, չկար ժողովրդի մեջ կռվելու տրամադրություն, ընդհակառակը, դավադրելու, դավաճանելու բազմաթիվ փատեր ու տրամադրություն էին հանդես բերել: Ես զգում էի, որ այդ ճակատում մենք հաջողություն չենք կարող ունենա, ստիպված պիտի նահանջեինք: Իրերի վիճակն այնպես էր, երբ Ախտայի ճակատից Համո Օհանջանյանի նամակն ստացվեց, վերջինս Ախտայի մեր զորամասերի կրած անհաջողությունների հետևանքով խնդրում ու պահանջում էր, որ ես մեծամասնականներին, թե՛ Բայազետի կողմից և թե՛ Չիմինքենդի ուղղությամբ հարվածեմ և երևանյան զորամասերին օգնության հասնեմ: Ես մի վաշտ զորք եմ կանչում Նոր Բայազետ, ինքս վերադառնում Քեշիշքենդ՝

Չիմինքենդի վրայով կապ հաստատելու մերոնց հետ: Պարտք եմ համարում շեշտել, որ Աղաբեկի մղած կռիվը կազմակերպված հակամեծամասնական կռիվ չէր, այլ՝ թայֆայական. 200 միլիոն ռուբլու պատմություն կար (փողը մեծամասնականներից էր խլված) և քաղաքը թողնելու վճռի վրա ճակատագրորեն ազդել է այդ, քանի որ քաղաքը թողնելով ավելի հեշտ էր յուրացնել այդ փողերը:

Հ. Նոր Բայազետից վերադառնալիս դուք ասա՞ծ եք՝ թե Նոր Բայազետներ շատ կծնվեն, Նժդեհներ՝ չեն ծնվի այլևս:

Պ. Դա կատարյալ սուտ է:

Հ. Նոր Բայազետի կռվին՝ իբր մերոնք թշնամուն են թողել չորս թնդանոթ, դուք ներկա եղե՞լ եք:

Պ. Ո՛չ, ես գնացել եմ այդ դեպքերից հետո:

Հ. Դուք մտադրություն չունեի՞ք Ելենովկայի վրայով Երևան անցնել ու կապ ստեղծել:

Պ. Ո՛չ, ես մի վաշտով ինչպե՞ս կարող էի Երևան անցնել, մանավանդ, որ Սիսիանի վաշտն ոչ մի գնով Երևան չէր գնա. նրանց ես այդ նպատակով չէի բերել, այդ պայմաններում Սելիմից անցնելն արդեն սիսիանցիների կողմից մեծ զոհողություն էր:

Հ. Կան վկայություններ, որ դուք Նոր Բայազետի կռվին չեք մասնակցել:

Պ. Չի ենք նստել գնացել, որ տեսնենք թե ճակատում ստեղծված խուճապն ինչի՞ հետևանք է, երբ տեղ ենք հասնում՝ տեսնում ենք, որ սարսափելի խուճապով ամենքը փախչում են, շնորհիվ իմ քսանեւհինգ ծիավորների ու Մեսրոպի՝ հնարավոր եղավ գնդացիրներն ազատել:

Հ. Վեդիի ուղղությամբ չէի՞ք կարող կապ հաստատել մերոնց հետ:

Պ. Յապոնն՝ որպես այդ ճակատի պետ, քանիցս տված հրամանները փոխանակ ի կատար ածելու՝ զբաղված էր իր ոչխարների պատմությամբ. զանազան դժվարություններ (ծյունի շատություն) պատճառ բռնելով դանդաղում էր ի կատար ածել առաջ շարժվելու իմ հրամանը: Չնայած այս բանին, ես Ռուբենի գիտությամբ կտրականորեն պահանջեցի և թեև ուշ՝ մերոնք սկսեցին ռազմական գործողություններն եւ հասան մինչեւ Չանախչի: Այդ ժամանակ Գորիսի դիվանը, հիմնվելով մեր հետախուզական մարմնի տված այն սխալ տեղեկությունների վրա, որ մեծամասնականները 10000 զորք են կենտրոնացրել Զաբուղի ուղղությամբ, ինձ ստեպ հետ կանչեցին, ես վերադարձա Գորիս, ուր հասնելուցս երեք օր հետո Երևանի գաղթականությունն երևաց:

Հ. Յապոնին ինչո՞ւ ուրիշով չէիք փոխարինում:

Պ. Ուրիշ մարդ չկար եւ ոչ ոք էլ որևէ արժանավոր թեկնածու չի մատնանշել:

Հ. Դուք դժգոհ եք եղել Կուռոյից ու իր զորամասերից, ինչո՞ւ չեք հեռացրել նրան ու ցրել զորքը:

Պ. Ես այդ կանեի և մի շարք փաստաթղթերով հաստատվող քայլեր եմ արել այդ ուղղությամբ: Եթե երևանյան զորամասերի հրամանատարությունը հեռացվեր և զորամասերն էլ զտման ենթարկվեին, այն ժամանակ կստեղծվեր մի ռազմունակ ուժ: Եթե չլիներ Հայաստանի կոմիտե՝ ես այդ կանեի:

Հ. Հակոբ Տեր-Հակոբյանի հետ ի՞նչ հարաբերության մեջ էիք:

Պ. Երբ Տաթևի համագումարի ժամանակ Լեռնահայաստանի կառավարության համար ընկերների ցանկ խնդրեցի՝ ի շարս այլ ընկերների տվեցին նաև Հ. Տեր-Հակոբյանի անունը:

Հ. Ինչո՞ւ Լեռնահայաստանի կառավարության համար գաղթական ընկերներից էիք թեկնածու ուզում:

Պ. Ես դեմ էի, բայց որպես կուսակցության ներկայացուցիչ ենթարկվեցի կուսակցական մարմնի կարգադրության, մանավանդ կուսակցական ընկերների բարոյական ճնշումը կար, որ անտեսել՝ անկարող էի:

Հ. Դուք ինչո՞ւ համաձայնեցիք Հայաստանի և Լեռնահայաստանի կառավարությունները միացնել:

Պ. Ես դեմ եմ եղել այդ բանին ու կարծիքս առանձին նամակով գրել եմ Հայաստանի կառավարության նախագահին: Այդ նամակով ես ինչպես և առաջ, առաջարկում էի Հայաստանի կառավարության նախագահին հրաժարվել Լեռնահայաստանի կառավարության նախագահությունից, մնալ որպես Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ և որպես այդպիսին՝ ներկայանալ արտաքին աշխարհին և ընդհանրապես քարոզչության գործը դրսում, սակայն հակառակ իմ համոզման՝ ես երկու կառավարությունների միացման հետ հաշտվեցի, որովհետեւ կուսակցական գերագույն մարմինն այդ էր հրամայում: Չնայած այն հանգամանքին, որ Տաթևի համագումարի միջոցով ժողովուրդն իր հավաքական կամքն էր արտահայտել հօգուտ իմ տեսակետի և մանավանդ թե ժողովրդի միջից էլ ձայներ էին լսվում, որ Հայաստանի կառավարությունը վստահություն չունի ժողովրդի մեջ, ես, այնուամենայնիվ, այդ երկվության հանդեպ կանգնած՝ վճռեցի ենթարկվել կուսակցական մարմնի վճռին: Երկու կառավարությունների միակ միացյալ ժողովում անգամ ընկեր Վրացյանն այն տեսակետն ուներ, որ Հայաստանի կառավարությունն անծանոթ է ժողովրդին և առաջարկում էր երկրի և ժողովրդի շահերի տեսակետից Զանգեզուրը թողնել Լեռնահայաստանի կառավարությանը կառավարելու: Բայց,

որովհետև մատերն էին վճռում բոլոր խնդիրներն, այս խնդիրն էլ մատներով վճռվեց՝ հակառակ իմ ու Վրացյանի տեսակետների:

Հ. Դուք 11 ձիերով Ձեր իրերն և Ձեր ծանոթ ու մոտիկ բարեկամներին ուղեցել եք փոխադրել Արաքսը պետական հաշվով և առանց հերթի, և Ձեր անունից այդպիսի պահանջ դրել եք Տեր-Հակոբյանին և նա մերժել է Ձեզ:

Պ. Ո՛չ, ես երեք վերստ հեռու եմ եղել:

Հ. Տիգրան Սազանդարյանի՝ առանց հերթի ու պետական հաշվով Ձեր անունով անցկացնելիք երեք բեռ իրերի մասին տեղեկություն ունե՞ք:

Պ. Այո՛, այդ իրերը Տաթևի հնությունները են եղել:

Հ. Գասպար Խաչատրյանը Ձեր տված թղթերի հիման վրա գնացել և խնդրել է Տեր-Հակոբյանին, որ իրեն հերթից դուրս թույլ տա գետն անցնելու:

Պ. Նա Լեռնահայաստանի կառավարության և իմ ներկայացուցիչն էր և որպես այդպիսին՝ ուներ պաշտոնական թուղթ, իսկ Հակոբ Տեր-Հակոբյանին նա դիմե՞լ է, թե՞ ոչ հերթից դուրս գետն անցնելու՝ չգիտեմ:

Հ. Ինչո՞ւ եք երկու թնդանոթ և երկու գնդացիր հանձնել Ամիր Արշադին:

Պ. Ես թնդանոթներ և գնդացիրներ չեմ տվել, Լեռնահայաստանի կառավարությունն է տվել մի թնդանոթ և մի սպա մի քանի զինվորներով: Իսկ նահանջի ժամանակ գետն անցկացրած թնդանոթների և գնդացիրների խնդիրն այսպես է եղել: Նախքան մեծամասնականների Գենվազ մտնելը ժողովուրդը չգիտեր, թե ո՞վ է գալիս մեծամասնականի քղամիդով՝ թուրքե՞րն, թե՞ ռուս-հայկական զորամասերն, որպեսզի հնարավոր լիներ թուրքերի ներխուժման դեպքում Գենվազին օգնության հասնել: Ես կարգադրեցի, որ երկու թնդանոթ և գնդացիրներ անցկացնեն Արաքսն եւ որոշված տեղում սպասեն կարգադրության, այս մասին հայտնված էր նաև Գենվազի ժողովրդին: Թնդանոթները ու գնդացիրները սպաների և զինվորների հսկողությամբ պահվում էին Քիւրդաշ գյուղում: Ամիր Արշադն այդ մասին իմանում է և առանց հարցնելու մարդ է ուղարկում և տանում թե՛ թնդանոթներն և թե՛ գնդացիրներն՝ առանց փականքների: Այնուհետեւ, Պոպովի տված տեղեկությունների հիման վրա ինձ մոտ ևս մարդ է ուղարկում ու փականքները պահանջում: Ես մերժում եմ՝ պատճառաբանելով, որ փականքները թողնված են Մեղրիում: Ամիր Արշադն ուրիշ միջոցների փորձեց դիմել՝ Մուժումբարը սպառնաց քանդել, գաղթականության վերադարձը խանգարել, սակայն այդ միջոցներն էլ ապարդյուն անցան և փականքները ցարդ վերադարձրած չեն:

Հ. Երևանի նահանջից հետո, երբ զորամասերն ու գաղթականությունը հասնում են Դարալագյազի սահմաններին, դիրքերում Յապոնի սահմանապահ զորամասերի փոխարեն հանդիպում են թուրքերի, ինչո՞վ եք բացատրում այս:

Պ. Դա Կուռոյի մեղքի հետևանք է: Նա փոխանակ գաղթականության հետևից ռազմական պատրաստությամբ գալու՝ ամենից առաջ էր եկել: Ընդունեցեք, որ եթե անգամ Դարալագյազի սահմանապահ զորամասերն երկաթե կարգապահություն ունենային, այդպիսի խուճապային ու քաոսային նահանջը չէր կարող չանդրադառնալ սահմանապահ զորքերի տրամադրության վրա: Ընդհանրապես, մեր բոլոր նահանջների ժամանակ, մեր զորքի տրամադրության վրա խիստ բացասականորեն է ազդել գաղթականությունը:

Հ. Ձեզ մեղադրում են, որ ժամանակին Դարալագյազ՝ Կուռոյի զորամասերին փամփուշտ չեք հասցրել, այնինչ՝ նա Ձեզ էր ենթարկվում և Դուք պարտավոր էիք նրա զորամասերն այդ տեսակետից բավարարել:

Պ. Նախ և առաջ, Կուռոն այդ ժամանակ ինձ չէր ենթարկվում, երկրորդ՝ այդ խնդրով Կուռոն պետք է դիմեր իմ Արևմտյան ճակատի հրամանատար Յապոնին, որի Քեշիշքենդում ունեցած զինվորական պահեստներն անհամեմատ ավելի հարուստ էին փամփուշտով՝ քան Գորիսի պահեստները: Կուռոյի զորամասերը Քեշիշքենդում մնացել են ոչ թե ութ, այլ՝ մեկուկես օր, և այդ ժամանակում էլ Կուռոն փոխանակ ճակատով զբաղվելու՝ վիճելիս է եղել Յապոնի հետ, թե ո՞վ ո՞ւմ պիտի ենթարկվի:

Հ. Ձեզ մեղադրում են, որ Երևանից եկած սպաներին Ձեր պաշտոնյաները, նույնիսկ սրանցից հիվանդներին, վիրավորներին ու զորամասերին Ձեր կարգադրությամբ զինաթափել, թալանել ու վիրավորել են, որի հետևանքով անջրպետ է ստեղծվել Լեռնահայաստանի և Երևանի սպայության, պաշտոնեության եւ ժողովուրդների մեջ:

Պ. Դուք ցույց տվեք գեթ մի թուղթ, որով ես նման կարգադրություն եմ արել:

Հ. Խմբապետ Սմբատը նույնպես այդ առթիվ գանգատվել է:

Պ. Սմբատի ու առհասարակ ոչ ռազմական կարգով Լեռնահայաստանի սահմանները մտած սպաներին ու զորամասերին զինաթափ անելու հրամանը տվել են Ռուբենն, Կուռոն և Յապոնն՝ առանց իմ գիտության: Այն էլ՝ հենց որ ստանում եմ Կարո Սասունու հեռախոսագիրն այն մասին, որ զինաթափությունները թյուրիմացությունների տեղիք են տալիս՝ անհիմնապես կարգադրում եմ դադարեցնել, մինչև իմ Բազարչայ գնալս: Իմ մինչև Բազարչայ գնալս կամ այնտեղից վերադառնալուց հետո կարող է պատահել, որ սիսիանցիներն ինքնագլուխ զինաթափ արած լինեն այս ու այն անհատին: Առանձնապես

Սմբատի և ընդհանրապես տաճկահայ զորամասերի զինաթափման կարգադրությունն արել ու քանիցս կրկնել են՝ Ռուբենը, Կուռոն և Յապոնը:

Հ. Ձեզ մեղադրում են, որ թեև խոստացել եք բռնագրավված զենքերը հետ վերադարձնել տերերին, այնուամենայնիվ, Ձեր խոստումը չեք կատարել և սոցա զենքերն ուղարկել եք Տաթև:

Պ. Այո՛, զենքերն ուղարկել եմ Տաթև, բայց հետ դարձնելու խոստում ես ոչ ոքի չեմ արել:

Հ. Ձեզ մեղադրում են, որ Դուք երևանյան սպաներին մեղադրել եք այն բանի մեջ, որ իբր թե նրանք չեն ցանկանում Զանգեզուրում ծառայել, որ ուզում են Պարսկաստան գնալ, այս պատճառով մոտ 60 սպա թողել են իրենց ծառայությունն և անցել Պարսկաստան:

Պ. Այդպիսի բան տեղի չի ունեցել, ես միայն երևանյան զորամասերի թե՛ հրամանատարական կազմի և թե՛ զինվորների ռազմունակությունն ու որակն ցած համարելով ամեն քննադատությունից՝ գրել եմ իմ ընկեր Սիմոն Վրացյանին և Արշակ Հովհաննիսյանին, որ գան և իրենց զորքին տեր դառնան:

Հ. Դուք կարգադրել ու հետևե՞լ եք, որ Երևանի զորամասերը կանոնավոր զբաղմունքներ ունենան:

Պ. Այո՛, ես քանիցս կարգադրել, հրամայել եմ, որ ամենօրյա զբաղմունքներ տեղի ունենան, սակայն հրամանատարական կազմը պատճառաբանելով, թե զինվորները մերկ են, բոկոտն, նրանց իրենց ընտանիքներից հնարավոր չէ բաժանել, հետաձգում և ի կատար չէին ածում իմ հրամանները:

Հ. Բազարչայի տեղահանության հարցը ո՞վ է վճռել:

Պ. Լեռնահայաստանի կառավարությունը:

Հ. Ճի՞շտ է, որ ռազմավարական տեսակետից Կուռոն դեմ է եղել Բազարչայի տեղահանությանն և այդ պատճառով ճի՞շտ է, որ առաջարկել է միայն ռազմունակ տղամարդկանց տեղահան անել, թողնելով կանանց, ծերերին ու երեխաներին տեղում: Սիսիանցիները Բազարչայի բնակիչներին թալանելու համար հարձակումներ գործել են և Կուռոյի գիշերային պահակները նրանց հետ այդ պատճառով շարունակական ընդհարումներ ունեցե՞լ են:

Պ. Նախ ռազմագիտական տեսակետից՝ պետք էր այդ գյուղը տեղահան անել: Գիտական ռազմավարության տեսակետից՝ կանայք ու ծերերն էլ վտանգավոր են ճանաչված, երբ մանավանդ՝ նրանց համար կյանքն ամբողջապես թշնամու կողմն էր: Նրանք Բազարչայի թե՛ աջից և թե՛ ձախից, Նախիջևանի ու Մինքենդի կողմերից ամեն տեսակ վտանգավոր քայլերի հող կարող էին պատրաստել և մեր թիկունքից խփել տալ թշնամուն: Բազարչայի տեղահանության հարցը դեռ Կուռոյի գալուց շատ առաջ էր վճռված: Կուռոն ի նկատի ունե-

նալով այն հանգամանքն, որ շուտափույթ և միանգամից տեղահանության հետևանքով բազմաթիվ ցորենի ու գարու հորեր կմնային անհայտ, որ արտարժույթային շատ արժեքներ հետները կարող էին տանել՝ առաջարկում էր աստիճանաբար, հետզհետե կատարել տեղահանությունը: Սպայությունը դեմ էր տեղահանության, որովհետև այդու՝ նոքա զրկվում էին թալանելու և հարստանալու հնարավորությունից: Միայն կոռնետ Մ. Նավասարդյանը 70 գլուխ տավար էր գողացել և քշել լեռները: Սպայության և Կուռոյի բռնած դիրքի հետևանքով էր, որ ես կարգադրեցի 24 ժամվա ընթացքում ի կատար ածել Բազարչայի տեղահանությունն, որն այնուամենայնիվ չիրականացավ:

Հ. Չնայած այն հանգամանքին, որ Կուռոն մի քանի անգամ ցանկացել է հեռանալ եւ այդ բանին իրենց համաձայնությունն են տվել կառավարության անդամներ (Մելիք-Յոլչյան, Արշակ Հովհաննիսյան.- նամակները մայիս 11, 12), Դուք սրան ուրիշով չեք փոխարինել ու ազատել:

Պ. Ես Կուռոյին այդ վտանգավոր պահին հեռացնել չէի կարող, որովհետեւ նրա հետ կա՛մ պիտի հեռանային և կա՛մ թշնամու կողմն անցնեին հրամանատարական կազմն եւ զորամասերն, մանավանդ, որ Կուռոն հրաժարականն ինձ՝ որպես սպարապետի, երբեք չի ներկայացրել: Վերջին կռիվներին, ես հրամայել էի, որ նա անձամբ ներկա գտնվի ճակատում և ղեկավարի ռազմական գործողություններն, այս հրամանս նույնպես նա ի կատար չէր ածել, որի հետևանքով արձակեցի և դատի տվի նրան: Մանավանդ, որ առանց իմ գիտության զորամասերի մեջ էր մուծել 400 գերի և մեծամասնական անռազմունակ տարրեր և այդու ավելի լքել ու պատճառ դառել, որ Երևանի զորամասը թշնամու կողմն անցնի:

Հ. Ձեզ մեղադրում են այն բանի մեջ, որ աչառու վերաբերմունք եք ցույց տվել Ձեր պարետների և վաշտապետների նկատմամբ, օրինակ՝ Արմենակ Պարոնյանի և Մուշեղ Բաղրյանի նկատմամբ: Վերջինս՝ որպես թալանչի, և դատի է տրված եղել ու ենթարկվել վեց շաբաթվա տնային բանտարկության, իսկ Դուք՝ ներել եք նրան:

Պ. Մուշեղ Բաղրյանն իրոք զեղծումներ էր կատարել: Ես հրահանգել եմ, որ Կուռոն մի հանձնաժողով հրավիրի և նրա զեղծումները քննի: Կուռոն իր 3 սպաներից հանձնաժողով է նշանակում. այդ հանձնաժողովը գալիս է այն եզրակացության, որ Բաղրյանն ոչ թե թալան է արել, այլ իր պաշտոնը կատարելիս թույլ է եղել, այդ պատճառով էլ՝ գողություններ են տեղի ունեցել: Այդ հանձնաժողովի անդամները քանի որ անմիջական մասնակցություն էին ունեցել Բաղրյանի արած թալանին՝ շատ մեղմ վճիռ էին կայացրել, որոշում են Բաղրյանին վեց շաբաթով տնային բանտարկության ենթարկել: Ես երբ հետաքրքրվեցի և իմացա գործի ընթացքը, խիստ դժգոհ մնացի և կարգադրեցի Բաղրյանին ուղարկել Գորիս և գործը նորից վերաքննել: Բաղրյանին զանազան պատրվակներով (հիվանդության, թուլության) դանդաղեցին ուղարկել Գորիս, որից հետո ռազմական գործողություններն սկսվեցին և գործը մնաց այդ վիճակի մեջ: Բաղրյանին պարետ էր նշանակել Կուռոն և նրա կատարած թալանների համար մեկ ու կես ամսվա ընթացքում պատասխանատվության չէր կանչել: Երբ ես Բազարչայ էի գնացել, մալականների բողոքների հիման վրա ես եմ Բաղրյանին դատի տվել եւ ոչ՝ Կուռոն:

Հ. Ճի՞շտ է, որ Դուք շատ անգամ արտահայտվել եք երևանյան սպաների ու զորամասերի նկատմամբ, թե նոքա ժանտախտ են, խոլերա և ժողովուդն էլ, հիմնվելով Ձեր ասածների վրա, նրանց շատ վատ վերաբերմունք է ցույց տվել:

Պ. Իմ թե Տաքեւի համագումարում արտասանած ճառերի մեջ, թե շրջաններին ուղղած հեռախոսագրում, թե պարսից կառավարության և թե Մելիք-Թանգյանին ուղղած գրություններում ես ոչ միայն դատափետական խոսք չեմ ասել՝ որեւէ մեկի հասցեին, այլ երևանյան նահանջը համարել եմ իմ հաղթություն, ես ամենևին չեմ վիրավորել ոչ սպաներին և ոչ զորամասերին: Կարող է պատահել, որ դասալիք սպաներին ու զինվորներին ծանր խոսքեր ասած լինեմ:

Հ. Ղափանում արտասանած Ձեր ճառերում Դուք ասե՞լ եք, թե ես փաշա չեմ, ես կառավարություն չեմ, ես Երեւանի զինվորությունը չեմ, որ փախչեմ, ես Նժդեհն եմ:

Պ. Ղափանի ժողովրդի տրամադրությունը բարձրացնելու համար ես ասել եմ. կառավարությունը գնաց, զինվորներն էլ կարող են գնալ, բայց մենք պիտի կռվենք: Ուրիշ ոչինչ ասած չեմ իմ ճառում:

Հ. Հուլիս 23-ին, երբ Դուք, Մելիք-Յոլչյանն և Եղիազարյանն Կուռոյից տեղեկություն եք ստանում, որ Դարալագյազը թողնված է ու զորքերից էլ ճակատում մի քանի հարյուր հոգի է մնացել, փոխանակ անձամբ գնալու և այդ շրջանի գործողությունները վարելու՝ Ձեր տեղը նշանակում եք այդ ուղղությամբ Մելիք-Յոլչյանին ու Եղիազարյանին, որոնք ռազմական տեսակետից անհարմար անձնավորություններ են:

Պ. Եթե մի որպե ընդունենք, որ Դարալագյազը թողնված էր և ճակատում էլ մի քանի հարյուր զինվորներ էին մնացել, այն ժամանակ ես իրոք պիտի մնայի կենտրոնում եւ ոչ թե գայի ճակատ: Միք մոռանա, որ մենք մի ճակատ չունեինք և բոլոր ճակատներում էլ՝ ես միաժամանակ լինել չէի կարող: Ես պետք է կենտրոնում լինեի և կարգադրեի բոլոր ճակատների գործը, բայց որովհետև վերոհիշյալ պնդումը սխալ է, ես կներկայացնեմ իրողությունն իսկությամբ: Դարալագյազն այդ ժամանակ ընկած չէր, միայն զորամասերի մի մասն էր անցել թշնամու կողմը, ես նախապես թեև կարգադրել էի, որ Կուռոն անձամբ ներկա գտնվի ճակատում և վարի գործողությունները, նա կռիվները սկսելուց

երկու օր հետո է միայն գնում Այնաջուր և երկրորդ օրը վերադառնում է այնտեղից շտաբ ու հետ փախչում: Երբ այս բոլորի մասին ինձ տեղեկացրեց՝ ես նրան գրեցի, թե դուք արհեստականորեն խուճապ եք ստեղծում ու հետ նահանջում: Ես ինքս ճակատ չեմ գնացել, այլ ուղարկել եմ վերոհիշյալ երկու ընկերոջն այն պատճառով, որ գտել եմ իմ ներկայությունը Ղափանում անհրաժեշտ՝ կենտրոնի ուժերը հավաքելու և վտանգված ճակատներին այդ ուժերով օգնության հասնելու համար: Ղափանի շրջանում հավաքածս 300 հոգին ուղարկեցի Սիսիանի ճակատը: Ուղարկածս ուժերը թշնամուն սեղմելով Բռնակոթի ուղղությամբ հաջողությամբ առաջանում էին դեպի մեր նախկին դիրքերը, սակայն աջ թևից Նավասարդյանի հեծելազորի նահանջելու պատճառով ղափանցիներն էլ հարկադրված նահանջում են: Մանավանդ, որ ձախ թևն էլ սկսել էր նահանջել:

Հ. Ձեզ մեղադրում են, որ կռիվներին անձամբ ներկա լինելուց, մասնակցելուց և ռազմական գործողությունները վարելուց խուսափել եք:

Պ. Նախ և առաջ, որևէ կռիվ այս վերջին աղետի ժամանակ տեղի չի ունեցել, իսկ ամենալուրջ համարված ճակատներում ես ունեի Կուռոյին՝ որպես իմ օգնականի և Յապոնին՝ որպես ճակատապետի: Ես զբաղված էի կենտրոնի ուժերի հավաքումով և բոլոր ճակատների գործողությունները վարելով, այդ պատճառով էլ ճակատ չէի գնում:

Հ. Մելիք-Հուսեյինյանն պնդում է, որ դուք Մինքենդի դեմ 200 զինվոր եք ուղարկել, բայց ինքներդ՝ այդ զինվորների հետ չեք գնացել:

Պ. Այդ պնդումը միանգամայն սուտ է, քանի որ Մինքենդի դեմ առհասարակ մենք որևէ գործողություն չենք սկսել:

Հ. Անցյալ տարվա Լեռնահայաստանի կառավարության անդամները գանգատվում են, որ Դուք շատ հաճախ իրենց վիրավորել ու արհամարհական վերաբերմունք եք ցույց տվել: Մանավանդ, Տաթևի համագումարի ժամանակ խիստ և անվայել արտահայտություններ եք թույլ տվել նրանց հասցեին:

Պ. Ես չեմ ուրանում այդ բանն, ուրիշ կերպ վարվել էլ չէի կարող, քանի որ նրանք ինքնագլուխ իրենց ընտանիքների կարիքների համար ցորենի ու գարու պարտադիր տուրք էին նշանակել գյուղերի վրա և պետական գներով հավաքել տվել: Բացի բժիշկ Մինասյանից, որն իրենից ոչինչ չի ներկայացնում, կառավարության մյուս անդամները զեղծարարներ են եղել: Օրինակ, Եգոր Հարությունյանն իր ինքնագլուխ կատարած պարենատուրքերի պատճառով հեռացվել էր Ղափանի և Գենվազի շրջաններից: Ս. Մաշուրյանն իր ընտանիքի կարիքների համար նույնը անում էր Զանգեզուրում: Գեդեոն Տեր-Մինասյանը խաբեբայությամբ օգտագործելով իմ անունը՝ Շնհերում եղած անձեռնմխելի զինվորական պահեստի 300 փութ ցորենը փոխադրել է տալիս Գորիս՝ պաշտոնյաների կարիքների համար, փքերով փոխարինաբար բաց թողնում դիվանի անդամներին ու մի շարք խոսակցությունների տեղիք տալի: Այդ կառավարությունն այնքան վարկազուրկ էր, որ կես փութ ածուխ ստանալու համար անգամ դիմում էր իմ աջակցությանը: Մելիք-Հյուսեյինյանի նկատմամբ ես շարունակ կասկածներ եմ ունեցել, այդ պատճառով խուզարկել եմ տվել նրա տունը: Նա իր մոտ էր պահել իր ազգական բոլշևիչկային, որ լրտեսության մեջ էր մեղադրվում: Մելիք-Հյուսեյինյանը մեծամասնականների օրոք հողային մասի վարիչ էր:

Հ. Ձեզ մեղադրում են այն բանի մեջ, որ ոչ մի օրենք ու իրավունք չեք ճանաչել՝ օրինակ կառավարությունն արգելել է անտառները կտրել, Դուք ասել եք. «Թողեք՝ թող կտրեն»:

Պ. Իմ օրենքը ժողովրդի գոյության խնդիրն էր. ես կարգադրել էի ամեն բան զոհաբերել ինքնապաշտպանության գաղափարին Դիվանն ինձ համար մի ցուցանակ էր, որն իմ կարծիքով կազմված էր իմ հրահանգներն ի կատար ածելու: Եվ որովհետև կռվի ժամանակ նա զբաղված էր ինչ-որ օրենքներ մշակելով, թարգմանություններով, իր ժամանակը վատնում էր տեղին ու հանգամանքներին անհարիր նախագծեր մշակելու վրա՝ ես բոլոր այդ ձևի թղթե կարգադրություններն անուշադրության էի մատնում և առաջարկում գնալ գյուղերը՝ կազմակերպչական աշխատանքով զբաղվել:

Հ. Դուք Տաթևի համագումարում երբ հարց է լինում բոլոր քաղաքացիներին օրենքի առաջ հավասար ճանաչելու մասին, հայտարարել եք, թե ի՞նչ օրենք, ի՞նչ հավասարություն, օրենքն ե՛ս եմ ու իմ վաշտապետներն:

Պ. Նման հայտարարություն չեմ արել, բայց եթե Լեռնահայաստանի դիվանի օրոք հայտարարած լինեի, որևէ բանի դեմ մեղանչած չէի լինի:

Հ. Գեդեոն Տեր-Մինասյանին ինչպե՞ս համաձայնվեցիք պետական վերահսկիչի պաշտոն տալ, քանի որ նա Ձեր կարծիքով անվստահելի ոմն էր:

Պ. Կառավարության բոլոր անդամները դրսից չէին կարող լինել: Վճռված էր երկու հոգի էլ տեղի մտավորականներից մուծել կազմի մեջ և որովհետև ուրիշ մարդ չկար՝ Գեդեոնը հրավիրվեց:

Հ. Երկրի ու ժողովրդի շահերի տեսակետից ի՞նչ անհրաժեշտություն էր ներկայացնում Ձեր սպարապետ օծվելը:

Պ. Այդ՝ ժողովրդի՛ն պետք է հարցնել, քանի որ ժողովրդի ցանկությամբ է տեղի ունեցել օծումը:

Հ. Ի՞նչ ձևով է տեղի ունեցել օծումը:

Պ. Լեռնահայաստանի կատավարությունը թե՛ ինձ որպես սպարապետի և թե՛ շրջանային հրամանատարներին, մի-մի դրոշակ օծեց և

նվիրեց, դրոշակի օծման հետ օծեցին և ատրճանակս և մի գոտի ու կապեցին մեջքս: Բոլոր շարժումներն առհասարակ կրել են ազգային կրոնական բնույթ և օծման գործընթացն էլ տեղի ունեցավ՝ որպես այդպիսին:

Հ. «Արնոտ գիրքը» ո՞ւմ կարգադրությամբ է հրատարակվել:

Պ. Թեեւ այդ գիրքը հրատարակվել է Տաթևի համագումարից հետո, բայց այդպիսի գիրք հրատարակելու վճիռը կայացել էր առաջ՝ հին կառավարության օրոք: Տպագրական և այլ անհարմարությունների պատճառով գրքի հրատարակությունն ուշացավ: «Արնոտ գիրքը» շտապով հրատարակելու պատճառներից մեկն էլ այն էր, որ Համո Օհանջանյանն ու Արշակ Ղազարյանը Թավրիզից մեկնում էին ու այդ պատճառով փաստաթղթեր էին պահանջում, որ դիսի աշխարհում մղելիք քարոզչության նյութ ունենային:

Հ. Ձեզ մեղադրում էին այն բանի մեջ, որ երբ նախարարական խորհրդում տեղահանության հարց է լինում, Հանքերից պետական արժեքավոր գույքերի փոխադրությունը անհրաժեշտ համարվում, Դուք հայտարարում եք, որ տեղահանության կարիք չի զգացվի, ռազմական գործողություններն ինքներդ պիտի վարեք և վճռել եք Հանքերն ու Ղափանն անձամբ պահել ու պաշտպանել: Երկու օրից հետո գալիս եք առավոտյան ժամը 9-ին, հրահանգում եք 10 րոպեում հեռանալ, որի հետևանքով գույքը մնում է տեղում:

Պ. Փաստերը խեղաթյուրված են: Գորիսում ես դեմ եղել Գորիսի տեղահանությանն, որովհետև խուճապ էր ստեղծվում և ստեղծողը կառավարությունն էր, որը ձիերը թամբել ու դուրս էր բերել փողոց և ժողովրդին էլ մատնել լքման: Հանքերում եղած խորհրդակցության ժամանակ վճռվել է դուրս տանել արտարժույթը, խորհրդային խոշոր թղթադրամները, հայկական հարյուր միլիոն դրամ: Կառավարությունն որոշման հետևյալ օրը պետք է դուրս գար Հանքերից: Նախապես, ամեն մի նախարար իր իրավասության ենթարկված պետական արժեքավոր գույքն ու դրամներն, որ հետը վերցնել չէր կարող՝ գիշերով պիտի թաքցներ: Առանձնապես հայկական դրամները Սամսոն բեկի աջակցությամբ պիտի պահեր Համբարձում Տերտերյանը, բայց որովհետև վերջինիս ընտանիքն ապրում էր Հանքերից 3 վերստ հեռավորության վրա, մինչև գնում է իր ընտանիքի մոտ և փոխադրության գործը կազմակերպում՝ լուսանում է: Առավոտյան կառավարությունը հեռանում է, Տերտերյանը չի կարողանում հայկական դրամները թաքցնել, մանավանդ, որ գույքերը թաքցնելու գիշերն Արշամ Խոնդկարյանն ու Տերտերյանն հարբած են լինում: Այս բանը վկայել կարող են՝ օրիորդ Սաթոն, գրագիր Վարդանյան Գարեգինն, Երվանդն, Սերգեյն (զեյվացի): Ես Հանքերում մնացել եմ մինևև երեկոյան ժամը ութ ու կեսը, թնդանոթներ եմ պայթեցրել, գնդացիրներ (թվով 70 հատ) եմ փոխադրել գյուղերը պահելու համար: Ինձ հետ եղել են իմ սպայակույտի կազմում և Խնկոն 70 ձիավորներով:

Հ. Տերտերյանը Ձեզ առաջարկե՞լ է դրամը մաս-մաս բաժանել ձիավորների վրա և այդպես փոխադրել:

Պ. Տերտերյանը նման առաջարկ չի արել: Ընդհակառակը, իմ ձիավորներն երբ հետո իմացան, որ Տերտերյանը դրամը թողել է Հանքերում, խիստ հուզվեցին ու սկսեցին հայհոյել նրան: Այս բոլորի մեջ ճշմարիտն այն է, որ նա փոխանակ դրամների փոխադրությամբ զբաղվելու՝ իր անձնական ընտանեկան գործերով էր զբաղված, որի հետևանքով էլ դրամները մնացին Հանքերում:

Հ. Ձեզ մեղադրում են, որ բռնագրավված ձիերից տասը գործադրել եք Ձեր անձնական իրերն և բարեկամներն փոխադրելու համար:

Պ. Ես իրեր չեմ ունեցել, բացի մեկ խուրջինից՝ ուր մեծ մասով փաստաթղթերս էին տեղավորված: Ես ունեցել եմ երկու ձի և մի ջորի: Մյուս ձիերի պատմությունը ստեղծված սուտ է: Իմ անունով՝ Յապոնն, Ռուբեն Նարինյանն և այլք իրեր և ձիեր են անց կացրել գետն և այդ տեղիք է տվել նման ասեկոսների:

Հ. Դուզալում՝ հասարակության և ֆրանսիական սպայի ներկայությամբ ինչո՞ւ եք վիրավորել Օնիկ Մաճառյանին, անվանելով նրան սրիկա, դրամ յուրացող, հագած շորերն յուրացրած դրամներով գնած:

Պ. Մաճառյանը Ռուբենի կարգադրությամբ ուղարկված էր Ղափանի սպայակույտի դրամադրության տակ: Երբ ես Ղափանից բացակա էի, նա Զանգեզուրի սպաներին կարգադրություններ է ուղարկում և թղթերի տակ ստորագրում՝ որպես իմ տեղապահ: Սպաներից այդ առթիվ դժգոհություններ լսեցի և Ղափան վերադառնալիս իրեն ասացի, որ նման բան այլևս չանի: Նեղացած այս նկատողությունից՝ Մաճառյանը գնաց Գորիս, ապա՝ Երևանի գաղթականության հետ անցավ Թավրիզ: Գասպար Խաչատրյանի միջոցով իմացա, որ նա Թավրիզի թե՛ հասարակության, թե՛ կուսակցական ընկերների մեջ զանազան ասեկոսեներ է տարածում իմ ու վաշտապետներիս գործառնությունների մասին: Այդ բանից հուզված՝ նահանջին երբ որ եկա Արաքսն անցնելու՝ պատահեցի Մաճառյանին: Զինվորները Գևորգ և Ալեքսան զեղծարարներին ծեծում էին, Մաճառյանն եկավ և միջամտեց: Ես այդտեղ էր, որ նրան ասացի. «Թողե՛ք սրիկայությունը, Ղափանում էլ Ձեզ ամենալավ վերաբերմունքը ցույց տվին, բայց դուք թողեցիք ու գնացիք Թավրիզ՝ բամբասանքներով զբաղվելու»:

Հ. Երևանի կառավարությունից ու կուսակցությունից ստացած գումարների հաշիվը ցարդ ինչո՞ւ չեք ներկայացրել:

Պ. Հ.Հ.Դ. Բյուրոյի թիվ 2074, 1920թ. նոյեմբերի 3-ի գրությամբ ինձ ուղարկված է դրամ՝ իմ անձնական կարիքները բավարարելու

համար, որի մի մասը ծախսված է, մյուս մասը՝ մնում է, հաշվետվությունը կներկայացնեմ: Կառավարությունից ստացել եմ 100 միլիոն հայկական չեկերով՝ սպանված կարիքավոր զինվորներիս ընտանիքներին բաժանելու: Այս գումարի մի քառորդը ծախսված է, իսկ մնացածը՝ դեռ Մուժումբարից Գենվազի փրկության կոմիտեի նախագահ Աղայանի միջոցով ուղարկել եմ Վրացյանին, որը հրաժարվել էր ընդունել: Այնուհետեւ, այդ դրամները տարել են Գեդեոն Տեր-Մինասյանին հանձնելու՝ ժամանակ չի ունեցել ընդունելու: Սմբատ Եղիազարյանը նույնպես հրաժարվել է ընդունել: Կարգադրել եմ, այդ դրամներն ուր հարկն է՝ շուտով կհանձնվեն:

Հ. Ասացեք խնդրեմ, 80 գլուխ տավար Լեռնահայաստանից բերե՞լ եք Մուժումբար:

Պ. Երկու ֆերմաների տավարը բերել է Սմբատ Եղիազարյանը մինչև Մուժումբար: Այդ տավարից մոտավորապես 15-20 հատ նվեր են տվել ֆալաշիներին ու խաներին: Մնացածը՝ մոտ 90 հատ, կառավարությունն իր մարդկանցով փոխադրել է Մուժումբար: Այդ տավարի վերահսկիչ էր նշանակված կառավարության կողմից Արմենակ Պարոնյանն իր զինվորներով: Մի քանի օր անց, Արմենակ Պարոնյանն այդ տավարներից մի քանի հատ ծախում է, իսկ մնացածը թողնում է Մուժումբարում՝ իր զինվորների հսկողության տակ: Գենվազի հրամանատար գնդապետ Մելիք-Օհանջանյանը հսկողություն է նշանակում, որ չփչանա և չկորչի: Այնուհետեւ, կառավարությունը նոր մարդ է ուղարկում և ընդունում է: Ես ոչ մի կապ չեմ ունեցել այդ տավարի հետ, այժմ էլ չգիտեմ, թե ի՞նչ է արված այդ տավարը:

Նժդեհ

Դատական գործ, թթ. 321-339:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կապարգողթ - Այդպես էր կոչվում Կապանի, Գենվազի, Գողթանի միացյալ շրջանը: - 27
2. Աթաջանյան Գերասիմ - Լեռնահայաստանի քաջարի հրամանատարներից, ծնվել է Ղափանի շրջանի Գյութկյում գյուղում: Զոհվել է 1928թ. (կամ 1929թ.) ԽՍՀՄ պետական սահմանը անցնելիս: - 31
3. Նկատի ունի 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված հայ-խորհրդային համաձայնագրի նախագիծը: - 34
4. Նկատի ունի Կապանի, Գենվազի, Գողթանի, Արևիքի շրջանները: - 35
5. Նոյեմբերը 31 ճր չունի, պետք է լինի դեկտեմբերի 1-ը: - 47
6. Եփրեմ խան դավթյան - (1868-1912) - հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ: 1905-1911թթ. իրանական հեղափոխության ղեկավարներից, զինուժի հրամանատար: - 48
7. Աշխատությունը շարունակություն չի ունեցել: - 54
8. Բառացիորեն՝ հաղթելու ցանկություն – ֆրանսերեն: - 69
9. Ակնունի (Մալումյան Խաչատուր) - (1863-1915) - հայ քաղաքական գործիչ, ՀՅԴ ղեկավարներից, հրապարակախոս: - 72
10. «Հալալ լինի ձեզ հայեր, հալալ» - թուրքերեն: - 77
11. Նկատի ունի 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված հայ-խորհրդային համաձայնագրի նախագիծը: - 84
12. Հավանաբար Յապոնն է՝ Արմենակ Պարոնյանը: - 87
13. Բագրատ Հարությունյան – 1920թ. Ղափանի շրջանի հեղկոմի նախագահ, գնդակահարվել է 1920թ. աշնանը: - 89
14. Հավանաբար Արշակ կամ Ասատուր Խուրշուդյանն է: - 89
15. Պողոսգ Տեր-Դավթյան - Սիսիանի շրջանի հայկական զինուժի հրամանատար: - 94
16. «Անհավատ, կեղտոտ հայ» - թուրքերեն: - 100
17. Նկատի ունի Աշոտ Մելիք-Մուսյանին: - 109
18. Արտակարգ հանձնաժողովներ: - 112
19. Արտակարգ հանձնաժողովներ: - 114
20. փոխաբերաբար՝ բռնաճնշումների և ձերբակալությունների քաղաքականություն: - 116
21. Բնագրում ժամանակը ճիշտ չէ նշված՝ պետք է լինի 1921թ. հունվար: - 116
22. Նկատի ունի 1921թ. փետրվար-մարտ ամիսներին մոսկվայում կայացած խորհրդա-քեմալական կոնֆերանսը: - 123
23. Նկատի ունի 1920թ. սեպտեմբերի 1-9-ը Բաքվում գումարված Արևելքի ժողովուրդների համագումարը, որն ակնհայտորեն ուղղված էր Հայաստանի հանրապետության դեմ: - 132

24. Յապոն - Արմենակ Պարոնյան - 1920թ. եղել է Բազարչայի պարետ, հակահետախուզության պետ: 1924թ. հուլիսին ձերբակալվել է Զանգեզուրում և դատապարտվել գնդակահարության: - 133
25. Համազասպ Օհանջանյան - (1873-1947) - հայ կուսակցական և պետական գործիչ, 1920թ. մայիս-նոյեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետության վարչապետ: 1921թ. հետո գործել է արտասահմանում, եղել ՀՅԴ ղեկավարներից: - 137
26. Նկատի ունի մենշևիկյան Վրաստանի խորհրդայնացումը: - 138
27. Թևան Աղաջանի Ստեփանյան - (1892-1941) - հայ ազատագրական շարժման անձնվեր գործիչ: Ծնվել է Հադրութի շրջանի Տումի գյուղում, ղեկավարել է Արցախի 1919-1921թթ. պայքարը, գնդակահարվել է ՊԱԿ-ի կողմից: - 143
28. Ռուբեն Տեր-Մինասյան - (1882-1951) - հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ: 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետության ռազմական պատասխանատուներից: 1921թ. հետո գործել է արտասահմանում, եղել ՀՅԴ ղեկավարներից: - 145
29. Հակոբ Տեր-Հակոբյան - Ս.Վրացյանի կառավարությունում պարենավորման նախարար, Գ.Նժդեհի հանդեպ ունեցել է ընդգծված բացասական դիրքորոշում: 1921թ. հետո գործել է արտասահմանում: - 145
30. Գարեգին Ամիրջանյան: - 145
31. Քաջազնունի(Իգիթխանյան) Հովհաննես Ռուբենի – (1868-1938) – հայ նշանավոր քաղաքական-պետական գործիչ: 1918թ. հուլիս-1919թ. փետրվար ամիսներին եղել է Հայաստանի Հանրապետության վարչապետ: 1924թ. վերադարձել է Երևան, բռնադատվել է և մահացել բանտում: - 149
32. Սմբատ Բորոյան - Մախլուտո - (1881-1956) - հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ, 1900թ.-ից մասբնակցել է գրեթե բոլոր ֆիդայական մարտերին: 1921թ. հետո գործել է արտասահմանում: 1947թ. հայրենադարձվել է: - 149
33. Նկատի ունի բարոն Վրանգելի պարտությունը: - 149
34. Կուռո Թարխանյան - 1918-1921թթ. ղեկավար ռազմական գործիչներից: - 153
35. ad hoc - կոնկրետ գործի համար ճանաչում, օրինակ՝ որևէ համաձայնություն կնքելու համար - լատիներեն: - 153
36. Հիշյալ գործիչները կացնահարվել են Երևանի բանտում: - 157
37. Նկատի ունի 1921թ. ապրիլի 24-ի Վ.Լենինի նամակը Կովկասի կոմունիստներին, որը Մոսկվայից բերել է Ալ.Մյասնիկյանը: - 159
38. Գաղթականությանը վերադարձնելու նպատակով Իրան էր մեկնել Գրիգոր Վարդանյանը, որը նախկինում եղել էր ՀՅԴ անդամ: - 159
39. Ա-Դո - Հովհաննես տեր-Մարտիրոսյան - (1867-1954) - հայ պատմաբան և տնտեսագետ: - 161

40. Դավիթ Անանուն (Տեր-դանիելյան) - (1879-1943) - հայ հասարակական գործիչ, պատմաբան,: 1921-1926թթ. եղել է Հեղափոխության թանգարանի սնօրեն, մահացել է աքսորում՝ Աստրախանում: - 161
41. Նկատի ունի 1921թ. ապրիլին Բուխարեստում կայացած խորհրդակցությունը: - 162
42. Ստեղծվել է 1921թ. փաստորեն գոյություն չունեցող ՀՅԴ բյուրոյին փոխարինելու համար: - 162
43. Հավանաբար նկատի ունի Գերասիմ Աթաջանյանին: - 174
44. «Իմ պատասխանը» - առաջին հրատարակությունը տես՝ Գ.Նժդեհ, Իմ պատասխանը. Սոֆիա, 1937: - 185
45. ita est – բառացի՝ նա է - լատիներեն: - 185
46. 1918թ. հոկտեմբերի 30-ին Լեմնոս կղզու մուդրոս նավահանգստում Անտանտի ներկայացուցչների և Օսմանյան կայսրության միջև կնքվեց զինադադար, որ հայերին վերաբերող կետերը հետագայում չիրականացվեցին: - 185
47. Նկատի ունի 1919թ. կնքված անգլո-թուրքական գաղտնի համաձայնագիրը: - 185
48. 1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի արվարձան սևրում Անտանտի պետությունները և նրա դաշնակիցները՝ այդ թվում և Հայաստանի հանրապետությունը, Օսմանյան կայսրության հետ կնքեցին հաշտության դաշնագիր: Հետագայում Անտանտի պետությունները ամբողջությամբ հրաժարվեցին այս դաշնագրից: - 186
49. irrationel - անխելամիտ, անխոհեմ – ֆրանսերեն: - 187
50. Նկատի ունի զանգեզուրում ինքնավար Սյունիքի հռչակումը: - 188
51. Նկատի ունի 1921թ. ապրիլի 2-ը, երբ «Հայրենիքի փրկության կոմիտեի» անկումից հետո Երևանում կրկին հաստատվեց խորհրդային իշխանություն: - 188
52. Էլեֆտերիոս Վենիզելոս - (1864-1936) - հույն հայտնի պետական գործիչ, եղել է Հունաստանի վարչապետ 1910-1915, 1917-1920, 1928-1932, 1933-1935 թվականներին: նկատի ունի արևմտյան ճակատում քեմալականների դեմ կռվող հունական զորքին: - 190
53. Նկատ ունի 1920թ. մայիսին Հայաստանում տեղի ունեցած բոլշևիկյան ապստամբությունը: - 192
54. Սպարտայի թագավոր Լեոնիդասը (մ.թ.ա. 507-480) Թերմոպիլեի կիրչում մ.թ.ա. 480թ. հերոսաբար զոհվել է պարսիկների դեմ կռվում: նրա անունը հայրենասիրության և արիության խորհրդանիշ է: - 194
55. մելիք ֆրանգյուլ - 18-րդ դարի առաջին քառորդի գործիչ, որի անունը դարձել է դավաճանության հոմանիշ: - 194
56. Գեղեոն Տեր-Մինասյան - (1865-1937) - Ղափանի Խլափաղ գյուղից, եղել է Լեռնահայաստանի կառավարության պետական վերահսկիչը:

1921թ. հետո գործել է արտասահմանում: 1937թ. վերադարձել է Հայաստան, գնդակահարվել 1937թ. դեկտեմբերի 17-ին: - 195
57. Ջուզեպե գարիբալդի - (1807-1872) - Իտալիայի ժողովրդական հերոս, իտալական ազատագրական շարժման առաջնորդ: - 197
58. Խանջյան Աղասի Ղևոնդի - (1901-1936) - հայ կուսակցական նշանավոր գործիչ. 1930-1936թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար: - 201
59. Նկատի ունի մ.թ.ա. 5-րդ դարում Հայաստանի տարածքով Հունաստան վերադարձող 10.000 հույն զինվորների նահանջը Պարսկաստանից: - 202
60. Նկատի ունի 1920թ. դեկտեմբերի 2-ին կնքված պայմանագիրը, որոցով իշխանությունը հանձնվեց հեղկոմին: - 205
61. Աշոտ Մելիք-Մուսյան - գողթանի գավառապետ:Ըստ խմբապետ Մարտիրոսի հուշերի Երևանից վերադառնալով Լեգրանի հանձնարարությամբ Աշոտը համոզել է Նժդեհին Սյունիքը հռչակել խորհրդային, ինչի համար խստորեն հանդիմանվել է: Աշոտը դիմել է ինքնասպանության: - 208
62. Նկատի ունի Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանին: - 211
63. Վահան Խորենի - ՀՀԴ ղեկավար գործիչներից, սպանվել է Զանգեզուրում 1920 թվականին: - 214
64. Արշակ Շիրինյան - ՀՀԴ գործիչներից, սպանվել է Զանգեզուրում 1920 թվականին: - 214
65. Ergo – հետևաբար (լատիներեն): - 216
66. Խոսքը վերաբերում է Աշոտ Մելիք-Մուսյանին: - 219
67. Խոսքը վերաբերում է 1920թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի Հեղկոմի ընդունած դեկրետին: - 220
68. Նկատի ունի 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված հայ-ռուսական համաձայնագիրը: - 220
69. Գրիգոր Վարդանյան (1868-1938) - 1920-21թթ. աշխատակցել է Բաքվի «Կոմունիստ» թերթին: Նրա գլխավորած պատվիրակությունը 1921թ. փետրվարի սկզբին Զանգեզուրում հանդիպել է Գ.Նժդեհին: Նա կազմակերպել է Թավրիզից 6000 փախստականների վերադարձը Զանգեզուր: - 221
70. Հավանաբար խոսքը 1920թ. դեկտեմբերի 1-ին կայացած խորհրդակցության մասին է: - 222
71. Նկատի ունի 1921թ. փետրվար-մարտ ամիսներին Մոսկվայում կայացած խորհրդա-քեմալական կոնֆերանսը, որին Թուրքիայի դիմադրության պատճառով Խորհրդային Հայաստանը չմասնակցեց: - 222
72. Սարգիս Կասյան (Տեր-Կասպարյան) - (1876-1937) - հայ կուսակցական-պետական գործիչ, Հայաստանի Հեղկոմի նախագահ: - 227

73. Գևորգ Աթարբեկյան - (1892-1925) - խորհրդային պետական գործիչ, 1921թ. փետրվարին եղել է Հայաստանի հյուսիսային շրջանների ռազմհեղկոմի նախագահ, ապա՝ Կովկասյան առանձին բանակի արտակարգ հանձնաժողովի նախագահ: - 227
74. Ավիս (Ավետիս) Նուրիջանյան - (1896-1937) - խորհրդային կուսակցական-պետական գործիչ, 1920թ. մայիսյան ապստամբության ղեկավարներից, Հայաստանի Հեղկոմի անդամ, 1921-23թթ. ՀԿԿ ԿԿ քարտուղար, ռազմժողկոմ: - 227
75. Համազասպ Սրվանձտյան - (1873-1921) - հայ ազգային-ազատագրական պայքարի գործիչ, 1915-17թթ. հինգերորդ հայկական կամավորական ջոկատի հրամանատար, 1918թ. Բաքվի հայության ղեկավարներից:Կացնահարվել է 1921թ, Երևանի բանտում բոլշևիկների կեղմից: - 230
76. Հայ սոցիալիստ - հեղափոխականների ղեկավարներից,մասնակցել է Ս. Վրացյանի կառավարությանը, 1921թ. անցել է արտասահման: - 230
77. Լևոն Շանթ (Սեղբոսյան) - (1869-1951) - հայ նշանավոր գրող, 1920թ. ամռանը ղեկավարել է Մոսկվա ուղարկված պատվիրակությունը, 1921թ. հետո գործել է արտասահմանում: - 232
78. Նիկոլ Աղբալյան - (1873-1947) - հայ նշանավոր գրականագետ, 1919-1920թթ. Հայաստանի Հանրապետության կրթության նախարար: 1921թ. հետո գործել է արտասահմանում: - 232
79. Ավետիք Սահակյան - (1865-1933) – հայ պետական գործիչ, 1918-1920թթ. Հայաստանի խորհրդարանի նախագահ: 1921թ. հետո գործել է արտասահմանում: - 232
80. Արտաշես Կարինյան - (1886-1982) - 1921թ. Խորհրդային Հայաստանի աշրդարադատության ժողկոմ: - 235
81. Նկատի ունի Գորիսն իր շրջանով: - 240
82. Նկատի ունի Ի.Ստալին, Ս.Օրջոնիկիձե, Լ.Բերիա եռյակին: - 247
83. Նկատի ունի Ա.Խանջյանի սպանությունը՝ որպես նրա կողմից հայկական հողերի պահանջին ի պատասխան: - 248
83ա. Գրիգորի Օգանեզով – 1921թ. հունիսին 4-րդ հրաձգային գնդի 2-րդ գումարտակի հրամանատար:1922-1936թթ. աշխատել է Արտակարգ հանձնաժողովի, ՊՔՎ և ՆԳԺԿ մարմիններում: Հրատարակել է մի շարք գրքույկներ քաղաքացիական կռիվների մասին: - 255
84. Vive Tartarin! Vive tueur de lions! - Կեցցե թաթարը: Կեցցե առյուծներին սպանողը – ֆրանսերեն: - 258
84ա. Ստյուարտ Ռոբերտ Նեյլ - անգլիական բանակի փոխգնդապետ: - 269
85. Վերնագիրը խմբագրությանն է: - 270
86. Նժդեհի հուշերը տեղ են գտել Ավետիս Ահարոնյանի «Ավարայրի ոգեկոչումը» հոդվածաշարի «Ղարաքիլիսայի ճակատամարտը»

գլխում: «Աշխատանքիս այս վերջին մասը կազմելիս,- գրել է Ա.Ահարոնյանը,- ինձ մեծապես օժանդակեց քաջածանոթ ու հայրենապաշտ ռազմիկ Գարեգին Նժդեհը, որ շատ սիրալիր կերպով ինձ տրամադրեց իր գրավոր հուշերը: Այս աջակցությունը շատ թանկագին եղավ ինձ, վասնզի Գ.Նժդեհը Ղարաքիլիսայի ճակատամարտի սկզբից մինչև վերջին վայրկյանը արիասիրտ մարտնչողներից մեկն է»: («Հայրենիք», ամսագիր (Բոստոն), 1932թ., թիվ 4 (փետրվար), էջ 90):

Տվյալ հարցի վերաբերյալ Ավետիս Ահարոնյանը մեջբերում է կատարել նաև գեներալ Ղորղանյանի «Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին» ֆրանսերեն գրքից, ապա եզրափակել. «ուր էր և ի՞նչ էր անում Անդրանիկը մայիսի 19-ից-30, ահա այս է առեղծվածը, որ մնում է ապագա պատմության անաչառ քննությանն»: (Նույն տեղում, էջ 99):

Հարցի պատասխանը կարելի է գտնել բանաստեղծ Հովի. Թումանյանի «Հորիզոն» և «Մշակ» թերթերում տպագրած հոդվածում: Անդրադառնալով այն լուրերին, որ Դվալի բարձունքներից Անդրանիկի հարձակվելու դեպքում պատերազմը այլ ելք կունենար, Թումանյանը նշել է, թե այդպես դատապարտողները չգիտեն, «որ հենց էդպես էլ ծրագրված էր և կատարվելու վրա էր, երբ զինվորական բարձր հրամանատարությունից հրահանգ եկավ Անդրանիկին՝ նմալ Դսեղ և պաշտպանել երկաթուղու գիծը: Դսեղից տրված տեղեկության հետևանքով մինչև էս հրամանը փոխվեց, արդեն երրորդ օրն էր և գրեթե միաժամանակ եկավ Ղարաքիլիսայի անկման բոթը»: (Հովհաննես Թումանյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Երևան, 1995, էջ 354-355): - 271

87. Նկատի ունի 1912թ. Պետերբուրգում տեղի ունեցած դաշնակցականների դատավարությունը: - 276

88. Նկատի ունի 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված հայ-խորհրդային համաձայնագրի նախագիծը: - 277

89. Հեռագիրը ստացվել է Նոր Բայազետի միջոցով: - 282

90. Աշոտ մելիք-Մուսյան: - 283

91. Պատճենները ուղարկվել է ՀՀ արտաքին և ներքին գործոց նախարարներին, պառլամենտի նախագահին և ՀՅԴ բյուրոյին: - 293

92. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 294

93. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 296

94. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 294

95. Ատրպատականի կամ Պարսկաստանի

96.Նկատի ունի 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագիրը: - 302

97. Պատճեններ ուղարկվել է Նազարբեկյանին, Դրոյին, Սիլիկյանին, ՀՅԴ բյուրոյին և Դարալագյազի հատուկ կոմիսար Գ.Բալայանին: - 304

98. Պատճենն ուղարկվել է ՀՅԴ բյուրոյին: - 305

99. Աշոտ Մելիք-Մուսյան: - 308

100. Սերգեյ Մելիք-Յոլչյան: - 308

101. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 309

102. Deus ex machina - պետք է լինի deus ex machina (լատիներեն)- աստվածային գործիք: - 310

103. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 310

104. Волчья - գայլային՝ գիշերային մարտերի վարում: - 311

105. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին, պառլամենտի Նախագահին և ՀՅԴ բյուրոյին: - 311

106. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին, պառլամենտին և, ՀՅԴ բյուրոյին Զանգեզուր-Ղարաբաղի հեղափոխական կոմիտեին և «Հառաջ» թերթին: - 312

107. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 314

108. Պատճենները ուղարկվել է Սպարապետ Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին: - 319

109. Գեդեոն Տեր-Մինասյան: - 319

110. Ռուբեն Տեր-Մինասյան, որը Զանգեզուրում գործում էր Գևորգ ծածկանունով: - 320

111. ՀՍԽՀ-ի և 11-րդ կարմիր բանակի պատվիրակությունը, 5 անդամից բաղկացած, Ղարաբաղի ճանապարհով Զանգեզուր ժամանեց 1921թ. փետրվարի 1-ին և հաջորդ օրը Գորիսում հանդիպեց Գարեգին Նժդեհի հետ: - 320

112. Բնագրում սխալմամբ գրված է՝ 1920: - 320

113. Զանգեզուրցի կոմունիստը Սամսոն Թյունիևն է: - 320

114. Գերասիմ Աթաջանյան՝ Ղափանի զինուժի հրամանատար: - 321

115. Բնագրում սխալմամբ գրված է՝ 1920: - 321

116. Նժդեհի նամակի վրա գրված են երկու այլ նամակներ ևս, որոնք օգնում են պարզել, թե ով է «Ընկերը», որին ուղղված է նամակը: - 321

«Սիրելի փաշաս. թե կարող ես՝ հասիր. մենք անցանք: Ձերմ բարևներով՝ քո <հետևում է ստորագրություն, որն անընթեռնելի է>»: Երկրորդ նամակը՝ «Սիրելի Ռուբեն. մենք երեք հոգով անցանք Դարալագյազ. քեզ շատ սպասեցինք. գրաբեր ընկերը կպատմե մեր երկրի դրության մասին. մխիթարական լուրեր ենք լսում, որքան ճիշտ

է: Շատ շուտով կիմանանք: Ամենայն դեպս շուտ եկ: Համբույրներով քո Գերասիմ» (հավանաբար Գերասիմ Աթաջանյանն է): Հետևաբար պարզ է, որ «Ընկերը» Ռուբեն Տեր-Մինասյանն է: - 321
117. «Աքցանի մեջ», «նեղ դրության մեջ»: - 324
118. Յապոնը (Պարոնյան) Դարալագյազի (Արևմտյան ճակատի) ուժերի հրամանատարն էր: - 324
119. Կարող է լինել Արտաշես Պարոնյանը՝ Յապոնը: - 325
120. Veliakt-թագաժառանգ: - 327
121. Գուրգեն Աղայան: - 327
122.Ժամանակը և տեղը դրվում է ըստ նույնաբովանդակ այլ նամակի, ուղղված Ռուբեն Տեր-Մինասյանին: - 328
123. Ժամանակը, որը բացակայում է նամակում, դրվում է ըստ բովանդակության և Վահան Մինախորյանի «Ապրիլի 2-ի գաղթը» հոդվածի, ըստ որի հայ տարագիրների զանգվածային գետանցը սկսվել է 1921թ. ապրիլի 25-ին: («Հայրենիք», ամսագիր, 1923թ., թիվ 2, էջ 92): - 328
124. Համո Օհանջանյան: - 329
125. Փաստաթուղթը ունի մուտքագրում՝ 21. V: - 334
126. Նկատի ունի «Պրոմեթևս» կոմիտեն: - 336
127. Փաստաթղթի վրա արված է մուտքագրում. N 27 22/VI 921 Թավրիզ: - 336
128. Պատճենն ուղարկվել է վարչապետ Ս.Վրացյանին: - 337
129. Փաստաթուղթն ունի մուտք անելու նշում՝ N 26, 22. VI. 921 Թավրիզ: - 337
130.Ժամանակը որոշվում է ըստ արխիվային գործի կից փաստաթղթերի: - 337
131.Աքցանի մեջ առնել: (Բնագրի թարգմ.): - 338
132. Պատճենն ուղարկվել է Յապոնին, Մեսրոպին, Թորոսյանին: - 339
133. 1921թ. հունիսի 24-ին թիվ 568 հեռախոսագրով Կուռո Թարխանյանը Նժդեհին տեղեկացրել էր Արևմտյան ճակատում (Դարալագյազ) ստեղծված ծանր դրության, Երևանյան և այլ զորամասերի բարոյալքման, նահանջի, կարմիրներին անձնատուր լինելու մասին: Կուռոն անհրաժեշտ էր համարել Երևանյան հեծելազորը հետ քաշել, իսկ Սիսիանի սահմանների պաշտպանությունը հանձնել տեղական ազգաբնակչությանը և սիսիանցիներին: Հունիսի 25-ին թիվ 0581 հեռախոսագրով, պատասխանելով Սպարապետ Նժդեհին, նրա օգնական Կուռոն նշել է, թե ինքը արհեստական խուճապ չի ստեղծել և խնդրում էր նման վիրավորանք իրեն չվերագրել, ապա հայտնում էր օգնական ուժի անհրաժեշտության մասին, որպեսզի կարողանա «առնել թշնամու առաջը»: (ՀՅԴ կենտրոնական արխիվ, Կուռոյի վավերագրերի Բ տետր, էջ 117-120): - 341
134. Պատճենն ուղարկվել է վարչապետ Ս.Վրացյանին: - 341

135. Գրությունը գրված է Լեռնահայաստանի Զինվորական նախարարսպարապետի դրոշմակնիքով թղթի վրա: Երկրորդ օրինակը տե՛ս գ. Ս.Վ. 5-16: - 341
136. Թերմոպիլի կիրճում Սպարտայի թագավոր Լեոնիդասի հրամանատարությամբ հույների տարած հաղթանակը պարսիկների նկատմամբ (480թ. մ.թ.ա.): - 342
137. Գրությունը գրված է Լեռնահայաստանի Սպարապետի դրոշմակնիքով թղթի վրա: - 351
138. Պատճենն ուղարկված է ՀՅԴ Հայաստանի կոմիտեին: - 351
139. Գրված է «Սպարապետություն Զանգեզուր-Գողթանի» դրոշմակնիքով թղթի վրա: - 351
140. Հնարավոր է օրվա թվի սխալ ընթերցած լինելը՝ քսերոպատճենի անորակության պատճառով: Նույն պատճառով ամբողջ փաստաթղթի ընթերցումը և վերծանումը կատարվել է դժվարությամբ: - 351
141. Ինկորպորե (լատ. in corpore)՝ ամբողջ կազմով: - 354
142. Բազմակետերը այստեղ և այնուհետև բնագրինն են: - 355
143. De jure (լատ.)՝ իրավաբանորեն: - 355
144. Համեմատում է Ցուսիմայի նեղուցում 1904թ. Ճապոնիայի դեմ պատերազմում ռուսական նավատորմի կրած ջախջախիչ պարտության հետ: - 356
145. Խոշոր քաղաքական և ֆինանսական խարդախություն, խոշոր պաշտոնյաների կաշառում, որ տեղի է ունեցել Պանամայի ջրանցքի կառուցման ժամանակ: - 356
146. Նկատի ունի Ռուբեն Տեր-Մինասյանին: - 356
147. Գրքույկով տպագրվել է Գորիսում, 1921թ.: - 414
148. Հրամանի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.1, թ.1: - 414
149. Քեռի - (Արշակ Գաֆավյան,1858-1916) - հայ ազգային-ազատագրական շարժման հայտնի գործիչ, Ս.Կուկունյանի խմբի անդամ, 1914-1916թթ. եղել է հայկական 4-րդ կամավորական ջոկատի հրամանատար: - 414
150. Խեչո – ՀՅԴ մարտական գործիչներից: - 414
151. Հրամանի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.1, թ.2: - 415
152. Հրամանի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.1, թ.3: - 415
153. Հրամանի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.1, թ.4: - 416
154. Հրամանի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.1, թ.8: - 417
155. Կոչի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.13, թ.3: - 417
156. Կոչի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.13, թ.1: - 418
157. Կոչի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.13, թ.5-7: - 419
158. Կոչի բնագիրը տես ՀՀ ՊԱ, ֆ. 499, g.1, գ.13, թ.10: - 420
159. Բնագիրը տես՝ ՀՀ ՊԱ,ֆ. 499, g. 1, գ. 13, թ. 1-4: - 421
160.Նկատի ունի Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը:- 430

161.Նկատի ունի ադրբեջանական իշխանությունների կողմից կազմակերպված Շուշի քաղաքի հայ բնակչության կոտորածը 1920թ. մարտին: - 431
162. Քրիստափոր Տեր-Մկրտչյան: - 432
163.Գարեգին Սարգսյան: - 432
164. Բազմակետերը փաստաթղթինն են: - 432
165. Փաստաթուղթը քանի որ անմիջական առնչություն ուներ նախորդ փաստաթղթի հետ, խմբագրությունը որոշեց այն ներկայացնել հատորի սույն բաժնում: - 432
166. Խարան (դրոշմ): - 435
167. Տես փաստաթուղթ N 18: - 436
168. Նժդեհի սույն բացատրագիրը ամբողջությամբ տպագրվում է առաջին անգամ: - 441
169. Քվիետիզմ-Անտարբեր և հայեցողական վերաբերմունք իրականության հանդեպ: - 450
170. Խաչատուր Կարճիկյան, ՀՀ ֆինանսների նախարար, սպանվել է 1918թ.նոյեմբերի 14-ին իր աշխատասենյակում, ՀՀ բանակի սպա՝ եգոր Տեր-Մինասյանի կողմից: Ահաբեկիչի պատճառաբանությամբ Խ.Կարճիկյանը մեղավոր էր Կարսբերդաքաղաքը 1918թ. ապրիլին թուրքերին դավադրաբար հանձնելու գործում: - 451
171. Ղրիմի ռուս-թուրքական պատերազմ-Ղրիմի կամ Արևելյան պատերազմ Ռուսաստանի և Թուրքիայի միջև (1853-1856թթ.): Ռուսաստանը ձգտում էր գրավել Արևմտյան Հայաստանը, Բոսֆորի և Դարդանելի նեղուցները, Բալկանները, իսկ Թուրքիան՝ Կովկասը: Թուրքիային էին միացել Անգլիան, Ֆրանսիան: 1856թ. մարտին Փարիզում կնքված հաշտության պայմանագրով Արևմտյան Հայաստանում գրավված բոլոր շրջանները վերադարձվեցին Թուրքիային: Փոխադարձաբար Ռուսաստանը հետ ստացավ Ղրիմը: - 457
172. Աբդուլ Համիդի դեմ մահափորձ – Թուրքիայի միապետ Սուլթան Համիդի սպանությունը պետք է իրականացվեր 1905թ. Քր.Միքայելյանի գլխավորությամբ, որպես վրեժխնդրության և պատժիչ գործողություն ի պատասխան Օսմանյան կայսրությունում 1894-1896թթ. իրականացրած հայկական կոտորածների: Քր.Միքայելյանի զոհվելուց հետո, մահափորձի ձեռնարկումը ձախողվում է: - 459
173. Սաֆո - Մարտիրոս Մարգարյան, ՀՅԴ գործիչ, համագործակցել է Արաբոյի և Հովսեփ Արղությանի հետ: Քր.Միքայելյանի զոհվելուց հետո ստանձնում է Սուլթան Համիդի սպանության գործը, որի ձախողման պատճառով 1907թ. հեռացվում է դաշնակցությունից: - 459
174. Փանով - Նժդեհի համագյուղացի Ռաշիդ Տեր-Մաթևոսյան: - 459

175. Նկատի ունի L.Տրոցկու (Անտի Օտո ծածկանունով) «Անդրանիկը և նրա ջոկատը» հոդվածը, տպագրված Կիևում լույս տեսնող «Կիևսկի միսլ» թերթում 1913թ. հուլիսի 19-ի համարում: - 460
176. Փաստաթղթի բնօրինակը տրամադրել է նախկին ՊԱԿ-ի պաշտոնաթող գնդապետ Վաչե Հովսեփյանը: Նա 1952-53 թթ. Երևանի ներքին բանտում, ծառայողական հանգամանքներում, հանդիպել է Գարեգին Նժդեհին, իսկ դրանից շուրջ 40 տարի անց՝ 1992թ., նրա դատական գործի վերանայման (արդարացման) առիթով, կրկին առնչվել Նժդեհի գործին: 1946-48 թթ. Երևանում քննվել էր Նժդեհի «քրեական գործը», և 25 տարվա ազատազրկման վճռով զորավարին Վլադիմիր էին տեղափոխել: 1953-ի սկզբին նա կրկին բերվում է Երևան: Դա, ինչպես վկայում է Նժդեհի բանտակից Հովհ. Դևեջյանը, պայմանավորված էր նրանով, որ Նժդեհը դիմել էր խորհրդային ղեկավարությանը՝ առաջարկելով իր միջնորդությունը ՀՅԴ-ի և խորհրդային իշխանության միջև ընդհանուր հասկացողություն և հակաթուրքական հողի վրա գործակցություն ստեղծելու համար: Թուրքիայի նկատմամբ մշակվող նոր քաղաքականության ակնկալիքով ԽՍՀՄ ղեկավարությունը Հայաստանի ՊԱԿ-ին հանձնարարել էր Նժդեհի հետ համագործակցության եզրեր որոնել: Այդ նպատակով պետք է գաղտնի կապ ստեղծվեր Նժդեհի և Սփյուռքի հեղինակավոր ղեկավարների միջև: Նժդեհն հատկապես ընտրել էր Հայաստանի առաջին Հանրապետության նախկին վարչապետ Ս.Վրացյանին, որն այդ տարիներին ապրում էր Բեյրութում և ղեկավարում էր ՀՅԴ հետախուզական դպրոցը: Սակայն, քանի որ նրանց միջև ժամանակին տարաձայնություն էր եղել, նամակ գրվեց այդ ժամանակ Նժդեհի հետ միևնույն բանտախցում գտնվող սփյուռքահայ գրող և դաշնակցական գործիչ Հովհաննես Դեվեջյանի հետ համատեղ, որը Վրացյանի ամենամոտ մարդկանցից էր: Ի դեպ, Նժդեհի և Դեվեջյանի հարաբերությունները, մինչև բանտում հանդիպելը, կազմակերպական ներքին տարակարծությունների հետևանքով, խիստ լարված վիճակում էին, և միայն բանտում հանդիպելով, ընդհանուր տառապանքի թելադրմամբ հաշտվել են: 1955թ. Դեվեջյանը բանտից ազատվել է և 15 տարի հետո գրել՝ հուշեր Նժդեհի մասին: Նամակը, որ գրվել է Ստալինի մահվանը հաջորդող օրերին, կարող էր ճակատագրական լինել և՛ զորավարի, և՛ հայության համար, եթե վերստին չփոխվեր Թուրքիայի հանդեպ ԽՍՀՄ քաղաքականությունը: Մոսկվայում նպատակահարմար չգտան նամակն ուղարկել և այն այդպես էլ հասցեատիրոջը չհասավ՝ մնալով որպես պատմական փաստաթուղթ: Հատորում բերվում է համատեղ նամակի Նժդեհի գրած հատվածը: - 467
177. Հեռավոր Հյուսիս - Ռուսական կայսրության հյուսիսային շրջանները (Սիբիր, Սախալին), ուր աքսորում էին հեղափոխական գործիչներին: - 467

178. Դևեջյան Հովհաննես Հակոբի – ծնվել է Հալեպում, 1886թ.: 1919-1920թթ. եղել է ՀՀԴ Բյուրոյի քարտուղար, 1921թ.՝ Ախտայի շրջանի Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ: 1921-195թթ. ապրել է Բուլղարիայում, ապա՝ Գ.Նժդեհին չի հանդիպել: Ձերբակալվել է 1947թ. ապրիլի 19-ին: 1948թ. հունիսի 5-ին դատապարտվել է 20 տարվա բանտարկության, պատիժը կրել է Վլադիմիրի բանտում Գ.Նժդեհի հետ: Ազատվել է 1955թ. սեպտեմբերի 7-ին՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության 1955թ. հուլիսի 30-ի որոշմամբ: Մեկնել է բնակության Բուենոս Այրես (Արգենտինա): 1970թ. Բուենոս Այրեսում հրատարակել է Արմեն Սևան գրական կեղծանունով «Բանտարկեալի մը յուշերը: Տառապանքի տարիները Գարեգին Նժդեհի հետ» գիրքը: - 467

179. Սպորադիկ-եզակի, պատահական: - 469

180. Կյանքի վերջին տարում, հավանաբար Տայշեթի (իր նամակներում՝ Տաշքենդ) բանտային հիվանդանոցից եղբորը՝ Լևոնին և նրա ընտանիքին գրած նամակները առաջին հայացքից անձնական բնույթ ունեն, իրականում դրանք փաստաթուղթ-վավերագրեր են, որոնք համառոտ շարադրանքով, հստակ և համոզիչ փաստարկներով մեկ անգամ ևս ներկայացնում է մեծ հայրենասերի զանգեզուրյան առաքելության արդարացիությունը: - 471

180ա. Նկատի ունի «Սովետական Հայաստան» թերթի 1952թ. մայիսի 31-ի համարում տպագրված Ա.Թադևոսյանի «Թուրքիայի կառավարող շրջանների համասովետական քաղաքականությունն իր ամբողջ մերկությամբ» գրախոսությունը: - 472

181. Այդպես է տեքստում, պետք է լինի 1919թ.: - 473

182. Հարցաքննությունը կատարել է ՀՀԴ Գերագույն Դատական Ատյանը: - 477

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք ---------- 3

Հուշեր, հոդվածներ

Ինչու պայքարեց Լեռնահայաստանը ---------- 8
Լեռնահայաստանի գոյամարտը ---------- 15
Հայ-բոլշևիկյան կռիվները ---------- 27
Էջեր Լեռնահայաստանի գոյամարտից ---------- 55
Ազատ Սյունիք ---------- 104
Իմ պատասխանը ---------- 185
Մի պատմական ճշմարտություն ---------- 255
Հուշեր Ղարաքիլիսայի ճակատամարտից ------- 270
Մեծ և բախտորոշ օրեր. Մայիս 24-28 ---------- 272
Ինքնակենսագրություն ---------- 276

Նամակներ, գրություններ, հեռագրեր ---- 281

Բացատրագրեր

Իմ բացատրությունը Լեռնահայաստանի անկման պատճառների մասին ---------- 358
Մի քանի խոսք ևս Լեռնահայաստանի մասին--- 401

Հրամաններ, կոչեր ---------- 414

Բանտային նյութեր

ա) Ինչու ստեղծվեց ցեղակրոն շարժումը--------- 441
բ) Դաշնակցության առաջացման պատմական պայմանները---------- 447
գ) Դաշնակցությունը Բուլղարիայում---------- 459
դ) Նամակ Ս.Վրացյանին---------- 467
ե) Նամակներ հարազատներին---------- 471

Հավելված

Գ.Նժդեհի հարցաքննությունը---------- 477
Ծանոթագրություններ---------- 493

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ГАРЕГИН НЖДЕ

СОЧИНЕНИЯ

ТОМ ВТОРОЙ

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 60x84/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 33,25 մամուլ: Տպաքանակը՝ 500
«ԼՈՒՅՍԱՍ» ՍՊԸ տպարան: Երևան, Վ. Վաղարշյան 12ա